ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.19-1 Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Վ 301

Վարդանյան Վաչագան

Վ 301 Երկերի ժողովածու / Վ. Վարդանյան.- Եր.: Համահայկական գրողների միության հրատարակչություն, 2024. Հատոր երկրորդ.- 488 էջ:

Վաչագան Վարդանյանի ստեղծագործական ուղին եղավ երկար և արդյունավոր: Վաստակաշատ հեղինակի ստեղծագործությունների երկհատոր այս ընտրանին, որ ներկայացնում ենք հայ ընթերցասերներին, ուշագրավ մի փորձ է՝ համախմբելու և համատեղելու հեղինակի տարբեր տարիների գրվածքները, գրքերը, տպագրված և անտիպ ստեղծագործությունները:

ՀՏԴ 821.19-1 Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-9310-2-9

© Շուշան Վարդանյան, 2024

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱԽԱԿԱՆ

Արցախ աշխարհում
Արևն է ծագում
Ազատության պես։

Բարձունքի տենչն է,
Բարձր ճախրանք է
Բազեների հետ։

Գույների պարս է,
Գույն-գույն ծաղիկներ
Գարնան խնջույքում։

Դալարագեղ են,
Դյութիչ-շքեղ են
Դաշտ ու անտառներ։

Երկինքը երգ է,
Եթե վեր նայես՝
Երգով կհարբես։

Զնգուն ջրերի
Զվարթ մեղեդին
Զանգն է դաշնության։

Է՛խ, դաշնության դեմ
Էն գլխից եկել,
Էլի գալիս են։

Ողձում են, բայց ի՞նչ,
Ընկճել՝ ինչ այստեղ
Ընտիր է, վսեմ:

Թույն կա սրտերում,
Թույն՝ խոսքերի մեջ,
Թշնամանք օձի:

Ժպտում են ոմանք,
Ժահրոտ ու խարդախ
Ժպիտով գալիս:

Ինչպես կուզեն գան,
Իմ ազատ Արցախ,
Իրենք են պարտված:

Լեռներդ գիտեն
Լավա դուրս ժայթքել
Լպիրշության դեմ:

Խորհուրդ կա խորին
Խոր ձորերիդ մեջ,
Խորխորատներում:

Ծնկի չես իջնի,
Ծծմայր է եղել
Ծիր-Կաթինը քեզ:

Կան ժայռերիդ մեջ
Կորովի ասքեր,
Կայծեր բարկության:

Հոգուդ մեջ բոցն է
Հայոց մեր արյան՝
Հայկից ժառանգած:

Ձայն ես չլսվող,
Ձգտում՝ աննահանջ,
Ձիրքի խրախճանք:

Ղողանջդ եմ սիրում,
Ղողանջ՝ զանգերի,
Ղողանջ՝ հոգևոր:

Ճակատդ միշտ բաց
Ճամփա ես գնում,
Ճամփադ եմ սիրում:

Մեզնից անբաժան,
Միշտ դու էլ մեզ պես
Մասիսն ես սիրում:

Յոթնալար սազիդ,
Յոթ քաջեր երգող,
Յոթ լարն եմ սիրում:

Նազանքն եմ սիրում,
Նազելիներիդ,
Ներշնչվող ես դու:

Շիվն ենք նույն ծառի,
Շանթը չենք, նաև
Շանթարգելն ենք նույն:

Ոչ ոք չի կարող
Ոգին մեր խեղդել,
Որակ ենք անխախտ:

Չարը շատ տևեց,
Չմեռնեմ, տեսնեմ
Չքվելը նրա:

Պահն ինչքան էլ չար՝
Պահել ես, Արցախ,
Պատիվդ անբիծ:

Ջահակիր ես դու
Ջրդեղված սուսեր՝
Ջատագով լույսի:

Ռանչպար ի ծնե՝
Ռումբն ատող սրտանց,
Ռազմիկ հարկադիր:

Սիրտ ես դու և սեր,
Սակայն կանգնած ես
Սուրսայր սրի դեմ:

Վիրավոր ես դու,
Վերքդ թող կապեմ,
Վերջին իմ շապկով:

Տրտում, տրտում է,
Տրտմության մեջ էլ
Տես, ի՜նչ հորդուն է:

Ռոպեդ հոսում է,
Ռոպեդ խոսում է,
Ռոպեդ՝ կրակում:

Ցեղիս ձույլ ոգին
Ցնծում է քո մեջ,
Ցավդ տանեմ ես:

Ուր էլ որ գնամ՝
Ուշքս քո կողմն է
Ու երազիդ հետ:

Փառք ու պատիվ քեզ,
Փարոսված հողիդ,
Փրփուր հացիդ՝ փա՜ռք:

Քանքարիդ անճառ,
Քարե խոհերիդ՝
Քո վանքերին՝ փա՜ռք:

Եվ ճարտար ձեռքիդ
Եվ խղճիդ աննինջ
Եվ քո ոգուն փա՜ռք:

Օջախներիդ նոր,
Օրորոցներիդ՝ փա՛ռք,
Օրհնություն հազար:

Ֆիդայու պատիվ,
Ֆիդայու փառք քեզ,
Ֆիդայի Արցախ:

ՆԱԽԵՐԳ

Խրամատն էր ինչպես սև օձ
Փռվել լեռան ստորոտում,
Լուռ էր շուրջս. ոչ մի մարտկոց,
Ոչ մի ական չէր որոտում:
Օ՜, կարճատև, ահեղ դադար,
Գրոհներով միշտ էլ հղի,
Նայում էի, որ մոտ չգար
Դեմի հորդան գաղտագողի:
Հանկարծ… ասես երազ լիներ,
Մի թովչական, անո՜ւշ երազ.
Ճերմա՜կ, ճերմա՜կ աղավնիներ
Թևերն էին բացում վրաս…
Ճչաց սիրտս խնդությունից
Խաղաղության թևերի տակ,
Բերել էին աշխարհը ինձ
Նրանց թևերը սպիտակ.
Բերել էին համբույր ու սեր,
Բերել էին երազ ու կյանք,
Շինարարի պայծառ հույզեր,
Խոհեր էին բերել նրանք:
Շուրջս այդժամ մահից բացի
Ես կյանք տեսա, կյանքի դյութանք
Եվ հոգուս մեջ խորն զգացի
Քաղցրությունը խաղաղության
Ու լաց եղա երջանկալից՝
Խրամատում այդ վեհ պահին,
Արցունքներս՝ ելած սրտից
Իմ այսօրվա երգերն էին:

Թափվում էին հորդ, անարգել
Իմ աչքերից, սրտից նրանք,
Ինձ ջինջ արցունք էին բերել
Աղավնիներն այն սպիտակ:
Ինչ լավն էին, ինչքան շռայլ,
Բերել էին ինչքան շատ բան,
Նաև կորով, որ հաղթաքայլ
Անցնեի ես կռվի ճամփան:

***

Քայլում՝ ցնծում եմ, կանգնում՝ ցնծում եմ,
Ի՞նչ է պատահել այսօր ինձ հետ,
Վերում արտույտն է, իսկ ես ցածում եմ,
Նա թռի-վռի, ես՝ լուրջ պոետ:

Արտույտի նման ես էլ երգում եմ,
Չեմ կարող չերգել, չճռվողել,
Մեկ հողի վրա, մեկ երկնքում եմ,
Հարբածի պես եմ, ե՞րբ եմ խմել:

Այդպես լինում է, երբ որ բացվում են
Կանացի սիրած աչքեր վրաս,
Ես երգի գինով հարբում, հորդում եմ,
Չի թվում ոչ մի բարձունք անհաս:

Այդպես լինում է, երբ ականջում իմ
Արվեստի գործ է հնչում վսեմ,
Իմ ողջ էությամբ այրվում, տենչում եմ,
Որ ես էլ այդպես խորունկ երգեմ:

Բայց ես պարզապես հենց նոր լսել եմ
Խռով սրտերի կանչն իրարու,
Ուրեմն այդպես լինում է մեկ էլ,
Երբ քեն չեն պահում սրտեր երկու։

Բարձր երգում եմ ու երազում եմ
Այն դյութիչ երգը իմ չգրած,
Որ բոլո՛ր, բոլո՛ր բաժան սրտերը
Պիտի խոր սիրով կապի միմյանց։

(1987 թ.)

***

Տանը մարդ չի եղել,
Ո՛չ ոք, ո՛չ ոք։
Առավոտից գիշեր
Վարդը ջուր է կանչել
Ծաղկամանում,
Բայց ոչ ոք չի լսել
Խզված ձայնը նրա.
Դուռը փակ է եղել,
Ո՞վ գիտի թե ինչքան։
Թվացել է վարդին,
Թե ուր որ է կգան,
Բայց չեն եկել.
«Չէ՞ որ գիտեն նրանք,
Որ ես չունեմ ոտքեր
Ու չեմ հասնի ջրին»...
Մտածել է վարդը
Ու դառնացել.
«Ես իմ թփի վրա
Ուրախ ծաղկում էի,

Ինչո՞ւ ինձ պոկեցին
Ու բերեցին այստեղ,
Զո՛ւր, զո՛ւր»...
Ու մեռել է վարդը
Փակ դռան ետևում:

(1967 թ.)

ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՄԻՋԻՑ

Մռայլ էր Կոմիտասը, ինչպես գերեզման,
Քշում էին, տանում սպանելու նրան.
Մոտիկ էր մահն արդեն, երկու քայլի վրա,
Միայն մի բառ… «Կրա՛կ», պիտի ընկներ նա:
Քայլում էր նա մռայլ, շուրջը արյո՛ւն, արյո՛ւն
Եվ դիակներ անթաղ, և՛ ճիչ, և՛ գալարում:
Հոգում աշխարհն ամբողջ տագնապալից մի ճիչ,
Անցնում էր նա մահվան սարսափների միջից
Եվ աչքերի առջև նկարվում էր մի պահ
Հայոց ոգին թուրքիո սվինների վրա:
Այստեղ մորթում էին հանճարը հայկական,
Այստեղ ուզում էին մորթել և ապագան,
Որ չզնգար կրկին, լռեր հայոց լեզուն,
Հայոց երգը լռեր արնոտ այս հանդեսում:
Ի՜նչ սոսկալի վճիռ և հղացում արնոտ,
Քայլում էր Կոմիտասը՝ մտքերը շփոթ,
Զո՛ւր էր այուքը փչում, խոսում գարնան մասին,
Զո՛ւր էր փսփսում, ասում՝ սվսվոցն այս լսիր:
Մթնել էր աշխարհը հայացքի դեմ նրա,
Չէր նշմարում արև հորիզոնի վրա
Եվ չէր տեսնում գարուն ոտքերի տակ փռված,

Միայն արյո՛ւն, արյո՛ւն, արյուն համատարած.
Ասես քշել էին, բերել այստեղ իրեն,
Որ նետեն ծովն արյան ու քրքջան, ծաղրեն:
Քայլում էր Կոմիտասը, սարսափած նայում,
Ջարդեր՝ ներկայի մեջ, ջարդեր՝ ապագայում,
Եվ սարսափի գիշեր, իսկ իր կռունկն ահա
Ընկնում է, ջախջախվում ժեռ քարերի վրա…
Իր կռունկը… ինքը… ողջ ժողովուրդը իր,
Ինչ սոսկալի, արնոտ, քստմնելի ոճիր:
Քայլում էր Կոմիտասը՝ իր դեմ գիշեր անհույս,
Տենչում էր սարսափած ինչ-որ փրկության լույս,
Քայլում էր նա, անցնում սարսափների միջից,
Ինչպես ժողովուրդն իր խոցված, դառնակսկիծ,
Իր ժողովուրդը հայ, որ հասցրեց լույսին
Բոլոր փառքերի հետ և իր Կոմիտասին:

ԿԵՆԱՑ ԾԱՂԻԿ

Կա մի սուրբ ծաղիկ Ճավայում հեռու,
Այնպե՛ս եմ, այնպե՛ս նրան նախանձում…
Ես լոկ լսել եմ, կարդացել գրքում,
Բայց բնիկները այդ հեռու կղզու
Տեսել են նրան աչքով սեփական
Վառ բոցկլտալիս կատարին լեռան,
Հենց հրաբուխի խառնարանի մոտ:
Ես լոկ լսել եմ, տեսել են նրանք,
Որ միշտ ժայթքումից դեռ մեկ օր առաջ
Նա իր զգայուն թերթերն է բացել,
Ես լոկ հրճվել եմ, փախել են նրանք,
Փրկվել դավադիր կրակե մահից,

Նրանք հրճվել են, բայց տխրել եմ ես,
Որ փրկարարին իրենց ողջակեզ
«Մահվան ծաղիկ» են նրանք անվանել.
Համակ նվիրում, կյանք, սեր գեղեցիկ
Եվ… «Մահվան ծաղի՛կ»…
Ախ, ես լինեի ծաղիկն այդ կենաց…
Հասունանում է մի նոր հրաբուխ,
Առայժմ ժայթքում ոչ լավա, այլ ծուխ
Պետությունների խառնարաններից,
Լինեի ես այդ ծաղիկն անձնուրաց,
Փախե՛ք, ասեի աշխարհի մարդկանց:
Սակայն ո՞ւր փախչեն մարդիկ տարաբախտ,
Ուրիշ է լավան այս հրաբուխի,
Մի ակնթարթում կհասնի նրանց,
Մի ակնթարթում նրանց կհաղթի
Այստեղ ու այնտեղ, ո՛ղջ հողագնդում:
Ուրեմն էլ ի՞նչ ծաղիկ ու թերթեր,
Լոկ նրա՞ համար, որ մեկ օր առաջ
Իրենց մահվան բոթն իմանան մարդիկ
Եվ մեկ օր առաջ խելագար ճիչով,
Հոգևարքի մեջ նետվեն ձախ և աջ:
Ո՛չ, նրա համար, որ ելնեն մեկտեղ,
Որոտան ահեղ.
«Նախ՝ կյանքը մեր այս խեղճ մոլորակի
Եվ հետո միայն՝ կյանքեր այլ կարգի»…
Ու այն բազուկը հատեն արմատից,
Որ արմատներն է հատում կյանք-ծառի:
Ախ, ինչո՞ւ ես չեմ ծաղիկն այդ կենաց…
Բայց բանաստեղծի սիրտը աշխարհում

Մի քիչ նման է այդ ազնիվ ծաղկին,
Թերթեր է բացում նա իր երգերում:

ՄԱՇՏՈՑՅԱՆ ԲԱԼԼԱԴ

Հուր հեր ուներ նա և մորուսն էր բոց,
Բայց վիշապաքաղ մեր Վահագնը չէր,
Ձեռքին լայնալիճ աղեղ նա չուներ
Եվ ոչ էլ սուսեր:
Ընդ եղեգան փող մի այբ ելաներ,
Ելաներ մի բեն, մի գիմ, դա, եչ, զա...
Եղեգան փողից նա ձեռամբ հաներ,
Տար իբրև նվեր քաջացն հայոց,
Որ կռվում էին՝ դարձած հուր ու բոց
Վիշապների դեմ ոգու աշխարհում:
Ցնծում էր նրանց առաջնորդն հուրհեր,
Նա, որ հանում էր հրեղեն գրեր
Իր մեջ բռնկված եղեգան փողից:
Եվ անցան դարեր:
Նա տունս մտավ հաղթած, վաստակած
Ու առոք-փառոք բազմեց իմ դիմաց:
Տեսավ դստրիկս սեղանին կքել
Ու գրում է «ա»,
Քնքուշ թաթիկը թղթերի վրա
Թողնում է գծեր՝ ծուռումուռ քաշված՝
Տառի ճյուղիկներ՝ մատներով հաշված,
Երկնում է ասես և ոչ թե գրում:
Ժպտաց իմ հյուրը, սուզվեց մտքերում
Ու հետո հառեց հայացքը երկինք,
Ինչպես մեզ մանկութ ծանոթ նկարում.

- Մեզ միշտ մեռցրին, բայց մենք ապրեցինք,
Ասաց քաջաձայն ու ելավ տեղից,
Գնաց ընդառաջ ծագող արևին։
Օ, ի՜նչ արև էր,
Եվ երկներ երկին, և երկներ երկիր,
Ընդ եղեգան փող հանճարն ելաներ,
Ու նստած նրա լույսերում վսեմ
Դստրիկս գրեր
Հինավուրց գրեր։

(1987 թ.)

ԵՐԵՎԱՆ

Դա հրաշք էր, ցնորք, մահվան քնից ելա,
Ողջույն տվեցի քեզ հարյուր հազար թվին,
Ուրիշ լույսեր էին քո մայթերի վրա,
Այլ փողոցներ՝ փոխված ամբողջովին։
Ճանաչեցի ես քեզ քո հայկական ոճից,
Մի հայերեն խոսքից, սիրտս բացվեց քո դեմ,
Կառուցածն իմ չկար, բայց կար մի մաս ինձնից՝
Արարելու խորհուրդ, կառուցման տենդ վսեմ։
Եվ ես հպարտ անցա փողոցներով քո նոր,
Որպես քո շինարարն ու նոր քաղաքացին։
Երախտապարտ խոսքով, լույսերով քո բոլոր
Մեծարեցիր դու ինձ հարյուր հազար թվին։

ԵՐԳ ՇԻՆԱՐԱՐԻ

Վերում երկինք աստղալից,
Ցածում քաղաքն իմ գեղանի,
Շրջում եմ ես այստեղ նորից՝
Շուրջս լույսե՛ր, լույսե՛ր քանի:
Եվ հոգուս մեջ վառվում են վառ
Լույս ու աստղեր, երկինք, երկիր,
Երազներ են աստղանկար
Նրանք իմ մեջ վառում կրկին:
Քայլում եմ՝ լի երազանքով,
Քաղցր է ինչքան քայլել այսպես
Ու երազել ամբողջ հոգով
Է՛լ ավելի շքեղ հանդես:
Եվ ես մտքով վառում եմ վառ
Ուրիշ լույսեր քանի՛, քանի՛,
Երկնքի հետ մրցում է արդ
Լույսի քաղաքն իմ գեղանի:
Մրցում է նա, հաղթում նրան
Առատությամբ իր լույսերի,
Որ իմ ձեռքը ստեղծարար
Պիտի վաղը նրան բերի:
Շենքեր պիտի նորակառույց
Վառվեն այստեղ լույսերի մեջ,
Պիտի շրջեմ այստեղ էգուց
Իմ հոգու մեջ ծարավ անշեջ,
Ու երազեմ պիտի դարձյալ
Էլ ավելի շքեղ հանդես,
Որի կողքին հինը պայծառ
Խավար թվա և խեղճ այնպես:

Հե՛յ, իմ հոգու տենչերը հուր
Չեն հանգցվի նույնիսկ արյամբ,
Ես երազներն իմ աստղահուռ
Գիտեմ փրկել մահից անգամ:
Հզոր եմ ես կառուցելիս
Եվ կռվելիս՝ նույնքան հզոր,
Ինձ ճանապարհ են ցույց տալիս
Գեղեցիկն ու լույսը բոսոր:
Ծնվել եմ, որ անցնեմ առաջ
Ճանապարհով այս հաղթական
Դեպի հաջորդ կայանը նոր,
Դեպի ակունքն արեգական:

ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Մանկան խաղերն իմ այն վաղուց չկան,
Ու չկա մանկությունն իմ երազուն,
Այս կյանքն իմաստուն է ու խոր այնքան,
Եվ ես ուսանում եմ նրա լեզուն:
Լսարանն իմ մեծ է… մի ողջ աշխարհ՝
Լուսամուտներն հառած ապագային,
Նայում եմ ես ահա հուզումնավառ
Դեպի վաղվա հեռուն արևային:

Ուր դնում եմ ձեռքը իմ երկաթյա,
Շենքեր են բարձրանում նոր, բազմահարկ.
Նորից եմ ես մուրճիս լեզվով ահա
Ե՛վ քննություն հանձնում, և՛ ստուգարք:
Եվ կտրվի, գիտեմ, ինձ իրավունք
Ուսանելու կյանքի կուրսում հաջորդ,
Իմ կառուցած շենքը արած բարձունք՝

Ինձ զգալու այնպե՛ս արևին մոտ:

Սակայն երեկ, երբ ողջ հողագնդում
Պատերազմն էր շրջում՝ մահեր ձեռքին,
Զինվորիս հաղթական երգն էր թնդում,
Որպես գարնան աղմուկ, որոտ ուժգին:
Ավտոմատիս ձայնով հատու և բարկ
Նախորդ քննությունն էի հանձնում,
Խոսքս հրեղեն էր, խոսքս՝ կապար
Եվ դիպուկ էր… հարցրեք այդ թշնամուն:

Վաղուց եմ հասկացել այդ կյանքի լեզուն,
Նրա քննությունն եմ ճաշակել խոր,
Իսկ ոռնոցից մահի ես չեմ սարսում,
Եվ այդ ստուգված է մինչև այսօր:
Ու կարող եմ ցույց տալ ես աշխարհին
Ստուգման գրքույկս՝ սիրտս ահա.
- Կարդացեք, էջերում գրված է «հինգ»,
Եվ բաց է արդեն էջը վաղվա:

***

Մանուկ էի երազուն, նստում էի ամպերին
Ու ճամփորդում, ճամփորդում ջինջ հեռուներ երկնային:

Բայց ես իջա ամպերից համբույր տալու աշխարհին,
Ա՜խ, մանկությունս մնաց այդ ամպերի թևերին:

Տարան ամպերն ու տարան իմ մանկությունն իրենց հետ,
Ինձ խաբեցին ու տարան՝ աչքս թողած ճամփեքին:

(1967 թ.)

ՄԱՅՐՍ

Մայրս գուցե այս առավոտ
Մեր աղբյուրն է իջնում ջրի,
Գուցե հիմա աղբյուրի մոտ
Խումբն է կանգնած աղջիկների,
Մոտենում է մայրս գուցե,
Խնդրում է, որ բացատրեն
Միջազգային ինչ-որ հարցեր,
Որ մնացել են մութ իրեն:
Ու նրանցից մեկը ահա
Պատասխանում է հարցերին,
Գոհ է մայրս, ժպտում է նա՝
Ջրի դատարկ դույլը ձեռին
Գուցե մի պահ տեսնում է ինձ
Իր հարսի հետ գուրգուրվելիս
Կամ գիրկն առնում երջանկալից
Ու համբուրում է բալիկիս:
Սթափվում է հետո հանկարծ,
Շշնջում է հուզմունքով խոր.
- Կունենամ ե՛ս էլ թոռ ու հարս,
Թե չլինի կռիվ մի նոր:
Ու խորհում է, խորհում հերթով
Կյանքի մասին ու աշխարհի՝
Միշտ էլ ինձնից սկսելով
Իր խոհերը պարզ ու բարի:

***

Հարավի թուխ աղջիկ, թուխծամ ու թխաչյա,
Դու քնքշություն՝ հյուսված երազներից նրբին,
Փակում եմ աչքերս, քեզ եմ տեսնում ահա,
Բարձրանում են քո դեմ սրթսրթալով ցրտից
Ձյունների տակ կքած ծառերը հյուսիսի։
Մի վախենա, ոչ ոք չի կրակում դեմից,
Այդ կեղևն է ծառի ցրտահարված ճայթում։
Պաղ ձյունափոշին է թարթիչներիդ նստում,
Ի՞նչ գործ ունես այստեղ, դու հարավի աղջիկ,
Սովոր են ոտքերդ շուշանների շաղին,
Ձյունն այս տեսքով է լոկ շուշանաթույր,
Իսկ դու շատ փխրուն ես, կմրսես ախր դու։
Ցուրտն է կծում այստեղ, այրում ականջ ու քիթ
Մեր Հայաստան երկրի շոգի նման,
Ինչո՞ւ ես դու եկել ու քո մարմնով վտիտ
Պոկված տերևի պես ընկել քամու բերան։
Ախ, հա՛, այստեղ է *նա՛*, որ տարիներ առաջ
Քնքշորեն շոյում էր վարսերդ սևափայլ,
Պահում ափերի մեջ քո ձեռքն ինչպես սրտում։
Չես մոռացել նրան, գիտնականին քո քաջ,
Որ ուղեղում հազար Հերոդոտ ու Նարեկ
Եվ ճակատն իր վսեմ հողմ ու բքին տված
Քայլում է ձյուներով իբրև աստված։
Գնում ես դու ահա հանդիպելու նրան,
Հարավի թուխ աղջիկ, սիրո աստվածուհի…
Եվ հպարտ է զարկում սիրտս մարդու համար։

(1967 թ.)

ՄՂՁԱՎԱՆՋ

Գիշերն իջավ ինչպես միլիոն տարի առաջ
Ու ծավալվեց ու ծովացավ բիբերիս մեջ,
Իր աստղերը՝ բորբ արցունքներ՝ մթնում վառած,
Կախեց իմ սև թարթիչներից,
Իր հողմերը՝ խորունկ հառաչ,
Սիրտս լցրեց տնքոց-տնքոց ու մարեց ինձ։
Ես ավերակ պալատ եմ մութ։
Ա՜հ, աստված իմ, ավերակ է շուրջս նույնպես,
Այստեղ-այնտեղ լույսեր կան, տես,
Լույս հետքերն են քիչ առաջվա շքեղ կյանքի,
Անե՜ծք, եղավ այն սոսկալին, աղետն այն մեծ,
Որ դեռ երեկ կարծում էինք չի լինելու...
Գիշերն իջավ ինչպես միլիոն տարի առաջ,
Երբ չէր դրված մարդու ձեռքով քարը քարին,
Իսկ հիմա էլ քարը քարին չի մնացել...
Օ՜, վառ աստղեր, երկնի աչքեր ամենատես,
Դուք վախվորած նայում եք ցած,
Որոնում եք եղեռնագործ այն ճիվաղին,
Որ չթողեց այս աշխարհում քարը քարին,
Բայց չեք գտնի նրան երբեք, երկնի աչքեր,
Ես չգիտեմ՝ զոհվե՞ց արդյոք,
Թե՞ գետնի տակ, հարյուր գազ խոր, նստած հիմա
Ծիծաղում է մահվան վրա։
Ես չգիտեմ, գուցե եկավ ու ինձ ձուլվեց,
Դրանից է, որ մութն եմ ես...
Ինձ եք նայում, երկնի աչքեր ամենատես,
Դուք լավ գիտեք, որ ես ոճրին մեղսակից չեմ,
Ինքս էլ ահա բռնվել եմ ատոմախտով,

Պիտի մեռնեմ արագ ինչպես չար հեքիաթում։
Ինձ մի՛ նայեք այդպես անգութ,
Օ՜, երկնային ամենատես դատավորներ,
Միակ մարդն եմ ես այս հովտում,
Որ խելքս չեմ թռցրել դեռ,
Աստղեր, աստղեր,
Չէ՞ որ դուք ինձ գիտեք միլիոն տարի առաջ։
Դեռ մարդ չէի այն ժամանակ,
Դեռ չորեքթաթ քայլում էի ես պոչավոր։
Մութն ինձ համար գիշեր չէր դեռ, լույսը՝ ցերեկ,
Այլ ինչ-որ բան ճամփես փակող,
Եվ ինչ-որ բան ճամփես բացող,
Որ ես սուրամ ու իմ փախչող որսին բռնեմ
Կամ ազատվեմ ժանիքներից ինձ հալածող։
Դեռ մարդ չէի այն ժամանակ
Եվ չունեի ոչի՜նչ, ոչի՜նչ, ահից բացի,
Հոշոտելու և լափելու կրքից բացի։
Իսկ ի՞նչ ունեմ, ի՞նչ, ես հիմա,
Գիշերն իջավ... ինչպես միլիոն տարի առաջ,
Կորցրել եմ, ինչ ունեի՝
Շեն քաղաքներ, բերքեր, երգեր ինձ մարդ դարձնող,
Ոչինչ չունեմ՝ նախնադարյան ահից բացի,
Մեկ էլ այս ուշ հառաչանքից, թե՝ հիրավի
Ունեի խելք, սակայն, ավա՜ղ, ոչ այն խելքից,
Որ աշխարհը ատոմային մահից փրկեր,
Ունեի ձեռք, սակայն, ավա՜ղ, ոչ այն ձեռքից,
Որ պատերազմ սկսողի գլխին իջներ։
Մի՛ նայեք ինձ, մի՛ նայեք ինձ, երկնի աչքեր,
Ես ուր որ է կխենթանամ, գթացեք ինձ,
Ախ, ոճիրը մինչ չի դրվում մեր նժարին,

Չենք իմանում մենք ծանրության չափը նրա,
Չենք հավատում, թե կլինի՛:
Հիմա եղավ, և դուք ահա ձեր վերևից
Ի՛նչ անողոք նայում եք ինձ,
Ա՛հ, դալկացեք, անէացեք գեթ մի վայրկյան...
...Եվ իսկապես նրանք մեկ-մեկ անէացան,
Այդ արևն էր պոկում նրանց շող-մատներով
Ինչպես միլիոն տարի առաջ:

ԻՄ ՀԵՔԻԱԹԸ

Եկան այս գիշեր բյուր պարտվածները
Ու իմ սրտի մեջ ցավն ամբարեցին
Իրենց սրտերի:
Նրանց բոլորին չեմ կարող թվել,
Բայց իմ սրտի մեջ զգում եմ ահա
Բոլորին մեկ-մեկ, բոլորին ջոկ-ջոկ:
Կսկիծն եմ զգում Փոքր Մհերի,
Դա լոկ մի մարդու կսկիծ չէր ծանր,
Նրա սրտի մեջ հողը «դալբացած»
Իր ցավն էր քամել, իր սևը մթար,
Ու քայլ զցելիս Քուռկիկ Ջալալին
Ոտքը խփում էր ոչ թե հողի մեջ,
Այլ՝ տանջանքների, այլ՝ արցունքների:
Միշտ աչքիս դեմ է այդ ծուռը Սասնա,
Այդ ծուռը հսկա, որի լոկ տեսքը
Ու լոկ կեղևն է առասպելական,
Միջուկը ես եմ՝ իրական մի մարդ:
Հագնեմ իր կեղևն առասպելական,
Կկարծեք փոքր եղբայրն եմ նրա:

Ահա ես՝ զորեղ ու վեհ նրա պես,
Նաև նրա պես պարտված ու մռայլ:
Նստել եմ խոժոռ մի ժայռի վրա,
Ժայռ՝ ժայռի վրա, ու իմ ստվերը
Ժայռի ստվերից երկար է անչափ
Ու իմ ստվերը թիկնեղ է նույնքան,
Միայն մի մատս մի մարդու չափ է:
Փոքր չի լինի
Փոքր Մհերի եղբայրը փոքր
Ու փոքրիկ, փոքրիկ վիշտ չի ունենա:
Օդից ու հողից, հրից ու ջրից,
Ցավեր են գալիս, լցվում սրտիս մեջ:
Ես քայլ եմ գցում՝ կապված է սիրտս
Օդին ու հողին, հրին ու ջրին
Ու մի պղտոր գետ, ցավի պղտոր գետ
Նրանցից քամվում, իմ ծովն է թափվում:
Ախ, իմ եղբայրը՝ փոքր Մհերն էլ
Իրեն փակել է Ագռավաքարում,
Չի ելնում գալիս, որ խելք-խելքի տանք,
Մի հնար գտնենք ցավից փրկվելու:
Ու հովիվն եկավ Ագռավաքարից,
Նա, որ ամեն մի համբարձման գիշեր
Գնում հարցնում է Մհերին, թե դու
Ե՞րբ ես նորմեկանց լույս աշխարհ գալու:
Եկավ հովիվը Մհերի մոտից,
Ինձ տեսավ ժայռին գլխիկոր նստած
Ու ասաց. «Քու ցավ
Պստիկ Մհերի ցավեն է որ կա:
Եվ ճամփա ընկիր, լավ բաներ արա,
Քու ամեն լավ բան վեր աստնվորիս

Մի-մի վիշտ ավել կպակսեցնե,
Մի-մի վիշտ պակաս կզգաս սրտիդ մեջ»:
Ես պարտված էի, բանտված ինքնակամ
Վշտերի անհույս Ազռավաքարում,
Իմ մթության մեջ շող կաթեց մի թել,
Ասաց՝ ճամփա եմ, ինձ բռնիր գնա,
Ասաց՝ էլ չասես՝ չորացած ծառ եմ,
Իմ հավքերն ինձնից խռոված թռան.
Ով չի ցանկանում, որ պարտված լինի,
Պարտված չէ նա դեռ:
Եվ ես գնում եմ լավ բան անելու,
Իմ արած ամեն, ամեն լավ բանը
Մի-մի ցավ ավել կպակսեցնի
Վեր աստնվորիս,
Մի-մի ցավ պակաս կզգամ սրտիս մեջ,
Մի-մի մեղք ավել կպակսեցնի
Իմ իսկ մեղքերից,
Մի-մի մեղք պակաս կզգամ սրտիս մեջ:
Ընկել եմ ճամփա լավ բան անելու:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻՆ

Դու այն բանակն ես, որի զինվորը չի զորակոչվում
Հրամանով հատուկ կամ մարտի փողով,
Այլ իր սեփական սրտի պահանջով կյանքի մեջ փորձվում
Եվ շարք է մտնում երկյուղածության սրբազան դողով:

Դու այն բանակն ես, որի զինվորը չի զորացրվում,
Այլ ամբողջ կյանքում առաքինության դրոշը ձեռքին,

Հանուր մարդկության հոգսերի բեռն է ուսերին կրում
Եվ բաժանում է հաղթանակների հրճվանքն ամենքին:

Դու այն բանակն ես, որ չի ավերում ամրոցներ ու բերդ,
Այլ կերտելով է բարձրանում դեպի զագաթն արևոտ,
Դու այն բանակն ես, որի զինվորը զորավարի հետ
Հացի է նստում նույն իրավունքով, նույն խարույկի մոտ:

Դու այն բանակն ես, որ սերմանում է ազնիվն ու բարին
Եվ իր ձեռքերով չարությունն է այս աշխարհից վանում,
Դու այն բանակն ես, որի շարքերը՝ գրոհի պահին,
Ոչ թե նոսրանում, այլ խտանում են և զորեղանում:

Դու այն բանակն ես, որի քարեղեն խստության միջից
Սիրո քնքշության ամենից պայծառ ծաղիկն է աճում,
Դու այն բանակն ես, որ ոչ թե զենքով ծովեր ու երկիր,
Այլ իր հավատով միայն սրտեր ու սեր է նվաճում:

Դու այն բանակն ես, որ քսաներորդ հարյուրամյակի
Արհավիրքների շիկացած սանձն է ձեռքերում պահում,
Կարկատաններն է պոկում հինավուրց այս մոլորակի
Եվ նրա համար պատանու շքեղ հագուստ է կարում:

Դու այն բանակն ես, որ պիտի ցրի բանակներն ամեն
Եվ խոփեր դարձնի բոլոր մահաբեր զենքերն աշխարհի,
Որ մարդիկ անհայտ աստղերից անգամ կենսավիշ քամեն,
Երջանկությունը ժամանակի պես անվերջ երկարի:

ՄԵՌՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹԸ

***

Ես ճառագայթ եմ տերևի վրա,
Ուզում եմ լինել մի կանաչ տերև,
Շրշալ մինչ աշուն,
Բայց ճառագայթ եմ՝ ուր որ է կանցնեմ
Ու մութը կընկնի,
Այնպես չեմ ուզում ճառագայթ լինել։

***

Ոչ ոք չի հիշի, որ ես եղել եմ,
Ես մարմին չունեմ, որ ինձ էլ թաղեն,
Այցի գան շիրմիս,
Եվ ես ուզում եմ մարմին ունենալ…

***

Դուք, բանաստեղծներ, պատմեք աշխարհին,
Թե ես ինչպես եմ աշխարհից գնում,
Ես կանաչ գույն եմ տերևին թողնում,
Ձեր կոպերի տակ՝ մի պայծառություն,
Որ չմոլորվեք, դուք խավարի մեջ
Ու գտնեք ճամփան դեպի արշալույս։

(1967 թ.)

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Ականջիս հասավ ձիու վրնջյուն
Հեռո՛ւ-հեռավոր Կյուրասաոյից,
Այդ քո նժույգն էր գետինը դոփում

Եվ սմբակներով քանդում էր նորից
«Թշնամու» բերդերն իրենց հիմքերից։
Քո նժույգը հուր...
Ես տեսնում էի սլացքը նրա
Եվ այն կայծերը, որ պոկվում էին
Պայտերից ոսկյա։
Ես տեսնում էի քո զինվորներին,
Որ ընկնում էին ճակատից զարկված,
Հերոսի՛ նման,
Ես տեսնում էի և սպաներին,
Որոնք քեզանից առած հմտություն՝
Գրոհի էին գնդերը տանում։
Քո թագուհին էր իմ դիմաց հառնում
Մերթ հագած ճերմակ ու մերթ սև շորեր,
Սակայն նշան չէր սևը պարտության,
Վկա է դրան թեթև քայլվածքն այն,
Որով մի դիրքից մյուսն էր գնում։
Քո թագավորը վախ չուներ սրտում,
Իր բանակն ամբողջ կռվի դաշտ ճամփած՝
Խնջույք էր անում,
Գիտեր, որ ինքը գերի չի ընկնի.
Կապկպված, գերված
Ուրիշ արքաներ իր մոտ պիտի գան,
Իսկ եթե բան է՝ մեկն հաղթող լիներ,
Գիտեր, նրանից պիտ փրկեր իրեն
Երկաթե, ամուր «ոչ-ոքիդ» հաստատ։
Երբեք չեմ սիրել թագավորներին,
Բայց քո արքային պաշտեցի սրտանց,
Որ հանգիստ նստած՝ խնջույք էր անում,
Մի-մի բաժակ էլ մեզ բաժին հանում։

Դու քանի՜ անգամ հեծած քո հուր ձին՝
Մեծ հաղթանակով տուն դարձար «կռվից».
Ա՜խ, չսովորեց աշխարհը քեզնից
Հաղթանակ տանել առանց արյունի։

(1962 թ.)

ԷԼԵԳԻԱ

Ախ, իմ ընկերներ, դուք կռվում ընկաք,
Իսկ ես, որ մահվան ճանկերից փախա,
Հիմա ուր որ է կհասնեմ տունս,
Կլսեմ ճռռոցն հարազատ դռան,
Հետո կբացեմ տաք անկողինս,
Քնելուց առաջ կերազեմ կես ժամ
Գալիքն իմ ոսկի և արևահամ։
Ուզեմ՝ կնստեմ ու գիրք կկարդամ,
Ուզեմ՝ կգնամ ընկերոջս այցի
Կամ ընկերացած գինու շշի հետ՝
Երկար կնստեմ իմ պատշգամբում,
Որ գինու շիթով՝ ցած հոսող կում-կում,
Կոկորդիս հասնող փղձուկը խեղդեմ։
Ձեզ, իմ ընկերներ, գուցե մոռանամ,
Բայց չէ, վերստին կելնեք դուք իմ դեմ,
Կարմիր է գինին ձեր արյան նման։
Ես կշշնջամ և արցունքի պես
Շշուկս կընկնի կաթիլ առ կաթիլ
Մայր հողի վրա,
Ես կշշնջամ, թե ինչքան են բիլ
Երկինքն ու ծովը, որ էլ չեք տեսնում
Եվ այն աչքերը, որ սգում են դեռ

Թանկ կորուստը ձեր։
Եվ կշշնջամ, ո՛չ, կորոտամ՝
Ո՛ւր են մանկության իմ ընկերները։
Սակայն իմ ձայնը ոչ ոք չի լսի,
Լոկ աշնան քամին իր ցուրտ մատները
Իմ մազերի մեջ կխրի երկար,
Կասի՝ սթափվի՛ր…

(1967 թ.)

ՌԱԶՄԻ ՎԵՐՀՈՒՇ

Դեմս դաշտն էր փռվել արնոտ
Իմ ոտքերից մինչև հեռո՛ւ, հեռո՛ւ,
Եվ դարձել էր սիրտս ասես վառոդ՝
Պատրաստ չնչին կայծից բռնկվելու։
Դեմս՝ տարածելով կայծեր ու ծուխ,
Վառվում էր քառահարկ մի մեծ դպրոց։
Բարձրանում էր բոցը, դառնում ցնցող,
Մերթ գալարվում ինչպես կրակի օձ։
Վառվում էր դպրոցը… իսկ ես այնօր
Դեռ աշակերտ էի՝ շինել հագած,
(Չգիտեմ՝ ում վիշտը ինչքան էր խոր,
Բայց իմ սիրտը վշտից դառն հեկեկաց)։
Վառվում էր դպրոցը… ու փուլ եկավ
Որպես մի հեկեկանք դուրս պոռթկացող,
Նա վրեժի կանչեց արդեն ընկած,
Նա վրեժի կանչեց վերջին լացով…
Տարիներ են եկել, անցել հերթով,
Մարել է վրեժս վաղո՛ւց, վաղո՛ւց,
Ինչպես այն հրդեհը, բոցերը բարկ,

Բայց դեռ հուշերիս մեջ փուլ է գալիս,
Վառվում է դպրոցը այն քառահարկ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

Գիշեր: Տասներկուսն անց: Վառվում է լույսը վառ.
Տետրերն է ստուգում ուսուցչուհին ջահել,
Հուզված է նա, հպարտ, որ գործը այս դժվար՝
Մանկան բախտը իրեն են վստահել:
Ինքն էլ մանուկ էր վառ, թիթեռ մի ոսկեթև,
Խաղ էր անում երեկ շեմքին ապագայի,
Օ,՛ թռչում են օրերն ինչպես արագ, թեթև,
Երեկ մանուկ էր վառ, այսօր՝ ուսուցչուհի:
Այսօր պիտի տքնի, որ մանուկներն անգետ
Փառքը դառնան վաղվա, կրթված քաղաքացին,
Բանվոր թե գիտնական, գուցե մի նոր պոետ,
Միևնույնն է՝ պետք են բոլորն էլ մեր գործին:
Եվ տես, տքնում է նա, իր մոտ հարցեր նշում,
Խոհերն են կնճռոտում նրա ճակատն անբիծ,
Այնպես զբաղված է, կարծես չի էլ հիշում,
Որ այրվում է մեկը իր կարոտից:
Հոսում է գիշերը, բայց նա երկա՛ր, երկա՛ր
Իր որոնող աչքով տողերն է պրպտում,
Կարծես մոռացել է, որ աշխարհում քուն կա,
Կարծես իր համար են մարդիկ քնում:
Ժամը մեկն է արդեն: Բայց սլաքներն անդուլ
Ձգտում են միշտ առաջ՝ նման խոր տենչանքի,
Քայլերն է նա լսում ժամացույցի ռիթմում,
Քայլերն իր առաջին, գալիք հաղթանակի:

ՄԱՅՐԸ

Քուն է մտել դրսում, պատուհանի առաջ,
Գիշերը՝ մայթերին սև գլուխը դրած,
Շրշում են, օրորվում բարդիները կանաչ,
Շրշում են, օրորվում զգուշորեն կամա՛ց…
Ներսում, այս ուշ պահին, վառվում է մի կրակ,
Արթուն է դեռ մայրը՝ արդեն հոգնած գրքից,
Թեքվել է իր մանկան լուռ սնարի վրա
Ու նայում է այնպես գորովալից:
Քնած է մանուկը փափուկ իր անկողնում,
Շուրջը ճերմակ բարձեր և լռություն անվերջ,
Թիթեռներ է գուցե բռնում ու բաց թողնում,
Ոսկեգույն թիթեռներ՝ երազի մեջ:
Ժպտում է մայրը լուռ, ժպտում է սիրառատ,
Հետո վերցնում նրա տետրակները մաքուր,
Բացում է, նկարված են տառերը հատ-հատ,
Բեկբեկվում է գիծը, ինչպես ջրի խորքում:
Նայում է մայրը լուռ, նայում երկա՛ր, երկա՛ր
Ու տառերի միջից տեսնում ձեռքը նրա,
Որով այնքան բառեր, երազներ են պայծառ
Գրված իր մայրական սրտի վրա:
Շրշում են, օրորվում բարդիները կամաց,
Շրշում զգույշ այնպես, որ նա խաղաղ քնի,
Շշնջում է մայրը գորովալից, հուզված,
Անսահման քնքշությամբ սիրող սրտի.
- Խանգարել չի կարող աղմուկը հեռավոր
Քո այս հանգիստն անուշ, քո դասերը վաղվա…
Բռունցքում է ձեռքը, բարձրացնում հզոր,
Ձեռքը որպես վահան, որդու բախտի վրա:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Շատ եմ փնտրել ու երազել
Ջինջ, անթերի գեղեցկություն,
Փնտրել եմ՝ ցոլքը իմ սրտում
Եվ վերջապես ես այն գտել:

Իմ դիմաց Երևանն է պերճ,
Գեղեցկությունն իմ երազած,
Դիտում եմ լուռ ու կախարդված
Կարծես լինեմ երազի մեջ:

Օ,՛ ի՛նչ հասակ ունի հպարտ
Եվ ինչ կեցվածք այս գեղուհին,
Կանգնել նայում է աշխարհին՝
Հայացքը խոր և միշտ հանդարտ:

Կրծքի վրա ունի թառած
Երկու քնքույշ աղավնիներ
Կտուց-կտցի երգում են սեր,
Կյանքի բերկրանք համատարած:
Իսկ կրծքի տակ, սրտում իր խոր
Նա այն երազն է փայփայում,
Որ կունենա ապագայում
Մի բոց մանկիկ արևազոր:

Հե՛յ, իմացեք, վաղո՛ւց, վաղո՛ւց,
Զգում է նա իրեն հղի,
Մոտ է երկունքն ու կատաղի,
Բայց չի սոսկում նա երկնելուց:
Ահա կանգնած է իմ դիմաց

Հանդարտությամբ դյուցազնամոր,
Այնպես վեհ է, այնպես հզոր,
Երկինքն ասես գլխին դրած:

Նայում եմ ես ու մտածում,
Որ ժամանակը չէր տեսել
Մի գեղուհի այսքան վսեմ,
Բաղձանքներով այսպես լեցուն:

Օ,՛ նա անհուն բերկրանք է, սեր,
Մարմին առած գեղեցկություն,
Նայիր, ինչպես քաղցր է ժպտում՝
Կրծքին մի զույգ աղավնիներ:

Նայիր, և քեզ նա կմղի,
Որ բարձունքներն առնես վաղվա,
Գեղեցկության ոգին է նա՝
Մեր ապագա խինդով հղի:

ՆՐԱՆՔ

Անցնում եմ ես ահա լեռներով ծանոթ,
Կարծես չի փոխվել այստեղ ոչ մի բան.
Նույն լեռներն են վեհ, կիրճերը ժայռոտ
Բայց ճանփան այս լավ… չկա՛ր այս ճամփան:

Այս ե՞րբ են զցել, անդունդներ, այս ե՞րբ:
Ինչ ավելորդ հարց. պարզ է՝ այս տարի,
Անցյալ ամառ էր, որ անցա մի կերպ
Այն մութ, ահավոր ճեղքերով ժայռի:

Բայց ո՞ւր գնացին, լեռներ, այն մարդիկ՝
Այս ճամփան իբրև ոտնահետք թողած:
Խանդավառությո՛ւն ջահել պոետի,
Նորից ավելորդ, միամիտ մի հարց:

Լեռներն ի՞նչ գիտեն, թե ո՞ւր գնացին,
Անշարժ լեռները անաչք, անուղեղ.
Այն մարդիկ՝ ելած վաղ լուսաբացին
Հրաշքներ են, տե՛ս, երկնում ամեն տեղ:

Զնգում են, լսիր, և՛ քլունգ, և՛ բահ,
Հողն է մեքենան քանդում հաղթական,
Այդ՝ մարդիկ են այն զցում նոր ճամփա,
Շիտակ մի ուղի… դեպի ապագան:

ԳՐՔԻ ԱՌՋԵՎ

Կարդում էր նա, թեքված գրքին,
Մի ջերմ, հուզիչ պատմվածք,
Լի՛քն էր հույզով նրա հոգին,
Սիրտը տենչով էր լցված։
Կուզեր լինել ինքն էլ արդեն
Հերոսի պես այս գրքի,
Ու պայքարով ուղին հարթել
Դաշտը մտնող ջրանցքի։
Կուզեր... Բայց դեռ փոքր էր այնքա՛ն,
Բազուկներով դեռ անզոր,
Միայն մտքով իր մանկական
Թռավ դաշտը հեռավոր։
Հասավ ահա... միտքը մարդուն
Որտե՞ղ ասես չի տանի,
Ո՞վ է, որ երբ գիրք է կարդում
Մոտն է մնում սեղանի։
Հենց այդ պահին ելավ դեմից
Գրքի հերոսը ծանոթ,
Եկավ, բռնեց նրա ձեռքից,
Տարավ իսկույն իրենց մոտ։
Աշխատանքն է զնգում ահա
Հզոր երգով կառուցման,
Եվ զնգում են քլունգ ու բահ,
Փայլում են հաղթական։
Քանի՛ հուժկու մեքենաներ
Հողն են քանդում անխափան
Ու թնդում են օր ու գիշեր,
Բացում ջրի նոր ճամփան։

Ինքը՝ փոքրիկ հերոսն էլ մեր
Այստեղ է, այս ժխորում,
Մեծի նման, մեծերի հետ
Ահա ինքն էլ է փորում։
Այնինչ իր դեմ գիրքն է միայն,
Գիրքը իր ջերմ տողերով,
Չի՛ նկատում, որ մի վայրկյան
Տարվել է իր խոհերով։
Կարդում էր նա թեքված գրքին
Մի ջերմ, հուզիչ պատմվածք,
Կամ այցելում էր ջրանցքին
Իր մտքերի մեջ սուզված։
Ու կարդում էր, հուզված կարդում
Եվ հոգու մեջ զգում այն,
Որ ինքն ամեն ակնթարթում
Սովորում է մի նոր բան։
Այսօր նա իր ձեռքով փոքրիկ
Բացել է այս գիրքն արդեն,
Վաղը աշխարհն ինչպես մի գիրք
Բաց կլինի նրա դեմ։

ԿԱՐՈՏ

Հասել եմ վեպի հաջորդ գլխին,
Դժվար թե կարդամ գիրքը մինչև վերջ,
Լոկ նա է, լոկ նա, իմ սիրելին,
Հոգում իմ, վեպում, սենյակիս մեջ։
Ռադիոն երգում է կարոտի երգ,
Անզոր է սակայն երգը հիմա
Թույլ է, հասարակ, ոչ անեզերք,

Այնպես լցված եմ, այնպես լցված,
Կարծես հիմա կդառնամ բոց,
Այրվում եմ տենչում… տեսնում հանկարծ
Մղել է կարոտս ինձ փողոց:
Շրջում եմ փնտրում նրան երկար,
Թեև լավ գիտեմ, որ չեմ գտնի,
Բայց հրաշքի պես, պատահաբար,
Գուցե թե հանկարծ այստեղ լինի:
Գալիս է ահա մեկը դեմից,
Կարծես թե նա է, կարծես թե նա,
Ժայթքում է սիրտս միանգամից
Հազար հրաբուխ, հազար լավա:
Բայց… պատրանք է լոկ, նա չէ՛ր, նա չէ՛ր,
Ուր է թե հանկարծ հայտնվեր նա,
Թեկուզ դաշույն էլ սիրտս խրեր,
Սիրտս վերստին ցավ չէր զգա:

ԳՆԱՑՔՈՒՄ

Ձգվում են ռելսերը անծիր,
Գնացքը սուրում, թռչում է.
Գիշեր է, թե կուզես՝ քնիր,
Մոր պես օրորում, երգում է:

Բայց ահա բոլորը արթուն,
Սրտաբաց, պարզ են բոլորը,
Մեկը «Ավանգարդ» է կարդում,
Մյուսը գովում է իր օրը:

Մեկը մտասույզ պեղում է
Լեռների ընդերքը շռայլ,
Մյուսը իր նստած տեղում էլ
Ճեղքում է եթերը դարձյալ:

Մեկը մտքով իսկ տաշում է
Ե՛վ տուֆ, և՛ բազալտ՝ փողոցում,
Մյուսը մատներն իր շարժում է՝
Ասես թե կտավ է գործում:

Մեկը նոր կյանքի պոետ է,
Վերելքի իր հանգն է երկնում,
Թե՛ երգ, թե՛ վերելք մեզ հետ են,
Հենց այստեղ, վագոնում այս նույն:

Զգվում են, զնգում ռելսերը,
Գնացքը թռչում է ահա,
Թռչում է ժամանակն ինքը,
Զնգում այս ռելսերի վրա:

ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ճանապարհով այս գալարուն
Անցնում են, տես, քանի՛ սահնակ,
Կուչ է գալիս ձյունը փխրուն
Նժույգների ոտքերի տակ:

Ճանապարհով՝ քաղաքից գյուղ
Բերում են, տես, նորահարսին,
Շալն է ծածկել մազերը թուխ,
Ծածկել մեջքը, որ չմրսի:

Ցուրտ է, ձմռան սառնամանիք,
Զյունախառն փչող քամի,
Բայց նորահարսը երջանիկ
Ասես մի թեժ կրակ լինի:

Երջանկության սարսուռներում
Չի էլ հիշում գեթ մի վայրկյան,
Որ, թե իրեն հարս են բերում,
Պտուղն է դա խաղաղության:

Եվ տես, նայեց նա սիրառատ,
Հուզվեց տղան… ու ժպտացին
Բացի ճամփից այս ձյունապատ,
Խաղաղությա՛ն ճանապարհին:

ՊԵՅԶԱԺ

Առավոտ է: Զարթնել արփին,
Բոցկլտում է լեռան վրա,
Շողքը ժեռ քարափին
Ծիծաղում է ողջ սրտով նա:
Ցածում արտերն են հուրհրում,
Գետն է հոսում մեղմակարկաչ
Ու հոսում են, ծփո՛ւմ, ծփո՛ւմ,
Դաշտերն ինչպես ծովեր կանաչ:
Շողերի մեջ երկու բարդի
Անուշ խշշում են, շորորում,
Շուրջը շշուկ, երգ արտույտի
Ու վերևում երկինք խնդուն:

Ամպերն ահա ելնում դանդաղ,
Լուրթ երկինքն են ծածկում քիչ-քիչ,
Զմրուխտ ծիլերն ստվերում պաղ
Էլի ժպտում են կախարդիչ:
…Անձրևն ահա գալիս վարար,
Առատ, առատ թափվում է վար,
Որոտա ամպ,
Քո սաստկությամբ,
Կայծակ, շողա՛,
Անձրև տեղա՛
Շափ-շըփ, այսպես, արի՛, արի՛,
Ցանկալի հյուր մեր արտերի:
Ամպն ինչ ուրախ է որոտում,
Ջինջ անձրևը ցոլում օդում,
Կյանք են շնչում լեռներ ու արտ,
Առվակներն են վազում զվարթ.
Ու ժպտում են երկու բարդին՝
Իրար թեքված կարոտագին:

Ցրվեցին ամպերն ու արևն անգին
Բոցկլտում է, տես, բարդու կատարին
Գետը ցնծալից,
Երգում է հախուռն,
Լեռներն են վերից
Նայում խնդում,
Ջողն է շողշողում
Ծիլերից կախված
Հովն է մեղմ փչում,
Օրորում նրանց:
Ամեն ցողի մեջ

Արևն է ցոլում
Ու դաշտը՝ անվերջ
Ցոլանք է թվում:
Վերում՝ ծիածան,
Ցածում՝ շող ու շաղ,
Ինչ պայծառ ես, կյանք,
Եվ ինչքան չքնաղ:
Ու ջան կասեմ ես մինչև մահ:

ՆԿԱՐԻՉԸ

Ահա դրված են սեղանին վրձին ու ներկ,
Կտավն է լուռ, կույր աչքի պես նայում ահա,
Պետք է միայն նկարիչի հմուտ մի ձեռք,
Որ բաց անի բիբը նրա:
Ո՞ւր է սակայն նկարիչը, ի՞նչ եղավ նա,
Ինչո՞ւ արդյոք տուն չի եկել մի ողջ գիշեր,
Թե գար՝ պիտի վրձինն առներ ինքնավստահ
Եվ նոր նկարն իր սկսեր:
Պիտի շքեղ, մի նոր դպրոց նկարեր նա,
Աշակերտներ, որ դպրոցից ելել արդեն,
Ահա գնում են թանգարան էքսկուրսիա,
Քայլում այնպես ուրախ, թեթև:
Ուսուցչուհին՝ մի լույս աղջիկ, մազերը սև,
Նրանց հետ է, նրանց փնջում խայտաբղետ,
Նայվածքը բոց, և կեցվածքը հպարտ, վսեմ,
Քայլում է իր սաների հետ:
Ձեռքին բռնել է ծաղկեփունջը վառվռուն,
Պետք է կարծել, որ իր սաներն են նվիրել,
Չէ՞ որ իրենց սրտերի մեջ լույս ու գարուն

Եվ արևներ է նա վառել:
Խումբն է անցնում՝ շուրջը զնգուն մեր առօրյան,
Իսկ վերևում, անծայրածիր երկնում լազուր,
Բարձր ճախրում է աղավնին խաղաղության,
Ճերմա՛կ, ճերմա՛կ, ձյունափետուր:
Թե այս գիշեր նկարիչը տանը լիներ,
Պիտի կյանք տար այս փայփայած հղացումին,
Ոգևորված՝ պիտի նստեր ամբողջ գիշեր
Եվ հագցներ նրան մարմին:
Պիտի քայլեր ուսուցչուհին՝ փունջը ձեռքին,
Անցներ պիտի ճանապարհով անմահության,
Ինչ փույթ, եթե սեր չէր տվել նկարիչին,
Թողել էր սիրտն անպատասխան:
Ապրեր պիտի դարերի մեջ՝ դարձած նկար,
Ապրեր պիտի որպես կերպար-ուսուցչուհի,
Բայց նկարիչ ջահել տղան ո՞ւր է, չեկավ,
Որ անմահ կյանք նրան բերի:
Եվ չէր գալու… Հարսանիքն էր ուսուցչուհու,
Եվ նորավարտ մի դասատու՝ նրա փեսան:
Շրջում էր նա՝ սրտում կսկիծը վերքի,
Շրջում մենակ ու լռելյայն,
Սիրո վերջին հույսերն էին բեկվել նրա,
Ու թափառում հուսալքված…
Ու ողջ գիշեր թափառեց նա աստղերի տակ,
Ինչե՛ր ապրեց՝ ի՞նչ հարկ լրիվ իմանալու,
Առավոտյան, երբ տուն եկավ տխուր, մենակ,
Վեհություն կար դեմքին դալուկ:
Առավ վրձինն ու նկարեց դպրոց մի նոր,
Աշակերտներ… և իր սիրած ուսուցչուհուն,
Օ՜, նա մարմին, կյանք էր տալիս ձեռքով հզոր

Իր փայփայած հղացումին:
Ճառագայթում էր կտավից իր սիրելին
Եվ մերթ կարծես ասում նրան՝ ներիր, ներիր,
Ինչ իմանար, որ նրա մեծ, խորունկ հոգին
Ոխ չէր պահել խորքերում իր:

ԵՍ ԵՎ ՆԱ

Հաճախ ենք մենք իրար տեսնում
Առավոտյան կանուխ,
Ես իմ փողկապն եմ հարդարում,
Իսկ նա՝ մազերը թուխ:

Բարևում ենք, խոսում երկար,
Պատմում դեպքեր ծանոթ՝
Մեր ձայնի մեջ, սրտի մեջ վառ
Մի գիշերվա կարոտ:

Խոսում ենք մենք կյանքի մասին,
Թռչում վաղվա հեռուն,
Մերթ էլ քննում աշխարհն անծիր,
Մեզ հասնելիս՝ լռում:

Բայց սիրո հուրն ինչքան պահես
Ծուխն է նրա վկան,
Խոսքերի մեջ, ինչքան խոսես,
Վառվում է նա այնքան:

Պետք չէ ինչու ասել իրար,
Թե սերն ինչքան է խոր,

Մենք այդ զգում ենք սիրավառ
Մեր խոսքերում բոլոր:

Ու խոսում ենք, խոսում երկար,
Ուզում ենք անվե՛րջ խոսել,
Մեր խոսքերում կյանք ու աշխարհ
Եվ… փոխադարձ մի սեր:

ԾԱՂԿԵՓՈՒՆՋ

Բախտը չուզեց, որ լինեինք մենք միասին
Ու քաղեի ես քեզ համար սարի շուշան,
Քեզ ծաղկեփունջ նվիրեի սիրով վառման,
Ինչպես տղան մտերմուհուն իր թանկագին:

Էհ, ի՞նչ արած, քաղել եմ արդ սրտիս խորքից
Հառաչանքներն ու կարոտներն իմ բոցավառ
Ծաղկեփունջ եմ կապել ահա ես քեզ համար,
Ցողել սրտիս արցունքներով անկարեկից:

Ա՛ռ երգերիս ծաղկեփունջը որպես նվեր,
Գիտեմ, անբույր է նվերս, չնչին այնպես,
Բախտը չուզեց, որ շուշաններ նվիրեմ քեզ,
Նա այնքան չար, անկամորթ է:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մենք մանուկ էինք երկու թիթեռ,
Ախ, ո՞ւր մնացիք, լուսե օրեր…
- Մարդիկ ինչո՞ւ են մահից սոսկում,

Հարցնում էր նա ինձ ու ես՝ նրան,-
Մարդ, որ մեռնում է, գնում է կյանքից,
Ինքն է իր սրտում ցանկանում այդ,
Աչքերն է փակում, թե՝ տարեք ինձ,
Տարեք այն ուրիշ աշխարհն անհայտ:
Մենք չենք փակի, չէ՞, աչքերը մեր,
Կապրենք այս կյանքում, իրար կողքի,
Թող գա այդ մահը, տատիկն այդ ծեր,
Թե որ ուժեղ է՝ ու ինքը փակի,
Հենց որ հեռանա՝ մենք բաց կանենք:
Խոստացիր, որ միշտ կապրենք անմահ,
Մեր աչքերը չենք փակի երբեք…
Ու երդվում էինք հավատով խոր,
Գնում խաղալու մարգերում թավ,
Սակայն պատահեց, որ նա մի օր
Փակեց աչքերը, փակեց… հանգավ:
Պառկած էր փոքրիկ իր դագաղում՝
Փոքրիկ ձեռքերը կրծքին դրած,
Ժպտում էր ասես ու ծիծաղում՝
Որ կարծում էին իրեն մեռած:
Դիտմամբ էր փակել, ես գիտեի,
Նա իր աչքերը այս առավոտ,
Որ երբ հեկեկան, լան իր վրա,
Բացի աչքերը իր ծիծաղկոտ,
Ծիծաղով ասի լացողներին.
- Ինչո՞ւ եք լալիս, ես մեռած չեմ:
Օ,՛ ինչքա՛ն պիտի զարմանային
Մարդիկ վշտահար ու տխրադեմ:
Բայց նա մնում էր անխոս ու լուռ,
Եվ ժամերն էին անցնում հերթով:

Ու նրանք, այդ նույն մարդիկ տխուր,
Մոտեցան նրան, վերցրին շուտով:
Հանում են ահա շեմքից նրան,
Տանում թաղելու հողի տակ մառ:
Ես էլ լացեցի, երբ դուրս տարան,
Բայց ոչ թե նրա մահվան համար,
Այլ ի՛ր, ի՛ր համար, որ կզարթնի,
Կուզենա ելնել՝ չի կարենա,
Իսկ երբ ձայն կտա սարսափով լի,
Ոչ ոք չի լսի ձայնը նրա:
Եվ հող կլցվի աչքերի մեջ,
Չի տեսնի ո՛չ ինձ, ո՛չ լույս, ո՛չ կյանք,
Եվ լաց կլինի անվե՛րջ
Փոքրիկ դագաղում, սառն հողի տակ:
Ու ես կանչեցի սարսափահար.
- Այդ ո՞ւր եք տանում, նա չի մեռել,
Եվ սկսեցի գաղտնիքը պարզ
Իմ թոթով լեզվով նրանց պատմել:
Բայց նրանք նայեցին լուռ,
Չասացին ոչինչ, առաջ անցան.
Մի մայրամուտ էր դժգույն, տխուր,
Թաղեցին նրան, վերադարձան:
Իսկ ես ամեն օր գնում էի,
Ամեն օր նրա շիրմին այցի,
Որ առաջինը ե՛ս օգնեի,
Հենց որ ինձ հասներ ձայնը լացի:
Սպասում էի երկա՛ր, երկա՛ր,
Միշտ էլ ականջս հողին դրած,
Բարկանում էի նրա վրա,
Որ մնում էր դեռ այդպես մեռած…

Եվ օրեր անցան, ես հասկացա,
Որ մահը երբեք չի կատակում,
Հասկացա նաև, որ նրա հետ
Իմ մանկությունն է թաղված հավետ…

***

Ի՜նչ բերկրանք է կանգնել Մեծդոշ սարի դիմաց,
Նրա հայացքի դեմ, գերեզմանում անգամ
Ինձ թվում է ինչ-որ հպարտություն կզգամ:
Ցածր է Էվերեստից սարը իմ հայրենի,
Բայց Էվերեստն էլ զա՝ նա ծունկի չի իջնի,
Չէ՞ սերում է ինքն էլ հսկաների ցեղից:

Մեծ դոշ ունի՝ մեծ կուրծք, ունի նաև մեծ սիրտ,
Ինձ կթաղեք այստեղ, նրա հայացքի տակ,
Ինձ թվում է, չեմ զգա ես երբեք մենակ:

ՍԱՐՆ Ի ՎԵՐ

«Դեպի վեր, սարն ի վեր»
Հովհաննես Հովհաննիսյան

Օ՜, տխրությո՛ւն, ինչպե՞ս լեռները բարձրացար…
Ես երգ պիտի գրեմ բարձունքների մասին,
Զորերն են ինձ ձգում…
Զորն ի վար շնկացող զեփյուռն իմ ականջին
Փսփսում է անվերջ բամբասանքներ,
Թե՝ ես, իմ ընկերներ, դավաճանել եմ ձեզ,
Եվ մեկը ձեզանից, որին սիրել եմ ես
Բոլորից ավելի,

Բոլորից բարձր է ինձ հայհոյում...
Ես երգ պիտի գրեմ բարձունքների մասին,
Ձորն եմ իջնում սակայն։
Այնպես ձորն էր իջնում երեկ մեկը ձեզնից,
Որին սիրում եմ դեռ բոլորից ավելի
Եվ ես ասում էի՝ հաղթի՛ր, հաղթի՛ր...
Ի՜նչ հեշտ էր ուրիշին կոչել դեպի բարձունք...
Եվ հենց դրա համար ես ինձ պիտի հաղթեմ
Ու իմ երգը գրեմ բարձունքների մասին։

(1967 թ.)

***

Օրերի փոշին է ելնում,
Ծածկում է քո դեմքը լուսե,
Օրերի երթի մեջ հորդուն
Ես քեզ մոռացել եմ, իմ սեր։
Ես ինչպե՞ս հիշեի երկար՝
Մինչև մահ, մինչև գերեզման,
Երբ ցնորքս, հոգիս խելագար
Քեզանից սնունդ չստացան։
Բայց ես սիրեցի քեզ անհուն,
Քեզ հոգով, սրտով սիրեցի,
Պատկերդ էր իմ դեմ ցոլանում
Եվ դյութված մրմնջում էի
Ես խոսքեր լույսով հարբածի,
Հնազանդ աղոթքներ առ քեզ։
Դու աստված էիր շողարձակ,
Ես միստիկ՝ քեզ հասնել ձգտող,
Ինչքան ձգտեցի՝ հեռացար։
Օրերի երթի մեջ ահա
Չեմ նայում էլ վեր, քո հեռուն,

Աշխարհիկ մի մարդ եմ խնդուն,
Այլև անաստված եմ հիմա:

***

Երբ լինում եմ ես տխուր, տրտում,
Մարդուց, աշխարհից հիասթափված,
Քո ջինջ պատկերն եմ մտաբերում,
Պարզվում է հոգին իմ ամպամած:

Ու սիրում եմ ես կյանքը կրկին,
Սիրում աշխարհը սիրով անհուն
Այն բանի համար, որ դու, անգին,
Ապրում ես, քայլում այս աշխարհում:

Ու բախտավոր եմ ինձ զգում ես,
Որ ծնվել ես դու, ապրում ես, կաս,
Որ քո գոյությամբ ապացուցես,
Թե մարդն աստծուց քի՛չ է պակաս:

***

Սիրել են ծերերն էլ, գիտե՞ք,
Նրանք էլ ջահել են եղել,
Բայց վաղուց մոխիր են սառած,
Մի՛ փորձիր կրակներ պեղել:
Նրանց պես կլինեմ ես էլ,
Իսկ հիմա, իսկ հիմա, ասա՛,
Քեզ ինչպե՞ս մոռանամ, իմ սեր,
Երբ այնպե՛ս գեղեցիկ ես դու,
Երբ այնպե՛ս ջահել եմ ես դեռ:

(1967 թ.)

***

Կգա օրը, ես քո մոտով
Կանցնեմ՝ լցված այլ կարոտով
Եվ անտարբեր քո նկատմամբ։

...Ավա՜ղ, չեկավ այդպիսի պահ,
Ես քո մոտով նորից անցա
Ինչպես աշնան մթնած մի ամպ։

(1967 թ.)

***

Ծորում է հին մի երգ, գնում հեռո՜ւ, հեռո՜ւ,
Շատ է թախծոտ հարկավ, որ լաց եմ լինում ես,
Թափվում է արցունքս առու-առու,
Գուցե թախծոտ էլ չէ, բայց իմ մտքերի մեջ
Աշնան անձրև է պաղ, տերևաթափ…
Ախ, կանցնի այս երգն էլ, մի օր կունենա վերջ,
Կյանքի ծառին դեղնած մի տերև է նա էլ։
Շատ կարճ է մեր կյանքը, շատ-շատ՝ հարյուր տարի,
Մի խեղճ տերևի կյանք հավերժի անտառում,
Էլ ո՞ւր են մեզ պոկում կանաչ, կանաչ,
Մեկ է՝ կընկնենք ծառից, երբ գա տերևաթափ,
Ծորում է հին մի երգ, լսողն ո՞վ է սակայն…

(1967 թ.)

***

«Նա աշխարհը չէ, սիրտ իմ, իմացիր,
Մի աղջիկ է նա, միայն մի աղջիկ,
Ինչ անենք, եթե մի սիրտ անբասիր
Եվ աչքեր ունի անչափ գեղեցիկ»։

Հորդոր էր կարդում, հորդոր այսպիսի
Ինքը իր սրտին սիրամերժ տղան,
«Եվ աչքեր ունի անչափ գեղեցիկ»,
Արձագանքում էր սիրտն ի պատասխան:

«Անչա՛փ գեղեցի՛կ», հեգնում էր մի ձայն,
Ժամանակն էր այդ խառնվում գործին,
«Նա աշխարհը չէ, գուցե ոչ էլ այն,
Ինչ որ շուրթերդ այսօր ասացին»:

Փնտրում էր լեզուն, որոնում բառեր
Եվ մի օր գտավ բառերը հարմար.
«Բարի ճանապարհ», շշնջաց անսեր,
Սիրտն արձագանքեց. «Բարի ճանապա՛րհ»…

***

Մենակ ես չէ, որ հառաչել եմ սիրուց,
Ինձնից առաջ Պետրոս Դուրյանն է եղել,
Սայաթ-Նովան նվաղել է շատ լալուց,
Հայնեն՝ աշխարհն արցունքներով հեղեղել:

Սակայն նրանք գտնում էին վշտից ելք,
Մխիթարվում ջերմ գրկի մեջ մուսայի,
Ապրում էին այնտեղ և՛ խինդ, և՛ վայելք,
Սիրում արվեստն ամեն ինչից ավելի:

Մենակ ես եմ, որ կործանվում եմ սիրուց,
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար,
Սրտիս խորքում այնքա՛ն երգեր պահած լուռ՝
Անցնում եմ, ա՛խ, այսպես անփառք, աննշմար:

***

Գարուն ես դու այնպես անուշ, կախարդիչ,
Ունես վարդեր ու շուշաններ սպիտակ,
Աչքերիդ մեջ առավոտներ ունես ջինջ,
Գարնան անհուն թրթռումներ՝ կրծքիդ տակ։

Գարուն ես դու, ա՜խ, և՛ ամպեր ունես դու,
Ե՛վ կայծակներ, որ բաժինն են իմ հոգու։

(1967 թ.)

***

Դու երբեք չես եղել մեր սարերում,
Եվ չեն եղել երբեք նրանք այսքան թովիչ։
Նստում ես դու կողքիս, կանաչների վրա,
Ես հիշում եմ հանկարծ կակաչների մասին,
Ափսոս, դեռ չեն բացվել, որ քեզ համար քաղեմ…
Ու թեք լանջին պառկած մենք միասին
Կակաչներ ենք տեսնում,
Նրանք աստղաբույլեր՝ մեր շուրջը սփռված,
Ցերեկը երկնքից այնպես թափվում են ցած,
Որ համբառնան նորից երեկոյան։
Կարմիր խտուտներ կան մեր աչքերում
Եվ կա մի բոցածուփ երանություն,
Ախ, ի՜նչ գեղեցիկ է մեր սարերում։

(1967 թ.)

***

Լալիս էր նա, և սրտի մեջ նրա մթնած
Կիրք էր դառնում, ահագնանում այն իղձը դեռ,
Որ գեղուհին, որի սիրուց աչքերն են թաց,
Զոջար ու մի՜շտ հիշեր իրեն։

Օրեր անցան: Նա իր վիշտը տված քամուն՝
Ապրեց կյանքի, աշխարհի հետ քայլը քայլին,
Էլ չէր ուզում զղջումն այրեր այն գեղուհուն,
Մոռացվել էր իր սիրելին:

Ապրում է նա և երջանիկ իրեն զգում,
Որ սիրում է կյանքը, մարդուն, աշխարհը ողջ,
Բայց մի այրող ծարավ ունի իր խոր հոգում՝
Զգալ, թե ինչ է սերը կնոջ:

Ով այսպիսի ծարավ ունի հոգում պահած,
Նա վաղ թե ուշ կրկին անգամ պիտի սիրի,
Լայն է աշխարհն ու գարունը՝ համատարած,
Որ երջանկությունը մնա թերի:

ԵՐԿՈՒ ԱՄՊ

Ամպը ամպի դեմ ելած՝
Սրտապատառ որոտաց,
Դղրդոցում ամեհի
Վախն էր ասես թաքցնում,
Խղճի բոցն էր հանգցնում
Շանթերի մեջ, հրդեհի:
Հեշտ չէր կռվել երևի
Իր պես զինված ամպի դեմ,
Ու գոռում են ահալի
Երկու բանակ, երկու ամպ
Մահ տեսածի սաստկությամբ:
Սիրտ չեն անում մեկ-մեկու
Կուրծքը խոցել ահարկու,

Եվ շանթերն են ընկնում ցած,
Լեռան կողին փշրվում։
Է՛խ, դուք, ամպեր, թե իրավ
Կռվել չէիք ցանկանում,
Ինչո՞ւ էիք ամբարում
Ձեր ծալքերում այդքան շանթ։
Ամբարել եք և ահա
Չուզենալով էլ կռվել
Մարտի դաշտ եք դուք նետվել
Սրտապատառ որոտով։
Թե անձրև եք տեղալու,
Ներում ունեք, ամպեր, դուք,
Միշտ էլ այդպես ահարկու
Զոհողությամբ է լինում
Բարու ծնունդն աշխարհում։

(1987 թ.)

***

Գարնան առաջին ամպրոպն է թնդում,
Առաջին կայծակն իջնում ժայռերին,
Այս ի՞նչ սև ամպ է ելել իմ սրտում,
Ես չեմ ուզում լալ նոր գարնան շեմին։

Նայիր, առաջին անձրևն է գալիս
Այնպես հորդ՝ կարծես հեղեղ է թափվում,
Գուցե մի սիրտ է կարոտից լալիս,
Մի վիթխարի սիրտ այնտեղ, վերևում։

Որոտաց ահա ամպրոպը կրկին,
Թե՞ մի դժբախտ էր սիրուց հեկեկաց,
Բայց ով էլ լինի՝ մեծ է այդ հոգին
Եվ դղրդալիս՝ նրա լացն անգամ։

Թե տխրությունն է ընկել ինձ բաժին,
Ես էլ կուզեի հեկեկալ այդպես
Թող արար աշխարհ՝ մինչ ափը վերջին
Թնդար իմ լացից՝ լիասի՛րտ ու մեծ:

(1955թ.)

***

Ասես ուներ նազանքը քո
Անցորդուհին այս գեղիրան
Ու քանի՛սը զմայլանքով
Հա նայում են, նայում նրան:
Ջինջ են աչքերն ու կրակոտ
Լիքն են կյանքով՝ քոնի՛ նման,
Նայվածքն ասես մի առավոտ՝
Առավոտում այս թովչական:
Քայլում է նա ու մեղմ ժպտում,
Ժպիտն անուշ՝ ժպիտիդ պես,
Այսքան էլ շատ նմանությո՞ւն,
Գողացել է քոնը կարծես:
Այսքան էլ շատ նմանությո՞ւն,
Իմ սեր, քո և նրա միջև,
Ասես երկու աստղից սիրուն
Միասին եք աշխարհ իջել:
Չքնաղ է նա, բայց ինձ համար
Գեղեցկությամբ զիջում է քեզ,
Քո երկրորդը չկա իրավ,
Մի հատ ծնվեց կյանքում քեզ պես:

***

Խենթ եմ եղել և խելագար,
Ես այդ հիմա եմ հասկանում,
Որ խորհել եմ երկա՛ր, երկա՛ր,
Թե տեղ ունեմ ես քո սրտում:

Ասում էի՝ չի մոռանում
Նա խոսքերս վաղուց ասված,
Սա ինչ-որ բան խորն ու թաքուն
Նշանակում է անկասկած:

Ասում էի՝ երբ իմ մասին
Գովեստով են խոսում ոմանք,
Նրա քնքույշ, լուսե դեմքին
Ճառագայթում է խոր հրճվանք:

Ասում էի՝ նա գաղտնաբար
Փորձ է անում իմանալու,
Թե պաշտո՞ւմ եմ անունն իր վառ,
Ինչպես անունը աստծու:

Ասում էի՝ երբ խռոված
Սիրելի «դու»-ն դարձնում եմ «դուք»,
Նա հոնքերը կախում է ցած,
Ձայնն ավելի դարձնում փափուկ:

Ախ, ո՞րն հիշեմ այսպես մեկ-մեկ,
Եվ ինչո՞ւ էլ հիշեմ դրանք,
Երբ չես սիրել դու ինձ երբեք
Ու եղել է ո՛ղջը պատրանք:

***

Պատմում էիր երբեմն դու,
Թե քանիսն են հայտնել քեզ սեր,
Մերժել ես դու քանի՛ հոգու,
Փշրել սիրո քանի՛ հույսեր:

Բայց նրանցից մեկը մնաց
Իմ հուշերում՝ անջնջելի,
Կանգնում է միշտ հոգուս դիմաց
Այդ խեղճ մեկը քո սիրով լի:

Ու, ինչպես դու պատմում էիր,
Նա գալարվում է մորմոքից
Ու մայրիկիդ ոտքերն ընկած
Ձեռքդ է խնդրում նորի՛ց, նորի՛ց:

Նա հեռանում է գլխիկոր,
Ամուսնանում ուրիշի հետ,
Իր կնոջը ասում մի օր,
Թե ինձ էր նա սիրում հավետ:

Ատում եմ այդ պարծենկոտին,
Խեղճ՝ իր հոգով, էությամբ՝ հեգ,
Շնորհակալ եմ իմ սրտից,
Որ այդքան ցած չիջավ երբեք:

Չեմ թաքցնում՝ մերժել ես ինձ,
Սրտիս խփել հազար սուր նետ,
Դրան վկա և ապացույց
Թող երգերս լինեն քեզ հետ:

***

Իմ ա՛լ վարդեր, ընկած եք դուք
Մայթի վրա, ոտքի տակ,
Ձեր թերթերին կա ջերմ արցունք,
Ես եմ լացել գլխահակ:

Ձեզ չպահեց սիրածն իմ հուր,
Պատուհանից նետեց դուրս,
Ախ, իմ վարդեր, թոշնում է լուռ
Ձեզ հետ գարունն էլ սիրուս:

***

Երբ սկսեցի ես զանազանել
Սրտի ձայները կոկորդայինից,
Եկար դու, Հայնե,
Եվ իմ գլուխը շոյեցիր ժպտուն,
Ինձ հետ երգերդ բերեցի ես տուն
Եվ մի ցանկություն՝
Թե, ա՛խ, լինեի ես քեզ նման ձայնեղ:
Երբ պետք էր խայթել, ես մրմնջացի՝
Ախ, թե լինեի մի Հեյնրիխ Հայնե,
Դարձյալ քո անունն հնչեց շուրթերիս,
Երբ ես ուզեցի լեզու տալ հրե
Ամենաքնքույշ իմ հուզմունքներին:
Հիմա, երբ սիրտս սիրո ցավի մեջ
Անունն է ճչում մի չար աղջկա,
Երազում եմ ես դարձյալ ու անվերջ,
Թե, ա՛խ, լինեի… մի Հեյնրիխ Հայնե.
Նա քեզ, բարեկամ, սիրում է շատ խոր
Եվ ես… խանդում եմ:

Թե չլինեիր դու վաղուց մեռած՝
Չէր շարունակվի, խզված կլիներ
Մեր այսքան տարվա մտերմությունը,
Եվ մենամարտում, գնդակ չարձակած՝
Ես քո գնդակից կընկնեի անձայն:

***

Զյունը…
Բնության ցասումն է ձյունը
Խոլ բարկությունից շուռ եկած, չռված
Նրա աչքերի սպիտակուցը…

Բայց ես ուրախ եմ,
Անզոր են նրա ցուրտն ու սառույցը
Իմ խնդության մեջ ճերմակ եղյամի
Գեթ բարակ, բարակ մի թել գծելու:

Սահում եմ ես ցած,
Ֆիննական թեթև իմ դահուկներից
Զյունափոշին է իբրև հետագիծ
Երկարում ահա լեռան սեգ կրծքին:

Դարձել է քամին երգեհոնահար,
Հենց իմ ականջի թմբկաթաղանթին
Երգերով հարուստ այս հին աշխարհի
Ամենաուրախ երգն է նվագում:

Բույր կա հոգուս մեջ,
Իմ հոգու ամեն, ամեն ծալքում
Զյան պես սպիտակ վարդեր են ծաղկում:

***

Ձմեռ եկավ նորից:
Ձյուն է գալիս հիմա մեր սարերում,
Փափուկ, սպիտակ ձյուն,
Ախ, լինեի այնտեղ ու ոտքերով բոբիկ
Վազեի ձյան միջով:
Գուցե բուքն է ոռնում մեր սարերում հիմա
Անդունդներից մինչև գագաթները խրոխտ:
Իմ հոգու մեջ երբեք չի լռելու
Այդ սիմֆոնիան ճերմակ,
Որ մեր լեռներն հիմա նվագում են
Եվ նվագեն պիտի ի պատիվ ինձ,
Երբ այցելեմ իրենց:

Ձյուն է գալիս թեթև, թեթև,
Մաքուր, ինչպես մանկան երազ.
Այստեղ է դառնում արծաթաթև
Ու թափվում է, թափվում վրաս:
Տես ինչքան է եկել, եկել,
Ողջ աշխարհը ճերմակ ներկել.
Տես ինչպես է անապ դառել,
Աշխարհը ողջ գիրկը առել:

Բայց չի հանել նա ոչ մի ձայն,
Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ.
Ու որքան ծառ պիտի ծաղկի,
Որքան արտեր կանաչաշուք
Որքան սերմեր պիտի ծլեն,
Որքան կանաչ տերև ու թուփ:
Ու չի հանի նա ոչ մի ձայն,

Նա ոչ մի ձայն, ոչ մի շշուկ,
Միշտ այդպես է, այդպես է նա,
Ծով բարիքներ կտա հողին,
Լուռ կհալչի ու կգնա։

***

Ձյուն է գալիս այնպես մեղմ ու այնպես տաք,
Փաթիլներն են օրորվում լույս նազերով,
Փարվում դեմքիդ, կորչում սիրուց հալվելով
Կամ հեզաբար փռվում են լուռ ոտքիդ տակ։

Դեռ սպասիր, նրանց սիրուց մի ցնծա,
Վաղը նրանք կմիանան քամու հետ
Եվ սպիտակ ոռնոցներով չարաղետ
Կլցնեն դաշտ, անտառ ու ձոր ծայրեծայր։

Եվ կծեծկեն, կճանկռտեն դեմքը քո,
Որ համբուրում էին երեկ քնքշորեն,
Կհռհռան իրենք վրադ, կծաղրեն,
Բայց կփակեն քո բերանը պաղ ձեռքով։

Սակայն հիմա երկինքն ամպել կաթնագույն,
Ձյուն է գալիս ի՜նչ մտերմիկ ու ի՜նչ տաք,
Եվ դա հանկարծ ավելին չէ, քան դիմա՜կ…
Սեր, խաբում ես դու էլ հաճախ ինչպես ձյուն։

(1987 թ.)

ՍՈՆԵՏ

Տեսնես ի՞նչ են ձնծաղիկներն ասելու,
Որ դեռ ձմեռ՝ աշխարհ գալ են շտապում,
Ի՞նչ գաղտնիք կա նրանց քնքույշ թերթերում,
Որ տխրում են, երբ ճար չկա բացելու։

Լեզու առնեն՝ ի՞նչ բառերով կխոսեն,
Աչիկներն են թարթում ահա մեղմաբար,
Շուրջը նայում, մարդ են փնտրում անդադար,
Որ ի՞նչ ասեն այնպես մեղմիկ, ծաղկերեն։

Գիտեն նրանք մի մեծ գաղտնիք երևի,
Այնպիսի խոսք, որ երբ ասվի աշխարհին՝
Սիրտն ախտերից պիտի ընդմիշտ մաքրվի։

Ինչ ասում են՝ մեկ է, ոչ ոք չի լսում,
Չի հասկանում նրանց լեզուն ոչ մի սիրտ,
Դեռ ձյուն-ձմեռ՝ ո՜ւր են աշխարհ շտապում։

(1967 թ.)

***

Իմ ոտքերի տակ է բնությունը դարսում
Լեռներն իր՝ ծալծլված հազար տեղից,
Իր ձորերը՝ գծեր քաշում ոտքերիս տակ,
Որ ես բաղձամ անցնել ամեն սահմանագիծ։
Եվ նայում է նա ինձ քարայրների խորքից,
Որ իր աչքերի մեջ այդ խոր ու մութ
Իմ աչքերով բացեմ ես լուսամուտ
Եվ զգամ, որ ես կամ ու բացում եմ, ահա

Իր գանձերը մեկ-մեկ, մութ բիբերում պահած:
Հոգնել է անկասկած գաղտնիքներից բազում,
Ախր շատ է պահել՝ քանի՜ հազարամյակ
Եվ էլի չի սպասում,
Չի դիմանում ցավին մենակության,
Շատ է ուզում ինձ հետ շատախոսել,
Վերջին, վերջին պահին փոշմանում է սակայն,
Ու լռում է՝ հազիվ մի երկու բառ ասած,
Ինչպես իմ պապերին և պապերին նրանց…
Ես զգում եմ ահեղ տառապանքը նրա,
Որ իբրև երկրաշարժ դղրդում է ներսում,
Իր հոգոցն եմ լսում,
Որ ժայթքում է իբրև գոռ հրաբուխ…

***

Դու չկայիր կյանքում, չէր ծնվել քո մայրն էլ,
Քո տատիկն էր միայն, քեզ պես բողբոջ աղջիկ,
Այս տեղերում շատ է նա կակաչներ փնջել,
Որ բուսած են եղել այս արմատից գուցե:
Ղաչաղ սարդարն այստեղ հարբել է ու երգել
Կակաչներից էլ շատ՝ փունջ կապողի բույրից,
Եվ այրվել է անծուխ ղաչաղ սարդարն այստեղ
Կակաչներից էլ ալ շրթունքներից նրա:
Բայց փնտրում էր նրան գնդակն արյունահեղ…
Եվ մի օր էլ գտավ,
Ընկած էր նա արնոտ, իր հոլիկի կողքին,
Մխում էր դեռ վերքը, արյունը չէր սառել,
Եվ վայրի եղջերուն՝ թարմ կանաչը դնչին,
Անցնում էր մոտիկից, չէր խրտնում ու փախչում:
Եվ եղջերվի նման բառաչելով վայրի

Տաք դիակին ընկավ քո տատիկն ապագա,
Հենց աչքի դեմ հաղթող տանուտերի,
Որի հոգին շատ էր դաչաղ սարդարն հանել:
Ու թաղեցին նրան իր հոլիկի առջև…
Քարուքանդ է եղել այդ հոլիկը վաղուց,
Քարուքանդ է եղել և աղջիկն այն բողբոջ,
Բայց տեսնում է մտքում հոլիկը միշտ կանգուն,
Գրկում է թոռներին և հառաչում թաքուն,
Որ դիմագծերում նրանց թովիչ
Իր առաջին սիրուց չկա ոչինչ, ոչինչ:
…Դու էլ, ասա՛, այդպես ինձ կհիշե՞ս…

***

Մեր նավն ամուր, արագասահ
Ալիքներն է ճեղքում ծովի,
Մեգ է, մշուշ ծովի վրա,
Որոնում է հողմը կատաղի:

Ալիքներն են լեռնանում վեր,
Զարկվում, խուժում տախտակամած,
Ալիքների մեջ տարուբեր
Գուցե շուռ գա մեր նավն հանկարծ:

Ահն է պատում կողքիս մարդկանց,
Սակայն կանգնած նավախելին
Ծաղրում եմ ես տարերքն անսանձ,
Ախ, իմանար իմ սիրելին…

ԼՈՒՌ ՄԵՐ

Վարդ ու մեխակ, թեքված իրար
Գիտեմ ի՛նչ եք ասում,
Հասկանում եմ ես բառ առ բառ
Ձեր լուռ սիրո լեզուն։

Ես ու նա էլ գլուխ-գլխի
Խոսում ենք անդադրում,
Կյանքն ենք քննում, աշխարհն անծիր,
Մեզ հասնելիս՝ լռում։

Բայց սիրո հուրն ինչքան պահես՝
Ծուխն է նրա վկան,
Խոսքերի մեջ՝ ինչքան խոսես՝
Վառվում է նա այնքան։

Ու խոսում ենք մենք սիրավառ,
Ինչքա՜ն քաղցր է խոսել
Մեր խոսքերում կյանք ու աշխարհ
Եվ... փոխադարձ մի սեր։

(1967 թ.)

***

Եվ ի՞նչ մնաց ինձ հին վշտից, սիրուց,
Միայն մի անուն ինչ-որ աղջկա,
Այն էլ սակավ եմ հիշում ես վաղուց,
Նա իմ մտքերում և՛ կա, և՛ չկա։

Եվ մի սիրտ մնաց, իմ չոր սիրտն է այդ,
Որ կարող է դեռ բռնկվել նորից,
Երբ որ ներս մտնի մի նոր ճառագայթ
Նրա մշտաբաց, լայն պատուհանից:

Եվ այս միտքը պարզ, այս միտքը մնաց,
Որ սուտ է, չկա սեր հավերժական,
Սիրտս օրերում փորձաքար արած՝
Փորձով հասկացա դիալեկտիկան:

ՏԱՂ ՀՐՃՎԱՆՔԻ

Երբ կողքիս ես, ես չեմ քայլում,
Ես ճախրում եմ մովում երկնի,
Ցած են մնում արծիվները.
Ինձ թևեր է տալիս սերը,
Ու իմ թևին թև չի հասնի:

Սուզվում եմ ես խորքն աչքերիդ
Այսքան սև ու այսքան վճիտ,
Ինչպես լույս ու խավար մեկտեղ.
Քո այդ պայծառ աչիկների
Թովիչ սևին սև չի հասնի:

Սիրո կենացն եմ ես խմում,
Դուք էլ խմեք, անուշ լինի,
Եվ ամենքդ ասեք ինձ պես,
Որ սիրուց եք առել թևեր
Ու ձեր թևին թև չի հասնի:

(1967 թ.)

***

Ահա ինձ համար կենտրոնն աշխարհի
Ձեր տունը՝ ասես մարմարից շինված,
Ձեն հսկում աչքերն հարևանների,
Մտնե՞լ արդյոք ներս դռներից այս բաց:

Ու ելնում եմ ես ձեր սանդուղքներն ի վեր,
Ինչ երկար է այն, ասես վերջ չունի,
Թվում է՝ քաղաքն այս բամբասասեր,
Ամբողջ քաղաքն է նայում ինձ գաղտնի:

Թվում է՝ արդեն ասում են իրար,
(Լսում եմ կարծես շշուկը նրանց)։
- Էս են տղեն է դժբախտ սիրահար,
- Տեսնես էդ ինչու նրանց տուն գնաց:

Ու թվում է ինձ, թե փուլ են գալիս
Երկինք ու պատերն իմ գլխի վրա,
Քաշվելո՞ւց արդյոք, որ նայում են ինձ,
Թե՞ դժբախտ սերն է պատճառը դրա:

***

Բավ է, ասի, ողբամ այսպես՝
Դարձած տխուր մի ասպետ
Ու միջոցներ փնտրեցի ես,
Որ մոռանամ քեզ հավետ:

Չկար, սակայն, ոչ մի միջոց,
Ախ, երանի թե լիներ,
Գեթ մի անգամ ես քո մոտից
Անց կենայի անտարբեր:

***

Ապոլոնն ինձ տվեց քնար,
Աֆրոդիտեն՝ ծարավ մի սիրտ,
Ու դրեցին ինձ ճանապարհ
Դեպի աշխարհն այս անբասիր:
Հենց ես երգել սկսեցի,
Մեկը ցոլաց աչքերիս դեմ
Եվ նազանքով իր կանացի
Շուրջս փռեց հազար եղեմ:
Կախարդվեցի, ընկա գերի,
Նա իր գերուն տանջում է արդ,
Կտրում լարերը քնարի,
Քրքջում է բիրտ ու հպարտ:
- Պիտի լինես, ասում է նա,
Կամ սիրահար, կամ բանաստեղծ,
Իմ ցանցն ես դու ընկել հիմա.
Տանջվի՛ր, մեռի՛ր այսպես էլ հենց:
Խաբեց ինձ այդ կախարդուհին,
Այդ հրաշքը վառ, ցոլցլուն:
Աֆրոդիտեն չար էր կարգին,
Որ ինձ տվեց մի սիրտ անհուն:
Չէի սիրի ես այսպես խոր,
Չէի լինի սիրուն գերի,
Ու կթնդար ուժգին ու գոռ
Հաղթարշավը իմ երգերի:
Փրկիր դու քեզ, իմ բարեկամ,
Ճանաչելով կախարդուհուն
Եվ մի սիրիր ոչ մի անգամ
Ոչ մի կնոջ այս աշխարհում:
Օ՜, մի դառնա նրան գերի,

Ու մի՛ լինիր դու էլ ինձ պես,
Թե ուզում ես քո երգերի
Հաղթարշավը կյանքում տեսնես:

***

Երբ խոսում են լավի մասին,
Ես միշտ քեզ եմ մտաբերում,
Ու այրվում է սիրտս կրկին
Կարոտի բորբ կրակներում:

Երբ խոսում են բարձրի մասին,
Սիրտս թռչում է քո հեռուն
Քեզ հետ՝ զգում եմ վերստին
Ես ինձ պայծառ բարձունքներում:

***

Չեմ հավատում բարիներին,
Երբ խոսում են անվերջ իրենց բարությունից,
Երբ չեն տեսնում աչքը ճանկռող իրենց թերին,
Սակայն քոնը քրքրում են ներսից, դրսից:
Զգույշ եղիր, որ պատահմամբ չտրորես
Գետին ընկած մազը նրանց,
Նրանք այնպես վարպետորեն կժպտան քեզ,
Որ չես տեսնի այդ ժպտի տակ օձը զարթնած:
Մի հավատա բարիներին,
Երբ խոսում են անվերջ իրենց բարությունից,
Խոսքի քողով պարուրում են իրենց հոգին,
Քողը ետ տար ու տես ճանկերն սպառնալից:

(1987 թ.)

ԳԱՋԱՆԱՆՈՑՈՒՄ

Ինչպե՞ս, ինչպե՞ս դու շղթայի զարկվեցիր,
Առյուծ էիր, անապատի շեկ կայծակ,
Ո՞նց ես հաշտվել, որ դրել են քեզ վանդակ,
Աչքերիդ դեմ ցանցել երկինքն իսկ անծիր։

Քար են նետում մանուկները քեզ վրա,
Կանայք իրենց թաշկինակներն են ճոճում,
Լեզու հանում, քեզ ծաղրելով քրքջում,
Չէ՞ որ վանդակն ամուր է շատ, պողպատյա։

Բայց դու ահա մոնչացիր խոլաբար,
Եվ ճաղերը մոմից շինված թվացին,
Կանայք փախան՝ նման հողմից քշվածի,
Մանուկները ծառը ելան դողահար։

Ու գլորվեց մոնչյունդ ժայռի պես
Ու դղրդաց ձորերն ի վար անարգել,
Այդ մոնչյունն ո՞վ կարող է վանդակել,
Թեկուզ գերված, բայց դու էլի առյուծ ես։

(1987 թ.)

ԲՈՒՆ ԵՎ ՍՈԽԱԿԸ

(առակ)

Այնպես եղավ, որ անտառում
Մնացին լոկ սոխակն ու բուն,
Կամաց-կամաց մտերմացան
Ու անբաժան ընկեր դարձան։

Սոխակն անուշ երգ էր ասում,
Բուն լսում էր, կարծիք հայտնում.
- Չեղավ, ափսո՜ս, ի՞նչ երգ է դա՝
Սըվ-սըվ, սըվ-սըվ՝ մեջը ի՞նչ կա,
Եթե ձգես, սոխակ ընկեր,
Երգես գուցե դու լավ երգեր.
Թե չէ՝ սըվ-սըվ, դա էլ ե՞րգ է,
Երգ անվանել դրան մեղք է:
Ու սոխակը՝ սիրտը խոցուն
Ուրիշ մի երգ էր ստեղծում
Ավելի խոր, զմայլելի,
Որ բու ընկերն իրեն գովի:
Բայց սա էլի՝ չեղա՜վ, չեղա՜վ,
Այս անգամ էլ չերգեցիր լավ,
Բայց փորձ արա, մի վիատվիր
Եվ կստեղծես երգեր ընտիր:
Սոխակն էլի սիրտը խոցուն,
Աշխարհներ էր երգով բացում,
Ծառ ու ծաղիկ՝ շունչը պահած,
Լսում էին նրան դյութված,
Բայց բուն գլուխն էր օրորում,
Թե՝ սիրտ չկա այս երգերում:
Խեղճ սոխակը իրեն կորցրած՝
Երգի ձևը փոխեց անդարձ,
Մերթ կռնչաց, մերթ կռավեց,
Ինչ ձայն, ասես, որ չհանեց:
Երգեց այդպես նա անտառում,
Ընկերոջն իր դրվատեց բուն.
- Հիմա երգիչ ես իսկական,
Իմ շնորհիվ հասար դրան:

ՀԱՅՐԱԿԱՆ

(Որդուս՝ Զավեն Վարդանյանին)

Ա

Այն մի օր էր, այնպես նման այլ օրերի,
Բայց և ուրիշ, բայց և ուրիշ մի օր էր այն,
Դու բախեցիր քո թաթիկով դուռն աշխարհի,
Եվ քո դիմաց բացեց աշխարհն իր դուռը լայն։

Ամպն իջել էր ու բարուրել առավոտը,
Ամպոտ լույս էր, ամպոտ ծառեր, շենքեր ամպոտ.
Մառախուղ էր, չէր հեռանում, ալարկոտ էր,
Վայր էր ընկել ու մնացել դռների մոտ։

Բայց ինձ համար լուսավոր էր առավոտը,
Իմ հոգու մեջ քո աչքերից լույս էր կաթում,
Թրթռում էր արդեն իմ մեջ քո կարոտը,
Ինչպես ծիլը նոր դուրս ելած՝ գարնան արտում։

Եվ նորածիլ այս կարոտը աչքն իր բացում,
Քեզ չտեսած՝ քո պատկերը արարում էր,
Է՛լ չեմ տեսել այսպիսի պահ՝ լիքն ու ցնծուն,
Ասես մի մեծ, լուսե երգի վարարում էր։

Այն մի օր էր՝ քո ծնունդն էր այս աշխարհում,
Ու աշխարհը նորանում էր,
Քո սուր ճիչով դու լույս էիր ազդարարում,
Մառախուղը՝ ինչքան էլ ծույլ՝ հեռանում էր։

Բ

Բարի գալուստ,
Ես ասացի «Բարի գալուստ», չհասկացար,
Դեռ չգիտես դու ոչ մի բառ,
Առաջին բառ կունենաս դեռ։
Եվ առաջին գարուն, ամառ,
Նաև աշուն, նաև ձմեռ
Մի տարվա մեջ կունենաս դեռ
Եվ առաջին տարի՝ նույնպես։
Մի օր դպրոց կտանեմ քեզ,
Եվ կունենաս առաջին հինգ,
Երազով լի մի ողջ երկինք,
Թե թևավոր ծնված լինես։
Դեռ կունենաս առաջին երգ,
Բարձր երգիր, ամբողջ ձայնով
Եվ կունենաս առաջին սեր,
Գուցե նաև առաջին վերք,
Փշով լիքն է սիրո ճամփան։
Դեռ առաջին ինչքա՜ն շատ բան
Սպասում է քեզ հոտնկայս
Աշխարհում այս։
Բարի գալուստ,
Բարի ճամփա։

Գ

Քո աչքերը
Սև թանաքի երկու կաթիլ դեմքիդ վրա,
Ինձ են պլշած նայում ահա։

Քո ձեռքերը
Փոքրիկ-փոքրիկ երկու շուշան կրծքիդ դրած,
Ես բուրմունքն եմ զգում նրանց։

Քո ոտքերը,
Մի մատնաչափ քո ոտքերը այնպես փխրուն
Ափիս մեջ եմ տեղավորում։
Քո սրտիկը,
Բայց չգիտեմ քո սրտիկը
Ես ինչի՞ հետ համեմատեմ,
Ինձ անծանոթ շատ խոհեր կան քնած այնտեղ,
Պիտի զարթնեն։

Դ
Ով ծնվել է՝ պիտի ապրի։
Բայց նա մեռավ՝ չբոլորած դեռ մեկ տարին։
Ուներ խելոք, ագահ աչքեր՝
Հառված մարդկանց ու աշխարհին,
Ինչ կա, չկա գետնի վրա ու գետնի տակ,
Ցանկանում էր ասես մեկեն ողջն իմանալ։
Անտակ աչքեր, աչքեր անհագ,
Բախտից լինենք շնորհակալ,
Որ այդպիսի աչքեր էլ են մեկ-մեկ լինում։
Մենք կանգնած ենք հիմա, տղաս,
Նրա փոքրիկ շիրմի դիմաց.
Քո եղբայրն է այստեղ թաղված
Եվ իմ որդին՝ աշխարհ եկած քեզնից առաջ,
Նրա անունն ես դու կրում,
Լոկ անունը մեզ հետ մնաց։
Արթնանում է նորից իմ մեջ մի խուլ հառաչ՝

Տեսնես ի՞նչ էր նա դառնալու,
Ո՞վ է թառված այս հողի տակ՝
Անհուն հանճա՞ր, թե՞ ստահակ։
Լաց, մղկտա, ասաց մի ձայն,
Աչերի մեջ նրա անհագ
Կար մի շքեղ արևածագ։
Մի հորինիր, թե երևի
Փոքրիկ, փոքրիկ հողաթումբն այս
Գերեզմանն է մանուկ չարի։
Գուցե թե քեզ այդ խաբկանքը մխիթարի,
Բայց դու այդքան մի ցածրացիր, թեկուզ մի պահ,
Պոետները չեն որոնում թեթև ճամփա,
Եվ վաղուց են նրանք սովոր ծանր վշտին
Թե՛ սեփական, թե՛ աշխարհի։

Ե

Ի՞նչ պիտի դառնաս, երբ որ մեծանաս,
Ախ, երանի թե մի մեծ գյուտարար.
Մի միտք է անվերջ տանջում ինձ, տղաս,
Գյուտարար լինես, որ պատասխան տաս։
Վայրենի մարդը, երբ մարդակեր էր,
Մի քար շպրտեց իրպեսի վրա,
Ընկավ զարկվածը, որ պիտի դառնա
Զարկող մարդուն կեր,
Բայց քարը չընկավ,
Թափ առած թռավ տարիներ, դարեր,
Աղեղից պոկված նետ դարձավ դիպուկ
Ու էլի թռավ տարիներ, դարեր,
Արկ դարձավ հետո, ռռնաց մահաբեր,
Քանդեց, սպանեց, բայց չընկավ գետին,

Տարիներ, դարեր թռավ նա էլի։
Ահագնացել է հիմա ավելի՝
Իր մեջ ամբարած ուժն ատոմային։
Չարն ինչ ստեղծեց իր ճանապարհին՝
Բարին արարեց հերքող պատասխան,
Բայց ատոմի դեմ աշխարհակործան
Փնտրում, չի գտնում պատասխան, հերքում։
Դրա համար եմ ուզում ես, տղաս,
Որ դու հանճարեղ գյուտարար լինես.
Կա մի մեծ սկիզբ՝ մի աշխարհ ուրիշ,
Բանալին՝ նրա փակ դուռը բացող
Լինի քո ձեռքում։
Բավ է, վերջապես գետին ընկնի թող,
Հանգչի հանդարտված
Այն արնոտ քարը՝ վայրենու նետած։

(1987 թ.)

ՈՐԴԻԱԿԱՆ

Ա

Ողջույն, Արեգակ, փոթորիկներին քո հրակարմիր…
Լեգենդ չի հյուսվում այս ատոմային անլեգենդ դարում,
Լեգենդ չեմ հյուսում, լոկ զգում եմ ես իմ երակներով,
Որ իմ արյունը քամված է կարմիր քո կրակներից։
Գուցե չես հիշի, այդ շատ վաղուց էր,
Միլիարդ ու միլիարդ տարիներ առաջ,
Քո հզոր ձեռքը խփեցիր կողիդ,
Քո բռով մի բուռ կրակ նետեցիր տիեզերքի մեջ,
Սառեց կրակը, դարձավ երկրագունդ,
Ու ես ծնվեցի նրա կողերից, մեկ է՝ թե քեզնից։

Քո որդին եմ ես, ապացուցված է,
Չէ՞ որ զգում եմ իմ բիբերի մեջ
Խտացած ուժն ու պայծառությունը ճառագայթներիդ,
Իմ սրտի խորքում՝ խռովքները քո,
Իմ ցավերի մեջ՝ գալարումներդ։
Ես քո որդին եմ ու շատ եմ հարցրել կողքիդ աստղերին,
Թե արդյոք չունե՞ս դու ուրիշ որդի
Եվ իմացել եմ, որ չես պարգևել ինձ եղբայր կամ քույր,
Ես մինուճար եմ։
Միլիարդ ու միլիարդ տարիներ առաջ
Ինչ-որ քաղցրություն զգացիր հանկարծ ջահել կրծքիդ տակ,
Չիմացար՝ ինչ է, չիմացար՝ ինչից, չիմացար՝ ինչու,
Բայց կռահեցիր, փառք ու պատիվ քեզ,
Որ եթե մնա այդ ինչ-որ բանը քո էության մեջ,
Պիտի գալարվի քո բոցերի հետ ու մոխիր դառնա,
Եվ քեզնից հեռու նետեցիր նրան։
Այդ ինչ-որ բանը ես եմ, Արեգակ,
Այդ ինչ-որ բանը սիրտս է կրծքիս տակ
Եվ մի անանուն թրթիռ՝ սրտիս մեջ։
Էլ դու չունեցար այդպիսի երկունք,
Զղջացի՞ր արդյոք, որ մարդ ես ծնել,
Թե՞ ինձ ծնելիս ուժասպառ եղար։

Բ

Այդպես մի թեքվիր, որ տեսնես որդուդ,
Մի քիչ մոտենաս՝ շնչասպառ կընկնեմ,
Ուզենաս գրկել՝ ես կճենճերամ ու կմոխրանամ,
Դու ինձ չես տվել հզորությունդ,
Ես թույլ եմ, մայր իմ.
Ես թույլ եմ, թեև ջերմամիջուկյան ուժն իմ աչքերում՝

Այնպես կարող եմ նայել լեռներին, որ վախից փուլ գան։
Ես թույլ եմ աշնան մի տերևի չափ,
Փչում է քամին, ու ես դողում եմ,
Անձրև է գալիս՝ ես սրթսրթում եմ,
Բուքն է ինձ ծեծում՝ ես հազ եմ դառնում ու արյուն թքում,
Դու ինձ նայում ես մի քիչ բարկացած՝
Ես վայր եմ ընկնում գլխապտույտից։
Եվ զուր կարծում եմ, թե գլխիս մեջ են մտքերը ծնվում,
Նրանք ծնվում են ներբաններիս տակ, երբ բոբիկ եմ ես,
Ցրտից կուչ եկած իմ ուսերի մեջ, երբ բուքն է փչում,
Իմ ստամոքսում, երբ դատարկ է նա։
Դու քրքջում ես, դու ծաղրում ես ինձ,
Չէ, իմ որդին չես, ասում ես հաստատ,
Դու խեղճ, անճարակ, դու նաև չար ես,
Որ հայտնագործել ուժը ատոմի
Եվ քիչ է մնում, որ կյանքից զրկես
Ամեն ապրող բան։
Քո աչքերի մեջ կանաչ աչքեր կան։

Գ

Այո, Արեգակ,
Իմ աչքերի մեջ կանաչ աչքեր կան,
Այդպիսի աչքեր, ասում են, մեկ էլ դևերը ունեն,
Սակայն դրանով ոչ թե ժխտվում է,
Այլ հաստատվում է, որ որդին եմ քո։
Օ, լսիր, մայր իմ, դու էլ ես բախվում քո մեջ ու քեզ հետ,
Անվերջ պայթյուններ, հրե մրրիկներ,
Միշտ կռվի մեջ ես, միշտ խռովահույզ,
Ե՛վ անագորույն, և՛ ժանտ, և՛ ագահ։
Չլիներ եթե օդի շերտը հաստ,

Ինձ կուլ կտայիր,
Ինչպես Քրոնոս անգութ աստվածը՝ իր զավակներին
Եվ որտեղ օդը ճեղքել ես փոքր-ինչ,
Անապատներ ես փռել տոթակեզ,
Ուր որպես քո սև խոհերը բեկ-բեկ
Օձերն են սողում։

Դ
Մայր իմ, ներիր ինձ՝ անառակ որդուդ,
Որ հազար բարիդ հիմա մոռացած՝
Հիշեցի չարը՝ հարյուր անգամ քիչ։
Դու ինձ կյանք տվիր, բայց տիեզերքում չթողիր անտեր,
Ինչպես անարժան մայրերն են անում,
Շուրջս փռեցիր լույս ու ջերմություն
Եվ մրգեր պես-պես և ոսկի հասկեր։
Բայց ես այնքան էլ կորած որդի չեմ,
Ես շատ կուզեի դու իմանայիր,
Որ դոնկիխոտյան իմ երկար հասակն ինչքան էլ ընկնում,
Բայց էլի վեր է կենում անկոտրում
Եվ ի մարտ նետվում ընդդեմ քսության։
Իմացիր նաև,
Որ իմ ֆաուստյան անհագ ծարավով
Ատոմն եմ պեղում՝ այնտեղ քո լույսը գտնելու համար,
Պատճառն եմ փնտրում, թե ոնց է լինում,
Որ իմ գտածից Մեֆիստոֆելը ռումբեր է ձուլում։
Հավատա, մայր իմ,
Իմ սրտի խորքում պահել եմ անեղծ այն ինչ-որ բանը,
Որ դու չուզեցիր քո բոցերի մեջ մոխրանար, կորչեր։

(1987 թ.)

ՔԱՌՅԱԿՆԵՐ

***

Անտառի մեջ մի առավոտ հանկարծ գթաց իր գերուն,
Չհոշոտեց նախամարդը աչքերը թաց իր գերուն,
Փառք մեծ գութին, որ արթնացավ, զատեց մարդուն գազանից,
Մարդն սկսվեց այն առավոտ՝ ձեռք չտված իր գերուն:

***

Ճիշտ ես դու, Սեր, ճիշտ ասացիր, նախանձ ու քեն և այլ կրքեր
Ե՞րբ են եղել հարստություն բաժանելու արժանի,
Մեկ էլ ասա, կրկնիր, ով սեր, հարստություն դու միակ,
Չէ՞ լավ խոսքը կես լավ գործ է նախանձի դեմ ու քենի:

***

Լողում են վար, հոսանքն ի վար իրենց պղտոր կրքերի
Վայելումի թզուկները՝ անղեկ, առանց թիերի
Եվ անհաղորդ ջինջ հրճվանքին հոսանքն ի վեր լողալու՝
Այնպես գոհ են, որ աշխարհում այնքան բան կա դեռ թերի:

***

Ինչ գույնով էլ լույսը ներկես՝ կանաչ, կապույտ, վարդագույն,
Լույսը դարձյալ մնում է լույս, այլ երանգով ճառագում,
Միայն սևը չի թափանցում, սևը գույն չէ, այլ՝ խավար,
Լույս չի տալիս, լոկ օգնում է ճանաչել լույսն այս անմար:

***

Էլ հրաշքի չեմ հավատում, ծերացել եմ ինչքան շուտ
Հրաշքով լի մանկությունից հեռացել եմ ինչքան շուտ,
Նստում էի ամպե գորգին, թռչում կախարդ աշխարհներ,
Ինչպե՞ս եղավ, որ դա անգամ մոռացել եմ այսքան շուտ:

***

Պակասում է աչքիս լույսը, հեռու սարը չեմ տեսնում,
Պակասում է էլի, էլի, մոտիկ քարը չեմ տեսնում,
Մա՛հ, ծածկում ես քեզնով նրան, քեզ ինչ վատ բան եմ արել,
Ինչո՞ւ ես թշնամացել, ես պատճառը չեմ տեսնում:

***

Մի պարծենա, որ իմ մեջ ես ու աճում ես ժամ առ ժամ,
Իմ հույսերը հատում թել-թել ու ջնջում ես ժամ առ ժամ,
Մինչ բերում ես իմ վերջը դու, սկսվում եմ որդուս մեջ,
Նոր հույսերով իմ նոր մարմնում բողբոջում եմ ժամ առ ժամ:

***

Հավատացեք, հողագունդը արեգակից է ծնվել,
Ինքն արևից, ես՝ իրենից և ինձ տաք սիրտ է տվել,
Մոր հայացքն է ինձ փոխանցել, իմ արեգակ տատիկից,
Իր ծնունդը արևային իմ տաք սրտով եմ ճշտել:

ԵՐԳԵՐ

ԽՆՋՈՒՅՔԻ ԵՐԳ

Մեր սեղանին զնգուն թասեր,
Զնգուն թասեր՝ լիքը գինով,
Քեզ համար եմ լցրել, ընկեր,
Թասը գինով, սիրտս՝ սիրով:

Մեր սեղանին կարմիր գինի,
Մեր սրտերում միշտ սեր լինի:

Սիրուց ենք մենք առել թեր,
Մեր հուր թևին թև չի հասնի,
Խմիր, ընկեր, իմ սրտի սեր,
Ու մեր քեֆին քեֆ չի հասնի:

Մեր սեղանին կարմիր գինի,
Մեր սրտերում միշտ սեր լինի:

Միշտ պարզ լինեն սրտերը մեր,
Միշտ անպակաս՝ սերն ու գինին,
Այս մի թասն էլ խմիր, ընկեր,
Ու ես կասեմ՝ անուշ լինի:

Մեր սեղանին կարմիր գինի,
Մեր սրտերում միշտ սեր լինի:

Թույն չի դառնա գինին թասում,
Մեր սերը միշտ սեր կմնա,
Խմիր, անգին, ջան եմ ասում:

Մեր սեղանին կարմիր գինի,
Մեր սրտերում միշտ սեր լինի:

ՄԻ ԳՆԱ ՅԱՐ

(երաժշտությունը՝ Երվանդ Սահառունու)

Սիրտս բաց է, վարդ ունեմ,
Աչքս թաց է, դարդ ունեմ,
Մի գնա, յար, մի գնա,
Ես առանց քեզ կյանք չունեմ:

Էլ վարդերս բույր չեն տա,
Ինձ ժպիտ ու հուր չեն տա,
Ետ արի, յար, մի գնա,
Իմ սերը մի մոռանա:

Ի՞նչ ասի քեզ որ կերթաս,
Ինձ թողել ես ո՞ւր կերթաս,
Ինձնից լավը չես գտնի,
Իմ անուշ յար, զուր կերթաս:

Քեզ սիրել եմ լուռ սիրով,
Սիրտս քոնն է հուր սիրով,
Մի գնա յար, մի գնա,
Ինձ քո ձեռքը տուր սիրով:

Դու արև ես՝ հուր կուզեմ,
Վառ գարուն ես, բույր կուզեմ,
Ես ծարավ եմ, դու՝ աղբյուր,
Իմ անուշ յար, ջուր կուզեմ:

Սիրտս բաց է քեզ համար,
Աչքս թաց է քեզ համար,
Մի գնա, յար, մի գնա,
Իմ սիրտը չի դիմանա։

ԱԼԱԳՅԱԶ

(երաժշտությունը՝ Երվանդ Սահառունու)

Ալագյազ, լանջիդ հասա,
Ջրերիդ կանչին հասա,
Երգելով ելա ես վեր,
Ձյունոտ կատարիդ հասա։

Ախ, Ալագյազ, ջան Ալագյազ,
Ես իմ մուրազին հասա։

Կատարից վար եմ նայում,
Արևից վառ եմ նայում,
Իմ սիրած սարի գլխից
Կյանքին պայծառ եմ նայում։

Ախ, Ալագյազ, ջան Ալագյազ,
Քեզանից թև եմ առնում։

Դե տղերք, հեյ ջան,
Ձեն տվեք, թող սարերը թնդան,
Մեր սարին գովենք,
Մեր յարին գովենք,
Հայոց աշխարհին գովենք։

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՂԵՐԻ ՈԳՈՎ

Սեպուհ նստել հաց կզխտեր
Քանց անոթի գայլ շատակեր:
Կուտեր էնքան ագահ-ագահ,
Կասես երկրի վերջն է հիմա:
Նրա չորս դին սոված աչքեր,
Նա անտարբեր հա՛ կզխտեր,
Մեկին չասավ՝ հաց կեր, ախպեր,
Քանց սոված գայլ էր շատակեր:
Բոլորից վերջ, երբ որ զգաց,
Թե կշտացավ, էլ չի սոված,
Ձենը թույլ-թույլ ելավ փորից,
Ինչպես խորունկ մի ջրհորից,
Ասավ՝ հաց կեր, կեր էս լոբին,
Ես մեծասիրտ մարդ եմ կարգին,
Կպատահի, էհ, ինչ կա որ,
Վարձը կտաս դու ինձ մի օր:
Սեպուհ նստել հաց կզխտեր
Եվ մեծասիրտ և մեծ փոր էր:

ՄԻ ԳՆԱ

Դարձի՛ր, մի՛ գնա,
Ես չեմ դիմանա,
Դու ինձ մի լքիր,
Սերս մի պոկիր,
Ո՞ւմ համար քաղեմ ես սարի շուշան,
Սրտիս հետ ո՞ւմ տամ վարդերս վառման:

Առանց քեզ տուն եմ, որ դռներ չունի,
Հուրս կմարի, սիրտս կսառի,
Աստղին եմ նայում տխուր ու տրտում,
Քեզ կողքիս փնտրում, սակայն չեմ գտնում։

Ոչ ոք չի սիրի, ինձ պես գուրգուրի
Քեզ իր հոգու մեջ, սրտի, սրտի մեջ,
Հարցրու բարի մարդկանց աշխարհի,
Շատ ենք ես ու դու
Սազում մեկ մեկու։

Ասա՝ չեմ գնա
Ու ինձ հետ մնա,
Ես քեզ ի՞նչ արի,
Ես քեզ ի՞նչ ասի,
Եթե դու գնաս, հաստատ իմացիր
Կյանքում մի լավ բան պիտի պակասի։

ԿԱՐՈՏ

Արևն ելավ սարից,
Չեկավ յարս հեռվից,
Աչքս ճամփին մնաց նորից
Յարս ինձ պես մենակ,
Յարս ինձ պես անյար,
Ախ, ե՞րբ պիտի տեսնենք իրար։
Անուշ յար ջան, շուտ արի,
Ոտքդ շաղոտ արի,
Այս առավոտ արի,
Չեմ դիմանում անյար,

Օրը թվում է դար,
Արի, անուշ ջան, արի։

Հովերն եկան անցան,
Փռվեց կեսօրն անձայն,
Դատարկ է դեռ ամեն կածան,
Ախ, դու հեռու, հեռու,
Ախ, դու երբ ես գալու,
Ինձ կարոտած բարև տալու։

Թևերդ բաց արի,
Սիրով հարբած արի,
Երգով լցված արի,
Արև իմ, գիրկս եկ,
Բեր ինձ շողեր ու երգ,
Արի անուշ ջան, արի։

ԼԵՆԻՆԱԿԱՆ

(երաժշտությունը՝ Գեղունի Չթչյանի)

Կա մի քաղաք այս աշխարհում՝
Սիրում եմ այնքան,
Կա մի այգի այդ քաղաքում՝
Դրախտ է որքան,
Ուր էլ գնամ՝ շուրթերիս
Անունն է նրանց,
Միշտ նրանց գիրկն եմ գալիս,
Երգում կարոտած։

Լենինական, իմ լուսավառ,
Լենինական, իմ լուսառատ,
Իմ հին Գյումրի,
Դու սիրո երգի քաղաք,
Համով-հոտով սուր խոսքերի՝
Բերկրանքի քաղաք։
Ամեն գարուն դու տալիս ես
Նոր կյանքի հույսեր,
Եվ մայիսի հետ միասին
Պարգևում վարդեր,
Տուֆե շենքերն այս խնդուն
Վարդերն են բացված,
Պողոտաներն լայնահուն
Քո սրտի պես բաց։

Լենինական, իմ լուսավառ,
Լենինական, իմ լուսառատ,
Իմ հին Գյումրի,
Դու սիրո երգի քաղաք,
Համով-հոտով սուր խոսքերի՝
Բերկրանքի քաղաք։

Շատ քաղաքներ կան աշխարհում
Քեզնից էլ սիրուն
Քեզ եմ սակայն իմ լուսավոր
Այսքան շատ սիրում։

Գեթ մեկն այս ջինջ աստղերից
Վառել եմ հենց ես,
Որ հավիտյան աստղալից
Կդարձնի մեզ։

Լենինական, իմ լուսավառ,
Լենինական, իմ լուսառատ,
Իմ հին Գյումրի,
Դու սիրո երգի քաղաք,
Համով-հոտով սուր խոսքերի,
Բերկրանքի քաղաք։
Իմ հին Գյումրի,
Դու սիրո երգի քաղաք,
Համով-հոտով սուր խոսքերի՝
Բերկրանքի քաղաք։

Համով-հոտով սուր խոսքերի,
Բերկրանքի քաղաք։

ԵՐԵՎԱՆ

(երաժշտությունը՝ Երվանդ Սահառունու)

Դու իմ սրտի տենչանք, իմ սեր Երևան,
Սիրում եմ քեզ անհագ, իմ սեր Երևան։
Ես քո գրկում անգամ կարոտում եմ քեզ,
Անունդ վառ կրակ, իմ սեր Երևան։

Ես քո սիրով հարբած՝ կմնամ ջահել,
Դու իմ սրտում խայտանք, իմ սեր Երևան։
Միշտ փառքդ վեր մնա, Մասիսի նման,
Իմ մայր, իմ լույս քաղաք, հե՛յ ջան Երևան։

ՊԻԵՄՆԵՐ

ԴԵՂԻՆ ԳԻՇԵՐ

(Պիես երկու մասից)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Հովիվ
Ժողովուրդ/Ձայներ
Դև
Ջեմպիոն
Բանաստեղծ
Բանաստեղծի աղջիկ
Բուսաբան
Ալքիմիկոս/ Առաջնորդ
Առաջին զինվոր/ Նոր առաջնորդ
Միաչքանի
Պահակ
Հացթուխ
Մանուկ
Մարդ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եվ արարիչը ստեղծեց հող, ջուր, արև և աստղեր,
Եվ կենդանիներ և մարդ ստեղծեց,
Եվ շատ գոհ եղավ իր ստեղծածից,
Եվ սիրեց, ինչ-որ իր վսեմագույն հանճարն էր երկնել,
Եվ սերն ստեղծեց,

Ատելությունը հետո ստեղծվեց
Եվ ստեղծողը եղավ սատանան,
Որ ամեն ինչում հակադրվում էր արարչի կամքին:
Դուք մի քիչ հետո կտեսնեք այստեղ այդ սատանային,
Որ դեղին Դև է կոչվում այս գործում
Եվ ուրիշ, ուրիշ բաներ կտեսնեք այստեղ, որ տխուր են շատ:
Պիտի հեքիաթի աշխարհը մտնենք,
Բայց ոչ այն ճամփով, որով գնալիս
Ջինջ, կախարդական երգեր են լսում
Կամ հեքիաթային գեղեցկության դեմ կանգնում զմայլված,
Այլ դժվար ճամփով, որով քայլելիս
Ձեր դեմ կբացվեն մռայլ պատկերներ:
Բայց եթե հանկարծ դուք էլ մռայլվեք,
Հիշեք, աշխարհում նախ սերն ստեղծվեց:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Քաղաքի հրապարակ: Շենքերի բացվածքից երևում է մի սար, որի գագաթից ծուխ է բարձրանում: Գործող հրաբուխ է: Հրապարակ է մտնում Հովիվը՝ ցուպը ձեռքին:

ՀՈՎԻՎ
- Մարդիկ, հե՜յ մարդիկ, այստեղ հավաքվեք, ձեզ լուր եմ բերել,
Այնպիսի մի լուր, որ ձեր մազերը բիզ-բիզ կկանգնեն:

Հավաքվում են մարդիկ:

ՁԱՅՆԵՐ
- Ի՞նչ է պատահել, Հովիվ, շուտ ասա:

- Քո ոչխարները լեզո՞ւ են առել ու խոսե՞լ քեզ հետ,
Այնպիսի բաներ մարդկային լեզվով ականջդ լցրել,
Որ չես դիմացել, քաղաք ես վազել այսպես հևիհև:
- Ի՞նչ է պատահել, ով կենաց ծաղկի պահակ, շուտ ասա,
Բացվե՞լ է արդյոք կենաց ծաղիկը՝ փրկարարը մեր,
Գոռ հրաբուխի խառնարանի մոտ:
- Շուտ ասա, չէ՞ որ նրա բացվելուց քսան ժամ հետո
Հրաբուխն իր ամբողջ ուժով կժայթքի:

ՀՈՎԻՎ
- Շուտ ասեմ, մարդիկ: Մի աչքս հոտին, մի աչքս՝ ծաղկին
Կատարում էի ես Սրբազան պարտքը ձեր հանդեպ
Եվ ուրախ էի, որ դեռ չի բացվում ծաղիկը կենաց,
Հիմա էլ, հանգիստ, առաջվա նման նա փակ է դարձյալ,
Իսկ ոչխարն էլի իր ոչխարերեն լեզվով է մնչում:

ՁԱՅՆԵՐ
- Ա՞յդ է քո շուտը: Բուն նյութին անցիր:
- Մեռցրիր թողիր՝ ոչխար, հա՛ ոչխար:

ՀՈՎԻՎ
- Բուն նյութին անցնեմ: Հանկարծ մի դեղին, մեծ թմբուկ տեսա,
Մեկ ձորն էր իջնում, մեկ ելնում սարը, թռչում քարեքար:
Զարմացել էի: Թմբուկ է՝ պիտի գլորվի ներքև,
Այդ ինչպե՞ս է նա սարն ի վեր ելնում:

ՁԱՅՆԵՐ
- Այ քեզ հրաշք բան:
- Սուս, մի խանգարիր: Վերջն ասա, Հովիվ:

ՀՈՎԻՎ
- Վերջն ասեմ: Տեսա մենակ թմբուկ չէր, մի մարդ կար տակին,
Շատ սովորական մեզ նման մի մարդ, մեզ պես հագնված,
Հեշտությամբ, առանց որևէ ճիգի թմբուկն է տանում,
Գալիս էր դեպի մեր քաղաքը նա: Իսկույն վազեցի,
Որ ձեզ լուրն հայտնեմ:
Ահա գալիս է, այ այն բոլորակ լուսինն է դեղին,
Որ գլորվում է Երկրի երեսով, օրը ցերեկով,
Այ նա էլ ինքն է՝ մարդը իմ ասած:

Գալիս է Դեղին Դևն իր հսկա թմբուկով:

ԴԵՎ
- Բարև ձեզ, մարդիկ:

ՁԱՅՆԵՐ
- Բարով ես եկել, ով Օտարական:
- Հոգնած կլինես նստիր այս քարին, քիչ հանգստացիր:

ԴԵՎ
- Հոգնելն ինչ բան է, բնավ չգիտեմ:

ՁԱՅՆ
- Քաղցած կլինես, քեզ համար հիմա հաց կբերենք, կեր:

ԴԵՎ
- Ես հաց չեմ ուտում, ես ջուր չեմ խմում:

ՁԱՅՆ
- Ով օտարական դու զարմանալի,
Այդ ինչպե՞ս է, որ ոչ հաց ես ուտում, ոչ ջուր ես խմում:
Բայց քարշ ես տալիս այդ թմբուկն հսկա, բնավ չես հոգնում,
Երևի շատ է, շատ է նա թեթև, օդով է լցված,
Նա է քեզ տանում, ոչ թե դու դրան:

ԴԵՎ
- Հա՛, հա՛, հա՛, թեթև… Ո՞վ է ձեզանից ամենաուժեղը,
Թող գետնից կտրի թմբուկն իմ թեթև, թեկուզ մի կես թիզ:

Մոտենում է թմբուկին քաղաքի ծանրամարտի չեմպիոնը:

ՉԵՄՊԻՈՆ
- Քաղաքացիներ, իմ պատվից ցածր է իմ ուժը փորձել
Այս օդով լցված թաղանթը գետնից կտրելու համար,
Թող նախ փորձ անեն նրանք, որ երեկ
Ինձ հետ մրցելիս չկարողացան
Հսկա գերանը բարձրացնել վեր, պահել քառորդ ժամ:

Մոտենում են պարտվածները՝ առաջինը, երկրորդը, երրորդը, ոչ մեկը չի կարողանում բարձրացնել թմբուկը:

ՉԵՄՊԻՈՆ
- Հեռու գնացեք, ես թմբուկն հիմա վեր կշպրտեմ
Եվ երկրորդ անգամ կկանգնեմ պատվո քարին հաղթողի:
Այս հաղթանակը նվիրում եմ ես իմ հարսնացուին՝
Մեր Բանաստեղծի դստերը ավագ,
Որ խրախույս է կարդում ինձ սիրուն իր աչիկներով:
Սեր, ուժ տուր դու ինձ, որ նույնը լինեն իմ խոսքն ու գործը:

Փորձում է բարձրացնել թմբուկը, չի կարողանում։

ԴԵՎ
- Դե, բարձրացրու, դե վեր շպրտիր։
Իմ թմբուկն իրոք մեծ է, շատ ծանր,
Իսկ քո խոսքերը, ով պոռոտախոս, մեծ են, բայց թեթև։

Ոմանք սարսափած դեպ ու դեն են ընկում։

ՉԵՄՊԻՈՆ
- Ով մարդ, տեսնում եմ հասակով ինձնից բարձր չես դյուզն-ինչ,
Բայց մկաններդ… երևի նրանք կարծր են ինչպես քար,
Բաց, բաց բաղդատենք, ահա ես իմը բացել եմ արդեն։

Դևը բացում է թևերը։

Քո մկաններն էլ իմից կարծր չեն
Եվ նույն ձևով են կիսագունդ դառնում, երբ որ պրկվում են,
Սակայն դու ինձնից ինչքան ուժեղ ես։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿԸ
- Նաև գեղեցիկ։ Անչափ գեղեցիկ։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Լռի՛ր, դստրի՛կ իմ, պարկեշտ չէ գովել փեսացուի մոտ
Այլ տղամարդու՝ նրա հմայքը գերադասելով։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿԸ
- Հայր իմ, նա իրոք գեղեցիկ է շատ,
Դու Բանաստեղծ ես, բայց այդ չես զգում,
Զգալու համար կին լինել է պետք:

ՁԱՅՆԵՐ
- Ի՜նչ գեղեցկություն, միայն ափսոս, որ աչքերն են դեղին:
- Դեղինն ի՞նչ վատ է, ոսկին դեղին է:
- Կեցցե՛ դեղինը, ամենաբնտիր գույնն է աշխարհում:
- Ես այս օրվանից դեղինն եմ պաշտում:
- Երբ նա ժպտում է՝ ճառագայթում է դեղինն աչքերի,
Շողերն ընկնում են դեմքին, հագուստին,
Եվ նա թվում է ոսկեձույլ աստված:

ԴԵՎ
- Ես հեռուներից չեմ եկել այստեղ, որ դուք ինձ գովեք:
Եկել եմ, որ ձեզ բարություն անեմ կամ թե չարություն,
Նայած թե որը սրտով կընտրեք:
Ով իմ թմբուկին թեթև հարվածի՝ կառնի մի ոսկի,
Ով մի քիչ ուժեղ՝ երկու հատ ոսկի,
Ավելի ուժեղ՝ երեքը կամ դեռ ավելի:
Հարվածը որքան զորավոր լինի, ոսկին՝ այնքան շատ:
Սակայն իմացեք, եթե հարվածը շատ ուժեղ լինի,
Կպայթի թմբուկն ու դուք պայթյունի որոտից ահեղ
Կմեռնեք իսկույն: Բոլորդ մեկտեղ:
Դե, տեսնենք, ձեզնից ո՞վ է առաջին ոսկին առնելու:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Թող չմոտենա թմբուկին ոչ ոք,
Պետք չէ ոսկին, որի մեջ, մարդի՛կ, կործանումն է մեր:

ՁԱՅՆԵՐ
- Ձեռք չտանք ոսկուն այդ կործանարար:
- Ոսկին ոսկի է լոկ այն ժամանակ,
Երբ շողշողում է մեր ճակատների քրտինքով օծված:
- Գուցե մեկն հանկարծ թունդ կհարվածի…
- Չէ, ապրող մարդու ցնցոտին անգամ
Չապրողի հագած ոսկե պատանքից լավ է ավելի:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ձեզ, բարեկամներ, ես սիրում էի,
Հիմա ավելի խորունկ սիրեցի այդ մերժման համար:
Եվ երջանիկ եմ, որ պիտի հայտնեմ,
Թե մի տարվա մեջ ցորյանի երկու բերք եմ ստանում
Եվ երկու անգամ՝ պտուղ քացրահամ:
Դուք ճիշտ եք ասում, մեր ինչի՞ն է պետք անաշխատ ոսկին,
Մի՞թե ոսկի չէ ցորյանը, որ դուք կստանաք առատ
Կամ թե մրգերը, որ կհեղեղեն ձեր մառանները:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ով օտարական, քո բարությունը մեզ հարկավոր չէ,
Քո չարության հետ վերցրու, գնա:
Մեր սիրտն այդ ընտրեց:

ԴԵՎ
- Այո, բայց ընտրեց միայն այս պահին, պահեր դեռ շատ կան:
Ես դեռ կսպասեմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Սպասիր մինչև թմբուկդ փթի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Սիրում եմ, մարդիկ, սիրում եմ ես ձեզ, հավատացեք ինձ,
Սիրում ոչ պակաս մեծ Բուսաբանից, գուցե ավելի:

ՄԻ ՁԱՅՆ
- Այդ գիտենք, Ալքիմիկոս մեր բարի,
Ես ինքս եմ տեսել, թե ինչպես նստած քո հնոցի մոտ
Դեղին պղնձից ոսկի ես ուզում կորզել մեզ համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Դու այդ տեսել ես, սակայն չես տեսել,
Ինչպես շիթ առ շիթ իմ սիրտն են լցվում ձեր արցունքները:
Բուսաբանին ի՞նչ, նրա սրտի մեջ
Ձեր տնքոցները չեն կրկնապատկվում:
Ես ուր գնում եմ՝ ձեր ցավն ինձ հետ է,
Դրանից սիրտս միշտ ծանրացած է,
Որ թեթևանա ուզեցի ոսկի կորզել մետաղից,
Ձեզ տալ, որ կյանքում դուք ցավ չունենաք, ոչ էլ ես՝ կսկիծ,
Բայց իմ փորձերը ապարդյուն եղան:

ՁԱՅՆԵՐ
- Այդ մենք լավ գիտենք:
- Ափսոս, զուր կորավ ազնիվ վաստակդ:
- Բայց ինչո՞ւ դու այդ հիշեցիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Բախտը իր ոտքով մեր դուռն է եկել, ինչո՛ւ ետ դարձնենք,
Մարդիկ, կարող ենք մենք խոհեմաբար օգտվել բախտից,
Թունդ չենք հարվածի, որ այս մահաբեր թմբուկը պայթի,
Թույլ կհարվածենք և նա կենսաբեր թմբուկ կլինի:

Մի-մի ոսկուց է գոյանում շատը,
Մենք մի-մի ոսկով շատը կունենանք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Քո ինչի՞ն է պետք այդքան շատ ոսկին,
Սովա՞ծ ես միթե կամ չունե՞ս ընտիր հագուստ ու կապուստ,
Եթե սոված ես, մեծ Բուսաբանը, ինքդ լսեցիր,
Արդեն մի տարում երկու ցորյանի բերք է ստանում
Ու երկու անգամ՝ պտուղ քաղցրահամ:
Եթե տկլոր ես, առ իմ հագուստը:
Բանաստեղծները հանուն բյուրավոր մարդկանց փրկության՝
Մի հագուստն ի՞նչ է, պատրաստ են իրենց կյանքը զոհելու:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Ես ոչ սոված եմ ու ոչ էլ տկլոր,
Ոչ էլ ագահ եմ, ինչպես որ քո մեջ կարծում ես հիմա:
Եթե քո սիրտն էլ ծանրացած լիներ ծով արցունքներից,
Դու էլ երևի թեթևանալու հնար փնտրեիր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Բայց ոչ այդ ձևով: Մեծ Բուսաբանը…

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Այո, մեծ գյուտ է, տարին երկու բերք, բայց մեզ ի՞նչ օգուտ,
Թող հարուստների աչքը լույս լինի,
Բերքն հոսի պիտի նրանց ամբարներն ու մառանները:
Ես կհարվածեմ հիմա թմբուկին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դու այդ չես անի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Ես բանաստեղծ չեմ, այլ հուսահատված մի ալքիմիկոս,
Բայց ես կգրեմ առաջին տողը լիության երգի,
Մնացածները կշարունակեն հաջորդ տողերը,
Բայց չի ավարտվի այդ երգը երբեք,
Քանզի զգույշ է և խոհեմ մեղուն բանականության,
Կարող է անգամ չարության ծաղկից մեղր պատրաստել:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Հեռու կաց, թշվառ:
Եվ ագահության ճահիճդ խարդախ
Մի փորձիր ծածկել ծաղկաթերթերով բանականության.
Օ, տեր իմ աստված, այս ո՞ւմ հետ եմ ես դարձել խնամի:

ԴԵՎ
- Բանաստեղծ, ահա մի պահ էլ չանցած, եկավ այն պահը,
Որ իմ թմբուկը փթելու տեղակ պիտի որոտա:
Ես այս քաղաքում այնքան կմնամ,
Ինչքան գեթ մի սիրտ նրան խփելու փափագ ունենա:
Մոտեցիր, ով մարդ, դու առաջնորդ ես,
Շուտով կունենաս մի ստվար բանակ:

Ալքիմիկոսը մոտենում է և մատով թույլ հարվածում:

Թույլ հարվածեցիր, կես ոսկու ուժով,
Բայց ես տալիս եմ մի լրիվ ոսկի, կեսը պարգև քեզ,
Քանզի առաջին խփողը եղար և առաջնորդ ես:
Ահա թմբուկից մի ամբողջ ոսկի գլորվեց, վերցրու:

ՁԱՅՆԵՐ

- Աչքերը, տեսեք, աչքերը դեղին փայլ են ստացել:
- Դեղին, դեղին են աչքերը իրավ:
Թմբուկի տիրոջ աչքերի նման:

ՉԵՄՊԻՈՆ
- Հայր իմ, ի՞նչ արիր, խայտառակ եղանք ամբողջ քաղաքում,
Դեղին աչքերով դու ինչպե՞ս պիտի մարդկանց երևաս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Դեղինն ինչո՞վ է քո կապույտից վատ կամ նրա սևից:

ՉԵՄՊԻՈՆ
- Բայց ագահության նշան է ստույգ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ
- Հարազատ հորդ ագահ ես կոչում բազմության առաջ
Եվ խրախուսիչ հայացքն ես փնտրում դու Բանաստեղծի,
Պարզ է, փեսա ես, համարյա փեսան, դուր գալ ես ուզում,
Բայց այդ, համարյան, մի մազ է բարակ, կտրվեց արդեն:
Դու էլ տեսնում ես, որ էլ փեսա չես,
Հարսնացուդ ահա վառվում է սիրով այս անծանոթի,
Որ քեզնից ուժեղ, սիրուն է քեզնից,
Տես, նրան ինչպես ուտում է ագահ սիրո աչքերով,
Եվ դու նախանձից քեզ կորցրել ես:

ՉԵՄՊԻՈՆ
- Անծանո՞թ ասիր, նա ի՞նչ անծանոթ,
Մարդիկ, նա Դև է, նա Դևն է դեղին,
Թեև սիրուն է, բայց Դև է, Դև է,
Ես այդ զգացի, երբ որ չափվեցի ուժով նրա հետ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Իրավ է ասում, նա Դևն է դեղին,
Նա հաց չի ուտում, նա ջուր չի խմում, ինքը այդ ասաց,
Իր հացն ու ջուրը սրտերն են մարդկանց:
Նա սիրտ է ուտում, մարդիկ, իմացեք, սրտներդ պահեք,
Ցրվեցեք իսկույն, մի սիրտը բավ էր, որ մեր դեմ կերավ
Եվ խիղճ է ուտում, մեզանից մեկը արդեն խիղճ չունի,
Թող անխիղճների այս առաջնորդը բանակ չունենա:

Մոտենում է թմբուկին մեկը ևս, որը կոչվելու է Առաջին զինվոր:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Բանաստեղծ, ճիշտ է, սիրում եմ ես քեզ, սիրում ու պաշտում
Քո վսեմաշուք տաղերի համար
Եվ մասնակցել եմ այս քո արձանի վեր խոյանալուն,
Բայց շահն հանուրի գերադասում եմ իմ պաշտամունքից:
Ոչ մի մուրացկան թող փող չմուրա կամ մի պատառ հաց,
Այս թմբուկն ահա նրան փող կտա և հաց լիուլի,
Եվ ոչ մի հարուստ ինձ նման մեկին էլ չի կեղեքի,
Ինչ ինձնից պիտի կեղեքեր, տաներ, թմբուկը կտա:
Եթե կա արդեն հրամանատար,
Դառնում եմ նրա զինվորն առաջին:

Հարվածում է թմբուկին, կռանում է և վերցնում ոսկին:

Ահա այսպես թույլ հարվածեք, մարդիկ,
Եվ տեղնուտեղը ստացեք ոսկին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Քո էլ աչքերը դեղնեցին իսկույն,
Գոնե մի՛ նայիր իմ աչքերի մեջ դեղին աչքերով,
Եթե իրավ է, որ ինձ պաշտում ես, ինչպես ասացիր,
Զղջա նողկալի արարքիդ համար,
Գուցե աչքերդ իրենց հաճելի նախկին գույնն առնեն:
Տառապանք կեղծիր, ստից լաց եղիր, որ Դևից խաբված՝
Ծախեցիր խիղճդ և մեր քաղաքը մի հատիկ ոսկով,
Մինչդեռ լպիրշ են աչքերդ այնպես:

Թմբուկին մոտենում է միաչքանի մի մարդ:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ինչպես տեսնում ես, պաշտելի պոետ, երկու աչք չունեմ,
Թե լպիրշ նայեմ, մի աչքով միայն,
Մյուսը անիծյալ ծաղկախտը տարավ:
Բայց մի աչքով էլ ես գեղեցիկ եմ:
Լավ նայեք, միայն ե՛ս եմ, ե՛ս նման օտարականին:

ՁԱՅՆԵՐ
- Ճիշտ որ նման է, կարծես նա է հենց:
- Ով ասաց, իբր չի կրկնում իրեն մայր բնությունը,
Ահա հերքումը նրա հանճարի:
- Բայց նա ջնջել է սրա մի աչքը, որ տարբեր լինեն:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Կենտ է իմ աչքը, արևն էլ կենտ է,
Ի՞նչ եք ծիծաղում, ձեզ վրա պիտի ծիծաղեք, խեղճեր,
Որ լավն ու վատը չեք զանազանում:

Խփում է թմբուկին և վերցնում ոսկին։

Հը, պոետ, ո՞նց եմ նայում քեզ վրա։

ՉԵՄՊԻՈՆ
- Այդ ո՞ւմ ես ծաղրում, էյ, դեղին հրեշ,
Որ հայելու մեջ արտացոլանքն ես այս դեղին Դևի,
Չքվիր այստեղից, քանի չես զրկվել մյուս աչքիցդ էլ։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Սա առավել էր լպիրշ և ստոր, քան իր նախորդը։

Դողում է զայրույթից։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿԸ
- Հայր իմ, գնա տուն և հանգստացիր։
Ծեր ես, մի հուզվիր, սիրտդ հուզմունքից կճաքի հանկարծ։
Փեսայիդ էլ տար։ Թե շատ ես ուզում փեսա անվանել,
Դու մի սիրունիկ աղջիկ էլ ունես,
Թող քրոջս մոտ ինչքան ուզում է Դև, հրեշ կոչի
Այս աստված մարդուն, այս մարդ աստծուն։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ինչքան արագ է ցեցը բազմանում…
Դու, Հովիվ, նաև հսկիչ-ակնդետ մեր կենաց ծաղկին.
Գնա սարերդ, քանի քո սիրտն էլ ցեցը չի մտել։

ՀՈՎԻՎ
- Գնամ, Բանաստեղծ, զուցե մոռանամ բարձրիկ սարերում,
Ինչ որ ականջով լսեցի այստեղ, աչքովս տեսա։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Գնա և հսկիր, որ մեզ իմաց տաս քսան ժամ առաջ,
Թե հրաբուխը ժայթքում է, փախեք:
Բայց ո՞վ լուր կտա քսան ժամ առաջ,
Թե մեկը պիտի իր ագահ ձեռքով այնպես հարվածի,
Որ պայթի թմբուկն ու ամայանա քաղաքս մեկից:
Վա՜յ մեզ, այս երկրորդ հրաբուխը նոր
Ավելի չար է և աղետաբեր:

/Մթնեցում/

Գիշեր: Մարդիկ հարվածում են թմբուկին: Գալիս է Առաջնորդը՝ Ալքիմիկոսը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Կեսգիշերն անց է, իսկ դուք չեք քնել, հարվածում եք դեռ,
Չորս ամիս եղավ, չեք հանգստանում գիշերն անգամ,
Ոսկի եք դիզում ու չեք կշտանում: Գնացեք քնեք:

ՁԱՅՆԵՐ
- Ով ինչքան ուզում, քնում է այնքան:
Իսկ ով չի քնում, իր գործն է, նա էլ ոսկի է դիզում:
- Դրանից քեզ ի՞նչ վնաս է գալիս:
- Դու գնա քնիր:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց խանգարում եք քունը նրանց,
Ովքեր դեռ չունեն դեղնափայլ աչքեր:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Դու այդ երբվանի՞ց այդ անմիտների պաշտպանը դարձար։

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես կարծում էի դու իմ առաջին զինվորն ես խոհեմ,
Բայց դու առաջին խռովարարն ես, ի՞նչ ես կամենում։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ես կամենում եմ, որ որոշումդ փոխես, առաջնորդ,
Մարդիկ գիշերն էլ թող ոսկի դիզեն։

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց ոչ ուրիշի հանգստի հաշվին։
Չէ՞ որ նրանց մեջ ձեր եղբայրներից, հայրերից էլ կան։
Կան բոլոր կանայք, որ ձեր մայրերը և քույրերն են ձեր,
Ես հանուն նրանց հրամայում եմ՝ գնացեք քնեք։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Մենք միշտ հլու ենք քո հրամանին։ Բայց մի հանգամանք…

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ոչ մի հանգամանք։ Գնացեք քնեք։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Կամաց կխփենք, ոչ երեք ոսկու, այլ մեկի չափով,
Թմբուկի ձայնը երեք անգամ թույլ՝ նրանց չի հասնի։

ԱՌԱՋՆՈՐԴ
- Դարձյա՞լ քո խոսքն ես դու առաջ տանում,
Կամենում գործել կամքիս հակառակ։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Մենք միշտ հլու ենք քո արդար կամքին, ո՛վ Ալքիմիկոս,
Իհարկե՝ նախկին: Հիմա՝ առաջնորդ՝ մեր գլխին կարգված:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Զուր ես խոսքիդ մեջ գործածում ծաղրի սլաքներ թաքուն,
Մի քիչ բթացրու: Եվ քեզ էլ պահիր զինվորի նման:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Լսում եմ, տեր իմ, ինչպե՞ս չլսեմ,
Երբ մեր հյուրն ինքն է առաջնորդ կարգել Ալքիմիկոսիդ:
Նրա սուրբ կամքը օրենք է վերին, պիտի ենթարկվենք:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց չեք ենթարկվում: Վկա արձանն է օտարականի,
Որ կառուցում եք ինձանից թաքուն,
Կտեսնեք, ինչպես կարհամարհի ձեզ այրն այդ իմաստուն:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Չի արհամարհի: Նա այն ժամանակ կարհամարհի մեզ,
Եթե արձանն իր չկանգնեցնենք իր թմբուկի մոտ,
Կասի՝ ապերախտ շներ են սրանք:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ինչ եղավ՝ եղավ: Վերջ: Էլ չեմ ասում, գնացեք քնեք:

Գալիս է Դևը: Առաջին զինվորը, Միաչքանին և մյուսները ծնկի են իջնում նրա առաջ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Օ՜, մեր բարերար…

ՄԻԱՉՔԱՆԻ
- Կեցցե՛ս, մի՛շտ կեցցես մեր բարերար:

ՁԱՅՆԵՐ
- Կեցցե՛, միշտ կեցցե:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ով մեծ բարերար, մեզ պարգևել ես թմբուկը բարի,
Որ երբ ուզենանք, ինչքան ուզենանք նա ոսկի տա,
Բայց քո ստվերը՝ այս առաջնորդը, մեզ արգելում է
Գիշերը ոսկի դիզել մեզ համար:

Դևը չի պատասխանում:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Տես, մենք բոլորս ծնկի ենք իջել քո դեմ, ով աստված,
Իսկ նա կանգնել է, ծնկի չի իջնում:

Դևը դարձյալ լուռ է:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես դեռ խորհում եմ, ծանր ու թեթև եմ անում իմ մտքում,
Ո՞րն է ավելի մեծ՝ ոսկու օգո՞ւտը, թե՞ վնասները:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Կասկածի տակ է դնում, բարերար, քո բարությունը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Այս զորեղ մարդուն հանում եք իմ դեմ,
Ես չեմ վախենում, կմեռնեմ, փույթ չէ,
Միայն թե շատ եք դուք ապականվել, սանձարձակ դարձել,
Սա նրա ոսկու տված վնասն է, իսկ օգուտները…
Ես այդ եմ խորհում, այդ եմ հոգուս մեջ դեռ կշռադատում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Հը, ո՞րն է ծանր:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ծանր է արցունքս, որ չի ցամաքում զոնե մի կաթիլ,
Ավելանում է, հա ավելանում է:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Թող նա լաց լինի, իսկ դու, բարերար,
Մեզ համար կարգիր ուրիշ առաջնորդ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Կարգին առաջնորդ, որ կնոջ նման արցունք չթափի,
Իսկ նրան տվեք մի հարմար լաչակ:
ԴԵՎ
- Իմ կամքով է նա դարձել առաջնորդ,
Կփոխվի միայն իմ կամքով, ոչ ձեր:

Գնում է:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Եվ ձեզ համար է իմ սիրտը ցավում:
Իսկ հիմա իսկույն գնացեք քնեք:

Բոլորը ցրվում են, բացի Առաջին զինվորից և Միաչքանուց։

ՄԻԱՉՔԱՆԻ
- Տեսա՞ր ինչ եղավ։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Տեսա, նա էլի առաջնորդ մնաց։

ՄԻԱՉՔԱՆԻ
- Այդ չէ, մեր հյուրին տեսա՞ր գնալիս։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Տեսա, ինչ կա որ։

ՄԻԱՉՔԱՆԻ
- Չտեսա՞ր ինչպես սիրուն բերանից սև բոց արձակեց,
Ինքը դեղին էր, իսկ բոցը՝ սև-սև։ Լսիր, նա Դև է։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Լռիր, սրբապիղծ բաներ մի ասա։

ՄԻԱՉՔԱՆԻ
- Դև էր ասում եմ։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Լռիր, եթե ոչ…

ՄԻԱՉՔԱՆԻ
- Եթե քեզ մոտ էլ լռեմ, սիրելիս, ուրիշ ո՞ւմ ասեմ։
Կուրծքս պայթում է այս հայտնությունից,
Մի՞թե իսկապես ոչինչ չտեսար։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Երդվում եմ, ոչինչ:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ուրեմն միայն ինձ է հայտնվել այնպես, ինչպես կա,
Քանզի նման եմ իմ տեսքով իրեն,
Նա Դև է իրոք՝ գեղեցիկ մարդու կերպարանք առած:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Նոր բան չես ասում, այդ շատ են ասել:
Ծեր Բանաստեղծը և ուրիշները:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Նրանցը խոսք է, իմը՝ տեսած բան,
Նրանք լոկ իրենց ցասումն են դնում այդ Դև բառի մեջ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ի՞նչ պիտի անենք:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Միմիայն լռել: Եթե իմացվի, որ Դև է իրոք,
Գուցե թե մարդիկ էլ չեն մոտենա նրա թմբուկին,
Եթե նա Դև է, ուրեմն այստեղ գործ կա դիվային:
Վաղ թե ուշ պիտի թմբուկը պայթի:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Այո, դա ճիշտ է, միմիայն լռել,
Թե չէ կզրկվենք ոսկու հորդ գետից,
Բայց և դա շատ-շատ վտանգավոր է:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Առանց վտանգի չեն հարստանում:
Գնում են: Լուսադեմ է: Լսվում է թմբուկի ուժեղ ձայն:
Բանաստեղծն այլայլված մտնում է բեմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Չէ, դեռ չի պայթել, իսկ ինձ թվաց, թե պայթել է արդեն,
Ո՞ր անաստվածն էր, այդքան ուժեղ հարվածեց սրան:
Սարսափից խելքս թռավ գլխիցս ու չհասկացա,
Որ եթե իրոք սա պայթած լիներ,
Ես հիմա պիտի մեռած լինեի:
Չեն թողնում քնեմ, անվերջ խփում են, խփում հա խփում,
Ասես կարկուտ է անդադար տեղում քաղաքիս վրա,
Գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր մահն է քրքջում
Մեր փողոցներում և իմ սրտի մեջ:
Քաղաքը լցվեց աչքերով դեղին,
Կարծես գայլեր են խավարում շրջում վառ-վառ աչքերով,
Ավելանում են նրանք ամեն ժամ, իսկ մենք՝ պակասում:
Ի՞նչ երգով առնեմ ես դեմը դրա,
Այս դեղին ժանգից մաքրեմ սրտերը և խիղճը մարդկանց:
Դեռ մութ է, այս ի՞նչ ճանճ է տզտզում, չի քնել ինձ պես,
Օ՜, սա էլ գուցե ճանճային ցեղի բանաստեղծն է խեղճ,
Անվերջ տզզոցով արթնացնել է կամենում հիմա
Իր հարբած, քնած ցեղակիցներին:
Բայց զուր, վերստին նրանք մնում են խորունկ քնի մեջ:
Լույսը բացվում է, բարի լույս, քաղաք իմ տագնապալից:
Ա՜խ, բարի լույսը հանկարծ չփոխես անլույս խավարի:

Գալիս է Բանաստեղծի աղջիկը:

Բարի լույս քեզ էլ, դստրիկ իմ անգին,
Այսօր ինչ վաղ ես ելել անկողնուց:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Բարի լույս, հայր իմ, այսօր ես չեմ էլ մտել անկողին,
Քունս չի տանում, անկողինն ինչո՞ւ տրորեմ իզուր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ի՞նչ է պատահել: Չլինի՞ սերն է քունդ փախցրել:
Մոտ եկ: Աչքերդ դեղին են կարծես:
Այո, դեղին են, օ, տեր իմ աստված, դեղին, դեղին են,
Այս լուսաբացն էլ չար է ու դեղին,
Այդ ե՞րբ արեցիր, ինչո՞ւ արեցիր:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Այս գիշեր, հայր իմ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Անշուշտ, բոլորից ուժեղ խփեցիր, ագահ արարած,
Քո հարվածից էր, որ ես վեր թռա:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Այո, ոչ մեկը ինձ պես ուժգնորեն դեռ չէր հարվածել,
Մեկից հինգ ոսկի: Մի պահ ինձ թվաց՝ թմբուկը պայթեց:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Օ՜, ագահություն, դու անսահման ես,

Բայց ամրությունը դեղին թմբուկի իր սահմանն ունի,
Վաղը կամ այսօր, գուցե հենց հիմա կպայթեցնես դու:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ի՞նչ ագահություն, հինգ ոսկին ի՞նչ է:
Ես դեղին, դեղին աչիկներ ունեմ,
Տես, ինչ սիրուն են, աչքերի պես են թմբուկի տիրոջ,
Թե թույլ խփեի, դեղինն էլ նվազ պայծառ կլիներ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ագահ, չար, ստոր:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Հայր իմ, ասացի, որ ես ագահ չեմ, ես սիրահար եմ,
Ահա հինգ ոսկին դեն եմ շպրտում. տես, շպրտեցի,
Թող ընկնեն ուղիղ ագահ սրտի մեջ,
Իմ սրտում ուրիշ ոսկի կա՝ սերն է:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Մեկ է՝ սեր կոչվի, թե հարստություն դիզելու ծարավ,
Երկու դեպքում էլ ագահություն է անունը դրա,
Ա՛խ, երանի թե այս գիշեր մեռած լինեիր հանկարծ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Քեզ չեմ հասկանում, հայր իմ սիրելի,
Ինչո՞ւ ես այդպես ատում դու սիրուն օտարականին,
Դու բանաստեղծ ես, գեղեցկությունը պիտի պաշտեիր,

Այնինչ ատում ես, գուցե այնքան թունդ,
Որքան որ ես եմ թունդ սիրում նրան:
Մի՞թե հաճո չէ ունենալ փեսան ամենաչքնաղ,
Ամենաբարի, ամենահզոր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Նա Դև է, չար Դև:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Այսքան սիրուն Դև՞:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Աստված իմ, մի՞թե դստերս կերպն է առել չար ոգին,
Որ պայթեցնի սիրտս իր խոսքով,
Քեզ ո՞վ ուղարկեց, այդ Դև՞ը դեղին,
Թե՞ առաջնորդը դեղին աչքերի:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ա՜խ, հայր, ինչե՜ր են մտքովդ անցնում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Լռիր, չար հոգի…

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ես մեղավոր չեմ, սիրտս է մեղավոր, որ այսպիսին է,
Ու դու ես, հայր իմ, դու ես մեղավոր, որ բանաստեղծ ես…

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ե՞ս եմ մեղավոր: Անհեթեթ աղջիկ, դե ապացուցիր:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ինձ ժառանգել ես ազահ արյունդ, որ չի հագենում,
Փնտրում է անվերջ գեղեցկագույնը գեղեցիկներից,
Եվ ես լքեցի իմ փեսացուին:
Մի՞թե դու այդպես նվազ կատարյալ տողը չես ջնջում
Ու փոխարինում առավել հնչուն, կատարյալ տողով՝
Ձգտելով հասնել անհասանելուն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Օ՜, դու հիմա էլ վերքս ես փորփրում:
Արդեն չորս ամիս իմ երգերում կա լոկ օգտակարը,
Հապշտապ թխված հաց են երգերս,
Բայց հարկավոր են մեր կռվում ընդդեմ քո դեղին Դևի.
Դու էլ օգտակարն ընտրիր, աղջիկս:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Այսինքն դառնամ իմ նախկին սիրո՞ւն:
Ոչ, հայր իմ, ա՜խ, ոչ, ետ դարձողը չեմ անհասի ճամփից,
Կամ կարժանանամ ես նրա սիրուն, կամ կկործանվեմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Կին, միմիայն կին…

Բանաստեղծը հեռանում է: Գալիս է Չեմպիոնը:

ՉԵՄՊԻՈՆ
- Այդ դո՞ւ ես, իմ սեր, ոչ, ոչ, այդ դու չես,
Իմ սերը չուներ դեղնափայլ աչքեր։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ես շատ տգեղ եմ, աչքերս կարծես ձվի դեղնուց են,
Դե հիասթափվիր, էլ մի սիրիր ինձ։

ՉԵՄՊԻՈՆ
- Ինչո՞ւ արեցիր, այդ Դևի համա՞ր։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Թե ինձ սիրել ես, խնդրում եմ նրան էլ Դև չկոչես։
Առաջինը դու Դև անվանեցիր նրան նախանձից,
Հայրս կրկնեց քեզ։

ՉԵՄՊԻՈՆ
- Երբ Դև է իրոք, ես ինչպե՞ս նրան մարդ անվանեի։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Դժվարություն է լինել բացառիկ։
Ա՛խ, գոնե անհայտ իր երկրից պատմեր,
Այդ ի՞նչ երկիր է, ուր բնակվում են այդպիսի մարդիկ։

ՉԵՄՊԻՈՆ
- Դևերի երկիր։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Դու ինձ չես սիրել, թե չէ իմ խոսքը պիտի հարգեիր,
Թեկուզ Դև լիներ, գոնե չասեիր իմ ներկայությամբ:
Եթե այդպես է, հիմա չեմ ցավում,
Որ քեզ խոցել եմ իմ հեռացումով:

ՉԵՄՊԻՈՆ
- Ասա, կրկնիր դու բյուր հազար անգամ, որ ինձ չես սիրում,
Կամ սիրտս խրիր սուրն այս՝ միակը մեր ողջ քաղաքում,
Որ ինձ տրվել է իմ ուժի համար,
Միայն թե հիմա տուն գնա, իմ սեր,
Այստեղ մի մնա, որ նրան տեսնես:
Նրա համար ես, գիտեմ, դու եկել:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ճիշտ կռահեցիր:

ՉԵՄՊԻՈՆ
- Տուն գնա, իմ սեր, նա Դև է, Դև է, քեզ կկործանի:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Նա մարդ է, մարդ: Մի օր կգնամ երկիրը նրա,
Իմ տունն այնտեղ է:

Գալիս է Դևը:

Քեզ դուր գալի՞ս է աչքերիս փայլը, տես ի՛նչ դեղին է:

Փարվում է Դևին, որը նայում է սառն ու հեռանում:

Ի՛նչ սառն էր, կարծես սառույցի կպա,
Ցուրտը մտնում է ոսկորներիս մեջ,
Արյունս է սառչում: Մեռնում եմ, մարդիկ: Օգնեցեք, հեյ, հեյ:

Հավաքվում են մարդիկ, նրանց մեջ է և Բանաստեղծը:

ՉԵՄՊԻՈՆ
- Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ չլսեցիր,
Ասում էի, չէ՞, որ Դև է հաստատ, քեզ կկործանի:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ոչ, ոչ, նա Դև չէ, ինչպե՞ս հավատամ:
Ինչո՞ւ արյունս սառույց է կտրում երակներիս մեջ,
Մրսում եմ, մրսում, վերմակներ բերեք, փաթաթեցեք ինձ:

Կատարում են խնդրանքը:
Չեն օգնում, ավաղ, տաք վերմակները, սա ուրիշ ցուրտ է:
Գուցե նա Դև է:

ՉԵՄՊԻՈՆ
- Դեռ կասկածո՞ւմ ես:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Նա Դև՞ է, երազն իմ, անհասանելին:

Ոչ, Դև է, մարդիկ, մի ուժ մղում էր ձեռքս թմբուկին
Եվ ուզում, որ ես ուժգին հարվածեմ,
Ամենից պայծառ դեղին աչքերը լոկ ես ունենամ:
Նոր եմ հասկանում, որ Դևն էր մղում ինձ այդ արարքին,
Բայց ես զսպեցի թափը իմ ձեռքի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Չար, խորամանկ Դև, այնպես է արել,
Որ եթե հանկարծ խելացի լինի ձեռքն ագահության,
Սիրո խելագար ձեռքը գործն անի:

ՉԵՄՊԻՈՆ
- Բայց նա մեռնում է, օ՜, երկինք, մի՞թե փրկություն չկա:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ներիր ինձ, իմ սեր, մահիցս առաջ,
Սիրտս ագահ էր, խաբվեց Դևի կեղծ փայլ ու ցոլքից:
Ցուրտը ինչ արագ ոչնչացնում է վերջին ուժերս:
Իմ աչքերն առաջ սևորակ էին,
Պետք է որ նախկին գույնը ստանան
Ես շատ եմ ուզում, որ այդպիս լինի իմ մահից առաջ:
Նայեք, դեռ սև չե՞ն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Սև են, աղջիկս:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԱՂՋԻԿ
- Ինչ լավ է, հայր իմ:

Մեռնում է: Բանաստեղծը ընկնում է դստեր դիակին և հեկեկում:

ՉԵՄՊԻՈՆ
- Ա՛խ, հայր իմ, հայր, հայր, Դևի հետ ինչպե՞ս գործակցեցիր դու,
Առաջինը դու ուզեցիր դեղին աչքեր ունենալ,
Եվ առաջինը քո հարսը ուզեց
Դեղին աչքերից դառնալ իր նախկին սև-սև աչքերին:
Նա սուրբ է, հարկ է, որ թաղվի այստեղ, հրապարակում:
Եկ, հայր իմ, ո՞ւր ես, եկ, հրաժեշտ տուր քո Դևի զոհին:

ՁԱՅՆԵՐ
- Այստեղ չէ հայրդ:
- Այստեղ էլ լիներ, պիտի շուտափույթ փախչեր ամոթից:

Միաչքանին մի կողմ է քաշում Առաջին զինվորին:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ուրեմն, Դևը դեռ կամենում է, որ ոսկի դիզենք,
Թե չէ թմբուկը կպայթեցներ այս կնոջ ձեռքով,
Նրա սրտի հետ խաղ արեց մի քիչ, իր ուժը փորձեց:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Դե մենք էլ դիզենք… բայց հետո ախր…

ՄԻԱՉՔԱՆԻ
- Հետո էլ աստված մի դուռ բաց կանի:
Բայց զգուշացիր, Բանաստեղծն ինչ-որ խոսել է ուզում:
Հիմա նա կասի… լսիր, սկսեց:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Տեսա՞ք, որ Դև էր, աղջիկս նրա ցուրտ շնչից հանգավ:

ՁԱՅՆԵՐ
- Չար Դև է իրոք:
- Մեզ մահ կբերի:
- Թող կորչի գնա իր թմբուկի հետ:
- Պետք չէ իր ոսկին, էլ չեմ հարվածի ես իր թմբուկին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Օ՜, իմ խեղճ աղջիկ, առաջին զոհը դարձար նենգ Դևի:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Պահը հարմար չէ հակառակվելու: Մենք պիտի լռենք:
Ամեն ապացույց, որ իբր Դև չէ օտարականը,
Կարող է շուռ գալ հենց ինքը իր դեմ,
Մարդիկ այնպես են այս մահից ցնցված:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ուրեմն լավ է գնանք այստեղից:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ոչ, պիտի մնալ: Տեսնենք ո՞ր կողմն է հեղեղը թեքվում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ախր շատերը կարող են իրենց սրտում հավատալ,
Որ իրոք Դև է թմբուկի տերը,
Եվ այդ հեղեղը շուռ կգա մեր դեմ:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Եվ իրոք կոչում են, Առաջին զինվոր:
Թող շուռ գա, մենք էլ տակից կփախչենք,
Աստված հո զո՞ւր չէ խելք տվել մարդուս:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Վեր կաց, աղջիկս, որ նորից մեռնես, այս անգամ վշտից,
Որ միայն չորս մարդ ետ դարձան նախկին բանական
կյանքին:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Ամբոխը կարծես տեղից շարժվում է:

ՁԱՅՆԵՐ
- Նա ի՞նչ է արել, չի խաբել նա մեզ:
- Զգուշացրել է, որ եթե ուժգին խփենք թմբուկին,
Վերջն է բոլորիս: Ասել է հատ-հատ:
- Թե ուժգին խփենք, մենք ենք մեղավոր, ո՞րն է իր մեղքը:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Հեղեղը արդեն շուռ եկավ այլ կողմ
Առանց իմ ու քո միջամտության:
Ա՛յ, հիմա գնանք, մեզ գործն է կանչում:
Քանի կա այգին մեծ Բուսաբանի,
Ոմանց կարող է այն միտքը հուշել,
Որ նրա բերքը ավելի լավ է,
Քան վտանգավոր ոսկին թմբուկի:

/Մթնեցում/

Լույսը բացվում է: Գալիս է Չեմպիոնը, տեսնում է հորը բաց դաշտում քնած:

ՉԵՄՊԻՈՆ
- Քնել է բաց-բաց: Կմրսի ախր:
Հայրիկ արթնացիր, լույսը բացվել է:

Արթնացնում է:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Դո՞ւ ես, զավակս:

ՉԵՄՊԻՈՆ
- Բարի լույս, հայրիկ: Քնել ես վերջին մուրացկանի պես,
Երբ կարող էիր ծիրանի հագնել, շքախումբ պահել,
Չէ՞ որ զինվոր չես, այլ առաջնորդ ես:
Ի՜նչ լավ ես խաղում երկդիմի խաղդ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ի՞նչ երկդիմի խաղ:

ՉԵՄՊԻՈՆ
- Օ՜, չքմեղություն, ինքը խաղում է, ինքը չգիտի,
Ոչ, հայր, չի անցնի խորամանկությունդ,
Այն, որ մնում ես դու ձերոնց աչքում ժուժկալ առաջնորդ,
Իսկ մեր աչքին էլ սոսկ թոզ ես փչում:
Թե՝ սիրելիներ, չկարծեք բնավ,
Որ առաջնորդի ծիրանու համար և շքախմբի
Ես առաջինը դեղին թմբուկին հարված տվեցի:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մերը չէր կարող այդպես մտածել,
Ատելությունն է այդպես խոսողը:
Բայց այդ վարմունքդ արդար կլիներ առաջվա համար:

ՉԵՄՊԻՈՆ
- Ի՞նչ է, փոխվեցիր մի ակնթարթում, էլ չե՞ս կամենում
Մեր լարից թռչել նրանց զառ լարին, նրանց լարից՝ մեր,
Ինչպես շատ ճարպիկ մի լարախաղաց:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Դու այսօր եկար, բարի լույս ասիր,
Ինչպես կուզեի, որ դա իսկական բարի լույս լիներ,
Այնինչ դու եկար ինձ անարգելու:

ՉԵՄՊԻՈՆ
- Ոչ, եկա, որ քեզ ճշմարիտն ասեմ,
Եվ իմ մեղքը չէ, որ այդքան դառն է ճշմարիտ խոսքը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ճշմարիտն այս է: Նայիր աչքերիս:

ՉԵՄՊԻՈՆ
- Օ՜, հայր իմ, կարծես դեղին չեն նրանք: Այո, դեղին չեն:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Երեկ չորս հոգի լքեցին դեղին բանակը Դևի,
Ես հինգերորդն եմ:

ՉԵՄՊԻՈՆ
- Դև, ասացիր, Դև՞, ուրեմն դու էլ այդ ըմբռնեցիր:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ա՜խ, երանի թե նա Դև չլիներ,
Ինչպես թվում էր ինձ մինչ երեկ:
Երբ տեսավ մարդիկ էլ ետ չեն դառնա,
Ինքն այնքան շատ կա նրանց սրտերում,
Արդեն իսկական դեմքը ցույց տվեց:

ՉԵՄՊԻՈՆ
- Հայր իմ, ներիր ինձ իմ քիչ առաջվա խոսքերի համար,
Ախր նա մեռավ աչքերիս առջև՝
Իր վերջին շնչում քնքշորեն, իմ սեր, անվանելով ինձ:
Սիրտս ելած էր:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մեռավ: Ողջ գիշեր հեկեկում էի, սգում իր մահը,
Սգում մեր մահը, իմ, քո, բոլորի,
Ողբում իմ խաբված հույսերի վրա,
Ինքս էլ չիմացա, ինչպես հենց այստեղ ընկա, քնեցի:

ՉԵՄՊԻՈՆ
- Ասացիր նաև, որ հինգերորդն ես,
Նշանակում է՝ էլ առաջնորդ չե՞ս:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ոչ, առաջնորդ եմ:

ՉԵՄՊԻՈՆ
- Դեն նետիր կոչումն այդ առաջնորդի, տուն արի, հայր իմ,
Ուր կգտնես դու փափուկ անկողին և մեր սերը տաք:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Այդ անհնար է:

ՉԵՄՊԻՈՆ
- Հայր, վերադարձիր քո սրվակներին, փոքրիկ հնոցին,
Գուցե այս անգամ բախտը կժպտա Ալքիմիկոսիդ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ուշ է, զավակս:

ՉԵՄՊԻՈՆ
- Բայց ինչո՞ւ է ուշ, ինչո՞ւ՝ անհնար:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Թե նրանք ուր են հասել՝ չգիտես,
Հեշտ վաստակն այնպես հեշտ ապականեց
Ազնիվ տքնության սերմանած բարին, խոնարհի բարքերը:
Սուտը և ճիշտը նույն գինը ունեն այդ մարդկանց համար:

ՉԵՄՊԻՈՆ
- Օ՜, նողկալիներ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մի վտանգավոր ագահություն է զարթնել նրանց մեջ,
Թմբուկն են մղվում ավելի շատը ճանկելու տենչով,
Իրենք չեն զգում, որ այդպիսին են,

Կարծում են գործը առաջ են տանում բանականորեն,
Բայց բանական չեն:

ՉԵՄՊԻՈՆ
- Եվ դու նույն հացն ես ուտում նրանց հետ:
ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց ինչպե՞ս թողնեմ, որ նրանք անեն ինչ որ կամենան,
Թե ես չլինեմ՝ ո՞վ պիտի նրանց մոլուցքը զսպի:

ՉԵՄՊԻՈՆ
- Անպատվություն է նրանց հետ խոսել,
Ուր մնաց լինել նրանց առաջնորդ:
Հեռացիր, հայր իմ, դեղնաչյաներից՝
Նրանց երեսին նետելով հպարտ արհամարհանքդ,
Չէ՞ որ դրանով առավել մեծ գործ արած կլինես:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Անփորձ երեխա:

Լսվում է Բուսաբանի ձայնը, ապա և երևում է ինքը:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ծառերս, ո՞ւր են ծառերս, մարդիկ,
Դուք կերաք նրանց:

Նկատում է առաջնորդին:

Այդ դո՞ւ ես, բարև, դեղին Առաջնորդ,
Քո մարդիկ բոլոր ծառերս կերան անասունի պես:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ի՞նչ է պատահել, մի կարգին ասա՝ հասկանանք կարգին:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ծառերս չկան, դու կերար, դու, դու,
Այն օրը կերար, այն զարհուրելի, այն անկուշտ օրը,
Երբ առաջինը դեղին թմբուկին հարված տվեցիր:
ԱՌԱՋՆՈՐԴ
- Ա՛խ, հանգստացիր, այ նստիր այստեղ, շունչդ տեղը բեր,
Դե հիմա ասա, ինչ է պատահել ծառերիդ շռայլ,
Որ երկու բերք են մեկ տարում տալիս:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ծառեր ես ասում, նրանք իմ անուշ բալիկներն էին,
Բոլորը մեռան:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց ինչպե՞ս, ինչո՞ւ:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ամեն օրվա պես այս առավոտ էլ
Իմ այն պատրաստած կենսահյութն էի նրանց սրսկում
Եվ հրճվում հյութեղ մրգերի քիչ-քիչ հասունացումով,
Երբ այգիս մտան դեղին աչքերով մի խումբ ճիվաղներ:
«Ինչքա՞ն սպասենք, որ հասունանան այս պտուղները»,-
Ասացին քո այդ Առաջին զինվորն ու Միաչքանին:
Կոտրեցին դալար շիվերը ծառի.
«Ինչո՞ւ սպասենք մենք սրա բերքին,
Երբ անսպառ է ոսկին թմբուկի,
Ինչքան ուզենանք՝ մրգեր կունենանք և հեշտ, և արագ»:

Շիվերից անցան և բնին ծառի, կոտրեցին անգութ,
Ետ չմնացին ընկերներն իրենց
Եվ մի արյունոտ, մի ժանտ կոտորած սկսվեց այգում:
Բայց ինչո՞ւ եմ քեզ պատմում այդ մասին,
Դու նրանց պես ես, նրանց մեծավորը ու ներշնչողը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ա՛խ, բարեկամս, ինձ մի հայհոյիր,
Արցունքը որ, տես, իմ թարթիչներից ընկավ իմ ձեռքին,
Մի՞թե չի ասում, որ սիրտս հիմա արցունքի ծով է:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Իրավ լալիս ես, բայց ի՞նչ է քո վիշտն իմ վշտի հանդեպ:
Աչքերս հանեք, դե շուտ, խնդրում եմ,
Նրանց մեջ կոտրած ծառեր կան դալար, ծառերի դիեր,
Հանեք աչքերս, որ էլ չտեսնեմ իմ աչքերի մեջ
Նրանց դիերը, նրանց սպիտակ վերքերն անհամար:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Սարսափելի է: Սիրելիս, գուցե չշարունակես,
Երկրորդ անգամ ես դու նույնը ասում, հեշտ չէ դիմանալ:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Եթե չես ճչում մի՞թե նշան է, որ ցավը լռեց:
Ա՛խ, թողեք ճչամ տիեզերքով մեկ,
Ո՞ւմ համար էի աճեցնում այդքան առատ բերք,
Ո՞ւմ համար տենչում, որ իմ ծառերը
Ոչ թե երկու բերք, այլ երեքը տան.
Դրա՞նց, այդ մարդկա՞նց, այդ ճիվաղների՞:
Ոչ, նրանք չարժեն, որ անասունի նման ճարակեն

Իմ այգուց պոկած մոլախոտերն իսկ:
Ես ձայն տվեցի՝ դուք լավ չեք ջարդում, կանգ առեք իսկույն:
Երևի ձայնս շատ էր ազդեցիկ, կանգ առան նրանք,
Նրանք կանգ առան, ես սկսեցի:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Լռիր խնդրում եմ, մի շարունակիր:

ԲՈՒՍԱԲԱՆ
- Ա՜խ, իմ ծառերը, իմ բալիկները մղկտում էին:
Ու ճչում էին՝ հայրիկ, խնայիր:
Ես մորթում էի իմ անմեղ, իմ նուրբ երեխաներին,
Նրանց հարազատ, սուրբ մարմինների սրսփումները
Ես մարում էի չար ձեռքերիս մեջ:
Իսկ նրանք, նրանք՝ այն ճիվաղները հռհռում էին,
Ոչ մեկի սրտում գութի մի փոքրիկ շող իսկ չզարթնեց,
Միրգ չէր պակասի, ոսկին հո միշտ կա, կեցցե՛ թմբուկը:
Հիմա վերջ կտամ նրանց հրճվանքին, այնպես հարվածեմ…

Նետվում է դեպի թմբուկը, Առաջնորդը և Չեմպիոնը բռնում են:

Փառք, որ ինձանից դուք ուժեղ էիք:
Աստված իմ, այս ինչ ահռելի ոճիր պիտի գործեի:
Այրվում է ներսս, մի թաս ջուր տվեք:

Չեմպիոնը ջուր է բերում, Բուսաբանը տանում է շուրթերին:

Ես ջուր ուզեցի, իսկ դուք մի թաս կրակ եք բերել:
Կրակ է, տեսեք, վառման կրակ է, չեմ խմի, վերցրեք:

Դուք ինձ ուզում եք վառել, ես գիտեմ,
Մեռցրիք անմեղ իմ բալիկներին,
Հիմա էլ ինձ եք ուզում մեռցնել:
Գայլերը ձեզնից լավ են ավելի,
Ես գայլերի մոտ կգնամ՝ առ՛ու:

ՉԵՄՊԻՈՆ
- Խեղճ մարդ, կսկծից խելքը թռցրեց,
Բայց հանճարեղ էր, դեռ ինչքան բարիք մեզ կպարգևեր:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Հետևեմ նրան: Մարդկանց խաթարված հոգեվիճակը
Կարող է հանկարծ մեզ աղետ բերել:

Գնում է Բուսաբանի հետևից: Մի պահ երևում է Միաչքանին:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Սրանք կարծում են, թե նրա ձեռքը իրենք բռնեցին:
Այս Դևը չուզեց, որ իր թմբուկը
Մի պատահական հարվածից պայթեր:

Անհետանում է: Գալիս է Բանաստեղծը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Այստեղ կարծես թե ես մարդիկ տեսա:

ՉԵՄՊԻՈՆ
- Մի խելագար էր, ոռնալով գնաց:
Եվ մի տառապյալ հետևեց նրան:
Երկրորդն իմ հայրն էր, իսկ խելագարը՝ մեր Բուսաբանը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է գժվել:

ՉԵՄՊԻՈՆ
- Իր այգին չկա: Դեղնաչյաները ծառերն են ջարդել:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Վայ մեզ, որ տեսանք այս սարսափելին
Եվ դեռ ավելի վատը կտեսնենք:
Իսկ հայրդ մի՞թե…

ՉԵՄՊԻՈՆ
- Այո, իսկապես տառապյալ է նա: Եվ մերն է հիմա:
Խնդրում եմ կծու խոսքով չխոցես:

Վերադառնում է Առաջնորդը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բարև, Բանաստեղծ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Բարև, դեղնաչյա: Բայց քո աչքերը կարծես դեղին չեն:
Ուրեմն իրավ տառապյալ ես դու:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Եվ դեռ առաջնորդ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Գիշեր ու ցերեկ նզովել եմ քեզ, քո դեղին ուժը:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես ի՞նչ ուժեղ եմ, ես էլ քեզ նման մի հուսահատ եմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Մեկն հուսահատ է, քանի դեռ մեկ է,
Բայց երբ գալիս են, հանդիպում իրար երկու հուսահատ,
Էլ հուսահատ չեն, մի ելք են փնտրում:

ՉԵՄՊԻՈՆ
- Հայր, կմարտնչենք հիմա կողք-կողքի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ոչ, նա դեռ պիտի առաջնորդ մնա,
Այդպես կարող է գործին առավել օգտակար լինել:
Գնա, բարեկամ, աչքերդ ներկիր հինգ ոսկու չափով,
Իմ խեղճ աղջկա սահմանած չափն է:

Առաջնորդը հարվածում է թմբուկին: Գալիս է Առաջին զինվորը:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Բարև, Առաջնորդ: Լավ է, այստեղ ես, մի քիչ էլ մնա,
Հիմա կբերեն մերոնք արձանը մեր բարի հյուրի:
Այ, այստեղ, բարձր արձանի կողքին այս Բանաստեղծի
Իր թմբուկի հետ պիտի կանգնի նա ավելի բարձր:
Դու էլ, Բանաստեղծ, մնա, մի գնա,
Որ կանգնած կողքին քո այս արձանի՝
Կարդաս ձոներգդ առ բարերարը մեր աստվածակերպ:
Դեռ ժամանակ կա ձոնդ հյուսելու:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Օ՜, տեր իմ, ինչքան լայն է երախը սանձարձակության:
Այ, թշվառական, այդ ինչպե՞ս, ասա, դու հանդգնեցիր
Ինձ առաջարկել գլխիվայր շուռ գալ, երգել ձեր Դևին:
Շուտ, հիմար խոսքդ ետ վերցրու իսկույն:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Իմ խոսքն աղեղից արձակված նետ է, վերադարձ չունի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Խոսքիդ տերն ես, հա՞, քեզպեսն իր խոսքին ե՞րբ է եղել տեր,
Կարծես չես եղել ինձ փառքի արձան կանգնեցնողների մեջ:
Երեկ այդ էիր, քանզի քո շահը այդ էր պահանջում,
Իսկ այսօր այս ես, դարձյալ նողկալի քո շահի համար:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Քո դեմ Առաջին զինվորն է կանգնած, զգույշ, ծերունի,
Ոչ պակաս միայն խոսքի նետեր ունեմ ես, այլև նետ-ձեռքեր,
Նրանք էլ նույնպես, երբ արձակվում են, վերադարձ չունեն:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Դե չափավորիր լեզուդ, անզգամ,
Առաջին զինվորն այդքան թո՞ւյլ լինի,
Որ մի ծերունու ծեծով սպառնա…

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Վիճելու համար ժամանակ չկա,
Լսո՞ւմ ես, մեզ է մոտենում խրոխտ քայլերի ձայնը,
Արդեն բերում են մերոնք արձանը:

Գալիս է մի հոծ բազմություն: Ոմանք արձանն են տեղադրում, մնացածները պարում են մերթ արձանի, մերթ Դևի շուրջը: Նրանց դեղին աչքերը շողում են հրճվանքից:

ՁԱՅՆԵՐ
- Փառք, հավիտյան փառք անմահ աստծուն, որ մեր կողքին է:

Երգում են:

Փառք, դարեդար փառք և իր թմբուկին,
Փառք, անսահման փառք նրա մեծ ուժին,
Հավերժական փառք:

ԴԵՎ
- Ձեր տվածը բառ է՝ կցնդի,
Ձեր կանգնեցրած փառքի արձանը կավ է՝ կմաշվի,
Դուք տկար, դուք խեղճ, քայքայվող, մաշվող,
Ոչնչի տվածն ի՞նչ պիտի լինի իր նման՝ ոչինչ,
Ինչ ինձ եք տալիս՝ տվեք պոետին, թող զվարճանա:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Քաղաքացիներ, տեսա՞ք նա ինչպես արհամարհեց ձեզ,
Ասում էի, չէ՞, որ կարհամարհի ձեր տված փառքը:
Ինձ չլսեցիք:

ՁԱՅՆԵՐ
- Ճիշտ ես, Առաջնորդ, մենք սխալվեցինք:
Նա փառքից վեր է, նրան ի՞նչ արձան:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Եթե ինձ անսաք, չեք սխալվելու դուք երկրորդ անգամ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Թմբուկին մոտենում են Միաչքանին, Հացթուխը և մի քաղաքացի, այստեղ են Առաջնորդը և Բանաստեղծը:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Առաջնորդ, բավ չէ, որ պահակներ ես կարգել թմբուկին,
Ինքդ էլ եկել ես պահակին պահակ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Որ դուք, ագահներ, չափավորեք ձեզ:
Հինգը, իմացեք, վերջին սահմանն է:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Պահակներ, իսկույն հինգ ոսկին տվեք,
Ի՞նչ եք շվարել, վեցը չեմ ուզում, միայն հինգ ոսկի:

ՔԱՂԱՔԱՑԻ
- Ավելի լավ է մեկից հինգ ոսկին իմ գրպանի մեջ
Քան թե վեց ոսկի իմ գրպանից դուրս:
Իմ հինգն էլ տվեք:

Պահակները խփում են թմբուկին, նրանց տալիս ուզած ոսկին: Նրանցից մեկը դիմում է Հացթուխին:

ՊԱՀԱԿ
- Եղբայր, դո՞ւ քանի ոսկի ես ուզում:
Թե միանգամից վեց ոսկի ուզես, իմացիր, չենք տա,
Հինգն հայտնի է, բայց վեցը՝ անհայտ:
Լսած կլինես՝ լավ է փորձված թանն անփորձ մածունից:

ՀԱՑԹՈՒԽ
- Ես փոշմանեցի, մեկն էլ չեմ ուզում:
Ես հացթուխ էի և ուտում էի իմ արդար հացը,
Որ դատում էի ճակտիս քրտինքով՝ բոցի դեմ կանգնած:

Վայ ինձ, ուր հասա, փռիս իսկական ոսկի բոցերը
Փոխեցի այս փուչ, հարամ ոսկու հետ:
Ինչ տվել է ինձ դեղին թմբուկը, վերցրեք, պահակներ,
Տվեք ուրիշին: Սրանք իմ ձեռքերն ու սիրտն այրում են:

ՊԱՀԱԿ
- Շատ ապրես, Հացթուխ, դու քեզ խղճալով մեզ էլ խղճացիր,
Պակաս կխփենք դեղին թմբուկին:

ՀԱՑԹՈՒԽ
- Ես էլի փուռս կվերադառնամ:
Ճիշտ է, ինձ նորից կայրեն բոցերը,
Ի՞նչ փույթ, երբ նաև կջերմացնեն այն ազնիվ խոհով,
Որ օգտակար եմ ես այլոց համար:

Դառնում է ընկերներին:

Ձեզ հաց պետք է, չէ՞, բայց ո՞վ կթխի, թե ես չաշխատեմ:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Այո, իսկապես, հա՞ցն ինչու բերենք ուրիշ քաղաքից:

ՁԱՅՆ
- Դու միշտ հաց թխիր, մենք ոսկի կտանք,
Տաք-տաք հաց կառնենք:

ՀԱՑԹՈՒԽ
- Այս հարամ ոսկո՞վ:
Տեսաք ետ տվի՝ ինչքան ունեի, նորն էլ չուզեցի:
Իմ հալալ հացը կվաճառեմ լոկ հալալ ոսկով:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Անհասկանալի բաներ ես ասում:

ՀԱՑԹՈՒԽ
- Ես հասկանում եմ, ձեզ ոսկի է պետք, շատ-շատ է պետք:
Բայց և ապրել է հարկավոր ախր, կենդանի մնալ,
Երկար չենք քայլի անդունդի եզրով, կընկնենք գլխիվայր:
Արձակ դաշտեր կան ազատ, անվտանգ,
Եվ շատ ոսկի կա նրանցում նույնպես,
Թե հողը փորենք, հողը մեզ ոսկի կտա բռերով,
Եվ կյանք կունենանք, և ազնիվ ոսկի:
Դուք ոսկի ցորեն կտաք ինձ հողից, ես ձեզ՝ տաք-տաք հաց:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Քեզ ոսկի ցորեն կտանք մենք իրոք, բայց ոչ մեր հողից,
Մոտիկ քաղաքից քեզ ալյուր բերենք այնքան, այնքան շատ,
Որ ինչքան թխես, կեսն էլ քամուն տաս, չզգաս՝ պակասեց:

ՀԱՑԹՈՒԽ
- Ձեր հարամ ոսկով առած ալյուրից ինչպե՞ս հաց թխեմ:

ՁԱՅՆ
- Մի թխիր, պետք չէ, մենք հազար հացթուխ կբերենք ոսկով:

ՀԱՑԹՈՒԽ
- Եղբայրներ, վեճը նոր վեճ է բերում:
Եվ չեն հասկանում վիճողներն իրար,
Մենք սիրո խոսքեր ասենք մեկմեկու,
Լոկ սիրողներն են հասկանում միմյանց:
Ես ձեզ սիրում եմ: Պահակներ, լսեք,
Իմ տված ոսկին տվեք այս մարդկանց,
Թող նրանք այսօր եռապատիկն ոսկի ունենան:
Բայց մի՞թե ոսկին կարող է լինել սիրո ապացույց:

ՁԱՅՆ
- Հեյ դուք, պահակներ, նա ձեզ բան ասաց,
Ի՞նչ եք քարացել, տվեք իր ոսկին:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Տվեք ինձ ոսկին:

ՊԱՀԱԿ
- Ահա, ստացեք, տասնհինգ՝ մեկիդ, տասնհինգ՝ մյուսիդ:

ՁԱՅՆ
- Այ սա է իրոք սիրո ապացույց:
Այսքանն էլ երեք օրում կտրվեր:
Մեր Առաջնորդն էլ բան է հնարել,
Ամբողջ մի օրում միայն մի անգամ ոսկի ստանալ:

ՀԱՑԹՈՒԽ
- Չէ, սիրելիներս, այդ ոսկին սիրո ապացույց չէ դեռ,

Եկեք իմ փռում աշխատենք մեկտեղ,
Հենց որոշեցի նորից հաց թխել՝
Սիրտս հրճվանքից թև առավ, թռավ,
Կուզեի նույն կերպ ձեր սիրտն էլ հրճվեր:
Այս իմ ուզելն է ձեր հանդեպ սիրո ապացույցն ստույգ:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Այդ ինչ սեր է: Դու չառարկեցիր,
Երբ ինձ էլ նույնքան ոսկի տվեցին, որքան որ նրան,
Այս անխելքն ո՞վ է, որ ինձ հետ չափվի:
Պետք է ինձ տրվեր երեք անգամ շատ:

ՁԱՅՆ
- Ինձ պետք է տրվեր երեք անգամ շատ,
Զույգ աչքեր ունեմ, դու միայն մեկը, միաչքանի շուն:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Այդ ե՞ս եմ շունը, տո ժանտախտ ու տիֆ:

ՁԱՅՆ
- Ե՞ս եմ ժանտախտը, տո կոխկռտված ձյուն:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ե՞ս եմ կոխկռտված, դե հիմա դու տես,
Այնպես կոխկռտեմ, որ վեր չկենաս տեղիցդ երբեք:

Հարձակվում են իրար վրա:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Եվ սրա՞նք են իմ հպատակներն ու զինվորները:

Հեռու իրարից: Այդպես: Դե հիմա վճիռս լսեք:
Դուք արժանի չեք մի քոռ ոսկու էլ,
Ետ տվեք իսկույն տասնհինգ ոսկին: Երկուսդ էլ: Դե շուտ:

Ոսկին ետ են տալիս:

Հիմա գնացեք: Փառք տվեք աստծուն, որ խնայեցի,
Թե մեկ էլ կռվեք, ես ձեզ կկախեմ,
Որ կտցահարեն սև ագռավները ձեր աչքերն ագահ:

Գնում են:
Դեռ լսում են ինձ, խոսքս ուժ ունի:

Միաչքանին ետ է գալիս:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Առաջնորդ, դու ինձ վիրավորեցիր, ես չեմ մոռանա:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ավելի լավ է ա՛յն չմոռանաս,
Որ դու մի քանի ոսկու պատճառով կռիվ սարքեցիր:

Միաչքանին հեռանում է: Բեմի խորքից լսվում է նրա ձայնը:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Մի քանի ոսկի և տուրուդմփոց,
Այդ իմն էր, մեկ չէ՞ այսօր թե վաղը:
Պետք է լոկ գտնել հուսալի միջոց գոռ պայթյունի դեմ:
Իսկ սրա տեղն էլ պիտի մի ուրիշ առաջնորդ լինի,
Որ թողնի ազատ խփեն թմբուկին, ոսկին շատանա:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Տեսնես դեռ ինչքան իմ խոսքը այսպես ազդու կլինի:

ՀԱՑԹՈՒԽ
- Ա՛խ, եթե դրանց կարողանայի ես դարձի բերել…
Լեզուս տկար է, ես այն չասացի, այնպես չասացի,
Որ ազդեր նրանց սրտերի վրա: Հացթուխի խոսք էր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դու լավ ասացիր: Բանաստեղծի պես:
Բայց նրանց սրտերն ապառաժ էին,
Իմ երգերն էլ են, ավաղ, փշրվում այդ ապառաժին:

Լսվում է շների հաչոց: Նրանցից մազապուրծ բեմ են մտնում ոչ դեղին աչքերով երկու մարդ:

ՁԱՅՆԵՐ
- Առաջնորդ, փրկիր մեզ խաժամուժից:
- Ոտքիցս ոնց որ արյուն է գալիս…
Շներից մեկը ազդրս կծեց:
- Մեզ վրա նրանք շներ բաց թողին:
Մեր խումբն անցնում էր փողոցից փողոց,
Եվ կոչ էր անում ձեռք չտալ երբեք ոսկու թմբուկին
Ու վերադարձնել օտարականին իր խարդախ ոսկին:
Սկզբում նրանք սուլեցին միայն,
Բայց հետո մեկը գոռաց, թե սրանք խաբեբաներ են,
Ծեր Բանաստեղծն է ուղարկել, որ մեզ ճիշտ ճամփից շեղի
Եվ արձակեցին գելխեղդ շներին,
Մեր երթը ցրվեց, փախանք դես ու դեն:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մեր ձեռնարկումը ի դերև ելավ.
Ուրիշ ի՞նչ անենք, աստված իմ, էլ ի՞նչ:

Պահակներից մեկը դիմում է Առաջնորդին և Բանաստեղծին:

ՊԱՀԱԿ
- Լսեցեք դուք ինձ և մի մեղադրեք,
Էլ չեմ հարվածի այս նենգ թմբուկին,
Ինքս էլ չգիտեմ ինչպես է լինում,
Շատ հարվածելուց ինչ-որ ցուրտ բան է սողոսկում սիրտս,
Հաղորդվում է ինձ ինչ-որ չարություն,
Ուզում եմ ուժգին խփել թմբուկին:

ՀԱՑԹՈՒԽ
- Նա ճիշտ է ասում, նույն զգացումն եմ ունեցել ես էլ,
Երբ իմն է եղել այս անիծյալին խփելու հերթը:

ՊԱՀԱԿ
- Մեզ ազատեցեք հարվածներ տալուց,
Եթե ուզում եք՝ մենք էլի պահակ կլինենք սրան:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Թող այդպես լինի:

ՀԱՑԹՈՒԽ
- Հանգած է սիրտս իմ փռի նման,
Թողեք ինձ գնամ, բորբոքեմ հուրը իմ թոնիրներով,
Տաք-տաք հաց թխեմ, որ ապրենք, հուսանք:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մնաս ինչ անես, գնա, բարեկամ:

Հացթուխը գնում է: Գալիս է դեղնաչյաների բազմությունը, որի մեջ են Միաչքանին և Առաջին զինվորը:

ՁԱՅՆԵՐ
- Այստեղ են, այստեղ խաբեբաները:
- Բրածեծ անենք:
- Գցենք շների առաջ, թող զզեն:
- Մահ խարդախներին:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Սպասեք, ի՞նչ եք աղմկում այդպես:

ՁԱՅՆ
- Նրանք ասում են, որ ոսկին ետ տանք օտարականին:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց դրա համար արժե՞ գազազել, սպառնալ մահով,
Նրանք ասում են, դուք էլ մի տվեք,
Դուք էլ ձերն ասեք, վերջացավ՝ գնաց:

ՁԱՅՆԵՐ
- Կասկածի սերմ են կամենում ցանել մեր սրտերի մեջ,
Որ իբր բարի օտարականը մարդ չէ, այլ Դև է:
- Ասում են, իբր նրա ցուրտ շնչից
Պոետի դուստրը սառեց ու հանգավ:
- Սուտ էր, դստերն իր թունավորել էր Բանաստեղծն ինքը,

Որ իր պատիվը գետնով է տվել, սիրել ուրիշին:
- Մենք էլ ենք շփվում բարի հյուրի հետ, ինչո՞ւ չենք մեռնում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դուք էլ կմեռնեք, կգա այդ օրն էլ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ
- Այսինքն՝ էլի քո միտքն ես պնդում,
Որ նա նենգ Դև է, ու եթե Դև է՝ պիտի կործանի,
Այնինչ դու ինքդ ես կործանարար Դև,
Թե կենդանարար աղջիկդ հանկարծ՝ այդ կհաստատեր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Այդ սուտը անշուշտ սա է հորինել, այս Միաչքանին:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Եթե սուտ լիներ՝ այսքան շատ մարդիկ չէին հավատա,
Ճշմարտություն եմ ասել ես նրանց:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Սուտ, մեծ ուժ ես դու, քանզի մենակ չես,
Քեզ հետ է անսանձ լպիրշությունը:
Ես իմ աղջկան թունավորել եմ,
Ես սրիկա եմ, իսկ դու մինչևիսկ ստախո՞ս էլ չես:

ԶԱՅՆԵՐ
- Մենք հավատում ենք նրան ինչպես մեզ:
- Նա սուտ չի ասի:
- Նա շատ նման է մեր Բարերարին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ձեզ հաճելի է, ազահներ, սրա ստին հավատալ,
Այլապես պիտի նենգամիտ Դևի ոսկին մերժեիք,
Եվ ինչ հաճույքով խաբում եք դուք ձեզ, կույր եք ձևանում:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Քո մարդիկ մի քիչ խելոք են քեզնից,
Իրենք չեն ասում, որ նա Դև է չար,
Սակայն այնպես են խոսքն առաջ տանում,
Որ մենք ասենք, օտարականը թողնի հեռանա:

Հայտնվում է Դևը:

ԴԵՎ
- Ես ձեզ ասել եմ, որ քանի ձեր մեջ գեթ մի հոգի կա,
Որ կամենում է խփել թմբուկին, կմնամ այստեղ,
Հանգիստ մնացեք: Դև կոչեն, թե մարդ,
Նրանց հորջորջումն ինձ չի խռովում:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ուրեմն հանգիստ մնացեք, մարդիկ,
Ձեր բարերարը այստեղ կմնա այնքան ժամանակ,
Քանի չի պայթել թմբուկը նրա:
Դուք ամեն մեկդ օրը մեկ անգամ կխփեք նրան,
Անձամբ կխփեք, հալից ընկել են պահակներն արդեն,
Լավ լսեք, օրը միայն մեկ անգամ և ոչ ավելի:

ՁԱՅՆԵՐ
- Քիչ է, Առաջնորդ:

- Լույսով՝ մեկ անգամ, մթնով՝ մեկ անգամ:
- Թմբուկը մերն է, ինչքան ուզենանք, այնքան կխփենք:
- Առաջնորդ, եթե մի անգամ խփենք՝ ուժգին կխփենք,
Որ մեկից շատ-շատ ոսկի ունենանք:
- Անարդար է քո վճիռն, Առաջնորդ, և վտանգավոր,
Պետք է բեկանել:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Միայն մեկ անգամ և ոչ ավելի:
Սահմանափակեք ձեր ախորժակը, քչին սովորեք:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Գուցե այդ մե՞կն էլ մեզնից կխլես:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Եղբայրներ, լսեք, այս պահակները ինձ գանգատվեցին,
Որ շատ խփելուց փոխվում են քիչ-քիչ, հաղթվում են չարից,
Ուզում հարվածել խելահեղորեն:

ՁԱՅՆ
- Սուտ է, խաբել են:

ՊԱՀԱԿ
- Ճիշտ է: Երդվում եմ: Ասես մի Դև էր մտել սրտիս մեջ,
Ձեռքս մղում էր, որ ուժգին խփի:

ՁԱՅՆԵՐ
- Ստում ես, Պահակ, դու էլ ես խարդախ,
Նրանց ընկերն ես, մենք քեզ վրա էլ շներ կարձակենք:
- Մեկ էլ քո սուտը կրկնել ուզես՝ կկտրենք լեզուդ:

- Քարածեծ կանենք:
ԱՌԱՋՆՈՐԴ
- Երանի ստեր: Բայց նա չի ստում,
Փոխվել եք դուք էլ, առաջվանը չեք:
Ձեզ էլ է ոսկուց չարություն անցել, դարձրել ձեզ վայրագ,
Ձեր վայրի կիրքը վկան է դրա,
Եկեք դադար տանք դեղին թմբուկին գոնե մի շաբաթ:

ՁԱՅՆԵՐ
- Մի ամբողջ շաբաթ: Գուցե մի ամի՞ս…
- Կամ ամենի՞ն չխփենք գուցե:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Գոնե մի շաբաթ ոչ ոք թմբուկին թող չմոտենա,
Այդ ես եմ ասում, որ առաջինն եմ խփել թմբուկին:

ՁԱՅՆԵՐ
- Մեր կթու կովը մի ամբողջ շաբաթ խլո՞ւմ ես մեզնից:
- Ի՞նչ է, կարծում ես մեզ քացի՞ կտա:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Այո, կարծում եմ:
Դուք շատ եք կթել և պտուկները ցավում են արդեն:
Արդեն օր ու ժամ դուք սանձարձակ եք դառնում ավելի,
Վկա են ջարդված բարի ծառերը մեծ Բուսաբանի,
Մոլություններն այն, որ ձեր մեջ ծնեց ոսկին անաշխատ:
Արժանի չէիք մեծ հարստության, ձեր հոգին մեծ չէր,
Դուք չդիմացաք ծանրությանն ահեղ
Եվ գլորվում եք դեպի կործանում:
Մի ամբողջ ամիս ոչ ոք մոտ չգա այս դեղին կովին:

Հավատացեք ինձ, ես ճիշտ եմ ասում, նա քացի կտա:
ՄԻԱՉՔԱՆԻ
- Դու ճիշտ չես ասում, նշանակում է՝ էլ առաջնորդ չես:
Մարդիկ, հիշո՞ւմ եք, օտարականի մասին խոսելիս
Նա այսպես ասաց՝ «ձեր բարերարը»,
«Ձեր» ասաց, հիշեք, դրանով մատնեց, որ էլ մեզ հետ չէ:

ՁԱՅՆԵՐ
- Այո, «ձեր» ասաց:
- Թե մեզ հետ լիներ, մեզ նման կասեր՝ «մեր բարերարը»,
Ինչո՞ւ ենք նրան առաջնորդ կարգել:
- Լոկ նրա՞ համար, որ առաջինն է խփել թմբուկին:
- Մեզնից ով ասես նրա արածը անել չէր կարող:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Տեսեք, աչքերն էլ կարգին դեղին չեն, սև են համարյա:

ՁԱՅՆԵՐ
- Սա ի՞նչ առաջնորդ: Ալքիմիկոս է:
- Թող բոցերի մեջ առաջվա նման փնտրի իր ոսկին:
- Մենք մերը փնտրել, գտել ենք վաղուց:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Առաջին զինվոր, եղիր առաջնորդ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես համաձայն եմ, իսկ դուք բոլո՞րդ եք համաձայն արդյոք:

ԲՈԼՈՐԸ
- Ուռա՜ա, թող կեցցե Նոր առաջնորդը: Թող կորչի հինը:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Հիմա լսեցեք ձեր առաջնորդի վճիռն առաջին:
Ով երբ կամենա, ինչքան կամենա
Կարող է կթել այս ոսկի կովը:

ՁԱՅՆԵՐ
- Ուռա՛ա: Այ այդպես…

ԱՌԱՋՆՈՐԴ
- Միրտս զգում էր, որ առաջնորդի գավազանն անգամ
Սրանց չի սաստի, բայց չդիմացա և բարձրացրի:
Իմ իսկ բաց թողած դեղին հեղեղը քշում է ինձ էլ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դու, Նոր առաջնորդ, դուք, նրա մարդիկ, լսեցեք երգչին:
Եթե քիչ խփեք՝ կուզեք մի զարկով շատը ունենալ,
Եթե շատ խփեք՝ ձեր սրտին Դևի չարն է հաղորդվում,
Երկու դեպքում էլ առկա է վտանգն ուժգին խփելու:
Ի՞նչ, այսպես մահվա՞ն գնանք ինքնակամ:
Ոչ, բարեկամներ, ախր կա նաև ետդարձի ճամփա:
Եվ կա աշխարհում իսկական վեհ բան, բարձրացեք, տեսեք,
Դուրս եկեք ոսկու ճահճուտից, տիղմից…

ՁԱՅՆԵՐ
- Մի շարունակիր, շատ ես նույնն ասել, քո երգերի մեջ:
- Սպառվել է նա, կրկնում է իրեն:
- Թութակ է, թութակ:

ԱՌԱՋՆՈՐԴ

- Դեղին հեղեղը քշում է քեզ էլ, Բանաստեղծ ընկեր,
Հույսդ մի կորցրու: Երբ հանդիպում են երկու հուսահատ,
Էլ հուսահատ չեն, մի ելք են փնտրում:

Լսվում է խելագարի ոռնոցը՝ առ՛ու:
ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Վայ քեզ, քաղաք իմ, խելագարված է քո հանճարն ահա,
Եվ առավել են քո հիմարները լպիրշ և հիմար:

/Մթնեցում/

Լուսավորվելուց հետո թմբուկի մոտ են միայն Առաջնորդը և Բանաստեղծը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Մոտ է օրհասը, բայց որ կողմից է գալիս՝ չգիտեմ:
Ես գիտեմ միայն դեղին աչքերի ո՛ր կողմից գալը:

Թմբուկին մոտենում են նորանոր խմբեր:

Կամաց խփեցեք, թե չէ կպայթի թմբուկը հանկարծ
Ու ձեր կոկորդում կմնա ոսկին:
Ահ, դու նորեկ ես, մենակ չես, չորսն եք,
Ինչ արագորեն հալչում ենք, կորչում, ձնագնդի պես:

Գալիս են ուրիշ խմբեր: Դեղին աչքերով մի քանի մարդ ծաղիկ են դնում Դևի և Բանաստեղծի արձաններին:
ԱՌԱՋՆՈՐԴ
- Ծաղիկ են դնում նրանք արձանիդ,
Ասել է՝ երգդ սիրում են, պոետ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Սիրում են, սակայն տրորում անգութ:

Մոտենում է ծաղիկներին, վերցնում:

Սիրուն ծաղիկներ, երբ դաշտում էիք, դուք անմեղ էիք,
Դուք մաքուր էիք ձեր թփի վրա,
Հիմա կեղտոտ եք ու սեր չեք բուրում,
Կեղծավորություն խառնեցին նրանք ձեր անուշ բույրին:
Ընկել են հոգով, բայց վեհություն են խաղում դեռ համառ:
Գայլ են՝ թող ոռնան, օձ են՝ թող ֆշշան,
Ինչո՞ւ են կեղծում գայլությունն իրենց և օձությունը:
Ախ, հա, որ ասեն, թե մարդ են ծնվել, ոչ թե գայլ կամ օձ
Ու եթե մարդ են ծնվել աշխարհում,
Ուրեմն պիտի բանաստեղծություն սիրեն և պաշտեն
Ու Բանաստեղծի արձանին դնեն սիրո ծաղիկներ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Բայց, ավաղ, Դևի արձանից հետո:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Քանզի լցնում է նա իրենց որկորն համեղ բաներով:
Սրանք էլ պիտի դրված լինեին Դևի արձանին:

Շպրտում է ծաղիկները դեպի Դևի արձանը:

Յոթ-ութ տարեկան մի մարդ է գալիս,
Աստված իմ, մի՞ թե մանկանց հոգին էլ ցեցը ճարակեց:
Փոքրիկս, լսիր, կամաց կխփես:

ՄԱՆՈՒԿ
- Ես չեմ խփելու:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Հապա ինչո՞ւ ես եկել դու այստեղ:

ՄԱՆՈՒԿ
- Հայրս ուղարկեց: Ասում է՝ գնա, երազդ պատմիր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Երա՞զ, ի՞նչ երազ:

ՄԱՆՈՒԿ
- Երազում տեսա թմբուկը պայթեց,
Բոլորը մեռան, բայց ես չմեռա:
Մի քեռի խփեց,
Պահակ էր կանգնած, որ ուրիշներին թույլ չտա խփեն,
Բայց ինքը խփեց, այնքան թունդ խփեց,
Որ կտոր-կտոր եղավ թմբուկը:
Բոլորը մեռան, իսկ ես արթնացա,
Դրա համար էլ չմեռա ես էլ:
Պատմեցի, գնա՞մ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Գնա, փոքրիկս, մեր ողջույնը տար ազնիվ հայրիկիդ:

Մանուկը գնում է:

Այս երազն աստված ինքն է ուղարկել,

Զգուշացնում է գալիք աղետից,
Այդ մենք էլ գիտենք, բայց, ա՛յ, չգիտենք,
Ինչպես դեմն առնենք:

Գալիս է Չեմպիոնը մռայլված, գլուխ է տալիս:

ՉԵՄՊԻՈՆ
- Ես եկա, բայց ոչ պահակ կանգնելու:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես կարծում էի մեզանից մեկին կփոխարինես:

ՉԵՄՊԻՈՆ
- Իմաստ չունի, հայր, չես կանխի աղետն այսպես կանգնելով.
Գործ է հարկավոր, մարտնչել է պետք այս չարիքի դեմ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Քեզ չեմ հասկանում, դու ուզում ես, որ մենք ապստամբե՞նք:
Հանենք Դևի դեմ բոլորին, ովքեր դեղնափայլ չեն դեռ:

ՉԵՄՊԻՈՆ
- Ոչ, հայր իմ, պետք չէ: Դժվար թե նրանք ելնեն միաբան,
Սարսափելի է Դևը իր ուժով:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Նա ինքն է ուզում ելնել մեն-մենակ: Ես ճի՞շտ հասկացա:

ՉԵՄՊԻՈՆ
- Այո, մեն-մենակ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Զավակս, ախր այդ Դևը քեզնից զորընդեղ է շատ:

ՉԵՄՊԻՈՆ
- Բախտը կարող է ինձ նույնքան ժպտալ, որքան և նրան:
Երբ սուրն է գործում՝ շատը և քիչը հավասարվում են:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Տեսնում եմ, վախ կա աչքերիդ խորքում,
Դու չես հավատում քո հաղթանակին,
Քեզ ինչպե՞ս ասեմ գնա ու մեռիր, դու իմ որդին ես,
Ծնկներս են ծալվում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ե՞ս ինչպես ասեմ գնա ու մեռիր, դու իմ որդին չես:

ՉԵՄՊԻՈՆ
- Ես չեկա այստեղ, որ դնեմ ծանր կացության մեջ ձեզ,
Ես եկա միայն հրաժեշտ տալու,
Մեկ էլ խնդրելու քեզնից, աներհայր,
Որ քո երգերում իմ մասին հիշես:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ի՞նչ է երգը, որ քո արարքին արժանի լինի:

ՉԵՄՊԻՈՆ
- Իմ ցանկությունը գուցե մանրիկ է և ծիծաղելի,
Բայց մեռնողն ինչու ուզում է վրան շիրմաքար դրվի.
Որ հիշեն իրեն, որ լինի ինքը մահից հետո էլ,

Ինձ պետք չէ շիրիմ, ոչ էլ շիրմաքար,
Քարն ի՞նչ կարող է պատմել նայողին, երբ լեզու չունի,
Երգն ինքն է լեզու՝ դարերում հնչող:
Կգրե՞ս, ասա, այդպիսի մի երգ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Կգրեմ, կտրիճ, սրտիս սրբասուրբ արյամբ կգրեմ,
Եթե մինչև այդ մեր քաղաքի հետ չկորչեմ ես էլ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Զավակս, Դևը կարծեմ քնած է, այ այն թփի տակ,
Եթե հարվածես նրան թիկունքից, գուցե թե հաղթես,
Կռիվ մի մտիր դու ասպետաբար, ասպետ չէ դեմդ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Խփիր թիկունքից, այդպես շահելու մի հույս կունենաս,
Կտրիճ ես, գիտեմ, և կուզենայիր կռվել դեմ առ դեմ,
Բայց պահանջում է քաղաքիս շահը՝ թիկունքից խփես:

ՉԵՄՊԻՈՆ
- Ոչ, հայրեր, պետք չէ: Թիկունքից խփել ես չեմ կամենում:

Դևը վեր է կացել և քրքջալով առաջ է գալիս:

ԴԵՎ
- Ես քնած չէի, ես կյանքում երբեք, երբեք չեմ քնում:
Անփորձ հիմարներ, ձեր շշուկն անգամ ես լսում էի,
Այս մո՞ւկն էր ուզում վերջ տալ իմ կյանքին:
Դե խփիր, մկնիկ:

Հարձակվում է և խլում սուրը Չեմպիոնի ձեռքից։
Չէ, ճարպիկ չեղար, կարողանայիր քերծել իմ մաշկը՝
Ամբողջ արյունս կհոսեր անկարգ։ Նա չի մակարդվում։
Քեզ կարող էի սպանել հիմա, բայց չեմ սպանի,
Մնա, որ տեսնես ինչպես եմ ուտում ձեր սիրտն ու խիղճը։
Շատ-շատ եմ կերել, շուրջս ամենուր դեղին աչքեր են։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Բայց մի ցնծա, Դև, դեռ վերջնական չէ քո հաղթանակը,
Դու իմ աչքերը չես տեսնի դեղնած։

ՉԵՄՊԻՈՆ
- Եվ ոչ էլ իմը։

ԴԵՎ
- Բայց մեկ է՝ պիտի պայթյունը լինի,
Եվ ոչնչանաք դուք էլ դեղնաչյա մկնիկների հետ։

Բեմ է մտնում Նոր առաջնորդը դեղնաչյաների բազմության հետ։

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես կանչել եմ ձեզ շատ կարևոր բան ասելու համար։
Պիտի պատերազմ սկսենք շուտով։

ՁԱՅՆԵՐ
- Պատերա՞զմ։ Ո՞ւմ դեմ։
Եվ ինչի՞ համար։

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ինչի՞ համար են պատերազմ անում:
Մարդ սպանելու, հողը խլելու, ինչքը վերցնելու:
Բայց մեզ հող պետք չէ,
Մենք հող շատ ունենք և չենք մշակում,
Ուրիշի հո՞ղը մշակենք պիտի:
Մեզ ինչք էլ պետք չէ, ոսկի շատ ունենք:
Եթե ուզենանք՝ աշխարհի ապրանքն այստեղ կլինի:
Մարդ սպանելուց մեզ օգուտ չկա,
Բայց շատ կսպանվեն, դե պատերազմ է,
Այլ կերպ չի լինի:

ՁԱՅՆ
- Եթե մեզ բան պետք չէ, սպանելուց էլ բան չենք շահելու,
Հապա էլ ինչո՞ւ պատերազմ անենք:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Նախ՝ մենք մեր ուժն ենք ցուցադրելու,
Երկրորդ՝ ասացի, որ մեզ ինչք պետք չէ,
Բայց զենք շատ պետք է, և շատ զենք է պետք:

ՁԱՅՆԵՐ
- Խլենք, ուրեմն, ուրիշից, ուրիշից խլենք:
- Բայց ումի՞ց խլենք, ասա, առաջնորդ:
- Իսկ ինչո՞ւ խլենք, երբ կարելի է պարզապես գնել:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Այ այստեղ է, որ ես պիտի ասեմ,
Թե մենք ում դեմ ենք պատերազմելու:
Պիտի հարձակվենք մեզ ամենամոտ քաղաքի վրա:

Մենք ոսկի տալիս ու միրգ ենք առնում, միրգ վաճառում են,
Մենք ոսկի տալիս ու հաց ենք առնում, հաց վաճառում են,
Մենք ոսկի տալիս ու միս ենք առնում,
Հագուստ ենք առնում, միս ու հագուստ էլ վաճառում են,
Մենք ոսկի տալիս ու զենք ենք ուզում, զենք չեն վաճառում,
Էլի մնում ենք այդ խարդախներից կախված վիճակում:
Հարձակվենք պիտի ու զենքը ձրի առնենք նրանցից,
Խաթրով չեն տալիս, բայց զոռով կտան:
Արյուն կթափվի, նրանց արյունը, մենք մեղավոր չենք,
Իրենք այդ անել մեզ ստիպեցին:

ՁԱՅՆ
- Առաջնորդ, նրանք զենքով, մենք՝ անզեն:
Այդ ինչպե՞ս պիտի նրանց արյունը թափվի, մերը՝ չէ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Մենք պիտի դիմենք խորամանկության,
Հարձակվենք սուս-փուս, երբ քնած լինեն՝ բոլորին մորթենք:

ՁԱՅՆԵՐ
- Ոնց թե բոլորին: Էլ ո՞վ պիտի մեզ հաց, միրգ վաճառի:
- Ո՞վ պիտի դրանք իր այգում, արտում հասունացնի:
- Սովից կմեռնենք:
- Շատ անխելք բան է, ոնց որ մեր ձեռքով մեր տունը քանդենք:
- Ոնց որ շատ ուժգին խփենք թմբուկին ու պայթեցնենք,
Համ ոսկուց զրկվենք, համ էլ մեր կյանքից:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Շատ եք աղմկում: Ես հո չեմ ասում ԲՈԼՈՐԻՆ մորթենք,

Այսպես, մեկումեջ, ով մեր սուրբ կամքին կհակառակվի:
ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Մարդիկ, տեսնում եմ, ուժեղ, շատ ուժեղ ձեռքեր ունեք դուք
Եվ ջարդուփշուր կարող եք անել ամեն, ամեն ինչ,
Բայց մի հարվածեք:

ՁԱՅՆ
- Եթե ուժեղ ենք, պիտի հարվածենք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Բայց մի հարվածեք: Ձեզ էլ հարվածող կճարվի, մեղք եք:

ՁԱՅՆ
- Մենք զենք կունենանք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Զենքը ցած նետեք, միշտ էլ սրի դեմ սուր կբարձրանա,
Եվ մահվան դեմ՝ մահ, կսպանվեք դուք էլ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Լռիր, պոետիկ, նման բաներից խելքդ չի հասնում,
Քո գործը լացն է:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Այդ ինչ լեզվով ես խոսում պատվարժան մեր պոետի հետ,
Ո՞վ ես դու, միայն չնչին մարդասպան:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես առաջնորդ եմ, ինչպես դու՝ երեկ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ոչ, ստում ես դու, ես քեզ պես չէի իբրև առաջնորդ,
Քո մեջ զարթնել է ուժն ավերումի: Երեկ այդ չկար:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես միշտ եղել եմ այսպիսին՝ ուժեղ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Լպիրշ՝ ոչ ուժեղ, նոր ուժեղացար:
Բայց մեկ է՝ պիտի հարձակման պահին ետևից գնաս:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Առջևից՝ հիմար:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Սուտ է, ա՛յ մարդիկ, սա խաբում է ձեզ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Եթե շատ խոսես կհրամայեմ, որ լեզուդ կտրեն:

ԴԵՎ
- Արյուն չթափվի: Ոչ ոք ոչ ոքի թող չբռնանա,
Ինչպես որ ես չեմ բռնացել երբեք ոչ մեկիդ կամքին:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Լսեցեք, մարդիկ:
Ես չեմ զգացել ձեր ուժը իմ մեջ, իսկ սա զգում է.
Գիտի՝ իր ուժն է, այնինչ նա միայն ձեզնով է ուժեղ:
Նա ձեզ կռվի դաշտ կուղարկի հանգիստ,

Դուք իր ձեռքերն եք, ջարդեք ու ջարդվեք,
Ջարդվելիս ինքը ցավ չի զգալու,
Չէ՞ որ դնովի ձեռքերն եք նրա:

ՁԱՅՆԵՐ
- Եթե այդ ձեռքի մի մատն էլ ես եմ, կռիվ չեմ գնա:
- Ում էլ սպանեմ՝ նա էլ ինձ նման ապրել է ուզում:
- Ինձ պես հաճույք է ստանում գինուց,
Ինձ պես ցավ կզգա, երբ թոքերի մեջ դանակս խրվի:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Դավաճանության ձայներ եմ լսում: Ոչ մի քնքշություն:
Այսպես, ուրեմն, շուտով՝ պատերազմ:
Ոչ ինչք ու ոչ հող, զենք է հարկավոր,
Եվ մենք կունենանք այդ զենքը շուտով:
Ու զենքով նորից քաղաքներ կառնենք,
Սրանց զենքով էլ ուրիշ քաղաքներ,
Մինչև չմնա ոչ մեկն աննվաճ:
Մենք այսքան հարուստ՝ ինչու չպիտի իշխենք բոլորին:

ՁԱՅՆ
- Առաջնորդ, շատ լավ, սուս-փուս հարձակվենք, ինչպես ասացիր,
Բայց եթե նրանք քնած չլինե՞ն…

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Ահա ես էլ ձեզ կանչել եմ այստեղ, որ մի բան խորհենք,
Մեր խելքը քիչ է, դիմենք իմաստուն օտարականին,

Նա շատ աշխարհներ, մարդիկ է տեսել, ճիշտ խորհուրդ կտա:
ԴԵՎ
- Ես ձեզ քառասուն անտես նետ կտամ և մեկ ճիշտ խորհուրդ,
Դուք այդ նետերով սպանեք նրանց առաջնորդներին
Եվ նրանց, ովքեր փոխարինողներ կարող են լինել,
Մնացածները՝ անգլուխ մարմին, կթպրտան լոկ:
Անտես նետերով մտեք նրանց մեջ,
Ոչ ոք չի տեսնի ինչպես, ում վրա նետ արձակեցիք:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Օ՜, մեր բարերար, բայց ո՞ւր են հիմա անտես նետերը,
Թե՞ քո ձեռքում են ու մենք չենք տեսնում:

ԴԵՎ
- Այստեղ, գետնի տակ:

Ցույց է տալիս Բանաստեղծի դստեր գերեզմանը:

Նրան թաղեցին ճիշտ այդ քառասուն նետերի վրա:

ՁԱՅՆԵՐ
- Քանդենք ու հանենք:

ՉԵՄՊԻՈՆ
- Ոչ ոք մոտ չգա, կպոկեմ հիմար գլուխն ուսերից,
Սուրբ է շիրիմն այս, պիղծ մարդիկ, հեռու:

ԴԵՎ

- Սակայն այդտեղ են անտես նետերը,
Որոնք թե մարդու ոտքին էլ կպչեն կամ մատի ծայրին,
Արյան հոսանքով կսուրան ուղիղ սիրտը զարկվածի:
Այս մարդկանց պետք են այդպիսի նետեր:

Չեմպիոնը մի բան է մտածում, որից դեմքը պայծառանում է:

ՉԵՄՊԻՈՆ
- Բայց թող մեկը մոտ չգա շիրմին: Ինքս կփորեմ:

Փորում է, զգուշությամբ վերցնում է դագաղը և դնում փոսի եզրին:
Ժպիտ կա դեմքին, կյանքն ասես լրիվ չի լքել նրան:

ԴԵՎ
- Փորիր, խորացիր, դեռ շատ կա մինչև նետերին հասնես,
Դարեր են անցել, ամեն դար այդտեղ իր շերտն է դրել,
Թաղել մի քաղաք այս հողերի տակ:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Մի շարունակիր, կանգ առ, զավակս,
Մի վատ բան է սիրտս գուշակում:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Թող փորի, ծերուկ, մեզ հարկավոր են անտես նետերը:

ՁԱՅՆԵՐ
- Մեզ պետք են դրանք, որ մեր թշնամուն հաղթենք հեշտությամբ:
Ի՞նչ դու ուզում ես, որ զոհեր շա՞տ տանք:

ԱՌԱՋՆՈՐԴ
- Ես այդ չեմ ուզում, ես ուզում եմ, որ չմեռնի ոչ ոք,
Մարդիկ, հասկացեք, սիրտս երբեք չի ծանրացել այսքան,
Հազիվ եմ կանգնում ես ոտքի վրա։

ՉԵՄՊԻՈՆ
- Քիչ էլ դիմացիր, մի քիչ էլ, հայր իմ,
Հետո քո սիրտը շատ կթեթևանա։

ԱՌԱՋՆՈՐԴ
- Թող իրենք փորեն, կա՛նգ առ, հերիք է,
Մի դարձիր, որդիս, այս վատթարագույն գործին մեղսակից։

ՉԵՄՊԻՈՆ
- Ներիր ինձ, հայր իմ, հրամայում է քաղաքն ինձ՝ փորիր,
Եվ այս դիակն է ինձ հրամայում,
Որին չեմ կարող չհնազանդվել։

Շարունակում է փորել։

ԴԵՎ
- Քիչ մնաց, շատ քիչ, քաղաքն իր քիթը հիմա ցույց կտա։
Սա հանճարների քաղաք էր հզոր,
Ուրիշի վրա չէին հարձակվում, որ զենքեր խլեն,
Այլ իրենք էին արարում զենքեր
Եվ իրար վրա հարձակվում իրենց հանճարի թափով,
Ինչպիսի զենքեր, մեկը մեկից բարդ և սարսափելի,
Վերջինը եղան անտես նետերը։

Չեմպիոնը փորել հասել է դրանց և հիմա նրա ձեռքին կա մի երկարավուն տուփ, որը ցույց է տալիս բոլորին։

Ահա ա՛յ այդտեղ, այդ կապարճի մեջ քառասուն հատ կա,
Բյուր հազարներից այդքանը մնաց դեռ չգործածված,
Հողի տակ դարեր սպասում էին, որ դուք գործածեք,
Մոտեցեք, վերցրեք։

Մի նետ էլ վերցնում է Չեմպիոնը։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Բյուր հազարներից այսքանը մնաց դեռ չգործածված,
Իսկ այն նետերը, որ գործածվեցին,
Քանի՜ սիրտ կերան, ի՜նչ հանճարների։

ԴԵՎ
- Հանճարեղ միտքը ելել հանճարեղ մի այլ մտքի դեմ,
Լոկ զենք էր երկնում խելահեղորեն։
Երկու խմբերի կռիվն սկսվեց թեթև բառերով,
Հետո շիկացած արճիճ լցրեցին այդ բառերի մեջ,
Որ դարձան նետեր ծանր սուրացող, բայց տեսանելի,
Դա կործանումի սկիզբն էր միայն, դեռ կործանում չէր,
Կործանում եղավ, երբ ծանրերի տեղ
Լույս աշխարհ եկան թեթև սուրացող անտես նետերը։
Եվ նրանք այդժամ մեկմեկու կերան հանճարեղորեն։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դու ստում ես, Դև, հանճարների մեջ կային այնպիսիք,
Որ ուզում էին հաշտ-խաղաղ ապրել
Եվ հանում էին իրենց ուժն արդար և արարչական

Քանդիչ ուժի դեմ անտես նետերի:
ԴԵՎ
- Կային այդպիսիք: Բայց երգեր էին ստեղծում քեզ պես
Կամ ձեր այդ խելառ Բուսաբանի պես հողը փորփրում,
Ինչ ծառն է անում, ցանկանում էին իրենք նույնն անել
Եվ առանց ծառի նույն բերքն ստանալ,
Հա, հա, հա, մեկ չէ՞ր, ծառը թե իրենք: Հանճարեղ գժեր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Դարձյալ ստում ես: Մարտնչում էին նրանք չարի դեմ:

ԴԵՎ
- Այո, իհարկե: Հայտնվում էին ձեզ պես նրանց մեջ,
Նրանց կերպն առած՝ գովերգում էին խաղաղ տքնանքը,
Անվերջ տրտնջում, որ իրենց երգը լսում են նրանք,
Բայց երգի խորհուրդն արհամարհում են,
Իրենց մշակած միրգը ուտում են,
Բայց իրենց վրա շներ բաց թողնում ապերախտորեն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ծաղրդ քեզ պահի: Ո՞վ ես դու, ի՞նչ ես, միայն մի ոչինչ,
Քանզի դու գիտես լոկ ոչնչացնել,
Դև, դու ծանոթ չես արարիչ ոգուն,
Նրան չես հաղթի, թեկուզ կործանես մեր այս քաղաքն էլ,
Քանզի ում ձեռքով նրան կործանես,
Նա շատ-շատ քեզ պես մեկն է լինելու,
Դու կաս նրա մեջ, միայն նրա մեջ կամ նրա եղբոր,
Իսկ արարչագործ ոգին անպարտ է, միշտ թռիչքի մեջ,
Միշտ վերածնվող՝ մոխիրներից իսկ,
Միշտ վերաշինող:

Դևը քրքջում է։

ՁԱՅՆԵՐ
- Նախկին առաջնորդն իր շունչը փչեց։
- Այս մեկն էլ ընկավ։
- Վա՛հ, սիրտս, մեռա…
- Փախեք, գործում են անտես նետերը։

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Վա՛խ, ոտքս, ինձ էլ խոցեց նետն անտես։
ԴԵՎ
- Ողջ մնացածներ, հաշվեցեք, արդեն քանի՞ մարդ չկա։

Հաշվում են մինչև երեսունութ մարդ։

Երեսունութ մարդ։ Երկու նետ պակաս։
Նշանակում է, որ արձակվել են բոլոր նետերը,
Բանաստեղծին է խոցել մի նետը։ Երեսունինը։
Վերջինը ահա իմ ծոցի մեջ է, ինձ չի վնասել։

Ցույց է տալիս Չեմպիոնին։

Սա խփեց, սակայն չգիտեր խեղճը,
Որ հագել էի ես հատուկ զրահ,
Ուզում էր ուղիղ սրտիս մեջ խփել,
Ես այդ գիտեի։ Բայց նա չգիտեր,
Որ անպաշտպան են աչքերս միայն։

ԲԱՆԱՍՏԵՂԾ

- Մեռնում եմ, այս ցավն անտանելի է:
ԴԵՎ
- Բախտդ բերել է: Քառասուն նետից մի նետն էր կորցրել
Արյան հետ դեպի սիրտը մղվելու իր հատկությունը
Եվ հենց այդ մեկը քեզ բաժին ընկավ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ողջ մնացածներ, տեսնո՞ւմ եք Դևը ինչ ահավոր է:

ԴԵՎ
- Ողջ մնացածներ, գերեզման դրեք ձեր մեռելներին:

ՉԵՄՊԻՈՆ
- Սակայն ոչ այստեղ, հրապարակում,
Այստեղ թաղում են արժանիներին:

Քարշ են տալիս դիակները, տանում թաղելու:

Հայր իմ, դու մեռար հերոսի նման,
Դավադիր նետը այն բանի համար խոցեց քեզ հիմա,
Որ դու լքեցիր բանակը նրանց
Ու հերոսաբար մեզ վերադարձար:
Հարկ է, որ թաղեմ քեզ նրա կողքին, հրապարակում,
Գոնե հողի տակ դարձեք դուք իրար հարս ու սկեսրայր:

/Մթնեցում/

ՀՈՎԻՎ
- Մարդիկ, հե՛յ, մարդիկ, բոլորդ եկեք,

Նոր լուր եմ բերել, եկեք լսելու,
Եկեք, ով ունի դեղնափայլ աչքեր
Եվ ով աչքերի՝ աստծուց տրված զույնն է պահպանել,
Դուք էլ, անկուշտներ, դադարեցրեք հարվածները ձեր,
Թողեք թմբուկը քիչ հանգստանա,
Եվ հանգստանան մեր ականջները:
Եկեք, հե՛յ, եկեք, կարևոր լուր: Շուտ եկեք, հե՛յ շուտ:

Գալիս են բոլոր կողմերից:

ՁԱՅՆԵՐ
- Ի՞նչ է պատահել:
- Երկրորդ թմբո՞ւկն է մեզ նվեր բերվում:

ՀՈՎԻՎ
- Բացվել է, մարդիկ, կենաց ծաղիկն է այս անգամ բացվել
Գոռ հրաբուխի խառնարանի մոտ,
Կես ժամն անցել է, մնացել է տասնինն ու կեսը,
Շտապենք, փախչենք, այդքան ժամ հետո հեռու կլինենք,
Ոչ հրաբուխի նետած քարերը մեզ կջախջախեն,
Ոչ լավան կայրի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Շուտ, մարդիկ, փախչենք,
Ձեզ հետ վերցրեք ձեր ոսկիները,
Որ այս անիծյալ քաղաքն այլևս չվերադառնանք:
Ինքներդ տեսաք, քաղաք է եղել այստեղ շատ առաջ,
Բայց կործանվել է: Անիծյալ տեղ է, մենք էլ կկորչենք:

ՁԱՅՆԵՐ

- Փախչենք, հեռանանք:
- Մնալը մահ է, գնալն էլ ախր բանի նման չէ,
Ո՞վ առատորեն մեզ ոսկի կտա հեռու տեղերում:
- Ոսկի՞ն, թե կյանքդ: Քայլիր, շուտ քայլիր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Գթասիրտ աստված, կանչում եմ լսիր,
Երբ մենք կլինենք յոթ սարից այն կողմ,
Դու այնպես արա, որ հրաբուխի քարերը հսկա
Խփեն թմբուկին ու պայթեցնեն,
Պրծնենք վերջապես այս պատուհասից:

ԴԵՎ
- Հազար քարեր էլ կարկուտի նման տեղան թմբուկիս,
Հազար կայծակ էլ բախվեն իր կաշվին,
Էլի չի պայթի, ձայն իսկ չի հանի նա ամենևին:
Կպայթի միայն մարդու հարվածից, թե ուժգին լինի:
Հանգիստ գնացեք ու վերադարձեք,
Ես ու թմբուկս կսպասենք այստեղ ձեր վերադարձին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Մահից փախչում եք, նորից դեպի մահ չվերադառնաք,
Ես սիրում եմ ձեզ, բնական աչքեր ունեցողներիդ,
Ձեզ էլ եմ սիրում, դեղնաչյա մարդիկ, Դևից խաբվածներ,
Ա՛խ, փրկեցեք ձեզ:

ՁԱՅՆԵՐ
- Մենք էլի կգանք:
- Չենք վերադառնա, անիծյալ տեղ է:
- Մեր ոսկիները…

- Հետներս վերցնենք, լավան չծածկի մեր ոսկիները:
- Շո՛ւտ, շո՛ւտ, ուշացանք:
Արդեն կես ժամ է, տեղից չենք շարժվում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Շո՛ւտ, իմ ետևից:

ՁԱՅՆ
- Դու կաղ ես, եթե քո ոտքով գնանք:
Մինչևիսկ կրիան մեզանից կանցնի, ուր մնաց լավան:

Բոլորը գնում են: Դևը թմբուկի մոտ չէ: Հայտնվում է Չեմպիոնը:

ՉԵՄՊԻՈՆ
- Հեռու են արդեն: Չէ, գուցե այնքան հեռու չեն հիմա,
Թմբուկի ձայնը նրանց կհասնի,
Եթե չմեռնեն՝ կցնցվեն վախից կամ կխլանան,
Քիչ էլ սպասեմ:

Նստում է մի քարի:

Ինչպես եմ սիրում ես այս շենքերը, արևը, ծառը,
Այս հողաթումբը, ուր լուռ ննջում են երկու ազնիվ սիրտ,
Ա՜խ, երանի թե ինձ բարի մի ձեռք թաղեր նրանց հետ:

Գլուխը ափերի մեջ առած մնում է մի պահ, հետո վեր կենում:

Մահաբեր թմբուկ, հարվածեմ ես քեզ իմ ամբողջ ուժով,
Քո ամբողջ ուժով ինձ կհարվածես դու էլ անխնա:

Դե ոչնչացնենք մենք մեկս մեկիս:
Ուզում է հարվածել, բայց Դևը բռնում է ձեռքը:

ԴԵՎ
- Այս մեծ թմբուկը չափազանց շատ է մի մարդու համար,
Սպասիր, ձերոնք թող վերադառնան:
Դու շատ համառ ես, խելագարի պես սևեռուն մտքով,
Մեկ ինձ վրա ես հարձակվել փորձում, մեկ իմ թմբուկի,
Մեռնե՞լ ես ուզում, դե ինչ, կմեռնես,
Չշարժվես տեղից, հիմա ուր որ է պայթյուն կլսես,
Այդ հրաբուխն է իր զսպած ուժը բաց արձակելու,
Դու կայրվես նրա հոսուն հրերում:
Դողում ես վախից, քիչ առաջ այնպես համարձակ էիր,
Քեզ ի՞նչ պատահեց, նույն մահն է դարձյալ, ինչո՞ւ ես դողում:

ՉԵՄՊԻՈՆ
- Անիմաստ մահ է: Այդ երբեք, խեղճ Դև, դու չես հասկանա:

ԴԵՎ
- Հա, հա, հա, ես՝ խեղճ, իսկ սա հզոր է:

Ժայթքում է հրաբուխը:

Հիմա կմեռնես, դու արդեն շատ ես ձանձրացնում ինձ:
Բայց լավան կարծես չի գալիս այս կողմ, քաղաքի վրա:

ՉԵՄՊԻՈՆ
- Քարերն են գալիս: Աստվա՜ծ, փրկի՜ր ինձ:

Մի քար դիպչում է Չեմպիոնին: Նա ընկնում է մեռած:

ԴԵՎ
- Էլ չի պատճառում այս խաղն ինձ հաճույք: Քիչ էլ սպասեմ,
Հասունացել է ուռուցքը արդեն և պիտի պայթի:

Վերադառնում են քաղաքից հեռացածները:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Ես ոչ մի անգամ պահակ չեմ եղել, հիմա կլինեմ:

ՁԱՅՆԵՐ
- Ողջ է թմբուկը, մեր ոսկին էլի առատ կլինի:
Ողջ է քաղաքը ու մենք էլ ողջ ենք:

ՀՈՎԻՎ
- Բայց չկա հիմա կենաց ծաղիկը և չկա հոտս,
Թաղեց հրաբուխն իր լավայի տակ,
Էլ ինչո՞ւ գնամ սարերս նորից, ի՞նչ անեմ այնտեղ,
Այստեղ կմնամ մինչև որ կենաց նոր ծաղիկ աճի,
Մինչև ոչխարի նոր հոտ ունենամ արածացնելու:

ՁԱՅՆԵՐ
- Չեմպիոնն էլ չկա, մեռած է ահա:
- Բայց ինչո՞ւ մեզ հետ չէր փախել նա էլ:
- Ո՞նց չեք հասկանում. կամեցել է նա
Ոսկի աշխատել մեզանից թաքուն:
- Ոչ, կամեցել է թմբուկին խփել, երբ մարդ չի լինի,
Ու պայթեցնել: Բայց չի հասցրել բարեբախտաբար:
- Ա՛յ քեզ անկամորթ, մեր հարստությունն իր աչքն էր ծակում:
- Ա՛յ քեզ անամոթ, քարշ տալ մարմինը, գցել շներին:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Սպասեք, քաջեր, մենք դրա համար ժամանակ չունենք,
Ախր քառասուն ժամով ուշացավ
Մեր հարձակումը մեզ ամենամոտ քաղաքի վրա,
Քառասուն ժամ առաջ մեր ուզած զենքերը կունենայինք մենք,
Քառասուն ժամով նրանց տերերը երկար ապրեցին:
Հիմա, որ անտես նետերը չկան,
Մենք ստիպված ենք սուս-փուս հարձակվել, գիշերվա կեսին,
Ինչպես նախօրոք որոշել էինք:
Ընդհանուր գիծն է դա մեր հարձակման մեծ ծրագրի,
Իսկ հիմա եկեք, իմաստուն քաջեր,
Քննարկենք բոլոր մանրամասները:

Մինչ նրանք քննարկում են՝ Միաչքանին անհանգիստ առաջ ու հետ է քայլում:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Յուրաքանչյուրը իր ծրագիրն է մշակում կյանքում,
Ծրագրերն էլ բախվում են իրար, ինչպես որ մարդիկ:
Իրագործվել են կյանքում իմ բոլոր ծրագրերը,
Շատ եմ վախենում այս մեկը հանկարծ գլխակեր լինի:
Բայց չէ, ամպրոպի ահեղ որոտն իսկ ես չլսեցի,
Երկու ականջս էլ ամուր, ամուր էր բամբակը փակել,
Իսկ վրան սեղմած կաշին զրահ էր գոռ ամպրոպի դեմ:
Թմբուկի ձայնը հազիվ ինձ հասնի այդ ամպրոպի չափ,
Նման ամպրոպներ ես շատ եմ լսել ու դիմացել եմ:
Թող որ մի քիչ էլ զորավոր լինի, քան թե ամպրոպը,
Ես կդիմանամ, չէ՞ որ այդ Դևի նմանակն եմ ես,
Նա ինձ է ընտրել անել այս բանը.

Ոչ այն կնոջը, ոչ Բուսաբանին չընտրեց, այդ պարզ է,
Ինձ ընտրեց, չէ՞ որ ես իր նման եմ,
Անշուշտ կուզենար, որ իր նմանը ապրեր ու տեսներ,
Ինչպես են մեռնում այս հիմարները,
Բոլորը, բացի կաղ Բանաստեղծից:
Իմ անտես նետը զուր արձակեցի աջ ոտքին նրա,
Որ մահվան պահը երկարեր մինչև սրտին հասնելը,
Երկարեր նաև հրճվանքիս պահը,
Իր բախտը բերեց՝ նետն ուժասպառ էր,
Եվ նորից ահա բախտը բերում է, այստեղ չէ հիմա,
Թող շնորհակալ լինի կաղ ոտքին:
Դեռ մշակում են այնտեղ հարձակման ինչ-որ ծրագիր,
Պիտի կոտորեն մի ողջ քաղաքի բնակիչների,
Բայց եթե իրենք կոտորվեն հիմա, նրանք չեն մեռնի,
Բյուր հազարի դեմ ուրիշ բյուր հազար:
Մեկ չէ՞, թե ո՞րը, սրա՞նք, թե՞ նրանք:
Թե արդար դատենք՝ ես հանցագործ չեմ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
- Հե՛յ, Միաչքանի, հիմա թող պահակ ուրիշը կանգնի,
Դու արի այստեղ, մեզ պետք է խելքդ սատանայական:

ՄԻԱՉՔԱՆԻ
- Խորհել չեմ կարող այդ ժխորի մեջ, այստեղ եմ խորհում,
Սպասեք քիչ էլ, կարծիքս կասեմ:
Թու, ընդհատեցին իմ մտածմունքը: Ի՞նչ էի խորհում:
Հա, որ ես ոճիր չեմ գործում բնավ,
Այդ ճիշտ է, իրոք ես ոճրագործ չեմ
Եվ դեռ ավելին՝ բարիք եմ գործում.
Մեկ է՝ վաղ թե ուշ կպայթեցնի մեկը թմբուկը,

Սրանք կմեռնեն, վճիռն է Դևի:
Ես սրանց մահով կփրկեմ նրանց:
Եթե մի դեպքում ես ոճրագործ չեմ,
Ապա մյուս դեպքում ես բարերար եմ:
Ու նրանք պիտի ինձ երկրպագեն:
Այս մեռյալներից կստանամ ոսկի,
Իսկ ապրողներից՝ և ոսկի, և փառք:

Ականջները արագորեն խցկում է բամբակով, վրան քաշում կաշի ու ուժգնորեն խփում է թմբուկին: Ահեղ դղրդյունով պայթում է թմբուկը: Բոլորը մեռնում են, նրանց հետ և Միաչքանին: Դևը նորոգում է թմբուկը՝ պատռված կտորներն իրար միացնելով: Վերցնում է և քրքջալով գնում: Գալիս է Բանաստեղծը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Օ՜, խեղճ դիակներ, ես որի՞դ թաղեմ, դուք այնքան շատ եք:
Այն նետը ինչո՞ւ էր իր ուժը կորցրել:
Ես չէի տեսնի այս արհավիրքը:
Ոչինչ չի շարժվում, նույնիսկ շներ ու կատուներ չկան,
Խեղճ կենդանիներ, ձե՞ր մեղքը ինչ էր, որ էլ չեք շարժվում:
Ինչ զարհուրելի պայթյուն է եղել, պատերն են ճաքել,
Սիրտ, դու էլ ճաքիր, բավ չէ՞ դիմանաս, իմ ծերացած սիրտ,
Այնքան ապրեցիր, որ մահը կյանքից գերադասում ես:

Լսվում է խելագարի ոռնոցը, ապա և երևում է խելագարը:

Անշուշտ գալիս է գայլերի մոտից,
Հեռու է եղել, չի մեռել նա էլ:
Ես էլ կուզեի իր նման ոռնալ՝ ոչինչ չզգալով,

Քան տեսնել այսպես դեղին գիշերը քաղաքիս իջած:
Գնաց դեղին Դևն ուրիշ քաղաքներ, թմբուկը իր տարավ,
Գնամ իր հետքով, բայց ինչպե՞ս գնամ իմ այս կաղ ոտքով,
Հե՛յ, հե՛յ, մարդ չկա՞, որ այս աղետից ազատված լինի,
Ձայն տվեք, ո՞վ կա:

ՄԻ ՄԱՐԴ
- Ե՛ս, ո՛վ Բանաստեղծ, ես լսում եմ քեզ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Ո՞վ ես, չեմ տեսել քեզ ամենևին:
Հագուստդ այլ է, դու մերոնցից չես:
Դու Դևն ես, Դևը, մարդկային մի նոր կերպարանք առած:
Էլ ի՞նչ ես ուզում, բոլորն են մեռել, բոլորը, անխիղճ,
Եկել ես գուցե ուտելու նրանց դիակներն հիմա…
Բայց պիտի գայիր բորենու տեսքով:

ՄԱՐԴԸ
- Ես մարդ եմ, Դև չեմ, դու ինձ կանչեցիր, ու ես էլ եկա,
Ոչ թե հեքիաթից, այլ կյանքից եկա, ուրիշ մի դարից,
Դու մի՛ պատմիր ինձ այն դեղին Դևից, նրա թմբուկից,
Ես ողջը գիտեմ սկզբից մինչև վերջ, բոլորը տեսա:

ԲԱՆԱՍՏԵՂԾ
- Տեսա՞ր, դե գնա ասա բոլորին, որ արթուն լինեն,
Այն դեղին Դևը թմբուկն իր տարավ ուրիշ քաղաքներ,
Ասա, քանի դեռ աղետն հեռու է՝ մեզ փոքր է թվում,
Կատարվելիս է նա մեզ երևում իր ողջ մեծությամբ:

ՄԱՐԴ

- Լսում եմ, իմ խե՛ղճ, իմ բարի՛, բարի՛, հազարերորդ պապ:

ԱՐՁԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՆԴԱՊԵՏԻ ՓԵՍԱՆ
(Վիպակ)

ԵՐԱԶ

Կանգնել եմ տրամվայի ոտնակին, ծխում եմ: Լեփ-լեցուն է տրամվայը, և ես իրավունք ունեմ ներս չգնալու, այսպես լավ է, ծուխը դուրս եմ փչում: Մեկ-երկու ակնթարթ էլ, և տրամվայը կշարժվի, քամին իմ բերանից կխլի ծուխը և պատառ-պատառ անելով՝ կցրի օդի մեջ: Ինչ լավ բան է ծխելը: Բայց ես ուղիղ երկու տարի չորս օր է, ինչ չէի ծխում, ինչո՞ւ սկսեցի: Ինչքան չարչարվեցի՝ մինչև վերջ տվեցի և հիմա այսպես…

- Հեյ, ո՞վ է ծխում այդտեղ: - Ձայնը տրամվայի ներսից է: Ուրեմն իմ ծուխը ներս է գնում, պետք է մի աստիճան էլ ներքև իջնել: Բայց ամենացածր աստիճանի վրա էլ մարդիկ կան, պարզապես կախվել են տրամվայից:

- Երիտասարդ, ինչո՞ւ եք այդպես կախվել: Իջեք հաջորդով կգաք: - Ես այդ ասում եմ, որպեսզի ես գրավեմ նրա տեղը և ազատ ծխեմ: Ախր ամբողջ երկու տարի չորս օր է չեմ ծխել:

Երիտասարդը ցատկում է ներքև և ընկնում ռելսի վրա: Հենց այդ պահին էլ շարժվում է տրամվայը: Սրած դանակի պես փայլող նրա անիվի հետ գլորվում է երիտասարդը: Տրամվայը դանդաղ է շարժվում և նա դեռ հասցնում է գլորվել: Բայց ուր որ է երկաթե հսկան կարագացնի ընթացքը և… Պետք է ցած նետվել, փրկել նրան: Խեղճ տղա, խեղճ տղա: Ես

նրան ասացի, որ ցած իջնի և ես էլ պիտի փրկեմ: Իսկ եթե հանկարծ սրած դանակի պես փայլող անիվն իմ մարմնի վրայով էլ անցնի… ոչ, ոչ, վագոնավարը նկատել է և դրա համար է դանդաղ քշում, հիմա կսեղմի արգելակը: Բայց տրամվայն ասես պոկվում է տեղից, տղան էլ չի հասցնում նույն արագությամբ գլորվել: Աստված իմ, երկու մասի բաժանվեց: Ինչո՞ւ ճիչ չեմ լսում: Այս ո՞վ է ասում, թե տղային բան չեղավ: Հնարավո՞ր է արդյոք այդպիսի հրաշք:

Բայց ես ինչպե՞ս տեսա, որ տրամվայի անիվը փայլում է սրած դանակի պես: Չէ՞ որ ես տրամվայում եմ, թեկուզ ոտնակին: Ես չէի կարող տեսած լինել և այն, թե ինչպես է տղան իրեն գլորում առաջ: Երա՞զ էր: Այո, երազ էր, և ես արթնացել, սրբագրում եմ այն: Իհարկե, երազ էր, չէ՞ որ ես ահա անկողնում եմ և, փառք աստծո, ծխել եմ միայն երազում:

Հնչում է հեռախոսի զանգը: Դա արդեն ավելորդ ապացույց է, որ ես արթնացել եմ: Ո՞վ է զանգում: Սեդան կլինի: Իմ բնազդն այս անգամ էլ ինձ չխաբեց.

- Գիտե՞ս որտեղից եմ զանգում,- ասում է նա,- հապա գուշակիր:

Ես գուշակություններ անելու տրամադրություն չունեմ և լռում եմ: Նրա զվարթ տոնը խեղդվում է խոսափողի մեջ: Արդեն կոտրված սրտով նա ասում է, որ տանը հեռախոս են քաշել և առաջինն ինձ է զանգում:

- Շնորհավորում եմ, Սեդա:

Ես դա ասում եմ բռնազբոսիկ հրճվանքով: Սրանից հետո նա ավելի հաճախ և երկար կխոսի: Կնստի իր փափուկ բազկաթոռին, ոտքը կգցի ոտքի վրա ու կսկսի զրույցը: Բայց նա այս անգամ շատ կարճ է խոսում, գտնելով, որ ավելի հաճելի է մոտիկից երկար խոսել:

- Այո, արի, Սեդա,- համաձայնում եմ ես:

Թող գա, նրա շուրթերը կցրեն մռայլ երազիս տպավորությունը: Ուր որ է դուռը կբացի, ես կգրկեմ նրա մեջքը, «իմ բառբաբ» կշշնջամ, իսկ նա ինձ բարդի կանվանի: Նա այդ բառը կասի նեղսրտած ու ես կհասկանամ, որ շատ էլ գոհ չէ իմ հաճոյախոսությունից: Նա տանջվում է, որ գիրանում է: Հետո կպատմի դեսից-դենից այնքան, որ ես կնախանձեմ:

- Բարև, Գարեգին:

Բայց ես չեմ գրկում նրա մեջքը, հետևաբար չեմ ասում «բառբաբ»: Նա իրանը թեքում է իմ կողմը: Ես գիտեմ, որ եթե չգրկեմ նրան, նա այնպես կվիրավորվի, որ մի ամբողջ օր ինձ չի հաջողվի խոսեցնել նրան: Մի՞թե ես չեմ կարող լինել ուրիշ մարդ: Երազիս մեջ չօգնեցի իմ պատճառով տրամվայի տակ ընկած տղային: Կյանքո՞ւմ էլ չէի օգնի: Մի՞թե իմ մեջ ոչ մի լավ բան չի մնացել:

Բայց, միևնույն է, ես չեմ գրկում նրան: Կարողանում եմ ինձ ստիպել միայն, որ բռնեմ նրա թևքից և նստեցնեմ թախտին: Ձեռքս դեռ բաց չեմ թողնում՝ մեղմելու համար այն սառնությունը, որ նա պետք է զգացած լիներ և՛ հեռախոսով խոսելիս, և՛ հիմա: Նա ինքն է թեթևակի հրում ձեռքս և շուրթերիս նայում, երևի շրթներկի հետքեր է փնտրում, հետո աչքերիս մեջ է սուզվում, այնպես է զննում, կարծես նրանց խորքում նկարված է ինչ-որ կնոջ պատկեր և ինքը պիտի տեսնի:

- Երեկ երեկոյան են հեռախոսը միացրել: Քեզ շատ զանգահարեցի՝ տանը չէիր: Մինչև գիշերվա մեկը զանգահարեցի:

- Ընկերոջս մոտ էի, Սեդա:

Նա չի հավատում: Ես հասկանում եմ, թե ինչու ինձ հետ հեռախոսով կարճ խոսեց: Եթե երկար խոսեր, ապա

անհարմար կզգար ինձ մոտ գալ, եկավ, որ շուրթերիս փնտրի շրթներկի հետքեր, աչքերիս մեջ՝ ուրիշ աչքեր: Ինձ ստուգելու համար էր, որ իրանն առաջ թեքեց: Իսկ ես չգրկեցի: Պարզ է, մտածում է, որ իմ թևերի մեջ ուրիշ մարմին է դեռ գալարվում: Ինչպես նրան համոզեմ, որ, այո, մի մարմին գալարվում է, բայց ոչ թևերիս մեջ, այլ աչքերիս առջև, երազումս դանակի պես փայլող անիվի տակ:

- Որտե՞ղ էիր գիշերը:

Նա ոտքը գցում է ոտքի վրա: Սրունքները լույս են արձակում, և ես տեսնում եմ այդ լույսը: Նա նկատում է և ոտքն իջեցնում: Ուրեմն շատ է բարկացած ինձ վրա:

- Ազնիվ խոսք, ընկերոջս մոտ էի, կուզե՞ս զանգահարեմ:

Հետաքրքիր է կառուցված աշխարհը: Մինչ ես մտածում էի, որ Սեդան կցրի մռայլ երազիս տպավորությունը, նա արդեն սկսում է նեղել ուրիշ կողմից: Նա էլ իր տեսած մռայլ երազն ունի, և մենք չենք հասկանում իրար:

- Գարեգին, լավ բան է, չէ՞, հեռախոս ունենալը:

«Ինչ լավ կլինի, եթե թույլ տաս գիշերվա ժամը մեկից հետո էլ զանգահարել քեզ, իմանալ տա՞նն ես, թե՞ ուրիշ տեղ»,- այդ էր մտածում նա, բայց չհամարձակվեց այդպես ասել, այլ ուզեց, որ ես ասեմ. «Այո, լավ բան է հեռախոսը, որ ժամին ուզում ես՝ զանգ տուր ինձ»: Բայց ես այդ չասացի:

- Այնքան էլ լավ բան չէ,- շեշտեցի,- գիշերվա կեսին մի պատահական զանգ վեր է թռցնում անուշ քնից. «Ալո, Սիրուշին եմ ուզում»: Դե եկ ու բացատրիր նրան, որ մենակ ես ապրում և ոչ մի Սիրուշ իր կողերը չի կպցրել քոնին:

Ինձ թվում էր, թե Սեդան վեր կկենա ու կգնա:

Բայց նա այնպիսի կրքոտությամբ գրկեց ինձ, որ ես մտածեցի, թե արջի ուժ ունի: Մենք թավալվեցինք իմ դեռևս չսառած անկողնու վրա: Ճռճռացին զսպանակները, կարծես

գանգատվելով, որ չեն դիմանում ծանրությանը: Շատ ենք դիմացել, ասում են, այս անգամ կկտրվենք և դու նորը գնելու համար ամենաքիչը երեք ակնարկ պիտի գրես: Այդպես ճռճռում էին նաև տրամվայի անիվները… Ա՛խ, այն երիտասարդը…

Սեդայի շուրթերը երկար-երկար վառվում են իմ շուրթերի վրա: Երբեք նա այսքան կրակոտ չի եղել:

- Ե՞ս եմ ավելի տաք, թե՞ Սիրուշը:

Երկու ճանապարհ ուներ Սեդան. հեռանալ՝ արհամարհելով ինձ, կամ մնալ և ապացուցել, որ ինքն ավելի է կին, քան այդ երևակայական Սիրուշը, ինքն ավելի է լավ, ավելի տաք… Իսկ ես, ո՞վ ասաց, թե ես անպիտան մարդ եմ: Ամուր սեղմում եմ նրան կրծքիս, չէ՞ որ նա դրանից հաճույք է զգում: Ես սիրում եմ քեզ, Սեդա, երբեք չեմ լքի քեզ, երբեք…

Միս ու ոսկոր, միս ու ոսկոր… Երբ քնքույշ եմ շոշափում նրա թևերի տակ՝ միս է, որից ճարպոտ քրտինք է ծորում շոգ ժամանակ, սովորական միս, որ եթե քերծես՝ արյուն կգա, հարկ կլինի յոդ քսել և կապել: Իսկ երբ մի քիչ ամուր եմ շոշափում՝ ողերն են, մեկ, երկու, երեք, չորս…

Ես հասկանում եմ, որ չեմ սիրում Սեդային:

ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՍԵԴԱՆ

Տարիների մշուշի միջից նայում են մի ուրիշ Սեդայի աչքեր: Անմարմին, երազային, անուշ: Այդպես նա մի անգամ էլ է հառնել իմ դեմ, երբ ես հիասթափվել եմ մի ուրիշ կնոջից: Անդարձ է եղել մեր բաժանումն ու գիտեմ, սա էլ անդարձ կլինի: Ուրիշները, երբ հիասթափվում են, իրենց երազածը փնտրում են գալիքում, իսկ ես հայացքս դարձնում եմ ետ՝ անմարմին, երազային, անուշ Սեդային, որի մազերի ծփանքն

եմ տեսնում քսան տարիների հեռվից և տխուր աչքերը: Երկու Սեդա, մեկը կենդանի իրականություն, մյուսը՝ իդեալ, որ մի քանի օրից կկորչի անցյալի մշուշի մեջ: Գուցե կհանդիպեմ մի ուրիշ կնոջ և սկզբում ինձ կթվա, թե վերջապես գտել եմ նրան, բայց հետո, հետո…

Ախր ես չեմ ուզում այսպես լինի, ես այն եմ անում, ինչ բոլոր ապականված մարդիկ: Շատերի մասին եմ ֆելիետոն գրել, հիմա ինքս եմ դարձել ֆելիետոնի հերոս: Մի՞թե այսքան դժվար է կարգին մարդ լինել: Իսկ ի՞նչ բան է կարգին մարդը: Ա՞յն է, որ երկրպագեմ այն հուշ Սեդային, երազեմ, երազեմ, երազեմ:

- Քաղսովետին կդիմենք, որ առանձին-առանձին սենյակների փոխարեն մեզ երկու սենյականոց բնակարան տան,- իրականություն,- Սեդան է, երազո՞ւմ է, թե՞ ցնորվել է: Չէ, ինչո՞ւ է ցնորվել. ամեն մի կարգին մարդ, երբ սիրում է, ամուսնանալ է ուզում: Ես կարգին մարդ չեմ: Ես ցածր եմ ամեն ինչից, նույնիսկ ցինիկից, որ կարողանում է իր զգացածն ասել. չի սիրում և ասում է՝ ուրիշ անկողին փնտրիր: Ես չեմ սիրում և նրան ամուր սեղմել եմ կրծքիս: Մի ցինիկի չափ էլ չկամ: Մազերս ընկել են նրա ճակատին: Իսկ այն ժամանակ ես մազեր չունեի, մեր գնդի վարսավիրը խուզել էր: Քսան տարի՝ քսան գարուն, քսան ամառ, քսան աշուն, քսան ձմեռ…

Ութսուն անգամ փոխվել է եղանակը, մա՞րդն ինչու չպիտի փոխվեր: Ես շիկնում էի սիրո ամենաթեթև ակնարկից, իսկ հիմա այս կնոջ կողքին պառկած ինչեր եմ մտածում: Բայց և այնպես, նախկին ամոթխածությունից ինչ-որ բան մնացել է, որ ես չեմ կարողանում նրան ուղարկել ուրիշ անկողին փնտրելու: Այնուհանդերձ այսպես շարունակել չի կարելի: Ինչո՞ւ, ինչո՞ւ աշխարհում քսան տարի առաջ եղել է այն մյուս Սեդան, գուցե ես կհաշտվեի այս վիճակի հետ…

***

Այն ուրիշ Սեդան ընկերուհու հետ իջնում է արահետով: Երկու արահետ են, մյուսով ես եմ քայլում: Արահետները մերթ միանում են, մերթ բաժանվում՝ նորից միանալու համար: Այդպես են նաև անհաշտ սիրահարները, մտածում եմ ես, թեև երբեք չեմ եղել անհաշտ սիրահար: Ավելի ճիշտ՝ ընդհանրապես սիրահարված չեմ եղել:

Քայլում եմ իմ արահետով՝ իմ մեջ ստեղծելով երևակայական պատկերն այն զնդապետի, որի մասին ակնարկ պիտի գրեմ: Քամին ուռեցնում է զիվորական բլուզս, ահա ուզում է ինձ թռցնել, բայց ուժը չի պատում: Ես խորհում եմ պարաշյուտների մասին, որ մերոնք հաճախ իջեցնում են գերմանացիների թիկունքում:

Հրանոթի որոտ եմ լսում: Ուրեմն խրամատներն այնքան էլ հեռու չեն: Այն գունդը, որի հրամանատարն է իմ չգրված ակնարկի հերոսը, պետք է որ դիմացի անտառում լինի: Իմ արահետն արդեն սկսում է խճճվել ծառերի մեջ:

- Ես կսիրեի այս վրացուն,- ականջիս է հասնում կանացի մի ձայն:

- Ես՝ չէ:

Գլուխս վեր եմ բարձրացնում և նոր եմ տեսնում երկու աղջիկներին, որ քայլում են կողքի արահետով: Ուշ է, այլևս չես ջոկի, թե ո՞րն ասաց կսիրի, որը՝ չէ: Բայց լավ է, որ ինձ վրացու տեղ են դրել, ուրեմն դեռ կխոսեն իմ մասին: Սակայն աղջիկները փոխում են թեման, ես միայն միջանկյալ նախադասություն էի:

- Աղջիկներ, պատիվ ունեմ ումի՞ց սիրվելու և ումի՞ց մերժվելու: - Ձայն եմ տալիս հայերեն և նրանք իրար հրմշտելով փախչում են՝ ականջներիս մեջ թողնելով մի զրնգուն ծիծաղ: Վատ չի լինի, եթե իմ ակնարկն այստեղից էլ սկսեմ: Հետո կնկարագրեմ գնդապետին. «Նրա սև աչքերի մեջ սև թախիծն է ծվարել»: Իսկ եթե նրա աչքերը սև չե՞ն: Հայ է, սև կլինեն:

Բայց ահա մի զույգ կապույտ աչքեր են նայում ինձ: Սուր, խելոք աչքեր են, որոնք առաջին հայացքից կարող են դաժան թվալ: Թախծի ոչ մի նշույլ: Նա չի պատմում իր կյանքը, լռում է իր մարտական սխրագործությունների մասին:

- Ախր, ընկեր գնդապետ, չգիտեք մեր խմբագրին: Եթե վաղվա համարում չլինի ձեր մասին ակնարկը…

- Ասացեք նրան, որ գնդապետը տեղին է համարում ոչ թե իրեն, այլ մարտիկներին փառաբանելը: Ամեն մի լավ մշակված պլան ոչինչ է, եթե լավ չեն իրագործում: Ձեր խմբագիրը հենց այդ չի հասկանում և թերթը լցրել է գեներալների ու գնդապետների գովքով:

Կչկչալով գնդապետին է մոտենում այն երկու աղջիկներից մեկը: Երևի դեռևս քիչ առաջ պատահածի տպավորության տակ է:

- Սեդա, ինչպե՞ս է մեր անտառը, հավանեցի՞ր: Հա, մոռացա հարցնել՝ մի շաբաթ առաջ փող էի ուղարկել՝ ստացե՞լ ես: Ինչպե՞ս են դասերդ կոնսերվատորիայում:

Ի՞նչ անհամբերն է, հարցը տալիս է՝ պատասխանին չի սպասում: Նրա համար կարևորն իր հարցերն են: Սեդան մի պատասխանից մյուսին է թռչում, խառնում իրար: Երևի կարծում է, թե հիմարություն է դուրս տալիս և ինձ է նայում՝ իմանալու, թե ի՞նչ տպավորություն է թողնում: Նայում է և շիկնում: Ճանաչեց ուրեմն: Սա ո՞րն է՝ ինձ մերժո՞ղը, թե՞ սիրել

կարողացողը: Շիկնեց, դա ինչ-որ բան նշանակում է: Եթե Երևանում լինեինք՝ նա ինձ վրացու տեղ չէր դնի: Ուրեմն չէր էլ խոստովանի, որ կարող է սիրել ինձ: Լավիկն է: Ի՜նչ սև աչքեր: Թող սև թախիծը երբեք չծվարի նրանց մեջ: Այնքան ճկուն է մեջքը, որ կարող է օձաձև գալարել: Սանրվածքը շողարձակվում է այնպես, որ եթե արևն աղջիկ դառնա, հենց այսպիսի սանրվածք պիտի ունենա և այսպիսի դիմագծեր: Նրա կողքին սառը լուսին է գնդապետը: Իսկ ե՞ս, ի՞նչ եմ ես նրա կողքին… Բայց ինչո՞ւ եմ այդ հարցը տալիս, ի՞նչ պիտի լինեմ, ինչո՞ւ պիտի լինեմ, նա իր համար, ես՝ իմ: Բայց տես, ի՜նչ քնքույշ է նայում իմ կողմը. «Ես կսիրեի այս վրացուն»: Իսկական սերն այն է, երբ սիրում են առաջին հայացքից կամ զգում են, որ կսիրեն: Իսկ երբ մտերմությունն է ինչ-որ կետում վերածվում սիրո… Դե դա սեր չէ, այլ մտերմության վարձատրություն: Սեդան ինքն ասաց, որ կարող է սիրել ինձ: Ես էլ կարող եմ նրան սիրել: Գուցե արդեն սիրում եմ: Չէ, պարզապես հիմար բաներ եմ մտածում: Հետո ի՞նչ, որ նա ասաց, թե կսիրի այս վրացուն՝ ինձ, քի՞չ բաներ են ասվում աշխարհում և մոռացվում: Ես նրան չեմ սիրում, պարզապես եկել եմ այստեղ ակնարկ գրելու: Էհ, գնդապետը պատրաստ է այս աղջնակի հետ ժամերով չաչանակություն անել, իսկ կարևոր գործի համար հինգ րոպե էլ չի տրամադրում: Հայր ու աղջի՞կ են:

- Քրոջս աղջիկն է,- կարծես հասկանալով իմ հարցն ասում է գնդապետը: - Ուզեցի որդեգրել՝ չհամաձայնեց: Երկու տղա ունեմ, բայց դստեր համն ուրիշ է…

Գնդապետն ակնհայտորեն շատախոսում է: Ինձ ի՞նչ, թե նա ուզում է դստեր համ զգալ, ավելի լավ չէ՞ր լինի, եթե նա մի երկու բան պատմեր իր վարած մարտերից:

- Սեդա, ծանոթացիր, ընկերը ժուռնալիստ է,- ժպտում է գնդապետը: Ես տեսնում եմ Սեդայի սպիտակ ձեռքը, որ թույլ-թույլ ինձ է մեկնվում: Դե աղջիկները, որոնք գիտեն, որ կարող են սիրել, այդպես թույլ-թույլ են երկարում ձեռքը՝ իրենց սառնությամբ տղային բորբոքելու համար: Անշուշտ գնդապետն այդ չի հասկանում և շարունակում է.

- Սեդան իր ընկերների հետ եկել է ռազմաճակատ համերգ տալու:

Քիչ հետո կսկսեն համերգը, ժամանակին եմ եկել: Գնդապետն էլ համերգում կլինի: Միայն թե մի քանի դրվագներ պատմի իր կյանքից, իր վարած մարտերից: Ես արագ կգրեմ ակնարկը, երկու ժամում՝ հինգ էջ: Երեկոյան պատրաստ կլինի: «Նա լսում էր իր հայրենի երգերը և աչքի առջև իր հայրենին էր փռվում՝ գերմանական տանկերի թրթուռների տակ փոթփոթված, ավերված: Սիրտը ցավից մռնչում էր, գալարվում: Գնդապետի սիրտը…»:

- Ընկեր գնդապետ, Ձեր վարած մարտերից ո՞րն եք ավելի հաճախ հիշում:

- Ոչ մեկը:

- Ո՞վ է Ձեր սիրած զորավարը՝ Սուվորո՞վը, Հաննիբա՞լը, Նապոլեո՞նը, թե՞ ով:

- Ոչ մեկը: Այ տղա, էլի՞ դու իմ մասին ակնարկ գրելու մտքից ձեռք չես քաշում: Եկել ես՝ լավ ես արել, հայ ես, նստիր մի կուշտ հայերեն խոսենք: Ոտանավորներ գիտե՞ս:

- Մի ժամանակ գիտեի:

- Լավ, լավ, մի նեղանա: - Գնդապետը թեթևակի խփում է ուսիս: - Ես ոչ մեկին տվյալներ չեմ տալիս: Պարզապես ինձ դուր չեն գալիս այն աստղակերները, որ թղթակցի դեմ կանգնում են մի քիչ ձգված, հրաժեշտ տալիս ժպտում են, որ

չլինի թե թղթակիցն իրենց ասածը մոռանա գրել: Դուր չեն գալիս: Ուզո՞ւմ ես հարցրու իմ համհարզին՝ որդուս:

Ես դառնում եմ մեզ մոտեցող երիտասարդի կողմը: Լիքը-լիքն այտեր, իսկը՝ խոհարար: Այդպես էլ պիտի լիներ: Առել է իր որդուն թևերի տակ, ինչպես թուխսը՝ ձագերին: Ես գնդապետ հայր չունեմ, որ մտածի իմ մասին: Իմ խմբագիրն իր բոլոր ամպերից վրաս կարկուտ կտեղա: Որոտա, հրետանի՛, իմ մեջ էլ որոտում է մի բան, որի անունը չեմ գտնում: Համբերության բաժա՞կն է արդեն լցվում: Ո՞ւմ դեմ բարկանամ՝ գնդապետի՞, որ համեստություն է խաղում, թե՞ իմ խմբագրի, որ ամեն առիթով սպառնում է կրակի առաջին գիծ ուղարկել: Իսկ կրակի առաջին գծում ահա որոտում է հրետանին: Ձայնը գալիս է ասես ջրհորից: Ուրեմն բավականին հեռու է առաջին գիծը: Բայց ինչո՞ւ է գունատվել Սեդան:

- Այստեղից մինչև հրետանին քանի՞ կիլոմետր է,- հարցնում է նա,- երեք կլինի՞:

- Ոչ, ինն է, պատասխանում եմ ես: - Ձեր ասածից ուղիղ երեք անգամ ավելի:

- Իսկ մերոնք ու գերմանացիներն իրարից ինչքա՞ն են հեռու:

- Երբեմն այնքան մոտ են, որ կարող են միմյանց թարթիչները տեսնել: Բայց մի վախեցեք, Սեդա, մենք ջարդում ենք նրանց:

Իմ մեջ դադարել է որոտալ այն բանը, որի անունը չեմ գտնում: Սեդայի աչքերն ի՜նչ սև ու գեղեցիկ են:

- Այո, ջարդում ենք, բայց առայժմ… ակնարկներում: - Անսպասելի պայթում է գնդապետի խոսքը:

Ճիշտ է ասում նա: Իմ ակնարկներում էլ շատ բան այնպես չէ, ինչպես կյանքում է, ես աչք եմ փակում մեր

կորուստների առջև, իսկ թշնամին կրկնակի կորուստներ է կրում: Խմբագիրը երբեմն եռակի, քառակի է դարձնում: Շատ հեշտ է: Բայց գնդապետն ի՞նչ իմանա, որ ես չեմ ցանկանում կեղծել: Կարդացել է իմ ակնարկները և դժգոհ է. «Ջարդում ենք… ակնարկներում». -Ինձ է ծաղրում: Իզուր: Թող իմանա, որ մենք դիտմամբ ենք այսպես անում, որպեսզի բարձր պահենք մարտիկների ոգին: Դա իմ խմբագրի միտքն է, որին ես դեմ չեմ և որից ահա կառչում եմ, որովհետև ուզում եմ առարկել գնդապետին: Բայց չեմ առարկում նրան: Հանկարծ հասկանում եմ, որ Սեդայի աչքերը շատ գեղեցիկ են և դրա համար եմ պարծեցել. չեմ ասել, թե մերոնք ջարդում են, այլ՝ մենք ջարդում ենք: Գնդապետի որդին աչքով է անում Սեդային, այդ նշանակում է, թե՝ խելքահան ես արել տղային, տես, ինչպես է ուզում քեզ դուր գալ:

Եվ ես դառնում եմ անհամարձակ:

Հետո պիտի հասկանամ, որ դա սիրահարված լինելու հաստատ նշան է: Պիտի աշխատեմ տիրապետել ինձ և այդ պիտի հաջողվի քառասունի շեմին: Իսկ այն ժամանակ…

- Ընկեր գնդապետ, համերգը սկսվում է: -Ուղղակի փրկություն է այդ խոսքն ինձ համար:

- Գնանք, ընկեր գնդապետ, գուցե այնտեղ ասմունքող էլ կլինի և դուք ոտանավորներ կլսեք: - Ես ուրախ տոնով եմ ասում, բայց գնդապետը ժամանակ չունի ոչ հակահարձակմանը պատրաստվելու, ոչ համերգին մասնակցելու: Գունդը համալրում է ստանում, և նա պիտի զբաղվի դրանով: Ես ուզում եմ գնալ նրա հետ, բայց վախենում եմ, որ կասի՝ ինչ ես տզի պես կպել ինձնից: Սեդան արհամարհանքով կծիծաղի: Ինչ լինում է՝ թող լինի, կգնամ, համերգը կլսեմ:

Մի մեծ բացատ է և պիտի պատկերացնես, որ դա համերգային դահլիճն է: Վերևից կախված է արևը, որպես հսկայական ջահ: Բեմ չկա: Մեր թիկունքում կովկասյան լեռներն են, որ եթե բանաստեղծորեն մտածես, կարող ես բեմ համարել: Բայց այստեղ լիաշունչ չես երգի, որովհետև թիրախի պես կանգնած կլինես թշնամու գնդակի առջև: Թշնամին հասել է Կովկաս, իր երկաթե դունչն ուղղել դեպի Հայաստան: Ուսանողներն իրենց հետ հայկական թերթեր են բերել: Մեկի ճակատին, մեծ տառերով գրված է՝ «Զա՛րկ, Կովկաս»: Եվ զարկում է Կովկասը: Ահա Հայաստանն իր կտրիճներին ռազմաճակատ ուղարկելուց հետո ոտքի է հանել իր աղջիկներին, թե՝ գնացեք, ձեր երգով ոգևորեք կռվողներին, թող հիշեն, որ ձեր պես աղջիկներ կան, որոնց համար արժե մեռնել: Իսկ այնտեղ, Հայաստանում, ինչ իմանան, որ մի անճարակ ժուռնալիստ մի գնդապետի մասին ակնարկ է ուզում գրել և ոչ մի կերպ չի կարողանում, որովհետև գնդապետը դժգոհ է, որ թերթը լցվում է բարձրաստիճան զինվորականների գովքով: Զա՛րկ, Կովկաս: Իսկ այդ խեղճ ժուռնալիստը շփոթվում է մի աղջնակի առջև:

Թողնեին այս մասին գրեր: Ոչ մի փաստ պետք չէ: Կնստեր մինչև լույս և… չէր հորդի նրա խոսքը, որովհետև չէր ուզենա մատնել իր ապրումները: Զա՛րկ, Կովկաս:

Բայց զարկողները սիրում են և երգը: Ես կնկարագրեմ, թե վաղվա գրոհողներն այսօր ինչպես են հրճվում, կտամ նրանց ապրումներն ապագա հարձակումից առաջ: Դա խմբագրիս սրտով չի լինի, որովհետև ես ինքնագլուխ փոխում եմ թեման: Ավելին՝ չեմ կատարում հրամանը: Ի՞նչ կանի: Իսկ որևէ բան կա՞, որ ես կարող եմ անել, բայց չեմ անում: Ուրեմն, ինչ ուզում է, թող անի: Զա՛րկ Կովկաս:

Ես անհամբեր սպասում եմ Սեդայի ելույթին: Գնդապետի որդին զգում է իմ անհամբերությունը և քթի տակ ժպտում: Կժպտա, իհարկե, մտել է գնդապետ հոր թևի տակ և չգիտե, ինչ է ցուրտը: Կյանքի ցուրտը, անշուշտ, թե չէ վերևից հայր արևը բոլորիս ջերմություն ու լույս է տալիս հավասարապես: Նրա ցոլքերն ընկել են Սեդայի մազերի վրա և լուսե մի երիզ լուսապսակի պես շրջանակել է նրա գլուխը: Վերջապես նա է ելույթ ունենում: Մանկուց մի մեղեդի է կառչել իմ հոգուց: Մեր գյուղի քահանան էր երգում: Հիմա ես գիտեմ, որ նրա երգածը շարական է կոչվում: Բայց չգիտեմ՝ շարականի վսեմությո՞ւնն էր պատճառը, եկեղեցու խորհրդավորությո՞ւնը, քահանայի ձա՞յնը, թե՞ ուրիշ բան, որ այդ մեղեդին կառչեց իմ հոգուց, արմատներ արձակեց և մնաց: Հաճախ փակում եմ աչքերս և այն լսում երկա՛ր, երկար: Ուրիշ ոչ մի երգ իմ մեջ այդպես չի երգվում:

Բայց Սեդայի երգը պիտի երգվի: Ես հաստատ գիտեմ, որ պիտի երգվի: Ականջներս չէ, որ լսում են նրա ձայնը, այլ էությունս: Քաղցր սարսռում եմ: Շոշափելի զգում եմ, որ հնչյուններ են կաթում սրտիս մեջ: Իսկ մեր հեռու սարերում անձրև է գալիս: Կակաչներ կան այնտեղ, կարմիր կակաչներ, որ չեն հանգչում անձրևից: Ղողանջում է Սեդայի ձայնը, իսկ իմ ոտքերի մոտ ու քիչ հեռվում իսկապես կակաչներ կան: Այս մեկն ինչքան պայծառ է, պետք է քաղել: Կռանում եմ: Արագ-արագ քաղում եմ: Գեղեցիկ փունջ է: Ցողված լիներ մեր սարերի անձրևով՝ ավելի գեղեցիկ կլիներ: Գեթ մի անգամ լիներ Սեդան մեր սարերում: Ես ավելի շատ կակաչներ կքաղեի, կասեի՝ առ, Սեդա: Նա կնայեր թաց թերթիկներին և հանկարծ կասեր՝ այս մեկն անձրևի կաթիլ չէ, դու լացե՞լ ես, Գարեգին: Ինչո՞ւ: Սիրուց, կասեի, քո սիրուց եմ լացել…

Թնդում են ծափերը: Սեդան ավարտել է երգը: Ես իմ ծաղկեփունջը շպրտում եմ նրա ոտքերի տակ: Նորից են թնդում ծափերը, որոնք այս անգամ հասցեագրված են ինձ: Որտեղի՞ց ինձ այսքան համարձակություն, բոլորը նայում են իմ կողմը, բայց ես չեմ շփոթվում: Ես կարող եմ ավելին անել: Կարող եմ Սեդային բարձրացնել գլխիցս վեր, իհարկե, եթե նա այդ ցանկանա, կարող եմ փռվել նրա ոտքերի տակ, կարող եմ… Ինչե՜ր չեմ կարող: Ուրեմն սերը խենթություն է նաև: Ընդամենը երկու ժամ է, ինչ տեսել եմ նրան: Երկու ժամ և սե՜ր: Ուրեմն ես սիրել եմ նրան առաջին հայացքից: Իսկական սերն այն է, երբ առաջին հայացքից են սիրում: Իսկ երբ մտերմությունն է ինչ-որ կետում վերածվում սիրո… դե դա սեր չէ, այլ մտերմության վարձատրություն: Այս դատողությունն անելիս ժպտում եմ, որովհետև հիշում եմ, որ քիչ առաջ այս նույնն էի մտածում, երբ Սեդան էր առաջին հայացքից սիրահարվողը. «Ես կսիրեի այս վրացուն»: Ինչպե՜ս կուզենայի, որ մեկ էլ կրկներ: Բայց ինչ-որ շատ ջերմ չէ: Ամաչում է անշուշտ: Ամաչում է գնդապետի որդուց, որն արդեն ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ, և քթի տակ ծիծաղում: Ես զգում եմ, որ նա ծիծաղում է և իմ սիրո վրա: Նա Սեդայի մորեղբոր տղան է, երևի գիտի, որ Սեդան Երևանում ուրիշ սեր ունի, և դրա համար քմծիծաղ տվեց, երբ ես ծաղկեփունջը նրա ոտքերի տակ նետելուց հետո վերադարձա իմ տեղը: Ուրիշի՞ է սիրում Սեդան, թե՞ ինձ: Իսկ ինձ սիրո՞ւմ է: Բոլոր սիրահարների հավերժական հարցը ես էլ տվեցի: Իհարկե, սիրում է կամ զգում է, որ կսիրի: Ինչո՞ւ է այդպես հեգնանքով նայում նրա մորեղբոր տղան: Ի՞նչ եղավ իմ քիչ առաջվա համարձակությունը: Ես հիմա ծաղկեփունջ չէի նետի դեպի «բեմ», ուր Սեդան շարունակում է երգել: Առաջին երգի նման

այս մեկն էլ է հոգեթով: Պետք է լսել… Շուտով, շատ շուտով ամբողջ աշխարհը պիտի լսի նրան: Նա մեծ երգչուհի կդառնա:

«Դահլիճ» է մտնում գնդապետը: Ոչ, ես այլևս նրան չեմ դիմի, մարդը չի ուզում, որ իր մասին ակնարկ գրվի, ես ի՞նչ, աներես ճա՞նճ եմ, որ իր տզզոցով մարդկանց զայրացնում է իրեն ճզմելու չափ: Չէ՛, գնդապետ, չէ՛…

***

Բայց և այնպես ակնարկ գրեցի նրա մասին: Ահա խմբագրիս ակնոցները կախվել են գրածիս վրա:

Ինձ թվում է, թե ակնոցներ չեն, այլ խմբագրիս աչքերը՝ զայրույթից մեծացած, սառն, ապակեփայլ…

- Շարքային Սիմոնյան, ձեզ հրամայված էր ակնարկ գրել գնդապետ Մուշեղ Սմբատյանի մասին:

- Նրա մասին է, ընկեր կապիտան:

- Ձեզ հրամայված էր գրել ոչ թե ինչ-որ երգչուհու մորեղբայր Մուշեղ Սմբատյանի, այլ գնդապետ Մուշեղ Սմբատյանի մասին: Դուք չեք կատարել հրամանը:

- Նա ինքը չուզեց, որ գրվի իր մասին: Ասաց, որ իր մարտիկների մասին գրվի. ամեն մի լավ մշակված պլան ոչինչ է առանց այդ մարտիկների խիզախության:

Խմբագիրս ավելի է մռայլվում.

- Դուք պետք է ի՛մ հրամանին ենթարկվեք, ոչ թե նրա: Իսկ եթե շատ եք ուզում ենթարկվել նրա հրամաններին, ապա ես կարող եմ օգնել ձեր ցանկության իրականացմանը: Վաղվանից դուք թերթում չեք աշխատի: Դուք չկարողացաք գնահատել իմ բարյացակամությունը, դրա համար դեռ կափսոսաք:

Խմբագիրս այդ բոլորը շշուկով ասաց, բայց նրա աչքերը գոռում էին:

- «Զա՛րկ, Կովկաս»՝ շատ լավ է հնչում: Վաղվա համարում իմ ակնարկի փոխարեն, խոշոր տառերով այդ գրեցեք: - Ասում եմ այնքան բարձր, որ մի նրբակիրթ մարդու կթվա, թե գոռում եմ: Իսկ իմ խմբագիրը, եթե հոգեբան լիներ, կհասկանար, որ ես ուզում եմ ասել՝ զարկ, Գարեգին, փշրիր այս ակնոցները, բայց չեմ համարձակվում ասել, առավել ևս՝ անել: Զինվորական դատարանը չի հասկանա, թե ինչպես է այս մարդը հոգիս հանել իր անվերջ սպառնալիքներով, թե ինձ ռազմաճակատ կուղարկի, անվերջ ակնարկումներով, թե ես իր շնորհիվ է, որ դեռ ապրում եմ, ուստի և պարտավոր եմ իր համար ամեն ինչ անել, նույնիսկ… մեռնել:

Իհարկե, ինձ կրակի առաջին գիծ ուղարկելն ու չուղարկելն իրենից չի կախված: Բայց ահա ես կրակի առաջին գիծ եմ գնում, չգիտեմ, ո՞ւմ հետ խոսեց, ի՞նչ ասաց, և իմ ճռճռան աթոռի վրա պիտի ուրիշը նստի, ուրիշը պիտի վերցնի աշակերտական այն գրիչը, որով դեռ երեկ ակնարկ էի գրում «ինչ-որ երգչուհու մորեղբայր Մուշեղ Սմբատյանի» մասին: Ինչ-որ երգչուհի: Հիմար, ապուշ, ավանակ, նա ինչ-որ երգչուհի չէ, նրա անունը շատ շուտով կթնդա աշխարհով մեկ: Ի՜նչ ձայն էր: Ես ճիշտ էի նախազգում, որ այս ձայնը միշտ պիտի հնչի իմ էության ծալքերում: Կփակեմ աչքերս և հստակ կլսեմ մեղեդին… Բայց մանկուց լսած շարականն ավելի բարձր է հնչում: Տխուր, տխուր է այդ ձայնը, թաղման զանգերի պես: Մեկը կարծես ողբում է իմ դիակի վրա: Ախր ես կարգին կրակել էլ չգիտեմ, ո՞ւր են ինձ ուղարկում:

Սա այն արահետն է, որ երեք օր առաջ ինձ տանում էր համալրվող գունդը: Ես գնում էի որպես զինվորական թղթակից, իսկ այժմ գնում եմ որպես համալրող: Ես գնում էի ուրիշների մասին գրելու, իսկ հիմա պիտի գան գրելու իմ մասին:

Ահա սա էլ այն կողքի արահետը, որով քայլում էին Սեդան ու ընկերուհին: «Ես կսիրեի այս վրացուն»: Կսիրեր, եթե հադիպեր: Միայն մի անգամ հանդիպեցինք և այլևս չենք տեսնի իրար: Երևի արդեն Երևան է հասել և կոնսերվատորիայի լսարաններից մեկում ձայնն է փորձում: Գնացին: Ի՜նչ գործ ունեն ռազմաճակատում, զինվորներ հո չեն: Երգեցին ու գնացին: Այդքանը: Իսկ ես պիտի հիշեմ նրան, պիտի մտածեմ, որ նա կսիրեր ինձ, եթե… եթե պատերազմ չլիներ:

Ի՞նչ շահեցի ես: Բայց ի՞նչ են շահում պատերազմում: Եթե ձանձրացած են կյանքից՝ մահ են շահում: Իսկ ես սիրահարված եմ կյանքին, ես պիտի կորցնեմ: Ի՞նչ, ի՞նչ արեցի: Պիտի գնդապետի օձիքը չթողնեի՝ մինչև ինձ հարկավոր փաստերը չկորզեի նրանից: Ոչ, ես անմիտ հպարտությամբ գնդապետին հանգիստ թողեցի: Ես խմբագրիս առջև ծնկի չիջա և հիմա կսողամ գնդապետի առջև: «Դրա համար դեռ կափսոսաք»: Բայց ես ի՞նչ իմանայի, որ այս ամենն այսպես պիտի լիներ: «Դեռ կափսոսա՜ք»: Տիրապետիր քեզ, Գարեգին, ի՞նչ ես վախկոտի պես կուչ գալիս: Այս զինվորներն էլ քեզ պես չե՞ն: Հպարտ եղիր: Ինչո՞ւ էիր կարծում, որ աշխարհավեր այս պատերազմը քո կողքով պիտի անցնի: Հիմա սեփական աչքերով կտեսնես, սեփական մաշկիդ վրա կզգաս գնդապետի վարած մարտերը և… և…

ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑ

Նորից ակնարկ պիտի գրեմ: Գնդապետ Մուշեղ Սմբատյանի մասին: Քսան տարի է անցել, և ես թափ պիտի տամ քսան տարվա փոշին նրա ուսադիրների վրայից: Ինձ առաջարկեցին այցելել նրա հայրենի գյուղը (արդեն տվել են

գործուղման փողը), քրքրել ռազմական արխիվը և իմ ուղեղը: Դարձյալ ակնոցավոր է իմ խմբագիրը, բայց կլոր ապակիների ետևից ամռան առավոտի մեղմությամբ ինձ են նայում մի զույգ կապույտ աչքեր և ասում են՝ բարի լույս հայրիկ: Այո, ես նրա համար հայրիկ եմ, չէ՞ որ արդեն քառասուն տարեկան եմ, իսկ նրա քսաներեքը հինգ ամիս հետո կլրանա: Մեր թերթում հաճախ են տեղեկություններ տպագրվում, թե Ամերիկայի Միացյալ Նահանգները ստորերկրյա որերորդ ատոմային պայթեցումն արեց, երգեր են նվիրվում մեր տիեզերագնացների սխրանքներին, բայց ամենից շատ գրվում է, թե արտադրական ձեռնարկություններն ինչպես են կատարում իրենց առաջադրանքը: Այն ժամանակ, երբ ես զինվորական ճամպրուկը մեջքիս գնում էի համալրելու գունդը, շանթվածի պես կկանգնեի, եթե մեկն ասեր, որ մարդը պիտի կարողանա պոկվել երկրի ձգողականության ուժից, պիտի ստեղծի այնպիսի ռումբեր, որոնց մի քանի հատը բավական են մեր ամբողջ մոլորակը ոչնչացնելու համար: Ես կանգ կառնեի շանթվածի նման: Բայց ոչ, պարզապես ձեռքս թափ կտայի և իմ խոսակցին, եթե հրամանատար չլիներ, ցնդած կանվանեի հենց իր երեսին: Իսկ հիմա, եթե մեկը ցուցակագրի մի քանի տարի հետո Մարս մեկնողներին, ես կուզենամ իմ խմբագրից էլ առաջ անցնել. նա դեռ շատ ժամանակ ունի հեռավոր ճանապարհորդություններ կատարելու: Հիմա քիչ բան կա անհավատալի և շատ բան՝ հավատալի: Վերջինիս մեջ է աշխարհի կործանումը և ես մեկ-մեկ այնքան խորն եմ զգում այդ, որ տեսնում եմ ստվերների պես ներքև թափվող արձաններ, տաճարներ, սովորական շենքեր: Բայց լավ է, որ այդ սուր զգացողության պահերը երկար չեն տևում, այլապես հնարավոր է խելագարվել…

Սակայն ինչ էլ լինի՝ մենք բոլորս ամեն առավոտ գնում ենք մեր սովորական գործին: Իմ սովորական գործն արխիվների մեջ թաղվելն է, կենդանի մարդկանց հետ հանդիպելը և ակնարկ գրելը: Եվ ահա ես գնում եմ իմ գործին: Օրհնվի հեռախոս ստեղծողը և առավել՝ այն մարդը, որ Սեդայի բնակարանը հեռախոս է բերել: Ուրեմն ես կարող եմ չգնալ նրա մոտ, վերցնել հեռախոսափողը և հայտնել նրան, որ ես մեկնում եմ քաղաքից, ինձ ուղարկում են մի գյուղ՝ մեկի մասին ակնարկ գրելու: Իսկ ի՞նչ պարտադիր է, որ նրան բացատրություն տամ, թե ինչու եմ հեռանում քաղաքից:

- Ալո, Սեդա, ես բացակայում եմ քաղաքից:

- Երկա՞ր ժամանակով:

- Չգիտեմ:

- Գարեգին, այդ «չգիտեմ»-ն ինչքան հաճախ ես ասում:

Ոչ, չպիտի զանգ տայի: Հիմա անհնար է նրան համոզել, որ չգա ինձ ճանապարհ դնելու:

Կառամատույցում շատ աղջիկներ կան, բայց ես հիմա նրանց նայում եմ անտարբեր: Ավելի ճիշտ նրանց նայում եմ համեմատելու Սեդայի հետ, ոչ այս Սեդայի, որը մի փունջ կակաչներ է բերել, բայց դեռ ինձ չի տալիս, որպեսզի նեղություն չպատճառի: Այն մյուս Սեդայի նայվածքը ոչ մի աղջիկ չունի: Այս Սեդան, ավաղ, միայն անունով է նրա նման: Ի՜նչ լավ է, որ շատ մարդիկ կան, մեր տանը չենք ու ես չեմ հաշվի նրա ողերը, չեմ մտածի, որ ամռանը նրա թևերի տակով ճարպոտ քրտինք է ծորալու:

Բոլորին, բոլորին նայում եմ անտարբեր հայացքով: Երբեք չէր եղել, որ իմ նորաբաց օրերի Սեդան այսպես երկար մնար իմ հայացքի առջև: Իսկ հիմա, որ գնում եմ նրա մորեղբոր մասին ակնարկ գրելու, պիտի չմոռացվի: Իսկ այդ նշանակում է, որ ինձ համար ուրիշ կին չպիտի գոյություն

ունենա: Երևի հոգնել է իմ մարմինը, հիմա հոգիս է ուզում առաջնորդել, ցույց տալ, որ հոգեկան վայելքն ամենակարևորն է: Դատարկ մտքեր: Պարզապես հոգնել եմ այս կարմիր կակաչներով կնոջից, և եթե հեշտությամբ համաձայնեցի գնալ մի հեռավոր գյուղ՝ ակնարկս անցյալից սկսելու, դրա պատճառը նախ և առաջ այն է, որ հոգնել եմ այս կնոջ աղաչող ժպիտներից: Շատ եմ հոգնել, բայց չեմ կարողանում խոստովանել նրան:

Կայարանի հաղորդավարն արդեն հայտնեց, որ գնացքի մեկնելուն մնում է հինգ րոպե, խնդրվում է ճանապարհողներին, որ դուրս գան վագոններից: Ես կանգնած եմ մեր վագոնի ոտնակին: Հանկարծ հիշում եմ իմ երազը: Խեղճ տղան ինչպես էր արագ գլորվում ռելսի վրայով: Այս վագոնի անիվներն էլ կարող են սողալ սրած դանակի պես: Ի՞նչ կանեի, եթե հիմա նույնը կրկնվեր: Պարզ է, փրկել չէի կարողանա, բայց որ այսպես չեմ մոռանում այն չար երազը, վատ չէ: Նշանակում է մարդկային մի տաք բան կա իմ սրտում: Ես չեմ կարողանա լքել այս կնոջը: Իսկ ինչպե՞ս լքեցի նրանից առաջ եղածներին: Ոչ, նրա՛նք ինձ լքեցին: Հենց որ զգացին, որ ձանձրանում եմ՝ ինձնից հեռացան: Նրանք վայելք էին փնտրում և ինձնից ավելի շուտ էին ձանձրանում, հեռանում էին ինչպես օտարներ: Իսկ սա չի հեռանում… Ահա իր ձեռքի կակաչներն է երկարում ինձ: Այդ նշանակում է, որ գնացքը հիմա կշարժվի: Եվ շարժվում է:

- Ցտեսություն, Սեդա:

- Բարի վերադարձ, Գարեգին:

Նրա ձայնի մեջ կարոտի կանչ կա: Օդում թափահարում է սպիտակ թաշկինակը, որը, ով գիտե, քիչ հետո պիտի տանի դեպի աչքերը: Ես դա մտածում եմ միայն, ոչ թե զգում սրտով, այլապես նրա կակաչներն անտարբերությամբ չէի տա մեր

կուպեում լացող երեխային: Իսկ այս երեխային ծաղիկներ պետք չէին, նա պաղպաղակ էր ուզում, և իմ տվածը շպրտեց հատակին: Ես չվերցրի, նույնիսկ չհիշեցի Տագորի իմ այնքան սիրած տողը. «Իսկ ծաղիկներն այնքան քնքույշ են, որ մեռնում են առանց պատճառի»: Իմ աչքերի առջև նորից այն Սեդան էր, որի երգն ու պատկերը ես տուն բերեցի ռազմաճակատից: Լավ է, լացող երեխան ձայնը կտրեց, և ես կարող եմ երազել: Կարող եմ անհունորեն ցանկանալ, որ ետ գան այն ահեղ օրերը, թեկուզ ականջներիս մեջ, իմ էության բոլոր ծալքերում նորից դղրդա խմբագրիս շշուկը. «…Դրա համար դեռ կափսոսաք»: Անցյալն ինչքան էլ դառը լինի՝ քաղցր է թվում, որովհետև գիտես, որ այլևս ետ չի գա: Իսկ ինձ համար կրկնակի թանկ է, որովհետև ես կտեսնեմ Սեդային, եթե իհարկե, այնուամենայնիվ հրաշք լինի և ես դառնամ քսան տարեկան: Բայց այդպիսի հրաշք չի լինի, ուրեմն մնում է միայն մի միջոց՝ անձնատուր լինել հուշերին: Բոլորովին վերջերս իմ մեջ զրնգաց նրա ձայնը, այն երգը, որ կառչեց իմ սրտին ու մնաց: Այն առավոտ, երբ ես զինվորական ճամպրուկը մեջքիս գնում էի մեր գունդը, այդ մեղեդին, այսօրվա պես հիշում եմ, իր տեղը զիջեց շարականին: Հիմա ես գիտեմ, որ դեպի մահ գնացող զինվորի տագնապը չէր միայն, այլև սիրահար սրտի հեծկլտանքը: Ես այլևս չպիտի տեսնեի նրան: Ես իսկապես մի միջանկյալ նախադասություն էի նրա համար: Ու գնում էի դեպի մի դատարկություն, որը ոչնչով չես լցնի: Գնում էի գեթ նրա ոտնահետքերի բույրը շնչելու:

ԶԻՆՎՈՐԸ

- Դե, ընկեր ժուռնալիստ, հիմա թշնամուն կհաղթենք ոչ միայն ակնարկներում: - Գնդապետն է, բարեհաճում է սրամտել: - Լա՞վ ես կրակում:

- Կսովորեմ,- մռայլ ասում եմ ես:

- Ինչպե՞ս թե: Հապա վերցրու սա և նշան բռնիր այ էն ծառին: Բայց ավելի լավ է թիրախ բերենք: Ես էլ եմ ուզում կրակել:

Բերում են մի ֆաշիստի գլուխ, այսինքն՝ նկար, անփութորեն սոսնձած հազար տեղից ծակծկված ֆաներային: Կրակում եմ հիսուն մետրից: Թիրախին չկպավ: Երկրորդ անգամ եմ կրակում, երրորդ, չորրորդ, հինգերորդ… դարձյալ անվնաս է ֆաշիստի գլուխը, որը բնականից առնվազն երեք անգամ մեծ կլինի:

Մռայլվում է գնդապետը: Նա չէր սպասում, որ ես կրակել չգիտեմ: Երևի ժամանակ ուներ, ուզում էր ինձ հետ մրցել, ինչպես հին բարեկամի հետ, և այսպես ստացվեց:

- Ճաշից հետո ընկեր ժուռնալիստին տանել հրաձգարան: - Կարգադրում է գնդապետը մի սերժանտի, որն իմ անմիջական հրամանատարն է լինելու հետագայում: - Զինվորն ամենից առաջ դիպուկ կրակել պիտի իմանա:

Եվ թոթվում է ուսերը: Այդ նշանակում է՝ չեմ հասկանում ինչո՞ւ են այսպիսիներին ուղարկում առաջին գիծ, մի՞թե քիչ ենք անիմաստ զոհեր տվել:

Թոթվում եմ ես էլ ուսերս: Ինչ ուզում եք ասեք, մի քիչ տարօրինակ հանդիպում էր. մի ամբողջ գնդի հրամանատար մոտենում է քեզ և ոչ ավել, ոչ պակաս, առաջարկում մրցել կրակելու մեջ: Եվ դա հանդիպման առաջին րոպեին: Եվ դա մի զինվորի, որը նրան տեսնելիս պիտի ձգվի փայտ կուլ տվածի նման: Ճիշտ էին ասում, որ առաջին գծում հրամանատարները վախենում են զինվորից. հարձակման

ժամանակ կխփեն թիկունքից, դե արի ապացուցիր, որ գնդակը գերմանական չէր, այլ մերը: Այդպիսի դեպքեր եղել են:

Ես գուցե երկար կխորհեի այդ ոգով, եթե գնդապետը չասեր.

- Սերժանտ, ոչ մի րոպե չկորցնել: Պետք է թրծել այս կավը: Հենց հիմա, անմիջապես:

«Կավը» ես եմ: Բայց ինչո՞ւ է նա այդպես անհանգստացած և այս անգամ՝ խիստ, չոր: Հուզված է իմ պատճառո՞վ: Երևի գիտի, որ իմ այստեղ լինելու հիմնական «մեղքն» ընկնում է իր վրա: Եթե ինձ տվյալներ տված լիներ, ու ես ակնարկ գրեի… Չտվեց, և ես հիմա թնդանոթի միս եմ…

Սերժանտը սկսեց ինձ «թրծել»: Փորսող եմ տալիս, քրտինքը ծորում է ճակատիցս, զինվորական վերնազգեստս թաց է արդեն: Տեսնես շա՞տ կա մինչև ճաշ: Իսկ ճաշից հետո կրակելու են տանելու, դարձյալ չեմ հանգստանա: Ջհանդամը, միայն թե շուտ գար ճաշի ժամը, գոնե մի քսան րոպե կհանգստանամ ճաշն ուտելիս:

- Արա՛գ, արա՛գ,- հրամայում է սերժանտը: Իսկ իմ ուժերը սպառվել են: Ուշաթափվո՞ւմ եմ արդյոք: Իհարկե, ուշաթափվում եմ և տենդի մեջ, ահա, տեսնում եմ Սեդային: Չէ, ինձ վատ դիմավորեցին: Կարծես զայրացած սպասում էին, որ երբ ես երևամ, անմիջապես տանջեն: Գոնե մեկ օր սպասեին: Հետո ի՞նչ, որ կարող է հենց հիմա էլ հրաման գալ թշնամուն այնքան մոտենալու, որ տեսնենք միմյանց թարթիչները:

Մնաս բարով, Սեդա: Բայց սա պատրանք չէ, իսկապես Սեդան անցնում է ծառերի միջով: Ես տրորում եմ աչքերս. գուցե երա՞զ է, ուր որ է կարթնանամ:

- Արա՛գ, արա՛գ: -Սերժանտի երկաթե ձայնն է: Ուրեմն իրականություն է, և ծառերի միջով անցնողը Սեդան է: Նրա ընկերները հիմա Երևանում են, ինքն էլ պիտի նրանց հետ լիներ, բայց այստեղ է: Ինչո՞ւ չի գնացել: «Ես կսիրեի այս վրացուն»: Ուրեմն մնացել է, որ գեթ մի անգա՞մ էլ տեսնի…

Այո, ընկեր սերժանտ, ես ավելի արագ փորսող կտամ: Ես հասկանում եմ ձեզ, դուք ուզում եք, որ թնդանոթի միս չլինեմ: Չեմ լինի: Կսովորեմ ինձ պահպանել և թշնամուն ոչնչացնել դիպուկ կրակով: Ճաշից հետո կրակելու կգնանք: Խոստանում եմ շատ շուտով գնդակը ֆաշիստի հենց քունքին խփել: «Դժվար է ուսման մեջ, հեշտ է կռվում»,- դա հիմա թերթերում գրվող նախադասություն չէ, որը ես ստուգում էի տառ առ տառ, այլ մի գործողություն, որը պահանջում է կաթիլ-կաթիլ ծորող քրտինք, սրտի այնպիսի տրոփյուն, որ արձագանքում է ականջներիս մեջ: Ի՜նչ լավ է, Սեդա, որ մնացել ես…

- Մերոնք խնդրեցին, որ մնամ,- ասում է Սեդան:

«Մերոնք»-ը գնդապետն է և նրա որդին՝ Լևոնը: Այս անունը հենց նոր ասաց Սեդան, և ես երբեք չեմ մոռանա, որովհետև այն կրում է նրա մորեղբոր որդին:

- Ինձ դուր է գալիս այստեղ: Սկզբում վախենում էի, բայց հիմա վախս անցավ:

Ինձ էլ է դուր գալիս այստեղ, որովհետև ահա իմ դեմ նստած է Սեդան՝ մեջքը հենած ծառի հաստ բնին: Բայց առիթ չի լինում այդ ասելու: Հազիվ է հաջողվել նրա հետ հանդիպել, ով գիտի, գուցե այլևս չհաջողվի, իսկ նա հո միշտ չի մնա այստեղ, կգնա, երբ մեզ դիրքերն ուղարկեն: Պետք է ձեռքից բաց չթողնել առիթը: «Ես քեզ սիրում եմ, Սեդա, դու հրեշտակի պես…»,- ոչ, լավ չի լինի այդպես ասել: «Երբ դու ասացիր՝ ես կսիրեի այս վրացուն, իմ կրծքի տակ ինչ-որ բան փուլ եկավ:

Ես զգացի, որ ես էլ քեզ կսիրեմ: Առաջին հայացքից դու ինձ կախարդեցիր, դու ինձ…»,- այսպես էլ լավ չէ… Քաղում եմ մի փունջ կակաչներ և նվիրում եմ նրան: Ծաղիկներ, ծաղիկներ, ես չեմ գտնում հարկավոր բառերը, իսկ դուք նույնը կասեք առանց բառերի: Ես դեռ առիթ կգտնեմ և կբացեմ սիրտս, հիմա ինչ-որ չի ստացվում, Սեդան շտապում է, ահա վեր է կենում: Երկար չենք նստել, գուցե մի տաս րոպե և նա գնում է:

- Սեդա, կակաչները մոռացաք:

- Չմոռացա: Բայց ինչո՞ւ վերցնեմ, միևնույն է, պիտի թոշնեն: Ես չեմ ուզում այդ կակաչները:

- Սրանք այն կակաչներից են, որ ես նետեցի ոտքերիդ տակ, երբ դու երգում էիր: - Չգիտեմ ինչու անցա դու-ի. երևի մտածելով, որ սեր են բացատրվում այն ժամանակ, երբ մտերիմ են:

- Պետք չէ, Գարեգին, ուրիշին նվիրեք…

Ուրեմն ես սխալվել եմ. ոչ թե ինքը, այլ ընկերուհին է եղել այն ճակատագրական խոսքն ասողը: Իմ կակաչները մնացին ծառի տակ ընկած, թոշնեցին այնտեղ:

***

Քսան տարի է անցել, և ահա նորից կակաչներ: Այս անգամ ինձ են տվել, և ե՛ս չեմ վերցրել: Ընկած են վագոնի հատակին և տրորվում են: Գոնե գար ուղեկցորդը և ավլեր, թափեր:

Հոգնած եմ, պետք է քնել, քանի դեռ այս լալկան երեխան չի մտաբերել, որ իր համար պաղպաղակ չեն գնել: Քնել, մոռանալ հին սերը, գնդապետին, պատերազմը:

Արթնանում եմ, երբ վագոնում քնած են բոլորը: Շատ չեմ քնել, ընդամենը մեկ ժամ: Մինչև լուսաբաց այդքան էլ հազիվ քնեմ: Ես գնացքում լավ չեմ քնում: Բայց այս անգամ չեմ

ձանձրանա, որովհետև իմ մեջ զարթնել է անցյալը, ապրում եմ պայծառորեն իմ դեմ հառնած մարդկանց շրջապատում, որոնցից մեկի մասին, ահա, գնում եմ ակնարկ գրելու: Դեպքերը հիշում եմ խառնիխուռն, աշխատում եմ դասավորել, ինչպես ասում են՝ ենթարկել տրամաբանության օրենքներին:

Ուրեմն այսպես, Սեդան ինձ մերժեց: Ոչ, երկնակամարը գլխիս փուլ չեկավ: Թռչունները շարունակեցին իրենց ծլվլոցը, իսկ ծառերը տերևներ չթափեցին որպես արցունք, որովհետև կանաչ էին նրանք և ամուր կառչած էին ճյուղերին: Պարզապես աշխարհում մեկն էլ մերժվեց, մեկը, որ հավատում էր, թե սիրված է, ինչպես բոլոր դեռևս չմերժվածները, և հիմա հոգու խորքում թաքուն հավատում է, որ կսիրվի, ինչպես բոլոր մերժվածները: Այլևս սիրտը չի դիմանա վշտին: Ինչո՞ւ գնդապետի քրոջ աղջիկը Սեդան էր և ոչ թե նրա ընկերուհին: Հիմա մենք կերազեինք, որ նա կավարտի կոնսերվատորիան, իսկ ես պատերազմից տուն կվերադառնամ, չքնաղ երեխաներ կունենանք՝ մի տղա, մի աղջիկ: Տղայի անունը ես կդնեմ, աղջկանը՝ նա: Դպրոց կգնան… Բայց գնդապետի քրոջ աղջիկը Սեդան է, որը հենց սկզբից ասել է, որ չի սիրի «այս վրացուն», և ես երազելու փոխարեն, մտածում եմ, որ ճակատագիրն իմ դիմաց էր հանել վիշտն ու երջանկությունը, ես շփոթեցի նրանց իրար հետ և ընտրեցի վիշտը: Եթե այն մյուսին ընտրեի… Բայց ոչ, բացի Սեդայից ես ոչ մեկի հետ երջանիկ չէի լինի: Ոչ մեկի: Նրա բույրն ուրիշ է, նրա ծիծաղը, թախիծը, թարթիչները, շորի դարսերը՝ ուրիշ:

Իսկ սերժանտը տանջում է մարմինս: Երևի հոգուս տանջանքն ավելի մեծ է և դրանից է, որ մարմինս չեմ զգում: Ուրիշ գործ չունենք՝ փորսող տալ և կրակել: Գնդապետն

ուզում է, որ իր գնդում բոլորը լինեն թրծված կավ, ով հում է՝ պիտի ինձ պես ծակ ծնկներով շալվար ունենա: Եվ անցնում են այսպես առաջին, երկրորդ, երրորդ օրերը:

Չորրորդ օրն է արդեն, ինչ ես մերժված եմ: Որտեղի՞ց իմացան զինվորները, որ ինձ ծաղրանքով «գնդապետի փեսա» են անվանում: Սկզբում ես զայրացա, սպառնացի վրեժ լուծել, բայց խոսքս դեռ չավարտած՝ մեկը կոմիկական լրջությամբ ասաց.

- Մի նեղանա, գնդապետի փեսա:

Բոլորը միաձայն հռհռացին: Ես զգացի, որ անզոր եմ այդ պատի դեմ, ուժ ցույց տալով միայն գլուխս կջարդեմ, և ես էլ ծիծաղեցի ջղային ծիծաղով. հրդեհը հրդեհով կհանգցնեն: Եվ իսկապես, շատերը լռեցին: Բայց մնացին մի քանիսը, որոնց վրա ոչինչ չէր կարող ազդել: Դրանց մեջ էր և այն մեկը, որ առիթ տվեց միաձայն հռհռոցին: Դուրս պրծած աչքերով մի զինվոր էր նա: Ես նրան գիտեի դեռևս թերթում աշխատելիս: Խմբագրություն էր եկել ինչ-որ հոդվածի դեմ բողոքելու, և ես հենց նրանից լսեցի, որ առաջին գծում հրամանատարները վախենում են զինվորներից, նրանց առջև դառնում փափուկ մետաքս: Չգիտեմ, գուցե կան այդպիսիները, բայց մեր գնդապետը նրանցից չէ: Իր աչքերի պես դուրս պրծած լեզվով այս զինվորը զրպարտել է բոլորին: Եվ ես ատում եմ նրան բոլորի համար: Ատում եմ և ինձ համար, որ ծաղրում է իմ ամենասուրբ անուրջները, Սեդայի համար, որ չի պատկառում նրանից և համարձակվում է իր ծաղրն առնչել նրա հետ:

Իմ մերժվելու չորրորդ, այս գունդը տեղափոխվելու հինգերորդ օրն է: Հինգ ցերեկ և հինգ գիշեր: Եթե ինձ ասեին, որ հինգ օրը բավական է փոփոխվելու համար, ես կծիծաղեի: Հիմա ինձ զինվոր եմ զգում: Ճիշտ է, չեմ վարժվել շարային

քայլվածքին, բայց արդեն գիտեմ բավականին դիպուկ կրակել, ճարպկորեն անցնել մի դիրքից մյուսը: «Շարային քայլվածքն առայժմ պարտադիր չէ,- ասում է գնդապետը: -Երբ թշնամին ծունկի գա, այն ժամանակ հպարտությունից մեր կուրծքը կցցվի, մեր ոտքերն ամուր կդոփեն գետինը»: Ճիշտ է ասում գնդապետը. հիմա ի՞նչ ունենք հպարտանալու, երբ թշնամին ահա սեղմել է մեզ Կովկասյան լեռներին:

Երկար չենք մնա այստեղ: Փորձված զինվորներն ասում են, որ շուտով կանցնենք հարձակման: Շուտով կվերջանա մեր գնդի համալրումը, նորեկները մի քիչ կվարժվեն, և գունդը նորից կկանգնի մահվան դեմ հանդիման և նորից շարքերը կնոսրանան: Արդեն մի քանի անգամ այդ կրկնվել է, և կան բախտավոր զինվորներ, որոնք մասնակցել են այդ ճակատամարտերին և կենդանի են մնացել: Հիմա նրանք են ասում, որ շուտով խրամատներում կլինենք: Նրանք այդ զգում են ճիշտ այնպես, ինչպես փորձված նավապետը՝ գալիք փոթորիկը: Երևի մեզ այստեղ վերջին անգամ է տեսնում նաև ինձ մոտեցող զինվորական թղթակիցը: Մեր թերթից է: Հարցնում է, թե որն է գնդապետի վրանը: Ես ցույց եմ տալիս և չգիտես ինչու հարցնում.

- Ակնա՞րկ պիտի գրեք նրա մասին:

- Այո:

Ես քմծիծաղ եմ տալիս և հաջողություն մաղթում նրան:

- Ինչպե՞ս է կապիտանը: -Թղթակիցը, որ արդեն պատրաստվում էր գնալ, լայն ժպտում է և նայում աչքերիս մեջ.

- Դուք այն թղթակի՞ցն եք, որ կամավոր ուզել է առաջին գիծ գնալ:

Դա ինձ համար նորություն էր: Ուրեմն համենայն դեպս ինչ-որ չափով հարգանքի արժանի է կապիտան Ստրելցովը՝

իմ նախկին պետը: Ինձ չի վարկաբեկել, ավելին՝ շատ շահավետ լուր է տարածել իմ մասին: Ես հավատում եմ, որ նա այդպես լավ է խոսել նաև այն մարդկանց մոտ, որոնք հարգել են «իմ» ցանկությունը:

- Այո, ես այն թղթակիցն եմ:

- Խմբագիրը շատ է գովում քեզ: «Լավ գրիչ ուներ,- ասում է: -Թեև դու իմ զարմից ես,- ասում է ինձ,- բայց նրա պես գրել չես կարողանում»:

Սա նույնպես նորություն է ինձ համար: Իսկապես հարգանքի արժանի է կապիտան Ստրելցովը: Իմ ներկայությամբ իմ գրածները չէր հավանում, որպեսզի չմեծամտանամ: Բայց, այնուամենայնիվ, ինքը մեծամտացել էր. «Իմ զարմից ես, բայց նրա պես գրել չես կարողանում»: Այդ նախադասությունը նա կարող էր ուրիշ կերպ էլ ասել. «Ինչպե՞ս հավատամ, որ իմ զարմից ես, իմ եղբոր կամ հորեղբոր տղան, երբ քեզ ժուռնալիստի շնորհք չի տրված: Բոլորն են գովում իմ տաղանդը, դու ո՞ւմ ես քաշել այդպես ապիկար»… Շատ հավանական է, որ նաև այդպես ասած լինի հարգելի կապիտանը նրան, բայց նա գերադասեց մյուս ձևակերպումը, որովհետև այստեղ վիրավորական քիչ բան կա իր հասցեին, ընդամենը մի կշտամբանք՝ «նրա պես գրել չես կարողանում»…

Այնուամենայնիվ ես պիտի գոհ լինեմ տաղանդավոր Ստրելցովից, որովհետև ինձ փոխարինող այս թղթակիցը և շատ ուրիշներ մտածում են, որ հաղթանակի համար պետք էր իմ գրիչը, բայց իմ հրացանն ավելի պետք էր, ուստի ես գրիչը զենքով փոխարինեցի:

Թղթակիցը մոտենում է գնդապետի վրանին: Այդպես մի քանի օր առաջ ես էլ մոտեցա: Գնդապետի որդին՝ Լևոնը, ավելի ճիշտ՝ համհարզը, նրան բացատրում է, որ գնդի

հրամանատարը չի ուզում, որ իր մասին ակնարկ գրվի, բայց թղթակիցն իրենն է պնդում:

- Թող ներս գա, Լևոն: - Պարզ լսում եմ գնդապետի ձայնը:

Մի կես ժամ հետո թղթակիցը դուրս է գալիս վրանից:

- Հը՞, փաստեր վերցրի՞ք:

- Շատ հարուստ կենսագրություն ունի գնդապետը, տասն ակնարկի հերիք կանի:

- Ուրեմն ձեզ փաստեր տվե՞ց…

- Այո, ինչ կա որ,- զարմանում է թղթակիցը:

- Տարօրինակ է:

- Իսկապես տարօրինակ էր: Հենց ներս մտա, հարցրեց՝ կրակել գիտե՞ք: Ասացի՝ քիչ-միչ: Եթե քեզ փաստեր չտամ, ասաց, խմբագիրդ կբարկանա, չէ՞: Կուզենա քեզնից ազատվել, չէ՞: Ասացի՝ կբարկանա, իսկ թե հետո ինչ կանի՝ չգիտեմ: Լավ, լավ, ասաց, թուղթ ու մատիտդ հանիր, դա էլ քո զենքն է: Միայն թե տես շատ չգովես ինձ, ես մարդու տալիք աղջիկ չեմ:

Եվ թղթակիցը թռվռալով հեռացավ:

***

…Ու ես նորից պիտի գնայի իմ մաշկով ստուգելու ֆելդմարշալ Սուվորովի իմաստության առաջին մասը՝ «դժվար է ուսման մեջ», իսկ երկրորդ մասը՝ «հեշտ է կռվում» հետո պիտի ստուգեի, բայց ոչ թե մաշկով այլ՝ կյանքով:

Սակայն այս անգամ սերժանտն ասաց, որ գնդապետն ինձ կանչում է: Թղթակցի գնալուց հետո իրադրությունը փոխվել էր: Հետախույզները թշնամու բանակից «լեզու» էին բերել գնդապետի մոտ: Ոչ ոք չգիտեր գերմաներեն, և գնդապետը հիշել էր ինձ:

- Դպրոցում ի՞նչ լեզու եք անցել:

- Գերմաներեն:

- Ահա և հատուկ քեզ համար մի գերմանացի ենք բերել, որ ստուգի, թե ինչպես ես սովորել,- կատակեց գնդապետը, հետո հոնքերը կիտեց՝ դե, սկսիր: Նա այս ասաց այնպիսի մի շեշտով, որ ունենում են միայն անողոք մարդիկ: Բայց գնդապետն անողոք մարդ չէ, ես այդ հաստատ գիտեմ, կարող է կատակել ինչքան ուզես և լրջանալ մի ակնթարթում: Չի ջրիկանա երբեք և կարող ես հավատալ նրա խոստումին, թեկուզ տված լինի ամենաթունդ կատակի պահին: Իսկ եթե դաժանացավ՝ շատ էլ մի վախենա, կլինի խիստ, բայց արդար: Առայժմ այդպես եմ մտածում նրա մասին, հատկապես հիմա, երբ կողքին կանգնած է Սեդան և ասես լույս է փռում նրա հոգու վրա:

Գերմանացու անունը Հանս է: Կապույտ աչքեր, որ լցված են տագնապով, բեթհովենյան ճակատ, որ փառքի պսակի համար չէ, այլ գնդակների: Թիկունքը լայն է, թևերը կարծես շարժվող գերաններ են, բայց մատները դողում են: Այդ մատները կարող են շնչահեղձ անել առյուծին, բայց դողում են ինը գրամ արճիճից: Մենք շատ ունենք այդ ինը գրամ արճիճներից, նա ոչ մեկը չունի: Մի քանի ժամ առաջ նա էլ մեզ պես էր, բայց մեր հետախույզները նրան կտրեցին իր ավտոմատից, իր երկաթե դիվիզիայից, իր Գերմանիայից և դարձրին մեր գերին, որին հանգիստ չենք տալիս, խոստանում ենք խնայել կյանքը, եթե մեզ հավաստի տվյալներ տա իրենց ստորաբաժանման մասին: Գերմանացին կրկնում է, որ ինքը երեսը քաշած կաթի է նման, ինչ որ գիտեր՝ բոլորն արդեն ասել է նախորդ հարցաքննողներին: Ուզո՞ւմ եք՝ հազար անգամ նույնը կասի և ձեզ, ձեր ոտքերի հողը կհամբուրի, միայն թե չսպանեք: Ախր սիրած աղջիկ ունի, որը սպասում է նրա տունդարձին: Գիտեք ինչքան լավ է երգում, նա մե՛ծ, շատ մեծ երգչուհի կդառնա… Գերմանացին, հարկավ, չի հասկանում,

որ ես եմ իր սիրած աղջկան երգչուհի դարձնում: Բայց Սեդան հասկանում է երևի և ինձ թվում է, թե շիկնում է: Այնպես խորն եմ սիրում իմ Գերտրուդին (կուզենայի ասել՝ իմ Սեդային), նրա աչքերը երկու սև ջրհոր են, որ իրենց են ձգում պապակածիս, նրա մազերն ամենազով հովեր են, որ կզովացնեն կռվում շոգածիս...

- Ֆրիցին ասա, որ մենք բժիշկ չենք, չենք եկել զառանցանք լսելու,- մռայլ ընդհատում է գնդապետը: - Մեր համբերությունը սահման ունի:

Ես զգում եմ իմ սխալը, որի զոհը կարող էր դառնալ ինձ պես սիրահարված մի ուրիշ մարդ: Ինչո՞ւ հորինեցի այդ պաթետիկ խոսքերը, մի՞թե դրանք են այն բառերը, որ ես փնտրում էի Սեդային ասելու համար և չէի գտնում: Որ ասում են սերը մարդուն բանաստեղծ է դարձնում՝ երևի ճիշտ է: Բայց թող պաթետիկ բանաստեղծ չդարձնի:

- Գնդապետը հարցնում է, թե…

Հասկանալի է, գնդապետի խոսքը չեմ թարգմանում, այլ հորինում եմ մի հարց նրանց զորքերի դասավորության մասին: «Լեզուն» չոքում է գնդապետի առջև և իր կապույտ աչքերը նրա կապույտ աչքերին հառած փղձկում է, թե ինքն ավելին չգիտի, և եթե շատ է հեռ-գնդապետն ուզում, որ նոր բան լսի, ապա ինքը ստիպված է հնարելու:

Եվ նորից է կրկնում իր իմացածը, այս անգամ ավելացնելով մի մանրամասն իր կյանքից: Ինքն անցել է Հիտլերի նկարի կողքով և ձեռքը բարձրացրած չի գոչել «հայլ Հիտլեր»: Վիճել է իր մանկության ընկերոջ հետ, որը նրա երեսին շպրտել էր. «Դու արժանի չես արիական ցեղին», և գնացել էր մատնելու: Նրանք ինձ կսպանեին,- ասում է Հանսը: - Ձեր հետախույզներն ինձ փախցրին, հիմա դուք կսպանեք ինձ: Մարդիկ, ի՞նչ եմ արել ձեզ, ինչո՞ւ եք ինձ ատում: Ես

պատերազմ չեմ ուզում, ես ոչ մեկին չեմ ուզում սպանել, ես կիսատ եմ թողել իմ Գերտրուդի դիմանկարը… Ես նկարիչ եմ, ուզո՞ւմ եք բոլորիդ նկարեմ, թուղթ ու մատիտ տվեք: Դուք խոժոռ դեմքեր ունեք, դուք ատում եք ինձ:

Գնդապետը լսում էր իմ թարգմանությունը և չէր ընդհատում, միայն թե նրա ճակատին ավելի էին ուրվագծվում կնճիռները: Ես թարգմանում էի և նայում Սեդայի կողմը: Քանի՛ մարդ են այստեղ կանգնած, մենակ ես գիտեմ գերմաներեն և տեսնո՞ւմ ես ինչքան վարժ եմ թարգմանում: Ինձ թվում է, Սեդան տեսնում է և հպարտանում, որ այսպիսի մեկը սիրում է իրեն: Ես նրան առաջարկություն չեմ արել, ավելի ճիշտ՝ արել եմ լուռ ձևով, նա ինձ մերժել է լուռ ձևով: Այստեղից շատ ավելի հեշտ է անցնել դրական պատասխանի, քան եթե բառերով ասած լիներ, որ չի սիրում: Չէ, դեռևս բոլոր կամուրջները քանդված չեն: Հույս, բոլոր մերժված սիրահարների սփոփանքն ես, որովհետև հաճախ է պատահում, որ «ոչը» «այո» է դառնում: Ավելին, աղջիկներ կան, որ թեև սիրում են, բայց միանգամից չեն համաձայնում: Երանի Սեդան նրանցից լինի:

- Ինձ թուղթ ու մատիտ տվեք,- շարունակում է աղաչել գերմանացին,- մի պատառ թուղթ ու եղունգի չափ մատիտ, ես ձեզ բոլորիդ կնկարեմ, այնպես նման ձեզ, որ չեք տարբերի ֆոտոյից: Կուղարկեք ձեր գերտրուդներին: Մի սպանեք ինձ, ես դեռ բան չեմ ասել աշխարհին: Մի՞թե ծնվեցի, որ զգամ, թե շատ բան ունեմ ասելու և մեռնեմ: Ո՞ւմ համար, ինչի՞ համար…

Գերմանացու աչքերը վառվում են տենդորեն, ինձ թվում է, թե նա խելագարվում է: Ես առաջին անգամ եմ պատերազմը զգում այսքան մոտիկ և սարսռում եմ, չէ՞ որ այս գերմանացու

փոխարեն ես կարող էի լինել և թշնամական աչքեր կարող էին ինձ նայել այսպես ատելությամբ:

- Դու չես մեռնի, ֆրից,- ասում է գնդապետը, ես թեթևացած շունչ եմ քաշում:

Մի քանի ժամ հետո ֆրիցին ուղարկում են ավելի խոր թիկունք, իսկ ինձ նշանակում են ժամապահ:

***

Լուսինը բարձրանում է լեռան թիկունքից: Ես արև եմ ուզում, արևը ցրում է մութ ստվերները, և չես կասկածում, թե ծառի տակ երևացող սևը մարդ է: Ի՞նչ իմանաս, ծառի ետևից չե՞ն հայտնվի թշնամու հետախույզները, և բերանդ մի լաթ խցկած՝ քեզ քարշ չե՞ն տա իրենց բանակը: Այո, ինձ համար սկսվում է իսկական պատերազմը: Այ, սա է մարտական առաջադրանքը, թե չէ խմբագիր Ստրելցովն ակնարկ գրելն էլ մարտական առաջադրանք էր համարում: Զգույշ, զգույշ, Գարեգին, մի տարվիր մտքերով, դա կարող է թանկ նստել քո վրա, աչքերդ լայն բացած հսկիր այս հրանոթներին, որ վաղը պիտի ահեղ դղրդան: Չէ, վախից պիտի լեղապատառ գոռան: Ի՞նչ ասեցի՝ վախից գոռա՞ն: Երկա՞թն էլ վախ ունի: Այ, եթե հիմա ինձ վրա հարձակվեն, ես այնպես զարհուրելի կգոռամ, որ թոքերս կպայթեն:

Ինչ շշուկներ են: Կրակե՞լ: Ոչ, ասված է, որ նախ հարկավոր է ձայն տալ՝ կանգնի՛ր, ո՞վ է գալիս: Հետո հարցնել նշանաբանը: Շշուկները մոտենում են:

- Վալյա, դու սիրե՞լ ես երբևէ,- հարցնում է մեկը:

- Սիրել եմ, Սեդա:

Լավ է, որ միմյանց անուն են տալիս, և ես իսկույն ճանաչում եմ մեր բուժքրոջը և Սեդային: Դա ինձ համար լավ է, որովհետև սիրտս, որ սկսել էր կուչ գալ, արդեն հանդարտ է

խփում: Իսկ նրանք՝ աղջիկները, չե՞ն վախենում: Ինչի՞ց պիտի վախենան, դեռ մութը նոր է ընկել, բոլորն արթուն են դեռ: Ամոթ, ամոթ ինձ: Բայց ինձ չեն նկատել: Ինչ կա որ, վատ չէ, եթե ժամապահին չեն նկատում, իսկ ժամապահը տեսնում է իր շուրջն ինչպես ափի մեջ: «Կանգնի՛ր, ո՞վ է գալիս»-ը թող իմ կոկորդում մնա: Բախտս պարզապես բերում է, կլսեմ նրանց խոսակցությունը, գուցե Սեդան… ոչ, ոչ, ես չեմ ուզում, որ այս անգամ բառերով ասի, որ չի սիրում ինձ:

- Իսկ քեզ սիրե՞լ են, Վալյա:

- Շա՛տ, բայց ինչո՞ւ ես հարցնում:

- Ես այդ չէի ուզում հարցնել, այլ ուրիշ բան, Վալյա: Դու մերժելիս տխրո՞ւմ ես:

- Ինչո՞ւ տխրեմ: Չէ՞ որ նշանակում է գեղեցիկ եմ ու ինձ սիրում են:

- Չէ, Վալյա, ուրիշ է, երբ գիտես, որ մերժվողը մի «ա՛խ» կքաշի և կմոռանա քեզ: Բայց երբ հոգուդ խորքն են նայում երկու անհույս անդունդներ… Դա ուրիշ է, դա սարսափելի է:

- Դու այն ժուռնալիստի՞ն նկատի ունես, որ մեր գունդը բերեցին: Ասում են՝ քեզ համար է դիմում տվել և եկել մեզ մոտ:

Ես չեմ լսում, ինչ է պատասխանում Սեդան, որովհետև ականջներս լցվում են աղմուկով, սիրտս խփում է այնպես ուժգնորեն, որ ասես հիմա կուրծքս ճեղքելով դուրս կթռչի: Մրրիկ է իմ ներսում: Իսկ երբ հանդարտվում է մրրիկը, այլևս չկան Սեդան ու բուժքույրը: «Երկու անհույս անդունդներ», «երկու անհույս անդունդներ» կրկնվում է իմ էության մեջ, իմ ականջներում: Իմ աչքերն են այդ «երկու անհույս անդունդները»: Ես չեմ տեսնում իմ աչքերը, նա տեսնում է և տառապում: Իսկապես, ես շատ տխուր եմ: Ի՞նչ կասի նա, եթե հիմա տեսնի աչքերս, ինչի՞ հետ կհամեմատի: Երևի երկու շիրմափոսերի: Դե, էլ ի՞նչ մնաց, հիմա էլ կարո՞ղ ես թաքուն

հուսալ, որ կսիրվես: Երբ ինձ բերին այս գունդը, երանի նա գնացած լիներ Երևան: Ինչո՞ւ, ինչո՞ւ մնաց: Գնդապետի և նրա որդու ինչի՞ն էր պետք: Հարազատից իրենց կարոտն էին առնում: Իսկ ես ինչպե՞ս առնեմ իմ կարոտը: Հիմար, հիմար: Ո՞ւմ դեմ ես բողոքում: Ճակատագրի՞: Բողոքիր, ինչքան ուզում ես, միևնույն է, դու նրան պիտի հանդիպեիր և հանդիպել ես, պիտի տանջվեիր և տանջվում ես: «Երկու անհույս անդունդներ»: Բայց քեզ հետ նրան էլ ես տանջում, դա է վատը: Եթե կարողանաս չսիրել՝ քեզ համար էլ է լավ, նրա համար էլ: Մի մտածիր նրա մասին, զգոն եղիր, ախր քեզ մարտական առաջադրանք է տրված: Ի՛նչ լավ կլիներ, որ հրացանը մի կողմ շպրտած պառկեի այս խոտերի մեջ ու հեկեկայի: Ասում են՝ արցունքը թեթևացնում է սիրտը, և դա ճիշտ է, որովհետև ես չեմ կարողանում լալ և սիրտս ծանրությունից կարծես ներքև է ընկնում: Հեկեկայի այս կանաչների մեջ և երբ թեթևացած վեր նայեի՝ երկնքի փոխարեն Սեդայի աչքերը բացված լինեին վրաս:

- Կարմիր բանակային Սիմոնյան, վատ եք կատարում առաջադրանքը: - Գնդապետն է: Ես չեմ նկատել, թե ինչպես է նա մոտեցել ինձ: Պիտի նրան տեսած լինեի առնվազն հիսուն մետրի վրա և թողնեի ինձ մոտենալ միայն նշանաբառը հարցնելուց հետո:

- Այսպես չեն պահակություն անում,- շարունակում է գնդապետը: Մթության մեջ չեմ տեսնում նրա դեմքի արտահայտությունը, բայց գիտեմ, որ այն խիստ է, որովհետև խոսում է սառն, ասես սառույցներ է շպրտում վրաս: - Եթե ուրիշ ժամանակ լիներ՝ ես քեզ տասը օր կբանտարկեի: Շատ քնքույշ եք մեծացել:

Եվ մթության մեջ կորչում է գնդապետի սիլուետը, բայց դեռ ինձ թվում է, թե նրա շունչը հասնում է քթիս: Շատ էր

մոտեցել, ինչպես զայրացած մարդիկ, որ պատրաստվում են խփել քեզ, բայց զսպում են իրենց՝ բավարարվելով շանթահարող նայվածքով: Իսկ վերից ժպտում են աստղերը, մի բարակ ամպ է ծածկում լուսնի երեսը՝ ջնջելով նրա պայծառությունը: Արդյոք գնդապետի զայրութն էլ մի նեղշերտ ա՞մպ էր, թե՞ մթագնեց մի ողջ երկինք, որը դեռ կարկուտ պիտի թափի վրաս: Իսկապես, ինձ տասը օր կբանտարկեր, բայց միևնույն է, ես դարձյալ կմտածեի, որ նա իր հոգու խորքում հայրաբար բարի է: Մարտնչող բարի, որը ձեռքերը չի խաչում կրծքին ու կարեկցանքի արցունքներ թափում, այլ կիտում է հոնքերը խեղճության վրա, պահանջում, որ սա բարձրանա, ուժ դառնա: Այդպես բարի է եղել և Սուվորովը, երբ հռչակել է՝ «դժվար է ուսման մեջ, հեշտ է կռվում»: Միայն թե գնդապետը պիտի իմանա, որ սերն ամենքին էլ կարող է շեղել, կարող է մոռացնել տալ այն պարտականությունները, որ մարդու ուսերին դնում է ոչ սերը:

Հիմա պետք է որ չորս ժամը լրացած լինի, և ուր որ է կգան ինձ փոխարինելու: Իհարկե, չորս ժամ կլինի: Մոտ մեկ ժամ կլիներ կանգնել էի՝ լսեցի Մեդայի և Վալյայի զրույցը, դրանից երկու ժամ հետո գնդապետը եկավ ստուգելու, մեկ ժամ էլ նրանից հետո անցած կլինի: Ինչո՞ւ չեն գալիս փոխարինելու, մոռացե՞լ են: Եկողն ինձ «գնդապետի փեսա» անվանարկողն է՝ Վոլկովը: Ես ատում եմ նրան, դուրս պրծած աչքերով այդ Վոլկովին, բայց կարոտով սպասում եմ նրա գալուն: Ատում եմ և կարոտում: Եթե սա ասեի խմբագիր Ստրելցովին և պնդեի, որ զուտ ճշմարտություն է, նա առնվազն ցնդաբանություն կհամարեր իմ ասածը. ինչպե՞ս կարելի է ատել մի մարդու և կարոտել նրան: Բայց ահա ես կարոտած աչքս հառել եմ այն ճանապարհին, որով նա պիտի գա: Ուշանում է: Արդեն հինգ ժամ կլինի, որ ես

պահակակետում եմ: Ենթադրենք, այդ ատելի մարդը հիմա նոր է դուրս եկել: Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, տասնութ, քսանութ, հիսունինը, վաթսուն… Սա մեկ րոպե: Մեկ, երկու, երեք, չորս... Սա երկու րոպե, սա երեք րոպե, սա չորս րոպե, սա տասնմեկ րոպե… ոչ, մինչև այստեղ գալը տաս րոպեի ճանապարհ է: Վոլկովն անպայման ուրիշ տեղ է գնացել, դիտմամբ չի գալիս ինձ փոխարինելու, որպեսզի ես տանջվեմ: Սադիստ, իսկական սադիստ: Հերն էլ անիծած, թող չգա, ես ուրիշ բաների մասին կմտածեմ, և կանցնի ժամանակը: Ինձ համար միևնույնը չէ՞, թե քանի ժամ է անցել: Հո՞ չեմ ուշանում ժամադրությունից: Վերջացավ ամեն ինչ: Երանի այն օրվան, երբ իջնում էի կածանով և լսեցի «Ես կսիրեի այս վրացուն» ճակատագրական խոսքը: Ինչ քաղցր էին հնչում մոտեցող սիրո ոտնաձայները: Մարդուն տրված ամենամեծ բանը երևի երջանկության հույսն է:

Ախր ինչո՞ւ է ուշանում Վոլկովը: Գուցե հիվա՞նդ է: Բայց այդ դեպքում ուրիշին կուղարկեին: Իսկ եթե չուղարկեն՝ ես պիտի կանգնեմ մինչև լույս: Պիտի չնստեմ, չծխեմ, չքնեմ… դժվար է: Դե պատերազմն էլ նրա համար է, որ այսպիսի դժվարություններ լինեն: Բայց ահա մոտենում է մեկը: Պարզ է, Վոլկովն է:

- Կանգնիր, ո՞վ է գալիս:

- Յուրային է:

- Նշանաբա՞ռը:

Նա ասում է նշանաբանը, և ես թույլ եմ տալիս ինձ մոտենալ: Վոլկովը չէ, այլ մեր սերժանտը, եկել է ստուգելու, թե ինչպես եմ կատարում մարտական առաջադրանքը: Գովում է իմ զգոնությունը, իսկ ես կուզենայի, որ Վոլկովը լիներ, թեկուզ և ամենավատ բաներն ինձ ասեր: Դժվար, շատ դժվար է ժամապահ լինելը:

- Ընկեր սերժանտ, ժամը քանի՞սն է:

Լուսնի լույսի տակ շողում է սերժանտի ժամացույցը: Ընդամենը երկու ժամ է անցել, ինչ ես պահակ եմ այստեղ: Երկու ժամ, այսինքն՝ ուղիղ կեսը: Սարսափելի է, ինչքան կանգնել եմ՝ նույնքան էլ պիտի կանգնեմ, որ գա Վոլկովը: Ինչո՞ւ այսպես դժվար է անցնում ժամանակը: Պատահել է՝ թափառել եմ մեր սարերում, մեկ էլ նայել եմ՝ արևը մայր է մտնում: Այս ե՞րբ անցավ օրը, մտածել եմ ես: Եթե ինձ հրամայեին, որ թափառելիս իմ կամքով չնստեմ ուզածս քարին, չթեքվեմ աղբյուրի գլգլան ջրին ու չմարեմ ծարավս իմ կամքով, երևի այսպես դանդաղ կանցներ ժամանակը:

Բայց աշխարհում ամեն բան վերջ ունի: Վերջ ունեցավ նաև իմ ժամապահությունը: Այս անգամ մթան միջից ծնվեց Վոլկովի ուրվագիծը: Նա նշանաբանը չասաց, այլ պարզապես ձայն տվեց՝ ես եմ, գնդապետի փեսա: Այնպես հոգնած էի, որ ուժ չունեի բարկանալու: Հրանոթները հանձնեցի նրան և օրորվելով հասա մեր վրանը: Շինելս քաշեցի վրաս և դիակի պես փռվեցի: Մի ակնթարթ հետո մեկը ոտքիցս քաշեց.

- Վեր կաց:

Այդ ակնթարթը յոթ ժամ էր:

***

Ինձ հետ արթնացան պատերազմը, սերը, այն մտքերը, թե կռվի դաշտում հավերժական սիրո մասին չեն խոսում, մի պատահական գնդակ քեզնից կխլի քո սիրած աղջկան, երկինքը, արևը, քնելու հաճույքն ու քնից շուտ արթնանալու տհաճությունը: Հիշողությանս ծալքերից լողաց ու դուրս եկավ առ այսօր ասված ամենադաժան խոսքը՝ «երկու անհույս անդունդներ»: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ ամենակարեկցական խոսքը: Բայց դրանից ի՞նչ է փոխվում, երկու դեպքում էլ ասում

են, որ ես մերժված եմ: Քնից նոր եմ արթնացել, պիտի առույգ լինեմ, բայց տխուր նստել եմ փայտե երկար նստարանի ծայրին և սպասում եմ, որ նախաճաշս բերեն. ուտելուց հետո նորից պիտի պահակ կանգնեմ: Միտքս ցրված է, ձեռքերս խաչել եմ կրծքիս, կարծես հենց նոր եմ թաղել հարազատիս և աշխարհն ինձ համար դարձել է սգարան: Դարձյալ չեմ նկատում, թե ինչպես է ինձ մոտենում գնդապետը:

- Շան որդի, մի ամբողջ գիշեր չթողեցիր քնեմ: Ի՞նչ մարդ ես դու, չես կարողանում մի աղջկա հետ խոսել: Մարդ նայում է քեզ՝ սիրտը մղկտում է: Ուզեցի քո փոխարեն ինքս խոսել: Բայց ախր ինչո՞ւ: Աղջիկը քեզ չի սիրում, ես ինչպե՞ս խորհուրդ տամ, որ կյանքը կապի քեզ պես խեղճ ու կրակի հետ: Գնա, եթե կարող ես՝ նվաճիր սիրտը: Ուժով նվաճիր, օձի լեզու թափելով նվաճիր, ինչպես ուզում ես նվաճիր, միայն թե այդպես խեղճացած չերևաս աչքիս: Եվ ծառայությունդ էլ լավ կատարիր:

Ու հեռացավ: Մի խորին ամոթանք համակեց ինձ: Եթե Սեդան այս պահին ինձ մոտ լիներ, ես չգիտեի, թե ինչ կանեի, գուցե իսկապես օձի լեզու կթափեի, կամ կբռնեի ու ամուր-ամուր կհամբուրեի, որպեսզի ոչ ոք ինձ չասեր խեղճ ու կրակ: Բայց հեռու է Սեդան, և ես ոչինչ չունեմ անելու զինվորների քրքիջին դիմանալուց բացի.

- Հը՞, ի՞նչ ասաց գնդապետը ձեր լեզվով:

- Պարզ է, ասաց, որ իր ձեռքով է նրանց պսակելու:

- Ես պատրաստ եմ տերտերը լինել:

- Ես՝ քավորը:

- Բայց, ափսո՜ս, կիսատ է մնալու հարսանիքը: Պատրաստվիր, գնդապետի փեսա, գնում ենք:

- Էսէսական տեսած կա՞ս: Լավ թմբուկ են խփում, հիանալի նվագողներ կլինեն հարսանիքիդ:

- Իսկ որտեղի՞ց գիտես, որ գնալու ենք:

Ծաղրի փոթորիկն անցել է իմ վրայով, հիմա ուրիշ բանից կխոսեն:

- Որտեղից գիտե՞մ: Այն բանից, որ գունդն արդեն համալրված է, իսկ ռազմաճակատում համալրված գունդը երկար չի սպասում:

Ինձ ինչո՞ւ էր թվում, թե այստեղ երկար կմնանք, գոնե մեկ ամիս: Այդպես մարդուն թվում է, թե երկար կապրի, բայց հանկարծ դեմը կանգնում է մահը, ու վերջ: Վերջ ֆաներայից պատրաստված թիրախների վրա կրակելուն, հիմա իսկական ֆրիցի վրա կկրակես, բայց նա էլ քեզ վրա կկրակի: Հիմա դու էլ ես թիրախ: Չէ, սուտ կլինի: Տասը օր էլ չկա, ինչ այս գնդում եմ և այսպես շուտ առաջին գի՞ծ… Սեդային այլևս չեմ տեսնի…

Այն զինվորը, որ ասաց «գնալու ենք», երևի լսել էր այդ մասին, այլապես դժվար թե այդ խոսքն այսպիսի ճշգրտությամբ զուգադիպեր գնալու պատրաստություններին: Ես պահակ չկանգնեցի, իրենք՝ հրետանավորներն են զբաղված իրենց ահեղ զենքով: Այսպես, ուրեմն, գնում ենք առաջին գիծ: Իհարկե, ոչ հիմա, կսպասենք մինչև մութն ընկնի, որպեսզի թշնամին մեզ չնկատի: Թշնամին մեզ ուղղված ամենատես հեռադիտակ է, հրանոթի երկար փող, արճիճի անձրև, և մահ, մահ:

Տեսնես մի վերջին անգամ Սեդան չի՞ երգելու: Դեպի մահ գնացող զինվորներն արժանի են նրա երգը մի անգամ էլ լսելու: Ոչ, նա չի երգի: Քիչ հետո մի ինքնաթիռ է թռչելու թիկունք: Ուրեմն վերջացա՞վ ամեն ինչ: Վերջացավ:

- Դու մի ափսոսա, գնդապետի փեսա, որ երկրորդ անգամ պահակ չկանգնեցիր: - Վոլկովն է. անցնում էր իմ կողքով և կանգ առավ: - Ինչ ես կարծում՝ պառկելը կանգնելուց լավ չէ՞: Առաջին գծում պառկելու ենք:

Եվ հռհռում է Վոլկովը. երևի իրեն դուր է եկել իր սրամտությունը: Իսկ ինձ դուր չեկավ, գուցե այն պատճառով, որ մեզնից շատերն այլևս վեր չեն կենալու պառկած տեղից, իսկ դրա համար չեն հռհռում. զինվորին դեպի մահ ուղարկելիս պիտի պահպանել հանդիսավոր թախիծը, մի տեսակ կիսաշշուկով պիտի խոսել, իսկ նա հռհռում է: Կարծես ինքն էլ թաց հողին պառկողներից մեկը չի լինելու:

- Լավ աղջիկ է Սեդան,- շարունակում է Վոլկովը,- այնպես նման է քրոջս, նրա պես բարակիրան: Այնպես որ, կարող եմ ես էլ փեսա անվանել քեզ:

Վոլկովի խոսքերն ամպի ստվերի պես սահում են առանց աննշան հետք իսկ թողնելու սրտիս վրա: Ես նրան ատում եմ, նրա դուրս պրծած աչքերը կարծես ափսեներ են, որ թվում է, ուր որ է կընկնեն և կփշրվեն, բայց հիմա նա ինձ համար չկա, իմ էությունն այնպես է լցվել ուրիշ բաներով, որ նրա համար տեղ չի մնացել: Վերջացա՛վ, ամեն ինչ վերջացա՛վ, ես այլևս չեմ տեսնի Սեդային: Ահա, ահա վերջին անգամ եմ տեսնում: Իմ կողմն է գալիս Լևոնի հետ՝ իր մորեղբոր տղայի, որին սկսում եմ պաշտել: Գնդապետը ժամանակ չունի ինձնով զբաղվելու, և ես մտերմացել եմ նրա որդու հետ: Գալիս է Սեդան, և քամին նրա շրջազգեստը մեկ փաթաթում է ոտքերին, մեկ էլ բացում է պարաշյուտի պես, բայց գեղեցկուհի պարաշյուտիստը ձգելով «թելերը»՝ գալիս է դեպի ինձ: Այնպես մոտ է արդեն: Ոչ, երբեք այսքան մոտ չէր եղել, արդեն շունչն է կպչում դեմքիս: Համբուրեց ճակատս: Նայեց, խոր նայեց աչքերիս մեջ, որ այդ պահին պետք է «երկու անհույս անդունդներ» չլինեին և շուրթերը հպեց շուրթերիս, օրը ցերեկով, Վոլկովի և Լևոնի ներկայությամբ:

- Ներիր, զինվոր…

Ու հեռացավ արագ, գրեթե փախավ: Ինձ հասցե չտվեց, չխոստացավ հանդիպում պատերազմից հետո, փախավ, որ շուտ ազատվի իմ սիրակարոտ նայվածքից: «Ներիր, զինվոր»… Ուզում էր ասել՝ դու դեպի մահ ես գնում, ներիր, որ վշտացնում եմ քեզ, չեմ խոստանում ապագա հանդիպում: Բայց ինչո՞ւ վառվում են շուրթերս: Թող վերադառնար, նորից համբուրեր, թեկուզ և որոտար, որ ինձ չի սիրում: Գրկեր, համբուրեր կամ թույլ տար, որ շոյեմ իր մազերը: «Ներիր, զինվոր», իսկ ի՞նչ կարող եմ անել ներելուց բացի: Երանի գեթ մի ակնթարթ էլ կողքիս մնար, գոնե՝ մի «Ներում եմ» ասելու չափ: Մի անգամ էլ ասեր՝ «Ներիր, զինվոր» ու գնար: Քնքշություն կար նրա ձայնի մեջ և թախիծ: Այդպես չե՛ն ուզում վշտացնել մեռնողին: Կամ դեպի մահ գնացողին:

Ես երբեք մահն այսքան մոտիկ չէի զգացել:

Իսկ կյանքն ահա ինքնաթիռ նստած վերադառնում է Երևան: Փայլում են երկաթե թռչունի հսկա թևերն արևի տակ: Բայց ինչպես ամենուր, այստեղ ևս մահը հետապնդում է կյանքին, հայտվում են երկու «մեսերշմիդտներ» և կատաղի արագությամբ սլանում մեր ինքնաթիռի ուղղությամբ: Չլինի՞ թե հասնեն: Սեդայենց ինքնաթիռը կորավ սարերի ետևում, մի քիչ էլ և «մեսերշմիդտները» նույնպես անհայտացան: Կհասնեն և ցած կգցեն մեր ինքնաթիռը, որը վիրավորներ է տեղափոխում: Նրանց մեջ միայն մեկը վիրավոր չէ, Սեդան, որի էլ սիրտն է գուցե տնքում, որ չի կարող սիրել գնդակների դեմ ելնող զինվորին:

Իսկ եթե այնուամենայնիվ չմեռնեմ ես և պատերազմից հետո վերադառնամ, Սեդան ամուսնացած կլինի:

Դու էլ գնա նոր սեր արա,

Էսպես է կարգն աշխարհի[1]:

Ինչո՞ւ հիշեցի այս տողերը, որոնք հանկարծ շատ իմաստալից են թվում: Սպասիր, իսկ եթե ես էլ գրեմ այսպիսի տողեր: Ուրեմն պատերազմից հետո վերադառնում եմ և Սեդան իր ամուսնուն թևանցուկ արած՝ անցնում է իմ կողքով: Ես ընտրում եմ ուրիշի: Ոչ, ոչ, ուրիշ ոչ ոք չի կարող ինձ երջանկացնել.

Լավ է քո ձեռքով տված ջուրը,
Քան թե ուրիշի ձեռքով՝ գինին,
Լավ է շնչել քո անուշ բույրը,
Քան թե համբուրել ուրիշ մեկին:

Կարծես թե ստացվում է: Դանթեն անմահացրեց իր Բեաթրիչեին, Պետրարկան՝ Լաուրային: Պատերազմի դաշտում «Աստվածային կատակերգություն» չես գրի, սոնետները տասնչորս տողից են բաղկացած՝ կարելի է փորձել: Բայց ես չեմ ուսումնասիրել Պետրարկայի սոնետների կառուցվածքը: Ոչինչ, Հայնեի գրածներից մի քանիսն անգիր գիտեմ: Նա ունի սոնետների պսակ՝ նվիրված մորը: Ես սոնետների պսակ կնվիրեմ Սեդային: Ինձ ներեցեք, մեծեր, որ իմ անունը դնում եմ ձերի կողքին, ախր շատ եմ ուզում, որ նա լսի իմ սրտի տրոփյունը: Նա մեծ երգչուհի կդառնա, իսկ ես… ինչպե՜ս կուզենայի մեծ բանաստեղծ դառնալ: Այդ դեպքում ինձ կսպասեր:

Սոնետների պսակ՝ երևի երկու-երեք տասնյակ սոնետներ: Դրանցից առաջինը պետք է նախերգանքի պես բան լինի: Եվ սկսում եմ գրել: Շուրջս պատրաստվում են

[1] Հովհ. Թումանյան, «Անուշ»

մեկնել առաջին գիծ, ես էլ եմ պատրաստվում, բայց ուզում եմ ստեղծել իմ պսակը և դնել Սեդայի ճակատին: Թող աշխարհն իմանա, թե ինչպես է մի զինվոր սիրել մեծանուն երգչուհուն: Թող դարերն իմանան: Եվ ամենից առաջ Սեդան ինքն իմանա:

Մութ քառսից, որ ստեղծագործության նյութ է համարվում, պոկվում են առանձին տողեր: Քիչ-քիչ կապ է հաստատվում նրանց միջև և ծնվում է առաջին սոնետը.

Մենակ ես չէ, որ հառաչել եմ սիրուց,
Ինձնից առաջ Պետրոս Դուրյանն է եղել,
Հայնեն աշխարհն արցունքներով է հեղել,
Սիրտ, դիմացիր՝ սիրո ճամփին հինավուրց:

Խուլ տնքալով բարձրացել են նրանք վեր
Եվ կանչել է նրանց կատարն արևոտ,
Շողերով են սրբել աչքերն արցունքոտ,
Սիրտ, դու էլ ե՛լ դեպի արև ու նոր սեր:

Մի՞թե, ավա՜ղ, խորտակվում եմ ես սիրուց,
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար…
Սիրտ, սթափվիր, առ քնարդ վշտահար,

Եթե լռես՝ աշխարհն ինչպե՞ս իմանա,
Թե ինչքան ազնվասիրտ, չքնաղ է նա,
Ով քեզ տվեց այսքան արցունք ու խավար:

Իմ թղթերի մեջ այսօր էլ կա այդ սոնետը, որին հաջորդեցին նորերը: Յոթ հատ են: Ութերորդը չստացվեց, որովհետև ես հանկարծ զգացի, որ դրանցից ոչ մեկը չի ապրի դարեր: Բայց թող մնան իմ թղթերում, ինչպես օրագրի տողերն

են մնում: Դրանից հետո ես այլևս չփորձեցի բանաստեղծություն գրել: Գուցե այն պատճառով, որ պատերազմը մարդու մեջ սպանում է բանաստեղծությունը, կամ այնպես է լարում ջղերդ և մկաններդ, որ ուժասպառ ես լինում և՛ հոգով, և՛ մարմնով, ու գրիչ վերցնելն անտանելի դժվար է դառնում: Քսան տարի հետո ես կարդում եմ այդ սոնետները և հիշում եմ այն կարճ դադարները, որ ես հանգստանալու փոխարեն տրամադրում էի գրելուն: Այնուամենայնիվ ես այնքան էլ դժգոհ չեմ իմ չափածո տողերից: Եթե Սեդան իմ կողքին լիներ և խրախուսեր իմ փորձերը, նախ՝ ես չէի դադարի գրել և հետո, ո՞վ գիտի, գուցե իսկական հաջողության հասնեի, չէ՞ որ սերը թևեր է տալիս և պատահական չէ, որ գրական հսկաներից մեկը, կարծեմ Շելլին, ասել է, թե բանաստեղծին երկու բան է ոգևորում՝ սերը և հռչակը: Եթե սերը նույնիսկ դավաճանած լիներ ինձ, ապա հռչակն արվեստի մթին բավիղներով ինձ առաջ կմղեր դեպի Պառնաս: Հիմա բոլորն ինձ կճանաչեին: Այս տարեց մարդը, որ պաղպաղակի համար լաց լինող երեխա ունի, կթեքվեր նրա ականջին և կշշնջար, որ նա լացը կտրի, որովհետև իրենց կողքին, նույն կուպեում նստած է մի հռչակավոր բանաստեղծ, որին չի կարելի խանգարել:

Վագոնի ուղեկցորդուհին ավլել, դուրս է թափել կակաչները, որ մի ուրիշ Սեդա նվիրել էր ոչ մի բանով աչքի չընկած մի ժուռնալիստի: Բայց, ճիշտն ասած, ես մի քիչ բամբասեցի ինձ, իմ ակնարկների ժողովածուն արժանացել է հատուկ մրցանակի, որ սահմանել էր ժուռնալիստների միությունը: Բացի դրանից, ինձ է հանձնարարված ակնարկ գրել գնդապետ Մուշեղ Սմբատյանի մասին, դա էլ ինչ-որ բան նշանակում է: Ընթերցողները սպասում են իմ գրածներին, ուրեմն իմ ակնարկներն ինչ-որ չափով աչքի են ընկնում:

Ականջդ կանչի, խմբագիր Ստրելցով, որտե՞ղ ես հիմա, ապրո՞ւմ ես, թե պատերազմի մեքենան քո վրայով էլ անցավ ու ճզմեց քեզ: Դու հավանում էիր իմ ոճը, թեև ինձ տանել չէիր կարողանում: Իսկապես, իմ անցյալն ինչքան աղքատ կլիներ, եթե դու ինձ ուղարկել չտայիր կրակի առաջին գիծ: Դու այն ժամանակ ասացիր՝ «ինչ-որ երգչուհու…», և չիմացար, որ աշխարհի բոլոր լավագույն բաները ես մտովի նվիրեցի նրան, բառարանի բոլոր քնքույշ բառերը շնչացի նրա ականջին: Այն էլ ասեմ, որ երբ նա թռավ Երևան, ես իմ հոգու աչքերով ավելի հստակ տեսա նրա դիմագծերը: Գեղեցիկ էր նա մինչ այդ, բայց հեռանալուց հետո ինձ թվաց, թե եղել եմ դրախտում, տեսել եմ փերիներից մեկին և հետո ինձ վտարել են դրախտից՝ իմանալու համար, թե մարդն ինչպես է դիմանում կորուստներից ամենածանրին: Նա ինձ համար իսկական հավերժահարս էր՝ փրփուրե շորերով: Ես այդ բառը գործածում եմ չվախենալով պաթետիկ երևալուց, որովհետև գիտեմ, որ իրականությունից չեմ շեղվում, իսկ իմ պատկերացրած իրականության մեջ հավերժահարսն ունեցել է նրա դիմագծերը, ժպիտը և խոսել է հայերեն: Թող այս վերջին հանգամանքը քեզ չզարմացնի, խմբագիր Ստրելցով, որովհետև ես հայ եմ, և աստված ինքն էլ ինձ հետ հայերեն է խոսում:

ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍԸ

Երևան է թռել՝ գնդապետին թողած մի լուսանկար, որի հետևում իր շողարձակ ձեռքով գրել է «սիրելի մորեղբորս՝ Սեդայից»: Իսկ ինձ թողել է դյութական անուրջներ, որոնցից մեկն էլ այդ լուսանկարն ունենալն է: Բայց ես ինչպե՞ս ասեմ գնդապետին, թե Սեդայի նկարն ինձ ավելի է հարկավոր, քան

իրեն: Ինձ թվում է, եթե այդ փոքրիկ, փոքրիկ լուսանկարն ինձ մոտ լինի, ես աշխարհի ամենաերջանիկ մարդը կլինեմ: Ափսոս, որ գնդապետը չի կռահում այդ, և փոխանակ բացելու թղթապանակը և նկարն ինձ տալու, ասում է.

- Քեզ տեսնեմ, հայրենակից: Այս գնդում երեք հայ ենք, մեր Վարդան Մամիկոնյանի և Սասունցի Դավթի անունը գետնով չտանք:

- Չենք տա, ընկեր գնդապետ: -Այս ասելիս հիշում եմ մեր առաջին հանդիպումը, երբ ես Սեդայի մոտ պարծեցա, թե ջարդում ենք թշնամուն: Ինչպե՛ս կուզենայի, որ գնդապետը նրան նամակ գրելիս նկարագրեր իմ սխրանքները, որ ես դեռ պիտի կատարեմ: Գոնե մի երկու տողով: Բայց ես գիտեմ, որ ուզում եմ անկարելին: Թեժ ժամանակներ են սկսվում, գնդապետը քիթ սրբելու ժամանակ չի ունենա. այսօր մութն ընկնելիս պիտի տեղափոխվենք խրամատները: Դեռ լավ է, որ կարողացավ մի երկու բառ փոխանակել ինձ հետ: Բայց եթե ժամանակ էլ ունենար, ես նրան հո չէի՞ պատմի, թե ինչպես եմ սիրում Սեդային: Քիչ է ասել, թե սիրում եմ. ես նրան պաշտում եմ, ինչպես հավատացյալը՝ աստծուն: Իմ հոգին ծնրադիր աղոթում է նրա առջև: Չէի խորշի ասել նաև, որ գնդապետն ինքն էլ սուրբ է թվում, որովհետև նրա մորեղբայրն է: Սուրբ է թվում և Լևոնը, որից չեմ քաշվում, երևի հոգին հանում եմ իմ ցնորքներին հաղորդակից դարձնելով:

- Դու էլ այսպես սիրե՞լ ես մեկին, Լևոն,- հարցնում եմ:

- Այո, ճիշտ քեզ պես երազել, իսկ հիմա…

Լևոնը խոսքը չի շարունակում: Ի՞նչ է նշանակում այդ խորհրդավոր «իսկ հիմա»-ն, այլևս չի՞ երազում և մի՞թե հնարավոր է այդ:

- Ինչպե՞ս, դու նրան չե՞ս սիրում հիմա:

- Սիրում եմ, բայց էն չէ:

- Ոչինչ չեմ հասկանում:

- Նա ինձ մերժել էր, ու ես քեզ պես անհույս երազում էի: Հիշում եմ նրա գլխաշորը կորել էր արտում: Ես գտա և չտվեցի, պահեցի ծոցիս մեջ: Ամեն անգամ, երբ հանում ու նայում էի, մի քաղցր սարսուռ էր անցնում մարմնովս: Նրա մատները դիպել են այս շորին, այս մազը, որ կպած է գործվածքին, նրանն է: Նրա այտերին է քսվել այս շորը, հանգուցվել կզակի վրա: Հանում էի ծոցիցս և երկա՛ր, երկար սեղմում սրտիս: Ինչ-որ հարբեցնող բուրմունք էր գալիս նրա գլխաշորից, որը ես վերջիվերջո վերադարձրի տիրոջը: Այն ժամանակ արդեն սովորական շոր էր, որովհետև արդեն սովորական էին նրա այտերը, որ սեղմվում էին իմ այտերին:

- Ուզում ես ասել, որ նա սիրեց քեզ, և դու հիասթափվեցի՞ր: Ավելի լավ է մերժվա՞ծ մնայիր:

- Գրեթե այդպես: Այնպես որ քեզ հետ էլ կարող է նույնը պատահել:

Ոչ, ինձ հետ նույնը չի պատահի: Հենց այն պատճառով, որ ուրիշների հետ այդպես է եղել, ինձ հետ չի լինի, չի լինի, չի լինի: Ես կապացուցեմ, որ աշխարհում մեկը կա, ով կարող է անհունորեն սիրել մինչև մահ, նույնիսկ մահից հետո: Այս գիշեր ինձ համար կվերջանա հանգիստ քունը, ես պիտի քնեմ գնդակների բզզոցի տակ, որ պիտի բոռերի պես գան և այնպես խայթեն, որ արյունդ առու-առու հոսի: Ես քեզ համար կմեռնեմ, Սեդա, կռվելով կմեռնեմ:

Արդեն մութն ընկնում է: Առաջին աստղերը քթանցքերի չափ ծակեր են բացում երկնքի մուգ կապույտ ատլասի վրա: Քիչ հետո հրաժեշտ կտանք մեզ ծանոթ ծառերին, որոնք իրենց կատարները կճոճեն և տխուր խոսքեր կխշշան: Ահա և տրվեց շարժվելու հրամանը:

- Գնդապետի փեսա, սիրո հեքիաթը վերջացավ: Հիմա երկնքից երեք խնձորի փոխարեն ականներ կընկնեն ֆշֆշալով: -Վոլկովն է: Բոլորը դադարել են ինձ «գնդապետի փեսա» անվանել, միայն նա է, որ համառորեն շարունակում է և ամեն անգամ մի ուրույն երանգով է արտասանում այդ երկու բառը: Կարծես արտիստ է և ուզում է իմանալ իր ձայնի բոլոր հնարավորությունները:

- Ես չեմ վախենում,- ասում եմ զսպված ցասումով, առանց նրան նայելու, որը պետք է նշանակի՝ չեմ ուզում խոսակցությունը շարունակել: Բայց նա չի հասկանում և ես ստիպված այլ միջոցի եմ դիմում՝ հեռանում եմ նրա մոտից:

Գնում ենք, որքան հնարավոր է, անաղմուկ, աշխատելով չկորցնել իրար: Գնում ենք ու հազար անգամ մտածվածը հազարմեկերորդ անգամ է կրկնվում, բայց հիմա այնպիսի հստակությամբ է գծագրվում, որ ասես միտք չէ, այլ առարկա: Գնում եմ սպանելու. ահա այդ միտքը, որ միայն ուղեղիս մեջ չէ, այլև երիկամներիս: Ես նորից զգում եմ, որ զինվոր եմ, բայց այս անգամ գիտեմ, թե ինչո՛ւ: Ես կարող եմ սպանել:

…Առավոտը սկսվեց կրակոցներով: Մեր հրետանին գնդակոծում էր հակառակորդի դիրքերը: Կարծես երեկ էր, որ առաջին անգամ տեսա Սեդային, նա կարծում էր, թե հրետանին մեզնից երեք կիլոմետր է հեռու, ես նրան ասացի՝ երեք անգամ երեք: Հիմա իսկապես երեք կիլոմետր է հեռու, բայց ոչ թե առջևում է, այլ՝ թիկունքում: Արկերը մեր գլխի վրայով են թռչում: Մենք տեսնում ենք, թե ինչպես են նրանք փոշու սյուներ բարձրացնում: Հողի սև շատրվան է խփում վերև, որը հազիվ մի վայրկյան է տևում: Հողի հետ խառնվում են մարդկային ձեռքեր, ոտքեր, գլուխներ: Ես այդ արդեն գիտեմ ոչ թե ֆիլմերից, թշնամին էլ մեր դիրքերն է գնդակոծում

և հողի սև շատրվաններ են բարձրանում նաև մեզ մոտ: Մեր դասակից արդեն երկուսը չկան: Մեկի պոկված ձեռքը կիսով չափ խրվել է հողի մեջ: Ոչ, դա հողի մեջ թաղված մարդու դուրս մնացած ձեռք չէ, խրված է թաթի կողմից: Այդ ձեռքը պիտի տրակտորի ղեկ բռներ կամ գուցե պսակ հյուսեր իր սիրած աղջկա համար:

- Մեր խրամատն ամուր է: -Ասում է մեր սերժանտը, որ երկու ճակատամարտի է մասնակցել: Սա երրորդն է:

- Սիրտդ պինդ պահիր, Գարեգին:

Երևի գույնս զցել եմ, որ նա նկատեց վախս: Ձեռքերս էլ դողում են: «Մեր խրամատն ամուր է»: Իսկ մեր դասակի այն երկու զինվորի խրամատն ամուր չէ՞ր:

- Հիմա ուր որ է հարձակման ազդանշանը կտրվի: -Ասում է սերժանտը:

Այնպես արև է մեր շուրջը, խոտերը սվսվում են զեփյուռից, կարմիր վարդն է արյան կաթիլի պես վառվում դիմացի թփուտում: Բայց արյան կաթիլ չէ, որովհետև ահա երկու ժամ է, ինչ տեսնում եմ նրան և նա այդ ժամանակահատվածում չի սնացել, բոցկլտում է կարմի՛ր, կարմի՛ր: Վախկոտ սոխակը թողել է նրան ու փախել: Վարդն էլ կփախչեր, բայց կպած է հողին: Լռեր հիմա հրետանին, պատերազմը վերջանար, սերն առաջվա նման կծաղկեր այս թփուտում: Արևը վերևից իր շողերն օրհնության պես կթափեր նրանց վրա: Իսկապես, ի՛նչ արև է, բարի՛, տաք: Ինձ առաջ թվում էր, թե առաջին գծում երկինք, երկիր իրար են խառնվում, ինչպես եղել է Սոդոմ-Գոմորի ժամանակ: Միայն մահ, մահ, մահ, կյանքի ոչ մի դրսևորում: Բայց ահա ժպտում է վարդը, թեկուզ և ինձ արյան կաթիլ է թվում: Նա այդպես կժպտա մինչև աշուն, եթե իհարկե չզոհվի մեզ հետ: Մի երկու ժամ էլ դիմանա, հավանական է, նրա կյանքը փրկված կլինի:

Մենք հարձակման անցած կլինենք և թշնամուն ետ շպրտած, վարդը կլինի մեր թիկունքում: Իսկ դիմացը դաժան փուշն է, որ ոչ միայն ծակում է, այլ նաև բզիկ-բզիկ է անում այնպես, որ միայն ձեռքդ է մնում թաթի կողմից հողի մեջ խրված: Եվ դողում են իմ չկտրված ձեռքերը: Ուր որ է հարձակման ազդանշանը կտրվի, և այդ ձեռքերը մարդ պիտի սպանեն: Կկրակենք իրար վրա՝ թշնամու զինվորն իմ, ես՝ նրա: Գոնե ոտքիս կպչեր գնդակը, ոտքի վերքից չեն մեռնում: Գոնե սվինամարտի չբռնվեինք: Ավելի ահավոր բան չկա, քան սվինամարտը: Կանգնում եք դեմ առ դեմ և քեզ թվում է, թե քո սվինն ահա խրում ես հակառակորդի փորի մեջ, այնինչ հենց այդ պահին նրա սվինն աղիքներդ իրար է խառնում կամ կուրծքդ ծակելով դուրս է գալիս թիկունքիցդ: Միայն թե սվինամարտի չբռնվենք, դա իսկական Սոդոմ-Գոմոր կլինի:

Տրվում է հարձակման ազդանշանը՝ մի կարմիր հրթիռ, որը երկնքի կապույտ ֆոնին գծում է իր արյունոտ կորը և մոխրի վերածվելով՝ թափվում կանաչների վրա: Հիմա է, որ պիտի ստուգեմ «դժվար է ուսման մեջ, հեշտ է կռվում» սուվորովյան խոսքի ճշտությունը: Հենց առաջին պահին զգում եմ, որ ինձ համար հեշտ չէ: Պիտի ենթադրել, որ ուսման մեջ դժվար չի եղել, այլապես կասկածի տակ է դրվում այդ թևավոր խոսքը, որը բոլորն են գործածում, ոմանք հենց այնպես, ոմանք հայտնագործողի տեսքով: Մենք դուրս ենք նետվել դիրքից և առաջ ենք սողում: Բայց ելնում ենք, տասը-տասնհինգ մետր վազում և դարձյալ սողում: Այսպես մոտենում ենք թշնամու դիրքերին: Իմ աջ կողմից սողացողը խփվեց, ահա և կանգ առավ առաջից գնացողը: Աստված իմ, հերթն ինձ է հասել: Գնդա՞կ էր ծակեց վիզս: Չէ, փուշ էր: Գլուխս գետնին քսելով եմ սողում: Ինչո՞ւ, ինչո՞ւ խմբագրիս առջև ծնկի չիջա, լա՞վ է, որ այսպես սողում եմ գնդակների

առջև: Կարող ես քծնել ամենասրտառուչ ձևով, բայց ո՞ւմ են պետք քո սողալն ու քծնելը: Կարող ես հպարտ լինել, բայց սահմաններն այստեղ ջնջվել են սողալու և հպարտ լինելու միջև: Ճիշտ էր ասում խմբագիր Ստրելցովը, նա կյանք է տեսել, կյանքի փորձից էր ասում, որ ես կզոջամ, բայց ուշ կլինի: Մի՞թե վերջ, աստված իմ, մի՞թե վերջ: Ահա իմ ձախ կողքից սողացողն էլ խփվեց: Փոսը, փոսը, ապահով է այն փոսը: Հիմա ինձ էլ կխփեն: Ֆշֆշում են գնդակները, կարծես անտես օձերի վտառի մեջ եմ: Ես հետո պիտի իմանամ, որ ֆշֆշացող գնդակը վտանգավոր չէ, նա ավելի արագ է թռչում քան ձայնը, ուստի երբ ձայնը հասնում է ինձ, նա արդեն ինձնից անցել է: Բայց ես դեռևս չգիտեմ այդ և մեռնում եմ ամեն մի ֆշֆշոցի հետ: Մեռնում եմ և հարություն առնում, որպեսզի նորից մեռնեմ: Հանկարծ իմ էության մեջ ղողանջում է Սեդայի ձայնը, այն երգը, որ կառչեց իմ սրտից: Ուրեմն ես մտքով հրաժեշտ եմ տվել նրան: Բայց եթե հրաժեշտ եմ տվել, իմ մեջ պիտի շարականը հնչեր, այն թաղման մեղեդին, որ մանկուց կառչել է իմ էությունից: Սեդայի ձայնն է հնչում: Ես պիտի ապրե՞մ: Ինչո՞ւ այսքան դանդաղ ենք առաջ շարժվում: Ընդամենը կես կիլոմետր էր մինչև թշնամին, այսքան սողացինք, վազեցինք՝ չվերջացա՞վ: Շուտ, շուտ, այն փոսը, հետո թմբի եզրով կսողամ: Մեկն էլ ընկավ իմ կողքին: Ես կապրեմ, Սեդա, ես կապրեմ… Ազդանշան տրվեց: Վերջ սողալուն: Հիմա բոլոր ողջ մնացածներս պիտի կանգնենք հասակով մեկ և «ուռռա» գոռալով սրընթաց նետվենք թշնամու դիրքերը: Եթե նրանք համառեն, սվինամարտ կլինի: Մեր «ուռռան» խառնվել է կրակոցներին: Այս ինչ սև զանգված էր կանգնեց իմ դեմ: Տանկ է: Մերոնք խփեցին: Կեցցեն տղերքը, իրենց չեն կորցնում: Իսկ ե՞ս: Թշնամին հակագրոհի նետվեց: Բայց առա՛ջ, առա՛ջ, խուճապ է ընկել նրա շարքերը:

Նահանջում են: Այս մի բուռ էսէսականներն ի՞նչ պիտի անեն: Սվինամարտ սկսվեց: Ցոլում է սվինը ձախ ուսագլխիս մոտ: Արագ կռանում եմ, և ուսագլուխս քերծված է միայն: Թշնամու սվինը մի ակնթարթ մնում է մսիս և շինելիս միջև, իսկ իմը… ես զգում եմ, թե ինչպես հրացանիս փողը դեմ է առնում թշնամու կրծքավանդակին, եթե վիզս երկարացնեի՝ հավանական է կտեսնեի սվինիս ծայրը նրա թիկունքից դուրս եկած:

Սվինամարտը կարճ տևեց: Մի ակնթարթ էլ և, ով գիտե, իմ կրծքից էլ պիտի արյունը ժայթքեր: Լավ է, երբ թշնամին փախչում է: Այսպես մինչև Բեռլին փախչեր: Սրիկաներ:

Մենք հետապնդում ենք հակառակորդին, իսկ մութը՝ մեզ: Արդեն ութ կիլոմետր ետ ենք շպրտել ֆաշիստներին, երբ մութը հասնում է մեզ և իր թավշյա մեղմությամբ ասում է՝ բավական է: Պիտի լսել նրա հրամանը, այլապես անախորժ բաներ կարող են պատահել: Դիրքերն ենք փորում: Գիտենք, որ առավոտյան շարունակելու ենք հարձակումը, բայց փորում ենք, ով գիտի, գուցե թշնամին կանցնի հակահարձակման, պետք է պատրաստ լինել: Եվ գյուղի ծայրին մթանն է խառնվում սև հողը, որ մենք դիրքերից դուրս ենք շպրտում զինվորական փոքրիկ բահերով: Այնպես հոգնած եմ, այնպես քնել եմ ուզում և մոռանալ իմ տեսածն ու արածը: Այնքան բան կա խոսելու, եթե գեթ մի փոքր չդատարկվեմ, ուղղակի կպայթեմ: Կգնամ Լևոնի մոտ: Գնդի շտաբը նույնպես գյուղի ծայրին է, երկհարկանի մի շենքում, որը կանգուն է մնացել կարծես նրա համար, որ շտաբ դառնա: Երեկ այստեղ գերմանական հրամանատարությունն էր, այսօր մեր գնդապետն է կռացել քարտեզի վրա: Այսօրվա հարձակման ժամանակ ես տեսել եմ իմ կողքի զինվորներին, մեկ էլ մի տանկ, որ խփվել է իմ աչքի առաջ, իսկ նա տեսել է

բոլոր զինվորներին ու բոլոր տանկերը: Հիմա ես իմ անձնական մթնած աշխարհի վրա լուսամուտ եմ ուզում բացել ինձ պես մի ուղեղի հետ մտքեր կիսելով, իսկ նա իր անձնականը մոռացած՝ մտածում է ուղեղների մասին: Ի՞նչ իմանաս, ինչեր են անցնում նրա մտքով: Ինձ թվում է, թե մութն ընկնելու պատճառով է, որ հետապնդումը դադարեցրինք, բայց գուցե և ուրիշ բան կա, որ ես չգիտեմ, իսկ նա գիտի, և հրամայեց կանգ առնել: Ես մասնակցեցի նրա ղեկավարած մարտին, բայց եթե խմբագիր Ստրելցովն ինձնից ակնարկ պահանջի, ես դարձյալ պիտի գրեմ «ինչ-որ երգչուհի Սեդայի մորեղբայր Մուշեղ Սմբատյանի» մասին, իհարկե, այս անգամ վառոդի հոտը ճաշակած մարդու առնականությամբ:

Շտաբի շենքը լուսավորված է: Չգիտես որտեղից նավթի լամպ են գտել: Ասենք դա դժվար բան չէ, մեծ գյուղ է, քսանն էլ կարելի է ճարել: Լույսը խնամքով քողարկված է. դա Լևոնի ձեռքի գործն է, նա ոչինչ չի անում մի կերպ, հենց այնպես: Սենյակներից մեկում հանդիպում եմ նրան:

- Դու ողջ ե՞ս,- ուրախանում է նա:

- Ես ողջ եմ, բայց այն գերմանացին… պատմում եմ, թե ինչպես եմ սվինահարել թշնամու զիվորին, ավելացնում եմ, որ ականջներիս մեջ է նրա գոռոցը, կոպերիս տակ արյան աղբյուրներ են բխում:

- Այդ ոչի՛նչ, կանցնի,- ասում է Լևոնը: -Նայիր մեր ոտքի տակ: Հիտլերի նկարն է: Հապա մի ժուռնալիստի երևակայությունդ գործի դիր:

- Քիչ առաջ աստված էր, հիմա աղբ,- ասում եմ ես՝ հասկանալով, որ դա այն պատասխանը չէ, որ ուզում էր Լևոնը, այդ պատճառով էլ փորձում եմ խորացնել իմ ասածը: -Քիչ առաջ եթե այս նկարի վրա թանաքի մի բիծ լիներ, ամբողջ գեստապոն ոտքի կկանգներ գտնելու համար հանցագործին,

իսկ հիմա ես ու դու ցեխոտ սապոգներով տրորում ենք նրա ինքնակալական մռութը… մեզ արժի շքանշան տալ:

- Հարուստ երևակայություն չունես: -Ասում է Լևոնը, և նրա խոսքը գնդակի պես ծակում է սիրտս: Ես արդեն նրա մասին այլ կերպ եմ մտածում, նա ինձ համար այն մարդը չէ, որ ամեն ինչ նկատում է և թաքուն ծիծաղում, այլ սրտամոտ ընկեր է, որի մոտ կարելի նույնիսկ լաց լինել: Նրա խոսքը խոցում է ինձ, ավելի ճիշտ՝ վշտացնում: Ախր ես շատ էի ուզում, որ նա գովեր իմ երևակայությունը: Նա՝ Սեդայի մորեղբոր տղան: Մի օր էլ, ով գիտե, գուցե Սեդայի մոտ կասեր, որ ես ունեմ շքեղ երևակայություն, մտքի բարձր թռիչք, ինձ կարելի է սիրել: Բայց հիմա… Էհ, շատ անտաղանդ ես ծնվել, Գարեգին:

- Հիշում ես Հանսին, այն գերմանացի գերուն, որի խոսքը թարգմանում էիր: Նրա ընկերը…

- Սպասիր, ես շարունակեմ: Հանսը հենց այս նկարի կողքով անցնելիս է, որ ձեռքն առաջ չի պարզել ու բացականչել՝ հայլ Հիտլեր: Եվ ընկերը (Հանսը մոռացավ ասել նրա անունը, եկ Կառլ անվանենք նրան), և ընկերը զեկուցել է գեստապոյին, որ կասկածելի տարր է Հանսը: Ես այդ Կառլին եմ սվինահարել, այդ ֆաշիստին, այդ իսկական ճիվաղին:

Լևոնը ժպտում է քթի տակ: Դա այն ժպիտներից է, որ մեր ծանոթության առաջին պահերին կաշկանդում էր ինձ, որովհետև թափանցող և չար էր թվում, ամբողջովին հեգնանք: Ես զգում եմ, որ նա կարող է նորից հեգնանք դառնալ, եթե նրա տերն իմ նկատմամբ բարի տրամադրված չլինի: Շատ խոսուն ժպիտ է, ամեն ինչ նկատող ժպիտ: Եվ ահա նկատում է, որ ես դեռ տանջվում եմ, որ մարդ եմ սպանել, դրա համար էլ իսկական ճիվաղ եմ դարձնում:

- Հանգստացիր, Գարեգին, կանցնի: -Կրկնում է նա քիչ առաջվա խոսքը: -Դուրս գնանք մաքուր օդ:

Մրոտված առաստաղի փոխարեն մեզ վրա կորանում է մի մրոտված երկինք՝ վերքերի պես կարմիր աստղերով: Կարծես բոլոր տեղերից սվինահարված է երկնքի կուրծքը:

- Դու, այնուամենայնիվ, դիպուկ ես մտածում: Լավ ասացիր Հիտլերի նկարի մասին՝ քիչ առաջ աստված էր, հիմա՝ աղբ:

Ես մթության մեջ չեմ նկատում Լևոնի ժպիտը, բայց գիտեմ, որ ժպտում է: Ոչ, ձեռք չի առնում: Պարզապես գիտի, որ իմ երևակայության պակասի մասին իր խոսքը տխրեցնում է ինձ և գիտի՝ ինչի համար: Հիմա լավ բան է ասում, դարձյալ հասկանալով թե ինչու, և ժպտում է: Որ ես ճիշտ եմ իմ ենթադրության մեջ՝ հաստատում է նրա մտքի շարունակությունը, որ նա արտաբերեց բարձրաձայն.

- Սեդան հիմա նայում է Երևանյան երկնքին, և աստղերը նրան կռիվ գնացող զինվորներ են թվում:

Բանաստեղծական մտածողություն է, տեսնես Լևոնը բանաստեղծություններ չի՞ գրում: Եթե գրի՝ հոգեբանական գործեր կստացվեն: Նրա սառը հայացքից չի վրիպել նաև Սեդայի կարեկցանքը կռիվ գնացող զինվորների նկատմամբ:

- Գիտե՞ս, Լևոն, հարձակման ժամանակ մի ակնթարթ եղավ, որ ես մտածեցի, թե ինձ գնդակ չի կպչի: Քեզ պատահե՞լ է, որ հանկարծ էությանդ մեջ ղողանջի մի զուլալ ձայն և հավատաս, որ ոչ մի բան չի կարող սպանել այդ ձայնը:

- Չէ:

- Հավատա, ինձ պատահեց: Իմ էության ծալքերից ծորաց Սեդայի երգը: Ես հիմա հավատում եմ, եթե շարականը հնչեր՝ ես կսպանվեի:

- Ուշ է, Գարեգին, գնա քնի՛ր:

- Մի հարց տամ՝ հետո: Երբ քեզ մերժող աղջիկն ասաց, որ սիրում է, երջանկությունից գլուխդ չպտտվե՞ց:

- Միամիտ, անմեղ երեխա, դու կարծում ես, թե մի օր Սեդան կգա, կբռնի թևդ ու կասի. «Օ՜, Գարեգին, սիրում եմ քեզ»: Չէ, այդպես չի լինի: Նախ նա կիսաժպտալու նման մի բան կանի, մի ուրիշ անգամ ինքնասիրությունդ շոյող մի խոսք կասի, երրորդ անգամ կերևա այն տեղում, ուր դու հաճախ ես լինում, հետո կընդունի քո հրավերը՝ քեզ հետ կգնա այսինչ տեղը: Այսպես պտղունց-պտղունց քեզ կտա երջանկությունը և երբ կասի՝ սիրում եմ քեզ, դա արդեն էն չի լինի: Եվ կհասկանաս, որ սիրտդ ավելի ուժգին բաբախեց նրա կիսաժպտալուց, քան այդ խոսքից, որին շատ երկար ես սպասել:

Պառկել եմ իմ փորած խրամատում և նայում եմ վեր: Քունս չի տանում: Ամպերի քարավանները դեպի հարավ են գնում, Երևանի կողմը: Քիչ հետո երկինքն այլևս մրոտված չի թվում: Ես ուրախանում եմ, որ լավ է՝ ամպերը հեռացան, ուրեմն անձրև չի լինի: Այնքան ենք մնացել անձրևի տակ, որ սովորական է դարձել: Ասում են՝ ռազմաճակատում երկար մնալիս առանձնապես տպավորություն չի գործում նաև գնդակների անձրևը: Ես իմ փորձով չեմ ստուգել այդ: Գուցե ոմանց համար այդպես է: Բայց ես իմ փորձից գիտեմ, որ եթե հիմա անձրև գա, մենք խրամատներից չենք փախչի: Մենք գլխներիս կքաշենք անջրանցիկ վերարկուները և կմնանք: Եթե ջուրը լցվի բերնեբերան, դուրս կգանք: Հիմա գիշեր է՝ կարելի է: Իսկ եթե ցերեկ լինի՝ կմնանք ջրի մեջ: Կյանքը մի անգամ է տրվում մարդուն:

Ես պառկել եմ խրամատում և մտածում եմ Լևոնի ասածների մասին: Սեդայի մասին: Գնդապետի ու խմբագիր Ստրելցովի մասին: Կառլի մասին, որին սվինահարել եմ:

Գուցե ուրիշ կառլներ էլ ընկել են իմ գնդակից, բայց ես իմ աչքով չեմ տեսել և հիմա չեմ մտատանջվում նրանց համար: Բոլորն էլ նույնպես իսկական ճիվաղներ չե՞ն եղել: Իսկ Կառլը, ինչո՞ւ եմ ենթադրում, որ նա մարդ չէր, այլ միայն ֆաշիստ, այն բանի՞ց, որ չուզեց նապաստակի պես փախչել իմ առջևից: Եթե Հանսը լիներ, իր Գերտրուդի դիմանկարը կիսատ թողած Հանսը, չէ՞ր հարձակվի ինձ վրա: Ի՞նչ ելք կունենար, սվինի ծայրն ուսագլխիս ուղղելուց բացի, չէ՞ որ իմը, մինչև հրացանիս փողը, պիտի խրվեր նրա կրծքի մեջ: Ի՜նչ գեղեցիկ էր այդ Կառլը: Մազերը սաղավարտի տակից թափվել էին ճակատին: Կրծքի վրա, ծոցագրպանում գուցե իր Սեդայի լուսանկարն էր, որը ես ծակեցի: Ներիր, Սեդա, ներիր: Բայց նա գալիս էր իր հարճը դարձնելու քեզ: Թող չգար մեր հողը, թող չգար: Եկել էր սաղավարտով, Հանս չէ՝ Ռեմբրանդտ էլ լիներ՝ պետք էր սվինահարել… Նույնիսկ Ռեմբրանդտին չպետք է խնայեի, թեկուզ ինքս էլ, ասենք Ռաֆայել լինեի: Ռեմբրանդտն ու Ռաֆայելն այստեղ միայն զիվորներ են, որ պիտի կարողանան վրձնի փոխարեն իրենց հասակի չափ հրացաններ կրել, հարձակման ժամանակ սվինահարել իրենց բաժին զինվորին, որպեսզի ապրեն և դադարի ժամանակ հերթ կանգնեն իրենց բաժին ճաշը ստանալու: Նկարչի դիպուկ աչքը կոպեկ չարժի, պետք է զինվորի դիպուկ աչք ունենալ…

Հիմա կարող եմ հաստատապես ասել, որ ես զինվոր եմ: Հիմա ամեն մի լավ մշակված պլան ոչինչ է, եթե ես այն լավ չեմ իրագործում: Եթե գնդապետն այդպես չմտածեր, հավանական է, ես կշարունակեի թերթում աշխատել, և եթե խմբագիր Ստրելցովը հանդուրժեր իմ թերացումը, հիմա այս երկար սվինով հրացանը կողքիս պառկած չէի լինի բոլոր զինվորների պես: Եթե ոմն Ադոլֆ Հիտլեր իր նման մյուս ադոլֆների հետ չձգտեր աշխարհի բոլոր ժողովուրդներին

«իրեն ծառա ունենալ», բավարարվեր միայն իր ժողովրդին խոնարհաբար գլուխ տալով, չէր լինի այս պատերազմը: Հանսը կավարտեր իր Գերտրուդի դիմանկարը, ես համալսարանի ուսանող կլինեի, իսկ Կառլը չէր ընկնի իմ սվինից: Բայց ես չէի տեսնի Սեդային: Ես նրան չէի տեսնի նաև այն դեպքում, եթե ասենք, կոնսերվատորիայի դիրեկտորն այն նոր թերթում, որտեղ խոշոր տառերով գրված էր «Զարկ, Կովկաս», չկարդար «Ամեն ինչ ռազմաճակատի համար» կոչը և իրեն հաշիվ չտար, թե ի՞նքն ինչ է անում, որ ռազմաճակատում գործերը լավ գնան: Իսկ գործերը վատ են գնում, ֆաշիստները հասել են Կովկաս: Պետք է մերոնց ոգևորել: Երգը և գեղեցկությունը թող լիցք տան նրանց: Ո՞ւմ ուղարկել. Սեդային, նրա ընկերուհուն, հետո սրան, այն մեկն էլ հարմար է, սրան էլ կարելի է, այս մեկն էլ թող տղա լինի…

Թող տղաներ էլի լինեն՝ ճանապարհ են գնում: Եվ տասներկու աղջիկ, երեք տղա համերգ տվեցին վաղուց, շատ վաղուց շրջազգեստ և կոստյում չտեսած զիվորների համար: Երբ վերադարձան նրանք, կոնսերվատորիայի դիրեկտորը երևի գիշերը հանգիստ քնեց, որովհետև կատարել էր իր պարտքը, իսկ թերթում երևի ինֆորմացիա տպագրվեց այն մասին, որ մի խումբ հայրենասեր ուսանողներ, մեծ մասն աղջիկներ, ռազմաճակատում հանդես են եկել մի մեծ համերգով:

Ոչ ոք չմտածեց, որ մի սիրտ տնքաց մեծ տառապանքից ու հիմա, փոխանակ հանգստանալու վաղվա գրոհից առաջ, հազար ու մի բաներ է խորհում անքուն: Իհարկե, ոչ ոք չի արգելում, որ ես հիմա մտքով թռչեմ Երևան, ուր երբևէ չեմ եղել, կանգնեմ քնած Սեդայի սնարի մոտ և հազար ու մի քնքույշ խոսքեր մրմնջամ: Դա ոչ ոքի գործը չէ, բայց բոլորի գործն է, թեև մայր-պատմության գործը չէ ինձ թույլ չտալ

վաղվա գրոհում քնատ լինել, ցրվածության պատճառով մի քիչ ուշ կամ ոչ ճիշտ կատարել հրամանը: Մայր-պատմության գործը չէ նաև այն, որ ես իմ մեծ տառապանքի դեմ հանել եմ իմ մեծ երազանքը: Իսկապես մտքով թռել եմ Երևան, կանգնել Սեդայի սնարի մոտ ու մրմնջում եմ աղոթքի նման՝ քնի՛ր, քնի՛ր, հրեշտակ, ես այնպես կարոտել եմ քեզ: Դեռ չի լրացել երկու օրը, բայց ինձ թվում է երկու տարի եղավ, ինչ քեզ չեմ տեսել: Եթե հիմա բացես աչքերդ և ինձ նայես, իմ ծնկները հուզմունքից կծալվեն: Թրթռում են կոպերդ: Ինչո՞ւ ես մոռացել անջատել լույսը. երևի շատ հոգնած էիր, ու չես զգացել, ինչպես ես քնել: Ես հիմա կմարեմ լույսը, որ հանգիստ քնես: Բայց ոչ, չեմ մարի, ախր եթե մարեմ՝ չեմ տեսնի ձյունաթույր բարձիդ վրա գիշերված մազերդ, քո նուրբ կոպերի թրթիռը, հավերժահարսի քո կիսաժպիտը…

Սեդան հանկարծ արթնանում է, այնպես զրնգուն է ծիծաղում, որ նրա ծիծաղը գլորվում է երկնքով, ինչպես անձրևի ժամանակ ամպերի որոտը: Ծիծաղում է Սեդան և բացում հրեշտակային թևերը: Երա՞զ եմ արդյոք տեսնում. Սեդան այսպիսի թևեր չուներ: Բայց լավ նայիր, դրանք ինքնաթիռի թևեր են, օդաչուն էլ ինքն է: Ասում է՝ «արի Գարեգին, քեզ էլ ինձ հետ տանեմ: Ի՞նչ գործ ունես պատերազմի հետ: Դու քո բաժին թշնամուն սպանել ես արդեն: Եթե մերոնցից ամեն մեկը սպանի մեկին՝ թշնամին կպարտվի»:

«Չէ, Սեդա, ես չեմ կարող քեզ հետ թռչել: Ախր դու չգիտես. խմբագիր Ստրելցովն ինձ առաջին գիծ ուղարկելիս ասաց, որ ես չկարողացա գնահատել իր բարյացկամությունը, դրա համար դեռ կափսոսամ: Ես ուզում եմ մնալ այստեղ, թող նա իմանա, որ չեմ ափսոսում: Բայց դու այդքան բարձր մի թռիր, Սեդա, գլուխդ կպտտվի ու կընկնես»:

«Իմ խենթուկ, դու ե՞րբ պիտի խելքի գաս, աշխարհներ են կործանվում, իսկ դու իմ ընկնելո՞ւց ես վախենում»:

«Հա, Սեդա, ես քո ընկնելուց եմ վախենում: Երկու գիշակեր անգղներ էին ընկել քո ետևից, երկու մեսերշմիդտներ»:

«Եվ դու նրանց չխփեցի՞ր, Գարեգին»:

«Խփեցի, Սեդա դու հանգիստ քնիր: Ուզո՞ւմ ես լույսը մարեմ, որ քեզ ոչինչ չխանգարի»…

***

- Ընկեր ջան, մի քիչ այն կողմ գնացեք:

Այս որտե՞ղ եմ: Թշնամի՞ն է հարձակվում: Չէ, վագոն է, գնում եմ գնդապետի հայրենի գյուղը: Առավոտ է արդեն, բոլոր ուղևորներն արթնացել են: Ցավում են կողերս: Ներքնակի վրա եմ պառկել, բայց միևնույն է, կողերս ցավում են, որովհետև ներքնակը մահճակալի փափուկ ցանցի վրա չէր փռված: Իսկ այն ժամանակ չոր քարի վրա, մի բարակ շինելով քնելիս կողերս չէին ցավում: Ծերացե՞լ եմ արդյոք, թե՞ շատ եմ վարժվել խաղաղ կյանքին:

- Ընկեր ջան, չլսեցի՞ք, մի քիչ այն կողմ:

Ինչպե՞ս կարող եմ չլսել, երբ խոսքին ուղեկցում է հրմշտոցը: Ես պառկած տեղից նայում եմ և չեմ մտածում, որ եթե չխանգարեին՝ պիտի երազս շարունակվեր: Ուղեղս քիչ-քիչ պարզվել է և ես հիմա գիտեմ, որ դա քսան տարի առաջ տեսած երազ էր, որը պարզապես հիշում էի և հանկարծ քնեցի: Հիշում էի մանրամասն, որովհետև թղթին էի հանձնել, որպեսզի չմոռանամ տպավորությունը և ըստ այդմ սոնետ գրեմ: Դա պիտի լինի իմ ութերորդ սոնետը, որ ես չգրեցի, որովհետև, ինչպես ասացի, հանկարծ հասկացա, որ իմ

սոնետները չեն ապրի դարեր, ինչպես Պետրարկայինը: Իսկ Սեդան դրան նույնքան արժանի էր, որքան Լաուրան:

Օ՜, եթե այդ Սեդային մի քիչ, գոնե մի քիչ նմանվեր իր անվանակիցը… Բայց կարևորը մարդու պատկերացումներն են: Ես կպատկերացնեմ, որ այս Սեդան նա է, նույն ինքը՝ հավերժահարսը: Չէ, չի ստացվում: Բայց գուցե իսկապես նա է, նրա մազերը, նրա աչքերը, շրթունքները, քայլվածքը, նազանքը… Իսկ ես շա՞տ բան եմ հիշում այն Սեդայից, որ կարողանամ համեմատել: Գիտեմ, որ մեջքը բարակ էր, աչքերը սև էին ու թախծոտ, իսկ քի՞չ աղջիկներ կան, որ այդպիսի մեջք և այդպիսի աչքեր ունեն: Մի տեսակ մշուշ է դարձել այն Սեդան, ավելի շատ ոգի է, քան իրական կին: Այնուամենայնիվ՝ իրական կին, որի դիմագծերը թեև չեմ հիշում, բայց միայն անունի համար ես երկրորդ անգամ հանդիպեցի այս Սեդայի հետ: Եվ երկրորդ հանդիպումը դարձավ հարյուրերկուերորդ…

Մեր կուպեում տեղավորվել են երկու նոր ուղևորներ՝ տասնութ-տասնինը տարեկան պատանիներ, որոնք էլ արթնացրին ինձ: Մեկը կապույտ բլուզ է հագել, բայց սև աչքեր ունի, մյուսը սև բլուզ է հագել, բայց կապույտ աչքեր ունի: Երևի բլուզները փոխս են զցել, կամ դիտմամբ են այդպես արել՝ ստուգելու համար, թե քանի՞ մարդ կնկատի իրենց սրամտությունը: Ես նկատում եմ, բայց ոչինչ չեմ ասի, հետևաբար նրանք չեն իմանա ստույգ թիվը և, իհարկե, ոչինչ չեն կորցնի:

Սև բլուզովն ուսապարկից հանում է շախմատը և դնում վագոնի սեղանիկի վրա:

- Խաղա՞նք,- զվարթ հնչում է նրա ձայնը:

- Խաղանք,- մարտահրավերն ընդունում է կապույտ բլուզովը:

Մի իսկական ճակատամարտ է շախմատը: Բայց այն տարբերությամբ, որ զոհված զինվորը կամ ձին հարություն են առնում և հաջորդ խաղի ժամանակ նորից նետվում են գրոհի:

Ահա նոսրանում են սև և սպիտակ զինվորների շարքերը, սպաներն են սվինահարում միմյանց, վրնջում են ձիերը և իրար սմբակահարելով՝ ընկնում: Սև և սպիտակ արքաները թաքնվել են խոր թիկունքում: Նույնիսկ իրենց թագուհիներին են կռիվ ուղարկում: Սրանք զգալով, որ թագավոր-ամուսինների կործանումը նաև իրենց կործանումն է, կռվում են կատաղորեն: Որտեղ կռիվ՝ այնտեղ և զոհ: Զոհվում են սև և սպիտակ թագուհիները՝ պողպատային կանանց նման միմյանց մազեր պոկելով: Նրանց դիակները տեղափոխում են ռազմադաշտից հեռու: Վախից դողում են արքաների սրտերը: Փուլ են գալիս սև և սպիտակ բերդերն էլ արդեն, հերթը հասնում է իրենց: Առաջվա զինվորական բանակից բեկորներ են մնացել, հիմա արքաներն իրենք պիտի ելնեն իրար դեմ և վախը սրտներում՝ պայքարեն իրենց գոյության համար: Երկուսից մեկը պիտի մնա, հզորը, մյուսը պիտի զոհվի ինչպես իր ձիերն ու զինվորները: Կյանքում պատահում է, որ պարտվող թագավորը փախչում է ուրիշ պետություն և ազատում իր գլուխը, բայց այստեղ պիտի զոհվի… իսկական ճակատամարտ՝ մինչև վերջ:

Ե՞րբ է ստեղծվել շախմատը: Սև և կապույտ բլուզով պատանիները չգիտեն, բայց ես գիտեմ: Իհարկե, ոչ թե ճշգրիտ թվականը, ոչ էլ նույնիսկ դարը, այլ ժամանակաշրջանը: Դա այն դարերին էր, երբ բերդեր էին կառուցում, նետ ու աղեղ էին գործածում, ձիեր կամ փղեր նստած՝ գրոհի գնում:

Կարճ՝ հին աշխարհում էր:

Իսկ ո՞վ հորինեց շախմատը: Այս պատանիները դարձյալ չգիտեն: Եթե խելքներին զոռ տան՝ հավանական է

կասեն, որ շախմատը հորինել է Հնդկաստանի, Պարսկաստանի կամ մի այլ երկրի թագավորի սենեկապետը՝ վեզիրի պաշտոնը ստանալու հույսով: Իմացել է, որ իր տերը շատ է սիրում պատերազմ, բայց հո չե՞ս կարող անընդհատ պատերազմել, որտեղի՞ց այդքան զորք, և ելք է փնտրել: Ելքը եղել է այս խաղը, որով թագավորը կարող էր զբաղվել խաղաղ տարիներին, մինչև հասունանար նոր զորքը և սկսվեր իսկական պատերազմը:

Ես դժվարանում եմ առարկել այդ տեսակետի դեմ, բայց դա չի խանգարում, որ ունենամ իմ սեփական տեսակետը. շախմատ հորինողը եղել է մի խաղաղասեր և իմաստուն մարդ, որ ուզեցել է մարդկանց ասել, թե բավական է արյուն թափեք, եթե շատ եք պատերազմ ուզում, մարդիկ, ահա ձեզ պատերազմ, այս վաթսունչորս քառակուսիների վրա ինչքան ուզում եք կռվեք, չափեք ձեր խելքը, ռազմական հմտությունը, ստրատեգիայի և տակտիկայի ձեր իմացությունը: Եվ հին աշխարհը սիրահարվել է այդ խաղին ու այն աստիճան, որ կտակել է մեզ որպես խաղաղություն: Բայց հին աշխարհն այդ խաղը մեզ կտակելիս արդեն կրակում էր զոռ հրանոթներից: Մենք էլ ենք այդ հրաշք խաղը կտակում մեր հետնորդներին, բայց ատոմային ռումբերի պայթյունների տակ: Իսկ նրանք՝ մեր հետնորդներն ի՞նչ պիտի կտակեն, մի շախմատաձև պայթող մոլորա՞կ և ո՞ւմ պիտի կտակեն, երբ նրանց հետնորդները կմեռնեն դեռ սաղմի մեջ: Ահեղ ոչ-ոքի, որ ավելի վատ է քան պարտությունը: Պատանիները խաղում են կլանված, իսկ ես նայում եմ կողքից, մեկ-մեկ քայլեր եմ հուշում, բայց նրանցից ոչ մեկը չի խաղում իմ հուշածը: Սիցիլիական պաշտպանություն, թագուհու գամբիտ, անգլիական սկիզբ, հին հունական պաշտպանության տարբերակներից մեկը: …Այս բառերը հաճախ են պոկվում

նրանց շուրթերից և ինձ ենթադրել տալիս, որ նրանք ոչ թե սիրողներ են, այլ իսկական շախմատիստներ, որոնք, հավանական է, վերադառնում են ինչ-որ մրցությունից կամ նոր են գնում մրցելու: Ոչ, պետք չէ, որ նրանք իմանան իմ ծանր մտորումները, թող իրենց խաղը խաղան, երևի կգա դառնանալու նրանց ժամանակն էլ: Բայց ինչո՞ւ չիմանան, երբ մեր հողագնդի բախտը բոլորինն է, նրա հետ պատահելիք փորձանքը հո չի ասելու սրանք պատանիներ են, սրանց գլխին չգամ, թող հանգիստ խաղ անեն: Ոչ, թող սթափվեն, որպեսզի մեր սերնդին չմեղադրեն, թե իրենք քնած էին, իսկ մենք իրենց չենք զգուշացրել, որ մեր գնացքը պիտի անցնի խարխուլ կամրջի վրայով: Եթե իմանային՝ մի բան կանեին: Թող իմանան և մեզ հետո չմեղադրեն:

Նրանք դադարել են խաղալ, կարելի է սկսել: Եվ ես ասում եմ, որ շախմատը շատ է նման պատերազմին, բայց այստեղ կարելի է հաղթանակ տանել առանց արյունի: Հազար ափսոս, որ պետությունների ղեկավարները չեն փորձում գտնել այդպիսի հաղթանակի գաղտնիքը, նրանք իրենց խորհրդատու են դարձնում գեներալներին, ոչ թե գրոսմայստերներին, իսկ գեներալները չգիտեն հաղթանակ տանել առանց արյուն թափելու:

Տղաները տարակուսանքով իրար են նայում: Հետո մեկը կռահելով իմ խոսքերի էությունը՝ բացականչում է.

- Ա՛խ, ուրեմն դուք քաղաքականության մասի՞ն էիք խոսում:

- Իսկ ինձ թվում էր, թե դուք շախմատիստ եք,- ավելացնում է մյուսը:

Թաքուն ծաղր կա նրանց աչքերում, և ես բարվոք եմ համարում լռել իմ տագնապների մասին:

Իմաստ չունի լուրջ վեճի մեջ մտնել կապույտ աչքերով սև բլուզով և սև աչքերով կապույտ բլուզով այս դեղնակտուցների հետ: Մինչ պատանիները հրճվանքով պատմում են իրենց անբովանդակ սիրային հանդիպումների մասին, ես ուզում եմ որպես ապտակ նրանց պատմել Սեդայի մասին, թե ինչպես ես վերջերս հաճախ եմ հիշում նրան, թե ինչ պատահեց հետո, երբ ես չիմացա ինչպես քնեցի ու տեսա իմ երազը թևավոր Սեդայի մասին: Բայց նրանք չեն հասկանա ինձ, գուցե կծաղրեն իմ ցնորքը, և ես շատ կվիրավորվեմ: Իմ ապտակը չի հասնի նրանց և, բումերանգի նման, ինձ կվերադառնա: Բայց ես կարող եմ այն ներկայացնել որպես ուրիշի պատմածը, կփոխեմ միայն անունները, նույնիսկ չեմ էլ փոխի: Սեդա, Գարեգին, Լևոն, Գնդապետ:

…Ոչինչ չեն ասի այդ անունները նրանց: Իսկ պատմությունն ինչ կասի: Էլ ինչո՞ւ պատմել: Ես հաստատ գիտեմ, որ այս սերնդի մեջ կան սրանցից վատերը, բայց և սրանցից շատ-շատ լավերը, որոնց հետ կարող էի կիսվել՝ հաշվի չառնելով տարիքային տարբերությունը: Մեկ-մեկ ինձ թվում է, թե դեռ ջահել եմ շատ, նույնիսկ պատանի, իսկ վերջին այս օրերին դա հաճախ այցելող զգացում է իմ հուշերի շնորհիվ: Իսկապես, եթե այնուամենայնիվ ուզենայի իմ հուշերի այս մասը նրանց ներկայացնել որպես պատմվածք, ի՞նչ վերնագիր կդնեի:

ՀԱՆՈՒՆ ՍԵԴԱՅԻ

Դա վատ վերնագիր չէ, որովհետև համապատասխանում է բովանդակությանը: Ես չեմ ուզում ասել, որ երբ առաջ էինք նետվում գոչելով «Առա՛ջ, հանուն հայրենիքի», ես այս բառերի տակ հասկանում էի՝ «Հանուն

Սեդայի» կամ նույնիսկ արտաբերում ձայնալարերիս ամբողջ տարողությամբ: Ոչ, ես էլ բոլորի հետ որոտում էի «Հանուն հայրենիքի», իսկ Սեդան մի աղջիկ էր այդ հայրենիքում, որ իրենով էր լցրել նրա մի փոքրիկ անտառը, որ կախված էր Երևանի վրա, նրա մի զինվորի սիրտը, որն առաջին անգամ էր սիրում:

Հա, ի՞նչ եղավ հետո, երբ ես չիմացա, թե ինչպես քնեցի ու տեսա իմ երազը թևավոր Սեդայի մասին: Առավոտյան մենք պիտի շարունակեինք մեր հարձակումը, բայց հրաման չտրվեց: Ընդհակառակը, կարգադրվեց խորացնել դիրքերը: Այդ նշանակում է, որ թշնամուն հաջողվել էր կասեցնել մեր գրոհը: Ուրեմն մենք նրան ետ էինք շպրտել ընդհամենն ութ կիլոմետր: Դեռ քանի՜ ութ կիլոմետր էր հարկավոր ետ շպրտել, որ հասնեինք մեր սահմանին:

Իհարկե, այն ժամանակ ես արթնացա դեռ լույսը չբացված և իմ դեմ չտեսա երկու շախմատիստներ նստած: Աչքերս բացեցի գերմանական ավտոմատների կրակոցներից: Կրակում էին մթության մեջ, պարզապես մեր ուղղությամբ: Այնպես նման էր դա այն շան հաչոցին, որը չի նետվում կծելու, բայց հաչում է, որպեսզի վախենաս. վախենաս և չմոտենաս բակին: Եվ մենք չմոտեցանք բակին, երևի վտանգավոր էր:

Առավոտյան պատահեց միայն այդքանը:

Հաջորդ առավոտյան՝ ոչ ավելին:

Երրորդ առավոտյան մենք թարմ ուժեր ստացած նետվեցինք գրոհի: Այս անգամ հոյակապ էր առաջխաղացումը՝ տասնհինգ կիլոմետր: Դա երկրորդ գրոհն էր, որին ես մասնակցում էի: Բայց այն, ինչի համար ես իմ պատմվածքը կվերնագրեի «Հանուն Սեդայի», տեղի ունեցավ հինգերորդ գրոհի ժամանակ, երբ արդեն ամսից ավելի էր, ինչ Սեդան վերադարձել էր Երևան:

Այդ օրն առավոտյան գնդապետը գլորվեց մեր խրամատը: Ասում եմ գլորվեց, որովհետև նրա ցատկն այլ բառերով բնութագրելը ճիշտ չի լինի: Նրա հետ հող թափվեց ներքև, գնդակներից բզկտված հող:

- Շան որդիները սպիտակ մորուքս էլ չեն խնայում,- կատակեց գնդապետը: Նա մորուք չէր պահում, բայց եթե պահեր, հավանական է սպիտակ կլիներ, որովհետև նրա սաղավարտի տակից սպիտակ բոցեր էին դուրս գալիս: Հիսունին մոտ էր գնդապետը, բայց դեռևս առույգ, ինչպես սովորաբար լինում են զինվորականներն այդ տարիքում:

- Ինչպե՞ս են գործերը,- հարցրեց բոլորին, չսպասելով պատասխանի, որովհետև ինքը մեզանից լավ գիտեր պատասխանը: Մենք ասեցինք, որ գործերը լավ են գնում, բայց արի ու տես, որ թշնամին չի նահանջում: Հետո գնդապետը նայեց իմ կողմը.

- Դու իսկական զինվոր ես, իսկ ես կարծում էի թշնամուն կարող ես ջախջախել միայն… ակնարկներում:

Ասել, թե այդ խոսքից իմ առջև հառնեցին անցած օրերը, երբ ես մոտիկից տեսնում էի Սեդային, ճիշտ չի լինի, որովհետև այդ օրերն ատամնացավի պես անբաժան են ինձնից: Անընդհատ հիշում եմ, անընդհատ ցավում է սիրտս, ու չգիտեմ, թե երբևէ դադարելո՞ւ է այս ցավը:

- Ամսից ավել է նամակ չեմ ստացել Սեդայից: Խոստացավ գրել ու չգրեց: -Գնդապետն առանց վերաբերմունքի է ասում այդ խոսքը, նրա համար այս թոհուբոհում դա չի կարող հուզվելու առիթ լինել: Ասում է, որովհետև ինձ է հանդիպել, կուզենար մի ուրախ լուր տալ, բայց ոչինչ չգիտի: Իսկ ես կարևոր եմ նրա համար, չէ՞ որ մարտի գնացող զինվոր եմ: Մենք բոլորս ենք կարևոր նրա համար, որովհետև քիչ հետո պիտի գրոհի նետվենք: Եթե

առաջին գծից տասը կիլոմետր հեռու լինեինք, նա երևի շարք կկանգնեցներ և մի ոգևորող ճառ կասեր, բայց այստեղ ի՞նչ շարք, երբ համարձակություն է համարվում գլուխը փոսից դուրս հանելը: Իսկ եթե շարք չկա՝ ոգևորող ճառը կարող է նույնիսկ ծիծաղելի հնչել: Գնդապետի այցելությունը, զինվորների վիճակով հետաքրքրվելն ավելի պատշաճ է իրադրությանը:

Գնդապետի գնալուց հետո, Վոլկովը, որ հիմա մեր ջոկում է, չմոռացավ իր սովորական «գնդապետի փեսան», միայն թե այս անգամ շշուկով ասաց: Նոր սերժանտը (հինը սպանվել էր) ծոր տվեց՝ լավ մարդ է էդ գնդապետը: Իսկ ես նրանց պատմեցի մի էպիզոդ, որ ինձ պատմել էր Լևոնն իր հոր մասին: Այն ժամանակ, երբ գնդապետ չէր նա, այլ մաճկալ էր Լեռնային Ղարաբաղի գյուղերից մեկում, մանուկ Լևոնն ու եղբայրը ծեծվել էին հարևան բակի տղաներից և լալով գնացել հորը գանգատվելու, իսկ հայրն էլ իր հերթին ապտակել էր նրան.

- Այլևս այդպիսի հարցով ինձ մոտ չգաք: Գնացեք ձեր հաշիվները սեփական ձեռքով մաքրեք:

- Իսկ հիմա Լևոնին առել է իր թևի տակ, համհարզ է կարգել: -Խայթեց Վոլկովը: Ես հիշեցի, որ մեր առաջին հանդիպման ժամանակ նույնն եմ մտածել և ես, նույնիսկ համեմատել գնդապետին իր ձագին թևի տակ առած թխսի հետ և չզայրացա: Պարզապես զղջացի, որ նրանց եմ հաղորդել Լևոնի պատմածը: Պետք չէր սկսել այս խոստովանությունը: Պետք չէ շարունակել: Թող չկորչի գնդապետի քիչ առաջվա խոսքերի տպավորությունը: Կփակեմ աչքերս, որպեսզի ավելի լրիվ լինի հաճույքը: Սեդայից նամակ չկա, իսկ գնդապետն ուզում էր, որ լինի, ուզում էր, որ ես ուրախանամ: Ես իսկական զինվոր եմ նրա համար, որ գիտեմ թշնամուն

ջախջախել թեժ կռիվներում: Պատերազմից վերադառնանք՝ նա այդ կասի Սեդային: Ես հիմա «խեղճ ու կրակ» մարդ չեմ նրա համար, որ «չի կարողանում մի աղջկա հետ խոսել», այս անգամ նա խորհուրդ կտա իր բարեկամուհուն, որ կյանքը կապի ինձ հետ: Ինչքա՜ն սիրելի մարդ է գնդապետը, Սեդայի պես սիրելի: Լևոնն էլ: Ես նրանց հանդիպելիս այն մարդու թեթևությունն եմ զգում, որ ուսից գցել է ծանր բեռը: Նրանց մեջ Սեդայից ինչ-որ բան կա, հարազատ և սրտամոտ:

Բայց գնդապետը հատկապես ի՞նչը նկատի ունենալով ասաց, որ ես իսկական զինվոր եմ: Երևի մեր վերջին գրոհը: Նա տեսավ, ինչպես երկու գերմանացի գետին փռեցի: Նրանք այլևս չեն բարձրանա: Ամեն գարունքի խոտեր կբարձրանան նրանց ընկած տեղում, բայց նրանք երբեք չեն բարձրանա: Դա ինձ չի տանջում արդեն, ինչպես այն առաջին օրը չէր տանջում մարդու գլխի ձև ունեցող թիրախի վրա կրակելը:

Եվ ահա նորից գնալու ենք գերմանացի սպանելու: Նաև սպանվելու: Ռազմաճակատային առօրյա, որը սովորական է բոլոր առօրյաների պես: Սվին, կրակոց, արկի պայթյուն և մարդիկ, որ մժեղների պես տրորվում են պատերազմի կրունկի տակ: Ահա նորից մեր հրետանին կրակ տեղաց հակառակորդի դիրքերի վրա, որ բլուրների լանջերին պառկած սև օձերի են նմանվում:

- Գնացի՜նք,- ասում է Վոլկովը, ճիշտ այն տոնով, ինչ գործի գնացող մարդը՝ տնից դուրս գալիս:

Հնչում է մեր ուռռան: Հինգերորդ անգամ ես ուռռա՜ եմ կանչում և այս անգամ իմ կրակոցից ընկնողներից մեկը դեմքով շուռ է գալիս դեպի երկինք, այդ պատճառով էլ իմ հիշողության մեջ ջոկվում է մյուսներից, որ բերանքսիվայր փռվում էին գետնին: Եթե ես էլ ընկնեմ՝ տեսնես բերանքսիվա՞յր կպառկեմ, թե՞ մեջքի վրա:

Ես չգիտեի, որ գնդապետն ինձ այդքան մոտ էր: Եթե մոտ չլիներ, ապա ինձ հետ չէր պատահի այն դեպքը, որ դարձավ իմ կյանքի հարստությունը կազմող գանձերից մեկը: Կլինեին ուրիշ դեպքեր, բայց այդ դեպքը չէր լինի: Մոտ էր հրամանատարական կետը, և ես լսեցի, թե ինչպես գնդապետն ասաց.

- Կապը լրիվ խզվեց:

Իսկ մի խումբ զինվորներ, երևի մի հարյուր մարդ, կտրվել են մեր հարձակման շղթայից և չգիտեն, որ գնում են ուղիղ մահվան երախը: Ինչպե՞ս հասկացնել նրանց, որ դեպի աջ շարժվեն, աջ, աջ: Ի՞նչ կարելի է անել: Եթե կտրվել են ընդհանուր շղթայից, նշանակում է մի այնպիսի բան է պատահել, որ չէին կարող նախատեսած լինել հարձակումից առաջ: Բայց ի՞նչ: Հիմա դա կարևոր չէ, պետք է մարդ ուղարկել: Շո՛ւտ: Բայց մինչև նա տեղ հասնի՝ ամեն ինչ վերջացած կլինի: Պետք է փոքրիկ դրոշակներով խոսել: Եվ համհարզը՝ գնդապետի որդին, իսկ իմ՝ ընկեր Լևոնը, հոր հրամանով բարձրանում է բլուրն ի վեր: Ճոճվում են փոքրիկ դրոշակներն ահա, շարժումն իմաստ է, հրաման: Կտեսնե՞ն արդյոք, կմիանա՞ն մեզ, թե արդեն ամեն ինչ կորած է: Խոսում են փոքրիկ դրոշակները, բայց դեռ խոսքը կիսատ՝ լռում: Ընկնում է Լևոնը, և հառաչում է գնդապետ-հայրը:

- Ես գիտեի, որ բարձունքը լավ թիրախ է:

Սողեսող մոտենում եմ ընկածին: Շոշափում եմ զարկերակը, կենդանի է, նույնիսկ աչքերը բացեց: Մերոնք առաջ են շարժվում, իսկ ես սողալով ետ եմ գնում՝ մեջքիս առած ծանր վիրավոր Լևոնին: Քիչ էլ, մի քիչ էլ և դուրս կգանք գնդակների տարափի տակից: Ինձ հետ սողալով իջնում է մի օձ, չարացած, խենթացած: Չի հասկանում, թե ինչ ամպեր են որոտում իր շուրջը, խելակորույս դես ու դեն է նետվում: Մերթ

հեռանում է ինձնից, մերթ մոտենում: Հիմա կխայթի: Ահա, ահա ատամը խրվում է ազդրիս մեջ: Մեռա՛: Ամբողջ տիեզերքը լցվում է իմ ճիչով: Բայց օձն ինձնից հեռու էր մի մետր: Նա մետրանոց ատամ չունի, ուրեմն ինձ թվացել է, թե խայթել է: Բայց ինչ տարբերություն՝ հիմա կխայթի: Սողում է մահն ինձ հետ: Աստված իմ, ես շատերի մահն եմ տեսել, հինգ հոգի ընկել են իմ գնդակից իմ աչքի առաջ, հիմա իմ մահն եմ տեսնում: Իմ արածի համա՞ր այս օձն է ուղարկել աստված, որ միանգամից չմեռնեմ, երկար ժամանակ տեսնեմ, թե ինչպես եմ մեռնում: Սուտ է, թե ռազմաճակատում մահը սովորական է դառնում: Այդ ուրիշների մահն է սովորական ու առօրյա: Իսկ իմը, իսկ ես… վերջ… վերջ… վերջ… Հարձակման անցնելիս Սեդայի ձայնը հնչեց իմ էության ծալքերից… Այս անգամ դա էլ չի փրկի: Կլսի Սեդան և կասի, որ ես զոհվել եմ Լևոնին փրկելիս: Իսկ Լևոնն իր մորեղբոր տղան է: Ուրեմն հանուն իրեն եմ զոհվել: Իմ գերեզմանը կփնտրի, որ թարմ ծաղիկներ դնի վրան: Քիչ առաջ ֆշֆշում էին գնդակներն, ինչպես անտես օձեր, հիմա օձն է ֆշֆշում որպես տեսանելի գնդակ: Հանկարծ Լևոնին չխայթի՞: Չէ, ներքևում ես եմ, ինձ կխայթի: Գոնե կարողանայի դեմի ժայռի տակ հասցնել Լևոնին, այնտեղ ոնց որ մերոնցից մարդիկ կան:

Հրա՞շք է միթե… փառք քեզ, աստված, օձը հեռանում է: Բայց ձախ ոտքս ուռչում է: Կծել է, կծել անիծվածը: Այն, որ թվաց, թե ատամը խրում է ազդրիս մեջ, դա իրական էր: Ո՞ւմ պետքն է, թե օձը խայթել է ինձ: Թույնն ուր որ է կհասնի սրտիս, և ես պատերազմի դաշտում օձի զոհ կլինեմ, ինչպես կարող էր խաղաղ կյանքում էլ պատահել:

- Օձը խայթել է, ձախ ոտքս, այստեղ: -Գոռում եմ զարհուրիկ և երևի ուշաթափվում եմ: Այո, ուշաթափվում եմ, այլապես կտեսնեի, թե ինչպես են ժայռի տակից ինձ

մոտենում: Աչքս բացում եմ և տեսնում եմ Վոլկովին, բերանը դրել է վերքիս, ծծում է թույնը և թափում:

- Օձն էլ իր պատերազմն ունի,- ասում է: -Բնական մահն աստված քիչ համարեց՝ ստեղծեց օձերին և կարիճներին, իսկ մարդը դա էլ քիչ համարեց՝ զենքերի այսքան տեսակներ ստեղծեց:

Իսկ ես ուզում եմ գոռալ. «Մարդիկ, շա՞տ եք ուզում կռվել, օձերի դեմ կռվեք, ոչնչացրեք մինչև վերջինը: Պետք չէ նրանց օգնությունը, այն դեղերը, որ ստանում եք նրանցից: Վնասն ավելի մեծ է, մա՛հ օձերին»:

Բայց հասկանալի է, չեմ գոռում, այլ անզոր նայում եմ Վոլկովին: Դառնություն կա նրա աչքերի մեջ, դեմքը մռայլ է: Շուրթերն արնոտված են, իմ արյունն է: Նա ձեռքով մաքրում է շուրթերը և ասում. «Հիմա կապրես, գնդապետի փեսա»: Նրա տոնը լուրջ է, առաջ կթվար, թե չարությամբ է ասում, բայց հիմա հանկարծ լուսավորվում է ամեն ինչ, ինչպես խավար սենյակում լուցկի վառելիս: Ուրեմն նա այդ կերպ է կատակում: Կան մարդիկ, որոնք մի բանից բռնում են և բաց չեն թողնում: Նրա համար այդ մի բանը «գնդապետի փեսան» է: Իսկ ես չեմ հասկացել նրան, տհաճություն եմ զգացել այդ պարզասիրտ մարդու ներկայությունից:

Կրակոցներն արդեն հեռվից են լսվում: Այդ նշանակում է, որ մերոնք շարունակում են թշնամուն ետ շպրտել: Վոլկովը վերադառնում է նրանց մոտ: Նա փրկել էր մեր դասակի վիրավոր հրամանատարին՝ նրան բերելով այս ապահով տեղը, որը կարելի էր սանիտարական կետ անվանել: Ես նրա փրկած երկրորդ մարդը եղա: Աշխարհում ոչ մեկն ինձ այնքան քնքույշ և հուզիչ խոսք չի ասել, որքան նրա ասածն էր. «Հիմա կապրես, գնդապետի փեսա»:

Տեսնես կապրի՞ Լևոնն էլ և Սեդային կպատմի՞, թե ինչպես եմ փրկել իրեն: «Ինձ փրկեց հանուն քեզ, Սեդա,- կասի,- ճիշտ է, նա ինձ էլ էր սիրում, բայց իր կյանքը վտանգի ենթարկեց հանուն քեզ»: Մի ուրիշ մարդ այդ չէր ասի, որովհետև չէր հասկանա, իսկ Լևոնը կասի, նրա աչքից ոչինչ չի վրիպում: Տեսնես կապրի՞ Լևոնը: Բուժքույրը կապում է նրա վերքերը: Նրան խորը թիկունք կտանեն, իսկ ես սանիտարական կայանում մի երկու օր մնալուց հետո կվերադառնամ զորամաս:

Ես չէի սխալվել: Ինքնաթիռը քիչ հետո Երևան է տանելու մի մարդու, որն ինձ հարազատ է դարձել: Նորից ինքնաթիռ և նորից Երևան: Ես կրկին մտովի տեսնում եմ Սեդային ինքնաթիռի խցիկը մտնելիս: Երևանում նրանք կհանդիպեն իրար, և Սեդան կիմանա, որ ես կենդանի եմ դեռ, և շարունակում եմ պաշտել իրեն:

- Գարեգին, երբ օձը մոտենում էր, դու կարող էիր ինձ գցել ու փախչել: Բայց դու չփախար: Թույլ կտա՞ս նրան այդ ասել:

Իսկապես որ, նրա աչքից ոչինչ չի վրիպում:

Ես գլխով եմ անում, թե՝ այո, թույլ եմ տալիս: Բայց իսկույն էլ իմ աչքի առջև կանգնում են այն հերոսները, որոնք պատրաստ են առանց վարձատրության սպասելու ամեն ինչ անել, ինչը տվյալ դեպքում սիրած աղջկա համակրանքին արժանանալն է: Ինձ ներեցեք, իմ սիրած հերոսներ, ես չկարողացա նմանվել ձեզ: Եթե ես մեռնեմ իմ սիրած աղջկա համար, կուզենամ, որ նա իմանա և ողբա իմ մահը՝ շիրմաքարիս վրա ընկած:

Ինքնաթիռն օդ է բարձրանում: Այդպես օդ բարձրացավ նաև Սեդային տանող ինքնաթիռը: Հետո երկու «մեսերշմիդտներ» նույն ուղղությամբ գնացին: Նրանք մահու

բեռներ էին տանում մեր քաղաքների վրա թափելու: Նրանք երկինքը ռռնոցով լցնող երկու թռչող մահեր էին, որ նետի պես արձակել էր թշնամին: Հիմա երկնքում միայն մարդատար ինքնաթիռն է: Գնաց Լևոնը, իսկ ես ահա վերադառնում եմ զորամաս: Կհանդիպեմ Վոլկովին և կասեմ՝ շնորհակալություն, եղբայր, այն բանի համար, որ ես ահա տեսնում եմ արևը և հույս ունեմ, որ մի օր իսկականից կլինեմ գնդապետի փեսա: Մեր դիրքը մտնելիս փնտրում եմ Վոլկովին: Նա չկա: Ուրիշ ջո՞կ են տեղափոխել:

- Սպանվեց,- ասում է սերժանտը:

Շատ անբախտ մարդ եմ ես, ում սկսում եմ սիրել, կամ սպանվում է, կամ ինձնից հեռանում: Փորձված զինվոր էր Վոլկովը: Տեսնես կլինի՞ մեկը, որ պատերազմի առաջին օրից մինչև վերջին օրը դիմանա: Հերթը հիմա ինձ է հասնում, սիրելի Վոլկով: Մի անգամ դու ասացիր, որ քո քույրը նման է Սեդային: Հիմա լաց կլինի քո քույրը: Աշխարհի բոլոր վոլկովների քույրերն ու մայրերը լաց են լինում…

Ես մեր ջոկում երկար չմնացի: Հիմա գնդապետի համհարզն եմ: Ես գիտեմ, որ նա իր որդու կարոտն ինձնից չի առնի, բայց հայոց լեզվի կարոտը կառնի. մենք իրար հետ հաճախ հայերեն ենք խոսում:

Ես նրա համար ոտանավոր եմ արտասանում, իհարկե չհիշելով, որ մի ժամանակ ասել եմ, թե ոչ մի ոտանավոր չգիտեմ: Բայց ավելի շատ խոսում ենք Լևոնի մասին: Նա գիտեր փոքրիկ դրոշներով խոսել, ես չգիտեմ: Բայց դա ոչ մի նշանակություն չունի, որովհետև դժվար թե կապի այդ միջոցը երկրորդ անգամ հարկավոր լինի: Ասենք, առաջին անգամ էլ նա արդյունք չտվեց: Այն հարյուր հոգին չհասկացան և կոտորվեցին մինչև վերջին մարդը: Նրանց գումարվեց մի զոհ

ևս Լևոնը, որը կարող էր հիմա կռվողների հետ լինել, բայց ծանր վերք ստացած՝ շարքից դուրս եկավ:

- Ես ի՞նչ կարող էի անել: - Մի անգամ ասաց գնդապետը: - Դա վերջին միջոցն էր նրանց փրկելու:

Գուցե մեր հայերեն զրույցներում Լևոնը երկար ժամանակ մնար որպես գլխավոր հերոս, եթե գնդապետը Երևանից չստանար մի նամակ: Գրում էր Սեդայի մայրը և հարցնում էր, թե որտե՞ղ է իր աղջիկը, ինչո՞ւ այսքան ժամանակ չի վերադարձել: Ինչ է պատահել նրան, մի շտապ տեղեկություն էր սպասում:

Մի ամսից ավելի է, ինչ նա Երևան թռավ… Ա՜հ, այն երկու «մեսերշմիդտները»… Ուրեմն նրանք հասել են մեր ինքնաթիռին և վայր գցել: Երկինք-գետինք պտտվում են գլխիս…

- Ընկեր ջան, հրես քո ուզած կայարանը: - Մեր վագոնի ուղեկցորդն է: Ես սթափվում եմ հուշերից և հավաքում իրերս: Շախմատիստները հիմա թուղթ են խաղում: Մնաս բարով եմ ասում նրանց, ուզում եմ ինչ-որ կծու բան ասել կյանքին խաղամոլի մշուշված աչքերով նայող այդ վաղահասներին, բայց միայն ձեռքս եմ թափ տալիս և իջնում գնացքից:

Ես սիրել եմ խորը, շատ խորը: Այդ սիրուց տաք հուշեր են մնացել: Վաղուց իմ էության ծալքերից չի հնչում Սեդայի ձայնը, որ ես ռազմաճակատում կենդանի մնալու նշան էի համարում: Չի հնչում այդ ձայնը նաև աշխարհի բեմերից: Եթե նա ապրե՜ր…

Չապրեց նաև գնդապետը: Այնպես մոտ էր հաղթանակը, երբ նա ընկավ: Պայթել էր արկը և փոքրիկ մի բեկոր կպել էր քունքին: Արյան ոչ մի կաթիլ: Մի փոքրիկ քերծվածք միայն, որն էլ երևի ընկնելիս մի սուր փշից էր առաջացել: Ես չգիտեմ որևէ մեկն արդյոք ծաղիկներ դնո՞ւմ է նրա գերեզմանին, բայց

ես տարիներ հետո ուզում եմ ակնարկ գրել նրա մասին: Վերջապես պե՞տք է կատարել կապիտան Ստրելցովի հրամանը, թե՞ ոչ: Իմ ակնարկը թող անթառամ ծաղկեփունջ լինի գնդապետի շիրիմին: Երկար ճանապարհ եմ անցել դրա համար: Վագոնի լուսամուտին ահա փոխարինել է գնդապետի տան լուսամուտը, որի մեջ նկարված է մի թթենի՝ հաստաբուն ճյուղից կախված ճոճանակով: Թաղվել եմ գնդապետի թղթերի մեջ: Օրագիր… Գնդապետը նույնպես օրագիր է ունեցել, որը ես ահա թերթում եմ և…

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՆՑ

Խորհրդածում եմ այն մասին, որ այս ամենը պատմություն է դարձել: Ես խոտի պես չեմ աճել ու թոշնել, այլ եղել եմ երկաթի հանքաքար և իմ երկաթից պատմության անիվներ են ձուլել:

Թերթում եմ օրագիրը քսան տարի հետո, երբ վաղուց վարժվել եմ խաղաղ կյանքին և թեև գնդապետի այրու աղմուկով դուրսուներս անելն ազդում է ջղերիս վրա, թերթում եմ քնքշանքով, ասես մեր պատմիչների ձեռքով գրված մագաղաթ է, որ եթե մի փոքր անզգույշ լինեմ՝ կպատռվեն մեծարժեք էջերը:

Մարդկանց մեծ մասն օրագիր գրում է ուրիշների համար: Երկու անգամ ես էլ եմ փորձել օրագիր պահել, բայց մի քանի էջից հետո շպրտել եմ, որովհետև զգացել եմ, որ չեմ կարողանում գրել ինձ համար: Սրամիտ ու պատկերավոր են եղել գրածներս, իսկ երբ մարդն ինքն իր հետ է, սրամիտ ու պատկերավոր չի լինում, չի ստեղծագործում: Գնդապետը գրել է իր համար՝ կցկտուր, տեղ-տեղ անընթեռնելի,

անըմբռնելի… Մի քիչ ընթերցելուց հետո ինձ համար պարզ է դառնում, որ նա շրջանցել է ռազմական կյանքի փաստերը:

Կգտնե՞մ արդյոք Սեդայի կամ իմ մասին տողեր: Ահա: «Սեդան իմ կամքով մնաց: Հայերեն էինք խոսում»: Էխ դու, Գարեգին, հիշո՞ւմ ես, երբ քեզ առաջին գիծ ուղարկեցին, Սեդային տեսնելիս մտածեցիր, որ նա իր ընկերների հետ Երևան չի վերադարձել… քեզ համար: Հիմա հասկացա՞ր, որ գնդապետը չէր բավարարվում իր որդու առնական հայերենով և ուզում էր լսել նաև մեղմանուշ հնչումն իր մայրենի լեզվի:

«Ճարպիկ է, բայց սիրո մեջ՝ խեղճ: Պատերազմից հետո հանդիպենք»… անընթեռնելի բառեր, հետո՝ «փրկեց որդուս»… Ահագին տեղ պատռվել է: Մի ծվենի վրա՝ «Ափսո՛ս»: Ինչո՞ւ է ափսոսացել գնդապետը, երևի նրա համար, որ Սեդան ինձ չի սիրում: Շատ հավանական է: Իսկ Լևոնն իսկապե՞ս փրկվեց: Սեդայի մահից հետո չեմ հետաքրքրվել նրանով և ոչինչ չգիտեմ: Էխ դու, Սեդան ապրելիս լիներ, դու առաջվա նման կլիզեիր նրա մորեղբոր որդու ոտքերը: Մի՛, մի՛ արդարանա, որ դու էլ վիրավորվեցիր և կյանքը քեզ հետո շպրտեց հեռու… Ողորմելի, հաշվենկատ…

Աղմուկով ներս է մտնում գնդապետի այրին:

- Մայրի՛կ, իսկ ո՞ւր է ձեր որդին՝ Լևոնը:

Ինձ թվում է, թե հիմա պառավը կփղձկա: Բայց նա միայն հոգոց է հանում և տխուր ասում.

- Մոսկվայում է, հարսիս ու թոռներիս առավ, հայ հողից ու հայ լեզվից կտրեց: Ամառները գալիս են թոռներս, կես ռուսերեն, կես հայերեն են խոսում: Մեծը հորն է քաշել, քանդակագործ է: Դու չգիտեի՞ր, որ Լևոնը քանդակներ է անում: Գնանք, գնանք, ես ցույց տամ նրա ձեռքի գործը: Այնքան նման է քանդակել հորը:

Պառավն ակնհայտորեն հպարտ է իր որդով, իսկ ես ուրախ եմ, որ նա կա, ապրում է:

- Ահա սա է: Ասում ես՝ դու տեսել ես մեր Մուշեղին, ասա նման չէ՞:

- Շա՛տ:

- Ոսկի ձեռքեր ունի Լևոնս: Ափսոս, որ մոտս չէ: Թոռներս խորթանում են ինձնից: Քո ակնարկում գրիր մի երկու բառ այդ մասին:

Գնդապետի հակապատկերն է նրա այրին, շատ է ուզում, որ իր մասին անպայման գրվի, եթե ոչ ակնարկ, գոնե մի քանի տող այդ ակնարկում: Տեսնես ինչպե՞ս են իրար հետ յոլա գնացել.

- Մայրի՛կ, շա՞տ էր սիրում գնդապետը քեզ:

- Ի՞նչ գնդապետ, գեներալ ասա: Նրան պիտի գեներալի կոչում տային՝ սպանվեց: Ահա սա էլ թղթերը:

Ես չգիտեմ, ինչպես են պառավի ձեռքն ընկել այդ թղթերը, որոնք իսկապես հաստատում են նրա ասածը: Պետք էր այստեղ գալ և այստեղից սկսել իմ ակնարկը: Ես ճիշտ եմ արել: Հետո կքրքրեմ ռազմական արխիվը: Նրա զինակիցների հուշերը:

- Գուցե պետք գան այս լուսանկարներն էլ: -Պառավը սեղանին է դնում իրենց ընտանեկան ալբոմը: - Աչքիս լույսի պես եմ պահպանում այս նկարները: Քո ակնարկում գրիր, որ նրա նկարներից ոչ մեկը չի կորչի: Հոգատար ձեռքեր կան:

Ես թերթում եմ ալբոմը: Այրին դուրս է եկել և դա լավ է, որովհետև իմ կոկորդից ահա մի ճիչ պոկվեց: Բայց ինչո՞ւ եմ այսպես հուզված, ի՞նչ կա զարմանալու, եթե Սեդայի նկարը զետեղված է այս ալբոմում: Այստեղ նրա հարազատներն են և, ով գիտի, ինքն էլ եղել է այս տանը, ճոճվել է բակի թթենուց

կախված ճոճանակին կամ նստել է այս հին աթոռի վրա, որ ահա ճոճռում է իմ ծանրության տակ:

Շուռ եմ տալիս նկարը: «Սիրելի մորեղբորս՝ Սեդայից», հետո ամսաթիվ: Սա այն նկարն է, որն ունենալը դարձավ իմ իղձերի իղձը: Գնդապետի մահից հետո նրա թղթապանակն ուղարկել են կնոջը, և ահա ես նայում եմ սիրելի դիմագծերին: Վերջապես կարող եմ այս նկարն ունենալ, կասեմ այրուն և կվերցնեմ: Իսկ եթե նա չտա՞: Կամ եթե հարցնի, թե ինչո՞ւ ես վերցնում, որտեղի՞ց ես ճանաչում Սեդային: Շատ հետաքրքրասեր պառավ է երևում, մինչև ամեն ինչ չպատմեմ՝ նկարն իմը չի լինի: Իսկ պատմել չեմ ուզում: Հետաքրքիր է հիմա Լևոնը ներս մտներ, ես առաջվա պես նրա հոգին կհանեի՞ իմ սիրո տրտնջանքներով: Իհարկե ոչ: Որովհետև իմ հոգին հանող սիրո ցավը չկա: Բայց գոնե մի անգամ երկա՛ր-երկա՛ր կխոսեի: Այս օրերին արթնացած իմ հուշերը, այս նկարից կենդանացող դիմագծերը սիրտս դարձրել են այն թաց փայտի նման, որը ծխացել է երկար ժամանակ, ծխալով չորացել և հիմա պատրաստ է բռնկվել: Բայց չի բռնկվի, որովհետև մեռած է Սեդան: Իմ էության մեջ շատ բան կա նրանից, գնդապետից, Լևոնից: Որոշակի չեմ կարող ասել թե ինչ, բայց կա: Ամեն հոգի գոյանում է իր մեջ թափված վտակներից, ինչպես գետը: Նրանք թափվեցին իմ մեջ ռազմի ահեղ օրերին, փրփուր չդարձան, որ անհետ անցնեն ինչպես պատահական մարդիկ, այլ ձուլվեցին իմ էությանը, մնացին: Իմ աչքերի մեջ նրանց աչքերը կան, ես իրերին ու երևույթներին նրանց աչքերով էլ եմ նայում:

- Սոված կլինես, հաց բերեմ: -Պառավն ընդհատում է խոհերս: Մենք սեղան ենք նստում: Նա հետաքրքրվում է, թե ո՞վ ունեմ, հայր, մայր, քանի՞ երեխա, իմանալով, որ ամուսնացած չեմ, վշտանում է, մենակ մարդը չոր ծառ է,

ասում է, անտառը նրանով տգեղանում է: Ուզում եմ ասել, որ ես կամուսնանայի այս նկարի տիրոջ հետ, բայց… Շատ եմ ուզում ասել, սակայն չեմ ասում: «Գնդապետի փեսա»,- անցյալից ականջիս է հասնում Վոլկովի ձայնը: «Ուրեմն մեզ փեսա պիտի դառնայիր,- լսում եմ պառավի ասելիք խոսքը,- մեզ կգովեիր թերթում»:

***

Նորից Երևանում եմ, տանը: Սեղանիս վրա Սեդայի լուսանկարն է: Ես այն վերցրել եմ, առանց պառավին հարցնելու: Պարզապես գողացել եմ: Մի ժամանակ շատ էին ասում՝ գրքի գողը գող չէ: Իսկ ինչո՞ւ պիտի լուսանկարի գողը գող լինի: Էհ, չպիտի այս մասին երկար-բարակ խորհրդածել, թե չէ հարկ կլինի հենց հիմա գնացք նստել և լուսանկարն անձամբ վերադարձնել գնդապետի այրուն, նրանից ներողություն խնդրել: Ես վանում եմ այդ միտքը, որովհետև շատ եմ ուզում, որ այսպես սեղանիս վրա լինի Սեդայի լուսանկարը: Ես հետո գրքի մեջ կդնեմ, իմ ամենասիրած գրքի, բայց հիմա պիտի սեղանիս վրա մնա: Ուր որ է կգա այն մյուս Սեդան, որը չգիտեմ ինչպես, անմիջապես իմացավ իմ վերադարձը և զանգահարեց: Իսկապես, նրա համար լավ բան է հեռախոս ունենալը, բնական էր նրա ուրախությունը: Ուր որ է կգա, կտեսնի այս լուսանկարը և կհասկանա, որ իրեն չեմ սիրում, կթողնի ու կհեռանա: Այդպես ես առաջինը չեմ հեռանա: Կհասկանա, որ մտերմացել եմ իր հետ իր անունի համար: Գուցե և աչքերի՞: Աստված իմ, երկու Սեդաների աչքերն ինչ-որ չափով նման են: Սրա հետ մտերմանալիս ես չեմ գիտակցել այդ, ինձ ենթագիտակցությունն է մղել դեպի նա: Սա մի նոր ապացույց է, որ ես գնդապետի քրոջ դուստր Սեդային իսկական սիրով եմ սիրել: Մարդիկ կան, որ երբեք

չեն հանդիպում նրան, ում կարող են այդպես սիրել: Ես հանդիպեցի, բայց նա ինձ չսիրեց:

Իսկապես նրանց աչքերը բավականին նման են:

Հնչում է դռան զանգը, և քիչ հետո Սեդայի շուրթերը սեղմվում եմ իմ շուրթերին: Ինչ-որ աղի համ եմ զգում: «Չասես, թե ինչ ես զգում, չասես, չասես,- իմ սրտի խորքից հնչում է մի ձայն: - Հիշիր, այն երազդ, հիշիր, երբ դու կանգնած էիր տրամվայի ոտնակին և քո պատճառով մի երիտասարդ ընկավ ռելսերի վրա, դանակի պես փայլող անիվի տակ: Ցույց տուր, որ կյանքում այդպիսին չես»:

- Հետո էլ կասե՞ս, որ ինձ չես սիրում: -Սեդան թողնում է ինձ և մոտենում սեղանին: - Երիտասարդ օրերի իմ նկարն ես ճարել: Ինչպե՞ս է ձեռքդ ընկել:

- Շատ կատակասերն ես, Սեդա:

- Ինչ կատակ կա այստեղ: Սա ես եմ: Տես, նկարի ետևում գրված է՝ «Սիրելի մորեղբորս՝ Սեդայից»: Կուզե՞ս ասեմ, թե ո՞վ է սիրելի մորեղբայրս: Մուշեղ Սմբատյանը: Դու ո՞ւր էիր գնացել այս երկու օրը:

- Սեդա, ես գնացել էի հենց այդ Մուշեղ Սմբատյանի մասին տեղեկություններ հավաքելու: Ակնարկ պիտի գրեմ նրա մասին: Չգիտեմ ինչու, չուզեցի քեզ ասել այդ:

- Եվ դու, իմ սիրելի գող, սիրտս գողանալուց հետո քեռակնոջս ալբոմից իմ նկա՛րը գողացար…

Որտեղի՞ց նա գիտի այդ ամենը: Մի՞թե որևէ մեկին լրտես է կարգել ինձ վրա: Ամեն, ամեն տեղ հետապնդում է: Բայց ո՞ր լրտեսը կարող էր իմանալ, որ «սիրելի մորեղբայրը» Մուշեղ Սմբատյանն է: Մի՞թե սա նույն Սեդան է, այն հավերժահարսը, որն ինձ պարգևեց դրախտը տեսած լինելու պատրանքը և այն էլ պատերազմի դաշտում: Գուցե այո, բայց այդ դեպքում…

- Ոչ, դու Սեդան չես: Նա սպանվեց: Եթե նա ապրեր՝ հիմա մեծ երգչուհի կլիներ: Երկու «մեսերշմիդտներ» հարձակվեցին նրան տանող ինքնաթիռի վրա…

- Նա չսպանվեց, Գարեգին: «Մեսերշմիդտները» ճիշտ է, հարձակվեցին, բայց ես պարաշյուտով թռա վառվող ինքնաթիռից: Պարաշյուտն ուշ բացվեց և ես դարձա մի պարկ ոսկոր: Հետո չգիտեմ ինչպես, կյանք տվեցին ոսկորներիս: Ապրեցի: Իսկ մեծ երգչուհի չդարձա: Երգեցի երգչախմբում, հիմա էլ դաշնամուրի դասեր եմ տալիս: Իսկ դու որտեղի՞ց գիտես «մեսերշմիդտների» մասին: Քեռակի՞նս ասաց:

- Դու ինձ չե՞ս հիշում, Սեդա:

- Ամենևին: Բոլորովին: Բնավ:

Հնարավո՞ր է, որ սա այն Սեդան լինի: Իսկ ազգանո՞ւնը: Էխ դու, խելոք մարդու տեղ ես դրել քեզ և չգիտես, որ նա կարող էր կրել ամուսնու ազգանունը: Չես էլ հետաքրքրվել՝ ամուսնացած եղե՞լ է, թե ոչ: Ինչո՞ւ էլ պիտի չամուսնանար, ի՞նչ է քեզ պիտի սպասեր:

Բայց կատակ է անում, պարզապես հորինում է, թե պարաշյուտով թռել է ցած: Ինձ չե՜ս խաբի:

- Հիմա պարաշյուտիստ ես, հա՜: Հենց փեշերդ բացեցիր ու իջար: Քեզ հետ նաև զինվորներ կային, բայց որովհետև լայն փեշեր չունեին, կործանվեցին:

- Մի ծաղրիր, Գարեգին: Նրանք վիրավորներ էին, որոնց հոսպիտալ էին տանում: Ես հետո իմացա, որ բոլորը զոհվել են: Օդաչուն ինձ ասաց, որ ցած նետվեմ ու սեղմեմ կոճակը: Ես քարի պես ընկա՝ չիմանալով ինչպես բացվեց պարաշյուտը… իմ ետևից օդաչուն…

Մի՞թե ճիշտ է, մի՞թե սա նա է: Բայց ինչպե՜ս գիրացել է: Աչքերը նման են, չքնաղ աչքերը: Հետո՞ ինչ, նույնիսկ մարդիկ

են պատահում բոլորովին իրար նման, ինչպես ձմերուկի երկու կորիզը:

- Դու… դու… ի՞նչ էիր անում այնտեղ:

- Քեզ ի՞նչ պատահեց Գարեգին, ինչո՞ւ ես հուզված: Մենք զինվորների համար համերգ էինք տալիս:

Էլ ոչ մի կասկած, նա՛ է, նա՛ է: Հանկարծ զգում եմ, որ ինչ-որ երկյուղածություն է համակում ինձ: Սեդան, որի փեշերին կպչելն անգամ մեծ բախտ էր ինձ համար, հիմա իմ գրկում է: Ոչ, սա նա չէ, որից ուզում էի հեռանալ: Այս նրա մազերն են խտացնում այտերս, այս նրա շուրթերն են իմ շուրթերի վրա: Ի՜նչ երջանկություն: Լևոնն ասում էր, թե քեզ մերժող աղջիկը, եթե վերադառնալու լինի՝ քայլ առ քայլ կգա և չես ապրի այն մեծ երջանկությունը, որ դու ես պատկերացնում: Ճակատագիրը միանգամից իմ գիրկը նետեց Սեդային, բայց… արդեն նշմարվող կնճիռներով: Մի բողոքիր, հիմար, մարդկության պատմության մեջ միայն մի այսպիսի երջանիկ հանդիպում կարող էր լինել և ճակատագիրն այն պահել էր քեզ համար: Սեդան, նա, որ ընկերուհու հետ իջնում էր արահետով, ընկերուհին իմ կողմը նայելով ասաց՝ «ես կսիրեի այս վրացուն», իսկ նա գլուխը տարուբերեց՝ «ես՝ չէ»: Նրանց շփոթեցի ես: Բայց սիրո տանջանքներն ինձ չշփոթեցին ոչ մեկի հետ, և ես ինչքա՜ն տառապեցի: Այն օրերին գրած իմ սոնետներից մեկը հենց այդ մասին է:

- Սեդա, ես քեզ սոնետների պսակ եմ ձոնել: Ուզո՞ւմ ես կարդալ:

- Չեմ հավատում:

Նա հիմքեր ունի չհավատալու: Ընդամենը կես ժամ առաջ ես սառն էի և հիմա հանկարծ բոցավառվեցի: Պետք է նրան բացատրել, թե ինչից էր այդ: Բայց այդ նշանակում է խոստովանել, որ կես ժամ առաջ իրեն չէի սիրում:

- Առ, կարդա և զգա, թե ինչքան խորն եմ սիրում քեզ: - Իմ սիրո առաջին խոստովանությունն է սա, որ ես անում եմ առանց հուզվելու: Եթե այդ նույնն ասեի այն ժամանակ, երբ նրան կակաչներ նվիրեցի, ձայնս անպայման կդողար, կխառնեի բառերը: Բայց այստեղից ինչ հեշտ է թռչել այդ անցյալը, որ հիմա հեռավոր չի թվում: Պատճառը սոնետներն են, որ Սեդան կլանված կարդում է: Ահա և այն սոնետը, որի մեջ ես մերժված վրացի եմ: Տեսնես կհիշի՞, կճանաչի՞ ինձ: Ժպտա՜ց: Ուրեմն ճանաչեց, հիմա ուր որ է կասի՝ «ներիր զինվոր», բայց այս անգամ կասի այն տոնով, որն ավելի է սեր, քան եթե ասեր՝ ես սիրում եմ քեզ, զինվոր:

Սակայն նա ոչինչ չասաց, միայն ասաց, որ այդ սոնետներն իրեն շատ դուր եկան, բայց քանի որ իրեն են նվիրված, ինքը չէր ուզենա, որ տպագրվեն և մեր սիրո մասին բոլորն իմանան: Հետո ավելացրեց.

- Ինչո՞ւ ես հնացած թղթերի վրա գրել:

- Ա՛խ, այդ հնացած թղթերը: Իսկ դու գիտե՞ս, թե դրանք…

Ես ուզում եմ ասել, որ դրանք ինձ հետ անցել են մահվան կեռմաններով, պահել իրենց էջերում իմ սիրո հառաչանքները, բայց խոսքս կիսատ եմ թողնում: Ի՞նչ է, սենտիմենտալ վեպի հերոս եմ, որ նվամ՝ քեզ համար մեռնում էի, չե՞ս հավատում, ահա, նայիր, լացել եմ… և այլն:

- Այդ թղթերն ի՞նչ: Ասացիր՝ գիտե՞ս թե դրանք…

- Ոչ մի բան: - Ուզում էի ասել, որ դրանք էլ մարդու պես հնանում են, բայց կարողանում են սեր շշնջալ: Չասացի, որովհետև այդ պատկերն ինձ դուր չեկավ:

Հանկարծ ինձ թվաց, թե այս ամենը տեսնում եմ երազում: Այն Սեդան վաղո՜ւց, վաղո՜ւց հող է դարձել, նրա շիրիմին քսան անգամ խոտ է բուսնել և հող դարձել քսան

անգամ: Իսկ այս Սեդան, որ արդեն նշմարվող կնճիռներ ունի և գիրացող մարմին, բոլորովին էլ նա չէ: Ինչպե՞ս կարող է նա լինել: Հավատալո՞ւ բան է, որ մի անփորձ աղջիկ կարողանա օգտվել պարաշյուտից: Իսկ պարաշյո՞ւտ ով տվեց: Իսկապես ո՞վ: Դատարկ հարց է: Գնդապետը նրա քեռին էր: Իսկ եթե պարաշյուտ կար, ինչո՞ւ չէր կարող բացվել կոճակի հենց պատահաբար սեղմումից: Պարզապես այնպես հանկարծակի եղավ այս ամենը, որ ես դժվարանում եմ հավատալ, թե սա նա է:

- Սեդա, երբևէ քո աչքերի մեջ նայե՞լ են «երկու անհույս անդունդներ»:

- Այսինքն՝ մերժե՞լ եմ որևէ մեկին, այդպես չէ՞: «Երկու անհույս անդունդներ»,- շատ ծանոթ խոսք է: Հա՛, մի ժամանակ գործածում էի, երբ մերժում էի: Հետո մոռացա, որովհետև տեսա, որ անհույս անդունդներ չկան: Այն աչքերը, որ այսօր այդպիսին են թվում, վաղը մի ուրիշի կողքին լցվում են ծիծաղով: Երբ քեռուս մոտ էի եկել, ռազմաճակատ, մի զինվոր ինձ սիրահարվեց: Նրա աչքերն առաջինն էին, որ ինձ անհույս անդունդներ թվացին: Դու որտեղի՞ց գիտես այդ խոսքը:

- Ես… կարդացել եմ Հայնեի մոտ:

- Սպասիր, Գարեգին, իսկ ինչո՞ւ ես քեռակնոջս ալբոմից վերցրել իմ այն օրերի նկարը:

- Որովհետև… հասկացիր… որովհետև քեզ անմիջապես ճանաչեցի: Ուրախացա, որ քո հարազատների տանն եմ, որ իմ ակնարկի հերոսը քո մորեղբայրն է: Նկարդ բերեցի, որ քեզ ասեմ, թե ես այդպիսի գեղեցիկ աղջկան առաջ էլ կսիրահարվեի, եթե, իհարկե, հանդիպեի:

- Գարեգին, որքան գիտեմ, դու պատերազմում եղել ես:

Ինչ-որ բան կռահե՞լ է, թե՞ պատահական խոսքեր են:

- Այո, եղել եմ: Մերձբալթյան նավատորմում նավաստի էի:

Ինչ լավ է, որ ինձ նավաստի դարձրի: Նավաստու համազգեստով մի նկար ունեմ, գլխարկի վրա էլ գրված՝ «Բալթիկա»: Դե եթե այդ նկարը չունենայի, նավաստի չէի դառնա, այլ ուրիշ բան: Բայց ինչո՞ւ չեմ ուզում ասել ճշմարտությունը: Ոչ, սուտ է, թե խնայում եմ նրան, չեմ ուզում անհարմար վիճակի մեջ դնել: Սիրտը քարից չէ, որ չփոխվի, մի ժամանակ չի սիրել, իսկ հիմա սիրում է: Ի՞նչ կա այդտեղ անհարմար:

Մեկ շաբաթ անց ես Սեդային հիշեցրի, որ ինքը շատ էր ուզում դիմենք քաղսովետին և մեր առանձին-առանձին սենյակների փոխարեն երկու սենյականոց բնակարան ստանանք:

- Ամուսնանանք, Սեդա:

Սեդայի աչքերում ասես փոքրիկ արևներ բռնկվեցին: Նա շոյեց իմ մազերը և մրմնջաց.

- Իմ լավ, ես առանց քեզ ապրել չեմ կարող:

Ի՞նչ կզգայի, եթե նա այդ ասեր այն ժամանակ, «Ներիր զինվորի» փոխարեն: Հավանական է, երջանկությունից սիրտս կպայթեր: Ի՞նչ պատահեց իմ սիրո հետ: Մի՞թե այն, ինչ պատահել է լեթարգիական քնի մեջ ընկած մի աղջկա հետ. քնել է սա երկար տարիներ, ժամանակը նրա երիտասարդությունից ոչինչ չի տարել: Աչքերը բացել է և առաջվա երիտասարդ քայլվածքով դուրս եկել տնից: Բայց ընդամենը մեկ տարում ծերացել է, մազերը սպիտակել են, դեմքը կնճիռներով պատվել: Մի՞թե իմ սերն էլ այդպես արագորեն ծերացավ:

- Երկու սենյակ կստանանք,- երազում է Սեդան,- հարսանիք չենք անի, հասկանալի է, բայց հնարավոր չէ

փոքրիկ խնջույք չանել: Կգան միայն ամենամոտիկ մարդիկ, և ես նրանց կպատմեմ, թե ինչպես ճակատագիրն ինձ փրկեց քեզ համար, իսկ քեզ՝ ինձ համար: Սեղանի վրա կլինեն քո սիրած կակաչները: Դու առաջ էլ կակաչներ շատ էիր սիրում, չէ՞:

- Միշտ սիրել եմ:

- Կովկասյան նախալեռներում, այն բացատում, ուր մենք համերգ տվեցինք, կակաչներ շատ կային, չէ՞:

- Ես չեմ եղել այդ կողմերում: Ես նավաստի էի, իսկ Կովկասում ծով չկա: Ահա սա էլ իմ նկարը:

Սեդան երկա՛ր, երկա՛ր նայում է ծովայինի համազգեստով իմ լուսանկարին, իսկ ես մտածում եմ, որ եթե նրա նկարն ինձ օգնեց իրեն ճանաչելու, ապա իմն այնպիսի մշուշով ինձ պատեց, որ նա երբեք ինձ չի ճանաչի: Արագորեն ծերացավ իմ սերը, մեկ շաբաթում: Բայց միևնույն է, ես կամուսնանամ Սեդայի հետ հանուն իմ հին սիրո, որն անթեղված է սրտիս խորքում, և հուշերիս քամին մեկ-մեկ բոցավառում է այն: Ես այդպիսի պահերին տարիների հեռվից լսում եմ Վոլկովի ձայնը՝ «Գնդապետի փեսա», և սիրտս բաբախում է: Հետո, երբ անցնում են այդ պահերը, իմ դեմ կանգնում է նոր Սեդան, որը եթե հավերժահարս չէ, ինչպես առաջինը, քրտնաբույր էլ չէ երկրորդի նման: Պատահում է, որ իմ կողքին զգում եմ այս երկրորդին միայն, որից վաղուց ձանձրացել եմ: Այսպիսի դեպքերում փորձում եմ վերհիշել, թե ինչպես էի նրան սիրում, իսկ ինքը չէր սիրում ինձ:

***

Ես արդեն գրել եմ իմ ակնարկը գնդապետ Մուշեղ Սմբատյանի մասին: Շուտով լույս կտեսնի թերթում, այնուհետև՝ առաջին գրքով: Ինչպե՛ս կուզենայի մեկական

օրինակ ուղարկել խմբագիր Ստրելցովին, բայց նրա հասցեն չգիտեմ, Վոլկովին, որը եթե ինձ չփրկեր, այս ակնարկը չէր գրվի, բայց նա ինքը չփրկվեց անտեսանելի օձերի խայթոցից, բոլոր պետությունների բոլոր ղեկավարներին, որոնք կարող են այնպես անել, որ վոլկովներն ապրեն, բայց նրանք՝ այդ ղեկավարները ժամանակ չեն ունենա իմ ակնարկը կարդալու: Էհ, ի՞նչ արած, թող չկարդան, ես կունենամ իմ ընթերցողները: Նրանցից առաջինը Սեդան է, որ ահա ճակատը կախել է իմ ձեռագրերի վրա: Ես վատ կարծիք չունեմ նրա ճաշակի մասին, և երբ նա գովում է այս կամ այն հատվածը, շոյվում է ժուռնալիստի իմ ինքնասիրությունը: Բայց ջղայնանում եմ, որովհետև նա համառորեն ուզում է իմանալ, թե արդյոք ես չե՞մ այս ակնարկում հարևանցիորեն նկարագրված գնդապետի փեսան:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՈՉՆՉՈՒԹՅԱՆ ՍԱՐՍԱՓԸ

Գիշերվա խավարն այնպես է մակարդվել, որ կարող ես մատներով շոշափել: Ոչ աստղեր կան, ոչ լուսին: Զարմանալի է. դրանք վարագուրող ամպեր էլ չկան, բայց մութ է այսպես: Գերեզմանոցում եմ: Նստել եմ երկու ամիս առաջ այստեղ ավելացած շիրմաքարի կողքին, որի տակ թաղված է իննսունհինգ գարուն և իննսունհինգ ձմեռ տեսած իմ համագյուղացիներից մեկը՝ Մարտիրոս քեռին: Նույնքան գարուն և նույնքան ձմեռ, բայց ձմեռներն ավելի շատ են, որովհետև նրա կյանքի մեջ միշտ ներխուժել է ցուրտը: Շիրմաքարին չեմ նստել. ինձ թվում է, թե նա կզգա իմ ծանրությունը, կմտածի, որ աստված ինձ չի շնորհել մարդուն հասանելիք գութի բաժինը: Երբ նա մահացավ, ես առաջին անգամ մահից վախեցա: Ծայրաստիճան սմքած ու պաղ դիակ էր, միայն փայտ, չոր, անկյանք փայտ, սարսափեցնող, ցուրտ: Իմ տեսած դիակների մեջ, այնուամենայնիվ, կյանքի նշույլ է եղել, ոմանց դեմքին՝ ժպիտ: Հիմա արդեն միայն ոսկորները մնացած կլինեն:

Մեր գյուղի բանաստեղծն էր Մարտիրոս քեռին: Գյուղացիները հարգում էին նրան՝ հաճախ իրենց հարգանքն արտահայտելով մի տաք կերակուրով, մի բաժակ օղիով: Բայց ես, ավաղ, վերջ դրեցի այդ հարգանքին:

Պատերազմից նոր էի վերադարձել և գյուղի ղեկավարների անօրինությունների դեմ զայրացած՝ նրանց մասին ոտի վրա երգիծական քառյակներ էի հորինում: Երկու երեք ժամ չանցած՝ դրանք տարածվում էին գյուղով մեկ, այնպես տարածվում, որ ջահելներն արդեն երգի վերածած՝

թնդացնում էին կալերում ու կտուրներին։ Շուրջպար էին բռնում՝ երգելով իմ տողերը։ Մարտիրոս քեռին էլ էր հորինում, բայց նրա քառյակները չորացած տերևների պես ընկնում էին հողին և մնում։ Շրջկենտրոնից միլիցիոներ եկավ։ Ղեկավարներին վարկաբեկելու համար ինձ սպառնացին բանտարկել։ Շատերն ինձ պարսավեցին, նաև երգող-պարողներից շատերը։ Մարտիրոս քեռին միացավ նրանց։ Ոչ միայն միացավ, այլև պարսավողների մեջ ամենակատաղին էր։ Այստեղ արդեն նա տաղանդավոր էր, դիպուկ, կծու։ Եթե իր համագյուղացին չլինեի, ծնված լինեի, ասենք, չինական մի անհայտ գյուղում և ավելի մեծ ձիրքով, նա չէր նախանձի։ Աշխարհում քի՞չ կան իրենից ավելի օժտվածներ։ Բայց համագյուղացին էի, չնայած մեր տարիքների տարբերությանը՝ ընկերը։ Թող գոնե իրեն հավասար լինեի։ Նախանձի օձը փաթաթվել էր սրտին և խայթում էր։ Նա իրեն անզոր էր զգում, ոչնչացած։ Սարսափում էր գալիք օրերից։ Նրա շիրմաքարի մոտ նստած մտածում էի այդ սարսափի մասին։ Ուղեղիս մեջ հանկարծակի բռնկվում է այն միտքը, որ ոչնչության սարսափն էր դա, որը գիտակցված թե չգիտակցված, առավել կամ նվազ չափով պատում է մարդուն, երբ նա հարկադրված է լինում իր վիճակից նահանջել։ Մարտիրոս քեռին չգիտեր, որ այդ սարսափն է իրեն գործողության մղում։ Այն ժամանակ ես էլ չգիտեի, որ նույն զգացումն ունեմ և ես։ Գյուղի անբարո ղեկավարների դեմ չկռվելն ինձ համար նշանակում էր մարդ չլինել։ Դա էլ էր սարսափ, բարոյական ոչնչության չգիտակցված սարսափ, որն ինձ մղում էր հորինելու այն երգիծական քառյակները։ Ուզում եմ ճշգրտել սահմանները։ Ճի՞շտ կլինի ասել ոչնչության սարսափ, թե՞ հարկավոր է ավելի մեղմ ձևակերպում գտնել։ Չէ՞ որ խոսքն անպայման մահվան կամ

ոչնչացման մասին է։ «Ոչնչության սարսափ» լսում եմ խավարի միջից։ Բայց նրանցից շատերն, ովքեր երգում-պարում էին իմ քառյակները և հետո շուռ եկան իմ դեմ, ամենքն էլ մահվան կամ ոչնչացման սարսափից չարեցին այդ։ Պարզապես ծանր ու թեթև արեցին և գտան, որ գյուղի ուժեղներին հակադրվելով ավելի շատ բան կկորցնեն, քան կշահեն համարձակ լինելով։ Ինչ է սա։ «Ոչնչության սարսափ», - կրկնվում է խավարի միջից, և մի բան փաթաթվում է պարանոցիս։ Օգնեցեք, գոռում եմ, բայց կոկորդիցս ձայն դուրս չի գալիս։ Շունչս կտրվում է։ Օ՞ձ է ինձ խեղդում։ Չէ, օձ չէ, մարդու ձեռքեր են, կմախքի պես չոր ձեռքեր։ Հայացքս նրանց վրայով սահում է և ծանր խավարի մեջ նշմարում եմ շարունակությունը՝ լայն կուրծք, լայն ուսեր, որոնց վրա մի մեծ գլուխ է։ Բարձր հասակ։ Աչքերը վառվում են պաղ ֆոսֆորային փայլով։ Մթության մեջ միայն այդ աչքերն են երևում հստակ, մեկ էլ կոկորդս սեղմող ձեռքերը։ Ինչո՞ւ է խեղդում։ Թշնամիներիս մեջ այսպիսի մեկը չկա։ Ուրեմն ավազակ է, թալանել է ուզում։ Բայց ինչո՞ւ չի թալանում։ Ահա ժամացույցս, մատիս ադամանդե մատանին։ Թող վերցնի ու գնա։ Ինքս կտամ։ Արժե՞ մի ժամացույցի և մի մատանու համար մարդ խեղդել։ Խեղդում է, որ հետո չասե՞մ, թե ով է ինքը։ Այս խավարի մեջ ինչ եմ տեսնում, որ ինչ ասեմ։ Չեմ էլ ճանաչում իրեն, ոչ անունը գիտեմ, ոչ էլ հասցեն։ Անծանոթ, ինչ ունեմ չունեմ՝ վերցրու, ուզո՞ւմ ես վերնաշապիկս էլ տամ։ Բայց ձայն դուրս չի գալիս։ Թվում է՝ խավարը ծանր ջրի պես լցվում է կոկորդս։ Խեղդվում եմ։ Քիչ առաջ մտքովս էլ չէր անցնում, որ վերջս այսքան մոտիկ է, Մարտիրոս քեռու շիրմաքարի պես մոտիկ։ Փառք աստծո, մահվան ձեռքը թողեց կոկորդս և բռնեց օձիքիցս։ Շնչելուց լավ բան չկա աշխարհում։ Ջհանդամը թե շուրջս ահավոր գիշեր է և ես մեն-մենակ եմ այս

անծանոթ ուժի դեմ։ Նա ինձ հրում է գերեզմանոցից ներքև։ Մի քիչ էլ որ հրի՝ անդունդի եզրին կլինեմ։ Մանուկ ժամանակ խաղում էինք այստեղ և զգուշանում նրա ահռելի խորությունից։ Դրա համար գիտեմ, որ եթե մի քիչ էլ հրի, մի երկու մետր, կընկնեմ անդունդը, այնքան ահռելի անդունդը, որ մեզնից ամենահամարձակն անգամ սիրտ չէր անում կանգնել եզրին և ցած նայել։ Արդեն եզրին եմ։ Լավ է, որ թիկունքով եմ կանգնած։ Լավ է, որ թանձր խավար է, և ես ոչինչ չեմ տեսնում։ Բայց ինչո՞ւ այս հրեշն ինձ բերեց կանգնեցրեց այստեղ։ Կարող էր, չէ՞, տեղնուտեղը խեղդել, ինչո՞ւ չխեղդեց։ Անդունդը գլորելն ավելի՞ մեծ հաճույք կպատճառի նրան։ Ինչո՞ւ չի գլորում։ Եթե ավազակ է, թող վերցնի ժամացույցը և ադամանդե մատանին ու ինձ հրի ներքև։ Այնքան ուժեղ է, որ մի մատով էլ կարող է այդ անել։ Ո՞ւմ է սպասում։ Ինչի՞ է սպասում... Դու պիտի քո էությունը պարզես նրան, հայտնես քո ամենաթաքուն մտքերը։ Վայ քեզ, եթե ստեցիր։ Ինքդ էլ գիտես, որ անդունդը շատ խորն է, հատակին՝ սուր-սուր քարեր... Ո՞վ էր այդ պայմանը դնողը, որտեղի՞ց լսեցի այդ ձայնը, իմ ներսից, այս հրեշից, թե՞ տիեզերքից։ Ասա, հրեշ, դո՞ւ ես այդպիսի պայման դնում։ Ասա, ով անողոք, ասա, որ ես ասեմ՝ համաձայն եմ, թե ոչ։ Քո պահանջած անկեղծությունը նույնքան սարսափելի է, որքան այդ անդունդը։ Այդքան անկեղծ լինում են միայն խելագարները, որոնք խզել են բոլոր տեսակի կապերը շրջապատի հետ։ Նրանց անկապ-անկապ խոսքերը չպիտի խոստովանություն համարել, որովհետև բնազդական են, ոչ կորցնելու վախ կա դրանցում, ոչ գտնելու ակնկալիք։ Այդ վախն ու ակնկալիքն ունեն նույնիսկ ինքնասպանները, որոնք մի շահեկան երկտող են թողնում իրենց հետմահու կարճատև կամ դարավոր կյանքի համար։ Առավել ևս ունեն ապրողները։

Թող որ իրենց նողկալիների մեջ ամենանողկալին համարեն, բայց կոնկրետ դեպքերի նկարագրությամբ դա չեն մանրամասնի այնպես, որ քարը վերցնես և գլխին տաս։ Ոչնչության սարսափը կաշկանդում է նրանց։

Ով դաժան, քո պահանջած անկեղծությունն այդքան սարսափելի է։ Այս անդունդի պես սարսափելի է։ Ասա, դո՞ւ ես պայման դնողը, որ ես որոշեմ ընտրել երկու սարսափելիներից մեկը։ Բայց ո՞վ ես դու։ Իմաստուն էա՞կ, որը բարբաջանք համարեց իմ բացատրությունը, թե՞ մի բթամիտ, որը ոչինչ չհասկացավ իմ ասածից։ Ես չգիտեմ ինչպես խոսեմ քեզ հետ, ի՞նչ բառերով, դո՞ւ-ով, թե՞ դուք-ով։ Դե ձայն հանիր, որ ես իմանամ ում հետ գործ ունեմ։ Գուցե համաձայնեմ քո պայմանին, եթե, իհարկե, դու ես այն պայման դնողը։ Գոնե աչքերիդ փայլը փոխվեր։ Նույն ֆոսֆորափայլն է։ Դեմքիդ վրա գոնե մի մկան շարժվեր։ Զգում եմ՝ իմ ու քո միջև ոչ մի հաղորդակցություն չի լինում։ Էլ ինչո՞ւ ես ամուր բռնել իմ օձիքից, եթե ես քեզ համար ոչ մի նշանակություն չունեմ։

Գուցե դու ռոբոտ ես։ Երբ ծրագրված ժամը լրանա՝ կողերս կփշրես անդունդի սուր քարերի վրա։ Պետք է մեռնել հպարտ, արժանավայել։ Չկարողացա այդպես ապրել, գոնե այդպես մեռնեմ, որ ինձանից հետո ասեն, նա արժանի էր հարգանքի, մեռավ ժպիտը դեմքին։ Մի անգամ խախտել եմ այդ որոշումս, դեկտեմբերի 7-ին՝ երկրաշարժի պահին։ Ճոճվում էր շենքը, ճոճվում էի ես գործընկերներիս հետ։ Հիմա, հիմա փուլ կգա։ Թքած մահվան վրա, մեռնենք արժանավայել։ Բայց դա հնչեց միայն իմ ներսում։ Ում ասեի, ինչո՞ւ ասեի, երբ կողքիս մարդիկ էլ ինձ հետ փլատակների տակ էին մնալու։ Անհնար էր փրկվել։ Եթե հավատայի, որ գոնե մեկնումեկը կենդանի կմնար, ես կասեի այդ խոսքը։ Հիմա երկրորդ առիթն է ներկայացել որոշումս կատարելու։ Բայց շուրջս ոչ ոք չկա։

Հանկարծ Մարտիրոս քեռին հրաշքով կենդանանար և վկա լիներ։ Առանց վկայի, չէ, չեմ կարող ժպտալով մեռնել։ Անէության մեջ ամեն ինչ անիմաստ է։ Գոնե միայն մի մարդու՝ Մարտիրոս քեռու հիշողության մեջ մի քանի տարի ապրեի արժանավայել մեռնողի լուսապսակով։ Դա մահ է, բայց դեռ անէություն չէ։

Կար ժամանակ, որ ես հավատում էի մեռելների հարությանը, հրեշտակների և սատանաների գոյությանը։ Այս գերեզմանով անցնելիս վախենում էի, որ հարություն առած որևէ մեռել կամ սատանա ինձ կգլորի անդունդը, աղաչում էի հրեշտակներին, որ ինձ փրկեն։ Երանի նույն հավատացյալը մնայի։ Երբ այս ոսկրոտ ձեռքը, այս սատանան ինձ շպրտեր անդունդն ի վար, ես դրախտ կգնայի։ Թեկուզ և դժոխք, ուր ինձ հետ կլիներ հույսը։ Մահն ամեն ինչի վերջն է, նույնիսկ հույսի։ Ու հիմա այդ վերջն է։ Ինձ ծանոթ բոլոր կրոնները խոստանում են հոգու հետմահու կյանք ու դրա համար էլ այդքան շատ հավատացյալներ ունեն։ Մարդիկ ոչնչության սարսափից կանգ չեն առնում ոչ մի բանի առաջ՝ ոչ կեղծիքի, ոչ դաժանության։

Է՛յ դու, հիմա ես քեզ կդարձնեմ... մի ժլատ հարուստ։ Ոսկու սնդուկներ ունես, բայց քո իսկ սննդի համար մեկ ոսկի ծախսելիս ցավից տնքում ես։ Կարծես քո սեփական լյարդն ես ուտում։ Ոսկին քո ուժն է, քո զորությունը, որից զրկվել չես ուզում։ Քո իշխանության զգացումն է, առանց որի ոչնչություն ես։ Գողեր են մտնում տունդ, տանում են ոսկու մի մասը։ Դիտմամբ բոլորը չեն տանում, որպեսզի հետո էլի տանեն ու դու նորից խելագարության դուռը հասնես։ Տանջել են ուզում։ Ավելի ճիշտ՝ մաս-մաս կտրելով՝ սպանել։ Բայց դեռ այնքան ոսկի են թողել, որ անկարող ես մի կերպ ապրել։ Կաթվածը խփում է քեզ։ Չդիմացար ուժիդ և իշխանությանդ կորստյան

կսկիծին։ Չդիմացար ոչնչության սարսափին։ Այդպե՞ս չէ, ասա։ Գոնե հեգնիր ինձ։ Դա բավական կլինի, որ ես կռահեմ քո ինչ նյութից լինելը։ Եթե էլի համառես՝ կվառեմ լույսն ու դու չես լինի, կցնդես սենյակիս խավարի հետ։ Չեմ վառի, դեռ հույս ունեմ քեզ համակել ոչնչության սարսափով։ Իսկ եթե դու հենց ոչնչության սարսա՞փն ես։

Ցատկում եմ անկողնուց և վառում լույսը։ Բայց խավարն էլի խավար է մնում։ Իմ դեմ դարձյալ նրա ֆոսֆորային աչքերն են ու ես դարձյալ... անդունդի եզրին։ Ե՞րբ պիտի լուսանա, ցրվի այս դաժան խավարը, այս մղձավանջը։ Գյուղում հավանաբար աքլորներ չկան, որ իրենց կանչով ազդարարեն լուսաբացը։ Ամբողջ մի դար կանգնած եմ այս անդունդի եզրին։ Այսքան էլ երկար գիշե՞ր կլինի։ Կարծես ձայն լսեցի։ Ո՞վ է։ Մարտիրոս քեռին ելավ գերեզմանից։

- Մարտիրոս քեռի, ինձ ազատիր սրա ձեռքից։

- Ես ի՞նչ կարող եմ դրան անել։ Երբ մեռա՝ իննսունհինգ տարեկան էի, հիմա իննուսունվեցի մեջ եմ։

- Էխ դու, հենց հարություն առար՝ քեզ իսկույն պատեց ոչնչության սարսափը։ Չես ուզում կյանքդ վտանգել։ Չէ՞ որ դու մեռած ես, ի՞նչ կարող է նա քեզ անել։

- Ես մեռած էի, բայց աստված ինձ ետ ուղարկեց, որ հարյուրս լրացնեմ։

- Աստված քեզ ետ ուղարկեց, որ քավես մեղքերդ։ Գոնե մեկը։ Հիշու՞մ ես իմ երգիծական քառյակները։ Քիչ էր մնում ինձ բանտարկեին։ Քո առաջին կյանքում մեղանչեցիր իմ դեմ՝ անցնելով ուժեղների կողմը, և նրանք իրենց ավելի ուժեղ զգալով՝ նոր, ավելի անարդար գործեր կատարեցին։ Այս երկրորդ կյանքում կարողացիր անցնել թույլի կողմը. գոնե օձիքս ազատիր այս անիմանալի արարածից։

- Ո՞վ է անիմանալի ուժի դեմ կռիվ մղում, նախ պետք է ճանաչել։

- Շատ ես խելացի դարձել այն աշխարհում, Մարտիրոս քեռի։ Հիմա իմ հերթն է այնտեղ խելք հավաքելու։ Այս անիմանալին հո զուր չի՞ օձիքս բուռն հավաքել և ինձ կանգնեցրել անդունդի եզրին։ Ուր որ է կգլորի ներքև։ Դա միակ իմանալին է։ Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով՝ անհայտ է։ Մահիցս առաջ գեթ իմանայի ով է նա։ Եթե որպես փրկության պայման առաջարկեր բացարձակապես անկեղծ լինել, ես մոտավորապես կկռահեի նրա ով լինելը։ Անունը խիղճ կդնեի, ֆոսֆորային աչքերը կհամարեի հայելի հոգու դեմ։ Բայց նա մի բառ անգամ չթոթովեց։ Ով էլ որ լինի, թեկուզ հենց ինքը՝ ոչնչության սարսափը մարդու կերպարանք առած, ես պիտի կռվեմ նրա դեմ։ Մահից ավելի ի՞նչ երկյուղ կարող է լինել։ Հիմա մահը անէություն չէ։ Հիմա ես հավատում եմ, որ այն աշխարհ կա, չէ՞ որ դու, Մարտիրոս քեռի, այնտեղից եկար։ Հիմա գոնե մեկը կա կողքիս՝ դու։ Վկա եղիր, որ ես մեռա ժպիտը դեմքիս և պատմիր մերոնց։

Հուսահատ փորձ եմ անում հանելուկ արարածին ցած գլորելու, բայց նա սառն ու անտարբեր, մի մատով ինձ շպրտում է ներքև։ Օդի մեջ զգում եմ անդունդի հատակի սուր քարերից ջարդվող կողերիս ցավը և ճչում եմ՝ արթնանալով իմ ձայնից։

Դրսում ամառային պսպղուն առավոտ է։ Կրծքիս վրա մոլտում է կատուս։ Նրան դեն եմ հրում և նստում գրասեղանիս առաջ։ Գրի եմ առնում երազս։ Ոչ մի դեպք կամ դեմք չեմ հորինել, իրական են ֆոսֆորափայլ աչքերով մարդը և Մարտիրոս քեռին։ Այսինքն՝ ես նրանց իսկապես տեսել եմ երազում։ Եղել են և մտքերը։ Գրի առնելիս արթուն մարդու

տրամաբանությամբ դրանք մասնակի փոփոխության եմ ենթարկել:

ՍԻՐԱՀԱՐՎԱԾԸ

Նրանք մեր տանն առաջին անգամ են լինում: Գևորգը և Սեթոն: Ինչո՞ւ են եկել: Լավ գիտեն, որ հարուստ չեմ, ուրեմն պարտք վերցնելու չեն եկել: Գուցե ուզում են դիմո՞ւմ գրել տալ, գյուղում շատերն են այդ հարցով դիմում ինձ: Այդ դեպքում ինչո՞ւ են երկուսով եկել. դեռ չի պատահել, որ երկուսով մի դիմում գրել տան: Ուրեմն՝ բողոք է: Միայն բողոքելիս են միավորվում՝ ապահովության համար: Ինչո՞ւ եմ գլուխ ցավեցնում, որ եկել են՝ կասեն էլի, թե ինչու են եկել: Շտապ բան է լինելու, թե չէ՝ չէին հասնի գյուղի ծայրը, որտեղ մեր տունն է, կսպասեին մինչև ես գնայի գյուղամեջ: Սպասում եմ՝ դե՛, դե՛, ասացեք: Բայց նրանք հեռվից են սկսել: Գևորգն ասում է, որ մենք մանկության ընկերներ ենք, Սեթոն պատմում է, թե ինչպես մի անգամ ինքն ու Գևորգը նստած էին աղբյուրի քարին, ես հիսուն մետրից նշան բռնեցի իրեն՝ ասացի. «Սեթո, այս քարով խփե՞մ ճակատիդ»: «Խփիր,- ասաց Սեթոն,- եթե ճակատիդ կպավ, հալալ է քեզ, եթե չկպավ, երկու մետրից ես եմ խփելու ճակատիդ»: Իմ քարն օդում գծեց մի ճշգրիտ կորագիծ, որի ծայրը սկսվելով իմ ձեռքից՝ վերջացավ Սեթոյի ճակատի ուղիղ կենտրոնում: Մեզնից ոչ մեկը չէր նախատեսել արյուն, բայց արյուն եկավ: Սեթոն ու Գևորգը նետվեցին ինձ բռնելու: Ես փախա: Հիմա էլ հիշում եմ, թե ինչպես էի փախչում՝ թիկունքիս զգալով նրանց շնչառությունը:

- Հիմա վերջապես քեզ բռնել ենք: -Ասում է Սեթոն,- էլ մեր ձեռքից չես ազատվի: Մեր մանկության ընկերը դժբախտության մեջ է, պիտի օգնես:

Սեթոն հարկ չի համարում բացատրելու, որ մեր մանկության ընկերը Գևորգն է, դա ինքնին հասկանալի է:

- Ի՞նչ դժբախտություն, Սեթո:

- Սիրահարվել է:

Սեթոն լավ պատմող չէ: Նրա կցկտուր խոսքերից հասկանում եմ, որ նրանք մեր տունն են եկել, որովհետև ես Հասմիկի հորեղբոր տղան եմ: Բայց Հասմիկը մեկ շաբաթ է, ինչ հարս է գնացել մեր հարևան գյուղը: Էլ ես ի՞նչ կարող եմ անել:

- Պիտի փախցնենք,- ասում է Սեթոն,- Հասմիկն ամուսնուն չի սիրում, զոռով են մարդու տվել:

- Իսկ դու շա՞տ ես սիրում Հասմիկին: - Հարցնում եմ Գևորգին:

- Շատ:

- Իսկ նա սիրո՞ւմ է քեզ:

- Սիրում է:

Այ քեզ բան, ես մեկ ամիս գյուղում չեմ եղել և նոր եմ լսում, որ կրկնվել է մի ողբերգություն, որը բնորոշ էր նահապետական գյուղին: Հիմա քսաներորդ լուսավոր դարի երկրորդ կեսն է, պետք է շտկել սխալը, հենց թեկուզ հանուն այն բանի, որ քսաներորդ դարն իրավունք ունենա լուսավոր կոչվելու: Դիմումներ և բողոքներ գրելը դատարկ բան է, գործ է հարկավոր: Իսկ եթե Գևորգն ու Սեթոն ստո՞ւմ են: Գուցե Հասմիկը երբեք էլ չի սիրել Գևորգին:

- Այս թաշկինակը Հասմիկն է ինձ նվիրել: -Փարատում է Գևորգն իմ կասկածը:

Ա՛խ, թաշկինակներ, արդեն քանի դար է, որ դուք բառերից ավելի լավ եք արտահայտում զգացմունքները: Նա ինձ թաշկինակ չնվիրեց: Ոչ էլ իսկ ժպիտ: Գնացքն օրորում էր մեզ: Նա բացել էր հանրահաշվական բանաձևերով լեցուն մի տետր և կարդում էր: Երբ ես հարցրեցի՝ հեռակայո՞ւմ եք, նա գլխով բացասական շարժում արեց: Իսկ ես հաստատ գիտեի, որ հեռակայում է և հիմա Լենինականից Երևան է գնում քննություններ հանձնելու: Եթե գլխով բացասական շարժում արեց, նշանակում է՝ չի ուզում ինձ հետ խոսել, ես հետաքրքրական չեմ նրա համար: Մինչև Երևան ես չհամարձակվեցի որևէ խոսք փոխանակել նրա հետ:

Բանաստեղծություններ էի գրում, նվիրում ընկերոջս, որի հեռավոր բարեկամներից էր նա, ով ուզում էր չափածո հիշատակ ունենալ դեռևս զինվորական բլուզը չհանած մի երիտասարդից, որը, ով գիտի, վաղը հայտնի բանաստեղծ կդառնա: Նրանք չգիտեին, որ ես իրենց ոչինչ չեմ նվիրում, իմ բոլոր տողերը նրա համար էին: Իմ սիրտը՝ նույնպես: Մեր առաջին հայացքից: Ընդամենը մեկ ժամվա պատմություն ունեցող սեր, բայց ինձ թվում էր, թե Ադամից և Եվայից առաջ մենք ենք եղել աշխարհում, ես նրան սիրահարվել եմ անհիշելի ժամանակներում ու տառապել անհիշելի ժամանակներից մինչև այսօր: Հիմա ինձ պես տառապում է այս Գևորգը, միայն այն տարբերությամբ, որ նա կարող է կրծքին սեղմել հորեղբորս աղջկա նվիրած թաշկինակը: Պիտի որ այդ թաշկինակը բուրի դրախտի վարդերի պես: Է՛խ, Հասմիկ, դու հո անցյալ դարի աղջիկ չէի՞ր, որ ամուսնացար չսիրած մարդու հետ:

- Արևը մտնի՝ գործի պիտի անցնենք: -Սեթոն ինձ սթափեցնում է խոհերից: -Մեր լավ ընկերոջը հասցնենք իր մուրազին:

- Հասցնենք: Ես ի՞նչ պիտի անեմ:

-Հեչ: Պիտի հարցնես Հասմիկին՝ համաձա՞յն է, որ մենք փախցնենք իրեն: Մնացածը մենք գիտենք:

Ինձանից պահանջվում է մի շատ տրամաբանական բան. եթե ծնողներն աղջկան զոռով են մարդու տվել, և նա ուզում է հիմա իր սիրած տղայի հետ լինել, ամեն մի օրինավոր մարդու պարտքն է աջակցել նրան: Ես օրինավոր մարդ եմ, և ինձնից պահանջվում է միայն թաքուն հարցնել Հասմիկին՝ ուզո՞ւմ է այս գիշեր կամ վաղը գիշեր կամ ինչ-որ ցանկացած գիշեր փախչել իր սիրած տղայի հետ: Հարցնելը դժվար չէ, այնքան հեշտ է, որքան շուկայում խնձորի գինը հարցնելը: Առնողը ես եմ՝ չեմ առնում կամ առնում եմ: Ինձ կընդունեն որպես հարազատի և չեն կասկածի, թե ինչ մտադրություն ունեմ: Իսկ հարմար պահ միշտ էլ կլինի:

- Մենք ձորում կսպասենք քեզ:

Դարձյալ Սեթոն է: Իսկ Գևորգը վշտից այնպես է կորցրել իրեն, որ ոչ մի գործնական բան չի կարողանում մտածել: Խեղճ տղա: Երևի սրտում չխոցված տեղ չի մնացել: Տնքում է և ամեն տնքոցի հետ կարծես շունչը փչում է: Իմ սրտում էլ չխոցված տեղ չկա, երևի աչքերս էլ, Գևորգի աչքերի պես թախծոտ են: Շատ սուր են սիրո փշերը:

Մեր հարևան գյուղը հեռու չէ, հազիվ մի կիլոմետր: Դուռը բացում է Հասմիկի ամուսինը և իմանալով իմ ով լինելն ուրախ ներս է հրավիրում: Սեղան են բացում, խմում են իմ կենացը: Ես չեմ խմում: Ձեռք չեմ տալիս ոչ հացին, ոչ ձվածեղին, ոչ մեղր ու կարագին: Հրաժարվում եմ ոչ սիրալիր կերպով: Ախր նամարդություն կլինի մարդկանց հացն ուտել և նրանց դավաճանել:

Նրանք ինձ նման միամիտ չեն, հասկանում են, որ մաքուր սրտով չեմ հյուր եկել իրենց: Ես պետք է կեղծեի,

քաղցրանենգ լեզու բանեցնեի: Այդպես են վարվում նման առաքելություն իրագործող բոլոր նրանք, ովքեր ուզում են հաջողության հասնել: Ես չեմ կարողանում կեղծել: Ոչ մի պատառ հաց չեմ ուտում, շնորհավորական ոչ մի խոսք չեմ ասում նորապսակներին: Դրա համար էլ դանակ են սրում, վախենում են անշուշտ: Գուցեև չեն վախենում, այլ պատրաստվում են խրել աղիքներիս մեջ, ուր նրանց հացն ու ձվածեղը, մեղրն ու կարագը պիտի լինեին հիմա: Եվ խրողն այս արնակալած աչքերով տղան է, որը չի բավարարվում դանակը սրելով, այլ ֆշշացնում է խոսքեր, որոնք մի իմաստ ունեն՝ մարդ մորթելն ինձ համար հավ մորթել է, երբ այդ մարդը հավի պես ընկնում է մեր գարու արտը: Իհարկե, նա չի կարող գնահատել իմ ազնվությունը, այն, որ խարդախություն չեմ արել, չեմ ժպտացել և տակից իմ գործն արել: Բայց մի՞թե խարդախություն չէ, որ որպես բարեկամ հյուր եմ եկել իրենց և ուզում եմ կազմակերպել իրենց հարսի փախուստը: Դանակը սրող տղան հասկացել է այդ խարդախությունը: Իրա՞վ հասկացել է, թե՞ ինձ է թվում: Եթե ոչ՝ աչքերն ինչո՞ւ են դուրս թռչում բներից:

Ի՞նչ անեմ, թողնեմ ու հեռանա՞մ ձեռնունայն: Հեռանամ առանց օգնելու ինձ նման մի սիրահարի՞: Խեղճն ինչպես էր տնքում ցավից: Աչքերում թախծի անաստղ գիշերներ կային: Չէ, պիտի մի միջոց գտնել: Բայց ի՞նչ: Ոչ մի միտք չի ծնվում ուղեղիս մեջ: Ի՜նչ ապիկար եմ: Ձախլիկ: Անշնորհք: Ինձպեսներին չեն սիրում: Ճիշտ վարվեց նա, որ մերժեց ինձ: Անխելք, անխելք մարդ: Դու գնացքում մինչև ականջներդ սիրահարվելուց հետո հաջորդ օրը պատահաբար հանդիպեցիր նրան, բարևեցիր, բայց նա բարևդ չառավ: Հետո ուրիշի միջոցով ներողություն խնդրեց, որ ցրված է եղել, բարևդ չի լսել: Դու նեղվելու փոխարեն մի սիրավառ

բանաստեղծություն ուղարկեցիր նրան: Ո՞ւմ, մի աղջկա, որին չես ճանաչում, թեև կարծում ես, որ Ադամից ու Եվայից առաջ ծանոթ ես եղել: Նա խիստ բարկացել էր: Ինձ համար սրվող այդ դանակը, եթե սիրտս խրվի, ավելի մեծ ցավ չի պատճառի, քան այդ բարկությունը: Փոխադարձ սիրո ոչ մի հույս: Ավելի հեշտ է պատկերացնել, որ մի ամբողջ բանակի ոտքերի տակ տրորված խոտը կշտկի իր մեջքը, քան իմ սերը ծիլ կտա: Ասում են, որ նա սիրում է մի տղայի, որը սեփական «Վոլգա» ունի, և նրանք ամեն օր քաղաքից դուրս են գալիս զբոսանքի: Ա՜խ, գոնե մի անգամ մեր գյուղի կողմը գային: Տեսնեի նրան… թեկուզ ուրիշի հետ:

- Մեր գարու արտն ընկած հավը թող արտից դուրս գա, թե չէ կմորթեմ: -Դանակն անվերջ սրող տղան է: Եթե նա իր դանակը սիրտս խրի, կվերջանա իմ սիրո ցավը: Ես…

Այդ միջոցին հևալով ներս է ընկնում հորեղբայրս: Հայրդ, ասում է, վայր է ընկել և ոտքը ջարդել, քեզ շտապ կանչում է: Բռնում է թևիցս ու գրեթե ուժով ինձ դուրս բերում: «Հիմար մի եղիր,- ասում է դրսում,- Հասմիկին փախցնելու միտքը գլխիցդ հանիր»:

Մենք տուն ենք վերադառնում, իսկ ձորում ինձ են սպասում Գևորգն ու Սեթոն: Հորեղբայրս գիտի այդ մասին և ասում է.

- Եթե իրենց հաճելի է, թող սպասեն մինչև առավոտ:

Երևի բոլորը գիտեն Հասմիկին փախցնելու մեր մտադրությունը: Այդ ինչպես են գործը կազմակերպել Գևորգն ու Սեթոն, խայտառակ եղան իրենք էլ, ես էլ: Ես փորձում եմ ինձ արդարացնել.

- Հորեղբայր, ախր Գևորգն ու Հասմիկն իրար սիրում են: Դու զոռով ես Հասմիկին մարդու տվել:

Դու լավ գիտես, որ Հասմիկը սիրում է նրան: Թաշկինակ է նվիրել:

- Չի նվիրել, կորցրել է, Գևորգն էլ գտել է: Երբ ուզեցել է վերադարձնել, Հասմիկը չի վերցրել: Կասկածել է, թե կեղտոտած կլինի:

Ուրեմն Գևորգը թաշկինակը ետ չվերցնելն ընկալել է որպես նվիրում: Ես էլ նոր հոգեբանական թյուրիմացության մեջ եմ: Իմ սիրավառ բանաստեղծությունը նա չէր պատռել, ոչ էլ հետ ուղարկել: Խավարի մեջ դա միակ կայծն էր, հույսի երերուն կայծը, որ նա… անտարբեր չէ իմ նկատմամբ: Աստված իմ, ի՞նչ հանելուկ է, որ սիրահարը, ինչ դաժանությամբ էլ նրան մերժես, դարձյալ սրտի խորքում, իրենից էլ թաքուն պահպանում է հույսի մի չկտրված թել: Ես համոզված եմ, որ նա բանաստեղծությունս չի պատռել կամ ետ ուղարկել, որպեսզի իր հարուստ փեսացուի հետ կարդան ու ծիծաղեն վրաս: Համոզված եմ, բայց դարձյալ չի կտրվում այդ թելը, երկարում է ցնորքից ցնորք: Երևի դա է պատճառը, որ չեմ խելագարվում:

Երանի Հասմիկը Գևորգին իսկապես նվիրած լիներ իր թաշկինակը, ինձ հաջողվեր կազմակերպել նրա փախուստը: Ես գլուխս բարձր պահած կշրջեի գյուղում. սիրահարն օգնել է իր նման սիրահարին: Հիմա ծիծաղելի դրության մեջ եմ ընկել, գյուղամեջ չեմ դուրս գալիս, խուսափում եմ հարևանների հետ հանդիպելուց: Իսկ Գևո՞րգը… Ո՞ւր մնացին նրա տնքոցները, կարծես ոչինչ էլ չի պատահել, նույնիսկ ժպտում է: Չորս օր հետո նա ամուսնացավ ուրիշի հետ: Ես էլ ամուսնացա, բայց չորս տարի հետո:

ԽՆՁՈՐ ԾԱԽՈՂ ԿԻՆԸ

Աշնանը մեղուների պարսեր են լինում շուկայում, տզզում են խաղողի կույտերի շուրջը: Հիմա մեղուներ չկան, ոչ էլ խաղող կա: Ձմերուկ էլ չկա: Իսկ Վաղինակը կնոջ հետ շուկա է եկել խաղող և ձմերուկ գնելու: Նրանք եկել են վաղ առավոտյան, որովհետև ապրիլին շուկա եկած խաղողն ու ձմերուկն արագորեն վաճառվում են: Եթե չհասնեն, նշանակում է մի ամբողջ օր պիտի կորցնեն, որպեսզի մյուս օրը գնեն ու ճանապարհ ընկնեն գյուղ: Բայց ոչ խաղող կա, ոչ ձմերուկ: Խնձոր ու տանձ ինչքան ուզես: Սակայն Վաղինակի հիվանդ մոր սիրտը խնձոր ու տանձ չի ուզել:

- Երկու-երեք շաբաթ եղավ ձմերուկի երես չենք տեսել: -Ասում է շուկայի դիրեկտորը: -Խաղող մեկ-մեկ լինում է:

- Այսօր կլինի՞: -Գրեթե միաժամանակ հարցնում են ամուսինները:

Տագնապ կա նրանց հարցի մեջ:

- Ի՞նչ իմանամ: -Ուսերը թոթվում է դիրեկտորը, ապա բարկացած դիմում մի գյուղացու,- է՛յ, ո՞ւր ես ապրանքդ առանց չեկի ներս խցկում:

Վաղինակն ու կինը մեկ անգամ էլ են անցնում վաճառասեղանների առջևով: Գուցե մեկն ու մեկն արդեն բերել է աշխարհի ամենահազվագյուտ բաները՝ ձմերուկն ու խաղողը: Եթե բերել է՝ պետք է որ վաճառասեղանին դրած լինի: Բայց նրանք չեն բավարարվում նայելով, հարցնում են նաև:

- Չկա, բալա ջան: Տարվա էս ժամանակին ձմերո՛ւկ: Խաղող էլ որ լինի՝ չամիչից չի տարբերվի:

Թող լինի չամիչ դարձած խաղող, միայն թե լինի, միայն թե հենց հիմա ճանապարհ ընկնեն գյուղ, չսպասեն վաղվան:

Գուցե վաղն ուշ կլինի: Վաղինակը դեմքը շուռ է տալիս վաճառողներից, աչքերը լցված են. երբ յոթանասուներեք տարեկան հիվանդը ձմերուկ ու խաղող է ուզում… Եթե վաճառողներն ուշադիր լինեին, նրա դեպի աչքերը գնացող ձեռքի շարժումից կհասկանային, որ լաց է լինում: Միայն մի կին, որ խնձոր էր ծախում, նկատեց այդ և հոգոց հանեց: Գուցե ուրիշներն էլ նկատեցին, բայց ժամանակ չունեին մի օտարի վիշտը զգալու:

- Բալեք ջան, ուրիշ շուկա գնացեք: -Խնձոր ծախող կինը գործնական մտքի տեր կին դուրս եկավ:

Ամուսինները ելան քաղաքի կենտրոնական շուկայից՝ մտածելով, որ եթե իրենց ուզածն այստեղ չեղավ, այնտեղ դժվար թե լինի: Բայց ծովն ընկածը ձեռքը փրփուրին էլ է գցում:

Երկու ժամ անց վերադարձան դատարկ ցանցով: Դարձյալ խնձորի և տանձի արկղներն էին վաճառասեղաններին:

- Քիչ առաջ խաղող կար: -Ասաց մեկը: -Պրծավ:

Ուրեմն եղել և անմիջապես վաճառվել է: Եթե խնձոր ծախող կինը նրանց ուրիշ շուկա ուղարկած չլիներ… Սա կարծես նա է, ձեռքով իր մոտ է կանչում:

- Վերցրեք, ես մեկ կիլոգրամ գնեցի ձեզ համար: -Կինը տալիս է խաղողը՝ թղթի մեջ փաթաթված: - Ասացի՝ եթե գան՝ լավ, եթե չգան՝ կվաճառեմ:

Հիմա կարելի է գյուղ գնալ: Ա՛խ, եթե ձմերուկ էլ լիներ…

Սարերը հաջորդում են սարերին: Տեղ-տեղ ձյուն կա: Ավտոբուսից պարզ երևում են ձնծաղիկներ: Զուր է Վաղինակը փորձում նրանց պայծառությամբ փարատել իր տխրությունը: Միակ լավ բանն այն կլիներ, որ ավտոբուսը թռչեր գնդակի արագությամբ: Ուշանում են: Արդեն երևում է

իրենց գյուղը մշուշի մեջ: Ուշանում են: Գյուղն արդեն այնքան մոտ է, որ երևում է իրենց տունը գյուղի ծայրին: Ուշանում են: Ոնց որ շատ մարդիկ կան հավաքված իրենց դռանը: Ուշացե՛լ են: Ոչ, ոչ, մարդիկ չեն, քարեր են: Իհարկե, քարեր են: Եղբայրն անցյալ տարի է բերել, որ նոր տուն կառուցի, բայց դեռ չի սկսել:

Վերջապես դռան մոտ են: Հիմա պիտի բացեն և, աստված իմ, ի՞նչ են տեսնելու: Առջևից գնում է Վաղինակը, կինը չի հասնում նրան:

- Մայրիկ, դու ո՞րն էիր շատ ուզում՝ խաղո՞ղը, թե՞ ձմերուկը:

- Խաղողը: Երազում հորեղբորս տեսա, խաղող էր ուտում: Ուզեցի՝ չտվեց: Արթնացա՝ սիրտս քաշեց:

Մայրը հաճույքով ուտում էր խաղողը, և որդին երբեք այդպիսի բավականություն չէր զգացել: Վերադարձի ճանապարհին նա հիշում էր այդ և ափսոսում, որ խնձոր ծախող կինը միայն մեկ կիլոգրամ խաղող էր գնել: Այնուամենայնիվ շատ շնորհակալ է այդ կնոջից: Վաղը կգնա շուկա, հավանական է՝ կհանդիպի նրան և շնորհակալություն կհայտնի նաև մոր անունից:

Բայց նա ոչ վաղը, ոչ էլ մյուս օրերին չգնաց շուկա: Միայն մտաբերեց, որ ինքը հինգ ռուբլի տվեց խաղողին, կինը մեկ ռուբլի վերադարձրեց: Ինքը չէր ուզում վերցնել, կինը վիրավորվեց. «Տղա ջան, ես էս բանը մաքուր սրտով արեցի, դրան փող մի խառնիր»: Ու ժպտաց Վաղինակը:

ԴԵՊԻ ԴԻՄԱՑԻ ԼԵՌՆԵՐԸ

Օգոստոսյան կանչող առավոտ է. կանչում են իմ նոր տան պատշգամբից երևացող լեռներն իրենց մշուշով: Գիտեմ, այդ մշուշին երբեք չեմ հասնի, որովհետև նա նման է հորիզոնին, որին ինչքան մոտենաս, այնքան կհեռանա: Ես չեմ հասնի այդ մշուշին, որը կցնդի մոտենալիս, բայց կհասնեմ լեռներին, որոնք հողից են և չեն խաբում: Հենց հիմա կվերցնեմ ուսապարկս և ճանապարհ կընկնեմ:

Կանգառում եմ: Վերջապես երևաց այն ավտոբուսը, որի ճակատին գրված է՝ Գառնի, և աչքերս դադարեցին ուրիշ ավտոբուսների ճակատներին ուրիշ անուններ կարդալուց: Բայց ես մինչև Գառնի չեմ գնալու, այլ մինչև Զրվեժ գյուղը, որը Երևանից մի քանի կիլոմետր է հեռու, դրա համար էլ հրմշտոցով ավտոբուս բարձրացողների մեջ չեմ. ոչինչ, կանգնած կգնամ: Կանգնում եմ հենց վարորդի մոտ, այստեղ մեքենան ավելի քիչ է ցնցում:

Տոթը միանգամից խտանում է ավտոբուսում: Երևի վարորդի համար էլ ծանր է, որ շտապեցնում է.

- Դե, դե, շուտ տեղավորվեք:

Եվ չի սպասում իր հրամանի կատարմանը, նույն վայրկյանին էլ ավտոբուսը թռցնում է առաջ: Բաց լուսամուտից թարմ օդը ներխուժում է ուղիղ մեր թոքերի մեջ: Մեր ականջները լցվում են վարորդի երգով:

- Ջան, ջան, ինչ էլ անուշ կերգե: -Զայն է տալիս ուղևորներից մեկը և իսկույն էլ ստանում իր խոսքի արձագանքը.

- Ձենդ անսպառ, ուստա:

Եթե աշուղ էլ լիներ երգողը, դարձյալ նույնն էր ասվելու՝ ձենդ անսպառ, ուստա: Այս «ուստան» հիմա ամենքին էլ

կպցնում են, առանց նկատի ունենալու մեծավորվողի վարպետության աստիճանը։ Ուստա՝ բառացի վարպետ է նշանակում, բայց իր այդ իմաստը թողած՝ այժմ ինչ-որ մաս է խլում «ընկեր», «հարգելի», «քաղաքացի», «գործավոր» և աստված գիտի, թե էլ ինչ բառերից և դառնում ամենագնացի պես մի բան։ Նույնիսկ օպերայի այգում տամա խաղացողներն իրար ուստա են ասում՝ ուստա Հայկո, ուստա Մինաս։

Վարորդը ոգևորված շարունակում է իր երգը։ Բայց ես չեմ ուզում, որ նրա ձայնն անսպառ լինի, որովհետև ոչ երգն է ինձ դուր գալիս, ոչ էլ, մանավանդ, ձայնը։ Հանկարծ նա կանգնեցնում է մեքենան, հասկանալի է, մեքենայի հետ նաև ձայնը։ Բացվում է դուռը, և մարդաձև մի տախտակ, ամբողջովին պատված կնճիռներով, բարձրանում է ավտոբուս։

- Ուստա, շատ է նեղվածք, տեղ չկա։

- Հո մարդը ճամփին չի՞ մնա։ Նեղ արեք, տեղ արեք։

Եվ մեքենան առաջվա թափով շարունակում է կծկել ճանապարհի սև ժապավենը։ Վարորդը էլ չի երգում։ Նրան երգից ավելի կարևոր է թվում խոսքը։

- Էսպես տասնհինգ-տասնվեց տարեկան տղա էի, քաղաքից մեր գյուղն էի վերադառնում...

- Ուստա, ո՞ր քաղաքից։

- Քանի՞ քաղաք կա, ըշտը մե հատ ըմ, Լենինականը։

Վարորդը ծուռ-ծուռ նայում է նրան, հասկանում ծաղրը, բայց բարեհոգաբար ժպտում է, որովհետև չի ուզում իր ասելիքն ընդհատվի։

- Օրն էլ ցո՛ւրտ, ձյուն չի եկել, բայց էն տեսակ ցուրտ քամի է փչում, ոնց որ Թումանյանի Գիքորի ոսկորները մտնող քամին։ Հոգնած եմ։ Սոված։ Քաղաքից մեր գյուղը տասնհինգ կիլոմետր է, տասն անցել եմ, հինգն էլ կա։ Առաջ ոտքով էինք

գնում գյուղից քաղաք, մեր առևտուրն անում և նույն օրն էլ վերադառնում։ Ոչ մեկի մտքով չէր անցնում ավտոբուսի սպասել։ Առավոտ կանուխ վեր էինք կենում ու քնաթաթախ ընկնում ճամփա, իրիկունը հոգնած-ջարդված վերադառնում։ Ո՜վ էր ավտոյի վրա հույս դնում։ Հիմի փոխվել է։ Հիմի մեր գյուղացին առանց ավտոյի մի քայլ չի անում։ Փող էլ թե չունենա, էլի կնստի ավտոբուս, շոֆերի հետ կռվելով տեղ կհասնի։ Հա, ցուրտ օր էր։ Էնպես հոգնած եմ, ոտքերս ծալվում են։ Ստամոքսիս մեջ էլ մլավում են քառասուն կատու։ Մենակ մի բան լավ է, որ քամին ետևից է։ Կանգնում եմ ոտքի վրա, քամին քշում է մի հարյուր-երկու հարյուր մետր, ոտքերս մի կերպ փոխում եմ, հետո նորից ընկնում եմ։ Նորից եմ ելնում, նորից քամին հրում է ետևիցս։ Էսպես գնում եմ գյուղ։ Մի բեռնատար եկավ։ Ձեռք բարձրացրի։ Չկանգնեց, վզզալով անցավ։ Շոֆերի կողքին էլ ազատ էր։ Տո թող շոֆերի կողքը չլիներ, թափքը կբարձրանայի։ Էդ անաստվածի համար հո բեռ չէի, ավտոյի համար էի բեռ։ Մի լավ հայհոյեցի դրան։ Բայց հայհոյանքն ի՞նչ, քամին քշեց տարավ։ Ձեռքս ընկներ՝ մի լավ կծեծեի։ Շան որդի, մարդուն ո՞նց ես թողնում կես ճամփին, գայլերի բերան, հոգնած, քաղցած... Ես էդ օրը երդում կերա, որ շոֆեր լինեմ։ Եղա։ Հիմի ճամփին ինչքան մարդ է պատահում, վերցնում եմ։ Այ, էս հայրիկին էլ վերցրի։ Մի անգամ էլ ուշ գիշերին գնում եմ Գառնի…

Եվ վարորդը սկսում է խոսքի մի ուրիշ կծիկ բացել, բայց ես չեմ լսում նրան։ Երևակայությունս բորբոքվել է, և ես կարող եմ այս վարորդին ամեն ինչ դարձնել։ Նույնիսկ ընդգծել, ավելի հավաստի դարձնել նրա բնավորությունը՝ ավելացնելով մի մանրամասն ևս. երբ մարդանման այս տախտակն իջնում էր ավտոբուսից, ռուբլիանոցը երկարեց վարորդին, իսկ սա

չվերցրեց, թե՝ գնա, գնա, մանեթիդ համար չէր, որ կանգնեցրի մեքենան։ Չէ՞ որ հնարավոր է դա։

Կարող էի ագահ դարձնել՝ մի աննշան բան փոխելով։ Երբ ուղևորը մեկնեց ռուբլիանոցը՝ վարորդը փրփրեց. «Մունդռիկ, էս հսկա մեքենան կանգնեցրի քո քոսոտ մանեթի համա՞ր»։ Միաժամանակ ցույց կտայի նրան որպես մի մարդու, որի խոսքի և գործի միջև ճչացող հակասություն կա։ Չէ՞ որ դա նույնպես իրական կլիներ։

Կարող էի վրիժառու դարձնել՝ մի երկու նախադասություն ավելի փոխելով։ Ասենք, մի օր էլ նա հանդիպում է բեռնատարի վարորդին, այս անգամ դերերը փոխվել են։ Նա դանդաղեցնում է ավտոբուսի ընթացքը։ Չէ, ավելի լավ է կանգնեցնի։ Դուռը բաց է անում՝ նստեցեք, խնդրեմ։ Հետո հիշում է, թե ո՛վ է նստողը, այն դեպքը խորն էր մեխվել հիշողության մեջ։ «Դո՞ւ ես, շան որդի, հիշո՞ւմ ես էն օրը»։ Ու կպատմի, թե ո՛ր օրը, հետո կասի. «Շնորհակալ եղիր, որ կոշիկներս թազա են, թե չէ, ոտքիս տակ կգցեի, մի լավ կդնքստեի»,- ու դուռը շրխկոցով փակելով՝ առաջ կսուրա։ Շատ հնարավոր բան է։

Կարող էի սադիստ էլ դարձնել, երբ բեռնատարի վարորդը ձեռքը բարձրացներ, նա մի հարյուր մետր կգնար, իբր թե՝ մտադրությունս փոխեցի, եկ, նստիր։ Բեռնատարի վարորդն այդ հարյուր մետրը կվազեր երևի տասը վայրկյանում, առանց մտածելու, որ ինքը կրկնում է կարճ տարածության վազքի երբեմնի համաշխարհային ռեկորդը։ Երբ հասներ ավտոբուսին՝ սա ամբողջ թափով կպոկվեր տեղից։ Կարող էր և այդպես լինել և ես մազաչափ անգամ դավաճանած չէի լինի ոչ ոքի, ոչ էլ արվեստի ռեալիզմին։ Միայն թե վերջին դեպքում սադիզմը համոզիչ դարձնելու համար կմեղմեի պատմության առաջին մասի մռայլ գույները,

դե արվեստի ռեալիզմը դա է պահանջում։ Կյանքում շատ անհեթեթություններ կարող են պատահել, առանց բավարար հիմնավորման, արվեստը պարտավոր է հիմնավորել և այն էլ այնպես, որ կասկածի ոչ մի ճեղք չմնա։

- Ուստա ջան, էստեղ կանգնեցրու։ -Ճռռում է մարդակերպ տախտակն՝ ընդհատելով իմ խոհերը։ Ավտոբուսը կանգնում է։ Ծերուկը ձեռքը գրպանը չի տանում։

- Ներող կլինես, փող չունեմ։

- Ասում էի, չէ՞, որ հիմի մեր գյուղացին փող էլ չունենա՝ էլի ոտքով չի գնա։ Լավ, հայրիկ ջան, փող չունես, խելք հո ունե՞ս։ - Վարորդի աչքերը ժպտում են։

- Խելք՝ ինչքան ասես։ Էս աշխարհում բոլորն էլ կկարծեն, թե խելքից հարուստ են։ Ոչ մի հատ խելքից աղքատ չկա։

- Այ, ապրես, ես էլ ուզում էի, փողի փոխարեն մի խելոք բան ասեիր։ Հիմի դու ասացիր։ Գնա, հայրիկ ջան, քեզ բարի ճամփա։

Ծերուկի հետ ես էլ եմ իջնում։ Դեռ Զրվեժ չենք հասել, բայց իջնում եմ, որովհետև չեմ ուզում ավտոբուսն ինձ համար առանձին կանգնի։ Մեկ չէ՞ մի քանի հարյուր մետր առաջ թե ետ. այս տեղն էլ է երևում իմ տնից։ Իջնում եմ՝ ինձ հետ քարշ տալով ուսապարկս և խոհերս։ Ուրեմն իմ ենթադրություններից ոչ մեկն էլ չիրականացավ։ Իմ մտքով էլ չէր անցել, որ այս վարորդին կարելի է դարձնել նաև իմաստասեր, մի մարդ, որ խելոք խոսքերին կոնկրետ արժեք է տալիս։ «Չէ, կյանքն իսկապես ավելի հարուստ է գրականությունից»,- մտածում եմ ես Ամերիկա հայտնագործողի հրճվանքով և իսկույն էլ կախում գլուխս ինքս իմ դեմ. այս Ամերիկան ևս վաղուց հայտնագործված է։ Ես նմանվեցի ինձ ծանոթ այն գրականագետին, որն

ամենածամծմված մտքերն ասում է մեծ հայտնագործողի կեցվածքով։ Այ, այս ծերուկը շատ խելոք բան ասաց առանց կեցվածքի՝ էս աշխարհում բոլորն էլ կարծում են, որ խելքից հարուստ են, խելքից աղքատ չկա։ Այդ նույն բանը ֆրանսիացի փիլիսոփա Դեկարտը ձևակերպել է այսպես. «Խելքն աշխարհում ամենաարդարացի բաժանված բանն է, որովհետև ամեն մարդ կարծում է, թե ինքն այնքան է օժտված նրանով, որ անգամ այնպիսինները, որոնք ուրիշ ամեն բանի մեջ խիստ դժվարահաճ են, այստեղ սովորություն չունեն այլևս իրենց ունեցածից ավելին ցանկանալու»։

Ես համոզված եմ, որ այս ծերուկը չի կարդացել Դեկարտին, իսկ երբ ես առաջին անգամ հանդիպեցի այդ տողերին, կարծես շանթահարվեցի։ Այն զգացումը, որ ունեցա, մարդկային դատողության համար հպարտության և մարդկային իմ փոքրությունից ծնված նախանձի մի տարօրինակ խառնուրդ էր։ Օ՜, ես ինչպե՜ս կուզեի վաղուց մեռած լինել Դեկարտի նման, միայն թե ի՛մ անունով աշխարհին հայտնի լիներ այդ իմաստությունը։ Հետո, իհարկե, դա էլ սովորական մի միտք դարձավ ինձ համար, ինչպես բոլոր մտքերը, երբ հասնում ես նրանց հատակին։

Այնուամենայնիվ այս ծերունին խելոք է ինձանից և լավ արեց բարի աստվածը, որ նրան ինձ ուղեկից ուղարկեց։

- Ես փող ունեի, բայց չտվեցի,- ասում է ծերունին։ - Դու ասա՝ ես ոտի վրա կանգնած չեկա՞։ Ոտի վրա գալը փողով լիներ՝ պետությունը տոմս կվաճառեր։ Դու ասա՝ քեզ տոմս տվե՞ց։ Օղորմի հորդ։ Ուրեմն ուստեն փողն իր գրպանն էր դնելու։ Տասը կոպեկ տայի՝ երեսիս կշպրտեր։ Իսկ էդ տասը կոպեկը հին փողով մեկ ռուբլի է։ Մի տասանոց է նրա ուզածը։ Մեր նոր մեկ ռուբլին տասանոց չէ՞։ Ի՞նչ արեց, որ մեկ ռուբլի տայի։ Ճակատից քրտի՞նք թափեց, ոչխարի հետ կուչ եկած

անձրևի տա՞կ մնաց։ Գողը որ գող է, էլի քափ ու քրտինք է թափում մինչև մեկի գրպանից մի ռուբլի է հանում։ Սա հեչ՝ մի անգամ ոտը սեղմեց, ավտոբուսը կանգնեցրեց։ Ես իմ փողը հեշտ չեմ աշխատել, որ հեշտ էլ քամուն տամ։ Կասես՝ լավ տղա կերևար։ Չէ, ի՞նչ լավ։ Լավն էն է, որ քրտինք թափել գիտի, կաշխատի։ Բայց իմ տղի պես գործարանում տաք-տաք դողեր չի հանի եռման ջրից։ Ամոթ չլինի հարցնելը, ի՞նչ մարդ ես, լառ, ո՞ւր կերթաս։

Քանի որ աստված նրան ինձ ուղեկից էր ուղարկել, ապա ես ասացի, թե ինչ մարդ եմ, բայց ինչպե՞ս ասեի, թե ուր եմ գնում, որ հասկանար, չծիծաղեր վրաս այս մարդը, որ խորամանկորեն չտվեց իր ճանապարհածախսը և հիմա էլ արդարանում է։

- Գնում եմ այս սարերում մի քիչ ման գալու,- այնուամենայնիվ ասացի ես։

- Ընկեր ենք։ Էս մեր սարերն են, եկել եմ կարոտս առնեմ։ Երևանում եմ ապրում, տղիս մոտ։ Ասի՝ էսօր-էգուց կմեռնիմ, թող մեր սարերին կարոտ չմեռնիմ։ Ես էստեղ քառասուն տարի ոչխար եմ արածացրել։ Ամեն քարի ու թմբի կպել է իմ ոտը։ Ամեն թփի ծանոթ եմ...

Ես էլ կուզենայի ամեն թփի ծանոթ լինել, որ երբ իմ նոր տան պատշգամբից նայեի, չտեսնեի մշուշե կապույտ շղարշի ետևում ինչ-որ լեռների ուրվագծեր միայն, ինչպես անծանոթ մարդկանց դիմագծեր, այլ զրուցեի նրանց հետ, ինչպես ընկերն իր մտերիմ ընկերների հետ, որոնց ներաշխարհի ամեն մի թուփ գիտե։ Բայց ես այդքան մտերմանալու ժամանակ չունեմ, քառասուն տարվա փոխարեն քառասուն օր էլ չեմ կարող վայելել այս շնկշնկան հովը, որ ահա քրտնած ծոցս է մտնում. իմ արձակուրդն ընդամենը քսանութ օր է։

Ծերունին նորից լիովին վայելում է իմ համակրանքը, և ես այդ բոլորն ասում եմ նրան։

- Հա՛,- ծոր է տալիս նա,- հիմի հոգու ընկեր ենք։ Աշխարհում մենակ ապրել չի լինի։ Հիմի թե ասես՝ քառասուն տարի էս սարերում ոչխար ես պահել, բա դա մենակ լինել չէ՞, ես կասեմ՝ չէ՛։ Միշտ գրքերն ինձ հետ են եղել։ Ոչխարը կանաչ կարածի, չոբանն էլ պիտի տառեր արածի, թե չէ կանգնեց ու միայն ոչխարի արածելը տեսավ՝ ինքն էլ ոչխար է ու ոչխար։ Բա՛ս...

Ինձ թվում է ծերունին շուտ է եկել սարերից իր կարոտն առնելու, դեռ մահը հեռու է։ Թե՞ հին օրերի հուշերն են նրան ուժ տալիս, որ նա իր տարիքին անհամապատասխան թեթևությամբ բարձրանում է թեք լանջերով։

- Հայրիկ, ամենաքիչը քսանհինգ տարի կապրես։ Ամուր ոսկոր ես։

- Չէ, լառ, սիրտս ինձ էստեղ բերեց։ Սիրտս վկայեց, որ մահս մոտիկ է, իմ սրտի վկայած սուտ չի լինի։ Սիրտս ինձ ասաց, վեր կաց, գնա, քո ման եկած տեղեր մեկ էլ ման արի, կարոտդ առ, աչքերդ բաց մեռել չլինես։

Ծերունին ինձ առաջարկեց նստել։ Ըստ երևույթին իմ տպավորությունը սխալ էր, նա միանգամից սարսափելի հոգնած թվաց աչքիս, գուցե և այդպես միանգամից հոգնեց մահվան մտքից։

- Դու էլ կարդացած կլինես, փղերը մեռնելուց առաջ իրենց առաջվա ման եկած տեղերը կերթան կպտտին, հետո կուգան, կփակեն աչքերը։ Ես էլ փիղ եմ։ Մի նայիր, որ էսպես պուճուր ու սմքած եմ, ոնց որ թթի չիր։ Պուճուրացած փիղ եմ։

Ու ծիծաղեց։ Նրա ծիծաղն ինչ-որ անդրշիրիմյան էր և ես սահմռկեցի։ Ես էլ եմ կարոտել մեր սարերին, բայց ես մահվան նախազգացում չունեմ։ Կարոտել եմ մեր Մեծդոշին, որ ասես

քամուն բացված հսկա դրոշ լինի, մեր Թեղ սարին, Աղեկի դոշին, Սրբի դոշին... Չոր են, քար ու քռա, ճիշտ այնպես, ինչպես այս Գեղամա սարերը։ Այս փշից մեր սարերում էլ կա, էլի էրիժնակ ենք ասում։ Երբ հասունանում, չորանում է, այսպիսի փուշ է դառնում։ Նույն փուշն է, բոլորովին նույնը, միայն սա կապույտ գույն ունի։ Ես կքաղեմ, ինձ հետ Երևան կտանեմ։ Այսպիսի քարեր կան մեր սարերում էլ, որ մտնում են Փամբակի լեռնաշղթայի մեջ, այսպես չեչոտ, մանուկների պես գլուխ-գլխի հավաքված։ Քարոտ, անանտառ լեռներ. բայց ես կարոտել եմ նրանց։ Քամին ծեծկում է այնտեղ, հրում ցած, թե՝ իջիր, իջիր, չեմ ուզում մնաս կատարներին, դրանք արծիվների համար են։ Արևը երբեմն խանձում է. չհամարձակվես ավելի մոտենալ ինձ՝ կայրեմ։ Բայց Սասնա լեռնեցիներից երևի շատ աղջիկներ են մեզ մոտ հարս բերվել և Քուռկիկ Ջալալու խոսքը Սանասարին, թե՝ կբարձրանամ վեր, արևին կտամ կայրեմ, և Սանասարի պատասխանը՝ փորիդ տակը կանցնեմ, մտել են մեր արյան մեջ ու մենք չենք վախենում արևի սպառնալիքներից։ Ելնում ենք Մեծդոշի լանջերն ի վեր, դեպի երկարավուն կատարը, ուր հաճախ, թեժ արևից հետո կարկուտն է սպառնում՝ իջի՛ր, իջի՛ր, գլխիդ վրա հազար գլուխ կբուսցնեմ իմ հարվածներով։ Մենք մյուս օրն էլ ենք ելնում գագաթն ի վեր, հաջորդ օրն էլ։ Հիմա էլ միտքս այստեղից թռել է մեր սարերը։ Թող ներեն ինձ Գեղամա լեռները, որ ես իրենց գրկում կարոտում եմ Փամբակի սարերին։ Ես Փամբակի սարերի որդին եմ և որդիաբար տխրում եմ, որ կան նրանց չկարոտող որդիներ էլ։

Լեռները հողի ալեկոծումն են։ Ինչքան էլ, որ ծովի ալիքները համեմատում են լեռների հետ, այնուամենայնիվ նրանք լեռներ չեն։ Ամենաբարձր ալիքը հասել է քառասուն մետրի, իսկ քառասուն մետր բարձրությունը, դժվարանում եմ

նույնիսկ բլուր անվանել։ Չէ, ահռելի է եղել հողի ալեկոծումը. Հիմալայները քիչ էր մնում ինը հազար մետրի հասնեին։ Բայց ոչ ոք չի տեսել հողի գալարանքը գործողության մեջ, այն ժամանակ հող էլ չկար, այլ կար հոսող, գալարվող, ինքն իրեն ուտող կրակ։ Բայց արարիչը հոգացել է մեր մասին, նա քարացրել է այդ գալարանքը, որպեսզի մենք դարեր հետո տեսնենք, ավելին՝ շրջենք ալիքների վրա ու չսուզվենք, եթե նույնիսկ աշխարհի բեռը լինի մեր ուսերին։ Իմ ուսերին աշխարհի բեռը չէ, այլ ընդամենը մի ուսապարկ, որը գնալով ծանրանում է։ Ես հիշատակներ եմ վերցնում այս քարերից՝ ամեն մեկից մի փոքրիկ քար։ Բայց ուսապարկս ծանրանում է նաև այն պատճառով, որ սկսում եմ հոգնել։ Ծերուկը մնաց ներքևում, երբ նոր էինք հասել Զրվեժից դեպի արևելք գտնվող լեռներին. «Բոլոր տեղերում լինել չեմ կարող, էսքանն էլ հերիք է։ Դու գնա ման արի, ես էստեղ քեզ կսպասեմ»։ Ու հեռվից երևում էր քարերի մեջ՝ ինքն էլ ասես մի քար։

Շերտ-շերտ արահետներ են երևում լեռան կողերով։ Մեկ երևում են հստակ, մեկ էլ ձուլվում կորչում են ընդհանուրի մեջ։ Այս տեղերով ուրեմն անցնում են ոչխարի հոտեր ու կովերի նախիրներ։ Ճանապարհ էլ չկա։ Այնպես փոշոտ է, կարծես պարկերով ալյուր են շաղ տվել։ Ես ճանապարհով չեմ քայլում, որովհետև չեմ ուզում իսկույն ևեթ ջրաղացպան լինել, հետո՝ ուզում եմ ոտքերս շփվեն իսկական լեռներին, ճանապարհի մեջ քաղաք հիշեցնող ինչ-որ բան կա։

Այնտեղ ահա ժայռն է բարձրանում։ Լեռը գալիս է և հանկարծ կտրվածք տալիս։ Երևում է հողի շերտը՝ հազիվ երկու թիզ, մնացածը քար է։ Քարեղեն են հայոց լեռներն ընդհանրապես։ Քամին քիչ-քիչ մաշում է նրանց հողե հագուստները և տակից երևում են քարե մարմինները։ Իսկ այստեղ ասես մի վիթխարի սրից վերք է առել լեռը, և

կտրվածքն այլևս անհնար է կարել։ Բարձր չէ այդ ժայռ կտրվածքը, այնքան է, որքան իմ մանկության քարափը հայրենի գյուղում։ Շատ բարձր էր այդ քարափը, երբ ես մանուկ էի, բայց հիմա մի քանի ոստյունով քարափի ծայրն եմ հասնում։ Այս ժայռն էլ հիմա բարձր է թվում ուրիշներին, չէ՞ որ ամեն օր աշխարհ են գալիս մանուկներ։

Դեռ ամպերը չեն ծածկել երկինքը։ Արևը մերթ ամպի տակ է մտնում, մերթ ճեղք է գտնում և դուրս գալիս՝ կարծես ասելու, թե՝ ես այստեղ եմ։ Ես արագորեն իջնում եմ՝ վերահաս անձրևն զգալով։ Չգիտեմ ինչքան եմ քայլել, ոչ շատ հեռվից լսում եմ հովվի շների հաչոցը։ Երկու բերան հաչում են և լռում, ըստ երևույթին տերը սաստել է նրանց։ Ահա և այդ աժդահան։ Ազահությամբ նայում եմ նրա հաղթ ուսերին, բահի մեծությամբ ձեռքերին, գերանաչափ ոտքերին։ Նա ինձ ձեռքով է անում։ Պատասխանում եմ և շարունակում իջնել։ Անձրև է տեղում, ինձ թվում է, թե դա ամպերի արցունքն է, որ նրանք թափում են առատորեն։ Ոտքերս իսկույն թրջվում են, անջրանցիկ վերարկուն թիկունքիս բաժին անձրևն էլ տալիս է նրանց։ Ջուրը ճողփում է կոշիկներիս մեջ, բայց ես շտապում եմ, չէ՞ որ մի քիչ ներքևում ինձ սպասում է ծերունին։ Նա անջրանցիկ վերարկու չունի, ահա, տեսնում եմ, կուչ է եկել մի քարի տակ։ Այս անջրանցիկը երկուսիս էլ բավական կլինի։ Հո չենք քայլելու, պատսպարվելու ենք դրա տակ։

Մոտենալով հանում եմ անջրանցիկը։

- Պետք չէ,- առարկում է ծերունին։ -Չեմ ուզում, հազիր։

Ինձ թվում էր, նա պիտի երախտագիտությամբ համակվեր իմ նկատմամբ, բայց նա չի ուզում օգտվել իմ բարյացակամությունից, չի ուզում ինձ հետ միասին լինել նույն անջրանցիկի տակ։ Նեղացել է։ Ես շատ մնացի վերևում,

նա երկար սպասեց ինձ մեն-մենակ, սպասեց, սպասեց ու նեղացավ:

- Ախր շատ վարար անձրև է, հայրիկ,- ես քնքշորեն ասացի «հայրիկ»-ը:

- Էսպես լավ է, լառ, էսպես շատ լավ է,- պատասխանեց տարօրինակ ծերունին: Իմ ոսկորները չորացել են, էս անձրևը կակղացնում է:

Ու սեղմվում է քարին, որը նրա միայն մի կողմն է պաշտպանում անձրևից:

- Քառասուն տարի հովիվ եմ եղել էս սարերում, դու էդ գիտես: Կարոտցել եմ էս անձրևին: Պլաշչ չունեի: Էսպես կուգար անձրևը, ես կուչ կուգայի մի քարի տակ: Էս քարի տակ էլ եմ կուչ եկել: Ի՜նչ օրեր էին: Բոլորը գնացին, մնաց էս մեկը, վերջինը, թող էս մեկից առնեմ անցած բոլոր օրերի համը:

Անձրևը շուտ դադարեց, ինչպես բոլոր վարար անձրևները:

- Էսքանն էլ հերիք էր: Ինչ լավ եղավ, որ անձրև եկավ:

Ծերունին վեր է կանում.

- Երթանք: Շորեր չորացնելն էլ իր համն ունի:

Մենք քայլում ենք դեպի Ջրվեժ գյուղը, որով անցնում են Գառնիից Երևան վերադարձող ավտոբուսները: Օգոստոսյան թեժ արևը դուրս է գալիս իրենք իրենց ծվատած ամպերի տակից: Լավ է, որ ծերունու թրջված մասն ընկել է արևի կողմը: Ես այդ մասին ասում եմ նրան, որովհետև ուրիշ ասելիք չունեմ:

- Արևը չորացնի-չչորացնի, մեկ է, տուն հասնեմ՝ անկողին կընկնեմ: Իմ ջրհորի ջուրը հատնել է…

Ու բացատրում է, որ քանի երիտասարդ է մարդը, ինչքան ուժերը վատնի, մեկ է՝ սպառում չկա, նոր ուժեր են գալիս լցվում նրա մեջ, ինչպես նոր ջրեր են լցվում ջրհորը, երբ

նրանից ջուր են հանում: Այդպես մինչև քառասունհինգ-հիսուն տարեկանը, ոմանց մոտ՝ մինչև վաթսունը, մի քիչ էլ ավելի: Հետո ջրհորը էլ ջուր չի լցվում, մարդը եղածն է դույլ-դույլ ծախսում և հասնում է վերջին դույլին:

- Ես իմ բոլոր դույլերը բանեցրել եմ, հիմի չորացած ջրհոր եմ, լաո, պիտի փակվեմ:

Ես հավատում եմ, որ նա իր դույլերը չի դատարկել ավազի վրա և գուցե դրա համար է գալիս, նայում մահվան աչքերի մեջ:

Ես չէի կարող հանգիստ նայել:

- Լավ ման եկա՞ր մեր սարերում:

- Լավ: Ես շատ գոհ եմ: Մի հովվի հանդիպեցի, մի հսկայի, որ ձեր սարերից ավելի Արարատին կսազի:

- Սեթո՞ն: Էն իմ ընկերոջ տղեն է: Հոր հետ հանդիպեցի գաղթի ճամփին:

Ու ծոր է տալիս պատմությունը, որի միջից ինչպես ծուխը թաց փայտից, բարձրանում է կարոտը, կսկծացնում սիրտ ու աչքեր:

- Մեկ է, ես էլի աչքերս բաց մեռել կլինեմ. էս սարերից կարոտս առա, էն սարերին կարոտ մնացի: Երնեկ ձեզ, որ չեք տեսել էն սարերը, էն ձորերը, էն պաղ-պաղ աղբյուրները: Լույս դառնա Սեթոյի հերը, անցյալ տարի մահացավ: Կնստեինք ու մեր սարերի մասին կխոսեինք, կխոսեինք… Երվանդ, կասեր, արի մենք էլ էն գրքի ծուռ Առաքելի նման սահման անցնենք, մեր սարեր տեսնենք ու ետ գանք: Մտքիցս թռավ էդ գրքի անունը:

- Հրաչյա Քոչար, «Կարոտ»:

- Հա, հա, «Կարոտ»: Լավ գիրք է: Այ էդպես բաներ կգրեն: Շուտ որ չմեռնեմ, մեկ էլ կկարդամ:

Մինչ նա խոսում է, ես նրանից հեքիաթ եմ ձուլում, մի պատառ էպոս՝ նրան Սասնա սարերը տանելով։ Ու հասկանում եմ հանկարծ, որ ես ավելի կամ այդ հեքիաթում, քան նա։ Ես հյուսում եմ...

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նույնն է աքաղաղի կանչը, ինչ որ երեկ էր, մյուս օրը, մի տարի առաջ… Նույնն էր և մանկության օրերին: Բայց այն ժամանակ Սաթենիկն այդ կանչը լսում էր միայն ցերեկները: Հիմա գոմի և տան միջնապատն անցնելով՝ այն թափանցում է երազի մեջ և արթնացնում, երբ դեռ աստղեր կան: Սրսուռ-սրսուռ աստղեր, ինչպես ցորենի հատիկներ: Որդին քաղաքից մի զարթուցիչ էր բերել, իր մինուճար Անուշավան որդին, և հետո գնացել էր բանակ: Էլ չի զնգում հիմա այդ սատանի սարքը: Հրեն դրված է թարեքին: Փոշի չկա վրան, Սաթենիկն ամեն օր մաքրում է: Էլի աքաղաղն է նրա զարթուցիչը: Առաջին կանչը կարծես գոմից չի գալիս, այլ շատ հեռվից: Այնքան բարակ է, որ թվում է, թե կկտրվի, ինչպես բարակ մանած թելը, և Սաթենիկը կընկնի քնի մեջ: Բայց թելը չի կտրվում, և նա կիսաքուն սպասում է երկրորդ կանչին:

Այս լուսաբացին նա անկողնուց վեր թռավ հենց առաջին կանչը լսելիս: Անիծված լինես, աքաղաղ, քաղցր երազ էր տեսնում. որդին և ամուսինը տուն էին եկել: Շտապ-շտապ հագավ շորերը և քիչ հետո գոմի կիսախավարում սպիտակին տվեց մի մազափունջ, որ դուրս էր եկել գլխաշորի տակից: Երկու կովերը նրան նայեցին: Ըստ երևույթին զարմացան, որ այդքան շուտ են խոտ տալիս իրենց: Ասենք, արդեն գարուն էր, և Սաթենիկը վերջերս նրանց զրկել էր այդ բավականությունից: Ի՞նչ իմանային, թե ինչո՞ւ էր զրկել և ինչո՞ւ է այսօր այսքան բարի դարձել:

- Կեր, Փնջո ջան,- դարձավ նա կովերից մեկին,- էսօր վերջին անգամ ես ուտում մեր խոտը: Ղսըր[2] չմնայիր՝ չէի ծախի:

Բայց անցյալ տարի մյուս կովը չէր ծնել: Չծախեցին, և այս տարի մի նախշուն հորթ բերեց: Եկող տարի Փնջոն էլ մի այսպիսի հորթ կբերի, սակայն ուրիշ երեխաներ կխաղան նրա հետ: Բարի պառավի աչքերում արցունք երևաց: Հիմա լաց լինելու առիթները շատ են: Անուշավան որդուն ուղարկեցին ռազմաճակատ՝ լալով լսեց այդ լուրը, ամուսնուն աշխատանքային գումարտակ տարան՝ լացով ճանապարհ դրեց: Երեկ մեծ աղջիկը չուզեց սոված փորով և պատռված կոշիկներով դպրոց գնալ՝ լացն էր իր պատասխանը:

- Բալա ջան, էսօր իրիկուն դու սիրուն սոլեր[3] կունենաս, քաղաքից հետս կբերեմ:

Ու սիրտը մղկտաց, երբ նայեց Փնջոյի դատարկ տեղին: Ախր ամբողջ ձմեռը պահել է, հիմա ինչպե՞ս տանի ծախելու, երբ արդեն գարուն է:

…Սարերը դեռ նոր են ուրվագծվել նոսրացող մթության մեջ: Շներն արթնացել են, և արշալույսի վճիտ լռության մեջ նրանց հաչոցն այնքան պարզ է լսվում, որ թվում է, թե կարող ես շոշափել: Հաչոցին խառնվել է Փնջոյի բառաչյունը, աղերսական և տխուր:

- Ա՛խ, Փնջո ջան, ոնց էլ սիրտդ զգում է, որ էս ժամին քեզ գոմից հանելը վատ նշան է: Քեզ նախրին խառնելու համար չեմ գոմից հանել: Էլ դու մեր սարերը չես գնա…

Այդպես պիտի երկար ծոր տար Սաթենիկի մորմոքը, պիտի արցունքի փոխվեր խամրած աչքերի մեջ… Բայց

---

[2] Ամուլ (բարբառային)

[3] Կոշիկ (բարբառային)

ճամփան կտրեց-անցավ մի սև կատու: Պառավն ուզեց ետ դառնալ, անհաջող օր է, վա՛ղը կգնա քաղաք: Էհ, ի՞նչ գիտես, վաղն էլ նույն կատուն չի՞ ելնի իր դեմ: Պատերազմ է, հիմա բոլոր ճամփեքի վրա էլ սև կատուներ կան: Ետ դառնալ… իսկ մեծ աղջիկը մի օր ևս դասի չի գնա:

Ու Սաթենիկը Փնջոյի վզին կապած պարանը ձգեց առաջ:

Չէր շտապում նա, թող կովն արածելով գնա:

Ապրիլի վերջերն էին, կանաչը թզաչափ բարձրացել էր: Փնջոն ախորժակով ուտում էր՝ մոռանալով իրեն սպասվող անհայտ ճակատագիրը: Օրն այնքան էր լուսացել, որ կարող էիր կանաչների մեջ ընկած ասեղը տեսնել: Հեռվում, քաղաքի շենքերին արև էր դիպել: Այստեղ էլ արև դիպած կլիներ, եթե չխանգարեին լեռները: Հին օրերից միայն այդ լեռներն են մնացել անփոփոխ, միշտ նույն սապատներն են, ծուռ ու մուռ վեր բարձրացած: Իսկ այն մեկը երկարավուն է, նման է և՛ թրի, և՛ թեղի: Հողագործը նրան Թեղ սար է անվանել:

Սաթենիկը հոգոց հանեց: Մի քիչ տեղ է եկել, և ոտքերը ծալվում են, իսկ առաջ… Ա՛խ, ինչքան արագ է անցնում ջահելությունը, երազի պես է հիշում թռվռուն օրերը: Այն ժամանակ ինքը նորահարս էր: Սկզբում զարմանում էր, որ այս սարերի լանջերին ոչ մի ծառ չկա, բայց հետո մտածեց, որ նրանք պատված են փարթամ կանաչով, այդպիսի կանաչն ի՞նչ պակաս է անտառից: Շատ էր սիրում իր ամուսնուն, շա՛տ: Մի օր ամուսնու հետ գնացել էր քաղաք: Հեռվից նկատեց գնացքը, որ կայարան չհասած՝ կանգ էր առել: Վագոնները երկար շղթա էին կազմել:

- Էս ո՞ւմն են, Նիկոլ, էսքան փեթակները:

- Բա չե՞ս իմացել, էդ մեր փեթակներն են,- կատակեց ամուսինը,- միջի մեղուներն էլ մարդու չափ մեծ են, մարդու

պես խոսել գիտեն: Տո տնաշեն, էսքան ժամանակ պոե՞զ էլ չես տեսել:

- Հա՞, է՞դ է պոեզը, չգիտեի: -Սաթենիկը գլուխը կախեց՝ որոշելով այլևս այդպիսի միամիտ բաներ չասել:

Սաթենիկն այդ հիշելիս ժպտաց: Ա՜խ, անցան, գնացին այդ օրերը, ինչպես այն գնացքը, որ կանգ էր առել՝ դեռ կայարան չհասած: Հիմա ուրիշ գնացք է եկել ցավերով բեռնված: Հիմա եկել է պատերազմի գնացքը՝ վիրավորներով լեցուն: Ահա նա սուլելով մտավ կայարան, հեռվից ոնց որ այդ գնացքը լինի, որ կազմում էր որդին լուցկու տուփերից: Տեսնես նրա մեջ չէ՞ իր բալեն, իր ազիզը: Հո խորունկ չէ՞ վերքը: Հիմա երևի ջուր կուզի, սաստիկ ծարավ են զգում. ո՞վ ջուր կտա նրան:

- Սուրբ Հովհաննես, դու պահես-պահպանես իմ Անուշավանին: Քեզ մի հավ մատաղ կանեմ, թույլ չտաս չար գնդակը մոտենա նրան:

Հետո Սաթենիկը ձախ ձեռքով խաչակնքեց երեսը. աջն ամուր բռնել էր կռվի պարանը:

Ինչո՞ւ եղավ պատերազմը, ինչո՞ւ: Յարաբ, գերմանացին էլ մայր չունի՞, նրա մայրն էլ իր պես չի՞ մղկտում որդու համար: Թե որ էդպես է, ինչո՞ւ է եկել ուրիշի հողը, ի՞նչ է ուզում: Կյանքից թանկ բա՞ն կա, որ նա իր կյանքն է տալիս դրան: Թերթերում գրում են, որդու նամակում էլ էդ մասին կար: Իր թառլանը գրել է, որ մի գերմանացի է գերի վերցրել: «Չսպանես,- աղաչել է գերմանացին,- դու մայր չունե՞ս, քո մայրը քեզ չի՞ սպասում: Ոչ էլ ուզում եմ մերոնց մոտ ուղարկես, հոգնել եմ կռվից: Թող գերի մնամ, էդպես մի օր կտեսնեմ մայրիկիս»: Որդին հրացանը ցած է իջեցրել՝ ապրիր մորդ համար՝ ասել է:

- Ջանիդ մատաղ, Անուշավան ջան, մորդ չես մռացել: - Սաթենիկի դեմքին ժպիտի պես մի բան խաղաց: - Հա, ուրեմն, գերմանացին կռվել չի ուզում, զոռով են բերել, մոր գրկից խլել են ու արյան ծովը գցել: Ովքե՞ր, ինչո՞ւ: Խլողները երևի արյունոտ աչքեր ունեն, գայլի սուր-սուր ատամներ… Սաթենիկը թաքուն ահ զգաց՝ չլինի՞, թե սարի ետևից դուրս գան իր դեմ:

Բայց սարի ետևից արևն էր դուրս եկել, իր շողերը փռել Սաթենիկի ու Փնջոյի վրա: Ստվերները կծկվել էին, փոքրացել: Պետք է շտապել քանի շուկայի լավ ժամանակն է, Փնջոն էլ արդեն այնքան է կերել, տռզել, ոնց որ թե փորով լինի: Եվ պառավը ձգեց պարանը:

- Գնանք, Փնջո ջան, քեզ ծախելուց հետո դեռ պիտի տուն դառնամ:

Շուկայում ցցերից կապված էին մի քանի կով ու եզ: Տերերի հսկողության տակ ոչխարներն ուտում էին իրենց առջև թափված խոտը: Մի մարդ բարձր ձայնով գովում էր անվարժ ձեռքով կարված կոշիկները, առաջարկելով սրան ու նրան: «Սրանից մի ջուխտ կառնեմ մեծ աղջկաս համար,- մտածեց Սաթենիկը,- խեղճը համ սոված է, համ բոբիկ: Մի ջուխտ էլ փոքրին է պետք: Ես հեչ, ես յոլա կգնամ»:

- Ախպեր, էս կովը քո կարծիքով ղըսը՞ր է թե փորով,- հարցրեց նա այդ մարդուն, երբ համոզվեց, որ իրենց լսող չկա:

- Էդ տեսակ էլ ղըսըր կո՞վ կլինի, քույրիկ ջան, մի փորին մտիկ: Դա ջուխտ հորթ կբերի:

Սաթենիկն ուրախացավ:

Մի քանի րոպե հետո գնորդները հավաքվել էին Փնջոյի շուրջը: Մեկն ակտիվորեն սակարկում էր, ըստ երևույթին Փնջոն նրան շատ էր դուր եկել:

- Մայրիկ, ճիշտն ասա, կովդ հղի՞ է, թե ոչ: Եթե հղի է, քո ասած վերջին գնով կառնեմ:

- Արևս վկա, հղի է: Մի շաբաթ էլ չի անցնի, ճակատը չալ մի հորթ կբերի. սրա հորթերի ճակատները միշտ չալ են:

- Բանակում տղա ունե՞ս,- անսպասելի հարցրեց գնորդը:

- Ունեմ, մինուճար բալես ֆրոնտում է:

- Դե մինուճար բալիդ կյանքով երդվիր, կառնեմ:

Եթե շուկայում միայն իրենք լինեին, կտիրեր մի խոր լռություն: Մեկը հարցական հայացքով նայում էր, առաջ թեքվելով հարցական նշանի ձև առած, իսկ մյուսը չէր պատասխանում: Երևի իր որդուն էր տեսնում կռվի դաշտում, և աչքերը լայնանում էին: Գնորդը չէր կարծում, որ իր պահանջն այդպիսի ազդեցություն կունենա պառավի վրա: Ուրեմն նա չի կարող ստել, մատը դրել է արդեն վերքի վրա, պետք է հուպ տալ.

- Երդվի՛ր մինուճարիդ արևով, և ես կհավատամ:

- Դո՛ւ էլ սատկես, կովն էլ, ես բալիս արևով երդում չեմ ուտի: Կովս ղրսըր է, գնա քո բանին:

Գնորդը գնաց: Բայց դա շուկայի ամենամեծ լուրն էր և իսկույն բերանից բերան անցավ: Փնջոն իր գնից բարձր չծախվեց: Սաթենիկը չէր ափսոսում դրա համար, բայց միշտ աչքի առաջ էր կովը՝ տռզած փորով: Աստված իմ, ինչ օրի է հասել, որ ուզում էր ստել:

- Մի նեղանա, բալա ջան, էս անտեր կռիվը շատ անխիղճ բան է: - Ու լաց եղավ Սաթենիկը, որ սիրտը թեթևանա:

ՎԱՐՊԵՏ ՄԻՆԱՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Բա չես ասի, Բաղդասար, երեկ աղջկաս ուզող էր եկել: Չէ, չտվեցի, տղան լավը չէր, հերն էլ բանի նման չէր: Ի՞նչ կարտոֆիլ ծախող, պրոֆեսոր էր: Վայ թե էն պրոֆեսորը, որ աղջկաս անցյալ տարի կտրեց: Ներս մտավ, նայեց պատերին, առաստաղին, քիթը կախեց՝ բա իր տունը երկու տարի չվերանորոգած մարդու հետ կարելի՞ է խնամի լինել: Ինչ ասեմ էս իմ տղային, որ սեր է կապել էս տեսակ մարդու աղջկա հետ, ինձ էլ քթիցս բռնած բերել է էստեղ: Չէ, բարձրաձայն էդպես չասաց, բայց քիթ ու մռութը, շարժմունքը էդ էին ասում: Մեկ ուզեցի տնիցս դուրս անեմ, մեկ էլ մտածեցի՝ աղջիկս սրան հո չեմ տալիս, տղան միգուցե լավն է: Հոր ձեռքը մի գիրք տվեցի, դե պրոֆեսոր մարդ է, սիրում է կարդալ, տղային բերեցի պատշգամբ: Իբր թե հենց էնպես, ուզում եմ մաքուր օդ շնչել: Էստեղ ես մի արկղ եմ շինում կարտոֆիլի համար: Կիսատ էր: Մուրճը տվեցի փեսացուիս ձեռքը, թե՝ ջահել մարդ ես, ուժդ տեղն է, էս մի մեխը խփիր: «Չեմ կարող,- ասաց,- ձեռքիս կխփեմ»: «Մարդ էլ մեխ խփել էլ չկարողանա, խփիր, խփիր»: Ամաչեց, վերցրեց մուրճը: Ճիշտ էր ասում, խփեց ձեռքին: «Մեխ խփելն ինչի՞ս է պետք, պրոֆեսորի տղա եմ»: «Բա դու ձեր տանը ոչինչ չե՞ս սարքում»,- հարցրի: «Մենք սարքած ենք առնում: Հայրս շատ փող ունի: Խոստացել է ինձ համար մի կուկլա «Վոլգա» առնի: Նվարդի հետ ծովափ կգնանք»: Նվարդն աղջիկս է: Էս փեսացուն էսպես վրա-վրա է տալիս՝ մեխի պատմությունից հեռանալու համար: Դրանք էդպես են, նեղը որ ընկնում են, մեծ-մեծ բաներից են խոսում, իրենց ունեցվածքն են ցույց տալիս: Բայց ես փեսացուի քթից բռնած ծովափից բերեցի մեխի մոտ. «Էն մեխը ծուռ էր, էս մեխն ուղիղ է: Մի քանի անգամ որ ձեռքիդ խփես, մի անգամ էլ մեխին

կխփես: Հետո մի քանի անգամ մեխին կխփես, մի անգամ՝ ձեռքիդ: Դրանից հետո է՛լ ձեռքիդ չես խփի»: Փեսացուն թե՝ «ենթադրենք, սովորեցի մեխ խփել, դրանից ի՞նչ հաճույք: Հիմա մեծ-մեծ գործերի դար է: Նույնիսկ մեխակներ վերավաճառողն օրը հարյուր ռուբլի ունի: Իհարկե, պապան թույլ չի տա, որ ես փողոցում կանգնեմ ու մեխակներ վաճառեմ: Էս տարի համալսարան եմ ընդունվում, քննող հանձնաժողովի մեծը պապան է»: Կընդունվի, իհարկե, կընդունվի: Իսկ իմ Նվարդին կտրեցին: Ախր նա առաջին դասարանից մինչև ավարտելը լավ էր սովորում: Գիտենամ վատ ինժեներ կդառնա, հիմի էլ կտանեմ մեր գործարանը, թող բանվորություն անի կողքիս: «Աղջիկ ջան,- ասացի,- եկող տարի կընդունվես: Ոչինչ, մի տարի ուշ կամուսնանաս»: Հիմի սրանք եկել են, թե՝ պիտի հենց էսօր ամուսնացնես: Դու ասա, Բաղդասար, եթե աղջիկը նպատակ է դրել ինժեներ դառնալ, ո՞նց կարելի է, որ ճամփի կեսից ետ դառնա: Ապրես, օղորմի հորդ, մարդը պիտի կամքի ուժ ունենա: Զգտի մի բանի: Ուզեցի իմանալ՝ էս փեսացո՞ւն ինչի է ձգտում: «Լավ,- ասացի,- մեխ խփել չես ուզում, բա ի՞նչ ես ուզում կյանքում»: Ինչ ասի, որ լավ լինի. «Պապան ուզում է, դատավոր դառնամ: Ասում է՝ դու բարի սիրտ ունես, կդատես ոչ թե չոր օրենքով, այլ՝ սրտով»: Հասկանո՞ւմ ես, Բաղդասար, կդատես սրտով, ասել է թե՝ «կխղճաս» մեղավորին, դե նրա տերերն էլ քո խղճի գինը կտան: Դեռ համբերում եմ, հոտած ձուն դեռ ատամիս եմ խփում: «Լավ,- ասում եմ,- էդ պապադ է ուզում, դո՞ւ ինչ ես ուզում»: «Ես հեչ,- ասում է,- ես ինչ պիտի ուզեմ: Պապան պրոֆեսոր է, ինձնից ավելի լավ է հասկանում կյանքը»: «Լավ, - ասում եմ,- դու ի՞նչ ես սիրում»: «Ոչ թե ինչ, այլ՝ ում,- ուղղում է ինձ: -Ես սիրում եմ Նվարդին»: Ոչ ամաչել, ոչ կարմրել: Աչքերն էլ էն տեսակ լիրբ ժպտում են: «Հերս Նվարդին էլ

ընդունել կտա համալսարան, ավարտել կտա»: Ուրեմն իմ աղջկա շնորհքը՝ հե՞չ: Էլի չուզեցի հոտած ձուն ատամիս խփել, ճխլվել էր, անտանելի հոտ էր տալիս: «Ես իմ աղջկան քեզ չեմ տա», - ասացի քիթս բռնելով, իբր թե հոտին չեմ դիմանում: Չհասկանալու տվեց: «Ինչո՞ւ,- ասաց,- ի՞նչ պատճառով չես տա»: Ի՞նչ անեմ, ծիծաղեմ վրան, հայհոյեմ, թե մի շրխկան ապտակ հասցնեմ: «Պատճառն,- ասացի,- ոչ դու կհասկանաս, ոչ քո պրոֆեսոր հերը: Էլ իմ տունը ոտք չդնեք»:

Հիմի քեզ եմ հարցնում, Բաղդասար, արժե՞ր էդպիսի մեկին աղջիկ տալ: Ապրես, ես էլ եմ էդպես մտածում: Բանը էդ չի, որ մեխ խփել չգիտի: Բանն էն է, որ չի ուզում մի բան ստեղծի, ուրախանա իր ձեռքի գործով: Աստված դրան ձեռք է տվել, որ ուրիշի ստեղծած բարիքները քաշի իր կողմը: Դա որ բանվոր լինի, կլինի մեր Մելքոնի նման, որ երկու սռնի կիսատ-պռատ պատրաստում է, ուզում է տասներկու հատ գրել տա: Դատավոր լինի՝ կաշառք կուտի: Պրոֆեսոր հերը քեզ օրինակ: Պետության ղեկավար դառնա, դրա ղեկավարած երկիրը սովից, թալանից, պատերազմից աչք չի բացի:

Նրանց գնալուց հետո Նվարդիս ասացի, որ մեր հատակը սապնաջրով մի լավ լվանա:

ԳՆՉՈՒԻ ՈՂԲԸ

Հիմա ինչպե՞ս բացատրեմ քեզ, որ ես սպանել չէի ուզում. դու այլևս չես լսում ինձ, Ազա, դու անշունչ դիակ ես հիմա: Գեթ մի անգամ աչքերդ բաց, գեթ մի պահ, այնքան, որ ես կարողանամ ասել՝ քեզ միայն վախեցնել էի ուզում, բայց չիմացա ինչպես արյունոտվեց դանակս: Մաքրել չի լինի այս արյունը: Վա՛յ ինձ, մաքրել չի լինի: Ես կտրել եմ իմ սոսին,

Ազա, ցամաքեցրել իմ աղբյուրը, խավարեցրել իմ արևը: Իմ այս պիղծ ձեռքերով:

Դու հազիվ տասնվեց գարուն էիր տեսել, Ազա, քո տասնվեցերորդ գարնանը միայն կակաչներ բացվեցին… իմ դանակի հետքերը սրտիդ վրա:

Արյունոտ է իմ ներկան: Իմ ապագան սարսափեցնում է ինձ մերկացած ժանիքի պես: Ես անցյալն եմ ուզում: Ա՜խ, գտնվեր օրերի թելը կծկելու գաղտնիքը: Վերադառնայի մեկ տարով ետ. դու նստել և նայում էիր դեպի մեզ: Ինձ թվաց, թե հատկապես ինձ էիր նայում: Ես էլ քեզ նայեցի և ուզեցի լինել ամենալավն այս թափառախմբում:

Մի գյուղացի վարունգ էր վաճառում: Մենք աղ չունեինք: Ես քեզնից աղ խնդրեցի: Դու աղամանը ձեռքիդ մոտեցար: Ա՜խ, միայն այդքանը լիներ, Ազա, հետո իմ ոտքը կոտրվեր, ու ես այլևս չգայի ձեր վրանի կողմը:

Մայրդ չէր ուզում, որ մենք հանդիպեինք: Բայց դու գալիս էիր թաքուն, և մենք թափառում էինք թափառախմբի շրջակայքում, ռոմանսներ էինք երգում:

«Մայրս ասում է, որ դու ապագա չունես»,- հաղորդում էիր մորդ խոսքերը քո այս կապտած շուրթերով, որ այն ժամանակ վարդագույն էին, Ազա: Ոչ մի աղջիկ չուներ այդքան գեղեցիկ շուրթեր:

Չորանար այն լեզուն, որ առաջինը մորդ համոզել է, թե ես ապագա չունեմ:

Բայց դու, Ազա, այդպես չէիր մտածում: Դու սիրում էիր ինձ, և սերը ամենապայծառ ապագան էր: Ինչպե՞ս եղավ, որ ցույց տվեցիր այն գեղեցիկ նժույգ ունեցող տղային և ասացիր՝ դու էլ այդպիսինն ունենայիր: Դու սկսեցիր խուսափել ինձանից, Ազա: Դու չէիր հանդիպում այն գեղեցիկ նժույգով տղային, բայց նա հաճախ էր խառնվում քո երազներին: Դու

ինձ ասում էիր. «Եթե լսեմ, որ ուրիշ աղջկա ես սիրում, քեզնից լավ տղա պիտի ընտրեմ»: Ինձնից լավ տղան նա էր: Բայց քեզնից լավ աղջիկ չկար, Ազա, ես խելագարվում էի սիրուց: Գիտե՞ս ինչքան եմ մեն ու մենակ եկել ու թախծել այս ծառի տակ, ուր ռոմանսներ էինք երգում և ուր հիմա քո դիակն է: Եկել եմ, համբուրել քո ոտնահետքերը, փաթաթվել ծառին, որից կախում էիր քո երկար ծփքերով վառվռուն շալը:

Չեմ անիծել մորդ, Ազա, որովհետև նա քո մայրն է եղել: Մորմոքել եմ միայն, որ դու էլ ինձ ապագա չունեցող, կորած մարդ ես համարել: Գանգատվել եմ աստղերին, մեր սիրած ծառին ու հիմա էլ քո դիակին եմ գանգատվում՝ ինչո՞ւ այսպես եղավ, ինչո՞ւ:

Ես չէի ուզում ոտքդ փուշ իսկ խրվեր, Ազա: Եթե պիտի ձեռքս բարձրանար քեզ վրա, ապա մինչ այդ թող լեզուս փայտանար, որ քեզ չխնդրեր գեթ մի անգամ, վերջին անգամ լինել մեր սիրած վայրում: Իսկապես վերջին անգամը եղավ: Դու ասացիր, որ չես սիրում ինձ, և ես դանակը հանեցի, որ վախենաս: Դու փախար ճչալով: Ես քո ետևից ընկա, որ լռեցնեմ: Ա՛խ, հավիտյան լռեցրի, Ազա: Մթնեցրի ուղեղդ, կանգնեցրի սիրտդ: Էլ ինչպե՞ս, էլ ինչո՞վ պիտի զգաս, որ ես մարդասպան չէի: Իմ կամքից անկախ դանակս կտրեց քո կյանքի թելը: Դու քեզ հետ տարար այն ցավը, որ ես աշխարհի ամենավատ տղան եմ և որ դու մի ժամանակ սիրել ես ինձ՝ մարդասպանիս: Տիեզերքի մեջ մի մեծ, շատ մեծ անարդարություն կատարվեց, ես ինչպե՞ս ուղղեմ կատարվածը: Ես քո աչքում դանակավոր ոչնչություն եմ: Բայց քո աչքը էլ չի տեսնում, Ազա, դու չկաս, և քեզ հետ իմ արարքը չկա քեզ համար: Բայց ինձ համար կա: Ինձ համար կա տիեզերքի այս ամենամեծ անարդարությունը:

Հիմա կգան, ինձ շղթայակապ կտանեն: Չէ, ես ինքս կգնամ, կհանձնվեմ ձերոնց: Խոժոռադեմ հայրդ դատավորի պես կնայի ինձ և ինչ էլ ասի՝ միայն մի բան կասի՝ ինչո՞ւ ձեռք բարձրացրիր քո Ազայի վրա: Նրա խոսքերից ես կուչ կգամ, որովհետև դրանք աշխարհի ամենածանր խոսքերն են, Ազա: Այդ խոսքերը գնդակից սուր են: Գնդակը կրծքիցս մտնի, դուրս կգա թիկունքիցս, իսկ այդ խոսքերը դուրս չեն գա իմ միջից, Ազա, կպտտվեն վերև, ներքև, աջ, ձախ և կբզկտեն մարմինս:

Ա՛խ, թող շուտ գան, տանեն, տանեն ինձ, գնդակահարեն ձերոնք:

Երբ ես չլինեմ, Ազա, իմ մեջ չի լինի այն մորմոքը, որ ես ձեռք բարձրացրի քեզ վրա: Էլ չեմ զգա, որ մեռնելիս ինձ համարել ես աշխարհի ամենավատ տղան:

Ա՛խ թող շուտ գան, տանեն ինձ, պատառ-պատառ անեն:

Բայց ինչքա՞ն սպասեմ, որ նրանք գան:

Ինձ տեղ տուր կողքիդ, Ազա: Այս նույն դանակը… մեռնում եմ… քեզ գրկած…

ԵՐԳԸ

Ամպերի հետ շատ բան կարելի է համեմատել: Այ, ասենք, տրամադրությունը: Ամպը քիչ առաջ այս ձևն ուներ, հիմա բոլորովին ուրիշ է: Քիչ առաջ դու տխուր էիր, իսկ հիմա ժպտում ես: Կամ քիչ առաջ ժպիտ կար քո դեմքին, ինչպես սպիտակ ամպերն են ժպտում, իսկ հիմա լիքն ես կայծակներով: Շատ բան կարելի է համեմատել ամպերի հետ, բայց իմ մտքում այս պահին ուրիշ համեմատություն չի ծնվում դրանից բացի: Բայց նախ ասեմ, թե ես ով եմ: Տասնութամյա մի աղջիկ, որին շատերն են հավատացնում, թե գեղեցիկ է: Կարծում եք քի՞չ տեղեկություն տվեցի իմ մասին: Եթե դուք

երևակայություն ունեք, կարող եք իսկույն հասկանալ, որ ես սիրահարված եմ, իմ սիրած տղան աշխարհի ամենա-ամենա-ամենալավ մարդն է: Կարող եք ենթադրել նաև, որ անտարբերությամբ չեմ անցնում հագուստեղենի խանութների մոտով, ինչպես իմ տարիքի բոլոր աղջիկները: Կարող եք ենթադրել և այն, որ շրթներկ եմ օգտագործում: Բայց կսխալվեք, եթե կարծեք, որ դեմքիս դիմափոշի եմ քսում: Իմ մաշկը շատ սպիտակ է, և դրա կարիքը չունեմ: Էլի ուրիշ բաներ կարող եք ենթադրել, և դրանցից շատերը ճիշտ կլինեն:

Բայց ես ամպերի և տրամադրության մասին էի խոսում: Շեղվեցի մի քիչ: Ասենք՝ սա էլ տրամադրություն է, որը կարելի է համեմատել սպիտակ ամպերի հետ: Հաճախ եմ ես այսպիսի տրամադրություն ունենում, բայց այն մեկը… Այն մեկը յուրահատուկ էր:

Ինչպես ասացի, ես սիրահարված եմ և իմ սիրած տղան աշխարհի ամենալավ ու ամենախելացի մարդն է: Բայց նա այն օրն այդպիսին չէր, միայն այն օրը: Մենք միասին դուրս էինք եկել Հրազդանի ձորում զբոսնելու: Իմ սիրելին տխուր էր: Մերժել էին նրա նախագծած ինչ-որ սարք, և նա անընդհատ բացատրում էր այդ սարքի առավելությունները: Ես նրա ասածներից միայն մի բան էի հասկանում, որ նա ընկճված է:

Վարդագույն ամպերը թրթռում էին գետի ջրերի մեջ: Ափին ծաղկած ծառերը՝ նույնպես: Ինձ թվում էր, թե վերջալույսի շող եմ դարձել և ես եմ ներկել նրանց: Երկնքում վեր ու վար էին անում ծիծեռնակները, անհոգ և ուրախ: Արժե՞ր ընկճվել, չճռվողել նրանց պես: Այսօր մերժել են, վաղը կընդունեն, չէ՞ որ սարքը շատ առավելություններ ունի: Իսկ եթե չունի, էլ ինչո՞ւ տխրել մերժելու համար: Սիրտս լիքն է վերջալույսի ուրախությամբ, կարծես շող եմ դարձել և վարդագույն եմ ներկել նաև շրջապատը: Կամ ես նրա մռայլն

էլ կցրեմ՝ իմ վարդագույնից նրան էլ տալով, կամ նա իր սևը ինձ տալով՝ կդարձնի ինձ էլ մռայլ: Ուզում եմ տխրել նրա հետ: Դե, նա իմ սիրած էակն է, և բոլորն էլ ասում են, որ եթե սիրում ես, քո սիրած էակի վիշտը քոնն է: Բայց ես այնպիսի ուրախությամբ եմ լցված, որ անհաջողություններն անցողիկ են թվում: Երևի դրա համար էլ տխրել չեմ կարողանում: Նա նկատում է իմ ուրախությունը.

- Ինչո՞ւ ես այդպես հրճվում:

- Նրանից, սիրելիս, որ քեզ հետ եմ,- պատասխանում եմ նրան:

Այստեղ գալիս այս տրամադրությունը չունեի: Եթե այսպես շարունակվի, գուցե ես էլ մռայլ դառնամ, չէ՞ որ մի երկու ժամ առաջ տխուր էի, որովհետև մայրս չէր ուզում ինձ թույլ տալ նրա հետ հանդիպելու՝ ասելով, որ ես արժանի եմ ավելի լավին: Իսկ հնարավո՞ր է, որ որևէ մեկն ավելի լավը լինի: Իհարկե՝ ոչ: Եվ ես տխրել էի, որ մայրս այդպես է մտածում: Եթե այսպես շարունակվի, գուցե նորից տխրեմ: Ես իմ փորձից գիտեմ, որ ոչ մի տրամադրություն մշտատև չէ: Իսկ եթե ես էլ տխրեմ, ո՞վ պիտի նրան ուրախացնի: Ի՞նչ անեմ: Գետ է, վերջալույս, քարեր, ծառեր, թփեր: Սրանցով հնարավոր չէ նրա մռայլը ցրել: Իսկ ես այնպես եմ ուզում, որ նա ինձ պես ուրախ լինի: Մի ակնթարթ ըմբոստանում եմ բնության դեմ, որ իմ աչքերն ավելի այրող չի արել, որպեսզի նա ենթարկվի իմ հրապույրին, և ցրվի նրա մռայլը: Բայց դա ի՞նչ, իմ հոգին է լիքն ուրախությամբ, իմ հոգին է ուզում հաղորդվել նրա հետ և նվիրել իր ամբողջ ունեցածը նրան: Ինչո՞ւ, ինչո՞ւ են մերժել նրա նախագիծը, չէ՞ որ ինքը տասն անգամ չափել, ձևել էր, մի երկուսին էլ ցույց տվել: Ոչ մի սխալ չկար:

Իմ ուրախությունը սկսում է նվազել: Մտքերս ցրելու համար կռանում եմ, մի քար վերցնում և գետը շպրտում: Կռանալիս աչքս ընկնում է մարգարտաշարիս, որ ճոճվում է վզիցս կախված: Իսկ եթե այդ մարգարտաշարն էլ գցե՞մ գետը: Երևի նա կծիծաղի իմ խենթության վրա և կմոռանա իր մտքերը: Դրանից հետո հեշտ է ուրախացնել նրան: Մի պահ տատանվում եմ, ախր ո՞ր լուրջ աղջիկն այդպիսի բան կանի: Ի՞նչ անել: Այդ ձորում, այս քարերի ու ծառերի, վերջալույսի այս շողերի մեջ ուրիշ ի՞նչ կարող եմ անել:

Ես վզիցս պոկում եմ մարգարտաշարը և գետը նետում՝ չզգալով, թե ձեռքս ինչպես է գնում դեպի պարանոցս, ինչպես է կտրվում բարակ թելը: Մեկ էլ տեսնում եմ ջրի վեր թռած մի քանի կաթիլ: Կարծում եք քի՞չ կորուստ էր դա: Ճիշտ է՝ կեղծ էր մարգարտաշարը, բայց ես ոչ մի տեղ չեմ գտնում նրա նմանը, որ այդքան գեղեցիկ լինի և այդքան էժան:

Իմ սիրելին ջուրն է մտնում, իսկ ես ծիծաղում եմ, թե չարժի դրա համար նույնիսկ կրունկները թրջել:

- Դու գիժ ես,- ասում է, իսկ ես շարունակում եմ ծիծաղել:

Ճիշտ որ գիժ, միայն գիժն այդպիսի կատակ կանի: Ահա նա դուրս է գալիս ջրից, հազիվ է գտել կեղծ մարգարտաշարի մի հատիկը, որը երևի, նրա համար է գտնվել, որ ինձ միշտ հիշեցնի, թե ինչքան հաճելի զարդ եմ կորցրել: Բայց ես չեմ ափսոսում: Չէ՞ որ իմ արածի իմաստը երևի հասկացավ իմ սիրելին, որ սկսեց ժպտալ: Հասկացավ երևի, որ այս ձորից, այս քարերից ու ծառերից, վերջալույսի այս շողերից ավելի թանկ չէր այն ինձ համար:

Նա սկսեց ժպտալ, իսկ իմ ուրախությունը կրկնապատկվեց: Ուրեմն իմ վարդագույնն է փոխանցվում նրան, ոչ թե նրա սևը ինձ: Ու կրծքիս տակ թրթռաց ինչ-որ

հաճելի զգացում: Հետո «ինչ-որը» ջնջվեց և ես պարզ տեսա, որ ինձ համակած զգացումը մի անծանոթ երգ է…

Ես տասնութամյա աղջիկ եմ, որին շատերը հավատացնում են, թե գեղեցիկ է: Սրանից դուք շատ բան կարող եք ենթադրել, բայց երբեք չեք ենթադրի, որ այդպիսի մի երգ կծնվեր կրծքիս տակ: Չեք ենթադրի, որովհետև մինչ այդ իմ մտքով էլ չէր անցնում, թե սիրելի մարդուն պատճառած ուրախությունն իմ սրտում պիտի արձագանքեր որպես երգ: Ես երգում էի բարձր, իսկ թե ի՞նչ, հիմա չեմ կարող ասել: Հավանաբար այն մասին, որ աշխարհն անսահման գեղեցիկ է, ոչ մի ճանապարհի վրա չպիտի քար լինի կամ փուշ: Իմ սիրելին փորձում էր ինձ գրկել, համբուրել: Բայց ես քնքույշ ձեռքերով նրան հեռացնում էի: Ոչինչ, ոչինչ չպիտի դիպչեր այդ երգին: Դա ինձ սրբապղծություն էր թվում:

Չգիտեմ ինչքան երգեցի: Միայն հիշում եմ, որ ծիծեռնակները ձայնակցում էին ինձ, վերջալույսի շողերը զրնգում էին ամպերի եզրերին և ծառերի կատարներին: Երգում էր աշխարհը ինձ հետ:

…Դրանից հետո ամիսներ են անցել, այդ երգն էլ չի կրկնվում: Ամպերի հետ շատ բան կարելի է համեմատել, բայց իմ մտքում այս պահին միայն տրամադրությունն է համեմատվում: Իսկ իմ այն օրվա տրամադրությունն այն ոսկեղեն ամպերի հետ հուշ դարձավ…

ՄԵՆՔ ՄԻՇՏ ԵՐԵՔՈՎ ԵՆՔ

Չեմ հասցնի, ուշ է, մինչև նռնակների կապոցը շպրտեմ, տանկն ինձ կճզմի: Շուտ, փոսը: Փրկված եմ: Ի՞նչ է ուզում ֆաշիստը: Տանկը ջրաղացքարի պես պտտվում է ինձ վրա: Փոսն ինչքա՞ն կլինի: Հողը շատ փափուկ է, երկու-երեք

պտույտով տանկի թրթուրները գրեթե ինձ են հասել: Փառք աստծո, սալաքարի դեմ առան: Գուցե բետոնի կտո՞ր է՝ շինարարական աշխատանքներից մնացած: Մեծ կտոր լիներ, մեծ կտոր: Տեսնես մեջը երկաթ կա՞: Եթե երկաթ կա, կդիմանա: Չէ, փշրվում է: Ֆաշիստն ուզում է ճզմել ինձ: Բայց նա տեսավ, որ ես հակատանկային նռնակների կապոց ունեմ: Ինքն էլ ինձ հետ հոդս կցնդի: Ի՞նչ, այնքան է ինձ ատում, որ պատրաստ է իր կյանքի գնով ինձ ճզմե՞լ: Սա էլ է մենամարտ, միայն թե ես չեմ սկսողը, բայց ես կվերջացնեմ: Ես առաջինը չեմ, որ նռնակներով ընկնում եմ տանկի տակ: Բայց նրանք իրենց կամքով են այդպես վարվել, իսկ ես ստիպված եմ: Մեռնել՝ մեռնել, գոնե իմ կամքով մեռնեի, հերոսաբար: Դեռ պտտվում է անիծյալ տանկը փոսի բերանին: Առաջվա թափով չի պտտվում: Պտտվում է դանդաղ, զգույշ: Երևի զգուշանում է ինձ բախվելուց: Ուրեմն ֆաշիստը տեսել է, որ ես հակատանկային նռնակների կապոց ունեմ: Պարզապես ուզում էր ինձ վախեցնել, այնպես վախեցնել, որ սիրտս պայթի: Եվ սադիստական հրճվանք էր ապրում: Չէ, դժվար թե կարողանար հրճվել: Նա էլ հիմա ինձնից է դողում: Երևի ինձ պես հիմա քրտնել է մահվան մոտիկությունից: Կանգ առավ: Իր անելի՞քն է որոշում: Չէ, չի համարձակվի նորից պտտվել: Փախավ: Ես փրկված եմ: Ես նորից տեսնում եմ արևը: Բայց ո՞ւր պիտի փախչի, ինչքան էլ թափով նետվեց ետ, հազիվ տասը մետր է հեռացել ինձանից: Ի՜նչ ահեղ են պայթում հակատանկային նռնակները: Շնորհակալ եմ այս փոսից, ինձ փրկեց և տանկից, և նռնակների բեկորներից: Տանկն այլևս տանկ չէ, այլ երկաթի զանգված, որի վրա սև գույնով ներկված է սվաստիկայի նշանը:

Էլ ինչո՞ւ եմ դողում: Սերգեյ, տիրապետիր քեզ: Քիչ առաջ դու ավելի հանգիստ էիր, ի՞նչ պատահեց քեզ: Պետք է

միանալ մերոնց: Ծունկս փշրվե՞ց: Որտեղի՞ց եկավ այս գնդակը: Տաս տոննանոց երկաթից ազատվեցի, բայց այս ինը գրամ արճիճից չազատվեցի: Երկրորդ գնդակը վերջ կտա կյանքիս: Այս ո՞վ է ինձ քաշում պատի տակ, ապահով տեղ:

- Զինա, դո՞ւ ես:

- Ես հիմա վերքդ կկապեմ, Սերգեյ:

Մատով անգամ չէի կպել Զինային, հիմա մեր մարմինները շփվեցին: Ես չսարսռացի: Մի՞թե մահվան երախում սերն էլ է մեռնում: Զինան ի՛նչ ճարպկությամբ է կապում վերքս:

- Ամեն ինչ լավ կլինի,- Զինան ուզում է, որ ձայնը զվարթ հնչի, բայց չի ստացվում, ուրեմն իմ վիճակը շատ ծանր է: -Ես քեզ կտանեմ ստադիոնի հանդերձարանը, այնտեղ մեր սանիտարական կետն է: Ավելորդ է ասել, թե որտեղ է հանդերձարանը:

Իհարկե, ավելորդ է: Ես քանի անգամ այնտեղ հագել եմ մեր թիմի համազգեստը: Մեր տնից այնտեղ եմ գնացել այս ճանապարհով: Գնացել եմ ոտքով, որովհետև մեր տունը ստադիոնին շատ մոտիկ է: Հիմա սողալով պիտի գնամ: Ուրիշի օգնությամբ: Զինան հևում է: Երևի նրա համար ես ծանրամարմին եմ:

- Զինա, ես ինքս մենակ կգնամ: Դու գնա օգնելու ուրիշ վիրավորների:

- Ցտեսություն, Սերգեյ: Գրոհից հետո ես կայցելեմ քեզ:

Իմ տեսադաշտից նախ կորչում է կարմիր խաչի նշանով պայուսակը, հետո՝ այդ պայուսակը կրող աղջիկը: Ես մենակ եմ: Ոչ, նրանք ինձ հետ են: Մենք երեքով ենք՝ ես, Զինան, Ստեփանը: Զինան նրան է սիրում: Ոչ մի աղջիկ այդքան նրբանկատորեն չի մերժել, ինչպես Զինան մերժեց իմ սերը: «Կոմունիզմի ժամանակ խանդ չի լինի»,- այդ խոսքերն ուղղեց

ոչ թե Ստեփանին, այլ՝ ինձ: Ես պիտի հասկանայի, որ եթե կոմունիստ եմ, ապա պիտի զսպեմ խանդս: Պիտի չվիճեմ, չկռվեմ: Պահպանվեց մեր եռանկյունին, որի անկյուններից մեկը՝ ես, քիչ էր մնում փշրվեի տանկի թրթուրների տակ: Որտեղի՞ց եկավ այդ անիծյալ գնդակը, հիմա ես նորից նրանց հետ կլինեի: Վերքս սկսեց ցավել: Տաք էր, չէր ցավում:

Աղջիկներն ինչ շուտ են զգում, որ սիրահարված ես իրենց: Բայց երևի Զինայից առաջ ես ու Ստեփանը զգացինք, որ սիրահարված ենք նրան: Ոչ ոք չգիտեր մեր սիրո մասին, նույնիսկ Զինան, բայց մենք գիտեինք: Հետո ամբողջ վաշտն իմացավ: Ամբողջ վաշտն ուրախացավ, որ մեր մտերմությունը բարձր էր խանդից: Վերքն իրեն ավելի է զգացնել տալիս: Չլինի՞ թե… Ոչ, ոչ, դա սարսափելի բան կլիներ…

- Երիտասարդ, ձեզ համար արդեն վերջացել է պատերազմը:

Ճշմարտությունը լավ բան է, բայց թող այն չինչի բժիշկների բերանից: Ինչո՞ւ, ինչո՞ւ բժիշկն ասաց, որ ես այլևս չեմ քայլի երկու ոտքով: Ես կորցրեցի աջ ոտքս, որով ութսունից ավելի գոլ եմ խփել: Մեկ չէ՞, աջ ոտքս, թե՞ ձախը: Մեկն առանց մյուսի բանի պետք չէ: Թշնամին ինձնից շատ բան խլեց: Իսկ ես նրանից՝ մի տանկ:

Տանկը հաստատ է: Գրոհի գնալիս քանի ֆաշիստներ են խոտի պես հնձվել: Հաստատ չեմ կարող ասել, թե քանիսը. քսանը, տասը, թեկուզ մեկը ընկել է իմ գնդակից: Ընկած կլինի: Այդ չեմ հաշվում: Վերջացավ: Իմ հաշիվը փակեցի: Մնացի կենտ ոտքով: Անարդար ես, Սերգեյ, դու ուզում ես սպանել և չսպանվել: Եթե սպանվել չլիներ, էլ ի՞նչ պատերազմ: Գոհ եղիր, որ միայն ոտքդ ես կորցրել: Բայց ոտքս իմ կյանքն էր ինձ համար: Ահա այստեղ հագնում էի կոշիկներս: Այստեղ դրված էր իմ աթոռը: Այս անկյունն իմն էր: Պատերի կանաչը

խունացել է, ինչպես թառամած խոտը: Այս գիծն իմ եղունգի հետքն է: Պետք չէր այդքան նյարդայնանալ, հետո ի՞նչ, որ առաջին խաղակեսը մեր օգտին չէր:

Կրակոցները գնալով ավելի հեռանում են: Ուրեմն թշնամին շարունակում է նահանջել: Գոնե Զինան ու Ստեփանը ողջ մնան: Բոլոր զինաներն ու ստեփանները: Չկորցնեն ոչ ոտք, ոչ ձեռք: Ես հիմա ինչի՞ եմ նման: Կրակոցները համարյա չեն լսվում: Կռվողներն ինձնից առնվազն հինգ կիլոմետր հեռու են: Մեր քաղաքի երկարությունն այդքան է: Ողջո՛ւյն քեզ, ազատագրված հայրենի քաղաք: Էլ մայթերդ չեն տնքա ֆաշիստների ոտքերի տակ: Զինան ու Ստեփանը մինչև վերջ մասնակցեցին քո ազատագրմանը: Արդյո՞ք մինչև վերջ: Զինան ասաց, որ գրոհից հետո կայցելի ինձ: Ինչո՞ւ է ուշանում: Գոնե ձեռքից վիրավորվեի: Հիմա այնտեղ կլինեի: Գոնե մեր տնեցիներից մեկնումեկը երևար, կխնդրեի, որ լուր բերեր: Բայց կա՞ն արդյոք մերոնք, թե՞ ֆաշիստները բոլորին գնդակահարել են: Կուլ են տվել իրենց ահռելի երախով: Երբ տանկը գալիս էր ինձ վրա, ինձ թվաց, թե երախ ունի: Երկաթե հսկա երախ, երկաթե հսկա ատամներով: Ես փշրեցի նրա ատամները: Սիրելիներս, եթե նրանք ձեզ սպանել են, թող դա իմ վրեժը լինի ձեր մահվան համար: Եթե ապրում եք՝ ձեր թափած արցունքների համար:

Վերքի ցավը սաստկանում է: Չէ, էլ չեմ կարողանում հաղթահարել: Ոգին էլ պաշարներ ունի, սպառվում են: Ցավը սկզբում էլ կար, բայց սկզբում նա իմ ստրուկն էր: Հիմա ես եմ նրա ստրուկը: Աստված իմ, ամբողջ տիեզերքը լցված է իմ ցավով: Ի՞նչ, ես այդքան թո՞ւյլ լինեմ, որ միայն ցավը լցնի իմ էությունը: Սերգեյ, ապացուցիր, որ ուրիշ բան էլ քեզ համար գոյություն ունի: Դու քո թիմի ստադիոնում ես: Ամոթ է քեզ

ցավից կուչ գալ: Կարոտել ես, չէ՞, խաղադաշտին: Այսպես, այսպես, թող ցավից գալարվես, ատամներդ սեղմվելուց թող էմալաթափ լինեն, տեսնո՞ւմ ես, երևաց խաղադաշտը: Դարպասները չկան: Ո՞վ է կտրել: Երևի ֆաշիստներն են տարել կախաղաններ պատրաստելու համար: Սրիկանե՛ր, երկիրս լցրեցին ավտոմատի համազարկերով ու կախաղաններով: Հիմա էլ մռութները ջարդված՝ սողում են դեպի իրենց որջը:

Ինչո՞ւ եկաք, ինչո՞ւ: Ուզում էիք աշխարհը նվաճել: Աշխարհից ստացեք մի-մի գերեզման: Այդքանն էլ ձեզ շատ է: Ձեր դիակները պիտի շներն ուտեին, գայլերը, աղվեսները, բորենիները: Խաղադաշտը ծածկված է խոտերով, ոնց որ արտ լինի: Այս ի՞նչ է, թևս քերծեցի: Ոչինչ, թող մի երկու կաթիլ արյուն էլ ավել հոսի: Օ՜ֆ, ինչպես ցավում է ոտքս: Անցյալ տարվա չորացած խոտեր էլ կան տեղ-տեղ, ճերմակած մազերի նման: Երեք տարի է, ոչ ոք չի հնձել, ոչ ոք չի խնամել կանաչ դաշտը: Տուգանային հրապարակի գիծը կորել է կանաչի մեջ: Թե՞ անձրևներն են լվացել տարել: Գիծն այ այնտեղ պիտի լիներ: Երեք տարին քիչ ժամանակ չէ: Երեք տարի առաջ ես այստեղ խփեցի իմ ութսունվեցերորդ գոլը: Վերջին գոլը: Սրանից հետո ես միայն հանդիսական կարող եմ լինել: Պատերազմի առաջին օրն էր: Ջուր էր մեր մարզիչը գտնում, որ խաղը չպիտի տեղի ունենա: Սիրելի Սոկոլով, որտե՞ղ ես հիմա, ապրո՞ւմ ես, թե՞… Հաջորդ օրը միասին գնացինք զինկոմիսարիատ, և այլևս իրար չտեսանք: Խաղը տեղի ունեցավ: Մենք ուզեցինք, որ տեղի ունենա: Չուզեցինք ընկճված լինել: Մեզ թվում էր, եթե խաղը տեղի չունենա, պիտի չարախնդա թշնամին՝ տեսա՞ք, ձեր հաշիվներն ինչպես խառնեցի: Ոչ, շո՛ւն, մեզ չես շեղի մեր կյանքի ընթացքից: Մեզ չես հաղթի, ինչքան էլ սուր լինեն ատամներդ:

Մենք ցույց կտանք, որ այդքան զորավոր չես: Մենք կանք, մենք պիտի լինենք: Ինչ հրաշալի խաղ ստացվեց: Այ, այնտեղ, ձախ թևից ես ճեղքեցի մրցակցի պաշտպանությունը, ութսունվեցերորդ անգամ ձեռքերս հրճվանքից թափահարեցի օդում: Այդպիսի ժամանակ ինձ թվում էր, թե ձեռքեր չեն, այլ թռչունի թևեր, ուր որ է ինձ կթռցնեն վեր: Ստադիոնում շատ քիչ մարդ կար, սովորականից տասն անգամ պակաս: Բայց այնպես ուժգին գոռացին ու ծափահարեցին, որ թվաց, սովորական լիքը ստադիոն է: Նրանք, այդ սակավաթիվ ֆուտբոլասերներն էլ մեզ պես էին մտածում:

Զինան շատ ուշացավ: Երևի մենք շարունակում ենք հարձակումը: Ես մտածում եմ մերոնց մասին, մեր անընկճելի ոգու մասին, ուրեմն ցավն ամբողջովին չի լցրել իմ էությունը: Ես ոչ ոքի և ոչ մի բանի առջև ծունկի չեմ իջել, այս ցավի առջև՝ նույնպես: Կանցնի, կանցնի այս ցավը: Բայց ոտք չունենալու ցավը չի անցնի:

Ստեփանն է: Զինան պիտի գար, Ստեփանն է եկել: Ուրեմն Զինան…

- Նա մահացավ ձեռքիս վրա: - Կռահեց Ստեփանն իմ հարցական հայացքը: Դիմացիր, Սերգեյ, այս ցավին էլ դիմացիր…

- Թաղեցի՞ք:

- Դեռ ոչ: Տղերքը եղբայրական գերեզման են փորում: Ես շտապեցի քեզ մոտ, քանի դեռ քեզ չեն տեղափոխել: Մահից առաջ Զինան խնդրեց, որ քեզ տեսնեմ, քեզնից իմանամ ձերոնց հասցեն: Թող այցի գան քեզ, խնամեն: Զինան ինքն էր այդ անելու:

Կանգ առեք, արցունքներ, տղամարդուն սազական չէ լացը: Ես ու Ստեփանը լալով գրկեցինք իրար: Իմ արցունքները նրա սիրտն էլ էին փխրեցրել:

…Պատերազմից հետո Ստեփանը չգնաց իրենց գյուղը: Ավելի ճիշտ՝ գնաց, մի ամիս մնաց ու եկավ մեր քաղաքում ապրելու: Ամուսնացավ, տուն ու տեղ դրեց: Ինչքան էլ զբաղված լինեմ, ամեն մարտի 18-ին իմ հենակները տկտկում են Ստեփանի տան սանդուղքներին: Մարտի 18-ը Զինայի ծննդյան օրն է: Պատից կախված է նրա մեծացրած լուսանկարը: Մի երկու բաժակ օղի ենք խմում: Երգում ենք Զինայի սիրած երգերը: Մեզ հետ երգում է տանտիրուհին: Անցյալ տարվանից մեզ միացավ և նրանց դուստրը՝ Զինան: Ինչ կենսուրախ աղջիկ է այս Զինան, ասես երկու կյանքով է ապրում: Եվ դարձյալ մենք երեքով ենք՝ ես, Ստեփանը և Զինան:

ՏԽՈՒՐ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ես վերադառնում եմ ծովափից: Այսինքն՝ արդեն գնել եմ ինքնաթիռի տոմսը, հավաքել եմ լեհական երկտեղանոց ծիրանագույն վրանը, կապկպել իրերը, իհարկե կնոջս և աղջկաս մասնակցությամբ, հիմա էլ սպասում եմ ավտոբուսին, որ մեզ պիտի հասցնի օդանավակայան: Վերադառնալու հոգսերը ծովափ գնալու հոգսերից պակաս չեն: Դեռ մի բան էլ ավելի: Եթե ուշանաս ավտոբուսից, կուշանաս՝ ինքնաթիռից, իսկ դա նշանակում է, ուշացել ես աշխատանքից, բարի եղիր մեղմ, գրեթե աղաչական ձայնով բացատրել տեղկոմի նախագահին, հիմնարկի պետին, կիսապետին և նույնիսկ ոչ պետին, թե ինչու ժամանակին աշխատանքի չես ներկայացել: Իսկ ծովափ մեկնելիս թեկուզ մի շաբաթ ուշացիր, ոչինչ, դեմդ չորսշաբաթանոց արձակուրդ ունես: Ուստի և ես դեռ լույսը չբացված եկել եմ ավտոբուսի կանգառը, ինձնից է սկսվում երկար հերթը: Ոչ մեկը չի ուզում

ուշանալ ինքնաթիռից, նույնիսկ վերջին եկողը թաքուն հույս ունի, թե մի կերպ կխցկվի ավտոբուս: Ու հերթ է կանգնում: Դրանից էլ հերթը հա երկարում է: Ես առաջին համարն եմ, գերադասել եմ հինգ ժամ այստեղ կանգնել, քան հինգ րոպե տեղկոմի նախագահի կաբինետում: Ինձ չի հանգստացրել այն հանգամանքը, որ եթե ուշանամ էլ աշխատանքից, դժվար չէ օբյեկտիվ ապացույցներ բերել, կենդանի վկա ունեմ՝ մեր հիմնարկության աշխատողներից մեկը՝ Բաբկենը: Նա դեռ երկու օր մնալու է ծովափում: Հերթ կանգնողների միջով մոտենում է ինձ: Երևի եկել է ճանապարհ դնելու:

- Միտքս փոխեցի, այսօր եմ վերադառնում: - Եվ կանգնում է կողքիս: Հիմա նա է առաջին համարը, ես երկրորդն եմ:

- Որտե՞ղ է ձեր հերթը, երիտասարդ,- հարցնում է մի ծեր ուզբեկ, այնքան ծեր, որ քառասուն տարեկան Բաբկենը երիտասարդ է նրա համար:

- Հենց այստեղ, այս ընկերոջից առաջ: - Բաբկենը ցույց է տալիս ինձ:

- Սուտ է ասում:

- Դուք նոր եկաք:

- Հերթ կանգնելիս վերջն են հարցնում, ոչ թե սկիզբը: Վերջը ես եմ, եկեք ինձնից հետո կանգնեք:

Աղմուկը մեծանում է: Ամենից բարձր հնչում է ուզբեկների ձայնը, որոնք հինգ հոգի են, միայն մեկն է ծեր: Ուժեղ, հաղթանդամ տղաներ են, որոնք, ինչպես երևում է, միասին են եկել հանգստանալու և միասին վերադառնում են իրենց գյուղը կամ քաղաքը:

- Ես բոլորից շուտ եմ եկել: Հարցրեք այս ընկերոջը: - Բաբկենը ձեռքը դնում է ուսիս:

Հարցնում են ինձ, ես ինչ-որ անորոշ բաներ եմ փնթփնթում՝ արժանանալով Բաբկենի նախատող հայացքին: Երբ վերադառնանք, նա իմ փնթփնթոցի համար վրեժ կլուծի. մեր տղերքին իմ ներկայությամբ կպատմի, թե ինչպես ես իրեն օգնության ձեռք չեմ մեկնել, վարպետորեն կակնարկի այն մասին, որ մի անգամ ինձ փրկել է գազազած շան ձեռքից, մի ուրիշ անգամ համարյա դուրս է քաշել տրամվայի տակից, իսկ ծովափում էլ իր ձեռնափայտով վախեցրել է ինձ հայհոյող մի հարբածի: Եվ այս մի զույգ աչքերի փոխարեն նախատինքով ինձ կնայեն մի քանի զույգ աչքեր, նայած թե մեր տղաների խումբը քանի հոգուց բաղկացած կլինի: Բոլորն էլ ճիշտ կլինեն՝ թե՛ նրանք, թե՛ Բաբկենը: Նա իսկապես այդ ամենն ինձ համար արել է: Ես երախտապարտ եմ նրան, մեր հիմնարկի լավագույն մարդկանցից մեկին, բայց ապերախտաբար նույնիսկ մի փոքրիկ սուտ չասացի հոգուտ նրա: Եթե այդ սուտը լիաթոք ասեի, հիմա հերթը խաղաղված կլիներ, հուսահատորեն հաշտվելով այն բանի հետ, որ Բաբկենն ինձնից առաջ է: Այս հինգ ուզբեկներն այսպես համառորեն չէին պահանջի, որ նա կանգնի իրենցից հետո: Բաբկենը հույսն ինձնից կտրելով՝ իսկույն կողմնորոշվեց իրադրության մեջ:

- Ես ձեզ ցույց կտամ կարգ խանգարել: - Սպառնաց նա: Հետաքրքիր է, ինչպես պիտի «ցույց տար» հինգ մարդու, որոնցից միայն մեկն էր ծեր, իսկ մյուսներն ուժեղ, հաղթանդամ տղաներ էին՝ ջրի մեջ կոփված պիրկ մարմիններով: Նրանցից մեկն առաջ եկավ, որպեսզի Բաբկենին ապացուցի, որ անվախներն էլ պիտի ինչ-որ տեղ վախ ունենան: Նրա ձեռքը դեռ գրպանում էր, բայց ինչպես գնդակը փողի մեջ: Կսպաներ մի հարվածով: Ընկերները հասկացան նրա մտադրությունը: Մեկն ասաց.

- Ձեռք չբարձրացնես: Չես տեսնում, հաշմանդամ է:

Ուզբեկը վերադարձավ ընկերների մոտ: Բաբկենը ձայնն ավելի բարձրացրեց, թե՝ դուք ո՞ւմ եք ասում կարգ խանգարող: Ես ինքս եմ կռվել կարգ խանգարողների դեմ և այս օրն եմ ընկել կռվում:

- Դուք ո՞վ եք, փսլնքոտներ, ես գերմանական գեներալ եմ գերի վերցրել:

Այդ մեկը սուտ էր, Բաբկենը պատերազմում չէր եղել:

- Դուք կատվաձագեր եք… թե այսպես չլինեի…

Զարմանալի բան, Բաբկենի խոսքերը որքան հանդուգն էին, տեսքն այնքան խղճուկ էր: Եվ որքան կարողանում էր խղճուկ երևալ տեսքով, ձայնն այնքան ավելի էր բարձրացնում, այնքան ավելի վիրավորական բառեր էր գործածում.

- Խոզե՛ր, մոխրաթավալնե՛ր, լակոտնե՛ր…

Չգիտեմ ինչքան էր ուզբեկների համբերության բաժակի մեծությունը: Իմն արդեն լցվել էր: Ես ուզում էի ապտակել Բաբկենին, գերմարդկային ճիգերով զսպում էի ինձ: Ես ուզում էի գոռալ՝ բավական է օգտագործես քո հաշմանդամությունը: Ինձ թվում էր, թե Բաբկենը լավ է հասկանում իմ հոգեվիճակը և ինձնից վրեժ լուծելու համար դիտմամբ է այսպես անում, որպեսզի սրտիս պայթյունից շունչս փչեմ: Բայց ախր նա մեր հիմնարկի լավագույն մարդկանցից մեկն էր, մի՞թե կույր եմ եղել ես, կույր են եղել բոլորը: Կիրթ, բարի, սրտացավ ընկեր և հանկարծ… Ես ատում եմ նրան, ես ատում եմ արատը, որ առաքինությունից բարձր է ճչում, միայն արատն է, որ հոխորտում է այսպես, չի ամաչում իրենից և դրանով կրկնակի նողկալի է դառնում: Ուզբեկների դեմքերը ծամածռվում են, երևի նրանք էլ նույնն են մտածում: Սակայն ինձ պես չեն շարժվում տեղից:

Ինչպե՞ս կխփես հաշմանդամին:

Բայց ուզբեկներն ինձնից բախտավոր են, նրանք մի քանի ժամ հետո չեն տեսնի Բաբկենին, կմոռանան նրան: Իսկ ինձ մինչև կենսաթոշակի անցնելը հետապնդելու է իմ այս ծովափնյա տխուր հայտնագործությունը:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԱՐԴԸ

(Ոչ իրատեսական պատմվածք)

Դատարանում

Ես հիմա հավատում եմ, որ պատահականությունը մեծ ուժ է և ամենևին չեն ստում հեքիաթները, երբ համառորեն կրկնում են, թե այսինչ հովիվը կամ հացթուխը թագավոր է դառնում պատահաբար իր ուսին իջած աղավնու ողորմածությամբ: Չէ, ես թագավոր չդարձա, այլ՝ ընկա դատարան: Կյանքումս առաջին անգամ: Պիտի ամուսնացնեի ծնողներիս, որոնք քառասունհինգ տարի առաջ ինձ ապօրինաբար աշխարհ էին բերել: Ինձ չէր մտահոգում նրանց օրինական զավակը լինելը, ես նրանցից ժառանգություն չէի սպասում, այլ պետք էր, որ նրանք լինեին իմ օրինական ծնողները, որ կարողանային տեղափոխվել իմ նոր ստացած բնակարանը, անշուշտ, գրանցվելուց հետո: Դրա համար պիտի ամուսնության վկայական ունենային, մի բան, որ նրանց չէր մտահոգել չորս ու կես տասնամյակ առաջ, երբ ես իմ առաջին ճիչն էի արձակել աշխարհում: Երևի ես ամուսնության ամենավավերական վկայականն էի: Ինչևէ, ես հիմա գավառական դատարանում եմ և զբաղված եմ երբեք չսպասված պարտականության կատարմամբ. ծնողներիս անունից դիմում պիտի գրեմ, պիտի ձևակերպեմ այս կամ այն

իրողությունը և հանկարծ զգում եմ, որ անկարող եմ, որովհետև պատկերների ու նկարագրության փոխարեն չոր ու ցամաք իրավաբանական ձևակերպում է հարկավոր: Իրավաբանը վերևից է նայում ինձ, նրա կեցվածքը, ժպիտը մի բան են ասում, թե՝ բա ես էլ եմ համալսարան ավարտել, դո՞ւ էլ: Եվ վերցնում է գրիչը, մի երկու բոպեում ձևակերպում այն ամենն, ինչ ես երկու օրում էլ չպիտի կարողանայի: Ես շնորհակալ եմ այդ իրավաբանից, որին մեր ընդհանուր ծանոթը բարի մարդ է համարում: «Դու բարի մարդ ես,

- այդպես էլ ասաց մեր ընդհանուր ծանոթը,- մեր տղայի գործը յոլա տար»: Երբ վերջացրեց և վայր դրեց գրիչը՝ մտահոգ մարդու ցրված հայացքը մեզ դարձնելով ասաց, որ հիմա մարդասպանության գործով ինչ-որ դատ է սկսվում և եթե ցանկանում ենք ներկա լինել, ապա կարող ենք դիմացի դռնից մտնել ուղիղ դատարանի դահլիճը: Մեր ընդհանուր ծանոթն աշխատավայրում շատ զբաղված լինելու պատրվակով հրաժարվեց, իսկ ես առաջին անգամ դատարանում լինելով՝ զուտ հետաքրքրասիրությունից դրդված մտա դահլիճ: Ես այդ պահին չէի կարող ենթադրել, որ այդ առաջարկությունը պատահականությունների շղթայի եզրափակող օղակն է և քիչ հետո լսելու եմ բաներ, որոնք ոչ մի հեքիաթում չի լսել աղավնու ողորմածությամբ թագավոր դարձած ոչ մի հովիվ կամ հացթուխ:

Դատավորը, որն իմ հայցը ձևակերպած իրավաբանն է, մեկ աջ, մեկ ձախ ձեռքը հերթով դնում է շալվարի գրպանը, ազատ մնացած ձեռքով հարդարում է մազերը, երևի ցույց տալու համար, որ դատարանում իրեն զգում է ինչպես տանը կամ հասկացնել է ուզում, որ այսպիսի գործերը սովորական են իր համար: Հայացքը հաճախ է ծանրանում ուսերիս, մեխվում աչքերիս մեջ: Հարց չկա այդ հայացքում, այլ

հաստատ համոզում, թե ինքը շատ լավ է վարում դատը, թեև գերագույն դատարանի գլխավոր դատավորը չէ: Ինչ կա որ, խելացի դատավորներ կան նաև գավառում: Նրա այդ կեցվածքն ավելի է ընդգծվում, երբ մի շարք փաստեր շարադրելուց հետո անցնում է եզրակացությանը. «Այսպես, ուրեմն, մեղադրյալը փորձում է խելագար ձևանալ, պնդելով, թե ինքն իբր աշխարհը փրկել է կործանումից, նրա զոհը, իբր, իր գիտական փորձերի ժամանակ հայտնաբերել էր, թե ինչպես կարելի է արագացնել ատոմի պտույտն այն հաշվով, որ սա իր հարևան ատոմին ավելի մեծ արագություն հաղորդի և օդը, ջուրը, հողը, կենդանական և բուսական աշխարհով հանդերձ, շիկանան ու մեր մոլորակը մի շիկացած գունդ դառնա: Մեղադրյալը համառորեն պնդում է այդ անհեթեթ միտքը, քաջ գիտենալով, որ խելագարներն ունենում են մի քանի սևեռուն գաղափար, մեկն անընդհատ կրկնում է՝ «Ես Կեսարն եմ», մյուսը՝ «Ես Մարսից եմ եկել», երրորդն էլ ահա, ինչպես դուք լսեցիք, իրեն մեր մոլորակի փրկիչ է համարում»:

Դատավորը մեկ րոպե լռեց, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան հիանալու իր խորաթափանցությամբ, ձեռքը տարավ ճակատին, որի ետևում, ով գիտի, ինչքան խոհեր էին խլրտում: Նա այդ պահին նման էր ծանրորդի, որը հսկա ծանրաձողը բարձրացնելու համար լարում է բոլոր ուժերը: Գերլարված էին նրա մտքերը, որոնց ծանրության տակ մեկ ուրիշը գուցե կկորցներ հավասարակշռությունը, բայց նա, տեսնո՞ւմ եք, ինչքան լավ է հաղթահարում և ահա նույնիսկ ժպտաց: Այդ նշանակում է, որ ծանրաձողը բարձրացված է և կարող է արդեն ցած նետել: Եվ ծանրաձողի շրխկոցով էլ ընկան նրա խոսքերը.

- Բժշկական քննությունն այս մեղադրյալի մոտ չի հայտնաբերել խելագարության նշաններ:

Այլևս ոչ մի մութ կետ չէր մնում: Մենք սպասում էինք դատարանի վճռին, որ երևի բաղկացած կլիներ երկու հարյուր բառից, բայց ըստ էության մեկ բառ էր. «Գնդակահարություն»:

- Մարդիկ, ես մեռնում եմ ձեզ համար,- իր վերջին խոսքում ասաց մեղադրյալը,- ես փրկեցի ձեզ: Եվ զոհ եմ մեռնում…

Հավաքվածներից ոչ մեկի դեմքին կարեկցանք չերևաց: Ոմանք նույնիսկ զզվանք արտահայտեցին, որ այդ մարդը շարունակում է ստել մահվան շեմին անգամ: Ես նույնպես չէի հավատում: Բայց ես չէի հավատում ատոմների գերարագ պտույտի հայտնագործմանը, իսկ այդ մարդու անկեղծությանը մազաչափ անգամ չէի կասկածում: Հանդիպել է մի շառլատանի, որը, ով գիտե, ինչ նպատակով ցանկացել է նրան վախեցնել և սա անկեղծորեն վախեցել է առանց մտածելու, որ այդպիսի գյուտերը մի մարդու բան չեն, ոչ էլ արվում են ինչ-որ նկուղում: Միամիտ, դյուրահավատ հոգի, որն ահա իր միամիտության և հավատի զոհն է դառնում…

Գիշերն անհանգիստ քնեցի: Անդադար աչքիս առաջ էր գալիս դատապարտյալը, որն իմ հաստատ համոզմամբ արդեն՝ զոհ էր, ոչ թե մարդասպան: Առավոտյան դարձյալ դատավորի աշխատասենյակում էի, ուր երեկ նա վերևից էր նայում երևույթներն իրավաբանորեն ձևակերպելու իմ անճարակության վրա: Այսօր նորից ուներ նույն կեցվածքը, որն, ըստ երևույթին, հագնում էր շորերի հետ և քնելուց առաջ շորերի հետ էլ հանում:

- Ես ուզում եմ հանդիպել մահապարտի հետ: Խնդրում եմ աջակցեք:

Մեր ընդհանուր ծանոթը ճիշտ էր, երբ նրան «բարի մարդ» էր համարում: Նա զանգահարեց բանտ, ուր մինչև գնդակահարվելը վերջին օրերն էր անցկացնելու մահապարտը, բանտապետի հետ ինչ-որ բաներ խոսեց և ահա ես բանտարկյալի՝ Արթուրի հետ մի կիսախավար խցում եմ: Երկուսով նստել ենք սառը հատակին: Մահապարտը սառնությունից չի վախենում, իսկ ես անհարմար եմ զգում ընդգծել իմ դրության առավելությունը և մենք երկու պարսիկների պես ծալապատիկ նստել ենք կողք-կողքի: Միայն թե մեր տակ փափուկ գորգի փոխարեն սառը ցեմենտն է: Նա խոսում է, և ես ուշադիր լսում եմ նրան: Հասկանում է իմ անկեղծ կարեկցանքը և դրանից նրա խոսքը, որ սկզբում կցկտուր էր, դառնում է սահուն ու մտերմական: Մահից առաջ ասված խոսք է, որ զերծ է նկատառումներից:

Մահապարտի պատմությունը

Ինձ էլ այս էր վիճակված... Եթե այն օրը տնից մի քիչ ուշ դուրս գայի, այսպես չէր լինի: Ինը գրամ արճիճը, որ իմ կուրծքը պիտի խրվի, պատրաստված չէր լինի ինձ համար: Ես կապրեի... Սխալ ասացի՝ ոչ ոք չէր ապրի... Ոչ ես, ոչ դու, ոչ էլ այն դատավորը, որ փութաջանորեն ապացուցում էր իմ խելագար չլինելը: Աշխարհի բախտից էր, որ տնից դուրս եկա և հանդիպեցի այդ սարսափելի մարդուն… Խլեցի ստույգ մահից: Նա գլուխը կախ անցնում էր փողոցը: Չէր զգում, որ տրամվայ է գալիս, քայլում էր: Մի ակնթարթ էլ և բախվելու էին երկաթն ու մարդը: Ես ձեռքով ուժգին ետ քաշեցի նրան: Նա չնայեց ինձ և շարունակեց քայլել: Քայլեցի ես էլ նրա հետ: Ոչ մի խոսք: Շնորհակալություն հայտնելու ոչ մի փորձ: Մոտ հարյուր մետր գնացինք: Ուզում էի իմանալ, թե մարդն ինչ

աստիճանի ապերախտ կարող է լինել: Էհ, երևի թողած պիտի լինեի, որ տրամվայն անցներ նրա վրայով: Ի՞նչ իմանայի… Հիմա դասարանի առաջ կանգնած՝ աշակերտներիս կպատմեի, թե ինչպես Նապոլեոնը գրավեց Մոսկվան: Իմ ճակատագիրն էր… Փրկեցի նրան, որ ես չփրկվեմ: Դեռ ավելին՝ նրա կողքով քայլելով՝ շնորհակալություն էի մուրում նրանից: Նա այդ հասկացավ և շպրտեց երեսիս.

- Այս մարդիկ լավ բան անել չգիտեն, անպայման վարձատրություն է հարկավոր: Գնա, գնա, զզվելի առևտուրդ ուրիշի հետ արա:

Ուզեցի թքել ու հեռանալ, բայց նա շարժել էր հետաքրքրությունս:

- Ես առևտրական չեմ,- ասացի մեր խոսակցությունը շարունակելու թաքուն հույսով:

- Դե, եթե առևտրական չեք, առանց նյութական, առավել ևս՝ հոգեկան վարձատրություն ստանալու ինձ համար գտեք մի վարձու տուն, որն ունենա նաև մի ընդարձակ նկուղ:

Ես մենակ եմ ապրում: Կինս բաժանվեց դեռ մի երեխա չպարգևած: Մենյակիս տակ բավականին ընդարձակ մի նկուղ կա: Հատակը ծակել ենք և նկուղի մուտքն իմ մահճակալի տակ է: Պետք չէր փչացնել հատակը: Կինս ու ես կարծում էինք, թե միմյանց հետ ցմահ պիտի ապրենք և լավ կլինի, որ ամենակարճ ճանապարհով հասնենք նկուղ, ուր նոր տարվա համար պահած կլինենք մոմի բարակ շերտով պարուրված ձմերուկներ, որոնք թարմ են մնում, տեսակ-տեսակ խնձորներ, տանձ ու խաղող: Բայց կինս բաժանվեց առաջին նոր տարին չեկած և առիթ չեղավ, որ ես նկուղ մտնեմ: Թող գա այս մարդն, ապրի ինձ հետ: Եթե զահլաս տարավ՝ կվռնդեմ, առանց վարձատրություն ստանալու:

- Երեք ժամ հետո եկեք այս հասցեով։ Բնակարանը տասնյոթերորդ համարն է։ Մուտքը բակի կողմից։

Երեք ժամ հետո իմ բնակարանը դարձյալ երկու բնակիչ ուներ։ Այս անգամ՝ երկու տղամարդ։

- Ես գործիքներ ունեմ, պիտի տեղափոխեմ նկուղ։ Այնտեղ էլ կաշխատեմ։

Հաջորդ օրը նա բերեց իր «գործիքները» և իմ նկուղը վերածվեց մի իսկական լաբորատորիայի։ Ասես գործընկերոջս՝ ֆիզիկայի ուսուցչի դասասենյակը լիներ։

- Անունս Քանափ է,- ասաց իմ նոր ծանոթը։ -Դա ծնողներիս դրած անունը չէ, ինքս եմ փոխել՝ չուզենալով որևէ ազգության պատկանել։ Քանափ՝ ո՞ր ազգին է մոտ, հը՞։ Այս ի՞նչ է, ինձ հյուրընկալողը բանաստե՞ղծ է։

Նա վերցրեց գրասեղանի վրա մոռացված սևագրությունս, ուշադիր կարդաց.

- Իմ խեղճ բարեկամ, ուրեմն դուք հավատում եք անմահությանը։ Եվ ինչո՞վ պիտի անմահ մնաք, այս քոսոտ բանաստեղծությա՞մբ։ Ախր սա մեռած է ծնվել և քանի որ առնվազն մեկ շաբաթ անցած կլինի սրա ծննդից, ավելի ճիշտ՝ մահից, ապա որդերն իրավունք ունեն սողալու նրա վրա։ Կսողան և ոչինչ էլ չեն գտնի, սա հոտած մսի չափ էլ չկա։

Քանափը ծաղրում է ինձ։ Ինչ ուզում եք ասեք, հեշտ չէ լսել այն մարդու ծաղրը, որի համար զոհողություններ ես անում։ Բայց այդ պահին մտքիս մեջ արձագանքվեց մի նախադասություն, որ ինչ-որ գրքում ինչ-որ մեկը գրել էր թերևս իմ մասին. «Աչքերը լցված էին նրա ապերախտ վարմունքից, բայց լեզուն կարողանում էր լուռ մնալ»։ Ես նույնիսկ չթողեցի ու հեռացա, այլ շարունակեցի լսել Քանափին։

- Բայց ի՞նչ կփոխվեր աշխարհում, եթե այս բանաստեղծությունը կատարյալ լիներ, և հողագնդի բոլոր քննադատները գրեին, որ միայն ինքը՝ Ապոլոնը կարող էր այն ստեղծել, եթե վերջ տար աստվածներին հատուկ երեսառածությանը և գալարվեր մարդկային ռեալ տառապանքից: Ոչ մի բան: Աշխարհն էլի նույնը կմնար: Կշահեիք միայն դուք: Ձեր անունով փողոցներ կկոչեին, գուցե և հրապարակներ, որոնք կառուցված են իշխողների համար, որպեսզի այստեղ նրանք տոնեն իրենց հաղթանակները: Եվ ուրիշ բանաստեղծներ կձգտեին հասնել ձեզ, որպեսզի ուրիշ փողոցներ ու հրապարակներ կոչվեն իրենց անունով: Ինչպե՜ս ներշնչված գրիչ կվերցնեին: Դուք էլ, իմ բարեկամ, այս քնձռոտ բանաստեղծությունն այդպես ներշնչված եք ստեղծագործել: Ներշնչվել եք այն բանից, որ պիտի անեք մի բան, որ չի կարողացել անել մի ուրիշը: Նրանից բարձր եք դուք, նա ի՞նչ է ձեր դեմ: Դուք անապատում այդպես չէիք ոգևորվի, որովհետև այնտեղ չէիք գտնի մեկին, որի առջև ցուցադրեիք ձեր գերազանցությունը ձեր արվեստակիցներից: Ողորմելի փառամոլություն: Եթե Տոլստոյ եք՝ պիտի ջնջեք մյուսներին, որ հարթության վրա ավելի բարձր երևաք, եթե փոքր եք, այս բանաստեղծության հեղինակի չափ, ապա պիտի ձգտեք, որ Տոլստոյը կամ մեկ ուրիշը ձեզ թույլ տա նստելու իր ոտքերի մոտ: Ողորմելի մարդիկ, որ սակայն, աստվածներ են հորինել, որպեսզի իրենց համեմատեն նրանց հետ: Եվ կյանքում, որպես մարդ, արժանի են միայն ճիպոտահարման, իսկ գրքերում աստվածներ են ձևանում իրենց բարեգթությամբ ու շանթարձակ զայրույթով, որն իբր ծնվում է մարդկային անարդարության դեմ: Բայց դա իրականում փառք մուրալ է նշանակում, իմ մուրացկան բարեկամ…

Ես համբերությամբ լսում էի Քանափին՝ մուրացկանի նման խոնարհ կանգնած: Նրա ասածը թարմություն էր ինձ համար և այդ պատճառով կուլ էի տալիս վիրավորանքս: Ես իսկապես մի մուրացկան էի, որ նրանից մուրում էր մտքեր, որոնք ինձ չէր կարող տալ իմ շրջապատի մարդկանցից ոչ մեկը: Ինձ պետք չէր իմ սենյակի և նկուղի դիմաց ստանալ, ասենք, երեսուն-քառասուն ռուբլի, ինձ պետք էր նրա մտածողությունը…

Բայց նա լռեց: Այդքանը, որ խոսեց, երևի բավական էր վարձատրության համար: Մի րոպե անց խորը շունչ քաշեց ու ասաց.

- Ի գործ, Քանափ, ատոմների աշխարհն ավելի ազնիվ է, քան մարդկանցը:

Եվ նա իջավ նկուղ երկաթե սանդուղքով, որը տեղադրելիս արյունոտել էի ճակատս: Տեղը սպի է մնացել: Տխրում էի, որ ճակատիս վրա է և թաքցնել չի լինի: Բայց հիմա միևնույնն է, գնդակը ցիրուցան կանի ճակատս, դրանից հետո էլ ի՞նչ սպի…

Քանափը հազվադեպ էր դուրս գալիս նկուղից, դուրս գալիս էլ՝ մտքով ներքևում էր: Գրեթե չէինք խոսում: Ծխող էր: Ես նրա համար ծխախոտ էի գնում, տալիս էի և առանց շնորհակալության սպասելու, հեռանում: Նրա միտքը վիթխարի աշխատանք էր կատարում, այն խանգարելն անգամ ես հանցագործություն էի համարում: Այդ երեկո, վերջապես, նա ցանկություն ունեցավ ինձ հետ խոսելու:

- Ավարտեցի, - ասաց,- կարող եմ մեկ ժամ հիանալ իմ աշխատանքի պտուղներով: Մեկ ժամ… իսկ այնուհետև…

Ինձ համար տարօրինակ էր այս սահմանափակումը. ինչո՞ւ մեկ ժամ, ո՞վ է իր ուրախությունը դնում վանդակի մեջ կամ որոշակի ժամանակից հետո անջատում ինչպես

ռադիոընդունիչը: Դրա համար էլ անհամբեր սպասում էի նրա «այնուհետևին», բայց նա չէր շարունակում:

- Իսկ այնուհետև…,- հիշեցրի նրան:

- Իսկ այնուհետև կվերանա տարբերությունը Ձեր և Գյոթեի միջև:

- Իսկ ինչո՞ւ մեկ ժամ հետո պիտի վերանա իմ և Գյոթեի տարբերությունը,- զվարթ տոնով ասացի ես՝ չթաքցնելով նրա այդ արտառոց մտքի նկատմամբ իմ հեգնական վերաբերմունքը:

- Որովհետև մեկ ժամ և բոլորն էլ կսկսեն մեռնել, նախ ես, հետո դուք, հետո մեր հարևանները, հետո՝ մեր հարևանների հարևանները, մինչև աշխարհի մյուս ծայրում ապրող ամենավերջին հարևանը, ձկները, վագրերը, արծիվները: Չեն մոռացվի մժղուկներն անգամ… մեկ ժամ հետո ես գործի եմ գցելու շիկացման մեխանիզմը: Այս անունը պայմանական է, որովհետև ես լրիվ համոզված չեմ, թե ատոմների գերարագ պտույտից նյութը կշիկանա: Բայց կարևոր չէ, թե ինչ կկոչվի՝ շիկացման թե մոխրացման մեխանիզմ, կարևորն արդյունքն է, ամբողջ երկրագունդը մի կայծ կդառնա տիեզերքի մեջ կամ մի մոխրահատիկ: Ավելի հակված եմ մտածելու, որ կբոցավառվի: Ավելի ճիշտ, ես այդպես եմ ուզում, այդպես ավելի հաճելի է ինձ: Բոցեղեն մահ կլինի, իսկ դա գեղեցիկ է:

Ինձ թվաց, թե նա զառանցում է կամ լարված աշխատանքից ցնորվել է: Հետո կարծեցի, թե պարզապես ինձ ձեռք է առնում կամ այսքան ժամանակ լուռ մնալուց հետո նրա մեջ զարթնել է խոսելու, կատակելու ցանկությունը: Բայց Քանափը սկսեց բացատրել, թե ինչպես պիտի լինի այդ բոցեղեն մահը: Երկար բացատրեց, խրթին լեզվով, որից ես միայն այն հասկացա, որ ատոմն իր առանցքի շուրջը

պտտվելու է ավելի արագ, այդ արագությունը փոխանցելու է հարևանին, իսկ սա պտտվելու է էլ ավելի արագ և այնպես անվերջ, մինչև որ մի մեծ հրդեհ դառնան օդն ու ջուրը, հողն ու քարը, բույսերը, մարդիկ, գազանները: Չեն մոռացվի մժղուկներն անգամ, նորից ասաց նա, ոջիլները, լվերը… Ոջիլների և լվերի մասին դատավորը երեկ քաղաքավարությամբ լռեց, դե ինչ կա որ, առանց դրա էլ ապացուցել էր, որ ես խելագար չեմ և ձևանում եմ միայն: Ես չեմ մեղադրում այդ դատավորին, որ լրիվ չասաց ինձնից լսածը: Ամեն մարդ էլ պարտավոր է նրբակիրթ լինել… Բայց արի ու մահվան երախում նրբակիրթ եղիր… Ոտքերս դողում են: Զարմանում եմ, թե ինչպես չեմ խելագարվում: Ինձ պիտի արձան կանգնեցնեին, աշխարհի ամենամեծ արձանը, որովհետև աշխարհում ոչ ոք ինձնից ավելի մեծ գործ չի արել մարդկության համար, բայց ես այստեղ եմ, այս բանտում և սպասում եմ իմ մահվանը: Ինը գրամ մետաղ, ընդամենն ինը գրամ մետաղ այն վիթխարի քանակությունից, որ պետք կլիներ իմ արձանի համար… Չեն հավատում, որ նա կարող էր կործանել երկրագունդը:

Դու էլ չես հավատում: Ես քեզ հետաքրքրում եմ որպես հոգեբանություն, որպես մի մարդ, որը գլուխը պատեպատ է խփում ապացուցելու համար ինչ-որ ֆանտաստիկ անհեթեթություն: Ասա, գոնե մի քիչ չե՞ս հավատում:

- Ես քեզ լրիվ հավատում եմ, Արթուր,- որքան հնարավոր էր հուզված ասեացի ես՝ վախենալով, որ նա կնկատի իմ կեղծիքը: Բայց նա չնկատեց և անկեղծ հուզմունքով շարունակեց.

- Ասում էր՝ շատ պատահաբար ստացվեց, ուրիշ բան էի փնտրում՝ մանր-մունր միացություններ, և ստացվեց այդ մեծը: Իր գյուտը բացատրելուց հետո Քանափը նայեց ժամացույցին.

«Արդեն լրացավ մեկ ժամը: Բավական է հրճվեմ ինքս իմ արածով…»

Եվ քայլեց դեպի նկուղը:

- Սպասե՛ք,- բղավեցի ես:

Նա չլսելու տվեց: Ես արագ հասա նրան, բռնեցի մեջքից ու բարձրացրի վերև.

- Հիմա կխփեմ գետնին, չորս մաս կանեմ:

- Դու մի ճանճ անգամ չես սպանի: - Անսպասելի անցավ նա դու-ի:

- Քեզ թվում է: Հապա փորձիր նկուղ իջնել:

Իսկապես նա ճիշտ էր ասում, ես նրան չէի սպանի: Բայց թող օրհնված լինի հայրս, որ իր առողջ, հաղթանդամ կազմվածքը ժառանգել է ինձ, և իմ ուժի դիմաց անզոր էր Քանափը: Նրա որոնող միտքը, որ կարող էր ծնկի բերել աշխարհը, անզոր էր իմ հաստ բազուկների առջև: Մի ձեռքով բռնած նրան՝ մյուսով հանեցի գոտիս և կապեցի մահճակալից: Համոզվելով, որ կապն ամուր է, նրան թողեցի սենյակում և գնացի խոհանոց, ուր լվացքի պարաններ էր կապել երբեմնի կինս: Դրանց արդեն կարելի էր լրիվ վստահել, մանավանդ որ մի քանի պտույտ էին գործում Քանափի մարմնի և մահճակալի ոտքի վրայով: Քիչ հետո համոզվեցի, որ իզուր եմ մահճակալիս կապել, ամեն անգամ պիտի ցնցի և չթողնի քնեմ: Պարզապես ավելորդ վախ է պարանի այսքան շերտեր գծել նրա մեջքով ու ոտքերով: Մարդկությունը կապելու դարավոր փորձ ունի, որը դեռ չի հերքվել. կապում են ձեռքերը՝ մեջքին դրած և ոտքերը: Ես էլ այդպես կանեմ: Կբացեմ նրա ծալովի մահճակալը և վրան կպառկեցնեմ: Երբ ուզում է, թող քնի: Եթե շատ է ուզում, կարող է երազում գործադրել իր մտադրությունը: Ես այդպես

էլ նրան ասացի, երբ արդեն պառկած էր իր ծալովի մահճակալի ձգված բրեզենտի վրա:

- Ավելի լավ է՝ միլիցիա զանգահարես: Թե չէ շատ մեղք ես: Ազատ մարդուց դառնում ես անդամալույծ խնամող: Դե, մի ծխախոտ վառիր և դիր բերանս:

Ես վառեցի ծխախոտը, և նա ագահորեն սկսեց ծխել, կարծես վախենալով, որ իրեն կզրկեմ այդ հաճույքից: Չգիտեմ, այդ պահին նա ինչ էր անում, բայց ես ինքս իմ մեջ ծանրութեթև էի անում՝ զանգահարել միլիցիա, թե ոչ: Որոշեցի առայժմ սպասել: Ո՞ւր պիտի փախչի այս «անդամալույծը»:

Ես մի տարօրինակ հիվանդություն ունեմ. փնտրում եմ ինձ հանդիպած մարդկանց կրկնօրինակը պատմության մեջ: Քանափինը չէի գտել: Թող նա խոսի, թող իր էությունը գրպանի պարունակության պես շուռ տա իմ դեմ… Մի լավ կուսումնասիրեմ բնավորությունը: Դեռ չեմ կարողանում որոշել թե պատմական դեմքերից ում է ավելի նման: Նրանցից ո՞րը կկործաներ աշխարհը, եթե հնարավորություն ունենար. Ներո՞նը, Չինգիզ Խա՞նը, Աթիլլա՞ն: Ոչ մեկը: Իսկապե՞ս սա նրանցից վատն է: Մի՞թե սրա հոգում ոչ մի լավ բան չկա: Հենց այդ իմանալու համար պետք է սրան չտալ միլիցիայի ձեռքը: Դե, մարդ չի կարող անսխալ կռահել գալիքը: Այնպիսի չնախատեսված հանգամանքներ են խառնվում իրերի ընթացքին, այնպես շեղում իրադարձությունները, որ քո նախկին կռահումներից հետք անգամ չի մնում: Այն ժամանակ իմ մտքով էլ չէր անցնի, որ ես հիսունչորս օր հետո այս ժամին նստած կլինեմ սառը ցեմենտի վրա ու չեմ վախենա, որ կհիվանդանամ: Քանափն ասում էր, որ այդպես է նաև գիտական փորձերի ժամանակ: Գիտես ընդհանուր ուղղությունը, բայց մեկ էլ տեսար չնախատեսված

պատահականությունները հերքեցին անհրաժեշտություն համարվածը և իրենք թելադրեցին զարգացման ուղղությունը: Այլ կերպ ասած՝ պատահականությունները նույնքան օրինաչափ են և օրինաչափությունները նույնքան պատահական: Այդ պատճառով էլ նա զարմացած չէր, երբ հայտնաբերեց ատոմների գերարագ պտտվելու հնարավորությունը: Նա ասում էր, որ նույն կերպ է գոյանում և մարդկության պատմությունը: Չես կարող ստույգ կռահել նրա զարգացման ուղղությունը, միայն մի բան կարող ես բավականին հաստատ ասել. այն, որ երեք հազար տարի հետո պիտի լինեն նույն բնույթի, նույնպիսի պատմական դեմքեր, ինչ որ երեք հազար տարի առաջ: Նույն աղբանոցը և նույն բույսերն այդ աղբանոցում ծլած: Եվ շեփորահար նոր աքլորներ, որ թափ են տալիս իրենց մոխրոտ թևիկները, որպեսզի իդեաների հատիկները, որ կուլ են տալիս սերնդե-սերունդ, կարողանան հեշտ մարսել: Իսկ դուք, ասում էր, սպասում եք ուրիշ լուսաբացների, որոնք նման չեն լինի նախորդներին: Չեք հասկանում, որ աղբակույտերի միջից լուսաբաց չի ծագում: Իսկ հիմա ժամանակ էլ չեք ունենա հասկանալու, ընդամենը երեք ժամում հողագունդը՝ հողե գունդը, կդառնա հրե գունդ:

Նա այդ ասում էր ձեռքերն աշխուժորեն շարժելով, ես դեռ չէի կապկպել նրան: Հիմա շղթայված է ծալովի մահճակալին և արդեն երրորդ ծխախոտն է ծխում. կարծես ինձ տանջելու համար է այդքան շատ ծխում այդ «անդամալույծը», մեկը չմարած՝ մյուսն է վառել տալիս: Ծխում է ու խոսում, որ մարդկային նողկալի հետնամուտքերում անթիվ-անհամար ոճիրներ են գործվել, մարդկությունն աստծո ողորմելի ստեղծագործությունն է, որի վրա նայելիս ստեղծողի սիրտն է խառնում:

- Գիտես ի՞նչ, խնամակալս, մի ծխախոտ վառիր, կամ ձեռքերս արձակիր, որ ես իմ ձեռքով ծխեմ: Մի վախենա, քո այս քոսոտ աշխարհն այնքան էլ շատ չի հետաքրքրում ինձ, որ ուզենամ անպայման կործանել:

Քանափի աչքերում շողաց հույսը. երևի նա հավատաց, որ իր սիլլոգիզմը տպավորություն է թողել վրաս, և ես կարձակեմ ձեռքերը: Ես իսկապես արձակեցի նրա ձեռքերը: Եթե նա ինձ ջրի ուղարկելու խորամանկությունն ունենա, իսկ ես՝ գնալու միամտությունը, ապա կարող է արագորեն քանդել ոտքի կապերը և նկուղ իջնել: Այս մի մազից, այս մի կտոր պարանից է կախված մարդկության բախտը, բոլոր, բոլոր հանճարների անմահությունը: Մարդիկ բանից անտեղյակ գործի են գնում, սիրային ժամադրության, շուկա, թատրոն, կամ պատրաստվում են լուսին թռչել և հանկարծ՝ վերջ ամեն ինչին: Եվ որպեսզի դա տեղի չունենա, ես նրան դարձյալ կկապկպեմ մահճակալին, իսկ մինչ այդ ծխախոտը երկարում եմ նրան: Նա իր ձեռքով ծխում է և շարունակում.

- Գիտե՞ս ինչ, մարդը կարող է իր կյանքում մշտապես դժբախտություն կամ մշտապես երջանկություն ապրած լինել: Դա դատարկ բան է: Երջանիկը երջանիկ չէ և դժբախտը դժբախտ չէ, որովհետև մեռնելու պահին է որոշվում դժբախտ ես եղել, թե երջանիկ: Որոշողը մեռնողն ինքն է լինում, երբ մի հետադարձ հայացք է գցում իր անցած կյանքի վրա: Ես կփրկեմ բոլոր տանջվողներին, իսկ երջանիկները չեն զգա, որ մեռան, այնպես հանկարծակի կլինի մահը: Բայց նրանց հերն էլ անիծած, այդ երջանիկների: Ես կհրդեհեմ աշխարհը…

Քանափը խոսում էր գրգռված: Ես չէի ուզենա, որ նա դրանք ասեր հորանջելով: Այն միտքը, որի արմատները խրված են զգացմունքի փրփուրի մեջ, կարելի է հեշտությամբ հանել, դեն շպրտել: Բայց և չափազանց վտանգավոր է այդ

զգացմունքայնությունը, որը երբեմն վերածվում է խելագարության նոպայի: Մարդն ինչեր չի անի այդ նոպայի ժամանակ, աշխարհն էլ կկործանի…

- Ես աշխատում էի մի գիտահետազոտական ինստիտուտում,- գրգռված տոնով շարունակեց Քանափը,- ուր միջակություններն իրենց մաղձն ու նախանձն արտահայտում էին անկաշկանդ՝ իրենց ձևացնելով իբրև զայրացած սրբեր: Ես հեռացա ինստիտուտից: Չէ, նրանց զայրույթից ու արհամարհանքից չէր, որ փախա: Ես նրանց ավելի էի արհամարհում: Հիմա հրճվանքով մտածում եմ, որ նրանք այլևս չեն լինի: Եթե, իհարկե, դու ձեռքս չբռնես:

Կեսգիշերը վաղուց անցել էր: Չիմացա ինչպես փակվեցին աչքերս: Երբ արթնացա, Քանափը հոգնած հայացքով նայում էր ինձ: Աստված իմ, ձեռքերն արձակ են մնացել: Կարող էր չէ՞, ոտքի կապերն էլ արձակել և մտնել նկուղ, եթե շատ ուզենար, «հրդեհել աշխարհը»: Բայց ոչ մի երաշխիք չկա, որ մի րոպե հետո շատ չի ուզենա: Ամուր կապեցի ձեռքերը մեջքին, ստուգեցի ոտքի կապերը, և դուրս եկա: Առավոտ էր:

- Ճորտս, չմոռանաս ինձ ծխախոտ բերել,- ձայն տվեց Քանափը:

***

- Քո ուզած ամենաընտիր ծխախոտն եմ գնել: - Ներս մտնելուն պես դիմեցի նրան:

- Շնորհակալություն:

Ի՞նչ պատահեց նրան: Այդ բառը նա չասաց մեր առաջին հանդիպման ժամանակ, երբ նրան փրկեցի ստույգ մահից: Մի՞թե մի ծխախոտն ավելին արժեր: Իմ տարակուսանքը հայտնեցի նրան:

- Դու կարգին մարդ ես, ասաց, ձրի ապրուստ ես տալիս ինձ և ապրելու տեղ: Հիմա էլ ձրի ծառայում ես ինձ: Չես գնում միլիցիա հայտնելու իմ մասին: Գնայիր՝ երախտապարտ մարդկությունը քեզ շքանշան կտար, Քրիստոսին վայել հարգանք ու պատիվ կտար: Չէ՞ որ նոր փրկիչ կլինեիր նրա համար: Այնինչ հիմա միայն կարգին մարդ ես, որին արժե շնորհակալություն հայտնել: Բայց, կարգին մարդ, քո բոլոր ջանքերն ընդամենը մի վարդագույն պղպջակ են այն հեղեղի դեմ, որ մարդկային կեղտոտ արյուն է կոչվում: Այդ կեղտոտ արյունից ծնվում են պատերազմները: Կարո՞ղ ես կանխել ատոմային պատերազմը, որ օր օրի հասունանում է: Այդ հարցում դու և մժեղը մեկ եք: Հենց այս պահին էլ սնկաձև մահը կարող է հայտնվել մեր գլխի վերևում: Ես կապկպված եմ, իզուր կլինի փախչելու փորձ անելը: Քո փախչելու փորձը նույնպես ապարդյուն կլինի, այս դեպքում իմ և քո միջև տարբերություն չկա. մի ակնթարթում մարդկային քաղաքակրթությունից հետք չի մնա:

- Դու հույս ունես անձամբ ինձ դարձի բերել,- շարունակեց Քանափը: - Իմ գյուտը, մտածում ես, կարելի է օգտագործել այլ նպատակներով, օրինակ, քաղցկեղի բուժման համար: Եթե ինձ դարձի բերես, ես, անշուշտ, կմտածեմ, թե ինչ է հարկավոր, որպեսզի ատոմների գերարագ պտույտն ինչ-որ տեղ կանխվի: Երևի այդ էլ կհայտնաբերեմ: Եվ եթե քաղցկեղը թոքերում է, ապա միայն թոքերի ատոմները կդնեմ նոր պայմանների մեջ և, ով գիտե, գուցե կբուժվի քաղցկեղը: Դու կրկնակի գովեստի կարժանանաս. մեկ, որ փրկել ես աշխարհն ինձնից, երկրորդ՝ քաղցկեղից:

- Մարդիկ քեզ կաստվածացնեն, Քանափ, քո ստվերի տակ ես չեմ երևա: Եկ, լսիր ինձ, դու կարող ես հանճարների

շարքում առաջինը լինել, դու կարող ես մարդկության պատմության մեջ առաջին գերհանճարը կոչվել, միայն թե…

- Եվ դու կարծում ես, թե ինձ հետաքրքրո՞ւմ են մարդկային գովեստները: Ինձ ու քեզ տարբեր մայրեր են ծնել, Արթուր: Դու չես հասկանա, թե ես ինչու չեմ համաձայնում ճակատիս դնել «գերհանճարի» դափնին: Եվ մի էլ հուսա, թե կարող ես ինձ դարձի բերել և պատմության մեջ մնալ որպես մի մարդ, որ աշխարհը քարուքանդ անող ցուլի պոզերը հանում է և նույն աշխարհին գինի հրամցնում նրանցով:

Քանափը ճիշտ էր ասում, ես իսկապես մտածում էի, որ նրա գյուտը կարելի է օգտագործել այլ նպատակներով, թե ինչ, չգիտեի: Քաղցկեղի բուժման գաղափարն ինքը տվեց: Գուցե իսկապես հնարավոր է այդ չարիքը վերացնել մարդկային կյանքից, գուցե հնարավոր է սիրտը կամ ուղեղը թարմացնել… Օ՜, բացվում է մարդու անմահության պրոբլեմի լուծման հնարավորություն:

Երևի ես բարձրաձայն էի մտորում, Քանափը լսել էր ինձ.

- Բայց իմ գյուտը մարդկանց բարօրության համար չեն օգտագործի,- ասաց նա: -Առաջին հերթին այն կտրամադրվի ռազմական նպատակներին և առաջին հերթին կմտածեն այնպես անել, որ իրենց համար մեկ թշնամին իր ամբողջ տարածքով ոչնչացվի անմիջապես: Այդպես ատոմային ուժը նախ ռումբի վերածվեց… Բայց դու շատ անխիղճ ես, մի ժամ է խոսեցնում ես և ոչինչ չես տալիս ծխելու:

- Ասում են՝ աշխարհի կործանման համար մի քանի ժամ է պետք:

- Թող մի քանի ժամ լինի: Մի քանի ժամ հետո «անմահ» Գյոթեն ու Շեքսպիրը մոռացված կլինեն ամենահետին գրչակի պես: Այս դեպքում նրանց ու գրչակների միջև տարբերություն չկա: Քանի-քանի Գյոթեներ ու Շեքսպիրներ են ոչնչացել այս

մոլորակի վրա: Քանի-քանի քաղաքակրթություններ են մոխիր դարձել հողագնդի վրա կյանքի առաջացման առաջին օրերից սկսած: Սահարայում հրթիռակայան են գտել: Ասում են ուրիշ մոլորակներից մարդիկ են տասնյակ հազարավոր տարիներ առաջ եկել Երկիր և դա նրանց վայրէջքի կայանն է: Ոչ մեկի մտքով չի անցնում, որ այն կառուցել են երկրային մարդիկ: Նրանք այդտեղից թռչում էին ուրիշ մոլորակներ: Բայց ատոմային պատերազմ եղավ, և ամբողջը կործանվեց: Մնացին քիչ զարգացած ցեղեր, ավելի ճիշտ՝ հատուկենտ մարդիկ, որոնք չէին կարող ժառանգել քաղաքակրթության նվաճումների ահռելի բազմազանությունը և սերունդներին փոխանցեցին միայն սոդոմ-գոմորի առասպելը: Սերունդ-սերունդ զարգացան, և ահա նորից պատրաստ են հրթիռակայանն ու ատոմային ռումբերը: Նորից կործանում կլինի, ով գիտե, թե ո՞րերորդ անգամ: Այնպես նման է սա Սիզիֆի լեգենդին, Արթուր: Հիշո՞ւմ ես, խեղճ Սիզիֆը հսկա քարը բարձրացնում էր մինչև լեռան կատարը և երբ հասնում էր կատարին՝ քարը նորից գլորվում էր ներքև: Իր կեղտերի պատճառով մարդն աստվածների կողմից դատապարտված է կատարելության կատարը չհասնելու անեծքին: Միշտ այսպես պիտի կործանի իր ստեղծածը: Էլ ինչո՞ւ ես դժգոհում, որ ես ցանկանում եմ այնպես կործանել, որ մեկընդմիշտ վերանա այս անպտուղ տանջանքը դեպի լեռան կատարը տանող ճանապարհին: Քեզ հաճելի՞ է ատոմային պատերազմը, որն առաջին հերթին պայթելու է զարգացած երկրների վրա, Աֆրիկայում կամ մի այլ տեղ թողնելու է միայն հատուկենտ թերուսների, որոնց աչքերը չռվելու են նոր սոդոմ-գոմորի սարսափից:

- Եթե քո տեսությունը ճիշտ է, Քանափ, ապա՝ անցյալի վերաբերյալ: Ի՞նչ գիտես, այս անգամ նա չի՞ կարողանա

հաղթահարել իրեն: Ինքդ էիր ասում, որ ապագան ոչ ոք չի կարող ճշգրիտ գուշակել:

- Կեղտաջրից լույս չի ստացվի, Արթուր:

- Կստացվի: Հիշիր հենց քո ասած Գյոթեին ու Շեքսպիրին. կեղտաջրից լույս էին ստանում: Դու ինքդ էլ քո մեջ միշտ այս մտքերը չե՞ս ունեցել… Հիշիր, ինչքան վճիտ էր հոգիդ մանկության օրերին…

- Պղտորեցին, ամեն ինչ պղտորեցին, Արթուր:

Եվ Քանափը հեկեկաց: Նրա ուսերը ցնցվում էին: Ես խղճացի նրան: Արցունքի միջից նա ասաց.

- Ես գիտեմ, որ դու հավատում ես քո՛ ճշմարտությանը, որը նույնքան ճշմարիտ է, որքան իմը: Ես լալիս եմ, որ չեմ կարող քեզ նման մտածել:

Արցունքները թափվում էին Քանափի աչքերից: Ինձ թվում էր՝ կրակներ են դրանք, որ դուրս էին գալիս այրելով: Տարիների մաղձն էր կաթիլ-կաթիլ հոսում նրա սրտից: Դա այն մեծ լացն էր, որից ծնվում են մեծ ստեղծագործությունները: Տվյալ դեպքում մեծ ստեղծագործությունը նրա հոգին էր, որ արցունքներով լվացված՝ ծնվում էր վերստին: Ինձ այդպես էր թվում: Ու ես ամաչեցի, որ շղթայել եմ նրան: Արձակեցի կապերը: Քանափի աչքերում չարախինդ մի կրակ վառվեց:

- Ես արժանի չեմ ապրելու: Ոչ ոք արժանի չէ,- ասաց նա:

Մինչ ես կհասկանայի, որ իր աղետավոր հոգու արատների նորովի գիտակցումը նրա մեջ արթնացնում է չարության խենթացնող ալիք, նա նետվեց նկուղ: Ես չէի կարող հասնել նրան: Արդեն իր դժոխային սարքերի մոտ էր: Մի ակնթարթ էլ և ուշ կլիներ: Առաջին պատահած բանը, որ կես մետրանոց երկաթաձող էր, շպրտեցի նրա գլխին: Ես չէի ուզում սպանել: Շպրտելու պահին ուղեղիս մեջ այն միտքն

առկայծեց, որ նա կուշաթափվի և ես ուշքի բերելուց հետո նորից կկապեմ նրան: Հարվածը դիպուկ էր, և նա ընկավ իր սարքերի վրա: Շլացուցիչ մի բոց բռնկվեց և մի սուր ֆշշոց ծակեց ականջս:

- Լավ արեցիր, Արթուր: Ես արժանի եմ,- Քանափի ձայնը գրեթե խառնվեց ֆշշոցին: -Ապրեցեք…

Դա նրա վերջին խոսքն էր, որն ասես ձայնագրվեց իմ ուղեղում: Ես չհասկացա նրա ասածը, սարսափից դողում էի: Հիմա, այ մի վայրկյան էլ, և ես կմեռնեմ: Առաջինը ես կմեռնեմ, համընդհանուր կործանման առաջին զոհս: Այստեղից է սկսվում գերարագ պտտվող ատոմների մահարշավը: Ինչքա՞ն է անցել: Գուցե մեկ րոպե: Սպասիր հաշվեմ: Անցավ հինգ րոպե: Արդեն յոթերորդ րոպեն է: Լրացավ տասնհինգը: Շուտով կես ժամ կլինի: Ես դեռ ապրում եմ: Սարքերից ընդամենը երկու մետր եմ հեռու: Կես ժամում ատոմների հողմապտույտը երկու մետր էլ չի անցել: Իսկ Քանափն ասում էր երեք ժամում ամբողջ հողագունդը մի հրե գունդ կդառնա… Ուրեմն նրան չի հաջողվել սեղմել կոճակը…

Ականջս սեղմում եմ Քանափի սրտին: Իսկապե՞ս նա մեռել է: Հայելի եմ պահում բերանի մոտ: Կենդանության ոչ մի նշան: Ու նրա դիակի մոտ նստած վերջապես հայտնաբերում եմ, թե նա պատմական անձերից ում է նման: Իվան Ահեղին, որ խելագարության պահին ի վիճակի է սպանելու որդուն և հետո ողբալու նրա դիակի վրա:

Մահապարտը լռեց: Նկատելով, որ ես չեմ հավատում աշխարհին սպառնացած աղետի ճշմարտացիությանը, գլուխը դառնացած շարժեց:

- Դուք բոլորդ էլ այն դատավորի նման եք:

- Ես ձեր պատմածի մեջ ոչ մի կեղծ նոտա չեմ տեսնում: - Տխուր ու լուրջ ասացի ես: - Եվ բոլորը կպատմեմ աշխարհին:

Մտքիս մեջ ավելացրեցի՝ «բայց աշխարհը չի հավատա այսպիսի լեգենդների»:

Մահապարտը նկատեց, որ ես պատրաստվում եմ հրաժեշտ տալ:

- Մնաս բարով,- շշնջաց նա:

Ե՛ս պիտի ասեի «մնաս բարով», իսկ հիմա չեմ ուզում ասել «գնաս բարով»: Նա ո՞ւր ունի գնալու, որ բարով գնա: Դեմը գերեզմանն է: Աչքերը լցված են սարսափով, որ թախիծ է միաժամանակ: Երկու անհուններ են, որ ինձ են նայում: Ես վերջին մարդն եմ, որ նրա հետ խոսեցի մարդավարի: Իմ հեռանալը նման էր նրանից կյանքի հեռանալուն: Այդ էին ասում նրա աչքերը, որ ասես քամվում էին իմ աչքերի մեջ, ուզում մնալ, ապրել…

Հետգրություն

Նույն օրը հանդիպեցի ընկերոջս, որ աշխատում էր ֆիզիկայի ինստիտուտում: Բոլորը պատմեցի նրան: Մենք միասին իջանք այն նկուղը, ուր ըստ Արթուրի, որ ընդամենը գավառական դպրոցի պատմության ուսուցիչ էր, մի միամիտ, դյուրահավատ մարդ, պետք է լինեին «դժոխային սարքերը»:

Փոշոտ հատակին երկաթի մի քանի կտորներ էին ընկած, ապակե սրվակներ, որ մի քանի տեղից ջարդված էին, ռետինե խողովակներ, որ միանում էին երկաթե կտորներին և սրվակներին…

- Պայթյուն է եղել և Քանափի սարքերը հօդս են ցնդել, - ասացի ես:

Նկուղը լցվեց ընկերոջս ծիծաղով: Ես սահմռկեցի. դա ծիծաղ էր գերեզմանոցում:

- Պայթյուն եղել է,- ծիծաղի միջից ասաց նա,- բայց նախ Քանափի հիվանդ ուղեղի մեջ: Ինչո՞վ էր նա համոզված, որ հայտնաբերել է գերարագ պտտվող ատոմների գաղտնիքը: Պիտի փորձով համոզվեր, չէ՞: Եթե փորձել է, հապա ինչպե՞ս է կասեցրել գերարագ պտույտը, չէ՞ որ դեռ գաղտնիքը չէր գտել:

Մինչ ընկերս դատողություններ էր անում, ես հիշում էի մահապարտի աչքերը: Այդ աչքերը հիշեցի և օրեր հետո, երբ թերթերում կարդացի, որ դատավճիռն ի կատար է ածված:

ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐ

Փետրվարյան խաղաղ, բայց դեռևս ցուրտ երեկոներից մեկն էր: Աստղիկենց դռան առջև երկու ժամից ավելի կանգնած էր մի «պոբեդա», իսկ ինչքան էր դեռ կանգնելու, այդ միայն նրա տերը՝ Գրիգորը գիտեր, որ այժմ նստած էր Աստղիկի սենյակում: Նրանք մենակ չէին, այնտեղ էր Աստղիկի հարևանը, սև և խոշոր աչքերով մի երիտասարդ, որն ընդամենը մեկ ամիս էր, ինչ հարևան էր դարձել Աստղիկին՝ վարձելով նրա երկու սենյակներից մեկը: Գրիգորը խոսում էր արագ-արագ, կարծես վախենալով, որ քնելու ժամը վրա կհասներ և ինքը տուն կդառնար դեռ այնքան բաներ չասած:

Բայց ինչ պիտի ասեր երրորդի ներկայությամբ: Ա՛խ, այս Հովհաննեսն ինչ անհասկացողն է, չի թողնում-հեռանում գոնե կես ժամով: Իսկ Աստղի՞կը: Մի՞թե Գրիգորը կկարողանար ամեն ինչ ասել, երբ նա ոչ մի հեռանկար չէր բացում դրա համար: Անշուշտ հետագայում պիտի զղջար, պիտի հետ կանչեր Գրիգորին՝ կոշիկի արտելի դիրեկտորին, բայց ուշ կլիներ: Ոչ, Գրիգորը չէր վերադառնա, ի՞նչ է, նրա համար կի՞ն չկար: Բավական էր ինքը ցանկանար և մեկի տեղ երկուսը, երեքը, գուցե և տասը, բոլորն էլ նորաբողբոջ աղջիկներ,

կուզենային իր հետ օպերա գնալ, շրջել ամբողջ գիշերը մինչև լուսաբաց, թեկուզ բուք ու բորան էլ բարձրացած լիներ: Բայց Գրիգորն Աստղիկին է ուզում, նրա աչքերում ինչ-որ մելամաղձոտ քնքշություն կա, այդ աչքերը զույգ լճակներ են գիշերվա պահին, նրանց մեջ ցոլցլում են երազանքն ու խոհունությունը: Այսպիսին չէր Աստղիկն ամուսնու մահից առաջ: Այս երկու տարվա ընթացքում ինչքան փոխվեց նա, դարձավ ինչքան գրավիչ ու քնքույշ: Բայց եթե իրերն այլ կերպ են դասավորվում, ինքը կարող է մոռանալ նույնիսկ նրա գեղեցիկ աչքերը: Ոչ, ինքը թույլ չի տա, որ մի հասարակ ուսուցչուհի ստորացնի իրեն՝ շատ շատերի կողմից սիրված մարդուն:

Ու Գրիգորն իր մտքի մեջ հառաչեց. այդ նշանակում էր, որ սերը նրա սրտում խոր արմատներ էր ձգել և այլևս անհնար էր արմատահան անել այն:

Տխուր հնչեց նրա «գիշեր բարին»: Ահա դանդաղ ընթանում էր «պոբեդան», և Գրիգորը մերթ ընդ մերթ սուզվելով մտքերի մեջ՝ քիչ էր մնում մեքենան հաներ մայթի վրա: Նրա ականջներում անողոք խստությամբ հնչում էին Աստղիկի խոսքերը. «Ինձ համար աշխարհում ամենաթանկն ամուսնուս հիշատակն է», «Սենյակներիցս մեկը վարձով տվեցի, որ կարողանամ նրա փոքրիկ եղբորն ու քրոջն ավելի շատ օգնել: Հիմա նրանք ինձնից բացի ուրիշ հարազատներ չունեն»: Օ՜, Աստղիկն ինչքան ջերմ է սիրել իր ամուսնուն և դեռ հավատարիմ է նրան: Այս միտքն ամբողջ գիշեր հալածեց Գրիգորին:

…Մի քանի օր հետո Աստղիկն ամուսնու եղբորից և քրոջից ստացավ մի շնորհակալական նամակ: «Մենք շատ գոհ ենք,- գրում էին նրանք,- որ դու, մեր սիրելի հարսիկ, չես մոռանում մեզ: Ահա ստացանք քո ուղարկած հարյուր հիսուն

ռուբլին և նորից էնքան ուրախացանք, որ կարծես աշխարհը մեզ տվեցին: Բայց, Աստղիկ ջան, էդքան էլ մի զրկիր քեզ, մենք ոնց էլ լինի յոլա կգնանք»:

Կարդալով այս նամակն Աստղիկը մի պահ զարմացավ, հետո զարթնեց կասկածը: Ինքը երկու շաբաթ առաջ էր չորս հարյուր ռուբլի ուղարկել, դրանից հետո աշխատավարձ չեն ստացել, ուրեմն չի կարող պատահել, որ ուղարկած լինի և մոռացած: Իսկ ո՞վ է ուղարկել: Եվ նա հիշեց մի քանի օր առաջ իր սենյակում տեղի ունեցած խոսակցությունը, հիշեց Գրիգորին: Այո՛, այո՛, նա՛ ուղարկած կլինի, ուրիշ էլ ո՞վ: Չէ՞ որ Գրիգորը հարուստ է, և ինչպես այս փաստը ցույց տվեց, նաև բարի: Ոչ, ավելին: Ո՞ւմ է ուղարկել նա այս գումարը: Աստղիկի ամուսնու եղբորն ու քրոջը: Ուրեմն նա այնքան է սիրում Աստղիկին, որ պատրաստ է նրա համար ամեն ինչ անել, նույնիսկ սիրել նրանց, ում շատերը չէին սիրի. սիրել միայն այն բանի համար, որ Աստղիկն է սիրում: Ինչպիսի՜ հեզություն: Այսպիսին կարող էին միայն մանուշակները լինել, եթե հանկարծ մարդ դառնային: Բացի դրանից, Գրիգորն Աստղիկի՝ իր ամուսնու նկատմամբ ունեցած անհուն սիրո և նվիրվածության մեջ տեսնում է կնոջ հավատարմությունը: Շատ հավանական է, որ նա մտածելիս լինի, որ եթե իրենք ամուսնանան, ապա նախ և առաջ հավատարիմ կլինեն իրար:

Եվ Աստղիկն այսպես երկա՛ր-երկար մտածում էր Գրիգորի մասին՝ չնկատելով, թե ինչպես իր մտքերը հետզհետե ավելի ջերմ էին դառնում: «Տեսնես մեկ էլ ե՞րբ կգա նա»,- հարցրեց Աստղիկն ինքն իրեն և նամակը դնելով սփռոցի տակ՝ վեր կացավ: Ժամը յոթն անց կես էր, իսկ իրենք ութին ժողով ունեն:

Անցան օրեր, շաբաթներ: Գրիգորը չկարողացավ հաստատ մնալ իր որոշման մեջ. Աստղիկի նկատմամբ

ունեցած սերը շատ ավելի զորավոր դուրս եկավ, քան նրա կամքը: Եվ ահա նա նորից Աստղիկի սենյակում է, և ի տխրություն նրա, նորից երեքով են: Դրսում խայտում է նորեկ գարունը, ծառերը նոր են բողբոջել, բայց թվում է, թե արդեն սոսափում են: Գարունն այնքան տիրաբար է ժպտում, որ երևակայությանը քիչ բան է մնում անելու լիակատար ծաղկումը պատկերացնելու համար:

- Ես ամենից շատ սիրում եմ նորեկ գարունը,- ասաց Աստղիկը՝ լուսամուտը բացելով: Այս գարնան հետ կարելի է ապրել հարյուր հիսուն տարի և ոչ մի անգամ չձանձրանալ:

Աստղիկը դիտմամբ շեշտեց հարյուր հիսունը:

- Ես հինգ հարյուր տարի կապրեի, և չէի ձանձրանա,- արագ-արագ վրա տվեց Գրիգորն ուրախացած, որ ահա Հովհաննեսը դուրս է գալիս, և իրենք մնում են մենակ: Հիմա սարերն ու ձորերը զուգվում են նորահարսի նման, բնությունը հարսանիք է անում, ջրերը կարկաչում են սիրո հավերժական երգի նման: Պայծառանում են արևն ու լուսինը, կարծես նորապսակներ լինեն:

«Նա շրջանցեց հարյուր հիսունը, խոսում է բնության մասին, որ չմատնի իրեն: Ինչքան բարի և համեստ է: Նա այնքան համեստ է, որ թաքցնում է իր գեղեցիկ արարքները»,- մտածեց Աստղիկը Գրիգորի մասին և փակեց Հովհաննեսի գնալուց հետո կիսաբաց մնացած դուռը՝ չգիտես միջանցիկ թեթև քամին կանխելո՞ւ համար, թե՞ այնպես անելու, որ ուրիշները չլսեն իրենց: Սակայն մի քանի րոպեից հետո դուռը կամաց ճռռաց և մի մատի չափ բացվեց: Գուցե քամին էր բացողը:

Նրանք երկար խոսում էին գարնան և երիտասարդության մասին: Գրիգորն ամբողջովին հիացմունք էր դարձել: Նրա էության մեջ Աստղիկն ու

գարունը խառնվել էին իրար: Բայց չնայած դրան՝ նա առիթներ էր գտնում խոսելու իր հարստությունից, իր երբեմնի կնոջից, որն իրեն վատ էր պահել և այդ պատճառով բաժանվել էին:

- Ի՜նչ է հարստությունը,- ասաց Աստղիկը նրան, թող իմ ամբողջ հարստությունը բաղկացած լիներ մի փունջ հեզ ու խաղաղ մանուշակներից:

Գրիգորը չհասկացավ, թե ինչ էր ուզում ասել Աստղիկը: Բայց ինչ էլ որ ասելու լիներ՝ մի բան պարզ էր Գրիգորի համար. Աստղիկը սկսում էր սիրել իրեն: Հաջորդ խոսակցության ժամանակ կարելի էր բացատրվել նրա հետ, նույնիսկ պայմանավորվել ամուսնանալու օրվա մասին: Եվ Գրիգորը կրծքի տակ մի քաղցր հուզմունք՝ դուրս եկավ Աստղիկի սենյակից: Միջանցքում նա հանդիպեց Հովհաննեսին: Լսե՞լ էր սա իրենց խոսակցությունը, այդ չհետաքրքրեց նրան, արդյոք նրա վատ հագուստի պատճառո՞վ էր, թե՞ այն, որ ինքը համակված էր կատարյալ գեղեցկության զգացումով: «Խեղճ տղա,- մտածեց Գրիգորը,- մի կարգին հագուստ էլ չունի, իր ամբողջ կյանքը սովորելով է անցկացնում, երեկ՝ աշակերտ, այսօր՝ ուսանող, վաղը՝ ասպիրանտ, մեկ էլ տեսար կյանքն անցել է: Այ, ինձ պես ապրեր փարթամության մեջ, իր համար կյանքի ընկեր ընտրեր կանանցից ամենագեղեցիկին, այն ժամանակ կզգար, որ ուրիշ երջանկություն էլ կա»: Ու սկսեց մտածել գալիք օրերի մասին:

Մտածելով կամացուկ բացեց «պոբեդայի» դռնակը և նստեց ղեկի առաջ: Նա այնքան էր հափշտակված իր երազներով, որ նրան թվաց, թե ահա իր կողքին է Աստղիկը և միասին թռչում են առաջ: Բոլոր անցորդները նայում են իրենց

և նախանձում՝ զգալով իրենց ցածր լինելը թե՛ Գրիգորից, թե՛ մանավանդ Աստղիկից:

Այդ հանդիպումից մի օր հետո Աստղիկը նստած էր իր տան դիմաց գտնվող այգում, նոր կանաչած խնձորենու տակ և տարվել էր հազար ու մի խոհերով: Բայց ինչ էլ որ մտածում էր, նրա բոլոր մտքերը կանգ էին առնում Գրիգորի վրա: Հանկարծ իր սենյակից մի թխկոց լսվեց: Նա վեր թռավ իսկույն և ահա մի քանի ակնթարթ հետո կանգնած էր իր սենյակի բաց դռան առջև: Ոչինչ, առանձնապես բան չի պատահել, Հովհաննեսը մանուշակների մի փունջ տեղավորում էր ջրով լի բաժակի մեջ և հուզված էր: Հավանական է, անզգույշ էր եղել և բաժակն ընկել էր ձեռքից, սակայն չէր ջարդվել: Բայց ինչո՞ւ է հուզված, ձեռքերը դողում են հուզմունքից: Հանկարծ Աստղիկի դեմքը պայծառացավ անակնկալ մտքից: Պայծառացա՞վ, թե՞ շիկնեց. երկուսն էլ կարելի էր ասել: Ինչքա՜ն ուշ հասկացավ Աստղիկը: Այն, որ դուռը կամաց ճռռաց և մի մատի չափ բացվեց, քամին չէր բացողը, այն, որ հարյուր հիսունը լսելիս Հովհաննեսը դուրս գնաց, պատահական չէր: Ինչպե՜ս էլ չէր մտածում ինքը, որ միայն ուսանողը կարող էր հարյուր հիսուն ուղարկել, իսկ հարուստն իրեն ցույց տալու համար՝ մի քանի հարյուր, գուցե և հազար, երկու հազար կուղարկեր: Ինչ տարօրինակ էր այդ Գրիգորը, առիթ էր ստեղծում շեշտելու, որ ինքը հարուստ է: Իսկ Աստղիկին առաջին հերթին մանուշակներ էին պետք:

Եվ ահա բուրում էին այդ մանուշակները:

ՄԵՆՔ ՄԻ ՔԻՉ ԴՈՆ-ԿԻԽՈՏ ԵՆՔ

Մարդը, որ դուրս եկավ ծննդատան ընդունարանից, գրպանում երեք ռուբլի ուներ: Քիչ առաջ քսաներեք ռուբլի

ուներ՝ երկու տասանոց և մեկ երեքանոց: Տասանոցները տվեց երկու մանկաբարձուհիներին, որոնք իրար առաջ կտրելով շտապում էին հաղորդել նրան, որ տղա է ունեցել: Գրեթե միաժամանակ հայտնվեց երրորդ մանկաբարձուհին, բայց մարդը նրան ոչինչ չտվեց, որովհետև մտածեց, որ նա կվիրավորվի. ինչո՞ւ իր ընկերուհիները տասական ռուբլի ստացան որպես աչքալուսանք, ինքը՝ երեք: Պետք է մի քանի տասանոցներ վերցրած լիներ, չէ՞ որ այսօր աշխատավարձ էր ստացել: Ոչինչ, խնայդրամարկղում բավականին փող ունի, թող աշխատավարձն էլ նվեր լիներ այսպիսի ուրախ լուր բերողներին: Ա՛խ, շատ շտապեց: Մեղավորը կինն էր: Մինչև չզգաց, որ այլևս չի կարելի ուշացնել, ծննդատան անուն չտվեց: Առաջին երեխայի ժամանակ էլ այդպես վարվեց: «Չեմ ուզում, Գեղամ, թեկուզ մի ժամ ավելի նայել ծննդատան առաստաղին»: Առաջնեկը տղա էր: Մեռավ: Եվ ահա նորից տղա ծնվեց: Անունը կանխորոշված է՝ Մանվել: Այսպիսի ուրախության մեջ մի՞թե կարելի էր տխրեցնել այն երրորդ մանկաբարձուհուն:

Մարդը, որի անունն արդեն գիտենք՝ Գեղամ, ծննդատան ընդունարանից դուրս գալուց հետո կնոջ շորերը խնամքով փաթաթեց թերթի մեջ և քնքշորեն դրեց իր կողքին: Մտքովն էլ չանցավ ավտոմեքենայի բեռնախցիկն օգտագործել, որովհետև դրանք իր սիրելի կնոջ զգեստներն էին, իրեն մի նոր Մանվել պարգևած կնոջ զգեստները: Վերարկու չկար փաթեթում, վաղ գարունը բոլորի հագից արդեն հանել էր վերարկուները: Թերթի մի համարը բավական եղավ փաթաթելու համար: Գեղամն ավտոմեքենայում միշտ մի քանի թերթ է պահում, որոնք միշտ էլ առիթ է լինում օգտագործելու: Պետք է փող էլ պահած լիներ, գոնե երեք տասանոց: Այն երրորդ մանկաբարձուհին մտքից

դուրս չի գալիս: Ու հանկարծ այդ երրորդ մանկաբարձուհին նրան հուշեց…

Ավելի ճիշտ կլինի ասել՝ գրեց մի անմոռաց էջ նրա կյանքում: Մի քիչ լրագրային է հնչում: Ոչինչ, կարևորն այդ չէ, այլ այն, որ այդ էջը նրանցից է, որոնցից շատ չես գտնի նույնիսկ հաջողված գրքերում: Տվյալ դեպքում՝ կյանքում: Գեղամը որոշեց այս գիշեր չքնել փափուկ անկողնում, մինչև լույս իր ավտոմեքենան քշել Երևանի փողոցներով և ձրի ծառայեցնել քաղաքային տրանսպորտից ուշացածներին: Այնքան դուր եկավ նրան այդ գաղափարը, որ չսպասեց քաղաքային տրանսպորտի երթևեկության դադարեցմանը: Տուն հասավ, կնոջ շորերը կախեց զգեստապահարանում, արագ-արագ մի բան կերավ և նորից նստեց ղեկի մոտ: Հիմա երեկոյան ժամն ինն է, հիմա էլ իր կարիքը զգացողներ կլինեն: Հիշեց անցյալ տարի Մարտունիում պատահած մի դեպք: Ինքը և ընկերը, որ նույնպես սեփական մեքենա ունի, իրենց ընտանիքներով գնացել էին Մարտունի, Սևանի ափին քեֆ անելու: Անձրևը սկսել էր կաթկթալ: Իրենց ի՞նչ, թեկուզ կարկուտ գա, մեքենաների մեջ են: Բայց այ, այն տղամարդու և կնոջ, նրանց երկու փոքրիկ աղջիկների համար դժվար է, վրանն արդեն հավաքել են, սպասում են տաքսուն, որ նրանց խոստացել էր գալ և չի գալիս, խաբել է: Իսկ նրանք պիտի Երևան մեկնեն, ուշանում են վերջին ավտոբուսից: Ի՞նչ անել: Գեղամն աչքով արեց ընկերոջը, որն իսկույն հասկացավ նրան: Երկու ընտանիքին արդեն տեղացող անձրևի տակ տեղավորեցին ընկերոջ ավտոմեքենայի մեջ: Յուրայիններն իսկույն հասկացան իրենց նպատակը. «Մեզ թողնում եք անձրևի տակ, ուրիշին լավությո՞ւն եք անում»: «Գնում ենք փայտ բերելու, խորոված ինչո՞վ պիտի անենք»: Երբ տեղ էին հասել, վրանով տղամարդը հանեց երեք ռուբլի: Դարձյալ երեք

ռուբլի: Իսկապես անհարմար կլիներ, եթե այն երրորդ մանկաբարձուհուն այդքան քիչ տար: Վրանով տղամարդը երևի մտածում էր, որ երկու ռուբլին ետ կստանա, ո՞ր վարորդն է երեք կիլոմետրի համար երեք ռուբլի վերցնում: Բայց թեկուզ այդպես լիներ, էլի շնորհակալ էր բախտից, որ կարողացան հասնել վերջին ավտոբուսին: Ինչքան մեծ եղավ նրա զարմանքը, ապա նաև հիացմունքը, երբ լսեց. «Մենք օգնել ենք ձեզ: Ոչ մի կոպեկ»: Ուրեմն այս մարդիկ նեղեցին յուրայիններին, որ մեզ օգնեն: Տղամարդու և կնոջ աչքերում խանդաղատանք կար: Ուրեմն այսպիսի մարդիկ էլ կան աշխարհում: Դառն հիասթափության պահերին նրանք կհիշեն այդ երկու անծանոթ մարդկանց, որոնք երկու հենակետերի պես չեն թողնի, որ նրանք ընկնեն հոռետեսության անդունդը: Ինչ հրաշալի գաղափար է, ողջ գիշեր կսլանա Երևանի փողոցներով, մարդկանց ոչ միայն տուն կտանի, այլև կպարգևի տաք խոհեր մարդու մասին:

Առաջին ուղևորը հիսունին մոտ մի գեր մարդ էր: Ֆսֆսալով բացեց ավտոմեքենայի դուռը և ֆսֆսալով էլ նստեց Գեղամի կողքին: Ե՞րբ պիտի լինի, որ իր կողքին նստի իր Մանվելիկը, ասի. «Պապա, քշիր դեպի գազանանոց»: Մարդու ֆսֆսոցը դեռ չի կտրվել: Գուցե ընդհանրապես դժվար է շնչում, շնչարգելություն ունի: Եթե ամեն առավոտ մարզանք անի, չորս-հինգ կիլոմետր քայլի, այսպես չի ֆսֆսա: Ախր ծեր էլ չէ, հազիվ հիսուն տարեկան: Գեղամն ուզում էր այդ մասին ասել ուղևորին, բայց սա այնպիսի թթված դեմք ուներ, որ ասես հենց նոր զավակները նախատել էին, որ ոչ մի գործ չի անում, ուտում է և պառկում: Էհ, ի՞նչ արած, իր գործն է, թող չուզենա զրուցել, թող դեմքն ավելի թթվեցնի, շատ-շատ մի կես ժամ է լինելու սրա հետ: Երևի լավ նախատիպ է բացասական կերպարի համար: Իհարկե, եթե գրողն անփորձ է: Անփորձ

գրողն իր բացասական կերպարին այսպես ֆսֆսացնում է, կռվեցնում որդիների ու թոռների հետ: Լավ է, որ Գեղամը գրող չէ: Միայն լավ ընթերցող է, այնքան լավ, որ չի բավարարվում գրքերով, ուզում է ընթերցել նաև իրեն հանդիպած մարդկանց մտքերը: Իսկական ընթերցողն այդպիսին պիտի լինի, որպեսզի կարողանա իմանալ, թե հեղինակը որտեղ է ճիշտ ասում, որտեղ՝ հորինում: Այո, իսկական ընթերցողը կուրորեն չի գնում հեղինակի ետևից:

Գեղամի գլխում չէին զարթնի այդ մտքերը, եթե ուղևորը զրուցասեր լիներ: Բայց նա անընդհատ դուրս է նայում ավտոմեքենայի պատուհանից, միայն մի անգամ է շեղ նայել Գեղամի կողմը և իսկույն հայացքը փախցրել: Այդպես լինում է, երբ ստիպված նստում ես մեկի կողքին, որի հետ խոռով ես: Էհ, թող ետևը նստեր, ո՞վ խնդրեց իրեն, որ հենց վարորդի կողքին նստեր: Գեղամը ոչինչ չի հասկանում: Պետք էլ չէ հասկանալ, միայն թե լավ կլիներ, որ այս մարդը ֆսֆսալու փոխարեն մի բան ասեր, այդ ժամանակ կբացվեր Գեղամը, իր մեծ երջանկությունից կխոսեր: Ոչինչ, քիչ մնաց, հազիվ մի կիլոմետր:

Երկու երիտասարդ ձեռք բարձրացրին, և Գեղամն արգելակեց մեքենան: Նրանց համար տեղ կա, թող նստեն: Բայց ֆսֆսանն, այսպես էր իր մտքում նրան անվանում Գեղամը, առարկեց.

- Ես եմ վարձել մեքենան, հարկավոր է հարցնել իմ կամքը:

Գեղամը կարող էր ասել, որ մեքենան վարձված չէ, ինքը հենց այնպես, ձրի տեղափոխում է ֆսֆսանին, չէ՞ որ այսօր տղա է ունեցել, որոշել է ամբողջ գիշեր առանց վարձի ծառայել մարդկանց, բայց մտածեց, որ նախ՝ չարժի այս մարդու հետ խոսել իր նվիրական զգացմունքներից և հետո՝ հնարավոր է,

որ անախորժություն լինի, առաջին ուղևորը փչացնի իր լավ տրամադրությունը:

- Տղերք ջան, խնդրում եմ չնեղանաք: Եթե ուզում եք՝ սպասեք, ես այս ընկերոջը տեղ կհասցնեմ և իսկույն կվերադառնամ:

- Չէ, մենք չենք նստի այս մեքենան, որտեղ նստած է եղել այդ ճարպագունդը:

- Դե, դուք գիտեք:

Մեքենան նորից սլացավ առաջ: Ֆսֆսանի լեզուն բացվել էր, մեկ հայհոյում էր երկու երիտասարդներին, որ մարդավարի խոսել չգիտեն, աջ ու ձախ վիրավորում են արժանավորներին, մեկ տրտնջում էր, որ վարորդներն ագահ մարդիկ են, թողնես սովորական «Մոսկվիչի» մեջ տասը մարդ կլցնեն, նրանց համար մարդն ու տառեխը մեկ են: Նա շեշտում էր «Մոսկվիչ» բառը, որովհետև Գեղամի ավտոմեքենան «Մոսկվիչ» էր: Գեղամը դեռ կարողանում էր ժպտալ և այդ ժպիտն ավելի էր բարկացնում ֆսֆսանին: Քիչ էր մնում, որ սա բարձրաձայն ասեր. «Ձեր երեսին թքեն էլ, դուք էլի կժպտաք, հանուն մի ռուբլու»: Չէր ասում այդպես, համարյա չէր ասում: Բայց Գեղամը հասկանում էր, որ նա այդ էր ասում և դիմանում էր, որովհետև ընդամենը հարյուր մետր էր մնացել նրանից ազատվելու:

- Հասա՞նք,- հարցրեց Գեղամը:

- Հասանք: Վերցրեք Ձեր ռուբլին: Վաթսուն կոպեկի ճանապարհ էլ չենք եկել:

- Երևի մանրը ետ եք ուզում: -Գեղամը դեռ ժպտում էր: - Ես Ձեզ վերադարձնում եմ Ձեր ամբողջ ռուբլին: Բարի գիշեր:

- Վերցրեք, վերցրեք: Ես ողորմություն չեմ վերցնում, ես ողորմություն տալիս եմ: - Եվ ֆսֆսանը ռուբլիանոցը խոթեց Գեղամի գրպանը:

- Ձեր ռուբլին, այ, նետում եմ այստեղ: Կուզեք դուք վերցրեք, կուզեք թողեք՝ ուրիշները վերցնեն:

Ֆսֆսանը տեսավ, թե ինչպես ռուբլիանոցը պտտվեց էլեկտրական աղոտ լույսի մեջ, հետո արագ թափով մեքենան պոկվեց տեղից, երևի վարորդը շատ էր հուզվել, որ արդարություն սիրող մարդիկ կան և վաթսուն կոպեկի փոխարեն հեշտությամբ մեկ ռուբլի չեն տալիս: Ավելի վատ հենց իր՝ վարորդի համար, իսկ ինքը կատարեց իր պարտքը, թեկուզ մանր պետք էր, բայց սկզբունքային եղավ: Եթե բոլորն իր պես լինեն, ապա տաքսին կրկնակի չի վերցնի, գործակատարը չի թերակշռի, վարսավիրն աղջկա պես խունջիկ-մունջիկ չի գա, որ ավելի փող տաս: Չէ, ինքը ժլատ չէ, փողի համար չէ իր կռիվը, այլ մարդկային արժանապատվության: Այ, տեսեք, իր սեփական ռուբլիանոցը չի վերցնում: Չէ, հիմա իր սեփական ռուբլիանոցը չէ, վաթսուն կոպեկը նրանն է:

Եվ նա ֆսֆսալով բացեց իր տան դուռը՝ մայթի վրա թողնելով այժմ արդեն ոչ մեկին չպատկանող ռուբլիանոցը: Բայց դեռ տուն չմտած շրջվեց, աջ ու ձախ նայեց, ֆսֆսալով մոտեցավ, վերցրեց ռուբլիանոցը, դրեց գրպանն ու ժպտալով մտավ տուն:

Իսկ Գեղամն այդ պահին մտածում էր, որ լավ չսկսվեց նվիրական գիշերը: Բացասական տիպի հանդիպեց, վիպասանները կարող են իրենց բացասական հերոսներին մեկ-մեկ էլ ֆսֆսալ տալ, չէ՞ որ կյանքում այդպիսիք էլ կան: Եթե ասեր նրան, թե ինչու փող չի վերցնում, դժվար թե այդ մարդու մեջ ջերմ խոհեր արթնացներ մարդու մասին: Ուրիշ էր Սևանի ափի վրանով մարդը, չէր կորցրել շնորհակալ լինելու հատկությունը: Բարի սերմը դեռ քիչ է, պետք է լինի նաև բարի հող: Հաջորդը ո՞վ պիտի նստի իր մեքենան:

Անպայման կիմանա՝ բարի՞ մարդ է, թե՞ չար: Իր Մանվելիկի ծննդյան առթիվ է այս ամենը, աստված իմ, այնպես արա, որ բարի մարդիկ պատահեն իրեն: Չէ, սնոտիապաշտ չէ, պարզապես լավ է, երբ մի բան լավ է սկսվում:

Մեքենան իջնում էր Բարեկամության փողոցն ի վար: Փողոցի աջ կողմում անգլիական թեքումով հայկական միջնակարգ դպրոցն է: Մանվելիկն այստեղ կսովորի: Դպրոցն իրենց տան մոտ է: Մոտ էլ չլիներ, Մանվելիկն այստեղ, դարձյալ այստեղ կսովորեր, ինքը շատ է ուզում, որ որդին անգլերեն իմանա: Ռուսերենն իրեն-իրեն կսովորի: Մարդ պետք է գոնե երեք լեզու իմանա: Իր մայրենին և երկու օտար լեզու: Իր մայրենին՝ գերազանց, այն երկուսը՝ առնվազն՝ լավ: Ինքն անգլերեն չգիտի և չի կարող բնագրով կարդալ Ջեկ Լոնդոնին: Երբ որդին լինի տասներեք-տասչորս տարեկան, Ջեկ Լոնդոնի հատորները կտա կարդալու, թող նրա հերոսների պես իր որդին էլ ուժեղ լինի: Ինքն այնքան էլ աչքի չի ընկնում կամքի ուժով, քիչ էր մնում այն ֆսֆսանին իջեցներ մեքենայից: Սկզբում իր կողմն էլ չէր նայում, թթվել էր, որ քառասուն կոպեկ ավել է վճարելու: Ճարպագունդ… Ճարպագունդ…

Մարդիկ հաջորդում էին իրար, և ոչ մեկն ավտոմեքենան կանգնեցնելու նշան չէր անում: Մի կանգառի մոտ Գեղամն ինքը կանգնեց, տեսել էր ընկերոջը, որը տրամվայի էր սպասում: Ընկերը բավականին հեռու էր ապրում, և Գեղամը մտածեց, որ այդքան ժամանակամիջոցում կարող էր երկու ուղևորի տեղափոխել: Ընկերոջը ծառայելն այն չէ, ինչ՝ օտարին: Դա ուրիշի համար մի լավ բան անել չէ, ինչ-որ չափով ընկերն էլ ինքն է, կարծես մեքենան իր համար է քշում: Եթե ընկերոջը երկու ամսով զրկած չլինեին վարորդական

իրավունքից, ապա նա տրամվայի կանգառում չէր լինի, և այս հանդիպումը տեղի չէր ունենա:

- Դե պատմիր, Արսեն, ի՞նչ կա գործարանում:

Գեղամն ամենևին էլ չէր ուզում խոսակցությունն այդտեղից սկսել, սիրտը լիքն էր ուրախությամբ, պետք է առաջին խոսքն այն լիներ, որ քիչ առաջ տղա է ունեցել, բայց այդ մասին առայժմ լռեց: Մենք բոլորս սիրում ենք ուրախ լուրը հանկարծակի հայտնել՝ մեր մտերիմներին հանկարծակի բերելու չարաճճի ցանկությամբ: Գեղամին թվում էր, թե պահը դեռ հարմար չէ: Բայց նրա հարցն անսովոր ուրախ ստացվեց, և Արսենը տարակուսած նայեց նրան.

- Ի՞նչ պիտի լինի գործարանում: Կարծես մի ամբողջ ամիս բացակայել ես: Ընդամենը մեկ օր: Միայն այսօր:

- Դե ես, հենց այնպես:

- Դե, հենց այնպես էլ իմացիր, որ գլխավոր ինժեներն այսօր ասաց. «Գեղամի առաջարկը շատ օգտակար է, պիտի ներդնես քո բաժանմունքում»: Այ տղա, դու ձուլման բաժանմունքն ես ղեկավարում, մտածում ես մե՞ր բաժանմունքի մասին:

- Ես մեր մասին էլ եմ մտածում: Շուտով ձուլարանում էլ մի բան կփոխեմ:

Գեղամը զղջում էր, որ ուրախ լուրն անմիջապես չի հայտնել Արսենին՝ իր մանկության ընկերոջը, որ հետո եղավ նաև ուսանողական և աշխատանքային ընկերը: Թեև հաճախակի են հանդիպում իրար, բայց այնքան բան են ունենում միմյանց ասելու, որ ժամերն աննկատ թռչում են: Հիմա էլի կսկսեն խոսել հազար ու մի բանից, իսկ դեմը մնացել է հազիվ հինգ րոպեի ճանապարհ:

- Լսիր, Արսեն, դրանք հիմա աչքիս չեն երևում: Տղա եմ ունեցել, տղա…

- Կանգնեցրու մեքենան:

Գեղամը չէր հասցրել արգելակել մեքենան, երբ հայտնվեց ընկերոջ առնական բազուկների օղակում:

- Աչքդ լույս լինի: Ես էլ ասում եմ՝ ինչո՞ւ այսօր գործի չի եկել: Դու մի ասա կնոջ հավարին է գնացել: Լսիր, Գեղամ, էգուց ընդմիջմանն իմ և քո բաժանմունքի տղերքին հավաքելու եմ, կոնյակի շշեր եմ բացելու: Մինչև էգուց ընդմիջումը ոչ մեկի հետ չխմես: Առաջինը ես եմ բաժակս խփելու բաժակիդ: Գուցե հիմա՞ գնանք շնորհավորելու:

- Չէ, Արսեն: Դու լավ միտք տվեցիր: Էգուց ընդմիջմանը: Մեր ու ձեր բաժանմունքի տղերքի հետ: Ամբողջ գործարանը կթնդացնենք: Բոլորին, բոլորին մեկական բաժակ…

Եվ հենց այդ պահին մի մարդ, ասես խելագար, նետվեց դեպի մեքենան:

- Ախպեր ջան, վարպետ ջան, ուստա ջան, շուտ, շուտ…

- Ի՞նչ է պատահել, մարդ աստծո, շունչ քաշիր, հետո խոսիր:

- Շուտ, շուտ, շտապ, շտապ օգնության կայանը… Կինս… Կինս…

- Կինդ՝ ի՞նչ:

- Դե էն էլի… ցավեր ունի:

- Ծննդաբերակա՞ն ցավեր:

- Այո, այո: Աղաչում եմ՝ շուտ:

- Նստիր:

Խելագարը թափով բացեց ավտոմեքենայի դռնակը, գլուխը կպցնելով շրջանակի երկաթին՝ իրեն շպրտեց ներս:

- Ավելի լավ չէ՞ր լինի հեռախոսով շտապ օգնություն կանչեիր: Մինչև գնանք հասնենք…

- Զանգահարել եմ, զանգահարել: Մի ժամից ավելի չարչարվում էի: Չեմ բռնացրել: Քշիր, արագ քշիր: Ուրիշ տեղ էի ընկնում: Մեր հեռախոսները գիտեք էլի…

Գեղամը մտածեց, որ նպատակահարմար չէ շտապ օգնության կայան գնալը: Այս հուզված մարդը մինչև բացատրեց, թե ինչն ինչոց է, ահագին ժամանակ անցավ: Այդքան էլ այնտեղ կանցնի: Գուցե ավելին: Կարող է անհոգի մեկին հանդիպեն: Հետո վերադառնալը…

- Արսեն, դու ստիպված էլի քո տրամվային պիտի սպասես: Ես այս մարդու կնոջը ծննդատուն պիտի փոխադրեմ:

Արսենն արագ իջավ մեքենայից: Մարդն ասաց իր հասցեն:

- Ինչպե՞ս չէի մտածում, որ կարելի էր այս միջոցին դիմել: Մի ժամ կախվել էի հեռախոսից:

- Ոչինչ: Լավ է ուշ, քան երբեք: Այս մեքենան այսօր երկրորդ կնոջն է տանում ծննդատուն: Առաջինն իմ կինն էր: Տղա ունեցա:

- Աչքդ լույս լինի, բարի մարդ: Տղադ հորով-մորով մեծանա:

- Ի՞նչ ունես:

- Երկու աղջիկ:

- Երրորդը թող տղա լինի: Ուզո՞ւմ ես տղա:

- Այն էլ ինչպես… Բայց հիմա ուզում եմ կնոջս մի բան չպատահի: Թող երրորդն էլ աղջիկ ծնվի, միայն թե կինս…

Մարդը չկարողացավ շարունակել, աչքերը լցվել էին:

Քիչ հետո մեքենայում երեք հոգի էին, ավելի ճիշտ՝ չորս: Չորրորդն արդեն ձևավորված մարդ էր, որ շուտով աշխարհ էր գալու:

- Սիրուշ ջան, դիմացիր: -Անընդհատ կրկնում էր մարդը՝ ինքն էլ չհավատալով իր հորդորի զորությանը: -Քիչ մնաց, հիմա կհասնենք:

Մեքենան սլանում էր դեպի այն ծննդատունը, ուր Գեղամի կինն ու նորածին որդին էին: Տեսնես ի՞նչ է անում հիմա նորածինը, ինչպիսի՞ն է: Ինչքա՞ն են քաշը, հասակը: Գեղամը ոչինչ չգիտի: Վաղը կնոջ համար սննդամթերք տանելիս ամեն ինչ կիմանա: Երեք մեխակ էլ կտանի, երեք կարմիր մեխակ: Կինը կհասկանա, որ մեխակներից երկուսն իրենք են, երրորդը՝ նորածինը: Երևի կբացատրի իր պալատի կանանց: Գուցե այս կինն էլ նույն պալատում կլինի: Աստված տա, տղա ծնվի: Երկու աղջիկ, մի տղա կունենան: Արդեն երևացին ծննդատան սպիտակ պատերը, որ ողողված են էլեկտրական պայծառ լույսով:

- Աստված էր քեզ ուղարկել: -Արդեն բավականին խաղաղվել էր մարդը և ժպտում էր Գեղամին: -Երբ ուրիշներն ինձ դառնացնեն, ես կհիշեմ, որ նման բարի մարդ էլ կա աշխարհում:

- Իսկ դառնության մեջ գոնե մեկը քեզ կհիշի՞: - Գեղամը թեև համոզվել էր, որ մի բարի մարդու է ծառայություն մատուցում, բայց ուզեց գոնե մի ապացույց ունենալ, գոնե մի դեպք իմանալ նրա կյանքից:

- Չգիտեմ, կհիշեն ինձ, թե ոչ: Մեկը պետք է որ հիշի: - Մարդը շտապում էր, արդեն մտնում էին ծննդատան բակը: - Մեկին խեղդվելուց փրկեցի, երբ ուշքի եկա, իմ վիճակը մոռացած՝ հարցրեցի, թե ինչպե՞ս է նա զգում իրեն:

Մարդը չափազանց սեղմ պատմեց մի դրամատիկական վիճակ, մոռանալով ասել, որ ինքն էլ առանձնապես լավ լողալ չգիտե, խեղդվողին մի կերպ քարշ է տվել ափին բավականին մոտ, ինքն էլ ընկել նույն վիճակի մեջ, հետո երկուսին էլ

ազատել են ուրիշները, բայց լող տալու անհրաժեշտություն արդեն չի եղել, որովհետև ջուրը մինչև ծնկներն է եղել: Այդ մանրամասների ի՞նչ ժամանակն է. բայց քանի որ բարի մարդն ուզում էր իմանալ, թող գոնե այդքանն իմանա: Բարին՝ բարի, վարձը՝ վարձ:

- Խնդրում եմ վերցրու: - Եվ մարդը Գեղամին մեկնեց մի երեք ռուբլիանոց: Դարձյալ երեք ռուբլի: Երևի այս մարդու վերջին երեք ռուբլին է, մտածեց Գեղամը, իր մոտ էլ այդքան փող կա:

- Ես անվճար եմ բերել: Ասացի, չէ՞, որ տղա եմ ունեցել: Նրա պատվին է:

Մարդը չպնդեց: Ժամանակ չկար պնդելու: Միայն կարողացավ ասել.

- Շնորհակալություն:

Նրանք բաժանվեցին, և Գեղամն այդպես էլ չիմացավ, որ այդ մարդը Սևանի ափին պատահած վրանով մարդն էր, որ կնոջ ու երկու աղջիկների հետ սպասում էր տաքսիին, որը խաբել էր նրանց: Լավ արեցին ինքն ու Արսենը, որ օգնեցին նրանց: Գեղամը չի մոռանում այդ փոքրիկ միջադեպը, որովհետև հետևանքը բավականին մեծ եղավ: Երբ խորոված՝ փայտով վերադարձան Մարտունիից՝ Արսենի կինը փնթփնթաց. «Մեզ անտեր թողեցիք, ուրիշներին տեր կանգնեցիք»: Իր կինն ասաց. «Ճրագն իր տակը լույս չի տալիս»: Հետո թունդ վիճեցին, այնքան թունդ, որ առանց խորոված անելու՝ վերադարձան Երևան:

Եթե Գեղամը ճանաչեր այդ վրանով մարդուն, հիմա կմտածեր, թե կյանքում ինչպիսի պատահականություններ են լինում: Քանի որ չէր ճանաչել, մտածում էր, որ իր առաջին ուղևորը վատ մարդ դուրս եկավ, երկրորդը, փառք աստծո, բարի էր:

Մեքենան սլանում էր Կոմիտասի փողոցով: Ո՞վ էր լինելու երրորդ ուղևորը: Մեկը ձեռք բարձրացրեց: Սա էլ երրորդ ուղևորը: Ո՞վ ես:

- Ես մի քիչ Դոն-Կիխոտ եմ: -Քիչ հետո ասում էր նա: -Ես այդ չէի խոստովանի իմ ընկերոջը, որին ամեն օր տեսնում եմ, բայց քեզ խոստովանում եմ, թեև մտերիմներ չենք. դու մի քանի րոպե հետո այլևս ինձ չես տեսնի, ոչ էլ ես քեզ կտեսնեմ: Դոն-Կիխոտ լինելը պարծանք է: Ես և Հայնեն նույն տարիքում ենք կարդացել Սերվանտեսի գիրքը: Բայց նա լաց է եղել, իսկ ես ծիծաղել եմ: Ես ընկալել եմ ծիծաղելին նրա մեջ, նա՝ գերմանացի այդ մեծ բանաստեղծը՝ մարդկայինը, որը ոտնահարվում է ամեն քայլափոխի: Դե, նա բանաստեղծ է: Լավ է, որ ես ոտանավորներ չեմ գրել, շատ փոքր պոետ կլինեի: Ինձ գյուղատնտեսությունը գրավեց: Դաշտերը, սարերը, այգիները: Ասում ես՝ ինչո՞վ եմ մի քիչ Դոն-Կիխոտ: Քիչ էր մնացել մոռանայի: Անցյալ ամառ աներոջս հետ Սևան էի գնացել: Բարձրանում ենք թերակղզին: Իմ ետևից գալիս էր աներս: Իմ տակին ձի չկար, ոչ էլ նրա տակին՝ էշ, բայց ես ինձ պատկերացնում էի Դոն-Կիխոտ, նրան՝ Սանչո-Պանսա: Հնալով գալիս էր իմ հետևից, հևալով համոզում, որ կարիք չկա կղզու խորքերը գնալու: Այնուամենայնիվ գալիս էր իմ ետևից: Հասա մինչև ծայրը, որը մի վիթխարի ժայռ է՝ ջրի վրա կախված: Նայում եմ ներքև, գլուխս պտտվում է: Ափից մի քանի հարյուր մետր հեռու մի նավակ է օրորվում ալիքների վրա: Մեջը մի մարդ կա: Նավը ոչ առաջ է գնում, ոչ ետ, ոչ ափին է մոտենում, ոչ էլ հեռանում: Մարդը ձեռքով ինչ-որ շարժումներ է անում: Երևի ձեռքից սահել են թիերը, ուզում է իր փոքրիկ ափերով թիավարել, չի ստացվում: Խեղճ մարդ: Պետք է նրան անմիջապես օգնության հասնել, թե չէ՝ շուտով մութը կընկնի և նա կմնա բաց ծովում, սոված ու ծարավ: Պետք

է շտապել, քանի դեռ լճափին մարդ կա: Թերակղզու մյուս կողմը զառիթափ է, կարելի է իջնել, հետո գալիս է ասֆալտապատ ճանապարհը: Մարդիկ են քայլում այդ ճանապարհով: Իջնում եմ: Ավելի ճիշտ՝ գլորվում եմ, մանր ու մեծ խճաքարերը՝ ինձ հետ: Քիչ մնաց, հիմա կհասնեմ ճանապարհին: Հանկարծ նկատում եմ, որ դուրս եմ եկել շան բնի առաջ: Բունը փայտից է, շունն էլ շղթայով կապված: Ուղիղ շան կողքին եմ: Փախչում եմ: Շունն իսկույն հասկանում է, որ փախչում եմ և ատամը խրում է ազդրիս մեջ: Ես էլ իսկույն հասկանում եմ, որ շունը կապված է և ինձ գլորում եմ ներքև՝ մինչև կվերջանա շղթան: Շունն, ավելի ճիշտ կլինի ասել՝ գամփռը, հասցրեց միայն մի անգամ կծել: Հիմա ես ազատ եմ, գամփռը՝ կապված, շուրջս քարեր են՝ մանր, մեծ, սուր, տափակ, կլոր, որով ուզենամ՝ կխփեմ, ինչքան ուզենամ կխփեմ: Գամփռը խեղճացած ինձ է նայում: Աչքերը խոսում են, ոնց որ իսկական սոված մուրացկանի աչքերը՝ հաց ուզելիս: Մտածեցի, շունն իր շնությունն արեց: Հո ինձ չէր շոյելու, պիտի կծեր, բա ի՞նչ: Ես էի մեղավորը, որ դուրս եկա ուղիղ նրա բնի առաջ: Ես անխելք մարդ եմ, իսկ նա շուն է: Ես իրավունք չունեմ խփելու մեկին, որն իր պարտականությունն է կատարել: Նրան հաց են տվել, ջուր են տվել, կապել են այստեղ, որ ինձպեսներին կծի: Չխփեցի: Արդարացրի նրան ու չխփեցի: Խղճացի նրան ու չխփեցի: Բայց, որ ճիշտն ասեմ՝ չխփելու գլխավոր պատճառները դրանք չեն: Վախեցա, շունը գազազի և շղթան կտրի: Այդ ժամանակ վա՛յ իմ օրին: Վախեցա հանկարծ շան տերը դուրս գա կողքի շենքից և իր շնից ավելի կատաղի հարձակվի վրաս: Գլուխը քարը, ինչ եղավ՝ եղավ: Ես շտապում եմ, ես պետք եմ նավակի մեջ մոլորված մարդուն: Հիմա, որ պատմեցի պրծա շան հատվածը, մտածում եմ, որ այդ խելոք կենդանու աչքերը շատ

տխուր էին, ոնց որ զղջար իր արածի համար: Չէ, ես նրան չեմ խփել հատկապես այդ պատճառով:

Շնչասպառ հասա մարդկանց, սկսեցի բացատրել, որ ափից շատ հեռու, մի նավակ այսպես ու այսպես… Պետք է օգնել, մի ուրիշ նավակ ճարել: Մարդիկ անտարբեր լսում էին ինձ կամ չէին լսում, բացատրությունս կիսատ թողած՝ շարունակում իրենց ճանապարհը: Աներս արդեն հասել էր ինձ: Իմ Սանչո-Պանսան: Նա էլ պատմում էր մարդկանց, որ շունը կծել է ինձ: Մեկը կասկած հայտնեց, որ շունը գուցե կատաղած է, լճափին սանիտարական կետ կա, վերքը պիտի անպայման մշակել: Հարկ կլինի սրսկել կատաղության դեմ: Իմ Սանչո-Պանսան ինձ քարշ տվեց սանիտարական կետ: Վերքս մշակում են: Շան ատամը երկու սանտիմետր խրվել է մսիս մեջ: Ես չեմ դադարում իմ առաքելությունը կատարելուց: Ինձ թվում է նավակի մարդու վիճակն ավելի ծանր է, քան իմը: Սանիտարական կետում լճափի ջոջերից մեկը նայում է աչքերիս մեջ և փոթկացնում: Ինչո՞ւ է ծիծաղում, մարդն այնտեղ խեղդվում է, իսկ սա ծիծաղում է: Ծիծաղի միջից էլ բացատրում է.

- Մեր Գևոն է էնտեղ, խարիսխ է գցել, ձուկ է որսում: Իսկ սա… Ու նորից քրքջում է: Ծիծաղում են մի աղջիկ ու մի տղա, որ սպասում են բժշկուհուն՝ տուն գնալու համար: Ծիծաղում եմ նաև ես, բայց ես այն պատճառով, որ այս գիշեր Սևանի վրա ոչ մեկը սոված ու ծարավ չի լինի: Լուռ է միայն իմ Սանչո-Պանսան, նրան մտահոգում է իմ վերքը: Հանկարծ շունը կատաղած չլինի՞: Բա, ախպերս: Չնեղանաս, եթե ցանկանամ, որ քո նորածին բալիկն էլ մի քիչ Դոն-Կիխոտ լինի: Ես արդեն հասա: Աստված քեզ հետ:

Ուղևորն իջավ: Գեղամը մտածեց, որ իսկապես և սա, և նախորդ ուղևորն ինչ-որ չափով Դոն-Կիխոտ են, իրենց

վիճակը մոռացած՝ ուրիշի վիճակով են հետաքրքրվում: Ինքը նման պայմաններում դժվար թե իրեն մոռանար՝ ուրիշին հիշեր: Մարտունիում պատահած այն դեպքը՝ այն վրանով մարդուն և նրա ընտանիքին օգնության հասնելը հասարակ բան էր: Ավելի լավ է՝ մի քիչ Դոն-Կիխոտ լինել, քան ճշգրիտ հաշվարկներով առաջնորդվող, ռոմանտիկայից զուրկ մարդ: Զզվելի են հաշվապահական հարաբերությունները: Չէ, իր որդին թող այդպիսին չլինի: Իր որդին՝ Մանվելիկը… աստված իմ, ծնողների հետ մայթին կանգնած այս մանչուկը կարծես իր Մանվելիկը լինի: Չէ, ինքը դեռ որդուն չի տեսել, որտեղի՞ց գիտի, որ երեքամյա այս մանչուկը նրան նման է: Կամ իր երեքժամյա որդին մեծանալիս սրա պես կլինի: Դարձյալ այս երեքը: Դա վատ չէ, երեքը հեքիաթի թիվ է, հեքիաթում երեք եղբայրներ են լինում, երեք քույրեր, հերոսներն իրենց մուրազին հասնելիս երեք խնձոր է ընկնում երկնքից: Մեկն այս լավ մանչուկին: Նա շատ գեղեցիկ է, շատ նուրբ և Գեղամին դրա համար թվաց, թե նա նման է իր որդուն: Այս ամենը Գեղամը մտածում էր, երբ հայրը, մայրը և մանչուկն իր մեքենայում էին: Նրանք ձեռք չէին բարձրացրել, երևի տաքսիի էին սպասում, Գեղամն ինքն էր կանգնել: Հայրը և մայրը խոսում են շուկայի թանկությունից, իրենց հարևանուհուց, որ ամեն մի երեխայի ձեռքը մի-մի տապակած ճուտ է տալիս և բակ ուղարկում, որպեսզի մյուս երեխաները նախանձեն նրանց: Երեխաներն էլ չեն նախանձում, պարզապես չեն խաղում նրանց հետ: Հետո հայրն ու մայրը երեխաներից նորից անցնում են շուկայի թանկությանը, այնպես բորբոքված են խոսում, ինչպես կարող է խոսել ծայրահեղ հոգսը: Գեղամն իրեն երջանիկ է զգում, որ իր շնորհիվ այսօր նրանք մեկ ռուբլի կխնայեն: Գուցե հիսուն-վաթսուն կոպեկ: Հիմա արդեն պարզ է, որ նրանք տաքսու էին

սպասում, որպեսզի այնքան վճարեն, որքան ցույց կտա հաշիվը: Նրանք խոսում են, ավելի ճիշտ՝ ամեն մեկը բարձրաձայն մտածում է, և մանչուկը չի խառնվում նրանց խոսակցությանը, սուզվել է իր մտքերի մեջ, որոնք պետք է որ այնքան էլ հասարակ չլինեն. մանչուկը շատ խելոք աչքեր ունի: Երանի իր Մանվելիկն էլ այսպիսի աչքեր ունենա: Հայրը և մայրը հոգսերի տակ կռացած՝ չեն տեսնում լայն հորիզոններ, այլ միայն իրենց ոտքերի տակի հողը, իսկ մանչուկը… Ո՞վ գիտի ի՞նչ է դառնալու նա, չէ՞ որ Լոմոնոսովը մի աղքատ ձկնորսի որդի էր: Ի՞նչ է դառնալու իր Մանվելիկը: Պարզ է՝ մեծ մարդ, բայց ո՞ր բնագավառում՝ անհնար է գուշակել:

- Շատ լավ տղա ունեք,- ասաց Գեղամը: Նա սկզբում ուզում էր հարցնել՝ ձեր տղա՞ն է, բայց մտածեց, որ ծնողները հանկարծ կվիրավորվեն, ի՞նչ է, մեզ այսպես աղքատ հագնված տեսար, կարծեցիր չե՞նք կարող այսպիսի երեխա ունենալ: Այո, կարող էին վիրավորվել, չէ՞ որ ինչքան էլ աղքատ են երևում, բայց իր ներկայությամբ չեն խոսում այն մասին, որ վարորդները կրկնակի գին են ուզում, ինչպես այդ արեց առաջին ուղևորը: Սրանք նրբամիտ են, թեև գրպաններում երևի մեկ ռուբլուց ավելի չկա:

- Երեք տարեկան է, բայց արդեն կարդում է,- ասաց հայրը: -Վախենում ենք, մի փորձանքի գա, երեխան էսքան խելոք չի լինի:

Լոմոնոսովը քանի՞ տարեկանից է սկսել կարդալ, Գեղամը չգիտի: Համենայն դեպս, դեռ չէր տեսել մի երեխա, որ այս հասակում կարդալ կարողանար: Եթե ապագա մի Լոմոնոսովի է ծառայություն մատուցել, դա մեծ բավականություն է:

- Հասանք, հրեն մեր տունը,- ասաց մայրը: Նա բացեց շորից կարած դրամապանակը և մեկ ռուբլի մեկնեց Գեղամին:

- Ես ձեզ փողի համար չեմ տեղափոխել, -ասաց Գեղամը: - Այս երեխայի համար կանգնեցի: Այդ փողով նրան շոկոլադ կառնեք:

Ծնողները շնորհակալություն հայտնեցին, իսկ մանչուկի աչքերը փակվում էին, նա չէր կարողանում հաղթահարել քունը, թե չէ շոկոլադի անուն լսելով երևի կթռվռար: Նա երևի շոկոլադ էր ուտում միայն պատահական առիթներով, դեպքից-դեպք, իսկ ծնողների հետ տաքսի կամ այլ մեքենա էր նստում, երբ տրամվայներն արդեն պարկ էին գնացած լինում:

Գեղամը հեռանում էր նրանցից և մեքենայի հայելու մեջ դեռ տեսնում էր, թե ինչպես նրանք կանգնած՝ հայացքով ուղեկցում են իրեն: Այդպես ուղեկցում են հարազատին, սպասում են մինչև գնացքը կամ նավը հեռանա:

Էլի մի քանի մարդու տեղափոխեց Գեղամը: Տարբեր տարիքի, տարբեր խառնվածքի մարդիկ էին: Գոհ էր, որ գերակշռողը դրական խառնվածքներն էին: Գոհ էր, որ նրանցից երեքն իմանալով, որ տղա է ունեցել, հարազատի նման խանդավառվեցին:

Եղան նաև անտարբերներ: Բոլորը չէ, որ արձագանքում էին Գեղամի ապրումներին: Ոմանց կեցվածքի, դեմքի արտահայտության մեջ Գեղամը կարդում էր. «Վերցրու ռուբլիդ և գնա բանիդ»: Գեղամը, պարզ է, չէր վերցնում ռուբլին, և նրանք երևի զղջում էին, դա էր վկայում առանց դժկամության ասված նրանց «գիշեր բարին»: Ոչինչ, որ այդպիսի մարդիկ էլ են պատահում, չեն ուզում բացել իրենց սիրտը, աստված իրենց հետ: Գեղամը շուտ է մոռանում նրանց, որովհետև հիշելու ոչինչ չեն թողել, հիշողության մեջ

մնում են միայն սրտաբացները, նրանք, որ գիտեն հաղորդակցվել ուրիշի ուրախությանը: Բայց այս մեկին երբեք չի մոռանա: Սա նույնպես հիշողության մեջ մնացող ոչ մի բան չասաց, բայց նրա գլուխը… Գեղամը երբեք այսպիսի գլուխ չի տեսել: Դուրս ցցված այտոսկրերի վրա մի քիչ կաշի ու միս է քաշված: Ոչ թե գլուխ է, այլ՝ գանգ, այնպես պարզ գծագրված գանգ: Ահա այս մարդը, մոտ երեսուն տարեկան, ասես նոր էր դուրս եկել գերեզմանից և չէր հասցրել կյանքոտվել: Երևի շատ տխուր բաներ ունի գերեզմանից պատմելու: Գանգը չէր նայում Գեղամի կողմը, այլապես կտեսներ նրա ծաղրական ժպիտը: Իսկ Գեղամը մտքում չէր ծիծաղի նրա վրա, եթե իմանար ով է նա: Լավ է, որ գանգը լռում էր, չէր ասում, որ հենց նոր փողոցում, այս ուշ գիշերին, առանց փողի թողել էր իր սիրուհուն: Չէ, նա այդ չէր ասի, թեև այս պահին մտածում էր միայն ու միայն իր այդ արարքի մասին: Լռում էր, որպեսզի այդ չասի, չէ՞ որ չարերը գիտեն ոչ միայն չարություն անել, այլև թաքցնել իրենց արածը, իսկ եթե պետք է՝ մարդասերի դիմակ դնել: Տվյալ դեպքում այդպիսի դիմակի կարիք չկար, ո՞վ է Գեղամը, որ նրա մոտ ուզենա լավ մարդ երևալ, ընդամենը մի պատահական վարորդ, որին վարձել է իրեն տուն տանելու: Գեղամը շատ ջանք չթափեց նրան խոսեցնելու համար, չի ուզում, պետք չէ, վերջին հաշվով ինքը սոցիոլոգ չէ, այլ՝ ինժեներ, որը որոշել է այս գիշեր լավություն անել մարդկանց: Ինչպես կդառնանար, եթե իմանար, որ փողոցում այս ուշ ժամին մեն ու մենակ, առանց փողի թողնված կինը Նորան է, որին ինքն անպատասխան սիրահարված էր մի ամբողջ տարի: Մղձավանջային գիշերներ էր անցկացնում այնքան ժամանակ, մինչև հպարտությունն ըմբոստացավ, և նա ամուսնացավ, հիմա երկու տղա կունենար, եթե առաջինն ապրելիս լիներ: Ամուսնացավ ուրիշի հետ, սիրեց իր կնոջը, և

Նորան իր հուշերում մնաց որպես մղձավանջային երազ, որը շատ շուտ են մոռանում: Եթե հիշում են մեկ-մեկ, ապա աշխատում են իսկույն մոռանալ: Չիմացավ Գեղամը, որ Նորան էլ ամուսնացավ, բայց ամուսինն անհավատարիմ էր, և շատ շուտով բաժանվեց: Երկրորդ ամուսինը դարձյալ անհավատարիմ էր: Երրորդ անգամ չամուսնացավ: Հիմա այս գանգի սիրուհին էր:

Գանգն իջնելիս ինչ-որ բան մռլտաց, Գեղամը մտածեց, որ նա երևի «բարի գիշեր» ասաց: Ավտոմեքենան նորից վազեց մարդկանց ընդառաջ: Աստված իմ, ամայացող փողոցում մեն ու մենակ քայլողը Նորան է: Գեղամը տատանվեց. կանգնի՞, թե՞ չկանգնի: Չկանգնել, նշանակում է՝ տմարդի լինել, նշանակում է՝ արթնացնել հին հիշողությունները: Կանգնել, կանգնել, այս գեղեցիկ օրը չի կարելի խոզ լինել: Եթե չկանգնի, ավելի կպղտորվի անմարդկային լինելու մտքից:

- Բարև, Նորա:

- Ա՜, դո՞ւ ես, Գեղամ:

- Նստիր, ես քեզ տուն կտանեմ:

Նորան բարձրացավ մեքենա: Գեղամը կարծում էր, թե նա ետևում կնստի, բայց նա ահա նստած է իր կողքին: Նրանք չխոսեցին հին օրերից, Գեղամը չէր ուզում քրքրել հուշերը, որոնց ծալքերում փշեր կային իր համար: Նորան չուզեց նրան անհարմար վիճակի մեջ դնել, մանավանդ որ ինքն էլ պարծենալու բան չուներ: Խոսեցին նոր բացվող գարնան մասին: Գեղամն ասաց, որ գարունը տարվա ամենալավ եղանակն է, որ այս օրերին լույս աշխարհ եկած երեխաները գարնան ծաղիկներ են ոչ միայն անուղղակի, այլև ուղղակի իմաստով: Նորան ընդհատեց նրան.

- Գարունը գարուն է, դու քեզնից խոսիր:

- Ես նորից հայր եմ: Առաջին տղաս մահացավ, ծնվել է երկրորդը: Մի քանի ժամ առաջ:

- Իսկ քո ձեռքերում կոնյակի բաժակի փոխարեն ավտոմեքենայի ղեկն է հիմա:

Գեղամը բացատրեց, թե ինչու է այդ այդպես: Նորան ծիծաղեց և ֆանտազյոր անվանեց նրան:

- Դու երջանի՞կ ես, Գեղամ:

- Շատ երջանիկ:

- Կնոջդ երբեք չե՞ս դավաճանել:

- Երբեք:

- Նույնիսկ այն ժամանակ, երբ նրա հղիության վերջին ամիսնե՞րն էին:

- Նույնիսկ այդ ժամանակ:

Գեղամի համար տհաճ էր այդ հարցաքննությունը, իսկ Նորան թաքուն հրճվանք էր զգում: Գեղամը նրա աչքերի մեջ չէր տեսնում հրճվանքը ոչ թե այն պատճառով, որ մութ էր, այլ՝ որովհետև չէր կարողանում, չէր ուզում նայել նրա կողմը:

- Գեղամ, դու ինձ սխալ ճանապարհով ես տանում: Մենք հիմա հին տանը չենք ապրում: Տեղափոխվել ենք:

- Ներիր, Նորա, ես սկզբից պիտի հարցրած լինեի: - Գեղամն ուրախացավ, որ խոսակցության նյութը փոխվեց:

- Մենք հիմա ապրում ենք Ավանի ձորում, գազանանոցից քիչ վեր:

Ավտոմեքենան փոխեց ուղղությունը: Իրար հաջորդող պայծառ լույսերը հատուկենտ դարձան, և ապա տիրեց խավարը:

- Այստեղ կանգնիր, Գեղամ:

Ավտոմեքենան կանգ առավ: Բայց Նորան չի իջնում:

- Դու էլ իսկական տղամա՞րդ ես, քրքջալով ասաց Նորան: -Մեր տունն Ավանի ձորում չէ, իր հին տեղում է, իսկ

դու…,- քրքիջը Նորային թույլ չտվեց շարունակելու իր միտքը.- իսկ դու այդ հասկացել էիր և քեզ չհասկացողի տեղ դրեցիր:

Ոչ, Գեղամը չէր հասկացել ու հիմա էլ չէր հասկանում, թե ինչո՞ւ է Նորան քրքջում:

- Իմ ամուսինը լինեիր, ինձ կդավաճանեի՞ր: Իզուր էի ափսոսում, որ մերժել եմ քեզ, իբր թե, հավատարիմ կլինեիր… հա, հա, հա, հավատարի՛մ…

Գեղամը սկզբում տարակուսած նայում էր ծիծաղից ցնցվող նրա ուսերին, հետո տարակուսանքը փոխվեց զայրույթի: Նա չէր զգում, որ այդ ծիծաղի մեջ ավելի շատ արցունքներ կան, որոնք անաղմուկ հոսում են մթության մեջ:

Գեղամին թվում էր, թե ամբողջ տիեզերքը լցված է Նորայի քրքիջով: Ամբողջ տիեզերքը և իր ներսը: Թմբկաթաղանթները պատռվում են ներսից դուրս հորդող, թե՞ դրսից իր էության մեջ խուժող քրքիջի ճնշումից: Ուրեմն այսպես էլ է լինում, կին կա, որ վաճառում է իր մարմինը փողի համար: Կա, որ վաճառվում է պաշտոն ունենալու համար, կա, որ վաճառվում է գիտության կամ արվեստի աստիճաններով բարձրանալու համար: Բայց որ վրեժի համար ուզենար վաճառվել, Գեղամն այդպիսի վաճառքի ծանոթ չէր: Վրեժ ումի՞ց, ինչո՞ւ: Եթե ինքը նրան չհանդիպեր, Նորան չէր փնտրի ու գտնի իրեն այդ վրեժը լուծելու համար: Հանդիպեցին, և նա վատ զգաց, որ աշխարհում մի չխաբված կին կա: Հիմա զուր է այդպես քրքջում, ինքը Գեղամը չի դավաճանել կնոջը, որովհետև սիրում է նրան: Ցավալին այն է, որ փշրվեց իր պատկերացումը Նորայի մասին: Մի ամբողջ տարի սրա՞ պատճառով է մղձավանջային գիշերներ անցկացրել: Սրա՞, որ ուզում էր եղածի վրա այս մղձավանջային գիշերն էլ ավելացնել: Նա իր սերը չէր: Իզուր, իզուր կանգնեցրեց

մեքենան: Արժի հիմա թողնել ու հեռանալ՝ նրան հանձնած Ավանի խավար ձորին: Բայց այդ տրամադրությունը միայն մեկ րոպե տևեց: Հաջորդ րոպեին Գեղամն ասաց.

- Վերջ տուր հիմար քրքիջիդ, Նորա: - Գեղամի ձայնը խուլ էր, նա գերմարդկային ճիգեր էր գործադրում հանգիստ խոսելու համար: Գրգռված վիճակում շարունակում էր չտեսնել, չզգալ Նորայի արցունքները:

Բաժանվելիս Նորան ցտեսություն չասաց, իսկ Գեղամը չմտածեց, որ նա ցտեսություն չասաց: Նրա մտքերը դառնում էին տուն գնալու շուրջը: Չարժի ամբողջ գիշերն անքուն մնալ և լավություն անել այսպիսի մարդկանց: Երբ արդեն հաղթում էր այդ միտքը, հիշեց նորածին որդուն, տեսավ նրան մեծացած: «Իմ ծննդյան օրը,- լսեց որդու ձայնը,- դու մի լավ բան էիր որոշել և որոշումդ մինչև վերջ չկատարեցիր»: Եվ ավտոմեքենան նորից վերցրեց անորոշ ուղղություն:

Երկար ժամանակ ոչ մեկը չէր կանգնեցնում մեքենան: Փողոցներն անմարդ էին: Հատուկենտ անցորդներ էին երևում, հատուկենտ լույսեր էին վառվում: Վերջապես մեկը ձեռք բարձրացրեց, մի քսանամյա նիհար տղա, նիհարությանն անհամապատասխան լայն թիկունքով: Գեղամը չփորձեց իմանալ նրա ով լինելը: Պետք չէ: Բայց տղան ասես մի ամբողջ շաբաթ մարդ չէր տեսել և սկսեց շաղակրատել իր մասին: Վիշտ ուներ, թեթևանալ էր ուզում: Սկզբում Գեղամը նրան լսում էր ցրված, բայց հետո տղայի պատմությունը գրավեց: Սիրո պատմություն էր: Աղջիկը և նա միասին են աշխատել, նույն սենյակում: Աղջիկը, ավելի ճիշտ՝ երեսունհինգամյա կինը, նստել է տղայի դիմաց, հարդարել աչքերի շուրջը ժամանակից շուտ առաջացած կնճիռները, դրանից աչքերը մի քիչ շեղ են դարձել, մի քիչ շեղ նայել է տղային: Ի՜նչ աչքեր են, երկու սև կրակներ: Բայց կնճիռներն ուռկան են փռում, որ

որսան այդ կրակները ևս: Եկել են տղամարդիկ, տռփոտ խոսքեր են ասել նրան, հետո մինչև լույս եղել նրա տարփածուն: Կինը տրտնջացել է, որ մեկ են բոլոր այր մարդիկ, իսկ կյանքում բնավ երջանիկ չի եղել նրանց գգվանքից: Աչքերը նայել են թախծալից, օրեցօր սկսել է խամրել նրանց փայլը: «Նրա կյանքը կանցնի այսպես անսեր, ոչ մի օր երջանիկ չեղած,- մտածել է տղան և պատանու միամտությամբ չոքելով նրա առաջ շշնջացել է՝ իմ սեր»: «Ուզեցի, որ նրա մաքուր, երկնային հոգին չմրսի»: Կինը նրան լուսնոտ է անվանել:

- Ես իսկապես դարձա լուսնոտ: Երբ չեմ դիմանում սիրո տանջանքին, գալիս կանգնում եմ նրա լուսամուտի տակ: Հիմա էլ այնտեղից եմ վերադառնում: Ինձ թվում է՝ տռփոտ շշուկներ եմ լսում: Խանդի սև կատուն ճանկռում է սիրտս ներսից: Ես կխելագարվեմ, էլ չեմ դիմանա: Ում որ պատմում եմ՝ ծիծաղում է վրաս:

- Չարժե նա քո տառապանքին: -Ասաց Գեղամը: - Ամուսնացիր ուրիշի հետ, երջանիկ եղիր և նա կգա քո երջանկությունը տրորելու: Կտեսնես, որ մի սովորական կին է, սովորական էգ, առանց «մաքուր երկնային հոգու»: Չարժի նրա համար մինչև գիշերվա երեքն արթուն մնալ: Նրա ամբողջ ուժն այն բանի մեջ է, որ թույլ չի տալիս, դու էլ տռփոտ շշնջաս իր ականջի մեջ:

Տղան չհամաձայնեց Գեղամի հետ: Իր խոսքն առարկայական դարձնելու համար Գեղամը նրան պատմեց քիչ առաջ պատահածը: Տղան դարձյալ մնաց անդրդվելի: Համենայն դեպս, շնորհակալություն հայտնեց Գեղամի բարի դիտավորության համար: Այդպես էլ նրանք բաժանվեցին, ավելի ճիշտ՝ ավարտվեց նրանց առաջին հանդիպումը: Հետագայում նրանք մտերիմ ընկերներ դարձան:

Բաժանվելուց հետո Գեղամը երկար ժամանակ մտածում էր, որ այս տղան ևս իր մեջ դոնկիխոտյան ինչ-որ բան ուներ, ինչպես Սևանի թերակղզում շան ատամների տակ ընկածը կամ կնոջը ծննդատուն տեղափոխող այն մեկը, որ լողալ չիմանալով նետվել է ջուրը՝ ուրիշին փրկելու համար: Այս տղան էլ կամեցել է լավ բան անել և տառապում է հիմա: Ոչ թե մարմինն է ջարդուփշուր արել, ինչպես Դոն-Կիխոտը, այլ՝ հոգին:

Այս միտքը Գեղամին վերստին այցելեց ծննդատանը: Նա կնոջը նախաճաշ էր բերել և երեք կարմիր մեխակներ, ամենալավերը: Հանկարծ հիշեց այն կնոջը, որին ինքն իր ավտոմեքենայով երեկ ուշ երեկոյան հասցրեց ծննդատուն: Տեսնես ի՞նչ ունեցավ այդ կինը՝ տղա՞, թե՞ աղջիկ: Գեղամն այդ մասին հարցրեց հանձնուք տանող սանիտարուհուն:

- Տղա ունեցավ, տղա: -Զվարթ պատասխանեց սանիտարուհին: Չորս կիլո, ութ հարյուր գրամ: Ամենախոշորը երեկ ծնվածների մեջ:

Գեղամն ուրախացավ: Մտածեց, որ կարողանում է սրտանց ուրախանալ ուրիշի ուրախությամբ և դրանից էլ ավելի ուրախացավ:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ իմանար, որ ուրախությունն այդքան կարճատև է լինելու: Ասացին՝ քո ղեկավարած տեխնիկումին տասը հեկտար ուսումնա-հիմնական հողամաս ենք տալիս, և չկարողացավ մարդավարի շնորհակալություն հայտնել, որովհետև չափից ավելի ուրախ էր: Տասը հեկտար այգի: Շատ էր պայքարել գեթ կեսը ստանալու համար, հուսահատվել էր արդեն, վերջին զենքը վայր դրել և հանկարծ… ոչ թե կեսը, այլ

լրիվ այգին են տալիս գյուղատնտեսական տեխնիկումին, որի ղեկավարն է նա: «Դե քեզ տեսնեմ, ընկեր Համասյան, այնպես մշակել տաս այդ այգին, որ ամբողջ Արարատյան դաշտը քեզ նախանձի»: Նախ և առաջ խելքը գլխին մի գյուղատնտես է հարկավոր: Բայց հենց այստեղ էլ նրա ուրախությունը նվազեց, նվազեց և կտրվեց: Ի՞նչ էր մի գյուղատնտեսի ընդունելությունը՝ մի կաթիլ ջուր, բայց արի տես, որ մեծացավ այդ կաթիլը, այնքան մեծացավ, որ դարձավ պղտոր գետ և ահա քշում է իրեն: Որտեղի՞ց էլ իմացան իր ծանոթներն ու բարեկամները և ճանճերի պես վրա թափվեցին: Կընդունվի նա, ով արժանի է: Չորս դիմում կա այդ տեղի համար: Մեկն իր փեսայի եղբորորդունն է, մյուսը՝ իր հարևանի աղջկանը, երրորդը՝ իր մանկության ընկերոջ կրտսեր եղբորը: Միայն չորրորդ դիմողին չի ճանաչում, իսկ այդ չորրորդ դիմողը կարող է նրանցից ավելի ընդունակ լինել: Թող քննություն հանձնեն: Ով ավելի բարձր գնահատական ստացավ, թող նա էլ ընդունվի: Ոչ մի խնամի-ծանոթ-բարեկամ:

Եվ Համասյանը քննող ուսուցիչներին պատվիրեց, որ հանդես բերեն իսկական անաչառություն: Կասկածեց իր խոսքերի ներգործությանը, անձամբ ներկա եղավ քննություններին և համոզվեց, որ չորրորդ դիմողն ավելի ընդունակ է և իսկական հողի մարդ: «Նա էլ կընդունվի»,- վճռեց դիրեկտորը և այդ պահից կաթիլը սկսեց մեծանալ, դառնալ գետ:

Նախ իր փեսան բախեց դուռը:

- Որ ասում են ճրագն իր տակը լույս չի տա, ճիշտ է: Ես էլ ասում եմ կնոջս եղբայրը ղեկավար է, եղբորորդուս իր թևի տակ կմեծացնի:

- Արդեն մեծացած տղա է, ճուտ չէ, որ թևի տակ մտնի: - Փորձեց կատակով գլուխն ազատել Համասյանը, բայց փեսան համառ էր:

- Քույրդ ապրելիս լիներ՝ ինքն էլ կխնդրեր: Նա շատ էր սիրում Վովկային:

- Եվ ես նրան կասեի՝ սիրելի քույրիկ, ես էլ եմ սիրում մեր Վովկային, բայց Ցոլակը նրանից լավ հանձնեց քննությունները: Մի քիչ արդարացի լինենք:

- Պետք է նաև մարդասեր լինել:

- Գյուղից եկած այդ անծանոթ Ցոլակը նույնպես մարդ է:

- Մի առած կա՝ իմացած կլինես: «Աչքդ ո՞վ հանեց՝ մերձավորը: - Դրա համա՞ր այդքան խորը»:

- Սիրելի փեսա, ախր հասկացիր ինձ… Մենակ քո եղբորորդուն չէ, որ մերժել եմ: Դուռը դռան վրա մի հարևան ունեմ, նրա աղջկան էլ չընդունեցի, մանկության ընկերոջս կրտսեր եղբորն էլ: Նրանք չեն բողոքում փառք աստծո:

- Երևի նրանք էլ մեզ պես աղքատ են:

Արյունը խփեց Համասյանի գլուխը: Նա հասկացավ, որ իր փեսան ակնարկում է այն մասին, թե՝ մենք չենք կարող մեծ կաշառք տալ, իսկ մեր սերը ոչինչ չարժե, համենայն դեպս այնքան չարժե, որքան կաշառքն է, և դու նախընտրեցիր գյուղից եկած այդ Ցոլակին, որը լողում է յուղ ու մեղրի մեջ:

- Ցոլակը ձեզնից աղքատ է: Հեռացիր: -Զուսպ չարությամբ ասաց Համասյանը և մտածեց, որ իր մանկության ընկերը և հարևանը կհասկանան իրեն, սրա պես եսասեր չեն: Բայց նա սխալվում էր: Մանկության ընկերը բացեիբաց ասաց, որ այսուհետև ընկերներ չեն: Կռվեց ու հեռացավ: Ավելի լավ, որ այդպես ստացվեց, այլապես պիտի շարունակեր խաբված մնալ:

Հարևանը չկռվեց Համասյանի հետ, նույնիսկ սիրալիր ժպտաց: «Ոչինչ,- ասաց,- աղջիկս ուրիշ տեղ կընդունվի: Հա, մոռացա ասել, դիսերտացիադ կարդացի, վատ չի շարադրված, բայց գիտական հիմնավորումը մի քիչ կաղում է»: Իսկ ուր որ հարկն է, պարզապես ասաց՝ հարցերը գիտականորեն չեն հիմնավորված:

- Ինչ հեշտությամբ թքեցին ազնվության վրա էլ, արդարության վրա էլ,- նրանց հասցեին ասում էր Համասյանը:

Նրա դառնությունը չմեղմացավ նույնիսկ այն ժամանակ, երբ փեսան եկավ և ներողություն խնդրեց իր ասածի համար: «Դու պրոֆեսորի աղջկան չես ընդունել»,- ասաց,- իսկական տղամարդ ես»:

Եվ այդ իսկական տղամարդը չէր իմանում ի՞նչ անել: Սրտում այնուամենայնիվ օձի պես գլուխ էր բարձրացրել և ֆշշում էր ատելությունը Ցոլակի նկատմամբ: Պահեր էին լինում, որ մտածում էր Ցոլակին էլ չընդունել: Բայց ընդունեց: Ահեղ ճակատամարտում հաղթած զորավարի քայլվածքով մոտեցավ քարտուղարուհուն և թելադրեց Ցոլակին ընդունելու հրամանը: «Ես քննություն բռնեցի»,- մտածեց իր մասին:

ԾՆՈՒՆԴ ԵՎ ՄԱՀ

…Երկու ամիս առաջ, երբ ծնվում էր նա, առավոտ էր: Հայրը շատ գործնականորեն պատից իջեցրեց օրացույցը, գտավ այդ օրվա ամսաթիվը, և տնեցիներին հայտնեց, որ իր որդին աշխարհին ժպտացել է արևի հետ միասին: Իհարկե, նա գիտեր, որ ոչ մի նորածին աշխարհ չի գալիս ժպտալով, բայց այդ բառն օգտագործեց, որովհետև համակված էր

արտակարգ բանաստեղծական տրամադրությամբ: Դեռ երկու ամիս էր պետք, որ նա հասկանար այդպիսի տրամադրության իմաստը, խորհուրդն այն երազանքների, խոհերի, որ նա վաթսուն օր սնում էր իր կրծքի տակ՝ նորածնի աչքերին նայելով: Այդ աչքերն այնպես վճիտ էին, խոհուն ու խոսուն: Մանկիկը կարծես հենց առաջին օրից ուզում էր հասկանալ աշխարհը, ճանաչել մարդկանց, շրջապատը: Եվ մտածում էր հայրը, որ այդպիսի ագահ աչքերով մանչուկը մեծ մարդ կդառնա: Բայց ո՞ր բնագավառում: Շախմատի՞ստ, հայրը մոլի շախմատասեր էր, ֆիզիկո՞ս, աստղագե՞տ, բուսաբա՞ն… Նա տեսնում էր որդուն նոր համաստեղություն հայտնաբերած, սովորական փայտի կամ ջրի մեջ այնպիսի ուժ գտած, որը կարող էր մրցել արևի հետ և երկրագունդը փրկել հեռավոր ապագայում սառցակալելուց, կամ այնպիսի բույսեր աճեցրած, որոնք առավոտյան սկսում են ծլել և երեկոյան բերք են տալիս: Աշխարհում այնպիսի լիություն է, որ վաղուց մոռացվել է, թե ինչպես էր մի պաշտոնյա իր ստորադասին սպառնում հացից զրկել: Եվ այդ բոլորն իր որդու շնորհիվ: Ահա նա քայլում է փողոցով, բոլորը նրան են նայում հիացմունքով: Ուսերի վրա գլուխ չէ, այլ արև, որ ճառագում է բարություն և հանճարեղ հայտնագործություններ: Ավելի ճիշտ՝ ոչ ոք նրան չի նայում, որովհետև բոլորի աչքն արդեն կշտացել է և կարծում են, թե աշխարհը միշտ էլ այդպես է եղել: Որդին դժգոհ չէ այդպիսի վերաբերմունքից, որովհետև եթե փառաբանության ծեսեր սարքեին՝ պիտի նեղվեր: Քայլում է իր մեծ մտքերի հետ և ոչ ոք նրան չի խանգարում:

Հայրը սթափվում էր երազներից, ինքն իրեն խոսք տալիս այլևս չզբաղվել այդպիսի պղպղջակներով և իր ինժեներական երևակայությունն օգտագործել զանազան մեխանիզմներ գծագրելիս: Նույնիսկ ծիծաղում էր ինքն իր

վրա, որ կուլ է գնում ծնողի սովորական փառասիրությանը: Այդպիսի պահերին նրա որդին դառնում էր մի շարքային ինժեներ, միջակ գյուղատնտես, աստղադիտարանի անհայտ աշխատակից: Թող նա մեծ մարդ չդառնա, բայց լինի ազնիվ, ոչ մեկին չսպառնա հացից զրկել: Հետո որդուն պատկերացնում էր երեք տարեկան: Հեծանիվ էր քշում: Ինքն անպայման կգնի ամենալավ հեծանիվը նրա համար: Որդին կդառնա յոթ տարեկան, դպրոց կգնա: Երեք-չորս տարեկան հասակում կսովորեցնի կարդալ: Թող գրելը մի քիչ ուշ սովորի: Շախմատ կառնի: Հինգ տարեկանում որդին կարող է առաջին քայլերն անել: Տասում այնքան լավ կխաղա, որ առանց նավակի իրեն կհաղթի: Մարզիչները կգուշակեն մեծ ապագա:

Դարձյալ ծայր էր առնում երազանքը, բայց այս անգամ իրական հողի վրա: Իսկ մանչուկն այս ամենին անտեղյակ՝ ուտել էր ուզում: Երբ լողացնում էին՝ բերանն էր առնում տատիկի սմքած, կոշտացած ձեռքը և ծծում: Շատ էր սոված: Մայրը հիվանդ էր, կուրծքը քարացել էր և թարախակալում էր: Սկսեցին թեյ տալ: Հերթը հասավ խտացրած կաթին: Գոլ ջրի մեջ բացում էին ու տալիս: Մանչուկն իր հետ աշխարհ բերած երեք կիլոգրամին ոչինչ չէր ավելացնում: Բայց ոչ մեկի մտքով չէր անցնում, թե կմեռնի այս երեխան: Բժիշկները հիշեցրին: «Դուք կսպանեք նրան, - ասաց մի ծեր բժիշկ, - պետք է տեղափոխել հիվանդանոց»: Նույն օրը, և՛ մայրը, և՛ նորածինը պառկած էին հիվանդանոցային մահճակալներին, միայն թե տարբեր հիվանդանոցներում: Մայրը չգիտեր, որ իր բախտին է արժանացել նաև երեխան. չէին ասում, որ նա ավելի չհուզվեր, և ճիշտ էին վարվում, որովհետև երեխան սկսել էր աճել: Բայց մի օր էլ… թունավոր լուծը փոքրիկին դարձրեց մեղրամոմե տիկնիկ փոքրիկ դագաղի մեջ: Այդ բախտին

արժանացան ևս քսան երեխա։ «Վարակն ի՞նչ իրավունք ունի թափանցելու այս պատերից ներս,- բժիշկների վրա գոռգոռում էր հայրը։ -Ո՞ւմ մեղքով եղավ։ Ես հազար դատավոր էլ լինեմ, չեմ կարող գտնել մեղավորին»։ Եվ հուսահատված ձեռքը թափ տվեց…

Մահվան թափորը տխուր քայլերով մոտեցավ փոքրիկ շիրմափոսին։ Լալիս էր հայրը։ Արցունքը խառնվում էր նրա մտքերին, որոնք այս անգամ սկսվում էին «եթե»-ով։ Ի՜նչ մարդ կդառնար մանչուկը, եթե… Հեծանիվ կնստեր և ծիծաղելով կիջներ իրենց փողոցն ի վար… Դպրոցում կօգներ ընկերներին… Մի օր էլ կխախտեր ժամանակին տուն գալու սովորությունը, մինչև ուշ գիշեր մի աղջկա հետ… Եվ ամեն «եթե»-ն արցունքի շիթ էր դառնում, հոսում երիտասարդ հոր այտերով։

- Թող ոչ ոք չասի, որ իմ բալիկը դեռ փոքր էր,- մեռելահացին հեկեկալով ասաց որդեկորույս մայրը, որին ժամանակից շուտ տուն էին բերել հիվանդանոցից՝ վերջին անգամ իր բալիկի սառած աչքերը տաք արցունքով թրջելու համար։

Ու շուրթից-շուրթ մի քանի ձևով կրկնվեց այն միտքը, որ քարի փոքրը չի մեծանում, երեխայի փոքրը մեծանում է։ Հետո սկսեցին կարծիքներ հայտնել, թե ինչ կարելի էր անել երեխային փրկելու համար։ Եթե մայրն իմանար՝ հիվանդ-հիվանդ կգնար նրան խնամելու։ Կարելի էր ստնտու կին գտնել։ Կարելի էր այծի կաթ ճարել, այծի կաթը փոխարինում է մայրական կաթին։ Զուր չէ, որ հեքիաթներում մանուկ արքայազներ է կերակրել այծը։ Կարելի էր… Բայց հիմա ուշ է, շատ ուշ։ Եվ որդեկորույս հայրը մտածեց, որ ոչ ոք ոչինչ չի արել երեխային փրկելու համար։ Ինքը նույնպես։ Ճիշտ է, ընդունելության բոլոր օրերին, բոլորից շուտ լինում էր

հիվանդանոցում, մի-մի շոկոլադ էր տալիս բուժքույրերին, որպեսզի լավ նայեին որդուն, բայց դա ի՞նչ էր: Հիմարություն: Հարկավոր էր ընդհանրապես հիվանդանոց չտանել: Դեղը մայրական կաթն էր, որ կարելի էր հենց առաջին օրվանից ճարել:

Հետո հիշեց, թե ինչպես էր մի ծննդատնից մյուսը վազում: Իմացել էր, որ փոքրիկը վատ վիճակում է և մտածել էր, որ մայրական կաթը նրան ուժ կտա դիմանալու: «Դուք կարող եք երեխայիս փրկել, մեռնում է»,- լացակումած ասում էր բուժքույրերին, նրանց խնդրելով, որ որևէ ծննդկանից մի հարյուր գրամ կաթ բերեն: Փողով: Ինքը շատ փող կտա: Քույրերը լսում էին նրան, ոմանք կարեկցում էին, ոմանք չոր-չոր ասում, որ ոչ մի մայր իր երեխայի բերանից կաթը չի կտրի ու վաճառի: Մեկն էլ թափանցիկ ակնարկով հասկացրեց, որ նա այդպես խեղճացած տեսք ընդունելով ուզում է ձրի կաթ ձեռք բերել: Ինքը վիրավորվեց, բայց չկոպտեց նրան, որովհետև շատ էր ուզում անպայման լիքը ձեռքով նստել տաքսի և սլանալ որդու մոտ: Այնուամենայնիվ գտնվեց մի բուժքույր, որ նրան մի շիշ կաթ տվեց: Շշերը փոխանակեցին, ինքը տվեց դատարկը և վերցրեց լիքը: Տաքսու մեջ նկատեց, որ շտապելուց ահագին թափել է կաթը: Վշտացավ. «Ինչ դժվարությամբ ճարեցի և գրողի բաժին դարձրի: Ես դառնայի գրողի բաժին»: Ու նայեց կիսատ շշին: Մայրական կաթ չէր, այլ փոխարինիչ, որից, պարզ է, տալիս էին որդուն այնտեղ, հիվանդանոցում:

Առավոտյան նա հիվանդանոց էր շտապում իսկական մայրական կաթով: Բայց ուշ էր: Նրան հայտնեցին, որ գիշերը, ժամը երկուսին, մահացել է երեխան: Դարձյալ սխալվեց: Դարձյալ հավատում էր, որ նա մի կերպ դուրս կպրծներ մահվան ճանկերից: Ինչո՞ւ, ինչո՞ւ գիշերը չմնաց

հիվանդանոցում: Կհսկեր, որ սրսկումը ճիշտ անեին, լվացումն այնքան անգամ կրկնեին, մինչև որ երեխայի ստամոքսից մաքուր ջուր թափվեր:

- Այս երեխան մեռնելու համար չէր ծնվել,- մռայլ մտքերն ընդհատեց հուղարկավորներից մեկը: -Դու ես մեղավոր, - ասաց նրան: -Մայրը վիրաբուժականում էր, տատիկը ծեր է, չէր կարող խնամել, դու արձակուրդդ կվերցնեիր և կպահեիր, մինչև մայրը դուրս կգրվեր:

- Մեղավոր եմ,- խոստովանեց հայրը: -Եթե իմանայի…

Եվ հարազատների ուղեղից կառչեց այն հարցը, թե ով է մեղավոր, բոլորը բոլորին մեղավոր էին համարում և առաջին հերթին՝ ամեն մեկն իրեն:

Մինչև վտանգը չի գալիս, չենք զգում նրա մեծությունը: Եվ չենք հավատում, որ կգա: Հայրը հանկարծ պատկերացրեց, որ որդու փոխարեն մեռածը աշխարհն է: Ատոմային պատերազմ է եղել և կործանվել է աշխարհը, մնացել են հատ ու կենտ մարդիկ, որ քննարկում են, թե ում մեղքով եղավ: Բայց եղել է, և հատ ու կենտ մարդիկ ամաչում են. «Մենք անտեր թողեցինք աշխարհը», «Մենք կարող էինք փրկել, եթե իմանայինք»: Խորհում են՝ ինչ կարող էին անել, որ չարեցին: Եվ հազար ու մի հնարավորություն էին գտնում: Բայց, ավաղ, աշխարհի դիակի մոտ կանգնած:

«Ես միայն իմ վիշտն եմ սգում,- խորհեց հայրը: -Մենք միայն մեր վիշտն ենք զգում: Աշխարհը կարծես ուրիշինն է: Ուրիշի հարազատին մեռած տեսնելիս ես շատ-շատ ափսոսացել եմ միայն: Հիմա սիրտս կարծես դանակ են խրել, և արյուն եմ լալիս»:

Նա անհարմար զգաց, որ արյուն չի լացել ուրիշների համար: Անհարմար զգաց նաև այն բանի համար, որ աշխարհը մթնել էր իր գլխին և մինչև այս վայրկյանը ուրիշ ոչ

մի բանի մասին չէր մտածում: Միլիոնավոր մանուկներ կմեռնեն, եթե ատոմային պատերազմ լինի: Արդեն բլբլացող, հեծանիվ քշող երեխաներ: Շախմատ խաղացող, առաջին ոտանավորները գրող երեխաներ: Մեկ օրում աճող և բերք տվող բույսերի մասին երազող երեխաներ: Արժի նրանց կյանքի համար պայքարի ելնել: Բայց եթե բոլորը տարբեր մտքերով խաղաղության համար պայքար մղեն, խաղաղությունից բան չի մնա: Պետք է գտնել այն մեծ միտքը, այն միակ խոսքը, որ բոլորինը լինի: Ինչպես արևը, ինչպես հողը, ինչպես մահը:

Նա այս ամենն ասաց նաև բարձրաձայն, երբ բաժակ վերցրեց շնորհակալություն հայտնելու նրանց, ովքեր եկել էին իր վիշտը կիսելու:

- Իր դարդը թողած՝ աշխարհի դարդն է լալիս,- ասաց հուղարկավորներից մեկը, երբ արդեն փողոց էին դուրս եկել:

- Հարբած էր,- խոսակցությանը խառնվեց երկրորդը: - Չտեսա՞ք ինչքան էր խմում: Կարծես մեռելատերն ինքը չէր:

- Գեղեցիկ խոսեց,- նկատեց երրորդը: -Գեղեցիկ, բայց ոչ պատշաճ:

Եվ միմյանց հրաժեշտ տալով՝ անտարբեր հեռացան:

ՀՐԵՂԵՆ ՁԻԵՐ

Գլխահակ քայլում են ձիերը կոպերիս տակով, հոգնած ձիեր են, նիհար, ոտքերը խարխլված հենասյուներ են և ուր որ է փուլ կգան: Նրանց նայելիս չես կարող պատկերացնել, որ մի ժամանակ նժույգներ են եղել, սմբակներով այնպես են մրճահարել սալաքարերին, որ կայծեր են ժայթքել: Տխուր ձիեր են, խեղճ ձիեր, գնում են ասես դեպի գերեզման:

Պատերազմից փրկվել են մի կերպ, բայց մահը շնչավոր արարածներին հետապնդում է ոչ միայն կռվի դաշտում: Պիտի մեռնեն նրանք, թեև արդեն երկու տարի է, ինչ ոչ մի գնդակ չի սպառնում ծակել նրանց կողերը: Եվ մեռել են վաղուց, բայց շարունակում են քայլել կոպերիս տակով, իմ հուշերի մեջ: Մենք միասին էինք նայում նրանց, ես ու իմ ընկերը, որ ինձ պես պատերազմից վերադարձել էր երկու վերք ստացած՝ թևին և ոտքին: Մենք կանգնած էինք գետի ափին, երբ այդ ձիերին բերեցին ջրելու: Յոթն էին, յոթն էլ կարմիր:

- Կարմիրը կրակի գույնն է, Հովիկ,- ասացի ընկերոջս, բայց սրանք ինչքան նման չեն կրակի:

Հովիկը տխուր նայում էր ձիերին, նրանք հազիվհազ էին ջուրը կուլ տալիս, ինչպես մահամերձը մահվան անկողնում:

- Մենք կռվի դաշտում այսպիսիններին գնդակահարում էինք,- ասաց նա: -Երբ այլևս չէին կարողանում զինամթերք տեղափոխել, իրենց իսկ բերած գնդակներով վերջ էինք տալիս նրանց: Բայց ես ոչ մեկին չեմ գնդակահարել: Չէ, գնդակը չէի ափսոսում: Պատահում էր, որ լուցկի չէինք ունենում: Ես փամփուշտի միջից դատարկում էի վառոդը, հետո մետաղալարն այնքան էի քսում ծառաբնին, որ գրեթե շիկանում էր: Մոտեցնում էի վառոդին, որը բռնկվում էր և մեզ

համար դառնում լուցկի: Ամենաքիչը մի հարյուր փամփուշտ այդպես փչացրած կլինեմ: Բայց ձիերին խղճում էի:

Ես ուզեցի ասել, որ պետք էր խղճալ նաև նրանց, ովքեր այս ձիերի պես ուժասպառ՝ փամփուշտ էին պատրաստում, բայց հիշեցի, որ ռազմաճակատում որտե՞ղ չէին փչանում փամփուշտները՝ տասնյակներով, հարյուրներով, հազարներով:

- Ձիերի վրա կրակել չէի կարողանում: -Շարունակեց Հովիկը: -Կրակողներ շատ կային: Պատերազմը մարդկանց մեջ արթնացնում է սպանելու կիրք: Դա այնպես բնական է թվում, կարծես ծնվել ես միայն սպանելու համար: Դե ինչ եմ քեզ բացատրում, դու նույնպես զինվոր ես եղել:

Հետո Հովիկը տրտնջաց, որ գլուխը ցավում է: Նրա գլուխը միշտ ցավում էր, երբ խոսում էինք պատերազմի մասին: Պարզ է, չէր ուզում խորանալ անցած դեպքերի մեջ: Մենք բաժանվեցինք, պայմանավորվելով մի շաբաթ հետո նորից հանդիպել: Անցել է երկու շաբաթ, բայց նա չկա: Նրա փոխարեն եկավ սիրած աղջիկը, որ բավականին տգեղ արարած էր՝ հաստ շուրթերով, բայց նայվածքը էության խորքից բխող իմաստուն խաղաղությամբ ճառագած: Ինչպե՜ս է սիրում Հովիկը սրան: Ասում է՝ ուզում եմ քաղաքի բոլոր գեղեցկուհիներն ինձ սիրահարվեն, որպեսզի ապացուցեմ, թե ինչքան հավատարիմ եմ իմ «Մարգարիտին»: Աղջկա անունը Մարգարիտ չէր, նա նկատի ուներ Սունդուկյանի հերոսուհուն: Գիտեր, որ տգեղ է, բայց իսկապես չէր դավաճանի նրան, եթե նույնիսկ քաղաքի գեղեցկուհիները նրան փորձության ենթարկեին:

- Հովիկը բանտում է,- ասաց իմ հյուրը: - Եկել եմ Ձեր օգնությունը խնդրելու: Նա Ձեզ լսում է:

- Ի՞նչ է պատահել: -Տագնապեցի ես:

- Ինչ-որ տղաներ կռվել են, Հովիկը մեջ է ընկել բաժանելու: Տղաներից մեկը սպանվել է: Առնվազն սպանության մեղսակից են համարում:

- Ափսոս, ոչ մի ծանոթ իրավաբան չունեմ: - Հառաչանքի պես դուրս թռավ կրծքիցս: -Հովիկը մարդ չի սպանի:

- Ծանոթ իրավաբան պետք չէ: Պիտի համոզել Հովիկին, որ նա ապացուցի իր անմեղությունը: Ես համոզել չկարողացա: Նա ցուցմունք է տվել, որ ինքն, այո, սպանության մեղսակից է: Զուր տեղը կորչում է Ձեր ընկերը: Խնդրում եմ բանտ գնացեք և հենց այսօր էլ խոսեք նրա հետ: Գուցե Դուք ազդեք նրա վրա:

Ա՛յ քեզ բան, մարդը հանցանք չի կատարել և ուզում է բանտարկվել: Մի՞թե հրապուրիչ է կալանավորի համազգեստը՝ իր անվանը փոխարինող համարով: Հովիկը, որքան գիտեմ, գրող լինելու հակում չունի, որպեսզի կալանավորների մասին վեպ գրելու համար ցանկանա նրանց հետ ապրել: Թե՞ այնքան է վարժվել զինվորական հրամաններին, որ պատերազմը վերջանալուց երկու տարի հետո էլ յոլա չի գնում առանց հրամանների: Եթե այդպես է՝ էլ ինչո՞ւ էր զորացրվում, կմնար մշտական ծառայության: Իսկական հանելուկ: Եթե նա նույնիսկ իմ ընկերը չլիներ, դարձյալ ես կուզենայի հանդիպել նրա հետ՝ առեղծվածը լուծելու համար:

- Հովիկ, բայց դու ախր սպանությանը չես մասնակցել: - Այսօրվա պես հիշում եմ մեր զրույցը:

- Չեմ մասնակցել: Այդ ճիշտ է: Միայն քեզ եմ ասում: «Մարգարիտին» չասացի, դե կին է, չի դիմանա: Թող մտածի, որ իսկապես մեղսակից եմ, և դրա համար էլ մեղքս քավում եմ: Մի երկու տարի կտան:

- Գուցե չորս, գուցե հինգ, գուցե տաս: Այդքան տարիներ իզուր պիտի կորցնես:

- Չէ, այդքան չեն տա: Մեղքի մի չնչին բաժին եմ վերցնում վրաս:

- Բայց ինչո՞ւ, ախր ինչո՞ւ:

- Պետք է: -Հովիկը նայեց աչքերիս մեջ: Նրա աչքերում ինչ-որ տարօրինակ փայլ կար, խոսքերում՝ ինքնակամ պատժվելու մոլուցք: Մենք մտերմացել էինք պատերազմից հետո: Աստված իմ, մի՞թե երկու տարին չնչին ժամանակամիջոց է մարդուն ճանաչելու համար, այն էլ մի ընկերոջ, որի հետ հաճախ ես հանդիպում, նստում ես մի սեղանի շուրջ ու խմում այնքան, որ ուղեղդ մշուշվում է: Նա էլ է լինում մշուշված ուղեղով: Ասում են՝ հարբած մարդն անկեղծ է լինում: Ինձ թվում էր նա անկեղծորեն բացում էր իր սիրտն իմ առաջ: Եթե այդպես է՝ ուրեմն ես համբակի մեկն եմ եղել և չեմ կարողացել թափանցել նրա մտածողության ծալքերը, մնացել եմ արտաքին շերտի վրա: Դեռ պարծենում եմ, որ սովորում եմ Երևանի պետական համալսարանի հոգեբանության բաժնում: «Հինգ» եմ ստանում, այնինչ «երկուսի» եմ արժանի: Հովիկը ոչ մի տեղ չի սովորում, բայց ինձ ճանաչում է հինգ մատի պես: Գիտե, որ եթե ինձ որևէ գաղտնիք վստահեն, ես ոչ մեկին չեմ ասի, կպահեմ և սպանության կեղծ մեղսակից լինելու իր գաղտնիքը: Բայց ի՞նչ գաղտնիք է, ինչի՞ համար է, շուտ արա, ասա:

- Ինչո՞ւ, ինչո՞ւ է պետք, որ մեղքի թեկուզ չնչին մաս վերցնես վրադ:

-Դա մի բառով չի ասվի: Այնպես որ պիտի համբերես: Սկզբի համար ասեմ, որ ես իսկապես մեղավոր եմ, արժե, որ կրեմ բանտարկյալի թվահամարը:

Լռեց: Երևի մտածում էր ինչից սկսի: Հետո ծխախոտի մի գլանակ վառեց, որ նրան այսօր բերել էր «Մարգարիտը»:

-Ռազմաճակատ ընկնելուց առաջ ներքին զորքերում էի ծառայում: - Արդեն գտել էր սկիզբը: - Ամեն օր, օրը երկու անգամ վեցական ժամով ժամապահ էի կանգնում: Մի ռազմական գործարան էինք հսկում: Պահակակետերը հեռու էին՝ մի ժամ գնալը, մի ժամ գալը: Միայն գնալ-գալու վրա չորս ժամ էր կորչում: Ուրեմն, օրվա չորս ժամից տասնվեցը մենք ոտքի վրա էինք: Մնացած ութ ժամից չորսն էլ հատկացվում էր ռազմական պարապմունքներին: Երկու-երեք ժամ էինք քնում, այն էլ ոչ թե մեկ օր, մեկ շաբաթ, թեկուզ մեկ ամիս: Մի ամբողջ տարի այդպես տևեց: Մի ամբողջ տարի մեր քունը քնի նման չէր: Ի՞նչ քուն, երբ քնած ժամանակ լսում ես, թե ինչ է ասում ընկերդ, որտեղ է ճիշտ կամ սխալ ասում: Իսկական մղձավանջ, երազում էինք այն օրը, երբ մեզ ռազմաճակատ կտանեն և ճանապարհին կուշտ կքնենք: Բայց կարծես մեր մասին մոռացել էին: Գոնե կուշտ փորով հաց ուտեինք: Չէ, քիչ չէին տալիս, հիմա ես այդքան չեմ ուտում, բայց աչքերս ծակվել էր: Ուտելուց հետո մեզ ավելի քաղցած էինք զգում, քան ուտելուց առաջ: Պահակակետերից մեկը փոքի մոտ էր: Բանվորները մեզ մեկ-մեկ հաց էին տալիս, մի-մի տաք բոքոն: Ձմռանը մեր մրսած, ամռանը մեր կեղտոտ մատները կոխում էինք տաք հացի մեջ և մեր բերանը դադարում էր բերան լինելուց, դառնում էր խժռող մեքենա: Փորներս ցավում էր, բայց էլի ուտել էինք ուզում: Ես չէի պատկերացնում, թե երբևէ կկշտանամ: Երազում էի մեր տան լավաշ հացը, որ պանրով բրդուճ էի անում և ուտում, երբ կանգնած էի շարքում, երբ փորսող էի տալիս սերժանտի խիստ հայացքի տակ, երբ գործարանի պարսպի տակ առաջ ու ետ էի քայլում ժամապահի ծանր քայլվածքով: Ամոթ ինձ, իմ հայրենիքից

միայն այդ լավաշ հացն էր աչքիս գալիս: Շատ ծանր օրեր էին, շատ ծանր: Մեր տղաներից մեկն ինձ ասում էր՝ դու չես դիմանա: Բայց ինքը չդիմացավ: Հանել էր սվինը, հրացանի փողը դեմ տվել քունքին և բութ մատով սեղմել ձգանը: Ես գերեզմանը փորեցի: Սակայն այդ դժվարությունների մեջ մի հեշտ բան կար. պարապմունքները թունավոր գազերի վերաբերյալ: Ես միջնակարգ կրթություն ունեի և ինձ «քիմիկոս» էին դարձրել: Քիմիական պատերազմի դեպքում ես պիտի որոշեի վարակված տարածքները: Հոտառությունն այստեղ շատ կարևոր է: Բայց ես հոտ չեմ առնում: Սերժանտը հոտոտել էր տալիս տարբեր գազերով լցված սրվակները և հարցնում՝ ի՞նչ գազ է: Ես անսխալ պատասխանում էի: Շատ բութ պիտի լիներ մարդ, որ չկարողանար նույն սրվակները հազար անգամ տեսնելուց հետո գույնից որոշել նրանց պարունակությունը: Սերժանտն ինձ չէր սիրում, որովհետև ես միջնակարգ կրթություն ունեի, իսկ ինքը չորրորդ դասարանը կիսատ էր թողել: Առիթը բաց չէր թողնում ինձ վիրավորելու: Ուղարկում էր զուգարանները մաքրելու: Նրան հակառակ, մեր լեյտենանտը շատ էր սիրում ինձ, մտերմաբար կիսվում էր ինչպես հավասարի հետ:

Դու ուզում ես գլխավորն իմանալ, իսկ ես ընկել եմ սար ու ձոր, ավելորդ մանրամասներ եմ պատմում: Բայց դրանք ավելորդ մանրամասներ չեն, գլխավոր են ինձ համար: Ես այս օրերին դրանք վերհիշելով ուզում եմ պարզել՝ ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ես, իմ մեջ մարդկային սկի՞զբն է հիմնականը, թե՞ անասնականը: Մարդկայի՞ն էր, թե՞ անասնական այն, որ ես հոտ չեի առնում, բայց չէի խոստովանում իմ թերությունը, որպեսզի ահավոր դժվարության մեջ մի հեշտ բան ունենամ: Իսկ եթե իսկապես պատերազմը փոխվեր քիմիականի, քանի մարդու մահվան պատճառ կդառնայի:

Այսպես անցնում էին օրերը: Մեր քիմիական խմբի տղաները մեկ-մեկ էլ գնում էին պահեստից մեր վաշտի հացը ստանալու: Ով գնում էր կարողանում էր մեկ-երկու բոքոն թռցնել պահեստից: Ինձ էլ էին բաժին հանում թռցրածից: Հաց ստանալու հերթն ինձ հասավ: Ինձ թվաց պահեստապետն ինձ չի նայում, մի բոքոն վերցրի հացի դարակից և գցեցի մեր պարկը:

- Երիտասարդ, բոքոնը վերադարձրեք իր տեղը: - Պահեստապետի ձայնը գրգռված չէր, և ես ենթադրեցի, թե բանն այդպես էլ վերջացավ: Բայց երեկոյան ինձ իր մոտ կանչեց մեր լեյտենանտը:

- Ես քեզնից չէի սպասում:

Ուրիշ ոչինչ չասաց, միայն երեք բառ՝ «Ես քեզնից չէի սպասում»: Երանի ապտակեր: Դա ավելի թեթև կլիներ, քան այդ երեք բառը: Ես երեք օր չէի կարողանում նայել լեյտենանտին, երևի երեք տարի էլ չկարողանայի, եթե ինձ վիճակվեր այդքան ժամանակ մնալ նրա մոտ: Բարեբախտաբար, մեզ ռազմաճակատ ուղարկելու հրաման ստացվեց, և ես բաժանվեցի իմ սիրելի լեյտենանտից:

Ճանապարհին մի լավ քնեցինք: Դրանից հետո միայն հասկացանք, որ այնուամենայնիվ ավելի դժվար է մեռնելը ռազմաճակատում: Մահվան սարսափից պարտված՝ ոմանք ուղղակի խուժանություն էին անում, կայարաններում տերերի ձեռքից խլում էին վաճառքի հանված ձմերուկ ու խնձոր, եփած հավ ու հաց, ինչ որ պատահեր: Ես այդքան հանդուգն չէի: Եթե փող ունենայի… Բայց փող որտեղի՞ց: Վագոնի աստիճաններին կանգնած կինն ուներ: Նրա պայուսակը պետք է որ փողով լիքը լիներ: Գնացքը խելահեղ սլանում էր առաջ: Իմ մութ կրքերի պես: Ինչ կլինի, եթե այս կնոջ ձեռքից խլեմ պայուսակը, իսկ իրեն հրեմ ներքև: Ոչ եղել է, ոչ կա: Ինչ

կլիներ, եթե շպրտեմ նրան ցած ու տիրանամ այս տռզած պայուսակին: Ամեն կայարանում կիջնեմ և եփած հավ կգնեմ: Մարդավարի, գինը վճարելով մինչև վերջին կոպեկը: Իսկ եթե կինը ճչա: Եթե տեսնող լինի, որ ես նրան ցած գլորեցի աստիճաններից: Ոչ ոք չկա, ո՞վ պիտի տեսնի: Ճիչը կլսեն, ճիչը: Աչքեր չկան, բայց ականջներ կլինեն, ճիչը վագոնի անիվների աղմուկի միջից կգնա և կհասնի նրանց: Վագոնի փակված դռներն այնքան էլ մեծ արգելք չեն մահվան սարսափելի ճիչի դեմ: Իմ հոգին էլ է ճչում: Աչքերս չեն տեսնում, բայց նրանք պետք է որ վառվելիս լինեն տենդագին: Կնոջ աչքերն էլ են վառվում: Ես հետո հասկացա, որ նրա աչքերը վառվում էին վավաշոտ փայլով, իսկ ինձ թվում էր, թե նա հասկացել է իմ մտադրությունը, որովհետև աչքերս ագահորեն գամվում էին պայուսակին, ինչևէ, այդ կինն ապրեց, գուցե երբեք էլ գլխի չընկնելով, որ իր կյանքը մազից էր կախված, այն սևաչ երիտասարդն ամենևին էլ մտադիր չէր իր մարմինը վայելել: Իմ վախի՞ շնորհիվ ապրեց, թե՞ մարդասիրության: Ո՞րն էր ավելի ուժեղ: Վախը, անասնական վախը: Ինչքան քննում եմ իմ այն օրերի հոգեվիճակը, այդ պահի իմ ապրումները, գալիս եմ այն համոզման, որ միայն անասնական վախը կանխեց մի մարդասպանություն:

-Ուրեմն դու ուզում ես կրել այդ մեղքերիդ պատի՞ժը: Շատ էլ հիմար մի կարծիր քննիչներին: Հեշտությամբ գլխի կընկնեն, որ դու կռվող կողմերին չես ճանաչում: Փառք աստծո, տուժածն էլ, որ սկզբում կարծում էին, թե սպանված է, հիմա հիվանդանոցում հստակ պատասխան է տալիս քննիչին:

- Բան ասացիր: Իհարկե, հեշտ է գլխի ընկնելը: Բայց իմ քննիչը սրտացավ չէ:

Հետո, հիշում եմ, ես Հովիկին ասացի, որ եթե աշխարհի բոլոր մարդիկ նրա պես վարվեն, ապա թիվը հազար անգամ ավելացվելիս էլ, դարձյալ կլինեն այստեղ ընկնել չկարողացողները: Ո՞վ այդպիսի մեղքեր չի գործել:

-Ուզում ես ասել, որ ես տիպական չե՞մ: Ես քեզ կասեմ, որ այնքան ինքնատիպ չեմ: Միջնադարում անապատ էին գնում ճգնելու, տանջվում էին սոված ու ծարավ, որ մեղքերից թեթևանան: Խիղճը որդ է, խրվում է սրտիդ մեջ, ուտում, ցավեցնում, կեղեքում: Երեք տարի շարունակ զգում եմ այդ ցավը: Բավական է:

-Բայց դու ավելի մեծ մեղքեր ես գործել: Սպանել ես: Գերմանացի զինվորները նույնպես մարդ էին:

-Դա ուրիշ է: Այն կինն ինձ սպանելու միտք չուներ: Ես ձիերին խղճում էի, չէի գնդակահարում: Բայց այն կնոջը…

Մենք երկար առարկում էինք իրար, բայց դա բանավեճ չէր, որովհետև ես հետապնդում էի գործնական նպատակ՝ համոզել նրան, որ պարզի թյուրիմացությունը: Նա չէր համոզվում:

- Հիշու՞մ ես, չէ՞, այն յոթ ձիերին: - Նիհար էին, հոգնած, ուժասպառ, ձիու տեսք չունեին: Մարդուց վերցրու իր մեղքը քավելու ձգտումը, խիղճը, բարությունը, ազնվությունը, մարդու տեսք չի ունենա: Էլ չեմ ուզում ինձ զգալ մարդու խրտվիլակ:

- Բայց դու մարդ ես, Հովիկ, ոչ թե մարդու խրտվիլակ: Դու կարողանում ես սիրել մի աղջկա, որին… Ներիր, ես չեմ ուզում ասել, որ նա վատն է: Բայց դու նրան… Մի տեսակ…Կարեկցանքից…

Հովիկը նեղսրտում էր, որ չեմ զգում իրեն:

- Դու հավատո՞ւմ ես հեքիաթների հրեղեն ձիերին: - Նրա ածխի պես սև աչքերը բոցով բռնկվեցին: - Հրեղեն են,

սուտ չեն: Նրանք ասես երկնքից երկիր բերվող պրոմեթևսյան կրակներ են, որ տիտանն աստվածներից գողացել էր մարդկանց նվիրելու համար: Մի տեղ նրանք ուժ են տալիս ոգուն, որ խարույկի վրա ողջակիզվելիս անգամ բացականչի՝ այնուամենայնիվ երկիրը պտտվում է: Մի այլ տեղ դառնում են հոգու անդունդները սուզվելու շեքսպիրյան սխրանք: Հազար ու մի տեղ՝ հազար ու մի խիզախում: Իսկ ինձ մոտ… իսկ ինձ մոտ… Ներիր, որ պաթետիկ է ստացվում, մեղքն իմը չէ, հրեղեն ձիերը բանաստեղծություն են:

- Իսկ քեզ մոտ նրանք դառնում են հոգին մաքրելու մոլուցք:

- Չէ, մոլուցք չէ: -Հովիկը ձեռքը դրեց ուսիս: -Ես էլ գիտեմ՝ աշխարհում շատ շատերը կան, որոնք խղճի խայթ չեն զգում իրենց մեղքերի համար: Ես զգում եմ: Շատ խորն եմ զգում: Նույնիսկ ուրիշների մեղքերի համար: Ասում եմ, խղճում ու սիրում եմ այն դատավորին, որն ինձ պիտի դատի: Նա գուցե ինձնից ավելի շատ մեղքեր է գործել, բայց առանց խղճի խայթի կխոսի ազնվության անունից: Ասում եմ, խղճում ու սիրում բոլոր նրանց, ովքեր ներկա կլինեն դատին: Իհարկե, նրանցից շատերին կարելի էր և պետք էր դատել: Ես նրանցից մեկն եմ: Ատում, խղճում, սիրում եմ և ինձ: Մենք բոլորս նույն նյութից ենք: Նրանց մեղքն իմն է, իմը՝ նրանցը: Ամբողջ մարդկության ախտերն եմ զգում սրտիս մեջ: Զգում եմ իմ բոլոր նյարդերով: Եվ դա այն պատճառով, որ ես էլ ախտավոր եմ: Խիղճս մաքուր լիներ՝ գուցե ոչինչ չզգայի, բայց որ զգում եմ՝ չպե՞տք է քավեմ մեղքս: Այլապես իմ մեջ կաղարտվի հրեղեն ձիերի մաքրությունը: Ես մարդ չեմ լինի:

- Դու հիմա էլ Մարդ ես մեծատառով:

Իմ այս խոսքը նման էր անհույս կրակոցի, որ արձակեցի պարտվելուց առաջ:

Ես բանտից դուրս եկա իմ բոլոր մեղքերով ծանրացած: Քիչ կլիներ ինձ գնդակահարելն անգամ: Բայց ես չմնացի բանտում: Ես դուրս եկա և խոսեցի դատավորի հետ: Կյանքումս առաջին անգամ գաղտնապահ չեղա: Դատավորն ինձ չհավատաց: Կամ ցույց տվեց, որ չի հավատում, զգոն է, թույլ չի տա, որ իր քթից բռնած ման ածեն՝ զանազան ստեր հորինելով: Ինձ համարյա դուրս վռնդեց:

Բայց, ըստ երևույթին, չկարողացավ իմ ասածը գլխից վռնդել: Հովիկը երկու ամիս հետո ազատվեց նախնական կալանքից և եկավ տուն: «Մարգարիտն» ամուսնացել էր մի տարեց մարդու հետ, որը կնոջից ալիմենտ էր ստանում երկու երեխաների համար:

- Նա մեղք չունի, որ չսպասեց ինձ: - Արդարացրեց Հովիկը նրան: -Ի՞նչ իմանար, որ ինձ տասը տարի չեն տա, այլ կազատեն: Թող երջանիկ լինի:

Ինձ զուր էր թվում, թե նա չի սիրում «Մարգարիտին», նույնիսկ ուրախ է, որ նա ամուսնացել է: Ծոցագրպանում, բլոկնոտի մեջ, պահում էր նրա նկարը և մի անգամ տեսա, թե ինչպես էր նայում թախծոտ ու խոսուն աչքերին և հառաչում: Սուտ են ասում, թե կարեկցանքը սիրո չի վերածվում:

Հովիկը գիտեր, որ ես դատավորին ամեն ինչ պատմել եմ, բայց բարկացած չէր ինձ վրա:

- Երկու ամիս չորս օր նստեցի, դա բավական էր մեղքս քավելու համար: «Մարգարիտի» կորուստն ավելին էր:

Աստված իմ, ինչքան ճիշտ եմ վարվել, որ չեմ լռել: Եթե Հովիկին տային տասը տարի, թեկուզ յոթ, հինգ, չորս, թեկուզ մեկ, նա զղջալու էր իր արածի համար: Թյուրիմացության պատճառով բանտ էր ընկել և նրա մեջ արթնացել էր մեղքերը քավելու ցանկությունը: Չլիներ այդ թյուրիմացությունը՝ նա չէր փորձի կամովին բանտ գնալ: Կտանջվեր իր մեջ այնքան

ժամանակ, մինչև աղոտանային վագոնի կնոջ պայուսակը հափշտակելու հուշերը: Մենք ամենքս ինչքան ենք թաղել այդպիսի հուշեր: Ուրեմն ի՞նչ, նա էլ մեզ պե՞ս էր:

Այս մտքերով լի՝ ես վեր եմ կենում նրա գերեզմանի թարմ հողաթմբից: Նա այնտեղ է, սառն հողի տակ, որին հանձնել ենք յոթ օր առաջ: Ոչ, նա այնտեղ է, բանտի այն նեղ խցիկում, ուր հանդիպեցինք մոտ քսան տարի առաջ, և նա այնպես ոգևորված խոսեց հրեղեն ձիերի մասին: Սո՞ւտ էր դա: Մի գեղեցիկ բռնկո՞ւմ, որ ունենում է հոգին, երբ ուզում է մաքրվել իր իսկ կեղտերից: Բայց անկեղծ էր այդ բռնկումը: Մեծ ներշնչանքի պես անկեղծ: Եվ սուտ չէր, ինչ ասում էր նա:

Հողը թեթև լինի վրադ, իմ հարազա՛տ: Քեզնից այս հողաթումբը մնաց և մեկ էլ մի հավատ իմ սրտում, որ հրեղեն ձիերը ճշմարիտ են: Թեկուզ մեկ մարդ միայն մեկ անգամ նրանց տեսած լինի:

ՄԱՅԿՈՊՅԻ ՎԱՐՈՐԴԸ

Ես աշխարհագրագետ չեմ և ձեզ չեմ կարող ասել, թե Մայկոպը ո՛ր լայնության վրա է գտնվում, միայն գիտեմ, որ նրա եզրով անցնում է Բելորեչենսկ գետը: Ոչ էլ տնտեսագետ կամ ինժեներ եմ, ուստի՝ առանց վախենալու, որ ինձ կմեղադրեք անտարբերության մեջ, կասեմ, որ ինձ չեն հետաքրքրել, թե ինչ ձեռնարկություններ կան այնտեղ: Միայն գիտեմ, որ մայկոպցիները խմում էին ջուր, որն այնքան պղտոր էր, որ լցնում էին մի մեծ ամանի մեջ, մինչև նստվածք էր տալիս, հետո եռացնում էին: Հավանաբար մոտակայքում ինչ-որ տեղ ճահիճներ կային, որովհետև մոծակները մեզ հանգիստ չէին տալիս: Գիշերվա մինչև երեքը սավաններ և սրբիչներ առած հալածում էինք նրանց՝ շատերին դաջելով

պատերին ու առաստաղին: Չգիտեմ՝ մե՞նք էինք հոգնում, թե՞ նրանք, բայց և այնպես իրարից ձեռք էինք քաշում՝ հաստատ համոզված լինելով, որ դա մեր վերջին կռիվը չէր:

Բայց Մայկոպը հիշելիս առաջինն իմ դեմ հառնում է մի վարորդ, որի մասին էլ ուզում եմ պատմել: Եթե նկարիչ լինեի, ձեզ համար կնկարեի նրա դիմագծերը՝ փոքր ինչ կճատ քիթը, երկարավուն այտերը, որոնց վրա կայծկլտում էին շեկ մազերը, երբ նա դառնում էր արևի կողմը, աչքերի կապտությունը, որին ինչ-որ գորշ երանգ էր խառնված… է՛հ, խոսքով չես կարող նկարագրել այնպես, որ տեսնեն: Դրա համար հանճար է պետք: Իսկ միջակ նկարիչը վրձնի մի երկու հարվածով կարող է տեսցնել: Ոչի՛նչ, ես կաշխատեմ ձեզ ցույց տալ մայկոպցի վարորդի ներքինը: Այստեղ արդեն միջակ նկարիչն անզոր է: Իսկ խոսքն ունի շատ հնարավորություններ: Հիմա դուք կասեք, որ ես գրող եմ: Ես ձեզ կարող եմ հեշտությամբ առարկել. ուրեմն ի՞նչ, եթե աշխարհագրագետ, տնտեսագետ կամ նկարիչ չեմ, ուրեմն գրո՞ղ եմ: Չէ, պարզապես մարդ եմ, ով ուզում է պատմել մարդու մասին. այն մասին, որ Մայկոպում ապրում է մի վարորդ, որին մեկը միայն մի անգամ տեսել և տպավորվել է այնքան, որ ցանկանում է ահա ծանոթացնել ձեզ:

Մոռացա ասել, որ երբ անցնում ես Բելորեչինսկ գետը, սարերն են բարձրանում: Դրանց կարելի է և բլուրներ անվանել, որովհետև այնքան էլ բարձր չեն: Ամբողջովին պատված են անտառով: Ես հաճախ էի գնում այդ անտառը հանգստանալու. այստեղ մոծակներ չկային և բավականին զով էր: Մնում էի մինչև երեկո, եթե իհարկե անձրև չէր գալիս: Իսկ անձրևն այստեղ եթե մշտական բնակիչ չէր, գոնե հյուր էր, գալիս էր առանց գիշերն ու ցերեկը հարցնելու: Այդ օրը ես հետս վերցրել էի իմ հյուրընկալի անջրանցիկ վերարկուն և

ուզում էի, որ անպայման անձրև գար: Ես ուզում էի տեսնել անջրանցիկ վերարկու ունենալու առավելությունը, երբ ուրիշները թրջվում են, իսկ ես չոր եմ: Հիմա դուք կասեք, որ դա եսասիրություն է: Ես էլ էի այդպես մտածում, բայց, միևնույն է, չէի կարողանում իմ մեջ խեղդել առավելության այդ զգացումը, ինչպես աղքատ ապրածն է հարստանալիս ցուցադրում իր ունեցածը:

Անձրև եկավ, այն էլ ինչպիսի՜ անձրև, ասես երկնքում ծովեր կային, և մեկը բացել էր ջրարգելակը: Կարճ տևեց իմ փոքրիկ երջանկությունը, որովհետև շատ շուտով համոզվեցի, որ անջրանցիկ վերարկուն ոտքերիս համար չէ: Պետք է շտապել տուն, քանի դեռ թացությունը՝ վերածված ցավի, ոտքերիցս չի բարձրացել փորս: Ավտոբուսի կանգառը հեռու չէ: Ուր որ է ավտոբուսը կերևա ծառերի ետևից, կկանգնի այստեղ մեկ-երկու րոպե, գուցե ավելի քիչ, որովհետև կանգառում միայն ես եմ և ուղղություն կվերցնի դեպի քաղաք: Բայց ավտոբուսը չի երևում: Քաղաքից գալիս են ինչքան ուզես, բայց դեպի քաղաք ոչ մի ավտոմեքենա չի գնում: Արդեն բավականին կանգնել եմ՝ կես ժամ կլինի: Ժամացույցիս եմ նայում՝ հինգ րոպե է անցել: Ուրեմն ամենաշատը հինգ րոպե էլ կսպասեմ: Բայց արդեն երկրորդ կես ժամն անցավ: Ոչ, դարձյալ հինգ րոպե է: Բայց դարձյալ ավտոբուսը չկա: Քաղաքից եկող բեռնատար ավտոմեքենաներից մեկը կանգ է առնում:

- Նստիր,- վարորդը ինձ հրավիրում է խցիկը:

- Բայց դուք դեպի քաղաք չեք գնում:

- Նստիր, դեպի քաղաք եմ գնում: -Եվ շուռ է տալիս բեռնատարը:

- Ուր որ է ավտոբուսը կգա,- ասում եմ ես՝ չշարժվելով տեղիցս: -Բացի դրանից, անջրանցիկ վերարկու ունեմ:

- Իսկ ոտքե՞րդ, չէ՞ որ մարդ շուտ է մրսում ոտքերից: Նստիր, նստիր:

Երևի մարդն ուզում է մի քանի կոպեկ փող աշխատել, ինչո՞ւ նրան չպատճառել այդ բավականությունը: Բեռնատարը հռնդալով առաջ է նետվում, դեպի քաղաք: Արևն արդեն, ճեղքել է ամպերը, բայց բավականին սառն քամի է փչում: Իսկապես կարող էի մրսել ոտքերից, կոշիկներիս մեջ ճողփում է ջուրը: Ներսում բենզինի անտանելի հոտ է: Գլուխս դուրս եմ հանում խցիկից: Եթե տաքսի լիներ՝ ես չէի զգա այդ հոտը: Ոչինչ դիմացիր, ասում եմ ինձ, եթե ուզում ես մարդուն լավություն անել, պիտի նեղես քեզ: Եթե հեշտ լիներ այս աշխարհում որևէ մեկի համար լավ բան անելը, ապա ամենուր, ամեն ժամ կհանդիպեիր հազար ու հազար օգնողների, որոնք առատության եղջյուրից բարիքներ կտեղային վրադ:

Զարմանալի ուժ ունեն մեր խոհերը: Հենց որ այդպես մտածեցի, գլուխս ներս քաշեցի: Թող զգամ բենզինի տհաճ հոտը, չէ՞ որ ես լավություն եմ անում, ուրեմն ինչ-որ բան պիտի զոհաբերեմ: Այդ պահին էր, որ տեսա վարորդի դեմքի շեկ մազերի մանրիկ առկայծումն արևի շողերի տակ:

- Բարեկամ, քանի՞ օրը մեկ ես ածիլվում: - Անցա ես «դու»-ի:

- Շաբաթը երկու անգամ: Ժամանակ չի լինում:

Ժամանակ չունի, բայց բեռնատարը ետ դարձրեց, որպեսզի մի երկու կոպեկ աշխատի: Մի քիչ ավելին կտամ:

- Եթե տեսնեն, որ հսկա բեռնատարով միայն մեկ մարդ ես տեղափոխում, նկատողություն չե՞ն անի: Ահագին բենզին է ծախսվում, դողերն ու շարժիչը մաշվում են:

- Բայց չէ՞ որ ոտքերդ թաց են, կարող ես հիվանդանալ:

Այս արդեն մի քիչ չափազանց է: Ես չեմ սիրում, երբ իրենց մանրիկ նպատակները քողարկում են բարձր մարդասիրական գաղափարների տակ:

- Ի՞նչ ազգից ես,- հարցնում է վարորդը՝ նկատելով, որ ակցենտով եմ խոսում ռուսերեն:

- Հայ եմ:

- Ֆրոնտում մի հայ ընկեր ունեի: Առյուծի սիրտ էր կրծքի տակ: Շատ էլ բախտով էր: Կռվի ամենաթունդ տեղում էր լինում, և գնդակ չէր կպչում նրան: Ես վիրավորվեցի տուն եկա, իսկ նա, չգիտեմ, մինչև վերջ էլ բախտավոր մնա՞ց, թե՞ ոչ: Սարկիս Սարկիսյան: Չես ճանաչի: Գյուղում էր ապրում, դու քաղաքաբնակ ես երևում: Լավ մարդիկ են հայերը:

Ես անսահման շնորհակալ եմ իմ հայրենակցին, որ բարձր է պահել մեր ժողովրդի պատիվն ուրիշների մոտ: Ես այդ հիմա եմ ասում: Իսկ այն ժամանակ ինձ թվաց, թե վարորդը շաղակրատում է այն վարսավիրների նման, որոնք պատրաստ են ամենաքնձռոտ հաճախորդին անգամ աշխարհի ամենալավ մարդը դարձնել, միայն թե սա անհարմար զգա և շատ վճարի: Էհ, թող այդպես լինի, մարդ է, ապրել է ուզում, մտածեցի ես:

- Սա շուկայի փողոցն է, կարծեմ հասանք:

- Այո, այո, ես ապրում եմ այս հինգհարկանի շենքում:

Բացում եմ դրամապանակս, իսկ վարորդը ձեռքս ետ է տանում:

- Պետք չէ, բարեկամս, ես դա հենց այնպես…

Եվ բեռնատարը հռնդալով պոկվում է տեղից:

Ես երկար ժամանակ մեխվել էի իմ տեղում, հիմա արդեն ոչ միայն ականջիս, այլևս սրտիս մեջ հնչում էր վարորդի խոսքը. «Մարդը շուտ է մրսում ոտքերից: Նստիր, նստիր»: Եվ

աչքերիս դեմ բացվում է խցիկի կապույտ դուռը: Ինչպե՞ս չհարցրի նրա անունը, հասցեն:

Այսքանը: Երբ վատ բաներ կմտածեք մարդու և նրա էության մասին, խնդրում եմ, հիշեցեք այդ վարորդին և ձեր հայացքը կպայծառանա: Ներեցեք, որ ձեզ խրատ եմ տալիս: Խրատներ և խորհուրդներ տալն իմ մասնագիտական հիվանդությունն է. ես ուսուցիչ եմ:

ԳՆՉՈՒԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Նա ասաց՝ չէի ուզենա քեզ կորցնել: Երևի դա այն խոսքը չէր, որ լրիվ արտահայտում էր իր ապրումները և նա ավելացրեց՝ ինձ համար թանկ էր մեր մտերմությունը: Եթե այդքան նրբանկատ չլիներ, պիտի պարզապես ասեր՝ քեզ չեմ սիրում: Չուզեց, որ իր հարվածը ծանր լիներ: Բայց միևնույն է, ծանր եղավ: Դա նույնն է, թե մարդուն խեղդես բամբակով: Վերջնահաշիվը մահն է: Եվ հիմա ինձ թվում է, թե խեղդվում եմ, օդը չի հերիքում: Մի տեղ կարդացել եմ, որ այսպիսի դեպքերում պետք է մարզանք անել: Մարզանք կանեի, իհարկե, եթե մեռնել չուզենայի: Ի՞նչ իմաստ ունի իմ կյանքը, եթե պիտի այսպես ձեռքերս ծալեմ ու հառաչեմ անդադար՝ ա՜խ, Աննա…

Ասաց՝ մեր մտերմությունը թանկ էր: Չասաց՝ թանկ է: Ուրեմն հաղթեց իմ ախոյանը, որի մտերմությունը չուզեց կորցնել: Իմ առաջին հայտնագործությունն աշխարհում այն է եղել, որ միևնույն առանցքի շուրջը չեն կարող պտտվել երկու հակադիր ճշմարտություններ: Առանցքն Աննան է, իսկ ես ու Արամը՝ երկու հակադիր ճշմարտություններ: Կամ ես, կամ նա: Աննան ասաց՝ նա: Իսկ իմ սիրտը ճչում է՝ ե՛ս: Ուզում է

թող որոտա: Քանի՞ կոպեկ արժեն կրակի գալարումները երկրի ընդերքում, երբ չեն կարող որևէ բան փոխել երկրի վրա:

Այնուամենայնիվ կա՛մ ես, կա՛մ նա: Որսի է գնացել: Ես էլ ունեմ որսորդական հրացան: Սարերում կհանդիպենք:

Կապում եմ փամփշտակալը, ուսս գցում հրացանը և դուրս գալիս քաղաքից: Մենամարտում գնդակը կորոշի, թե մեզնից ով ետ կգա սարերից: Բախտն ուզում է, որ շուտ լուծվի այդ հարցը. դեմի ձորով անցնողն Արամն է:

- Կանգնիր, անասուն, դու Աննային ասել ես, որ ես վատ ընկեր եմ, քեզ վարձու բնակարանի տեղ ասելու համար քսան ռուբլի եմ պահանջել: Դու էլ, իբր, տվել ես: Եթե ես այդքան ստոր լինեի, կսպանեի հիմա քեզ թիկունքից: Չափիր հարյուր քայլ: Կամ ես, կամ դու:

Արամը դողալով չափում է հարյուր քայլ: Մենք նշան ենք բռնում իրար: Որոտում է նրա հրացանը, և ես կանգուն եմ: Որոտում է իմ հրացանը, և նա ընկնում է: Գալիս է Աննան մազերը պոկոտելով: Ընկնում է նրա դիակի վրա և անվերջ մի բան է կրկնում.

- Վեր կաց, հոգյակս, վեր կաց, նենգաբար սպանվածս:

Ես զուր եմ փորձում համոզել, որ սպանել եմ ազնիվ մենամարտում:

Հարություն եմ տալիս Արամին: Նորից նա չափում է հարյուր քայլ: Այս անգամ առաջինը որոտում է իմ հրացանը, բայց նա չի ընկնում: Որոտում է նրա հրացանը, և ես զգում եմ, թե ինչպես է անցնում գնդակը սրտիս միջով: Աննան չի կռանում իմ դիակի վրա:

- Այս մարդասպանը,- ասում է,- հարձակվել է Արամի վրա, և լավ է, որ Արամի հրացանը լցված է եղել: Իսկ ես ցավում էի, որ խզվեց մեր մտերմությունը:

Ոչ, ես սարերը չեմ գնա հրացանով: Ընդհանրապես չեմ գնա: Նրան ընտրեց Աննան, էլ ի՞նչ եմ փշի պես ցցվում նրանց միջև: Բայց պիտի նրան գոնե ասել, որ լավ բան չէ ընկերոջը զրտապարտելը: Դու ուրիշ կերպ նվաճեիր Աննայի սիրտը: Արժե քեզ մի լավ դնքստել: Քո ամեն մի բառի համար՝ մի ապտակ: «Նա վարձու բնակարանի տեղ ասելու համար ինձնից քսան ռուբլի վերցրեց:» Տասը բառ: Դու հարյուր բառ ասած կլինես, բայց ես ամենաքիչն եմ վերցնում: Տասը ապտակ: Դա նրա համար չէ, որ Աննան քեզ ընտրեց, այլ քո ստորության համար, որը չի կարելի անպատիժ թողնել: Ես քեզնից ուժեղ եմ: Բայց դու հրացան ունես, կարող ես և սպանել ինձ:

Ճանապարհը ոլորվում է լեռան կողն ի վեր: Բարակ անձրև է մաղում: Քիչ-քիչ կթրջվեմ մինչև վերջին թելը: Հերն էլ անիծած, թող թրջվեմ, հիվանդանամ: Մեռնել եմ ուզում: Բայց եթե մեռնել եմ ուզում, ինչո՞ւ ինձ չեմ զցում այս ժայռից: Կամ ինչո՞ւ հաճելի չէ հիշել, որ Արամը հրացան ունի և կարող է կրակել ուղիղ ճակատիս: Բարեկամ, տուր տեսնեմ հրացանը: Նա տալիս է: Փամփուշտները նույնպես: Ոչ մի հատ չպահես մոտդ: Այ հիմա հավասարվեցինք: Հիմա ասա՝ դու ի՞նչ ես ասել Աննային: Հիշիր բառ առ բառ: Դե հիմա հաշվիր բառերը: Քանի՞ հատ եղավ: Տասներկո՞ւ: Ոչ, ես տասը հատ եմ հաշվել: Ստացիր տասը ապտակ: Մաքրիր երեսիդ արյունը: Այդ թաշկինակն Աննա՞ն է տվել: Պետք չէ դրանով մաքրել: Վերցրու իմը: Եվ իմացիր, մենք նորից կհանդիպենք, եթե դու Աննային չասես, որ զրպարտել ես ինձ: Իսկ հրացանդ ես կտանեմ ինձ հետ, որպեսզի դու վրաս չկրակես թիկունքից: Ասենք ես այդքան էլ հիմար չեմ, որ այս ծանրությունը քարշ տամ: Վերցրու: Բայց մեկ էլ պիտի գրպաններդ ստուգեմ: Ոչ մի

փամփուշտ չկա: Ազատ ես: Ուզում ես բժշկի գնա, ուզում ես՝ դատարան:

Երբ նրան հասցնեմ տասն ապտակը, մկաններս կդադարեն օձերի պես գալարվելուց: Ես կհանգստանամ, իսկ նա կփրփրի ներսում: Մկանների բարակ թելերը կպրկվեն, բայց նա չի համարձակվի ինձ խփել, որովհետև ինձնից թույլ է: Արյունլվա կփռվի անձրևաջրի մեջ: Բայց ես ինձ ուժեղ չեմ զգա, որովհետև Աննան նրան է սիրում: Աստված իմ, ինչպե՞ս կարողանամ մոռանալ այս ամենը, մոռանալ նրան, Աննային, աշխարհը, մարեմ այս մորմոքը, որ ինձ լեռներն է տանում և հանդիպեցնում Արամին: Այս երաժշտությունն էլ ինչ սրտակեղեք է հնչում: Ինչքան էլ բարձր է: Հիմա վերևի հարկի հարևանս նորից կբողոքի: Չի հասկանում, թե ինձ ինչքան է պետք այս տխուր մեղեդին: Անձրևը ծեծում է լուսամուտներս: Այսպես անձրև է գալիս և իսպանական լեռներում: Գնչուների թափառախումբը բարձրանում է լեռն ի վեր: Ճռճռում է մաշված ֆուրգոնը: Մի բարձրահասակ գնչու գնում է ֆուրգոնի ետևից: Չի ուզում հայացքը բարձրացնել, որովհետև կտեսնի, որ իր սիրած գնչուհու գլուխը կպած է մի գաճաճի գլխի: Քայլում են նրանք առջևից: Անձրև է գալիս: Ցեխը կպչում է ոտքերին, հետո պոկվում է և մնում ճանապարհին: Կոշիկի հետքեր կան վրան, բայց դրանից չես իմանա, թե բարձրահասակ գնչուն ինչքան զայրույթով է սեղմել ոտքը: Աչքերից արցունքներ են կաթում: Բայց եթե գլուխը չբարձրացնի՝ չես իմանա, որ լաց է լինում: Անձրև է գալիս՝ մանր, սրտամաշ անձրև: Իմ բարձրահասակ եղբայր, ես էլ եմ ուզում քեզ հետ լալ, բայց չեմ կարողանում:

Ես առաջ շատ եմ լսել այս մեղեդին, բայց չեմ տեսել այս ճանապարհը, որով գնում է թափառախումբը: Վերելքը դժվար է: Բարձրահասակ, լքված գնչուն կախվում է ֆուրգոնի ճաղից,

թող ձիերն իրեն էլ քաշեն: Հետո ամաչում է իր արածից և բաց թողնում ճաղը: Նրան թվում է, թե պոկվեց թափառախմբից և գլորվում է անդունդ: Իսկ առջևից քայլում են նրանք՝ գլուխ-գլխի տված: Պիտի հասնի այդ գաճաճին և հարվածի թիկունքից, չէ՞ որ նա իր սիրո վրա հարձակվեց թիկունքից. գողեգող մտավ նրա սիրտը և իր ձեռքից խլեց: Բայց շատ է վերելքը դժվար, բարձրահասակն ուժ չունի հասնելու գաճաճին: Ես ուժ ունեմ, բայց ես կհարվածեմ ճակատից: Տասն ապտակ: Դա բավական է, որպեսզի կամ բժշկի գնա, կամ՝ դատարան: Դրանից հետո այլևս չի վարկաբեկի որևէ մեկին:

Մեղեդին ասես բարձրահասակ գնչուի սրտից է քամվում: Նույն սրտմաշուկ անձրևն է մաղում միալար: Թրջվում ենք գնչուն ու ես, նա իսպանական, ես՝ հայկական լեռներում: Նրան ահա մոտեցավ մի ուրիշ գնչուհի, սև կրակոտ աչքերով մի աղջիկ:

- Ինձ նայիր, թխագանգուր, ես նրանից լավը չե՞մ:

Նայեց բարձրահասակը: Ոչ, նրանից լավը չէր: Ու նորից կախեց գլուխը:

- Երբ մութն ընկնի՝ ես քեզ կհամբուրեմ,- համառեց այդ ուրիշ գնչուհին: Բարձրահասակը դեմքին զգաց նրա ծամերի թացությունը: Կարծես մի սև թել կտրվեց: Հետո հրաման եղավ, որ թափառախումբը կանգ առնի, այդտեղ պիտի գիշերեն: Արագորեն խփում են վրանները: «Երբ մութն ընկնի՝ ես քեզ կհամբուրեմ»,- նորից է ասում աղջիկը: Սկսվում է պարը: Վիշտը խեղդելով պարում է բարձրահասակը սև, կրակոտ աչքերով գնչուհու հետ: Բոլորից խելահեղ է պարում նա: Հոգին հաղթել ինքն իրեն և ցնծում է, որ հաղթել է: Պարում են բոլորը, խարույկներ են բոցկլտում: Իսկ մի թփի տակ համբուրվում են թխագանգուր տղան ու այն ուրիշ գնչուհին:

Ա՜խ, ես էլ կարողանայի հաղթել ինքս ինձ: Բայց ես նորից ելնում եմ լեռները:

- Ետ դարձիր, անհաշտ մարդ: -Աննայի ձայնը սարսռեցնում է ինձ,- ի՞նչ ես ուզում մեզնից: - Նա արդեն մոտեցել է ինձ, հևում է շտապելուց: -Մոռացիր ինձ: Ընդմիշտ մոռացիր: Եվ բարձր կանգնիր բիրտ ուժից:

- Նա ինձ զրպարտեց և դու ներեցիր նրան: Դու սիրեցիր այդ գաճաճին, Աննա: - Բայց ես այդ չասացի բարձրաձայն, որովհետև ողջը հանկարծ անիմաստ թվաց: Աննան ներեց նրան, աստված իր հետ: Վաղ թե ուշ ինձ կմոտենա իմ նոր սերը.

«Թխագանգուր, երբ մութն ընկնի, ես քեզ կհամբուրեմ»:

Թող լինի տասը համբույր, հարյուր, հազար, միլիոն…

Ավարտվում է մեղեդին:

Ես լսում էի Սարասատեի «Գնչուական մեղեդիները»:

ՍԱՐՆ Ի ՎԵՐ

«Դեպի վեր, սարն ի վեր»,- ինչքան հեշտ են արտասանվում այդ բառերը, երբ բարձրացողն ուրիշն է: «Դեպի բարձունք»,- կոչ ենք անում մենք, և երբ ում կոչ ենք անում, նա չի ուզում բարձրանալ, որովհետև այնքան են լարվել մկանները, որ ավելին ձգել հնարավոր չէ, նեղսրտում ենք, վախկոտ ենք անվանում, նույնիսկ հայհոյում, ճիշտ այնպես, ինչպես ճիպոտահարում ենք եզանը, երբ նա այլևս չի կարողանում քաշել գութանը: Բայց փորձիր ինքդ քաշել: «Դեպի բարձունք»,- ես այժմ զգում եմ այդ երկու բառի ծանրությունը, որ կախվել է ուսերիցս: Ես մղվում եմ առաջ, իսկ նա՝ իմ ուսապարկի մեջ լցված այդ ծանրությունը, ետ է քաշում, քիչ է մնում ինձ վայր գցի մեջքիս վրա: Ես այն մի

ուսիցս մյուսն եմ տեղափոխում, նույն ծանրությունն է: Ձեռքս եմ վերցնում՝ ավելի հեշտ չէ: Ցավող ձեռքերս ու նվացող ուսերս ինձ հուշում են, որ այլ կերպ լինել չի կարող՝ բեռ եմ տանում, պիտի ուսափոկերն իրենց հետքը թողնեն մարմնիս վրա, պիտի մաշկիս վրա զգամ դժվարությունը: Բայց ինչ էլ լինի՝ չեմ նստելու հանգստանալու մինչև չհասնեմ ամենաբարձր կատարը: Հարյուր մետր ևս՝ և կհասնեմ կատարին: Մի մտածիր, մի մտածիր այդ մասին: Ուրիշ բաների մասին մտածիր և փոխիր ոտքերդ, մեկ էլ կտեսնես՝ կատարին ես: Այս փշերը, որ փռված են հողին, մեր սարերում էլ կան: Մենք դրանց գազ ենք ասում, քլունգով հանում ենք հողից, շարում պարանի վրա և քաշելով բերում տուն: Դրանք շատ լավ կպչան են լինում թոնիր վառելիս: Բայց դա ե՛րբ էր: Հիմա ոչ ոք այդ գազից չի օգտվում: Նավթը ծով է: Բացի այդ, երկրի խորքերից հորդող գազն իր կապույտ լեզվով տաք-տաք խոսում է նաև գյուղերում:

Ամպի ստվերները չեն սրբում քրտինքդ, շատ է, չի ստացվում, բարձրացրու ձեռքդ և թևքով սրբիր. ձախ աչքդ արդեն մրմռում է, քրտինքդ է լցվում: Ուրիշ բանի մասին մտածիր, ուրիշ: Բայց ուրիշ բանի մասին մտածե՞լ կլինի: Ծալվում են ոտքերս: Ինչո՞ւ այսքան շատ քարեր վերցրեցի, ինչո՞ւ: Լավ կլինի՝ բեռս վայր դնեմ և փոքրացնեմ դրանք, չէ՞ որ փոքր, շատ փոքր կտորների մեջ էլ կա ամբողջը: Բայց ինքս ինձ երդվել եմ հասնել կատարին: Քիչ մնաց հասնեմ ու հետո կփոքրացնեմ: Ահա, ահա կատարը: Չէ, խաբեց թումբը:

Սարի ետևից սար բուսնեց: Դա կատարը չէր, ա՛յ, կատարը նա է: Իսկ եթե նրա ետևից էլ նո՞ր բուսնի: Քայլիր, քայլիր: Մի՛ մտածիր, քայլիր: Իրադրություններ կան, ուր մտածելն ավելորդ է, հանճարեղ մտքերն անգամ կոպեկ չարժեն, պետք է գործել միայն, զինվորի պես, առանց որի

ջուրն են ընկնում հաղթանակի հրաշալի մշակված պլանները: Հիշո՞ւմ ես, երբ Տիգրան Պետրոսյանը մրցում էր շախմատային թագի համար, դու նրան հեռագիր էիր տալիս՝ մոտ է հաղթանակը: Քիչ էլ, քիչ էլ և քեզ կատարին կողջունի արևը: Դու ուզում էիր, որ նա լարի ամեն մի նյարդը, մկանը, բջիջը: Բայց նա լարել էր դրանք, դու ուզում էիր, որ կրկնակի լարեր: Նա կրկնակի էր լարել: Դու ուզում էիր եռակի: Քեզ թվում էր, թե հնարավոր է դա: Հիմա ինքդ լարիր քոնը: Հեշտ էր ուրիշին ասելը, չէ՞: Հենց դրա համար պիտի հաղթես կամ ընկնես մեռած: Ահա, ահա ամենաբարձր կատարն է: Վերջապե՛ս… Ես փռվում եմ գետնին, այլևս անհարմար չէ, ես հաղթել եմ լեռանն ու ինձ: Հիմա էլ չեմ թեթևացնի ուսապարկս, այսքան չարչարանքից հետո արժե՞ որ փոքրացնեմ առանց այն էլ փոքր քարերը: Դա նշանակում է, որ ահագին չարչարանք զուր պիտի կորչի:

Պառկել եմ արևից խանձված հողին, կոպերիս տակ դեռ ծանր շարժվում են ոտնաթաթերս՝ դրվելով մերթ քարերի, մերթ թոշնած խոտերի վրա: Բայց աչքերիս մեջ արդեն լցվում են Գեղամա լեռների ստորոտներին փռված գյուղերը, հեռվում՝ ամպերի մեջ կորած գագաթներով Արարատները, որոնցից փոքրը երևում է իմ պատշգամբից, Երևանի, որն իր լխտիկ մարմինն արևին հանձնած օրեցօր գիրացող գեղեցկուհու է նման, մի բարակ մասը: Նայում եմ անտառացած շենքերին և փորձում եմ գտնել այն շենքը, որի մեջ ապրում եմ ես: Ապարդյուն ջանքեր:

Դեռ երեկ իմ այս պառկած տեղում ձյուն կար՝ մի թրաձև շերտ, որ ասես մնացել էր իր բազում թշնամիների դեմ Հայաստան աշխարհի մղած մի ահեղ ճակատամարտից: Ողջաբերդ գյուղն այստեղից հեռու չէ: Ասում են՝ հայոց այրուձին ոսոխին հաղթած վերադառնալիս է լինում Գառնի,

այստեղ հանդիպում են իշխանների և ժողովրդի հետ, որոնք եկել էին ողջունելու քաջերին: Դրա համար էլ գյուղը կոչվում է Ողջաբերդ-ողջագուրման բերդ: Լեգենդ է դա, որն այնքան է հավաստի, որքան և աշխարհի մնացած լեգենդները: Ձյան թրաձև շերտն էլ հավաստի էր, բայց նա էլ հալվել է արդեն, չկա:

Պառկել եմ մեջքի վրա և նայում եմ ամպերին: Նրանք ասես զորախմբեր լինեն, մերթ բաժանվում են, մերթ միանում՝ կազմավորելով զորագնդեր: Քիչ-քիչ մեծանում են՝ դառնալով բանակներ: Զորավարժություններ են անում, ըստ երևույթին՝ շուտով պատերազմ է լինելու: Բայց դեռ սպիտակ են, այդ նշանակում է, որ դեռ պատրաստ չեն կռվելու: Ես տեսնում եմ՝ ինչ-որ քարոզիչներ պատերազմի պրոպագանդա են անում, այծաբար ճոճում են սպիտակ մորուքները և սպիտակ պոզերով ցույց են տալիս թշնամուն: Արդեն կա կոնկրետ թշնամի, իսկ դա կնպաստի պատերազմին, պրոպագանդայի հաջողությանը: Շուտով, շատ շուտով ատելությունից կմգանան սպիտակ բանակները, իսկ ամպերի ատելությունը դարեր ու դարեր որոտ է եղել ու կայծակ, մի ահռելի ուժ, որը դարեր ու դարեր երազանք է եղել մարդկային բանակների համար, որոնք միայն վերջերս տեսան իրենց երազանքի իրականացումը՝ ատոմային ռումբերը:

Բայց ես ամպերի միացում-բաժանումից ձանձրացած՝ մարդու կարոտ եմ զգում հանկարծ: Ուսապարկիցս հանում եմ ռադիոընկալուչը, հիմա կգա աշխարհը և կլցվի ականջներիս մեջ, հաղորդավարը կդառնա իմ զրուցակիցը, երգիչներն ինձ կներկայացնեն իրենց ամենալավ կատարումները: Միացնում եմ իմ ուզած ալիքը: Համերգ է: Սիրված մեղեդիներ: Այս մեկն իմ սիրածն է: Այս մեկն էլ: Իսկ սա անծանոթ է: Տեսնես ո՞ւմ սիրած մեղեդին է: Շատ լավն է:

Այսօրվանից նաև իմ սիրածն է: Ինչ քաղցր է սուլում նաև ինձ անհայտ այս երգիչը: Հանկարծ խշրտոց եմ լսում: Օձ է: Քաղցր սուլոցը թովել է նրան: Գալիս է դեպի ինձ: Ես մի ակնթարթում վերցնում եմ ուսապարկս, ռադիոընկալուչը, որի ձայնն ուղղության փոխումից նվազում է, և արագ իջնում եմ լեռնի վար: Չեմ վազում, մի տեսակ անհարմար եմ զգում հենց նույն այդ օձից, վազեմ՝ պիտի կարծի, թե իրենից վախեցա: Բայց քայլում եմ արագ և ծուռ ու մուռ, եթե հանկարծ թռիչք գործի, թող վրիպի, ետ չեմ նայում՝ դարձյալ վախկոտ չերևալու պատճառով: Բայց կոպերիս տակ գալարվում է սողունի մեջքը, այդ նշանակում է, որ վախեցել եմ: Գալարվում է երկար, ինձ թվում է անվերջ պիտի գալարվի: Չգիտեմ ինչքան եմ քայլել, մեկ էլ լսում եմ հովվի շների ինձ ծանոթ հաչոցը: Հաֆ, հաֆ, հաֆ, հաչում են շները՝ սլանալով իմ կողմը: Հիմա խոսքը նրանց է պատկանում, իսկ նրանք իրենց ասելիքն ասում են առանց տատանվելու, չեն հասկանում ոչ կատակ, ոչ հումոր, ոչ էլ խոսքի նրբերանգներ: Այդ պատճառով իմ պատասխանը կարճ է մի «այո» կամ «ոչ» ասելու չափ՝ ես նստում եմ, իսկ շներն ասպետաբար չեն հարձակվում նստած մարդու վրա: Կոպերիս տակ այլևս չի գալարվում սողունի մեջքը: Հայտնվում է և հովիվը՝ մի իսկական աժդահա և ինձ ազատում շների պաշարումից: Ազատում է և իսկույն էլ զղջում.

- Չիմացա, որ էդ մռութի տերն ես՝ իմանայի՝ քո բանը բուրդ էր, չէի ազատի:

Եվ այնպես սպառնալից է նայում, որ ինձ թվում է, թե շներին բաց է թողնելու վրաս: Պարզապես տատանվում է՝ բաց թողնի, թե ոչ: Անցնում է առաջին վայրկյանը, երկրորդը, առաջին րոպեն: Ոչ, բախումը լուծվեց հօգուտ ինձ, նրա աչքերն այլևս ոչինչ չեն արտահայտում, ոչ ատելություն, ոչ էլ

սիրալիրություն, որ ինձ թվում է, ամեն հովիվ պիտի ցուցաբերի հյուրի նկատմամբ։

Բայց ես ի՞նչ եմ արել նրան կյանքում. առաջին անգամ եմ հանդիպում։

- Ախպեր ջան, լեղիդ պատռեց չէ՞,- սա արդեն կատարյալ հաշտություն է։

- Չէ, չպատռեց։ Բայց պատճառը չհասկացա։

Ու աժդահան ինձ բացատրեց պատճառը։ Ես արտաքինով շատ նման եմ մի սրիկայի, որին ատում է նա։ Երբ տեսել է՝ մտածել է, որ ես էլ պիտի նրա նման լինեմ, իզուր էլ փրկել է շներից, թողներ մի լավ զզեին։ Իսկապես, մտադրություն է ունեցել շներին վրաս արձակելու, բայց դա մեծ նամարդություն կլիներ։ Հաղթել է լեռնեցու օրենքը։ Ես շնորհակալ եմ այդ օրենքից, որ ինձ թույլ տվեց հովվի կողքին նստելու և նրանից իմանալու նրա ատելության պատճառը մի մարդու նկատմամբ, որն արտաքինով նման է ինձ։

Հազար ինը հարյուր քառասուներկու թվականին, երբ գերմանացիներն արդեն Կովկաս էին հասել, ուրիշ վեց հոգու հետ բանակ է գնում, մինչև հասնում է նշանակված կետը։ Շատ են մտերմանում։ Մտերմացնողը ոչ այնքան երկար ճանապարհն էր, որքան ճակատագրերի նմանությունը, բոլորն էլ հաստատ գիտեին, որ գնում են մեռնելու։ Բայց չմեռան ինքը և այդ սրիկան։ Անցյալ տարի Երևանում պատահաբար հանդիպեցին իրար։ Հազիվ ճանաչեցին։ Երբ բանակ էին գնում՝ պատանիներ էին, իսկ հիմա բեղ մորուքով մարդիկ։ Շատ ուրախացան, և նա՝ այդ սրիկան, որ համալսարան էր ավարտել, հովվին հրավիրեց օպերա։ Պարզապես ասաց՝ ձանձրանում եմ, և օպերայի երկու տոմս վերցրեց։

Հանդիսականներ քիչ կային, նա նստեց հովվից չորս աթոռ հետո, թեև տոմսերն իրար կողքի էին։ Իբր՝ չկարծեք թե այս սարի չոբանն իմ ընկերն է։ Հովիվը վշտացած էր, բայց չուզեց ուրիշներին խանգարելով դուրս գալ։ Ոչինչ, ընդմիջում կլինի և այդ փողկապավորին ցույց կտա, որ փափախավորները նրա կարծածի չափ աննամուս չեն, երեսին կշպրտի տոմսն էլ, տոմսի արժեքն էլ։ Բայց երբ ընդմիջում եղավ՝ դատարկ էր նրա աթոռը։

- Բա ախպեր ջան, ես մարդկանց մեղր տամ, նրանք ինձ՝ լեղի։

Վրդովվում է հովիվը՝ հենված իրեն վայել վիթխարի մահակին, բայց իսկույն էլ ժպտում է արդեն հյուրընկալ սիրալիրությամբ։

Աժդահան մենակ չէ, նրան այցի է եկել դուստրը։ Մի քանի օր է, ինչ ընդունելության քննություն է հանձնել Երևանի պետական համալսարանում։ Այսօր իմացել է, որ ընդունված է, երջանիկների ցուցակում իր անունը սեփական աչքերով է կարդացել. էլ աջ ու ձախ չի նայել, նստել է ավտոբուս և եկել գյուղ։ Շեմքից ձայն է տվել մորը, թե՝ շնորհավորիր, մա, այսօրվանից բանասիրական ֆակուլտետի ուսանող եմ, և առանց սպասելու, որ մայրը շնորհավորի, վազել է սարերը՝ հոր մոտ։ Ուրախացել է հայրը և հիմա հայր ու աղջիկ, շողում են ժայռի ճեղքից գլգլալով դուրս եկող այս աղբյուրի նման։ Ինձ թվում է, նրանք էլ գլգլում են, և խմելով նրանց խնդությունից մի քանի կում՝ ես էլ եմ պայծառանում։

Նորընծա ուսանողուհին բոլորից հաջող էր գրել շարադրությունը սիրված մասնագիտության մասին։ «Մեծ ապագա է խոստանում,- ասել էր գրավորն ստուգող դասախոսը,- արդեն պատրաստի գրող է այս աղջիկը»։ Գուցե և իսկապես պատրաստի գրող է հոր կրծքից ցածր բարալիկ

այս աղջիկը, բայց դասախոսը պետք է զգույշ լիներ, մանավանդ չգործածեր «մեծ» բառը, որ խենթացնում է այս տարիքի տղաներին ու աղջիկներին և նրանք հավասարակշռությունից դուրս գալով քայլում են խենթի նման: Իսկ երբ խենթի նման ես քայլում, ոտքդ անպայման քարի կխփես: Չէ, լավ բան չի արել այս աղջկա շարադրությունը ստուգող դասախոսը, որը պիտի որ երիտասարդ լինի, շուտ խանդավառվող և անփորձ:

Արտույտներն ուրախացած թռչում են, ճռվողում: Մեկի ձայնը զրնգում է ուղիղ իմ գլխավերևում: Վեր եմ նայում, բայց ամպերից ու երկնքի կապույտ պատառներից բացի ոչինչ չեմ տեսնում: Պետք չէ տեսնել: Արտույտը մարմին չէ, ձայն է, պետք է լսել: Եվ ես շատ եմ սիրում այդ ձայնը լսել: Մանուկ օրերից սկսած: Հիշում եմ, կարկաչում էին ձնհալի ջրերը, բարակ առուներով իջնում գյուղի մեր տան դռներով: Կարկաչում էին ասես իմ սրտի միջով, քաղցր էր նրանց կարկաչը, բայց ես չէի հասկանում, թե ինչու: Հիմա գիտեմ, այդ կարկաչի մեջ արտույտների երգն էր ղողանջում…

Ինձ հետ գալիս են արտույտները: Օձն ու բարձունքը մնացին վերևում, ես իջնում եմ՝ ականջներիս մեջ տանելով փոքրիկ թևավորների երգը և կոպերիս տակ՝ հոր ու աղջկա պատկերները:

***

Ես գիտեմ որ մի քանի ժամ առաջ Պառնաս չէի բարձրանում, այլ ընդամենը Գեղամա լեռները, այն էլ իմ պատշգամբից երևացող մասը: Շատ գոհ եմ, որ եղա այդ սարերում: Հիմա կնայեմ նրանց և մտովի կթափառեմ այն արահետներում, որոնցով անցա, կտեսնեմ այն ամենը, ինչ այստեղ պատմեցի: Դա կլինի իմ ուրախություններից մեկը:

Ես ապրում եմ առաջին հարկում: Պարզապես բախտս բերել է, որ շենքերի բացվածքից երևում են Գեղամա լեռները: Չորրորդ հարկում ապրողների նկատմամբ բախտն ավելի բարյացկամ է եղել. նրանք տեսնում են և այդ լեռները, և ամբողջ քաղաքն ինչպես ափի մեջ: Բայց չորրորդ հարկում ապրող իմ բարեկամներից մեկը հավատացնում է, որ այդ միայն ինձ է թվում. վերևում ապրես երկու օր՝ չես ուզենա պատշգամբ էլ դուրս գալ, եթե շոգը քթիցդ բռնած քեզ չհանի սենյակից: Ես համաձայն չեմ իմ այդ բարեկամի հետ, որը կյանքում երբեք բանաստեղծություն չի գրել:

Հիմա ես իմ տան պատշգամբում կանգնած նայում եմ իմ բաժին լեռներին: Դիմացի գործարանի բարալիկ ծխնելույզը երկու մասի է բաժանում նրանց: Լավ է, որ գործարան է կառուցված այստեղ՝ ցածրիկ բաժանմունքներով, այլապես այսօր կամ վաղը գետնի տակից կծլեր մի բազմահարկ բնակելի շենք՝ քարե հաստաբեստ վարագույր քաշելով իմ և իմ լեռների միջև: Իսկապես դրանք իմ լեռներն են, թեև ես ոչ կարող եմ վաճառել, ոչ ել արգելել, որ ոչխար արածացնեն դրանց կանաչ լանջերին: Թող նրանք այն հովվինն էլ լինեն, դրանով չեն դադարում իմը լինելուց: Սակայն ես ոչինչ չգիտեմ նրանց մասին: Եթե ես կալվածատեր եմ, ապա նման եմ Օբլոմովին, որն իր կալվածքը վստահել էր ուրիշին, ինքը չէր գնում, մոտիկից չէր տեսնում այն արտերը, որ կերակրում էին իրեն: Իմ սարերում այն հովիվը գիտե ամեն թուփ, իսկ ես, երբ աշուն լինի, պիտի միայն երևակայությամբ տեսնեմ դեղնած թփերը, ձմռանը՝ ձյան հյուսքերի տակ մնացած ինչ-որ ճանապարհներ ու ձորեր, գարնան գլգլան օրերին պիտի ականջիս հասնի ինչ-որ աղբյուրների կարկաչ, ոչ թե այսինչ ու այնինչ աղբյուրինը, որի ջուրն եմ խմել օգոստոսյան այս առավոտ: Կորչի օբլոմովականությունը:

…Այսօր իմացա, որ իմ տան հարևանությամբ գտնվող գործարանում, ուղիղ իմ քթի տակ նոր բաժանմունք է կառուցվելու՝ տասնչորս մետր բարձրությամբ:

Ուրեմն քարե վարագույր է քաշվում իմ և ինձ համար արդեն սիրելի դարձած լեռների միջև:

…Այսօր տեսա, որ փորում են հիմքերը:

…Ամեն օր նայում եմ, թե ինչքան են բարձրացել պատերը:

Թող որ իմ պատշգամբից այլևս չեմ կարող տեսնել կապտամշուշ լեռները, բայց նրանք հո կա՞ն, բարձրանում են այս քարե վարագույրի ետևում: Կա կյանքը, սերը, պոեզիան: Եվ ես նստած իմ պատշգամբում՝ նոր տողեր եմ հյուսում կյանքի, սիրո, պոեզիայի մասին:

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐՈՋՍ

Իմ պատանեկության ընկեր Արտաշես Սարգսյան, այս նամակով ես դարձյալ պիտի ինձ ու քեզ տեղափոխեմ այն երանելի տարիները, երբ դու հավատացած էիր, որ քո ընկերը նշանավոր մարդ պիտի դառնա, նրա անունը այնքան բարձր պիտի հնչի, որքան Ավետիք Իսահակյանինը (այն ժամանակ մեր պաշտամունքն էր նա), և կռվում էիր նրանց հետ, ովքեր ինձ համար այդպիսի ապագա չէին գուշակում, վիճում էիր, նեղսրտում, խռովում…

Տարիներ հետո դառնասիրտ պատմում ես, թե ինչպես ես խաբվել:

Դու քոնն ես ասում և իմը չես լսում: Քո մտքով չի անցնում, որ ինձ համար ավելի ծանր է: Ի՜նչ շքեղ երազներ եմ կորցրել:

Բայց երբ ես հրավիրում եմ քեզ այցելել մեր պատանեկությունը, այն նպատակով չէ, որ նախատեմ քեզ, պարզապես ուզում եմ ապրել այն երանավետ միամտությունը, որով շռայլորեն օժտված էինք թե՛ դու, թե՛ ես:

Ուզում եմ առաջվա նման կարողանալ խանդավառվել՝ շփոթելով փոքրը մեծի հետ, այլ ոչ թե այսպես՝ նույնիսկ մեծի մեջ նկատել փոքրությունները: Ա՛խ, գիտես, թե ինչպես եմ ուզում վերստին ապրել այն օրերը, երբ հնարավոր էր թվում հրաշքը: Այն օրերի նման ուզում եմ հավատալ, որ իսկապես կարող է լինել մի պատանի դրամատուրգ, որը ստեղծել է հարյուրից ավելի կերպարներ, որոնք այնքան ինքնատիպ են, որ համաշխարհային գրականության մեջ եղած ոչ մի կերպարի չեն նմանվում: Շատ եմ ուզում հավատալ դրան, թեկուզ դժվարությամբ: Իսկ այն ժամանակ շատ հեշտությամբ հավատացի: Հիշո՞ւմ ես, դասարան մտավ մեզ հայոց լեզու դասավանդող Կարապետ Դուրգարյանը և այդ նորությունը հայտնեց, սկսելով այսպես. «Ապարանում ապրում է տասնվեցամյա մի դրամատուրգ, որը…»: Խանդավառությունից չկարողացա գիշերը քնել: Քանի-քանի օր ուր գնում էի ինձ հետ էր Ապարանում ծնված այդ տասնվեցամյա դրամատուրգը, նոր Շեքսպիրը, չէ, ավելի մեծը, որի հետ դեռ բախտ չէի ունեցել ծանոթանալու, բայց պատկերացնում էի: Հիմա շատ բան մոռացել եմ իմ պատկերացրածից: Միայն հիշում եմ, որ աչքերը նման էին Կարապետ Դուրգարյանի աչքերին՝ վճիտ ու խորաթափանց, մերթ անսպասելի հայտնագործման, մերթ հեգնանքի կայծերով բռնկվող: Մենք պաշտում էինք մեր ուսուցչին, հավատում, որ «Քառս»-ը ծայրից ծայր գիտի և սովորել է միայն մեկ անգամ ընթերցելով: Դրա համար էլ հույս ունեինք: Նա դասարան էր մտնում և սկսում իր թելադրությունը «Քառսից»

կամ մի ուրիշ վեպից՝ անգիր, առանց գրքի կամ տետրի նայելու, պատից պատ քայլում էր՝ ձեռքերը ետևը դրած և թելադրում:

Դասամիջոցին թափվում էինք նրա գլխին, ամեն մեկն ուզում էր իմանալ իր անվան բացատրությունը, թե այսինչ կամ այնինչ լեզվով ինչ է նշանակում: Նա սիրով պատասխանում էր, մեկ-մեկ զայրանում՝ ես ձեզ համար բառարա՞ն եմ, ի՞նչ է:

Բառարանից ավելին էր, որովհետև եթե ասեր բառարանում այսինչ բառը սխալ է, մենք առանց տատանվելու կհավատայինք:

Եվ ափսոսում էինք, որ նա՛ չի կազմել բառարանները, որ «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը նա՛ չի գրել, որ Երևանի համալսարանում նա՛ չի դասավանդում լեզու և գրականություն:

Ես չգիտեմ, շնորհակալ լինեմ, թե դժգոհեմ նրանից, որ իմ պատանեկան երազներն այդքան շքեղ էին: Եթե երազները հարստություն են, ապա շնորհակալ եմ, որ նա նպաստել է դրանց շքեղությանը: Փակում եմ աչքերս և ահա, տեսնում եմ նրան դասարան մտնելիս: Նստում է ճռճռան աթոռի վրա, բացում է մեր շարադրությունները և մեկ առ մեկ ասում թերությունները: Ես սպասում եմ, որ պիտի գովի իմ շարադրությունը: «Դժգույն է»,- և ծիծաղկոտ աչքերով ինձ է մեկնում տետրս: Հաջորդը: Եվ վերջապես մեր ընկերոջ՝ Վաղինակի շարադրությունը: «Բայրոնյան շնչով է գրված»,- ասում է նա և ընթերցում: Դասարանը քարացած լսում է: Հուզված է Դուրգարյանը, հուզված ենք մենք և ամենից շատ ես… Մեր ընկերոջ փոխարեն ես էի «բայրոնյան շնչով գրել» այդ տողերը:

Ոչ, գաղտնիքը չիմացավ մեր աստվածը, ոչ ոք չգիտի հիմա այն, ինձանից բացի և միայն ես կարող եմ պատմել, որովհետև մյուս իմացողը հողի տակ մոռացել է բոլոր գաղտնիքները:

Ինչքան էլ շքեղ լինեին երազանքները, պիտի քանդվեին այն պարզ պատճառով, որ վատ են հարմարեցված հողի վրա քայլելու համար: Ես շուտով համոզվեցի, որ բայրոնյան շունչ չունեմ: Ինքը՝ Կարապետ Դուրգարյանն էլ չմնաց նույնը՝ դարձավ սովորական մահկանացու: Մինչև վերջ ճշմարտության հավատարիմ ծառան մնալու համար ասեմ, որ նա մի քանի տարի առաջ հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա: Իմ հարևանը՝ մի պատկառելի գիտնական, որ միանգամից ստացավ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, կարդացել էր նրա դիսերտացիան և բոլորի առաջ ասաց, որ դիսերտանտն օժտված է բանաստեղծական անուրանալի ձիրքով: Նույնը կրկնեց և իրենց տանը, երբ մտերմաբար զրուցում էինք:

Իսկ ապարանցի տասնվեցամյա հրաշք դրամատուրգից ոչ մի դրամա չեմ կարդացել մինչև օրս: Է՛հ, Արտաշես, մենք շատ միամիտ էինք, չափից ավելի շատ: Մեզնից ոչ մեկը չհարցրեց Կարապետ Դուրգարյանին, թե նա երբ է հասցրել կարդալ ամբողջ համաշխարհային գրականությունը, որ այդպես վստահ հայտարարում է, թե այս նորելուկ դրամատուրգի կերպարները չեն նմանվում մինչև այդ ստեղծված ոչ մի կերպարի: Հնարավո՞ր է: Եվ հետո, տասնվեցամյա պատանին, թեկուզ և հանճարեղ, ինչպե՞ս կարողացավ այդքան փորձ ունենալ և ե՞րբ էլ ժամանակ գտավ հարյուրից ավելի ինքնատիպ կերպարներ ստեղծել, երբ պիտի միաժամանակ դասերը սովորեր… Հարցեր, հարցեր,

որոնցից ոչ մեկը չծնվեց իմ գլխում: Չծնվեց, որովհետև ես հավատում էի հրաշքի: Դու էլ էիր հավատում: Ներիր, ես մեղավոր չեմ, որ փշրվեց հավատդ և դու հիմա անհավատությամբ անդամահատում ես իմ տողերը՝ քմծիծաղիդ կայծակները կախված էջերի վրա:

Իմ հավատն էլ է փշրվել:

Ապակի է հավատը: Տեսել ես, չէ՞, ինչպես է ցոլցլում ապակին արևի տակ, ասես ճառագայթներից է հյուսված: Բայց դիրքը փոխիր, և նա փայլը կկորցնի: Այդ փայլը հավատն է: Հիմա ես թափանցիկ օրերի միջով տեսնում եմ այդ ու նզովում այն ձեռքը, որ շուռ տվեց ապակին: Հետո դառնում եմ ինքս ինձ, ծաղրում այդ թուլության համար: Պետք է հաշտվես: Պետք է դիմանաս այն ծանրությանը, որ հիմա գիտես, թե բայրոնյան շնչով գրված ստեղծագործություններն ինչ-որ այն չեն, եթե վեր են սովորական մահկանացուի ստեղծածից, ապա նաև՝ աստվածների ձեռքի գործ էլ չեն: Ինչ-որ տեղ սառն են, ինչ-որ տեղ՝ կեղծ, ինչ-որ տեղ՝ թույլ:

Դարերի մեջ ձյան նման հալվում են նաև մարդիկ, և նրանցից մնում են գրքեր, շենքեր, մեքենաներ: Դրանք էլ քիչ-քիչ մաշվում են, գնում: Այո, գրքերն էլ: Այլապես այդքան մեծ կարիք չէր լինի ստեղծելու նորերը, ինչպես ստեղծում են նոր շենքեր, մեքենաներ: Դարերի ընթացքում փոխվում է, չէ՞, աշխարհընկալումը, այսօրվա երիտասարդին չես կերակրի աստվածների վրեժով, ոչ էլ տիտանների մենամարտով, նրա ստամոքսը փոխվել է և եթե ուզում ես երկրորդ անգամ էլ նա մտնի քո ճաշարանը, ապա մատուցիր համապատասխան ճաշ, որ լինի և՛ սննդարար, և՛ դյուրամարս: Նոր ճաշի համար պիտի փոխես նաև քո խոհանոցը: Բայց ես գիտեմ երիտասարդ բանաստեղծների, որոնք այնպես են փոխում, որ հնից ոչինչ չի մնում, ոչ էլ իսկական նորից մի բան կգտնես

նրանց բանաստեղծական խոհանոցում: Լցնում են կաթսաները, գրականագետ Սուրեն Աղաբաբյանի[4] բառերով ասած՝ բառափրփուրով, որի տակ լավագույն դեպքում բրնձի մի երկու հատիկ է ընկած լինում, և, ընթերցող, վա՛յ քեզ, եթե ասացիր՝ սիրելի խոհարար, անհամ է ճաշդ, «հետամնաց», «տգետ», «հեքիաթասեր», «19-րդ դարի մնացուկ» և այլ մակդիրներով լեցուն շերեփը գլխիդ կիջնի: Ուրեմն, եթե խոհեմ ես՝ կեր և փառաբանիր նրան, որովհետև նրան միայն այդ փառաբանելն է պետք: Նա զգում է, որ ուրիշների հետ չի կարող չափվել ոչ իր հոգիների խորքը թափանցելու զորությամբ, ոչ երևակայության ուժով, ոչ տրամաբանությամբ, ոչ էլ սիրո և ատելության խորությամբ և դրա համար էլ եփում է այդ բառափրփուրը՝ վրան ավելացնելով նույնքան խրթնաբանություն, կեղծ կեցվածքի ինչ-որ ձևեր և էլի ուրիշ բաներ, որոնք հարկավոր են նոր հսկայի տպավորություն թողնելու համար: Ախր շատ են ուզում փառաբանվել և ուզում են փառաբանվել միանգամից՝ դեռ իրենց բառափրփուրը լրիվ չեփած: Չեն համբերում, պսակազերծում են հներին, որովհետև այնուամենայնիվ զգում են, որ նրանք չափանիշ են, այնպիսի լեռներ են, որոնց ստվերները դարերի վրայով երկարում են մինչև մեր օրերը և պիտի երկարեն ավելի հեռուն՝ նայած լեռան բարձրությանը: Իսկ իրենք… քիչ էր մնում ասեի, որ զգում են, թե նույնիսկ ստվեր էլ չեն: Ո՛չ, նրանց մեջ նստած չէ Սանչո-Պանսան: Նրանք դառնացած Ատլասներ են, թթված դեմքերով, որովհետև չեն ստանում փառքի ատլասավայել բաժինը պոեզիայի երկնակամարն իրենց հզոր ուսերին պահելու

[4] Գրականագետ (ծնթ.՝ խմբագրի կողմից)

համար: Բայց ստանում են գարեջրի իրենց ամենօրյա բաժինը, խմում են ու խոսում հազար ու մի փուչ բանի մասին:

Ես այնուամենայնիվ ողջունում եմ նրանց, որովհետև նրանք, չգիտես ինչ օրենքի համաձայն, նպաստում են գրական մթնոլորտի աշխուժացմանը, որը հրահրում է լուրջ բաների մասին խոսող և գրող բանաստեղծներին անկաշկանդ պարզելու իրենց թևերը և ճախրելու երևակայությունների ամպ ու շանթի մեջ: Իսկ նրանք, այդ բանաստեղծները, երբեք բառափրփուր չեն եփի, որովհետև գիտեն, որ ստամոքսն ինչքան էլ փոխվում է դարերի ընթացքում, հացը միևնույն է, չի վնասում մարսողությանը և դրա համար էլ սեղան չեն նստում առանց Հոմերոսի, Նարեկացու, Դանթեի, Շեքսպիրի և ուրիշ մեծ սերմնացանների դարավոր հացի:

Է՛հ, կարելի է այս մասին անվերջ խոսել, բայց իմ մեջ կուտակվել է ինքնախարանման չգիտեմ դրական, թե բացասական լիցք, որը պարպել եմ ուզում. միշտ այսպես է լինում, երբ քննադատում եմ ուրիշներին: Ես պատկանում եմ մարդկանց այն տեսակին, որոնց աչքերը որքան դուրս են նայում, այնքան էլ ներս, ու տառապում են կրկնակի՝ թե՛ ուրիշների, թե՛ իրենց ձեռքին: Նրանք՝ այդ մի քանի երիտասարդ բանաստեղծներն այնպիսին են, իսկ ե՞ս... Մեկն ինձ հարցնող լինի՝ դո՞ւ ինչ ես, քո ո՞ր տողն է շուրթից-շուրթ անցնում, քո ո՞ր երգն է մարդուն օգնում մարդ դառնալու տառապալից ճանապարհին: Տերյանի պես աշնան ծառուղիներով անցե՞լ ես, «սահուն քայլերով, աննշմար որպես քնքույշ մութի թև» և մտե՞լ ես դալուկ տերևների մեջ թախծող սիրահարի սիրտը: Չէ՛, դրանք անհաս ցնորք են եղել ինձ համար: Ես միայն զգացել եմ, թե ինչպես Տերյանը հղկել է ամեն մի տողը, բառը, նույնիսկ «հնչյունը»: Խեղճ թարգմանիչն

ի՞նչ անի, եթե Տերյանը գրել է ոչ թե ուրիշների, այլ իր ժողովրդի համար, որը նրա համար աշխարհ էր:

Այդպես խոժոռված մի նայիր իմ սիրելի ընկեր, իմ Սանչո-Պանսա, նորից հայտնվել է Դոն-Կիխոտը, իր նիզակի նման մի նիզակ է տվել իմ ձեռքը, չգիտես որտեղից ինձ համար ճարել է հազար տեղից ծակծկված վահան և իր հետ կռիվ է տանում ինձ: Անշուշտ դու հասկացար, որ ես նիզակ ասելով նկատի ունեի գրիչը, որ ահա թղթի վրա թողնում է այս չափածո տողերը: Ի՞նչ կարող ես անել՝ ճակատագիր է:

Իմ հին ընկեր, Արտաշես Սարգսյան, նախորդ նախադասությունը գրելիս ես տեսա քո քմծիծաղը. չէ, ես վաղուց եմ համոզվել, որ բնությունն իմ մեջ չի դրել ոչ որոնման, ոչ ատելության, ոչ սիրո, ոչ փառամոլության ծայրահեղորեն ընդգծված կիրք, նույնիսկ անհույս սիրո ցնորքներում ինձ գերազանցողներ կան, տիեզերքում թափառելու անրջանքում՝ նույնպես: Գյոթեն ու Շեքսպիրն ինձ անպետք շաղախ կհամարեին Ֆաուստ ու Վերթեր, Համլետ ու Օթելլո ստեղծելիս: Այնուամենայնիվ, ես էլ որոնման տենչ ունեմ և հիմա մի ետադարձ հայացք եմ նետում իմ պատանեկության անցած ճանապարհին: Հիշողությանս մառախուղը ճեղքելով՝ բացվում են վրաս քո ոգևորված աչքերը: Դու կարդում ես իմ բանաստեղծությունները, որ կանացի մի նուրբ ձեռք արտագրել է մեր պատի թերթում: Այդ «մերը», ինչպես հասկացար, Լենինականի մանկավարժական ուսումնարանն է, ուր մենք միմյանց առաջին անգամ «բարի լույս» ասացինք: Մեր կյանքի լուսաբացն էր և կարծում էինք, որ շատ ավելի շքեղ են լինելու կեսօրն ու մայրամուտը: «Մեծ բանաստեղծ է ծնվել իմ ընկերը», - պատի թերթի մոտ կանգնած մրմնջում էիր դու՝ երկրորդ անգամ կարդալով իմ այն երկու փոքրիկ երգերը, որոնցից միայն այն է մնացել իմ

հիշողության մեջ, որ փոքրիկ էին: Հետո դու ինձնից ուրիշ երգեր ուզեցիր. «Լավն են, շատ լավն են»: Ուսումնարանն ավարտելուց հետո դու դրանք ընթերցել էիր ուրիշների մոտ և երբ նրանք չէին հավանել, կռվել էիր նրանց հետ, քո սպանիչ քմծիծաղով «անճաշակ» անվանել նրանց: «Դեռ սպասեք, աշխարհը կխոսի նրա մասին»: Աշխարհը լուռ է, և ես նրա համար գոյություն ունեմ որպես մի մարդ, որ ապրում է Երևանում, կանոնավոր կերպով տան վարձ է մուծում և հիշում է Լենինականում ապրող իր հին ընկերոջը: Պարզ է, ես չափազանցրի. աշխարհի համար ես գոյություն չունեմ թեկուզ այդպիսին:

Հիմա իմ երգերը կարդալիս ոչ ոք չի ասում՝ «դեռ սպասեք, աշխարհը կխոսի նրա մասին», իսկ երբ դու ես ընթերցում, քմծիծաղիդ դաշույնն իմ կողմը դարձրած՝ ասում ես՝ սառն է, կեղծ է, թույլ է... Քո Պեգասը, ասում ես, փայտից է, իսկ փայտե ձին միայն երեխաներին կարող է տեղ հասցնել:

Ինձ թվում է, որ հասկանում եմ քեզ, հասկանում եմ, որ դաժանորեն խաբված ես դու, դեպի Պառնասի բարձունքներն իմ կատարելիք գրոհների երբեմնի շեփորահար: Դու հավատով շեփորեցիր, քո թոքերի ամբողջ ուժով, բայց ոչ մի գրոհ տեղի չունեցավ և դու հուսահատության ցավից շրթունքներդ կրծոտելով՝ ջախջախեցիր շեփորը: Այդպես է, երբ հիասթափվում ես, հիացմունքի բոլոր աստղերն ես պոկում, մինչև վերջինը: Եվ մնում է մութ երկինք՝ մի մրոտված թիթեղ՝ գոգավորված գլխիդ վրա:

Բայց դու ձայնդ ցածրացրու, ավելի լավ է՝ լռիր, իմ էության խորքերում վաղուց ի վեր քո հաստ մարմինը հաստատապես տեղավորած Սանչո-Պանսա, դու, որ գեղջկական կոշտ ափով ծանր ու թեթև ես անում բոլոր խոհերն ու զգացմունքները, դու ստեղծագործել չես կարող: Ես

նախընտրում եմ Դոն-Կիխոտի խենթությունը: Իմ մեջ քեզնից անբաժան է այդ մարդ-աստվածը, որ արարում է արվեստի շքեղ դղյակներ: Նա իր նիզակն է խրում կասկածի աչքերի մեջ, նա տկար մարմնին ուժ է տալիս կռվելու ամեն հույս ու ոգևորություն ալրափոշու վերածող հողմաղացների դեմ: Եվ մի կարծիր, որ նա քեզնից պակաս զորեղ է, որովհետև ամեն քայլափոխի տապալվում է գետին: Նա գիտե նաև գետնից բարձրանալու գաղտնիքը: Ես սիրում եմ նրան, ինչքան էլ որ ծանրացած եմ քեզանով: Ես քեզ էլ եմ սիրում, որովհետև առանց քեզ այնքան բան անհայտ կմնար: Առանց քեզ ինչքան պանդոկներ դղյակ կհամարվեին: Առանց քեզ գլխի չէի ընկնի, որ վերջնամաս չունի իմ մի պոեմը:

Հայտնագործումը, Սանչո, այս աշխարհի ամենամեծ պարգևն է, որ տրված է մարդուն: Թող անիծյալ լինի նա, ով կարհամարհի այդ սրբազան կրակը: Ահա ես հայտնագործեցի, որ կարծես պոկված է և կորած իմ ստեղծագործության վերջին էջը և դեռ կգտնեմ երեք-չորս տասնյակ տողեր, որոնց համար շնորհակալություն եմ հայտնում քեզ, իմ հավատարիմ զինակից...

Ներիր, որ Դոն-Կիխոտի ոճով խոսեցի: Մի պահ, ինձ թվաց, թե դու իսկական Սանչոն ես կանգնած իմ դեմ, բայց երբ ուշադիր նայեցի, տեսա նորից քո ծանոթ դիմագծերը, իմ հին ընկեր Արտաշես Սարգսյան: «Շնորհակալություն հայտնելու կարիք չկա,– ասացիր դու: – Շնորհակալություն հայտնելով դու ուզում ես հավատացնել, որ ինչ–որ կարևոր բան ես ստեղծել: Չեմ հասկանում, ինչքա՞ն կարելի է սովորական պանդոկը շփոթել դղյակի հետ: Վերջապես դու ո՞վ ես, որ նստել ես ու դատողություններ ես անում քո և քո ստեղծածի մասին: Ո՞վ է քեզ ճանաչում»:

Ա՛խ, իմ սիրելի ընկեր, կարծես երկարում է իմ ճանապարհորդությունը դեպի անցած տարիները։ Երկարում է և քո տանջող խոսքերի մտրակը, որ հասնում է իմ հոգու բոլոր անկյունները։ Արյուն է ծորում իմ վերքերից։ Դոն-Կիխոտի համար հեշտ էր, նա իր մեջ միայն իրեն էր կրում, ընկնում էր, բարձրանում, միայն մարմինն էր պատվում վերքերով, հոգին դարձյալ հավատում էր իրեն, մնում ամբողջական, լիքը իր արածի վեհության գիտակցությամբ։ Սանչո–Պանսայի համար նույնպես հեշտ էր, որովհետև նա նույնպես իր մեջ միայն իրեն էր կրում, մի մարդու, որը չգիտեր տարակուսանքն ինչ բան է։ Ես իմ մեջ կրում եմ այդ երկուսին միասին։ Նրանք հակոտնյաներ են, բայց իմ հոգին արյուն տալով տենչում է բարձրանալ լեռները։

Ինչ ուզում ես ասա՝ անտառները լավ բան են։ Ուրիշներն էլ այդ գիտեն և տեղ-տեղ լերկ լեռնալանջերին նոր տնկած թփուտներ են երևում։ Ինձ ասացին, որ դա հողմահարության դեմ ձեռնարկված միջոցառում է։ Ուրեմն կռվում են հողմահարության դեմ։ Բայց ինչու թզուկ թփուտներով, թող իսկական անտառ տնկեն։ Ես չեմ սիրում թփուտները, որոնք զբաղեցնում են ծառերի տեղը։ Գերագույն հաճույք է, երբ անտառ մտնելով գտնում ես մի ծառ, որը քո մինչ այդ տեսածներից ամենաբարձրն է։ Հետո փնտրում ես նրանից բարձրը, երբ գտնում ես՝ կարծես դու էլ բարձրանում ես։ Անվերջ փնտրում ես բարձրից բարձրը, ինչպես արվեստում է։ Ես չեմ սիրում թզուկ թփերը։

Տեսնում եմ, քո դեմքին նորից քմծիծաղն է ծաղկում, իմ անմոռաց Արտաշես Սարգսյան։ Դու պիտի սիրեիր թփուտները, ասում է այդ քմծիծաղը, դու պիտի ատեիր երկնագնա կաղնիները, որովհետև եթե նրանք չլինեին, դու բարձր կթվայիր։

Ոչ, իմ բարեկամ, ես չեմ սիրում թփուտները գրականության մեջ։ Ճիշտ է, անցորդը կարող է նստել նրանց տակ, միաժամանակ գլխարկը կախել բարալիկ ճյուղից, բայց ես չեմ ասի՝ նայիր՝ թփուտն էլ կարող է օգտակար լինել մարդուն։ Ես գրականության անտառն էլ մտնելիս փնտրում եմ ամենաբարձր ծառը։ Սիրում եմ կանգնել այդ ծառի ստվերում և նայել վեր՝ երկնքի դեմքին քսվող ճյուղերին։ Գլխարկս ընկնում է այդ հսկայի ոտքերի տակ։ Հավատա, ականջս սեղմում եմ բնին՝ լսելու համար նրա աճման շշուկը։ Ուզում եմ ավելի բարձրանա, ավելի քան բրիտանական կաղնին, որի հանրածանոթ անունը Շեքսպիր է։ Դու այն կարծիքին չե՞ս, որ մարդկության գեղարվեստական միտքը նրանից ավելի բարձր թռիչք չունի, իսկ ես այնպես եմ ուզում, որ ունենա, որ մարդկային հնարավորության սահմաններն ավելի մեծ լինեն։ Ախր շատ եմ սիրում երկրաբնակ մարդուն, չեմ ուզում, որ նա մարսաբնակի մոտ կանգնի վար խոնարհած թարթիչներով։ Ուզում եմ մարդն ավելի բարձր լինի իմ աչքում, որովհետև ես մարդ եմ։

Իսկ գաճաճ թփեր, կրկնում եմ, չեմ սիրում։ Խղճում եմ, երբ գաճաճն իրեն հսկա է երևակայում։ Լալիս եմ, որ երբ կարող էր, հասակ չի նետել՝ ոչ իր մեղքով։ Ջարդել եմ ուզում, երբ փորձում է կրծել մեծերի արմատները։

Զգալ այդքանը և… տարիները ձեռքից բաց թողնել։

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ծխի ու փոշու ամպերն այլևս երկրաշարժի օրվա պես կանգնած չեն Լենինականի վրա։ Ավերակներ են ամենուր։ Ջարդված կողերով շենքերը վիրավոր զինվորների նման կռվում են մահվան դեմ։ Կռիվ է ու մահ, ինչպես պատերազմի

դաշտում։ Այդ կռվում զոհվել է այն շենքը, ուր ես սովորել եմ։ Այն ժամանակ մանկավարժական ուսումնարան էր կոչվում, հետո ինստիտուտ դարձավ։ Փլատակների տակ ուսանողներ են թաղվել ամբողջ կուրսերով։ Նրա՞նց համար է ցավում սիրտս, թե՞ իմ, որ նրանց նման ինձ էլ կարող էր նույնը վիճակվել։ Ե՛վ նրանց, և՛ իմ։ «Ի՞նչ է այդ զգացումը,- մտածում եմ,- որը կորցնելիս այլևս մարդ չես, այլ գազանից ավելի վատթարը, քանզի գազանը միայն ժանիքներ ունի, ոչ թե ժանիքավոր խելք, որն աշխարհում այսքան շատ ոճիրներ է հորինում։ Այդ զգացումն է այն բերրի ենթահողը, որից ինչքան գեղեցիկ ծաղիկներ են ծլում՝ գթասրտություն, խիղճ, կարեկցանք և այլ անուններով։ Երբ մեռնեմ, դրանք այլևս չեն լինի ինձ համար։ Հանդարտվիր, սիրտ, բոլորն ասում են, որ արդեն ծեր ես, միայն դու ես քեզ երիտասարդ համարում։ Հավատա նրանց և մխիթարվիր, որ մահդ հեռու չէ, հողի տակ այս արցունքոտ զգացումներն արդեն չես ունենա...»։

- Շա՞տ մարդ է զոհվել ձերոնցից,- լսում եմ ականջիս տակ։

Կողքիս հայտնվել է ակնոցավոր մեկը, որն ուշադիր զննում է դեմքս։ Ո՞վ է։ Երևի ինձ պես մի սգավոր։ Հիմա ո՞ւմ կհանդիպես, որ սգավոր չլինի։

- Մերոնք բոլորն էլ փրկվել են։ Ես այս շենքում եմ սովորել պատերազմից առաջ։ Հուշերս ինձ ձգել, բերել են այստեղ,- բացատրում եմ անծանոթին՝ ցրելու համար նրա տարակուսանքը, թե եթե ոչ մի հարազատ չեմ կորցրել, ինչո՞ւ եմ այսքան երկար կանգնել այս ավերակում և լռելյայն սգում։

- Դու... Դու... Արտակ Մարգարյա՞նն ես։

- Այո,- զարմացա ես։

- Ինձ չե՞ս ճանաչում։ Ես Արշակ Մարգարյանն եմ։ Հիշո՞ւմ ես, քեզ ասում էին՝ փոխիր մի տառ և դարձիր Արշակ Մարգարյան։ Հիմա հիշեցի՞ր, նույն կուրսում էինք սովորում։

Ես ճանաչեցի նրան՝ իմ երբեմնի մտերիմ ընկերոջը, որին հաճախ եմ հիշել, բայց չենք հանդիպել չորս տասնյակ տարուց ավելի։ Նա երկար ժամանակ ապրել է Մոսկվայում, ուր պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ ես արմատակալել եմ Երևանում։ Մեր հանդիպման ուրախությունը մի դալուկ ծաղիկ էր վշտի ցրտերում։ Մենք՝ երկու պապիկ, դողալով այդ ցրտերում՝ խոսեցինք այն հեռավոր օրերի մասին, երբ շատ էինք աղքատ, բայց և շատ հարուստ երազանքի պաշարներով։ Հիմա դրանք ավերակ են դարձել մեր ուսումնարանի շենքի պես։

- Ինչ հիմարն էի այն ժամանակ,- ասաց Արշակը,- այնպես ուզում էի, որ սա փուլ գար։ Երկրաշարժ լիներ և փուլ գար։ Միայն սա։ Կողքի շենքերին ոչինչ չլիներ։ Ես վերադառնայի մեր գյուղը, ավարտեի միջնակարգը, որպեսզի հետո համալսարան գնայի, հետո՝ ասպիրանտուրա։ Իսկ մանկավարժական ուսումնարանը թևիս տակ դնելու էր չոր ու ցամաք մի դասամատյան՝ ամեն օր իբրև ձանձրույթ թերթվող էջերով։

-Բայց ի՞նչ երկրաշարժ պիտի լիներ, որ հիմնահատակ կործաներ միայն մեր ուսումնարանի շենքը։ Եվ հետո չէ՞ր ճարվի մի ուրիշ շենք, ուր մենք դասեր կանեինք,- զարմացա ես։

-Միամիտ գեղջուկ պատանի էի,- շարունակեց նա,- բայց և ազնիվ։ Ինձ ո՞վ էր ասել, որ ընդունելության քննությունները հաջող հանձնեմ։ Կկտրվեի, կվերադառնայի մեր գյուղի միջնակարգ դպրոցը և ամեն ինչ կլիներ իմ ուզածի պես։ Հայրս կբարկանար, մի լավ կծեծեր, որ իր ցանկությունը չեմ

կարողացել կատարել։ Ոչինչ, կդիմանայի։ Թե չէ ինչի՞ նման էր, ամեն օր աստված էի կանչում, որ մի երկրաշարժ լիներ։ Աստված ինչո՞ւ լսեց խոսքս։ Այս ինչ բերեց մեր գլխին։

- Ավա՛ղ...,- նրա միտքը շարունակեցի ես,- ինչքան խելացի գլուխներ ճզմվեցին հենց այս մի շենքի քարերի տակ։ Ինչքա՞ն պիտի ապրեին նրանք։ Երևի շատ-շատ հարյուր տարի։ Բայց ինչո՞ւ է սիրտս կծկվում ցավից, չէ՞ որ վաղ թե ուշ նրանք էլ պիտի հասնեին ծայրին, որից հետո սկսվում է անէությունը, ուր ոչ ոք չկա, ոչ հարցնող, ոչ պատասխանող, թե ինչից են մեռել՝ գնդակի՞ց, կույր աղիքի պայթելո՞ւց, թե՞ երկրաշարժից։

- Երկրաշարժի ժամանակ որտե՞ղ էիր,- հետաքրքրվեց նա։

- Աշխատավայրում։ Լենինականի վրայով դեպի Երևան թռչող ինքնաթիռի օդաչուն, որ գործընկերուհուս ամուսինն է, ռադիոհաղորդումից դեռևս մեկ ժամ առաջ մեզ հայտնեց, որ քաղաքը կորած էր ծխի ու փոշու մեջ։ Երևանցիներս, որ տագնապալից օրորվել էինք յոթբալանոց երկրաշարժի հարվածներից, հասկացանք, որ էպիկենտրոնը Երևանը չէր, քանի որ շենքերը կանգուն էին։ Իսկ Լենինականում երկրաշարժն ահավոր ուժգնություն էր ունեցել։ Հետո իմացանք, որ գետինը ծովի պես ալեկոծվել էր, բարձրահարկ շենքերն իրար վրա շարված լուցկու տուփերի պես փուլ էին եկել։ Դա ինձ համակեց այնպիսի սարսափով, որ դրանից հետո փողոցով քայլելիս ես վախենում էի, որ շենքերը փուլ կգան վրաս և տագապահար նայում էի, թե ո՛ր կողմը պիտի փախչեմ, եթե Երևանում էլ գետինն ալեկոծվի ծովի պես։ Խաղաղվում էի, երբ արդեն շենքի ներսում էի։ Ի՞նչ կարող եմ անել, եթե երկրաշարժ լինի։ Ոչ մի բան։ Միայն նայել, թե

ինչպես առաստաղն իջնում է գլխիս։ Երկու կամ երեք վայրկյան, և այլևս ոչինչ չեմ զգա։

- Մեկ է, մի օր պիտի մեռնենք,- նկատեց Արշակը,- մենք մեր սիրելի քաղաքի փլատակների տակ մնացածներից լավը չենք։ Ճակատագիր է, որից խուսափել ոչ մի մահկանացուի չի հաջողվել։

-Միայն թե կարողանանք մեռնել ժպտալով,- ավելացրեցի ես։ Եթե չկարողացանք ժպտալով ապրել, գոնե կարողանանք ժպտալով մեռնել։ Վերջին պահի զգացումն է որոշիչը, թե ով ես դու, և նրա լույսն է, որ պիտի սփռվի անցյալ կյանքիդ վրա։ Կարո՞ղ եմ այդպես մեռնել։ Երևի այո, եթե մեռնեմ անկողնում, հարազատ մարդկանցով շրջապատված։ Երևի ոչ, եթե տեսնեմ, որ ինձ հետ բոլորն են մեռնում։ Ժամանակն աշխարհի լայնքով ու երկայնքով հոսող Լեթա գետ է, ամեն ինչ թաղում է, ամեն ինչ մոռացնում։ Սա էլ կմոռացվի։

Արշակը պայծառացած ժպտաց, ինչպես այն մարդիկ, որ թանկագին մի բան են կորցրած լինում և հանկարծ գտնում են։ Մենք հիշեցինք երկրաշարժից զոհված մեր դասընկերոջը՝ Սամվել Սարգսյանին, որը մինչև իր օրերի վերջը երիտասարդ էր մնացել և մահից երկու տարի առաջ սկսել էր բանաստեղծություններ գրել։

- Ափսո՛ս, որ ես և նա ուսումնարանից հետո չենք հանդիպել,- ասաց Արշակը,- հաճա՞խ էիք հանդիպում։ Նրա հետ զրուցելը պետք է, որ քեզ համար եղած լինի ոգու լիություն, որի հակառակը՝ ոգու սովը, հիմա հաճախ ենք օգտագործում։

- Ո՞ր ամսին էր՝ չեմ հիշում։ Բայց լավ հիշում եմ, որ Լենինականի կայարանում էի, շուրջս վխտում էր Երևան մեկնողների բազմությունը։ Ես էլ էի մեկնելու և սպասում էի

ընկերոջս, որ միասին նստենք գնացք։ Վերջին անգամ այդ օրն եմ հանդիպել Սամվելին։ Նա էլ Երևան էր գնում։ Փոքրիկ մի ժողովածու ներկայացրել էր հրատարակիչներին և գրեթե մոռացել այդ մասին։ Կարդաց ինձ մոտ։ «Արծիվներն իրենց կտուցներն արնոտ / Սրբում են հիմա իմ սրտի վրա»։ Այդպիսի տողեր շատ կային, բայց այդ երկուսը մնացին իմ ենթագիտակցության մեջ որպես այնպիսիք, որոնք խառնվում են ստեղծագործական մտորումներին։ Ամեն բանաստեղծ ունի ուրիշների այդպիսի մի քանի տասնյակ կամ մի քանի հարյուր տողեր, որոնք լուսավորում են իր ճանապարհը պոեզիայի մթամած խորխորատներում։

Արշակն ուշադիր լսում էր ինձ, ակնոցի ապակիներից նայող կապույտ աչքերը հորդորում էին շարունակել միտքս։

-Հրատարակիչները մերժել էին ժողովածուի լույսընծայումը,- շարունակեցի ես,- Սամվելը հանգիստ էր՝ դա համարելով բնական բան։ Հիսունն անց մի մարդ, որ ոչ մեկին հայտնի չէ, հանկարծ ուզում է, որ իրեն բանաստեղծ համարեն, տպագրեն գիրքը։ «Ոչ, սիրելիս, մամուլները քեզ համար չեն, շատ անվանիներ ունենք, երիտասարդ շնորհալի բանաստեղծներ ունենք, որոնց պիտի ճանապարհ տանք։ Դու ո՞վ ես, ոչ անվանի ես, ոչ երիտասարդ»։ Այդպես չէին ասել, բայց ինչ ասել էին՝ այդ իմաստն ուներ և գիրքը վերադարձրել էին՝ կից գրախոսականով, որի հեղինակը գտնում էր, որ եթե արծիվներն արյունոտ կտուցներ ունեն, ապա գիշատիչ են և բանաստեղծի սիրտը չպիտի աղերսվեր նրանց հետ։

-Ասում են՝ ինչքան մարդ, այնքան՝ կարծիք,- ընդհատեց Արշակը, սակայն չգիտես ինչու՝ նրա ձայնի մեջ ինչ-որ խայթող շեշտ կար։

-Ասողները ճիշտ են,- առարկեցի ես,- եթե կարծիքները վերաբերում են հագուստին, ոչ թե Դուրյանի «Տրտունջք»-ին։

Վերջինիս նկատմամբ ժխտական կարծիքը, եթե մի այլ տեսանկյունից բարձր մակարդակով հիմնավորված չէ, մեզ մտածել պիտի տա այն արտահայտողի տգիտության մասին։

- Մեծ պոեզիան համընդհանուր ընկալում է պարտադրում,- նկատեց Արշակը։

- Սամվելի պոեզիան այդպիսին չէր, բայց և այնպիսին էլ չէր, որ չնկատվեր։ Եթե այդ գիրքը մի երիտասարդ գրած լիներ, նրան խոստումնալից կհամարեին, եթե անվանի բանաստեղծ՝ գովքի անձրև կտեղար։ Չեմ ուզում վերացական վեճի մեջ մտնել գրախոսականի հեղինակի հետ, քանի որ գիրքը չի հրատարակվել, և ընթերցողը չի կարող որոշել, թե մեզնից ով է ճիշտ։ Ինձ մնում է միայն ափսոսալ, որ իմ բարեկամն այդքան ուշ էր մտել ռիթմի թագավորությունը և անտարբերության խուլ պատը քանդելու համար պիտի կրկնակի տաղանդ ունենար, մեկը՝ գրելու, մյուսը՝ ճակատամարտելու համար։

- Բայց ինչո՞ւ էր ուշ սկսել,- դարձյալ ընդհատեց Արշակը։

- Բացատրությունը թերևս տալիս է այն անտարբեր վերաբերմունքը, որ նա ունեցավ իր գրքի մերժման նկատմամբ։ Իրեն բանաստեղծ չէր համարում։ Ինքն էլ չէր կարողանում բացատրել, թե ինչպես եղավ, որ ներշնչման պահեր ունեցավ և գրեց այդ բանաստեղծությունները։ Ես գիտեմ, որ այդպիսի պահեր կարող էր ունենալ և պատանի հասակում, եթե ձգտեր բանաստեղծ դառնալ՝ ճիգ ու ջանք չթափեց։ Մղումն անպայման քաղցր պտուղներ կտար։ Ճիգ ու ջանք չթափեց նաև գիտնական դառնալու համար։ Դերանունների մասին մի անսովոր հոդված էր գրել, հեղաշրջող մտածողությամբ զարմացրել որոշ լեզվաբանների, որոնցից ոչ մեկը չուզեց նրա հետ սավառնել

անծանոթ հեռուներում: Մի պաշտոնավոր լեզվաբան կարծելով, որ նա տենչում էր բանասիրության թեկնածուի կոչում, խորհուրդ տվեց, դիսերտացիա գրել Գարեգին Սևունցի լեզվի և ոճի մասին: Չգրեց: Իր գիտելիքների վրա ի՞նչ պիտի ավելացներ թեկնածուի կոչումը:

Արշակն ինձ լսում էր արդեն մի տեսակ անհաղորդ, չէր խոսում, ասես վախենում էր որևէ անզգույշ բառով վիրավորել ինձ: Այդ անտարբեր դեմքը գուցե պատնե՞շ էր ներքին հեղեղի դեմն առնելու համար: Ի՞նչ հեղեղ էր, ինչո՞ւ: Եվ արդյոք ո՞ւմ դեմ էր ուղղված:

-Կարող էր և լավ շախմատիստ լինել,- այնուամենայնիվ շարունակեցի ես,- միաժամանակյա խաղաշարի ժամանակ հաղթել էր Վիկտոր Կորչնոյին: Բոլորն արդեն պարտվել էին, միայն ինքն էր մնացել ահեղ գրոսմայստերի դեմ: Քայլ, էլի քայլ, գրոսմայստերը բարդացնում է խաղը՝ փորձելով խճճել անանուն մրցակցին: Չի հաջողվում: Նյարդային շարժումով մի կողմ է հրում իր սպիտակ թագավորին՝ ի նշան պարտության և հեռանում է: Ոչ բանաստեղծ, ոչ գիտնական, ոչ շախմատիստ: Դրանցից մեկնումեկը դառնալու մղում չուներ: Ինչ կար՝ կար: Նրան չէր գայթակղում համբավը. պետք չէր ճիգ ու ջանք թափել դրան հասնելու համար: Միջնակարգ դպրոցի տնօրեն էր և ավելին լինել չէր ուզում: Ասում էր. «Ինչ լավ է, որ մարդկությունը կարիք է ունեցել դպրոցի, իսկ դպրոցը՝ ուսուցիչների և դիրեկտորի»: Իրեն խորտակված կզգար, եթե ձեռքից խլեին մատաղ հոգիներին դեպի բանաստեղծություն և գիտություն ճանապարհ ցույց տալու հնարավորությունը: Նրա մահով պակասեց մեկն այն ստվար բանակից, որը ճանկեր չունի, կռիվ չի մղում ավելի շատ ինչք և փառք զավթելու համար:

Ես զուր պատմեցի Սամվելի մասին։ Արշակը մռայլվեց, ոչ մի դատողություն չարեց նրա մարդ տեսակի մասին, այլ միայն ասաց.

- Այնպես ես գովում Սամվելին, կարծես հանճար ես հայտնագործել, որը չէր ուզում հանճար լինել։ «Երեքներով» սովորող էր, էլի՛։

Եվ Արշակը գնաց՝ ինձ տարակուսանքի մեջ թողնելով։ Տասնամյակներ տևած ընդմիջումից հետո մի անգամ հանդիպեցինք, և այն էլ այսպիսի հանգամանքներում, ու նա այսպես անհայտացավ։ Ո՞վ է այս Արշակը։ Իմ վաղեմի դասընկե՞րն է։ Չէ, նա չէ, ուրիշ է սա, ուրիշ Արշակ։

Շատերը կան, որ հրճվում են իրենց գերազանցությամբ, հատկապես գերարժեքության բարդույթով տառապողները և չեն հանդուրժում, որ իրենց կողքին կանգնի որևէ ընկեր կամ ծանոթ։ Ես գրեթե թերարժեքության բարդույթ ունեմ, որ կարողանում եմ հաղթահարել, իսկ Արշա՞կը… Մի՞թե նա տառապում է գերարժեքության բարդույթով։ Երկուսն էլ հիվանդություն են։ Բայց առաջինը վտանգավոր է հատկապես ի՛ր համար, երկրորդը՝ հատկապե՛ս ուրիշների համար, երբ գերարժեքությամբ հիվանդ՝ առաջ են մղվում՝ ոտնատակ տալով արդարության այնքա՛ն ծաղիկներ։ Եվ ավելի դժվար է նրա՛նց բուժել քան թերարժեքությամբ հիվանդներին։ Չէ, Արշակն այդպիսին չի լինի։ Գուցե Արշակն էլ գրեթե թերարժեքության կոմպլեքս ունի, որը հաղթահարելու համար երբեմն ընկնում է չափազանցության մեջ։ Ինձ հետ էլ է երբեմն այդպիսի բան պատահում։ Եվ հետո՝ ինչպե՞ս կորոշես, անցա՞ր, թե՞ չանցար սահմանը։ Գուցե իմ ենթադրություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ։ Գուցե պատճառը երկրաշարժն է, որն իմ ուղեղն էլ քարուքանդ արեց և փլվածքների տակից ծլեցին այս մտքերը։

ԷՍՍԵՆԵՐ

ԲՌՆԱԿԱԼԸ

Ամեն ծնվող պիտի մեռնի։ Ճիշտ չի լինի ասել, թե մահվան օրենքն ամենահաստատունը չէ աշխարհում, թե դրա մեջ ինչ-որ թեական բան կա։ Այն միակ անժխտելին է, միակ անողոքը բոլորի նկատմամբ։ Մեկ անգամ ես աշխարհ գալիս, այլևս չի կրկնվի կյանք կոչված հրաշքը, ուրեմն այնպես ապրիր, որ չաղարտես այդ հրաշքը, օգտագործես մարդ լինելու, բարիք արարելու մի անգամ տրված հնարավորությունը։ Այդպես ապրողներ շատ կան։ Իմ օրհնանքը նրանց։ Բռնակալին խորթ է այս մտածողությունը։ Նա մտածում է՝ վայելիր կյանքը՝ թեկուզ ուրիշներին զրկելով վայելքից, եթե հարկ է՝ ջարդիր, փշրիր, սպանիր, քո կամքը կատարիր՝ բռնանալով ուրիշների կամքի վրա։ Անե՛ծք նրան։ Բայց ո՞ր բռնակալն է բանի տեղ դրել անեծքը, բարձրացրած սուրը վայր դրել։ Տրորելով իր ժողովրդին, երբեմն նաև ուրիշ ժողովուրդների՝ նա հասել է իշխանության բարձրակետին, որպեսզի ծաղրի անիծողներին, նրանց անզորության մեջ տեսնի իր զորությունը։ Նրան ամենից առաջ և ամենից շատ հետաքրքրում է իր զորությունը, որն ինչքան էլ ավելացնում է՝ դարձյալ չի հագենում և նորից նետվում է առաջ՝ իշխանության նոր սահմաններ նվաճելու։ Նրա համար այսօրվա սահմանը միայն նախասահման է, ինչպես լինում է ազահության պարագայում, և այն սահմանը, որ պիտի նվաճի, չի մնալու այդպիսին, այլ դառնալու է նոր նախասահման։ Ազահությունը, ինչպես նաև նախանձը բռնակալի հատկանիշներ են։ Այս երկուսը սովորաբար հանդես են գալիս գիրկընդխառն, իսկ բռնակալի դեպքում՝ միայն և միայն այդ կերպ։ Որպեսզի բռնակալը լրիվ ձևավորվի, պետք է երրորդ

հատկանիշը ևս՝ փառասիրությունը։ Երեք հատկանիշներ, որոնք առատորեն սնում են գերարժեքության շեշտված բարդույթը, միավորում և ամբողջովին հաղորդում իշխանատենչության վայրագ գրգիռներ։ Երեքգլխանի դևն արդեն կա, հարկավոր է միայն իրերի բարեհաջող դասավորություն, որպեսզի նա սկսի իր վերելքն ուրիշների զրկանքների, տառապանքների և դիակների վրայով։ Նա ինքն է մեծ մասամբ ստեղծում վերելքի նախադրյալներ, ճակատագիրը օգնողի դերում է միայն։ Բայց ինչքան էլ մղվում է առաջ, միշտ չէ, որ բախտը ժպտում է նրան։ Երբեմն նա ոչ միայն չի կարողանում հասնել հաջորդ սահմանին, այլև ստիպված է նահանջել նախասահմանից էլ։ Անկո՞ւմ։ Ինչ էր տենչում և կյանքն ինչի առաջ կանգնեցրեց իրեն։ Եվ ոչնչության սարսափն է պատում նրան։ Այս սարսափի մեջ նա ավելի վտանգավոր է քան առաջ, երբ նորանոր սահմաններ է նվաճում։ Դեռևս իր ձեռքում մնացած տիրույթներում գործում է իր ամբողջ դաժանությամբ՝ հատկապես, երբ այստեղ հայտնվում են իր գահավիժումն արագացնողներ, արյան ծովի մեջ տենչում է մոռանալ իր ոչնչության սարսափը։ Չի ուզում կորցնել իր ուժի զգացողությունը։ Նրա արյունոտ ինքնահաստատման մեջ ավելի շատ վախ կա քան իսկական ուժ։ Վախը միշտ առկա է, նույնիսկ այն ժամանակ, երբ նա հաղթանակների զենիթում է։ Միայն թե այդ ժամանակ այն սոսկ անմարմին ստվեր էր, որը երբեմն-երբեմն անհետանում էր։ Հիմա արդեն իրական է և գործողության մղող նոր խթան։ Մեծ չափերի է հասնում կասկածամտությունը, որը նույն վախի արտահայտությունն է։ Այդ զգացումը տարբեր ուժգնությամբ ուղեկցում է նրան իր փառքի ստորոտից մինչև գագաթ և գագաթից մինչև ստորոտ։ Եվ այսպես՝ մինչև կործանվի։ Ուրիշներին կործանելով՝ կործանվի։

Բայց այս ամենն ինձ հիմք չի տալիս բռնակալին առերևույթ պատկերացնելու որպես հրեշ՝ ժանիքավոր, մռայլ, անհաղորդ։ Նա կարող է լիաթոք ծիծաղել, ժամերով զրույցի բռնվել։ Նույնիսկ սիրահարվել։ Բայց ամենից շատ սիրում է իրեն, չէ՞ որ ինքն ամենից խելացին է, այդպես են նրան հավատացրել շողոքորթողները։ Խելացի է անշուշտ, սակայն նրա ունեցածն այն մեծ խելքը չէ, որը դուրս չի գալիս բարության սահմաններից։ Ոչ էլ այն խելքն է, որ կարող է ճշմարտացի տեսնել հնարավորությունների սահմանները։ Խանգարում է գերարժեքության բարդույթը, որը հոգու հիվանդություն է։ Սակայն դա չի նշանակում, որ նա անընդունակ է ըմբռնելու իր խելքից ավելի մեծ խելքի առկայությունը, թեև չի հանդուրժում իր խելքից տարբեր խելք, իր ճշմարտությունից տարբեր ճշմարտություն։ Եվ տարբեր միջոցներով շարքից հանում է նրանց, ում նկատմամբ աստված ավելի բարեհաճ է գտնվել և մեծ խելք պարգևել։ Ահա բռնակալն ուղղում է աստծո «սխալը»։ Նա ճարպիկ է, բանիմաց, նախաձեռնող։ Գիտի, որն է ճշմարիտն ու արդարը, բայց երբ դրանք հակասում են իր իշխանությանը, ոտնահարում է առանց երկմտելու։ Խորամանկ է այն աստիճանի, որ կարողանում է ոճիր գործելիս անգամ երևալ բարի՝ այդ ոճիրն օգտագործելով իր բարի համբավի մեծացման համար։ Հենց դրանով էլ բռնակալը տարբերվում է ընտրյալ ղեկավարից, որին առաջնորդում են արդարությունն ու գութը։ Առաջնորդում են իսկապես։ «Առաջնորդում» են բռնակալին ևս, բայց միայն երևութապես։ Նրանն իր շահն է, իր իշխանությունը, իր ուժը, իր ռոբոտային թվաբանությունը, որը զուտ վիճակագրություն է՝ զերծ՝ մարդկային ճակատագրերից։ Թեև նրա կարգախոսները վեհաշունչ են, այլապես ո՞վ կգնար նրա ետևից։ Կեղծ վեհաշունչ, որովհետև տակտիկական քայլեր են միայն։ Նախատեսված են միամիտների համար։ Իսկ ոչ

միամիտները հասկանում են էությունը, մի մասը մարտնչում է դրա դեմ, մի մասը՝ կողմ: Եթե առաջինների մոտ գերակշռում են առաքինությունները, ապա երկրորդների մոտ գերակշռողը արատներն են: Բռնակալը հենվում է արատների վրա, որոնք կարող են ռեալ շարժիչ ուժ դառնալ: Նա լավ է ճանաչում արատները, որովհետև ինքը ևս դրանցից լիուլի ունի: Երդումները, ոչ իրենը, ոչ ուրիշներինը, նշանակություն չունեն նրա համար, չէ՞ որ հեշտությամբ կարող են խախտվել, իսկ շահերի համապատասխանությունը հաստատուն հիմք է, որը երաշխավորում է տևական հաջողություն: Մինչդեռ առաքինությունները չեն կարող այդպիսի հիմք լինել, որովհետև ձգտում են ճշմարտության: Բայց նա գիտի, որ կան դրանք, կան մարդիկ, որոնք կրում են դրանք և նրանք խմբվել են կամ պիտի խմբվեն իր դեմ: Կան նաև մարդիկ, որոնք իր պես արատները ծառայեցնում են սանդուղքով բարձրանալու համար, և ահա նա վերջիններիս վրա հենվելով՝ գործի է անցնում: Անողոք ձեռքը չի խնայում ոչ մեկին. իմացեք, ով իմ դեմ ելնի, կարժանանա նույն բախտին: Բռնակալը հաղթում է, բայց հենց այդ հաղթության մեջ կան նրա պարտության սաղմերը: Եթե ստվարանում է հաշտվողների, ստորաքարշների, քծնողների բանակը, ստվարանում է նաև մարտնչողների խումբը: Եվ նա մշտապես որոնում է ուժի նորանոր աղբյուրներ: Ճիշտ է, արատների դաշինքը մեծ ուժ է, սակայն դեռ բավարար չէ, հարկավոր է զրահ, որպեսզի այն անխոցելի դառնա: Այդ զրահը կամ նոր ուժն այն պաշտամունքն է, որ բռնակալն ստեղծում է իր անձի նկատմամբ: Աստված իմ, ինչպե՜ս կուրորեն հավատում և պաշտում են նրան: Եվ այդպես հավատալով ու պաշտելով կորցնում են իրենց մարդկային որակները: Ոչ, բռնակալը ժանիքավոր գազան չէ, քաղցկեղ է, որի մետաստազները տարածվելով՝ քայքայում են ամեն մի առողջ օրգանիզմ,

մեռցնում ամեն մի կենդանի բջիջ։ Նրա առաջնորդած պետությունը հիվանդանում է, ժողովուրդը կորցնում է բարի անունը։

***

Քսանինը տարի Ստալին անունով բռնակալը խորհուրդների երկրում ոտնատակ արեց ամեն ինչ, «խորհուրդ» բառից թողեց լոկ նրա դիակը թղթի վրա։ Ովքեր նրան կոչում էին իսկական անունով, փտում էին ինչ-որ տեղում կամ հողի տակ։ Մնացածները՝ մի մասը վախից, մի մասը անգիտությունից, հայր էին անվանում նրան, իմաստուն առաջնորդ, որն իրենց տանում է հաղթանակից հաղթանակ։ Ինչպես կուզեի մեկ ժամով հարություն տալ բռնապետի այդ դասական կերպարին, որպեսզի նա լսեր, թե ինչ են ասում իր մասին իր մահից հետո։ Թե չէ աշխարհից գնաց գոհ ու ինքնասիրահարված, այն պատկերացմամբ, որ եղել է «ազգերի երջանկության ճարտարապետ ու դարբին։ Իրականում սպանեց՝ ում կարող էր և ինչ կարող էր։ Դա սոսկ մի ոճիր չէր, այլ ոճիրների ընդհանուր հայտարար։ Սիրտս ցավում է ամեն մի սպանվածի համար, հատկապես սպանված Մտքի։ Ազատ միտքն իմ պատկերացումների մեջ միշտ էլ զուգորդվել է հրեղեն ձիերի ճախրանքի հետ։ Ես մանկուց պաշտել եմ հրեղեն ձիերին։ Տարիների ընթացքում չի նվազել իմ պաշտամունքը։ Հեքիաթներից է գալիս այն։ Համոզված եմ եղել, որ ոչ ոք չի կարող երկնքից ցած բերել նրանց կամ սպանել Միտքը։ Ավա՜ղ, հիմա այդպես չեմ մտածում։ Հրեղեն ձիերին սպանում են՝ նրանց մասին առասպելն սպանելով, այդ առասպելը սնուցող հողը քայքայելով։ Միտքն էլ են սպանում և շատ հեշտ՝ կամ ֆիզիկապես ոչնչացնելով սնուցող ուղեղը, կամ այնպես քայքայելով, որ նա չի ծնում ճախրող մտքեր։ Սպանել նրանց

կամ միտքը նրանց մեջ, ճախրող միտքը սպանել, մեծագույն ոճիր է, որ գործել է «Թիֆլիսցի նեղճակատ կինտոն»: Սիրտս մղկտում է այն ստեղծագործությունների համար, որոնք աշխարհ չեկան, որովհետև արարողը բիրտ ուժի հարվածով գնաց աշխարհից և այն ստեղծագործությունների, որոնք պիտի ծնվեին, եթե թմրեցնող մթնոլորտը չիշխեր ուղեղներին. հավատի վարդերի փոխարեն ծլում էր սոցիալիստական մոլախոտը, և քչերին հաջողվեց շատ թե քիչ քաղհանել իրենց արվեստի արտը: Ինչքա՛ն տաղանդներ չեղան այն, ինչ պիտի լինեին: Արյունոտ մթնոլորտը հանգեցրեց մի վիճակի, որն ի չիք կամ գրեթե ի չիք դարձրեց ափսոսանքը լավի ու գեղեցիկի կորստյան նկատմամբ: «Ամենայն կյանք լավ է մահից»,- բանտերում ծնունդ առած այս թևավոր խոսքը դիմանալու ուժ էր տալիս և բանտերից դուրս: Երբ դեմը կանգնած է մահը, մարդիկ հաշտվում են իրենց աղքատիկ գոյության հետ: Չէ՞ որ գոյությունը գերադասելի է ֆիզիկական ոչնչացումից: Հերոսներն այլ կարծիքի են, բայց ես խոսում եմ ոչ հերոսների մասին, նրանց, ովքեր տերևի պես քշվելով ֆիզիկական ոչնչության սարսափից՝ տանելի են համարում իրենց կյանքի գորշությունը: Դա այնուամենայնիվ կյանք է, որը մահից լավ է: Հարաբերականորեն ապահով գորշությունն աննկատ թափանցում է մարդկանց հոգիների մեջ և մեռցնում է այդ վիճակից դուրս գալու ձգտումը: Չլինի՞ թե հանկարծ չհաջողվի և իրենք եղածն էլ կորցնելով՝ դատապարտվեն կորստյան: Ստալինը շատ լավ գիտեր այդ սարսափի ուժը, որը մինչև այսօր էլ գործում է: Աղքատությունը, եթե ճիշտ ես գործադրում նրա լծակները, նույնքան հաջող զսպիչ դեր է կատարում, որքան բանակը: Սոված մարդու կախումն իշխանավորից նրա մեջ ի հաշիվ ազնվության և ըմբոստության՝ աճեցնում է քծնելու հատկություն, որն էլ հենց պետք է իշխանավորներին՝

ամենափոքրերից մինչև ամենամեծը։ Բայց բանակը նույնպես գործում էր, ավելի ճիշտ՝ նրա դարան մտած տեսակը՝ ՊԱԿ-ը։ Ինձ էլ հասան նրա սահմռկեցուցիչ շոշափուկները։

Պատերազմն ավարտվել էր։ Ես ուսանող էի համալսարանում։ Վերջապես կատարվել էր փիլիսոփա դառնալու իմ երազանքի առաջին մասը։ «Դիալեկտիկական մատերիալիզմ» կամ կրճատ՝ «դիամատ» առարկայից քննությունն է։ Իմ երրորդ հարցն է՝ «Ստալինի նորամուծությունները փիլիսոփայության մեջ»։ Ես չգիտեմ, թե «ժողովուրդների իմաստուն առաջնորդն» ինչ նորամուծություններ ունի, բայց գիտեմ, թե մարքսիզմի դասականներն ինչպես են ըմբռնել դիալեկտիկան և մատերիալիզմը։ Ասում եմ։ Դասախոսն ընդհատում է՝ դա Մարքսն է ասել։ Նորից եմ ասում։ «Դա Էնգելսի միտքն է, դու ասա, թե Ստալինն ինչ է ասել»։ Վերհիշում եմ ուրիշ մի միտք։ Դասախոսը կնճռոտվում է՝ դա Լենինն է ասել։ Հետո նորից՝ դա Էնգելսն է ասել, դա Մարքսն է ասել։ Իսկ Ստալի՞նը։ Ես չեմ իմանում ինչպես, ձեռքս խփում եմ սեղանին և գրեթե գոռում՝ Ստալինը ոչ մի նորամուծություն չունի փիլիսոփայության մեջ։ Դասախոսը և օգնականը շփոթված իրար են նայում։ Լսարանում ուրիշ մարդ չկա, երեքով ենք, ինձ «երեք» են նշանակում։ Եթե շատ անարդար գնահատական չլիներ, երևի կկատակեի՝ երեք, այսինքն ամեն մեկիս մեկական։ Սրտնեղած հարցրի՝ ես լավ պատասխանեցի, ինչո՞ւ երեք նշանակեցիք։ «Գնա, քանի աչքերդ չոր են»,- ասաց օգնականը։ Ես անմիջապես չհասկացա նրա խոսքի իմաստը։ Հետո փառք էի տալիս աստծուն, որ լսարանում երեքով ենք եղել, ուրիշ մարդ չի լսել իմ պատասխանը։ Դասախոսն ու օգնականն իրարից չեն վախեցել։ Թե չէ պարտավոր էին հայտնել՝ ուր որ հարկն է, թե այսպիսի մի ուսանող կա։ Բայց ինքը, ինքը՝ դասախոսը, ինչո՞ւ էր այդպիսի

հիմար հարց կազմել հարցաթերթիկում։ Խելացի մարդ էր, չգիտե՞ր, որ Ստալինը փիլիսոփայության մեջ նորամուծություններ չունի։ Էհ, գիտեր, բայց ո՞վ էր խելքը բանի տեղ դնում։ Չզրեր՝ մի կտոր հացից կզրկվեր։ Իսկ իմ արարքն ավելի շատ բնազդական էր, քան գիտակցված, ավելի շուտ՝ բռնկում, քան համոզմունք։ Համոզմունքը հետո եկավ։ Այն ժամանակ ինձպեսները շատ բան հասկանում էին, շատ բան էլ չէին հասկանում։

Ստալինյան մղձավանջի պատմությունն իմ կյանքում այսքանով չի ավարտվում, այն յուրատեսակ շարունակություն ունի։ Առաջին կուրսում կտրվել էի մի առարկայից և այդ ամբողջ կիսամյակի ընթացքում կրթաթոշակ չէի ստանում։ Իմ ապրուստի միջոցը կրթաթոշակի այդ մի քանի ռուբլիներն էին։ Մերոնցից օգնություն չէի ստանում, ունեի՞ն, որ օգնեին։ Օրումեջ երկու հարյուր գրամ սև հացն էր ինձ պահողը։ Նույնիսկ ռազմի դաշտում այդպիսի ծանր օրեր չեմ ապրել։ Չգիտեմ որտեղից, չգիտեմ ինչպես իմ մեջ մի անհույս ընդվզում էր զարթնել՝ կմեռնեմ, բայց համալսարանի պատերի տակ։ Ես ուզում էի ավելի վատթար լիներ իմ օրը։ Այդ ի՞նչ ցանկություն է, որ մի պահ զգում է մարդ դժբախտության հանդիպելիս։ Այն ժամանակ ես չգիտեի պատճառը, հիմա մտածում եմ, որ մարդու մեջ կա մի սենտիմենտալ հերոս, որին չի սարսափեցնում տառապանքը. թող ինձ տանջեն, թող նույնիսկ խաչեն, բայց ճակատս զարդարվի լուսապսակով, ինչպես զարդարվում է, օրինակ, վսեմ գործի համար զոհվածի ճակատը։ Նրան հիշում են, նրան փառաբանում են, քնքույշ զգացումներ տածում նրա նկատմամբ։ Դա դրականի այնպիսի որակ է, որն ի չիք է դարձնում կամ գրեթե ի չիք է դարձնում ոչնչության սարսափը։ Դուք չե՞ք ունեցել այդպիսի պահ։ Ես ունեցել եմ։ Բայց այդ պահի համար չեմ կարող շնորհակալություն հայտնել հայր Ստալինին, որը հոգ էր

տանում, որ երկու օրը մեկ մի կտոր սև հաց ուտեի։ Ահա այդ ժամանակ էր, որ նրա չեկիստներից մեկը գտավ ինձ։ Գիտեր, որ սոված եմ, ուստի պատրաստ կլինեմ ծառայելու իրեն։ Սկզբում ինձ թվում էր, թե մատնել են ինձ և ամբողջ մի ժամ մտածում էի, թե ով մատնած կլինի։ Մի կերպ կռահեցի, որ ե՛ս մատնիչ պիտի լինեմ։ Ես՝ մատնի՞չ… Երկու տարի տևեցին այդ չեկիստի և իմ հանդիպումները։ Ժամադրում էր այսինչ ժամացույցի տակ, ես վախենում էի հրաժարվել, բայց ընտրում էի այլ ժամացույց։ Հաջորդ օրը բարկանում էր՝ ինչո՞ւ չես եկել։ Ես ասում էի՝ դուք չեք եկել, ես երկար սպասեցի ահա այն ժամացույցի տակ։ Այնուամենայնիվ հանդիպումները տեղի էին ունենում։ Նա հատուկ սենյակ ուներ այն ժամանակ Ստալինյան կոչված պողոտայի վրա։ Ինձ մի անգամ տարավ այդտեղ և չորս ժամ շարունակ փորձում էր հավաքագրել։ Ես ասում էի՝ չեմ կարող։ Ինչո՞ւ, հարցնում էր։ Չեմ կարող, կրկնում էի, շնորհք չունեմ գործն այնպես առաջ տանել, որ ոչ ոք չիմանա։ Եթե վախը չկաշկանդեր ինձ՝ նրա երեսին կշպրտեի՝ ի՞նչ, դու ուզում ես, որ ես սպանեմ ուրիշի ազատ մի՞տքը, ես այդ աստիճանի ստոր չեմ լինի։ Նա մերթ սպառնում էր այն օրը գցել ինձ, որ շունն էլ ձեռքիցս հաց չառնի, մերթ այնպես էր խեղճանում, որ եթե ես չհամաձայնեմ ծառայել իրենց, աշխատանքից կհեռացնեն իրեն։ Պետք էր վերջապես դուրս գալ այս տանջարան-սենյակից։ Ստիպված գրեցի նրա թելադրածը. «Ես որպես Սովետական Միության ազնիվ քաղաքացի, պարտավորվում եմ...»։ Վերջում ավելացրի՝ եթե կարողանամ։ Դա մեր վերջին հանդիպումը եղավ։ Նրան փոխարինեց ուրիշը, որն ինձ առաջարկեց մի շատ հասարակ բան՝ գրել այն մարդու անուն-ազգանունը, որի ամեն քայլին պիտի հետևեի. ո՞ր գյուղից է, ծնողներն ովքե՞ր են, ի՞նչ է սիրում։ Անմեղ բաներ, որոնք ոչ մի կերպ մատնության բնագավառին չես վերագրի։ Ես հասկացա իմ նոր հոգեառի

խորամանկությունը։ Լսեցի, ասացի՝ եթե այդ առաջին քայլն անեմ, դրան կհաջորդի երկրորդը։ Ձեռքս դարձյալ խփեցի սեղանին։ Չեմ ուզում աշխատակցել ձեզ, ինչո՞ւ եք տանջում ինձ։ Պարզվեց, որ նա այնքան էլ հոգեառ չէր։ Ժպտաց և առաջարկեց գրել, որ այս մասին ոչ մեկին և երբեք չեմ պատմի։ Ես հաճույքով գրեցի՝ դժվարությամբ լողացող իմ նավից դեն նետելով այդ ծանր և վտանգավոր բալաստը։

Ոչ, այս պատմության իրական նպատակն ինձ շահեկանորեն նրանցից առանձնացնելը չէ, ովքեր մատնիչներ դարձան, ոչ էլ նրանց շարքը դասելու, ովքեր նույնիսկ կյանքի գնով պահպանել են իրենց արժանապատվությունը։ Գրավոր, թե բանավոր՝ մատնիչ լինելն արհամարհելի է։ Վաղուց մարդու մասին մշակվել է մի կարծիք, ըստ որի մարդը պետք է բարձր լինի մատնությունից։ Ես այն ժամանակ չէի մտածում, որ եթե կատարեմ «չեկիստի» պահանջը՝ ինքս իմ աչքից ընկնելով կկորցնեմ դրական մարդու իմ կերպարը։ Պարզապես չէի ուզում մատնիչ լինել, ուրիշի ազատ մտքի սպանողներից կամ կյանքը խաթարողներից մեկը։ Կարող է թվալ, թե ինչ-որ բան լրիվ չեմ ասում կամ թաքցնում եմ. միայն այն, որ ինձ չեն ծեծել, ոչ էլ սպառնացել են ծեծով։ Անշուշտ, չեկիստի ասածը, թե ինձ այն օրը կգցի, որ շունն էլ ձեռքիցս հաց չի առնի, իր մեջ ներառնում է նաև ծեծը, բայց այն ժամանակ ես այդպես չընկալեցի։ Կարծեցի դա միայն ժողովրդական խոսք է, որ տեղի-անտեղի գործածում ենք։ Հետևաբար՝ ծեծի սպառնալիք չէ։ Եթե ծեծեին, արդյո՞ք ձեռքս կխփեի սեղանին որպես զայրագին հրաժարումն իրենց առաջարկից։ Չէի խփի։ Կհամաձայնեի։ Դաժան ժամանակներ, ես բռնկուն խառնվածք, որ կարող էր առանց երկար-բարակ մտածելու ձեռքը խփել սեղանին, մինչև հիմա զարմանում եմ, այդ ինչպե՞ս եղավ, որ չբռնեցի Սիբիրի ճանապարհը։ Ես հերոս չեմ և չեմ դատապարտում նրանց, ովքեր ծեծ ու ջարդի

պատճառով արել են այն, ինչ կամովին չէին անի։ Այո, ես ինձ չեմ առանձնացնում նրանցից, ովքեր մատնիչներ դարձան։ Նրանք կրկնակի տուժեցին, և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես։ Մարմնի վերքերը լավացան, բայց հոգու վերքերը ոմանց սրտում մինչև այսօր էլ մխում են։ Գիտեն, որ հերոսներ չեն, ուրեմն պիտի տկար մարմինը հաղթեր։ Բայց դա միայն մեղմացնում է, ոչ թե վերացնում մեղքի զգացումը։ Այդ զգացումը չի վերացնում և այն, որ փութաջան մատնիչներ չեն եղել։ Եվ շարունակում են խղճի խայթ զգալ։ Գոհ լինեմ բախտից, որ հիմա նրանցից մեկը չեմ։ Բայց կային և փութաջան մատնիչներ, իրենց ծառայությունը կամովին առաջարկողներ։ Ես ատում եմ նրանց։ Կարծում եմ, դրա իրավունքն ունեմ։ Ատում եմ և նրանց, ում չեն ծեծել, բայց այսօր այնպես են ներկայացնում, որ իրենց ջարդուփշուր են արել, սակայն իրենք ոչ մեկին չեն մատնել։ Նրանք պարզապես խարդախներ են։ Շնորհակալ եմ ինձ հոգի շնորհողներից, որ նրանցից մեկը չեմ։ Շնորհակալ եմ և այն մարդկանցից, ովքեր նույնիսկ այդ ժամանակներում չեն ցանկացել դավաճանել դրական մարդու համընդհանուր պատկերացմանը, թեև վախեցել են, որ փորձանքի կենթարկվեն, բայց ավելի շատ վախեցել են իրենց մեջ նստած մարդու պատկերն աղարտելուց։

(1991 թ.)

ԱՆԿԵՂԾ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մարդ կոչվել, տարբերվել սառած օձից, որին երբ տաքացնում ես ծոցիդ մեջ, խայթում է քեզ, նույնիսկ վեհապատկեր առյուծից, որը ոչինչ չի ստեղծում, միայն գիշատիչ ժանիք է՝ եղնիկի կողը խրվող։ Բայց ո՞վ պիտի քեզ մարդ կոչի։ Միայն մարդիկ։ Դու մարդկանց շրջապատում, նրանց հետ ունեցած բազմաթիվ և բազմազան կապերի մեջ ես քեզ զգում բանական արարած, ընդունակ մտածելու ոչ միայն քո, այլև ուրիշների մասին։ Առանց այդ շրջապատի և նրանց հետ կապերի՝ այն չես անի, ինչ անում ես։ Մարդիկ քեզ հետ են և քո մեջ։ Ինչ անում ես մարդկանց համար ես անում։ Դա առաջմղիչ ուժ է, բավարարվածության և հրճվանքի աղբյուր։

Եթե կա աստեղային ժամ, կա նաև աստեղային հրճվանք։ Երբ դու մոռանում ես ինքդ քեզ, ապրում ուրիշի համար։ Դա կարող է լինել ամենասովորական պայմաններում։ Ասենք, ամբողջ գիշեր քո հարևանի տղան և դու հոլիկ եք շինել նրանց բոստանում։ Այնպես գոհ ես, որ քեզ թվում է, թե նորածագ արևն ասում է՝ ինչ լավ բան ես արել։ Դու լավ բան ես արել ուրիշի համար, բայց այն մտքի նշույլն իսկ չկա քո մեջ, որ մի օր այդ ուրիշն էլ քեզ համար պիտի լավ բան անի։ Նայում ես արածիդ և սիրտդ խնդությամբ է լցվում։ Անխառն խնդություն է ճառագում քո շարած քարերից, քո ներսից, արևից։ Քո հոգում լույս կա և ոչինչ չի կարող խաթարել այն աստեղային հրճվանքը, որ ապրում ես այդ պահին։

Աստեղային հրճվանքը մեկուսի զգացում չէ, պայմանավորված է ոչ աստեղային վիճակով, ինչպես կյանքի քաղցրությունը՝ մահվան դառնությամբ։ Եթե միայն այդ զգացումը լիներ, այսինքն՝ մարդն իր անձը մոռացած՝ բավարարվեր ուրիշներին գոհացում տալով, կդադարեր

գոյություն ունենալուց, ինչպես կվերանար անմահության գաղափարը, եթե բացառված լիներ մահը։ Վսեմ զգացում է աստեղային հրճվանքը, բայց անարդար կլինենք, եթե մնացած զգացումները, որոնց շնորհիվ այն ընկալելի է դառնում, համարենք նսեմ՝ համեմատելին բոլոր դեպքերում շփոթելով հակադիրի հետ։ Ուստի նրան, ով ոչ միշտ է ապրում աստվածային այդ հրճվանքը, հիմք չունենք դրական նկարագիր ունեցող չհամարելու։ Եթե մարդը թեկուզ մեկ անգամ զգացել է այդպիսի հրճվանք, նշանակում է նրա էության մեջ կա այն ենթահողը, որից բուսնում է այդ հրաշալի ծաղիկը։ Նա, ով տենչում է մշտապես ապրել աստեղային հրճվանքի մեջ, դատապարտված է մշտական տխրության, որովհետև ձգտում է անկարելիին, որին չի հասնի։ Զուր տեղը կտառապի սեփական ոչնչության անդունդներում։

Եթե ամեն համեմատելի չէ, որ հակադիր է, ապա այս մեկն աստեղային հրճվանքի հակադիրն է հարյուր ութսուն աստիճանի։ Խոսքս յոթ մահացու մեղքերից մեկի՝ նախանձի մասին է։ Աստեղային հրճվանքն արարիչ է, սա՝ ավերիչ։ Մարդիկ տարբերում են երկու տեսակի նախանձ՝ բարի և չար։ Բարի նախանձը ձգտում է հասնել իրենից բարձրին, իսկ եթե անցնում է, վտանգ կա, որ վերածվի չար նախանձի, չարության (դո՞ւ էիր, որ ինձանից առաջ էիր, դե հիմա տես)։ Չհասնելիս նույնպես առկա է նույն վտանգը (ինչո՞ւ դու անհաս մնացիր, հիմա ես քո բարձրից քեզ կիջեցնեմ)։

Բարի նախանձը նման է բարօրակ ուռուցքի, որը թեև տարիներ հետո՝ կարող է վերածվել չարօրակի։ Միշտ այդ վտանգը կա։ Ուրեմն չասենք բարի նախանձ, առաջադիմելու տենչին ուրիշ անուն տանք, որովհետև մի տեղ, ուր կա «նախանձ» բառը, այնտեղ պիտի առնվազն ոչ հաճելի հոտ փչի և «բարին» իբրև մակդիր չի կարող կպչել նրան։

Չար նախանձը ևս առաջադիմելու ձգտում ունի, բայց առավել ուժգին ձգտում է ոչնչացնել իրենից բարձրին, խելացիին, հարուստին։ Իրեն նվաստացած է զգում, երբ մեկն իրենից առաջ է անցնում։ Ոչնչացնելով նրան՝ ոչնչացնում է իր ինքնանվաստացումը։ Բայց միշտ էլ կգտնվի մեկը, որն իրենից առաջ է, սրան ևս պիտի ճանապարհից վերացնել։ Եվ այսպես անվերջ։ Նախանձը (դեն նետենք «չարը», որն ինքնին հասկանալի է) ներառնում է տարբեր ուրիշ արատներ՝ ագահություն, ժլատություն, իշխանատենչություն, որոնք իրենց հերթին ներառնում են նախանձի տարրեր։ Հարուստ ագահը դեռ հարուստ չէ, որովհետև չունի այն, ինչ ունի իրենից հարուստը։ Բայց նրան հավասարվելու դեպքում էլ նրա ագահության տենչը սահման չունի, քանի դեռ կա հարուստից հարուստը և միշտ նախանձի որդը կկրծի նրա սիրտը։ Այդպիսին է և անվերջ կուտակող ժլատը, որը հարուստ ագահից տարբերվում է մի հատկանիշով. իր իսկ սննդի համար մեկ ոսկի ծախսելիս ցավից տնքում է, կարծես իր սեփական լյարդն է ուտում։ Նույն սանդուղքով է բարձրանում իշխանատենչը (ոչ նա, որ իշխանության է ձգտում բարի գործերի համար)։ Սանդուղքը կարող է կոտրվել, կուտակած հարստությունը՝ գոլորշիանալ։ Անկումը սարսափելի է։ Ոչնչության լիակատար սարսափ։ Անզորության զգացում։ Որովհետև նրանց զորությունը հարստության ու իշխանության մեջ էր։ Ոգու զորություն չէր, որի համար նյութականը և իշխանական տիտղոսները երբեք չեն եղել ու չէին կարող լինել իրեն հպարտ զգալու, իր կամքն ուրիշներին պարտադրելու միջոցներ։ Նրանք նախանձ կոչվող սատանայի զավակներն են, որ սատանան հատուկ ծնել էր նրանց ոչնչացումը տեսնելու և հռհռալու համար։ Նախանձ կոչվող սատանան առատորեն սերմեր է ցանում ամենուր, ոչ միայն լայնածավալ գործողությունների

ձգտող հոգիներում, այլև նրանցից շատերի, ովքեր մի կերպ ճարում են իրենց օրվա հացը։

Քաղաքակրթության ամենամեծ նվաճումներից մեկը դրական մարդու համաշխարհային կերպարի ստեղծումն է՝ ազգային որոշ բեկումներով։ Ամեն ժամանակ ունեցել է դրականի իր կերպարը, մեր վայրենի նախնին՝ իրենը, մենք՝ մերը։ Եվ մարդը միշտ դրական որակներ է կուտակում։ Նահանջը դրանից նշանակում է կորցնել դրական մարդու պատկերացմանը հասնելու հնարավորությունը։ Դրական նկարագիրը գործում է շիտակորեն, ոչ դրականը՝ չխորշելով կեղծիքից։ Մեկը՝ ջանքով, մյուսը՝ ճանկով։ Հեշտ չէ իսկական դրական որակներ կուտակելը, դրա համար էլ շատ են նրանք, ովքեր նախընտրում են կեղծ դրականը։ Իսկակա՞ն է, թե՞ կեղծ, կամ՝ սրտաբո՞ւխ է, թե՞ հաշվենկատ. եթե այդ հարցին ճիշտ պատասխան ես տվել, նշանակում է՝ քո ձեռքին է դիմացինիդ ճանաչելու բանալին։

Ամեն մարդ ունի իր ներքին մարդը, որին բոլորից լավ ինքն է ճանաչում։ Չէ՞ որ բոլորից լավ ինքը գիտի թե ինչ պիտի ասեր և չասաց այս կամ այն հանգամանքներում, ինչ ծածուկ մտքեր ունի, որոնց մասին ոչ ոք չգիտի, ինչ թաքուն ցանկություններ, որ միայն իրեն են հայտնի։ Այդ ներքին մարդը նման է ոչ թե ցամաքի, ուր հաստատուն են իրերը, այլ ծովի, ուր զանազան կասկածների, հաստատուն ու անհաստատ խոհերի, կրքերի ալիքները հրում են մեկը մյուսին, ծնվում ու մեռնում, մեռնում ու ծնվում իբրև հարափոփոխ գոյացումներ, արտահայտում դիմացինի համար կամ մնում գաղտնիք։ Այդ չի նշանակում, որ բոլորովին տարբեր են ներքին ու արտաքին մարդը։ Երբ ցուրտ քամին խփում է արտաքին մարդուն՝ մրսում է և ներքին մարդը, երբ գազանի է հանդիպում արտաքին մարդը՝ ներքինը նույնպես դողում է վախից։ Ես պայմանականորեն եմ առանձնացնում

նրանց՝ միայն ցույց տալու համար, որ ներքին մարդն ավելի բազմապիսի է, ուրիշների համար սակավ ընկալելի, քան արտաքին մարդը, որի մասին կարող ենք կայուն գաղափար կազմել մեզ տեսանելի արարքների հիման վրա։ Արտաքին մարդն ունի այն, ինչ ունի և զանազան նկատառումներով կարող է ցույց տալ, որ ավելին չի ուզում։ Ներքին մարդն այդ անել չի կարող. ո՞ւմ պիտի խաբի, երբ մերկ է ինքն իր դիմաց։ Ավելին ունենալ-չունենալու սահմանները որոշում է ներքին մարդը՝ ըստ իր մասին ունեցած պատկերացման, որը չի կարող լինել բացարձակ անաչառ. խանգարում են թերարժեքության կամ գերարժեքության բարդույթները։ Բացի այդ, նա ինչքան էլ շատ բան գիտի իր մասին, այնուամենայնիվ ամեն բան չգիտի, ինչ-ինչ հանգամանքներում այնպիսի հատկանիշներ են ի հայտ գալիս, որոնց գոյությունն անհայտ էր իրեն։

Ես չէի կարողանում գրել։ Իսկական ճգնաժամ էր, որից դուրս գալու ելք էի փնտրում։ Ես կուչ էի եկել և զգում էի, որ հասել եմ մի սահմանի, որից դենը սկսվում է մելամաղձոտ վիճակը։ Ոչինչ չանել, միայն մռայլ ու անհույս հառաչել։ Մի ազնիվ մղում լքեց ինձ՝ մարդկանցից լավագույնը լինելու մղումը։ Ի՞նչ է մարդն առանց այդ մղումի, մի սովորական արարած, որ գիտի այս է ինքը, այսքանն է ինքը և, եթե առիթ լինի նոր մեղքեր գործելու՝ կգործի, որովհետև այլևս չկա մարդկանցից լավագույնը կամ գեթ լավերի մեջ լինելու մղումը։ Սարսափեցի։ Դա ոչնչության սարսափ էր և ես իմ ականջից բռնած՝ ինձ ետ քաշեցի կորստյան անդունդից։ Բայց հավատի մի թանկագին թել կտրվեց իմ մեջ։ Ավելի ճիշտ չի՞ լինի, եթե թշնամիներիս միացած՝ բազում մեղքեր բարդեմ վրաս։ Բազում մեղքերն իրար գումարվելով իբրև քանակ, պիտի դառնան որակ, որը բացարձակ անկեղծ մարդու որակն է։ Դա էլ դրական մարդ լինելու ձև է։ Անշուշտ, շատ վտանգավոր ձև, որովհետև կարող է

շունչդ փչես վրադ նետված քարերի տակ։ Բայց և հնարավոր է սրբանաս։ Մեզնից հազար անգամ խելոք են եղել նրանք, որ հորինել են թողությունը, որպեսզի մարդը չճկռի մեղքերի բեռան տակ, ազատ քայլի, թեթևացած սրտով վար ու ցանք անի։

Թող ինձ ների Նարեկացին, եթե մեղանչում եմ իր դեմ։ Նա, որ ծնվել էր ոչ միայն երկրային մորից, ինչպես Քրիստոսը, այլև երկրային հորից՝ իր վրա բազում ծանր քարեր բարձելով դարձավ քրիստոսանման սուրբ մեզ համար։ Իմ ճանաչած հանճարների մեջ նա եզակի հանճար է, եզակի այն իմաստով, որ եթե մյուսները վերլուծում են ուրիշներին, ատում կամ սիրում, վշտանում կամ դառնանում, ներում, դատապարտում, մոլեգնում, սքանչանում, Նարեկացին իրեն է վերլուծում, դատապարտում իր մեղքերը, սքանչանում Աստծո կատարելությամբ։ Իր սրտի, իր արարքների միջով է նայում աշխարհին։ Հանճարի համար դա բնական պահանջ է, առանց որի արվեստի մեծ գործ չես ստեղծի։ Նարեկացին այնքան առատորեն էր օժտված այդ հատկությամբ, որ թվում էր, թե իր խորաթափանց հայացքով ավելի շուտ իր ներսն է զննում, քան արտաքին աշխարհը։ «Մատյանն» հղանալիս նրա տեսադաշտում խռնված էին հատկապես իր սեփական մեղքերը, որոնց պետք էր անուն տալ։ Կոնկրետ ի՞նչ մեղքեր են, ինչպե՞ս են ծնվել և ինչո՞ւ։ Քանի որ համեմատության մյուս եզրին Աստվածն էր, ապա մեղքերը բազմապատկվում էին, իսկ Աստված դառնում էր ավելի կատարյալ քան «Աստվածաշնչում»։ Ինչպե՞ս այդքան մեղքերը խոստովանել, իսկ ստել, կեղծել չէր կարող։ Պետք է բացարձակ անկեղծ լինել։ Ուրեմն ի՞նչ՝ ամենանողկալի մա՞ղը լինել՝ կոնկրետ փաստերով հաստատված։ Բացարձակ անկեղծ լինում են միայն խելագարները, որոնք խզել են բոլոր տեսակի կապերը շրջապատի հետ։ Նրանց անկապ-անկապ խոսքերը

խոստովանություն չեն, որովհետև բնազդական են, ոչ կորցնելու վախ կա դրանցում, ոչ գտնելու ակնկալիք։ Այդ վախն ու ակնկալիքն ունեն նույնիսկ ինքնասպանները, որոնք մի շահեկան երկտող են թողնում իրենց հետմահու կարճատև կամ դարավոր կյանքի համար։ Առավել ևս ունեն ապրողները։ Թող որ իրենք ամենանողկալին համարվեն նողկալիների մեջ, բայց կոնկրետ դեպքերի նկարագրությամբ դա չեն մանրամասնի այնպես, որ քարը վերցնես ու գլխին տաս։ Նարեկացին ոչ խելագար էր, ոչ էլ պատրաստվում էր ինքնասպանություն գործել։ Սիրտը տնքում էր ի տես բարքերի ապականման, մեղքերի խելագար աճի։ Ուզում էր օգնել մարդկանց՝ նրանց սրտի մեջ վառելով աստվածային լույսը։ Եվ հայտնվում է փրկության լաստը։ Բանաստեղծն իր վրա է վերցնում ուրիշների մեղքերն ամբողջ բազմազանությամբ։ Դրանց մեջ լուծվում են սեփական մեղքերը։ Եվ հեղեղի պես հորդում են տողերը, որոնք և՛ իր, և՛ բոլորի համար ինքնամաքրման հեծեծագին աղոթքներ են, ճենճերացող հոգին բուժող բալասան։

***

Քրիստոս և Ալլահ։ Ուզում էի գրել երկու եղբայր աստվածներ, որովհետև այնքան նմանություն կա նրանց միջև, բայց չգրեցի, որովհետև նրանք ժխտում են միմյանց՝ յուրաքանչյուրը իրե՛ն համարելով միակ աստված։ Ի՞նչ եղբայրներ, եթե պիտի անտեսեն միմյանց գոյությունը։ Գուցե նրանք մեղք չունեն, աշխարհ են եկել բարին ու գեղեցիկը սերմանելու, բայց ահա սատանան (շեյթանը) նրանց մասին պատմող գրվածքում մի մութ գիշեր ավելացրել է այդ «միակ» բառը՝ տարբեր ձևերով։ Նրանց աշխարհ գալուց շատ առաջ աշխարհում կար սատանան (շեյթանը), ապրում էր մարդկանց սրտերում և իր չար գործն արեց։ Անշուշտ, ոչնչության

սարսափից մղված. աստվածների լիակատար հաղթանակի դեպքում ինքն այլևս անելիք չէր ունենա և կդառնար ոչինչ: (Համոզված եմ՝ հավատացյալներն ինձ կկշտամբեն այս կատակիս համար): Բազմություններ գնացին թե Քրիստոսի, թե Ալլահի ետևից՝ նրանց քարոզած բարու և գեղեցիկի գաղափարներով կախարդված, տարբեր լեզուներով խոսող հոծ բազմություններ: Սատանան (շեյթանը) այդ բազմություններին դրդեց իրենց առաջնորդներին զինել նախ՝ նետ ու աղեղով, հետո՝ հրացաններով, նույնիսկ՝ ռումբերով, դառնալ ռազմիկ՝ շարունակելով աստված մնալ: Մեր օրերում նույնիսկ ձայներ հնչեցին, որ պատերազմներն այսուհետև լինելու են միայն կրոնական:

-Այդ ինչե՞ր ես ասում,- երկու կողմերի բազմություններից իմ կողմն են դառնում իրենց աղոթքն ու նամազը կիսատ թողած մարդիկ: -Դու հեթանոս ես:

-Ոչ, ես հեթանոս չեմ, հեթանոսներն իրենց աստվածներն ունեին, իսկ ես ոչ մի աստված չունեմ: Մի փորձեք ինձ պատժել, որովհետև արդեն դաժանորեն պատժված եմ հենց նրանով, որ աստված չունեմ: Ձեր գործը հեշտ է, մահից հետո դուք կամ դրախտ, կամ ջեննեթ կգնաք, ես ո՞ւր գնամ: Շատ եմ փորձել հավատացյալ դառնալ, բայց չի հաջողվել: Իմ փոխարեն մեկ ուրիշը վաղուց արդեն դարձած կլիներ, ես չեմ կարողանում, նույնիսկ այս դեպքից հետո:

Բաքվից մեզ հյուր էր եկել մեր տոհմածառից այնտեղ ընկած և ընտանիք կազմած աղջիկներից մեկը: Ուզում էր սուրբ Հովհաննես գնալ: Եվ ահա բարձրանում ենք սարն ի վեր, որի սուր կատարին շինված է վանքը: Սարի լանջին մեր հյուրը փնտրում է չորսթերթանի երեքնուկներ: Մենք էլ ենք փնտրում նրա համար: Երեքթերթանի՝ ինչքան ասես, բայց չորսթերթանի չկա ու չկա: «Եթե գտնեմ, բախտավոր կդառնամ»,-ասում է մեր

բաքվեցին։ Բարձրանում է սարն ի վեր՝ հայացքը երեքնուկներին։ Վերջապես հասանք։ Վանքի երկու կողմերում գրեթե անդունդներ են, ասես մեկը սարի կողերը սեղմել է իրար՝ զառիթափերը հնարավորին չափ ուղղահայաց դարձնելով։ Ինչո՞ւ են այստեղ կառուցել վանքը։ Գևորգ Էմինը կասեր՝ որպեսզի անմատչելի և անտեսանելի լինելով ազատվեն մեր ոսոխների ավերիչ ձեռքից։ Բանաստեղծի պատկերավոր խոսք է։ Գևորգ Էմինը շատ լավ գիտի, որ ոսոխն էլ մեզ պես ոտքեր ունի, մեզ պես՝ աչքեր, կարող է ամենուր լինել, ամեն ինչ տեսնել։ Ոսոխից փրկվելու համար չէ, որ վանքը կառուցել են այստեղ։ Կառուցողը Եհովա աստծու սպառնալիքն է հասցրել ուխտավորին, թե՝ եթե ինձ չլսես, դժոխքն է քո բաժինը։ Ուխտավորը սարից ներքև նայելիս դժոխքի զարհուրանքները պիտի ապրեր։ Բայց սա նույնպես պատկերավոր խոսքի պես մի բան է, թեև հավանական է, որ ճշմարտություն լինի իմ ասածի մեջ, գոնե տվյալ դեպքում։ Մեր բաքվեցի հյուրն անտեղյակ դրան՝ սկսեց իր աղոթքը, ձեռքերը վեր պարզեց՝ գոչելով՝ Ալլահ, Ալլահ… Ես ասացի՝ եթե հավատ ունես, հայ սրբի տանն Ալլահ մի կանչիր, աստված քեզ կպատժի։

Ուխտը կատարելուց հետո ահա նա մեզ հետ իջնում է քարքարոտ սարալանջով՝ հայացքը երեքնուկներին։ Գուցե հիմա իր փնտրած չորսթերթանին՝ իր բախտը, կգտնի, չէ՞ որ դրա համար էր սուրբ Հովհաննես եկել։ Արդեն հարթ տարածություն է, մի քանի մետր է մնացել, որ հասնենք մեզ այստեղ բերած ավտոմեքենային։ Մի ճիչ լսեցի։ Մեր հյուրը փռված էր գետնին։ Ընկել էր և ոտքը կոտրել։

Ես նույնիսկ այդ դեպքից հետո հավատացյալ չդարձա։ Բայց քանի-քանիսը հավատացյալներ են դարձել և համոզված են, որ իր Աստված ստուգապես գոյություն ունի։ Նրա՞նք են ճշմարիտ, թե՞ ես։ Ինչպե՞ս կարող են ճշմարիտ չլինել, երբ

այդպես համոզված են, ինչպես ես եմ համոզված, որ ահա իմ ձեռքում գրիչ կա, որով գրում եմ այս տողերը։ Օ, ես միայն շոշափելին եմ ճշմարիտ համարում, մեկ է՝ շոշափում եմ ձեռքով, թե երևակայության թևերով։ Նրանք չեն շոշափում, նրանք հավատում են։ Ես էլ եմ ուզում հավատալ։ Երկնքի դեմ փակել տրամաբանության բոլոր լուսամուտները և հավատալ։ Կույր լինել, բայց հոգու աչքերով երկնքում, ինչ-որ տեղ տեսնել Աստծուն՝ բարության ու սիրո ճաճանչների մեջ։ Ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ զրկեցիք այդ մեծ բերկրանքից, սթափ և անգութ անաստվածներ։ Եթե ինձ օրորոցից ներշնչեին, որ Աստված կա, ես էլ հավատացյալ կդառնայի. ես հո ուրիշ մարդ չե՞մ, բոլոր հավատացյալների նման ես էլ ունեմ նույն միսն ու արյունը, նույն սիրտն ու հոգին։ Նրանց մեջ տրամաբանողներ կան, ինձնից հազար անգամ խելոքներ՝ մեծ փիլիսոփաներ, պետական հասուն այրեր, հանճարեղ բանաստեղծներ։ Ո՞ր մեկն ասեմ՝ շատ են։ Այդ ինչպե՞ս է, որ նրանք կարողացել են հավատալ, ես չեմ կարողանում։ Ճշմարտությունը նրա՞նց կողմն է, թե՞ իմ։ Թե՛ նրանց, թե՛ իմ։ Նույն ճշմարտությո՞ւնը։ Այդ ինչպե՞ս։ Բայց ի՞նչ բան է ճշմարտությունը։ Երևի աշխարհում մեկնումեկը ստույգ և սպառիչ պատասխան է տվել, թե ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ՝ ես չգիտեմ։ Ես միայն գիտեմ, որ այն ինչ ճշմարիտ ես համարում՝ ճշմարտությունն ինքն է հենց։ Նրանք դրախտ կգնան բոլոր հավատացյալները, որովհետև համոզված են, որ արժանի են նման բախտի։ Ես նախանձում եմ նրանց։ Ուրեմն՝ ի՞նչ, չեմ հավատում Աստծո գոյությանը և ուզում եմ կամովին նախընտրել սո՞ւտն իմ ճշմարտությունից։ Բայց ինչո՞ւ։ Որովհետև ահավոր է ոչնչության սարսափը։ Իմ ճանաչած կրոնները խոստանում են հետմահու կյանք, և մեր նախնիների լեզվով ասած՝ ի չգոյե ի գոյ դարձան դրա շնորհիվ։ Ապրելու բնազդը ձեռքը գցեց փրփուրին, որ փրփուր չէր, այլ վավերական

հույս հավատացյալի համար։ Քրիստոսը երկինք համբարձվելով մարդկանց թողեց իր հրաշալի պատվիրանները, որոնք պիտի արդարություն հաստատեին երկրի վրա։ Արդարության ծարավը միշտ էլ եղել է մարդկանց մեջ, և նրանք իրենց սրտի դռները լայնորեն բացեցին դրանց առաջ։ Հետմահու կյանք դրախտում և երկրային դրախտի խոստում, միայն թե պիտի չսպանես, չշնանաս և էլի ուրիշ պատվիրաններ։ Նաև այդ շարքից դուրս մի ուրիշը, որն առավել խորիմաստ է՝ քեզ ուրիշից բարձր մի դասիր։ Փոխկապակցված պատվիրաններ, որոնցից որևէ մեկի կատարումը պահանջում է մյուսների կատարում։ Միայն այդ դեպքում արդարության երկրային թագավորություն կլինի։ Մարդկությունը արդեն քանի՛ դար ձգտում է դրան և չի հասնում, որովհետև կա «ես»-ը։ Իսկ որտեղ կա «ես», այնտեղ կա և եսամոլություն։ Իմաստուն Քրիստոսն ուզում էր հենց այդ «ես»-ը անէացնել, բայց չստացվեց, էլի լավ է, որ կա Երկնայինը, և կա Աստված, որին այնքա՛ն մարդ է հավատում։

Չհաստատվեց երկրային դրախտը, բայց մշտապես կա այն հաստատելու ծարավը։ Չէ՞ որ շատ են անարդարությունները երկրի վրա։ Շատ են մանր ու մեծ պղտոր կրքերը, որոնցից մարդն ազատվել է տենչում։ Արշալույսին, երբ արևն օրհնանքի պես իր շողերում հեղեղում է ցամաքն ու ծովերը, պատահում է, որ այդ կրքերից մաքրված՝ հիանում ես նրա հրաշափառ գեղեցկությամբ, աստվածային մաքրության զգացողություն ես ունենում։ Ո՞ւմ հոգու խորքում, ենթագիտակցության մեջ չի պահպանվում այդպիսի գեթ մի արշալույս, ամենաչքնաղ բանը, որ ասես քո պատկերացրած դրախտի կրկնությունն է այս կյանքում։ Հենց դրախտն ինքը։ Ու դու բարի ես այդ պահին, ինչպիսին քո հոգին է լինելու դրախտում։ Մեռել է մարդը, գրեթե մեռել և մի քանի վայրկյան տևած այդ մահից հետո հրաշքով վերադառնում է կյանք։ Նա մի

քանի վայրկյան իրեն տեսել է անսովոր պայծառ լույսերի մեջ, հրեշտակ է տեսել կամ իր մեռած հարազատին, որ իրեն ցույց է տալիս դրախտի ճանապարհը: Նա չի ուզում վերադառնալ կյանք, որովհետև այնտեղ, արդեն դրախտի դռանը մաքուր է իր հոգին, չկան պղտոր կրքեր, մաշող հոգսեր: Այդպես են պատմում գրեթե բոլոր վերադարձողները և բոլորն էլ ասում են, որ իրենց շուրջը փռված է եղել անսովոր պայծառ լույս: Աստվածային լույսն է դա՝ մեկնաբանում են հավատացյալները: Արևի լույսն է դա՝ մեկնաբանում եմ ես, ոչ հավատացյալս, այն լույսը, որ պահպանվել է ենթագիտակցության մեջ որպես ամենաչքնաղ բանն աշխարհում, միակը, որ պարգևում է դրախտում լինելու զգացողություն: Գիտեմ, սա ընդամենը վարկած է, նույնիսկ վարկած էլ չէ, այլ՝ երևակայություն, բայց ինձ՝ ոչ հավատացյալիս, մղում է մտածելու, որ հավատացյալները, ինչպես և ես, շատ են հոգնել անարդարություններից և հաճույքով են հավատում դրախտի գոյությանը, բարու և արդարի թագավորության հնարավորությանը, որ եթե չկա այս կյանքում, կա այն կյանքում: Եվս մի գործոն, թե ինչու մարդիկ աստվածապաշտ են դառնում և սպասում են այն օրվան, երբ իրենց Աստծո աջը ոչ թե այսպես հեռվից, այլ շատ մոտիկից, այնտեղ՝ դրախտում կշոյի իրենց գլուխը:

Ես էլ ունեմ իմ Աստվածը, որն ինձ դրախտ չի խոստանում, ոչ էլ սպառնում դժոխքով: Սրտի և ցավի հանճարներն են, լույսի ու բարության հանճարները, որոնք ավետարանիչներից պակաս խելացի չեն: Նրանք կշարունակեն իրենց ճանապարհը՝ ինձպեսներին դարեդար իրենց մտքի լույսը բաշխելով, կթողնեն մի մութ փոսի մեջ և կշարունակեն իրենց երթը: Ես առայժմ աղոթում եմ նրանց: Երբ աղոթքս վերջանա՝ ես էլ կվերջանամ՝ առանց հարության հույսի:

(1991 թ.)

ԱՐՑԱԽ

Ոչնչության սարսափը բոլորի դռանն է կանգնում, թե՛ անհատների, թե՛ ազգերի։ Հաճախ երկար է կանգնում և ներս չի մտնում, դարեդար մնում է կանգնած, եթե դուռը մի անհատինը չէ, այլ ազգինը։ Իսկ երբ ներս է մտնում, նշանակում է՝ այդ ազգն արդեն կնքում է իր մահկանացուն։ Ես այդ տողերը գրելիս ամենից առաջ նկատի ունեի իմ ժողովրդին, որի դռանը արդեն քանի՛ դար կանգնել է ոչնչության սարսափը։ Մերթ հեռացել է, բայց ոչ այնպես, որ այլևս չմոտենա, մերթ այնքան է մոտեցել, որ թվացել է, թե ուր որ է ներս կմտնի։

Միտքս գնում է դարերի խորքը, մինչև մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերը։ Գիտնական այրերն ապացուցում են, որ այդ ժամանակ է բացվում հայոց սկզբնավորման առավոտը։ Կա սկզբնավորում, բայց դեռ չկա հայ ժողովուրդ, որը որպես այդպիսին ձևավորվում է Ուրարտուի անկումից հետո, մ.թ.ա. առաջին հազամյակի կեսերին։ Երկու հազար տարի։ Այդքան ժամանակ հայ կար, բայց չկար հայ ժողովուրդ։ Թող գիտնական այրերն իմ կողմից հանդգնություն չհամարեն, եթե հարցնեմ՝ այդ ինչպե՞ս։ Դուք վկայակոչում եք զանազան արձանագրություններ, մատյաններ, ցույց տալիս, որ ցեղերի կամ ցեղախմբերի վրա հաճախ են հարձակվել հարևան ցեղախմբերը և պետությունները, աստված իմ, այնքան հաճախ, որ չգիտես ո՞րն է որին ընդհատել՝ խաղաղությո՞ւնը պատերազմին, թե՞ պատերազմը՝ խաղաղությանը, այդ ինչպե՞ս նրանք դիմացան առանց ժողովուրդ լինելու, այն էլ ոչ թե երկու դար, այլ երկու հազարամյակ։ Ամեն կողմից հարձակվում էին, կոտորում, ոչնչացնում։ Պետք է, որ ոչնչության սարսափը պատեր հայոց ցեղերին կամ ցեղախմբերին։ Պետք է, որ նրանք

փրկության ելք փնտրեին։ Միակ ելքը միավորվելն էր, մարտնչող հավաքականություն դառնալը, գոյատևելու համար միայն ֆիզիկական ուժը քիչ էր, պետք էր դիմել հոգեկան ուժի զորությանը, մշակույթ ստեղծել, տեգերի պես սրել մարտունակ գաղափարներ, ինչպիսին է, օրինակ, «իմացյալ մահն անմահություն է»։ Այս գաղափարը, որը չգիտեմ ե՞րբ է իր այդ վերջնական ձևակերպումն ստացել, բայց համոզված եմ, որ զանազան տարբերակներով մինչ այդ եղել է իրենց պատիվն ու հայրենիքը պաշտպանողների զինանոցում, տեգերի և նիզակների կողքին։ Էլ ի՞նչ է հարկավոր, որպեսզի ժողովուրդ ձևավորվեր։ Տարա՞ծք։ Հայերը օդի մեջ չէին ապրում։ Ազգային նկարագի՞ր։ Առանց դրա մշակույթ չես ստեղծի։ Լեզո՞ւ։ Եթե հայեր էին, նշանակում է կար հայոց լեզու։ Եթե հայոց հավաքականությունը ոչ թե երկու դար, այլ երկու հազարամյակ քսվելով պատմության քարին՝ վերջնականապես չի մաշվել, ուրեմն նրան ուրիշ անուն պիտի տալ՝ ժողովուրդ։ Առնվազն երրորդ հազարամյակի վերջում ձևավորված ժողովուրդ, որն այլ բառով էլ է կոչվում՝ ազգ։

Գիտնական այրեր, ես ասպարեզ չեմ մտնում ձեր դեմ մարտնչելու համար։ Իմ ունեցած փաստ-զենքերը խաղալիք ատրճանակներ են ձեր հզոր հրանոթների դեմ։ Իմ նպատակը միայն կասկած արթնացնելն է ձեր մեջ։ Մի բան կա, որ ուզում եմ ձեզ ասել։ Տաք վեճ է գնում, թե արդյո՞ք Ուրարտուն Հայաստան է։ Ձեր հակառակորդները փաստեր են բերում ձեր դեմ, դուք՝ նրանց դեմ։ Այն աստիճան տաք է վեճը, որ այրվում են թե ձեր, թե նրանց շրթունքները և երկուստեք այնպիսի բառեր եք օգտագործում միմյանց դեմ, որ չէիք օգտագործի, եթե այրվող շրթունքների պարագան չլիներ։ Ես չեմ կարող խառնվել ձեր վեճին, անվերապահ ասել, որ Ուրարտուն Հայաստան չէ, ոչ էլ՝ Ուրարտուն Հայաստան է։ Մեր հարևան ժողովրդի

գիտնականները, սակավ բացառությամբ, թղթի դեզեր կփչացնեին ապացուցելու համար, որ Ուրարտուն իրենց հին հայրենիքի անունն է, պակասող փաստերը կլրացնեին հորինվածներով, որպեսզի Կովկասում բնիկ համարվեն։ Որովհետև պետք է հնագույն զարգացած ժողովուրդ լինեն։ Որովհետև սարսափելի են հոգեկան ավազուտները, ուր մտքի ապարանքներ չեն բարձրանում։ Ոչնչության սարսափն այդ կարգի ժողովուրդներին մղում է կրկնակի եռանդով ձեռք երկարել ուրիշի ունեցածին, ճշմարտության հերն էլ անիծած։ Իսկ դուք կառչել եք ճշմարտությունից։ Համոզված եք, որ Ուրարտուն Հայաստան չէ և պնդում եք ձեր ասածն առանց վախենալու ոչ-հայրենասեր կոչվելուց, այն էլ հիմա, երբ այդպիսին կոչվելն ավելի վտանգավոր է, քան այն հեռավոր ժամանակներում նետերի տարափի տակ կանգնելը։ Ոգու սխրա՞նք է, ոգու խենթությո՞ւն։ Թե մեկը, թե մյուսը։ Բայց ավելի մեծ սխրանք կլինի նահանջը ձեր ճշմարտությունից, եթե համոզվեք, որ այն թվացյալ էր։ Հերոսական նահանջ, որ հաղթանակ է։ Մենք այդպես ենք նահանջել, մենք այդպես ենք հաղթել։ Ճշմարտությունը մեր դրոշն է եղել, ինչքան էլ այն տրորել են, պատառոտել։ Ոչնչության սարսափի մեջ անգամ ձգտել ենք միացնել նրա ծվենները և դարձյալ վեր պարզել։ Ոչնչության սարսափներ շատ ենք ունեցել։ Անվերջ պոկոտել են մեր մարմինը։ Մի բուռ ենք մնացել մի թիզ հողի վրա ծվարած։ Հիմա էլ Արցախն են պոկում։ Այսպես որ գնա, ո՞ւր կհասնի։ Մենք խոսում ենք, թե լռում՝ մեր հոգում ամենից առաջ ոչնչության սարսափի ճիչն է, որն ուզում ենք և պիտի խլացնենք հոգեկան թռիչքների շառաչի մեջ՝ նվաճելով այստեղ նոր տարածքներ շնչահեղձ չլինելու համար։

Հայոց պատմության դարերի մեջ իսկական սև դար էր տասնմեկերորդը, երբ թուրք ցեղերը սկսեցին շարժվել դեպի այս

կողմերը, հաստատվեցին (հետագա 2-3 դարերում ևս) Ադրբեջանի այժմյան տարածքում և Անատոլիայում։ Այդ եկվոր հարևանները, որ օժտված են կաթի մեջ ընկած թանաքի կաթիլի պես տարածվելու հատկությամբ, ուրիշներից ավելի դաժանորեն են ավերել հայոց ոստանները, սպանել են հայ ժողովրդին արմատից հատելու մտադրությամբ։ Նվաճել են անվերջ, ինչքան հնարավորություն են ունեցել։ Այս դարի սկզբում հայաթափ արեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը, ձեռքները երկարեցին Արևելյանին։ Հիմա էլ երկարել են Արցախին։

Նրանք ինչքան վավերագրեր են կեղծել, ինչքան «փաստեր» հորինել, տրամաբանությունից զուրկ դատողություններ արել, որպեսզի պատմությունից աշխարհին հայտնի հայոց «Արցախյան աշխարհն» իրենցը համարեն։ Բռնեն, թե չբռնեն՝ դրանք ցեխագնդի պես շպրտել են պատմության երեսին։ Եվ ցեխագնդերը… բռնել են, միայն թե ոչ պատմության երեսին, այլ բազում ազերիների։ Նրանք հավատացած են, որ Արցախն իրենցն է և եթե հանկարծ... Ոչ, անհնար է այդ, թուրքացրել են Նախիջևանը, ի՞նչ, անզո՞ր լինեն և չկարողանան Արցախն էլ թուրքացնել։ Էլ ինչու են տասնամյակներ շարունակ ջանքեր թափել սուտը քայլեցնելու համար։ Հզորից անզո՞ր դառնալ, այսինքն՝ իրենք իրենց աչքում ոչնչացա՞ծ։ Ե՛վ հոգեպես, և՛ ֆիզիկապես։ Դա եթե ոչնչության սարսափ չէ, ապա ի՞նչ է։ Եվ ի՞նչ է այն, որ իրենցն են դարձնում մշակույթի այնպիսի երևույթներ, դեմքեր, որ իրենցը չեն, ինչպես այն գիտնական կանանցից մեկը, որ 1988-ի մարտի 8-ի առիթով դիմում էր վրացուհիներին և ասում, որ Սայաթ-Նովան երգել է իրենց և վրաց ժողովրդի բարեկամությունը։ Չէր հիշատակում, որ Սայաթ-Նովան հայ է, ըստ այդ կնոջ, նա միայն վրաց և ազերի ժողովուրդների բարեկամության խորհրդանշանն է եղել։ Ես այդ

ելույթների սղագրությունն եմ կարդացել՝ թարգմանված հայերեն։

«Պատմությունը ստում է, թե իբր մենք բնիկ չենք այս կողմերում, - անվերջ ու անվերջ կրկնում են բունիաթովները,- այս խաչդաշները մենք ենք ստեղծել, հայերը դրանց կամայականորեն խաչքար են ասում։ Քրիստոնյա Ադրբեջան է եղել, պետք է այդ վերնագրով կինոնկար ստեղծել, աշխարհին պատմել, որ հինավուրց քաղաքակրթություն ունենք և այսօր էլ մեծ առաքելություն մարդկության ճակատագրում։ Եվ ամբոխը հավատում է նրան, թեև անկասկած է, որ տարօրինակ առաքելություն է. այդ ո՞վ է սպանելով, թալանելով, բռնաբարելով, մի ժողովրդի իր բնիկ վայրերից տեղահան անելով, պատմության երեսին ստերի ցեխագնդեր շպրտելով առաքելություն ունեցել քաղաքակրթության ասպարեզում։ Այդ կեղծարար բունիաթովներն ու քաղաքագետ բունիաթովները լավ են ճանաչում ամբոխի ուժը և այդ պղտոր հեղեղը կարողանում են շուռ տալ իրենց ցանկացած ուղղությամբ։ Ամբոխն ամենուր առաջին հերթին դրա՛ համար գոյություն ունի։ Նա Սումգայիթ կիրականացնի, խելահեղորեն կմասնակցի Արցախը հայաթափ անելուն, կսպանի, կթալանի, կբռնաբարի՝ մոռանալով, որ այդպես չեն կատարում մեծ առաքելությունը մարդկության ճակատագրում։ Չէ՞ որ բունիաթովները նրան ներշնչում են, որ օժտված է բարձր հատկանիշներով։ Եթե կան առաջնակարգ ազգեր, ապա նրանցից մեկն իրենք են։ Ապացույցներ են պետք և եթե չլինեն այդպիսիք, նրանք իրենց նվաստացած, ոչնչացած կզգան։ Եվ բավարար հիմքի պակասից սարսափած՝ ձեռք են երկարում ուրիշների ունեցածին։ Պիտի աՃեն, ծավալվեն, այս անգամ՝ ուրիշների տարածքների հաշվին։ Ես նրանց բոլոր վայրագ արարքների, նաև բունիաթովների նենգափոխումների մեջ լսում եմ այդ սարսափի ճիչը, որոնց

նպատակն է գերարժեքության պատրանք ստեղծել՝ մղված թերարժեքության սարսափից և տարվա բոլոր եղանակներին ռելսեր գցել պանթյուրքիզմի գնացքի համար։ Դրա համար կեղծում են պատմությունը՝ դառնալով պանթյուրքիզմի մոլի հրահրողները մեր օրերում։ Կամ գուցե մտածում են, որ պանթյուրքիզմի հաղթանակը հենց այդ առաքելության դրսևորումն է։ Իսկ որ պանթյուրքիզմ գոյություն ունի, դրա ապացույցներից մեկը հենց այդ կեղծումն է, որի շարունակությունն իր ճանապարհին եղած առաջին խոչընդոտի՝ հայ ժողովրդի առաքինությունների, մտավոր բարձր թռիչքների ժխտումն է։ Մի ժողովուրդ, որ այսքան արյունից ու ավերից հետո էլ չի կորցնում արդարության զգացումը և ասում է. «Թուրքն անիծած է, խոսքը՝ օրհնած»։ Այսքան կոտորածներից հետո այդ «անիծա՞ծն» էլ չասեր։

Որքան զորանա թուրքը, աճի տնտեսապես և ռազմականորեն, բազմանա, այնքան կզորանա պանթյուրքիզմը, որը կձգտի վերականգնել կործանված Օսմանյան կայսրությունը։ Բայց դժվար թե այդ կարողանա անել, հատկապես նորից իր ոտքը դիպցնել Եվրոպային, դրա փոխարեն կուզենա նոր տարածքներ նվաճել, Հովհաննես Թումանյանի ձևակերպմամբ «սեղմվել դեպի էս կողմերը»։ Ամեն մի ձախողում նոր «մեծ» երազի ճանապարհին, բնականաբար, թուրքին կհամակի տագնապով, որը խորանալով կդառնա ոչնչության սարսափ։ Հիմա էլ այն կա, բայց որպես ենթագիտակցություն։ Արցախի կորուստը մի այդպիսի ձախողում կլինի, իր ուժի և կարելիությունների մասին իր պատկերացման փլուզում։ Հզորից անզո՞ր դառնա, խե՞ղճ լինի, այսինքն՝ ինքն իր աչքում ոչնչացած։ Եվ զենքի բոլոր տեսակներից, այդ թվում և հոգևոր, մոլեգին կրակ է բացում՝ սպանում ու թալանում, բռնանում ու հերյուրում։

Այո, ոչնչության սարսափը, որ դարեր ի վեր ձեռք չի քաշում մեզնից, ճչում է մեր մեջ մերթ խուլ, մերթ սուր, որովհետև մի բուռ ենք մնացել, մի թիզ հողի վրա և այդ թիզն էլ են ուզում փոքրացնել՝ պոկելով Արցախը: Խոսում ենք, թե լռում՝ մեզնից շատերի հոգում այդ ճիչն է: Բայց մենք վախկոտ չենք և եթե փորձում ենք խլացնել այն, ապա դա վախկոտի ինքն իրեն սրտապնդելու փորձ չէ, այլ վախը մեզ խորհրդատու չդարձնելու բանական ձգտում: Վախը նույնիսկ զորեղներին պարտության է մատնում: Մեզնից վանելով դավաճան վախը, ինչպես արել են մեր նախնիները, մենք կարող ենք և պիտի հենվենք ոչնչության սարսափի միավորող հատկության վրա: Պիտի նոր հոգևոր տարածքներ նվաճենք՝ շնչահեղձ չլինելու համար: Մեր թռիչքների արծվենի շառաչը երբեք չպիտի լռի, որովհետև այդ բարձրությունից է, որ մեր մեջ պիտի հայտնաբերենք գոյատևելու նոր ուժեր: Այդպես են վարվել մեր նախնիները, որոնց դաժանորեն է հարվածել պատմությունը, բայց ինչ-որ տեղ գթասիրտ է եղել և չի տվել վերջնական հարվածը, իսկ դաժանությանը դիմացել ենք այդ միջոցների հաշվին: Ոչնչության սարսափը նաև միավորող ուժ է, որն ուղեկցել է հայերին մ.թ.ա. երրորդ հազարամյակից սկսած: Համաձայն չե՞ք: Հիմա էլ մենք զգում ենք այն: Անվերջ անդամահատել, պոկոտել են մեր մարմինը: Բայց թող մեր մարմինը բզկտողներն իմանան, որ մենք կանք, եղել ենք ու կլինենք: Այլևայլ կարծիքները մի կողմ դրած՝ ես մեջ եմ բերում Վահան Տերյանի մի սոնետից երկու տող, որ միշտ հնչել են հայի հոգում. «Թող գուժկան գիշերն ահասաստ դավի, Որքան մութը սև, այնքան ես համառ»: Որպես հզոր սիմֆոնիայից պոկված մի ակորդ՝ հոգուս մեջ զրնգում են Ռուբեն Սևակի մի բանաստեղծության վերջին տողերն այն մասին, որ Նոյան տապանի մի կողին ազգերը գրել են՝ մահ հայերին, մյուս կողին հայերը գրել են՝ անմահություն:

Օ՜, այդ հայերը, իրենց բազմադարյա պատմության մեջ քանիցս ոչնչության սարսափ զգացած, բայց երբեք իրենց գլուխը չկորցրած հայերը։ Այժմ նույնպես մենք խուճապահար չենք, վախը մեզ խորհրդատու չենք դարձրել, քանզի մեր մեջ ավելի բարձր է հնչում մեր նախնիների ոգու գոտեպնդող կանչը։ Այդ գիտակցելն էլ հենց մեր զորությունն է։

(1991 թ.)

ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրող և հրապարակախոս Վաչագան Վարդանյանը ծնվել է 1924 թվականի փետրվարի 15-ին, Ախուրյանի շրջանի Հովիտ գյուղում: Իր բանաստեղծական շնորհքն ըստ երևույթին նա ժառանգել է նշանավոր աշուղ Յանղունուց, որի ծոռն էր ինքը: Ցավոք, աշուղ Յանղունու գրական ժառանգությունը մեզ չի հասել, քանի որ 1960-ական թվականներին, երբ ցանկացել են ներկայացնել հրատարակության և բացել են տետրերը, դրանք բառի բուն իմաստով՝ ուղղակի փոշու են վերածվել: Հայտնի է միայն, որ նա ապրել է Ալեքսանդրապոլում, շրջել է գյուղից գյուղ՝ երգելով և ներկայացնելով ոչ միայն իր, այլև իր ուսուցչի՝ աշուղ Ջիվանու երգերը: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի նյութերի համաձայն, Յանղունին բարոյականության տիպար էր ու իր համեստ բնավորության շնորհիվ վայելում էր թե՛ իր շրջապատի, և թե՛ ողջ հասարակության սերն ու հարգանքը*: Շրջակա գյուղերում մի լեգենդ է շրջանառվում, ըստ որի աշուղ Յանղունին մի անգամ մեջլիս է մտել Ջիվանու հետ և հաղթել: Ջիվանին, որ միշտ բարձր է գնահատել աշուղ Յանղունուն, նրա պատվին խնջույք է կազմակերպել, սակայն, ըստ երևույթին, գտնվել են չարակամ մարդիկ, որոնք նրան թունավորել են, և խնջույքից անմիջապես հետո տուն վերադառնալով՝ Յանղունին իրեն վատ է զգացել ու մահացել:

---

* Տես՝ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, բանահյուսական արխիվ», FFI, 7639-7640, Նիկողայոս Նիկողոսյան, «Ալեքսանդրապոլի աշուղները 1830-1930 թթ.»

Դեռ փոքր տարիքից Վաչագան Վարդանյանը սիրել է գիրքն ու գիտելիքը: Պատմում են, որ ավագ երեխաներից սովորելով տառերն ու թվերը, նա հավաքում էր լուցկու այրված հատիկները և որպես մատիտ օգտագործելով փորձում էր գրել պատահած լրագրերի եզրերին: Թերևս այդ է պատճառը, որ դպրոց է գնացել հինգ տարեկանից: Երբ ավագ քույրը դպրոց էր գնում, ինքն էլ իրեն աշակերտ պատկերացնելով ընկերակցում էր նրան, բայց չէր համարձակվում դպրոցի շենք մտնել: Նա առաջին դասարանի բաց պատուհանից հետևում էր դասին, երբեմն էլ հենց պատուհանից պատասխանում ուսուցչի՝ դասարանին ուղղված հարցերին: Եվ մի գեղեցիկ օր էլ ուսուցիչը նրա ձեռքից բռնած ներս է տարել: Գերազանցությամբ ավարտելով յոթնամյա դպրոցը՝ նա ընդունվել է Գյումրիի մանկավարժական տեխնիկումը, որը դարձյալ ավարտելով գերազանցությամբ՝ 1941 թվականին գործուղվել է հայրենի գյուղ որպես ուսուցիչ և աշխատել մինչև Մեծ Հայրենականը: 1942 թվականի սեպտեմբերին զինվորագրվելով հայրենիքի պաշտպանների շարքերում՝ նա մինչև պատերազմի ավարտը ծառայել է սահմանապահ զորքերում՝ պաշտպանելով ֆիննական սահմանը: Վերադառնալով պատերազմից՝ նա 1946 թվականին դարձյալ անցել է մանկավարժական աշխատանքի: Աշխատել է հարևան Ջրառատ գյուղում որպես տեղի յոթնամյա դպրոցի ուսուցիչ և ուսմասվար: 1947 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1952 թվականին և անմիջապես սկսել է աշխատել Ախուրյանի շրջանի «Կոլտնտեսական» թերթի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար: 1954 թվականին Վաչագան Վարդանյանը տեղափոխվել է Երևան և աշխատանքի է անցել ռադիոկոմիտեում, որտեղ աշխատել է մինչև կենսաթոշակի անցնելը՝ ավելի քան երեք

տասնամյակ՝ իր անբասիր աշխատանքի համար արժանանալով բազմաթիվ պատվոգրերի և գրավոր շնորհակալագրերի: 1959 թվականից եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ:

Վաչագան Վարդանյանի ուսանողական տարիները համընկան ստալինյան բռնությունների հետպատերազմյան նոր ալիքի հետ: Նրա ընկերներից շատերն աքսորվեցին Սիբիր, շատերը կորցրեցին իրենց մարդկային դեմքը՝ դառնալով գաղտնի գործակալներ: Նման առաջարկություն արվեց նաև Վաչագան Վարդանյանին, բայց նա նույնիսկ սեփական անձը վտանգի տակ դնելու սպառնալիքի տակ չդավաճանեց բարոյական իր սկզբունքներին՝ մնալով մարդկային արժանիքների իր բարձրության վրա: Հենց այդպիսին էլ, որպես մարդկային բարձր բարոյական արժեքներով օժտված մարդու են հիշում նրան Հայաստանի պետական ռադիոկոմիտեում, որտեղ նա արտասահմանյան հայության համար տրվող հաղորդումների խմբագրությունում ավագ խմբագիր է աշխատել երեսունհինգ տարուց ավելի: Նրան ճանաչողներն ասում են, որ նա Մարդ էր մեծատառով, մարդ, ով ազնիվ էր ու շիտակ, բարի էր ու մարդասեր, հայրենասեր էր և իր գործի մեծ գիտակն ու նվիրյալը: Եվ չդավաճանելով իր սկզբունքներին՝ նա չանդամակցեց Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցությանը, որն այդ ժամանակաշրջանում կարիերայի սանդուղքով բարեհաջող բարձրանալու կարևոր նախապայմաններից մեկն էր:

1990 թվականին ընկերների բազմամյա հորդորների արդյունքում Վաչագան Վարդանյանը դարձել է Հայ գրողների միության անդամ: Իր ստեղծագործական գործունեության ընթացքում նա լույս է ընծայել յոթ գիրք, որոնք ասես նրա հոգեզավակները լինեն: 1963 թվականին հրատարակվել է նրա

«Խռովահույզ խաղաղություն» ժողովածուն, 1967 թվականին «Ցայգերգ»-ը, 1970 թվականին «Վերադարձ»-ը, 1981 թվականին «Սոնետների պսակ»-ը, 1982 թվականին «Հազարան բլբուլ»-ը, 1987 թվականին «Կարոտներ»-ը, և 1988 թվականին «Մեղեդի սիրո ու խաղաղության»-ը: 2011 թվականին հետմահու վերահրատարակվել է «Սոնետների պսակ»-ը, սակայն այս գրքերում նրա ոչ բոլոր սոնետներն են ամփոփված: Վաչագան Վարդանյանը չափազանց համեստ էր ու փառասիրությունից զերծ: Նա նուրբ հոգու տեր էր և դառնացած էր խորհրդային գրատպության անկատար համակարգից, որը գաղափարական կամ այլ նկատառումներից ելնելով կրճատում էր հեղինակային խոսքը և դրանով աղճատում հեղինակի մտահղացումը: Հենց այդ պատճառով նա հաճախ չէր էլ փորձում տպագրվել: Նման կամայականության արդյունքում կիսատ էր հրատարակվել նաև նրա «Սոնետների պսակը», ինչի հետևանքով խախտվել էր ստեղծագործության կառուցվածքը և ամբողջականությունը:

Իրականում, Վաչագան Վարդանյանը հետևելով սոնետների պսակի դասական կանոններին և ավելի բարդացնելով այն՝ Սոնետների պսակից հյուսել է մի նոր պսակ, որի տասնհինգ պսակներից ամեն մեկն իր հերթին հենց սոնետների պսակ է: Վստահաբար, Վաչագան Վարդանյանը համաշխարհային գրականության մեջ առաջինն է, որ պահպանելով դասական սոնետի կառուցվածքային առանձնահատկությունը՝ վերջին տասնհինգերորդ պսակը հյուսել է այնպես, որ ամեն մի տող կրկնում և համապատասխանում է նախորդ տասնչորս պսակների յուրաքանչյուր սոնետի առաջին տողին: Իր այս կառուցվածքով «Սոնետների պսակն» իր տեսակի մեջ բացառիկ ստեղծագործություն է նաև հայ իրականության մեջ: Դա իրապես բարդ մտահղացում է՝ նկատի ունենալով հենց սոնետի

ժանրի բարդությունն իսկ, որը սակայն հեղինակն իրագործել է այնքան մեծ վարպետությամբ, որ ստեղծագործությունն իր ամբողջականության և սոնետների հաջորդական շարունակականության մեջ ասես վերածվում է սոնետի ժանրի քնարականությամբ օժտված պոեմի:

Վաչագան Վարդանյանը երկար տարիներ համագործակցել է նաև հայտնի երգահանների, հատկապես՝ Գեղունի Չթչյանի և Երվանդ Սահառունու հետ՝ դառնալով նրանց երգերի մի մասի բառերի հեղինակը: Ընդ որում, նրան մեծ մասամբ տրվում էր երաժշտությունը, որին էլ նա համապատասխանեցնում էր բառերը:

1956 թվականին Վաչագան Վարդանյանն ամուսնացել է, ունեցել է չորս երեխա: Նա օրինակելի ու սիրող ամուսին էր և իր զավակների համար՝ լավ հայր: Վաչագան Վարդանյանը նաև մեծ հայրենասեր էր և ոչ միայն կարևորում էր, այլև ապահովում զավակների հայեցի դաստիարակությունը: Նրա համոզմունքն էր, որ հայոց լեզվի անաղարտությունը կարելի է պահպանել միայն հայեցի մտածողության միջոցով, հայոց գիրն ու գրականությունը խորապես ուսումնասիրելու միջոցով:

Ավաղ, Վաչագան Վարդանյանի կյանքն ընդհատվեց 1992 թվականին՝ Արցախյան պատերազմի օրերին, և նա չհասցրեց իրագործել իր վերջին մտահղացումը: Նրա ցանկությունն էր ամբողջական տարբերակով վերահրատարակել «Սոնետների պսակը», իսկ տպագրությունից ստացված հոնորարը նվիրաբերել հայ ժողովրդի տոկուն ու իր հայկական ինքնության համար պայքարող մի հատվածին՝ Արցախի ժողովրդին:

Վաչագան Վարդանյանը հեղինակել է նաև արձակ ժանրի ստեղծագործություններ, որոնցից մի քանիսը տարբեր ժամանակներում հրատարակվել են գրական մամուլում, իսկ դրանց ստվար մասը, որն ընդգրկում է նրա պատմվածքների,

պիեսների, ակնարկների ու հրապարակախոսական ժանրի այլ գործերի ձեռագրերը, հանձնված է պետական պահպանության և առաջին անգամ տպագրվում է այս երկհատորյակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախական 3
Նախերգ
.....
9 .....
Քայլում՝ ցնծում եմ
.....
10 .....
Տանը մարդ չի եղել
.....
11 .....
Սարսափների միջից
.....
12 .....
Կենաց ծաղիկ
.....
13 .....
Մաշտոցյան բալլադ
.....
15 .....
Երևան
.....
16 .....
Երգ շինարարի
.....
17 .....

Ստուգման գրքույկ
.....
18 .....
Մանուկ էի երազուն
.....
19 .....
Մայրս
.....
20 .....
Հարավի թուխ աղջիկ
.....
21 .....
Մղձավանջ
.....
22 .....
Իմ հեքիաթը
.....
24 .....
Համո Սահյանին
.....
26 .....
Մեռնող ճառագայթը
.....
28 .....
Տիգրան Պետրոսյանին
.....
28 .....
Էլեգիա
.....
30 .....
Ռազմի վերհուշ
.....
31 .....

Երիտասարդ ուսուցչուհին
.....
32 .....
Մայրը
.....
33 .....
Գեղեցկություն
.....
34 .....
Նրանք
.....
36 .....
Գրքի առջև
.....
37 .....
Կարոտ
.....
38 .....
Գնացքում
.....
39 .....
Ճանապարհը
.....
40 .....
Պեյզաժ
.....
41 .....
Նկարիչը
.....
43 .....
Ես և նա
.....
45 .....

Ծաղկեփունջ
.....
46 .....
Մանկություն
.....
46 .....
Ինչ բերկրանք է կանգնել
.....
49 .....
Սարն ի վեր
.....
49 .....
Օրերի փոշին է ելնում
.....
50 .....
Երբ լինում եմ ես տխուր
.....
51 .....
Սիրել են ծերերն էլ
.....
51 .....
Կգա օրը
.....
52 .....
Ծորում է հին մի երգ
.....
52 .....
Նա աշխարհը չէ
.....
52 .....
Մենակ ես չէ
.....
53 .....

Գարուն ես դու այնպես անուշ
.....
54 .....
Դու երբեք չես եղել մեր սարերում
.....
54 .....
Լալիս էր նա
.....
54 .....
Երկու ամպ
.....
55 .....
Գարնան առաջին ամպրոպն է թնդում
.....
56 .....
Ասես ուներ նազանքը քո
.....
57 .....
Խենթ եմ եղել և խելագար 58
Պատմում էիր երբեմն դու
.....
59 .....
Իմ ալ վարդեր
.....
60 .....
Երբ սկսեցի ես զանազանել
.....
60 .....
Ձյունը
.....
61 .....
Ձմեռ եկավ նորից
.....
62 .....

Ձյուն է գալիս այնպես մեղմ ու այնպես տաք
.....
63 .....
Սոնետ
.....
64 .....
Իմ ոտքերի տակ է բնությունը դարսում
.....
64 .....
Դու չկայիր կյանքում
.....
65 .....
Մեր նավն ամուր 66
Լուռ սեր
.....
67 .....
Եվ ինչ մնաց ինձ հին վշտից.....67
Տաղ հրճվանքի
.....
68 .....
Ահա ինձ համար կենտրոնն աշխարհի
.....
69 .....
Բավ է, ասի
.....
69 .....
Ապոլլոնն ինձ տվեց քնար
.....
70 .....
Երբ խոսում են լավի մասին 71
Չեմ հավատում բարիներին 71
Գազանանոցում
.....
72 .....

Բուն և սոխակը (առակ)
.....
72 .....
Հայրական
.....
74 .....
Որդիական
.....
78 .....

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Անտառի մեջ մի առավոտ հանկարծ գթաց իր գերուն
.....
82 .....
Ճիշտ ես դու
.....
82 .....
Լողում են վար
.....
82 .....
Ինչ գույնով էլ լույսը ներկես.....82
Էլ հրաշքի չեմ հավատում 83
Պակասում է աչքիս լույսը
.....
83 .....
Մի պարծենա
.....
83 .....
Հավատացեք
.....
83 .....

ԵՐԳԵՐ

Խնջույքի երգ
.....
84 .....
Մի գնա, յար
.....
85 .....
Ալագյազ
.....
86 .....
Հայկական ժողովրդական տաղերի ոգով
.....
87 .....
Մի գնա
.....
87 .....
Կարոտ
.....
88 .....
Լենինական
.....
89 .....
Երևան
.....
91 .....

ՊԻԵՄՆԵՐ

Դեղին գիշեր
.....
92 .....

ԱՐՁԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնդապետի փեսան (վիպակ).....182
.....

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ոչնչության սարսափը
.....
272.....
Սիրահարվածը
.....
280.....
Խնձոր ծախող կինը
.....
287.....
Դեպի դիմացի լեռները
.....
290.....
Պատերազմը
.....
303.....
Վարպետ Մինասի կարծիքը
.....
309.....
Գնչուի ողբը
.....
311.....
Երգը
.....
314.....
Մենք միշտ երեքով ենք
.....
318.....

Տխուր հայտնագործություն
.....
325 .....
Սարսափելի մարդը
.....
329 .....
Մանուշակներ
.....
351 .....
Մենք մի քիչ Դոն-Կիխոտ ենք
.....
356 .....
Քննություն
.....
381 .....
Ծնունդ և մահ
.....
384 .....
Հրեղեն ձիեր
.....
390 .....
Մայկոպցի վարորդը
.....
401 .....
Գնչուական մեղեդիներ
.....
406 .....
Սարն ի վեր
.....
411 .....
Նամակ ընկերոջս
.....
420 .....

Հանդիպում
.....
431 .....

ԷՍՍԵՆԵՐ

Բռնակալը
.....
440 .....
Անկեղծ մտորումներ
.....
451 .....
Արցախ 462

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ 470

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ՝

Սոնետների պսակ – 2011 թ.
Մեղեդի սիրո և խաղաղության – 1988 թ.
Կարոտներ – 1987 թ.
Հազարան բլբուլ – 1982 թ.
Վերադարձ – 1970 թ.
Ցայգերգ – 1967 թ.
Խռովահույզ խաղաղություն – 1963 թ.

ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Գլխավոր խմբագիր՝ Աբգար Ափինյան
Վերստուգող խմբագիր՝ Սուսաննա Ղազարյան

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 055. 52.79.74:
Էլ փոստ՝ **lusakn@rambler.ru**